ՀԱՄԼԵՏ ԹՈՐՈՍՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ XV - XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՄԼԵՏ ԹՈՐՈՍՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Ա 92068 II

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
25

ARCH. MESROB ASHJIAN BOOK SERIES
25

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Թ 822

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Համլետ Թորոսյան
Թ 822 «Էջմիածնի վանական տնտեսությունը XV-XVIII դարերում - Եր.: Պատմ. ինստ., 2006. - 266էջ:

Խմբագիր՝ պ. գ. դ., պրոֆեսոր Գ. Ե. Կիրակոսյան

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի վաղամեռիկ գիտաշխատող Համլետ Վանուշի Թորոսյանի սույն աշխատությունը, որը պետք է պաշտպանվեր որպես դոկտորական ատենախոսություն, հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունքն է: Սույն հրատարակությունը ինստիտուտի հարգանքի տուրքն է նրա անմար հիշատակին:

Աշխատության մեջ քննության է առնված XV-XVIII դարերի էջմիածնի վանական տնտեսության վիճակը: Մանրամասն խոսվում է կաթողիկոսական աթոռը Սսից էջմիածին տեղափոխելու, հողային ռենտայի և դասակարգային փոխհարաբերությունների, վանական եկեղեցական հողատիրության, գյուղացիության սոցիալական դրության, էջմիածնի վանքապատկան ծորտերի, ջրօգտագործման և այլնի մասին:

Գրքում զետեղված են վանական կալվածատիրության վերաբերյալ ցուցակներ:

Գիրքը նախատեսված է մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակության համար:

ISBN 99941-73-03-0 *ԳՄԴ 63.3 (2Հ)*

ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2006թ.

Նվիրվում է Հայաստանի
Արդյունաբերողների և գործարարների
(գործատուների) միության՝ ՀԱԳ(Գ)Մ
տասնամյակին

Հովանավոր՝ «ԱՊԱՎԵՆ» ՍՊԸ

Հայ առաքելական եկեղեցին իր գոյության առաջին իսկ շրջանից սկսած, Հայաստանի պատմական զարգացման բոլոր փուլերում ունեցել է վճռորոշ դեր ժողովրդի գոյապահպանման ու նրա հետագա առաջընթացի ապահովման գործում: Քաղաքական դեպքերի բերումով 484 թ. ի վեր Հայոց կաթողիկոսությունը ստիպված էր թողնել իր աթոռանիստ Վաղարշապատ կենտրոնը և տեղափոխվել տեղից տեղ, 1105 թ. հաստատվելով Կիլիկիայում, ուր հայկական իշխանությունների առաջացման, նրանց հզորացման ու հատկապես թագավորության հաստատման շնորհիվ Ամենայն Հայոց կաթողիկոսության գործունեությունը սկսվեց լայնորեն դրսևորվել հայ ժողովրդի ներքին ու արտաքին կյանքի բոլոր ոլորտներում կատարելով հոգևոր-եկեղեցական բարձրագույն իշխանության իր դերը: Եվ չնայած պատմական պահի թելադրանքով որոշ առիթներով Կիլիկիայի Հայոց կաթողիկոսության հայրապետներից ոմանք փոքր-ինչ շեղվեցին հայ առաքելական եկեղեցու դավանաբանական դիրքերից, հուսալով թե այն նպաստելու է ազգապահպանման գործին, ընդհանուր առմամբ կաթողիկոսությունը կարողացավ պահպանել հայոց եկեղեցու ամբողջական անկախությունը:

Կիլիկիայում հայկական պետականության անկումից հետո, Սսի Հայոց կաթողիկոսությունը ոչ միայն կորցրել էր իր քաղաքական հենարանը, այլև հայ բնակչության շարունակաբար նոսրացման պատճառով թուլացել էր նաև տնտեսապես: Դրությունն ավելի ծանրացավ, երբ 1426թ. Կիլիկիայի վերջին իշխանավոր Կոստանտին Սսեցին թողեց երկրի սահմանները և հոծ հայ բնակչության հետ հաստատվեց Կիպրոս կղզում: Հասկանալի է, որ նման քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմաններում Ամենայն Հայոց կաթողիկոսությունը ի վիճակի չէր կատարելու ազգապահպանման իր հիմնական դերը: Ահա թե ինչու խիստ հրատապ դարձավ կրկին հայրենի բնաշխարհ վերադարձնել Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և դրանով իսկ քոչվոր երկվորների լծի տակ գտնվող Մայր հայրենիքում ստեղծել պետականությանը փոխարինող հաստատություն: 1441թ. Վաղարշապատի ազգային ժողովը Ամենայն Հայոց ընդհանրական աթոռը վերահաստատեց Էջմիածնում, որը իր բնույթով պատմական խոշոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Հետագա, մինչև 19-րդ դ. ընդգրկվող ժամանակահատվածում Հայոց Հայրապետությունը ի դեմս հայրապետ ընտրված եպիսկոպոսապետներից շատերի նպատակ-կասլաց գործունեության, ոչ միայն ապահովեց իր աթոռանիստ կենտրոնի տնտեսական անկախությունը. հիմք ստեղծեց ազգային-եկեղեցական ու մշակութային արդյունավետ գործունեության համար, այլև ստանձնեց ազգային-ազատագրական պայքարում խաղացած իր երբեմնի առաջակարգ դերը:

Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հոգևոր և եկեղեցավարչական գերագույն կենտրոնական իշխանության՝ էջմիածնի Հայոց կաթողիկոսության 1441-1800 թթ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը հայ պատմագիտության մեջ համեմատաբար քիչ լուսաբանված թեմաներից մեկն է: Այն հիմնականում կատարվել է ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության լուսաբանման ընդհանուր ֆոնի վրա: Մինչդեռ անհրաժեշտ է այն ուսումնասիրել համակողմանիորեն, հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով նրա տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրման վրա, քանի որ տնտեսությունն ուսումնասիրելը, նրա զարգացման կոնկրետ օրինաչափությունները բացահայտելը այդ հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանման հիմնական հարցն է: Բացի այդ, ի հայտ են եկել նոր աղբյուրներ, որոնք այսօր նոր կռվան են հանդիսանում մի շարք հարցերի համակողմանի քննարկման կամ նորովի լուսաբանման համար:

Սույն ուսումնասիրության համար հիմք ծառայած աղբյուրները կարելի է բաժանել հետևյալ խմբերի. 1) հայկական աղբյուրներ, 2) հայերեն և ռուսերեն թարգմանված օտարալեզու աղբյուրներ, 3) այլ աղբյուրներ:

Հայկական աղբյուրներից արժանահիշատակ են պատմագրական երկերը, ձեռագիր հիշատակարանները ու մանր ժամանակագրությունները, վիպական արձանագրությունները, ինչպես նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի «Կաթողիկոսական դիվան» անունը կրող ֆոնդում պահվող վավերագրերը:

Ժամանակագրական կարգով հայկական պատմագրական երկերի մեջ առաջինը Թովմա Մեծոփեցու աշխատություններն են: Մեծոփեցու «Պատմություն»-ը ընդգրկում է 1386-1440 թթ. ժամանակահատվածի բուռն քաղաքական կյանքով լեցուն իրադարձությունները: Դեպքերի ժամանակակից Մեծոփեցին մանրամասնորեն նկարագրել է Լանկ-Թամուրի և նրա հաջորդների՝ կարա-կոյունլու և ակ-կոյունլու վաչկատուն ցեղի Հայաստանում կատարած ավերիչ արշավանքների, բնակչության կոտորածների ու բռնի գերեվարության, նրա սոցիալ-տնտեսական անելանելի վիճակի պատմությունը: Պատմիչի վկայությամբ, քոչվոր ցեղերը տիրանալով երկրագործական բարձր զարգացում ունեցող երկրին, արգավանդ հողերը դիտում էին ոչ թե որպես երկրագործական արտադրության հիմնական պայմանի, այլ որպես արոտատեղի:

Ավերման ու թալանի ենթարկված հայ երկրագործի տնտեսությունը հետզհետե կորցնում էր իր նշանակությունը երկրի տնտեսության մեջ՝ տեղը զիջելով թուրք-թաթարական քոչվորական խաշնարածությանը: Այս ամենի հետևանքով կրճատվել էր հայ բնակչության թիվը, փոխվել նրա էթնիկական կազմը: Երկրի ապագայի մտահոգությունն էլ ստիպեց Թովմա Մեծոփեցուն Հովհաննես Հերմոնեցու և այլ հայրենասեր գործիչների հետ նախաձեռնել Հայոց կաթողիկոսական աթոռը Կիլի-

կիայի մայրաքաղաք Սսից Վաղարշապատ տեղափոխելու գործընթացը: Հայրենանվեր այդ աշխատանքի կատարումը ամփոփված է պատմիչի «Յիշատակարան»-ում, որը փաստորեն շարունակում ու լրացնում է նրա «Պատմություն»-ը:

Մատենագրական հաջորդ կարևոր երկը 14-րդ դ. վերջի և 15-րդ դ. առաջին քառորդում ստեղծագործած Գրիգոր Խլաթեցու արձակ և չափածո հիշատակարաններն են: Դրանցից առանձնապես կարևորվում է 1422 թ. գրված «Գանձարան»-ի չափածո հիշատակարանը «Յիշատակարան աղետից» վերնագրով, որում նկարագրված են Լանկ-Թամուրի ավերիչ արշավանքների պատմությունը, ինչպես նաև կարևոր տեղեկություններ է հաղորդում կարա-կոյունլու ցեղախմբի Հայաստանում կատարված արշավանքների մասին:[1]

Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրութիւն» աշխատությունը չափազանց կարևոր է Հայաստանում և Մերձավոր Արևելքում թուրքիրանական հակամարտության ժամանակաշրջանի պատմության լուսաբանման համար:[2] Դարանաղցին իր պատմությունը հասցնում էր մինչև 1640թ., տալիս արժեքավոր տեղեկություններ քաղաքական անցքերի վերաբերյալ, ինչպես նաև երկրի տնտեսական կյանքի մասին: Լինելով իրադարձություններին ականատես՝ Դարանաղցին օբյեկտիվորեն ներկայացնում է այն իրական պատկերը, որում հայտնվել էր հայ եկեղեցին ու մասնավորապես նրա աթոռանիստ կենտրոնը: Մի կողմից նա հայոց եկեղեցու ճգնաժամը կապում է թուրք-պարսկական տիրակալների դեպի էջմիածինը ունեցած վերաբերմունքի հետ, մյուս կողմից հայ հոգևոր հայրապետների անհեռատես ու եսամոլ գործունեության հետ: Այս առումով նա անարգանքի սյունին է գամում Դավիթ Վաղարշապատեցի և Մելիքսեթ Գառնեցի կաթողիկոսներին, որոնք կաթողիկոսական աթոռին տիրելու մոլուցքով տարված «շատ խառնակութիւն եւ անկարգութիւն արարին ամենայն եկեղեցական կարգաց և կարի յոյժ առաւել թոյլամորթ էին եւ անառակութեանց սիրողք եւ հետեւողք եւ ցոփախօսք: Եւ երկուքն այլ միակամ էին նախ յանկարգութիւնն, որ այլ միաբանուց աբեղայք չթողին, զամէնքն եպիսկոպոս արարին եւ ուր որ պատահէին այնպէս առնէին, եւ լցաւ ամենայն երկիր սուտ եպիսկոպոս անունօք»:[3]

Փիլիփոս Աղբակեցի կաթողիկոսի առաջարկությամբ Առաքել Դավրիժեցին 1651 թ. սկսել է շարադրել իր «Պատմութիւն»-ը, որն

---

[1] Յիշատակարան աղետից Գրիգորի Խլաթեցւոյ պատմական վիպասանութեան, Վաղարշապատ, 1897 (այսուհետև Գրիգոր Խլաթեցի):

[2] Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղէմ, 1915 (այսուհետև Գրիգոր Դարանաղցի):

[3] Գրիգոր Դարանաղցի, էջ 284:

ավարտել է 1662 թ.:[4] Դավրիժեցու աշխատությունն աչքի է ընկնում ոչ միայն Հայաստանի ու հարակից երկրների պատմության վերաբերյալ նյութերի մեծ ծավալի ընդգրկմամբ, այլև տվյալների հավաստիությամբ ու անաչառությամբ: Իրադարձությունների մեծ մասի ականատեսն է, իսկ ինչ վերաբերում է լսած տեղեկություններին, ապա դրանց շատ զգույշ ու քննադատորեն է մոտենում. «Եւ աւուրս յոլովս,-գրում է նա իր գրքի հիշատակարանում,-ի սմին դեգերելով և ի յոլով երկիրս և յաշխարս շրջագայելով ի խնդիր զրուցաց պատմութեան, ոչ միայն ի քրիստոնէից, այլ և յայլոց ազանց հարցանելով և ամենեցունց զասացեալսն գրելով, և վասն զստուգութիւն բանին գտանելոյ, եղև զմի պատմութիւն, տասն անգամ և այլ աւելի կրկնելով գրեցի»:[5]

Դավրիժեցու աշխատությունը արժեքավոր տեղեկություններ է պարունակում թուրք-իրանական պատերազմների, դրանց ուղեկցող սովի ու ավերածությունների, ջալալիների շարժման ու դրանց հետևանքների, շահ Աբաս I-ի կողմից 1604թ. հայ բնակչության բռնի գաղթեցման մասին և այլն:

Հայաստանի թուրք-իրանական տիրապետության ժամանակահատվածում, իսկ 1639 թ. հաշտությունից հետո նրա երկու հատվածներում էլ երկվոր տիրակալները կարևոր նշանակություն էին տալիս հայ հոգևորականությանը իրենց ազդեցությանը ենթարկելու խնդրին: Դա նպատակ ուներ օգտագործել նրա կապերը քրիստոնյա աշխարհի հետ, ինչպես նաև՝ ունեցած ազդեցությունը հայ բնակչության վրա: Այդ քաղաքականության վկայությունն են պարսից շահերի ու թուրք սուլթանների հրովարտակները՝ էջմիածնի վանական միաբանությանը և կաթողիկոսական նվիրակներին, երկրի բոլոր շրջաններում անարգել երթևեկության իրավունք շնորհելու, վանքապատկան հողերի սեփականատիրական իրավունքների հաստատման ու վերահաստատման մասին և այլն: Դավրիժեցու «Պատմութիւն»-ը ևս ընդգրկում է բազմաթիվ փաստեր հայ եկեղեցու ու նրա կենտրոնի նկատմամբ եկվոր տիրակալների ունեցած վերաբերմունքի մասին: Դրա հետ միասին աշխատության մեջ քիչ չեն փաստերը օտար տիրակալների կողմից հայ եկեղեցու նկատմամբ կիրառված դաժան քաղաքականության, հոգևորականների հալածանքների ու պատիժների, նրանց կրած անմարդկային տառապանքների մասին: Օրինակ, տեղեկացնելով Մելիքսեթ կաթողիկոսին ձերբակալելու շահ Աբաս I-ի հրամանի մասին, պատմիչը գրում է. «Հրամայեալ է քեզ Թահմազղուլի (Երևանի խան 1625-1635 թթ.-Հ.Թ.) զի զՄելիքսէթ կաթողիկոսն կալեալ տանջանօք չարչարեսցես, և զինքեան իսկ

---

[4] Պատմութիւն Առաքեալ վարդապետի Դավրիժեցւոյ: Սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի ՌԾԱ թուականին Հայոց մինչ ի ՌԾԺԱթ., Վաղարշապատ, 1896 (այսուհետև՝ Առաքել Դավրիժեցի):

[5] Նույն տեղում, էջ 670:

զմարմնոյ զմիսն կտրեալ ինքեան ուտեցուսցես»:[6] Հետևելով Գր. Դարանաղցուն Առ. Դավրիժեցին ևս վկայում է, որ կաթողիկոսական երկպառակությունների գաղջ մթնոլորտում ներհակ ուժերը, օգտվելով եկվորների միտումնավոր հովանավորությունից, հաճախ միմյանց հալածանքների էին ենթակում: Որպես ապացույց Առ. Դավրիժեցին վկայում է այն փաստի մասին, երբ Սահակ Գառնեցի աթոռակիցը, տիրելով կաթողիկոսական աթոռին և նպատակ ունենալով ասպարեզից հեռացնել մրցակից Պողոս վարդապետին, բազում մեքենայություններից հետո ի վերջո կարողանում է ստիպել վերջինիս իր կյանքի մնացած մասն անցկացնել անապատում:[7] Նույն կերպ պատմիչի կողմից անարգվում են Դավիթ և Մելիքսեթ կաթողիկոսները, որոնցից յուրաքանչյուրը պարսից արքունիքին խոստանալով 100 թուման վճարել ծգտում էին միայնակ տնօրինել կաթողիկոսական աթոռին: Սակայն չկարողանալով վճարել խոստացված գումարը, այն հետագայում բարդվեց էջմիածնի վրա, որը տարեցտարի ավելանալով հասնում է 600 թումանի. «Եւ այս եղև... բեռն ծանր,-գրում է Դավրիժեցին,-և լուծ տաժանելի անլուր անխզելի ի վերայ սրբոց Աթոռոյն էջմիածնի ի զուր և ի տարապարտաց և ամենայն ազին Հայկա սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի եկեղեցականաց և աշխարհականաց»:[8]

Ժամանակաշրջանի Հայաստանի թե քաղաքական և թե սոցիալ-տնտեսական պատմության լուսաբանման համար մեծ նշանակություն ունի Զաքարիա սարկավագ Քանաքեռցու «Պատմութիւն» երեք մասից բաղկացած աշխատությունը:[9] Այն սկսվում է Հայաստանում Արշակունիների թագավորության հաստատման ժամանակաշրջանից և հասցվում մինչև 1699 թ. իրադարձությունների շարադրանքը: Աշխատության հիմնական մասը 17-րդ դ. պատմության պատկերումն է, որը Զաքարիա Քանաքեռցին շարադրել է իբրև ականատես: Ընդ որում աշխատության այդ մասը պատմիչը շարադրել է մեծապես օգտագործելով Առ. Դավրիժեցու երկը: Այս առումով արժանահիշատակ է նրա գնահատականը Առ. Դավրիժեցու մասին. «Թաւրիզեցի Առաքել վարդապետն,-գրում է նա,-որ տեղեյակ էր ամենայն պատմագրաց, որ և արար զպատմութիւնս աւերման աշխարհիս Արարատեան ի մեծ Շահ Աբասէն»:[10]

Քանաքեռցին առաջին պատմիչն է, որ աշխատության հիմնական մոտիվը դարձրեց վանական հաստատությունների տնտեսական պատմության շարադրումը: Ընդ որում նա օգտագործել է նաև տվյալ վանական հաստատությանը վերաբերող նախորդ շրջանի հիշատակարան-

---

[6] Նույն տեղում, էջ 207:
[7] Նույն տեղում, էջ 283:
[8] Նույն տեղում, էջ 221-222:
[9] Զաքարեայ սարկաւագի Պատմագրութիւն. հ. Ա-Գ, Վաղարշապատ, 1870 (այսուհետև Զաքարիա Քանաքեռցի):
[10] Նույն տեղում, հ. Գ, էջ 4:

ներն ու արձանագրությունները. «Զոր ինչ գտաք յարձանս յորմունս եկեղեցեաց և կամ ի յիշատակարանս գրոց, զայնոսիկ գրեցաք աստէն: Այժմ զայնոսիկ գրեսցուք որք ոչ գոն գրեալ ուրեք, և զանունս նոցա յայտ արարից թէ ինչ գիւղ այս ինչ անուն այգի, կամ պարտէզ, և կամ հող, այսքան օր: Եւ զայնոսիկ որք գրեալ են յարձանս, զայնոսիկ ևս նշանակեցի, զի լիցի կրկին վկայ»,-գրում է Քանաքեռցին:[11] Քանաքեռցու երկը միաժամանակ հարուստ նյութ է պարունակում գյուղական համայնքի, գյուղացիության սոցիալական դրության, նրա հարկային պարտավորությունների ու պարտադիր աշխատանքի մասին:

Արժանահիշատակ է պատմիչի վկայությունները էջմիածնի վանական հաստատության տնտեսական կարողությունների, վանքապատկան գյուղացիության հետ նրա ունեցած փոխհարաբերություններ ի մասին և այլն: Քանաքեռցին առանձնակի գովեստով է խոսում Փիլիպոս Աղբակեցի և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների մասին՝ դրվատելով հատկապես վերջիններիս տնտեսական գործունեությունը: Երբ Դավիթ և Մելիքսեթ կաթողիկոսները պատրաստ էին զոհելու ամեն ինչ՝ կաթողիկոսական աթոռին տիրելու համար, ապա Հակոբ Ջուղայեցին, ինչպես նշում է Զաքարիա Քանաքեռցին, շահ Աբաս II-ից խնդրում է. «... զտասանորդս գեղին էջմիածնի շնորհել վանիցն, վասնզի ի բնէ վանիցն լեալ է, և ի թուլութիւնէ առաջնորդացն մերոց խաներն յափշտակեալ են»:[12]

Բավական հարուստ փաստական նյութերով կարևորվում է Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունը»:[13] Ընդգրկելով 1647-1684 թթ. ժամանակահատվածը՝ այն շատ արժեքավոր է ժամանակի թե՛ քաղաքական պատմության և թե սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար: Արժեքավոր են հատկապես օրագրության հեղինակի տեղեկությունները ներքին առևտրի, գյուղական համայնքի կառուցվածքի, նրանում եղած ներքին հակասությունների, հարկերի գանձման ու տուրքերի վճարման, կառավարման սիստեմի մասին և այլն: Սույն ուսումնասիրության համար հատկապես կարևորվում են Ագուլեցու այն տեղեկությունները, որոնք վերաբերում են էջմիածնի նվիրակների գործունեության լուսաբանմանը: Ագուլեցու աշխատությունը միաժամանակ կարևոր սկզբնաղբյուր է ինչպես Հայաստանին հարակից, այնպես էլ հեռավոր երկրների 17-րդ դարի պատմության զանազան հարցերի ուսումնասիրման համար:

Որպես սկզբնաղբյուր առանձնակի կարևորություն ունի Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն յաշխարհին Աղուանից» աշխատու-

---

[11] Նույն տեղում, էջ 27:
[12] Նույն տեղում, էջ 61:
[13] Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Եր., 1938 (այսուհետև Զաքարիա Ագուլեցի):

թյունը:[14] Այն հատկապես կարևորում է էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսության և Գանձասարի հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունների լուսաբանման առումով: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի տեղեկությունները Անդրկովկասյան խանություններում բնակչության էթնիկական տեղաբաշխվածության ու նրա զբաղմունքի մասին: Ուշադրության են արժանի այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Սեֆյան տերության հարկային համակարգին, այդ քաղաքականության ծանր հետևանքներին ինչպես հայ գյուղացիության, այնպես էլ հոգևորականության նկատմամբ:

Սկզբնաղբյուրների մեջ իր առանձնակի տեղն ունի Աբրահամ Կրետացու «Պատմութիւն անցիցն իւրոց և Նատր Շահին պարսից» աշխատությունը:[15]

Այն ընդգրկում է երկու և կես տարվա ժամանակամիջոցի (1734-36 թթ.) պատմական դեպքերի նկարագրությունը: Պատմագիրը մեզ հետաքրքրող դեպքերի ոչ միայն ժամանակակիցն է, այլև ականատես, և որպես հայ եկեղեցու գլուխ կանգնած անձնավորություն (1734-37 թթ.) ավելի իրազեկ է եղել կատարված իրադարձություններին: Այս առումով էլ նրա հաղորդած տեղեկությունները իրենց փաստական ճշտությամբ ավելի հավաստի են, որոշակի ու կոնկրետ: Լինելով միաժամանակ խիստ շրջահայաց քաղաքական գործիչ՝ Կրետացին շահելով Նադիր շահի վստահությունը, փրկեց էջմիածինը եկվոր կառավարիչների ոտնձգություններից, ճանաչել տվեց էջմիածնի կաթողիկոսական աթոռի ընդհանրականությունն, ինչպես նաև նրա կալվածքների ամբողջականությունը: Կրետացու երկը միաժամանակ փաստական հարուստ նյութ է պարունակում էջմիածնի վանական տնտեսության առանձին ճյուղերի, մասնավորապես երկրագործության մասին:

Որպես կոնկրետ նյութ պարունակող սկզբնաղբյուր թեմայի ուսումնասիրման առանցքն է կազմում Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը:[16] 1763 թ. ստանձնելով Ամենայն Հայոց կաթողիկոսական Աթոռի ղեկավարությունը՝ Սիմեոն Երևանցին անմիջապես ձեռնարկում է էջմիածնի վանական հաստատության տնտեսական պատմության շարադրման համար նյութերի հավաքման աշխատանքներին: Դրանց կարևորությունը կայանում էր նրանում, որ, ինչպես նշված է գրքի «ազդ»-ում. «Արդարև գտանին ի Հայրապետական Աթոռս կոն-

---

[14] Եսայի Հասան-Ջալալյան. պատմութիւն յաշխարհին Աղուանից. Երուսաղէմ. 1868 (այսուհետև Եսայի Հասան-Ջալալյան):

[15] Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմութիւն անցիցն իւրոց և Նատր Շահին պարսից, Վաղարշապատ, 1870 (այսուհետև Աբրահամ Կրետացի):

[16] Սիմէոն Երևանցի, Ջամբռ. գիրք որ կոչի յիշատակարան արծանացուցիչ հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեալ և շարադրեցեալ ի Սիմէոն ցաւահար և վշտակոծ կաթուղիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873 (այսուհետև Ջամբռ):

դակք, հրովարտակք, կալուածագիրք և թղթեանք պիտանիք յաւուրց անտի հայրապետութեան հաջորդած Սիմէօնի, յորս երևին ինչ ինչ նշանաւոր անցք արժանիք յիշատակաց... բայց քանի առաւել արժանահաւատ լինէին այնոքիկ և անկորուստ ապահովէին իբրև ի միում յամփոփ յիշատակագրութեան և դիւրութիւն մեծ ընծայէին ընթերցողացն ամենից»:[17] Միաժամանակ Երևանցին հորջորջում է իրեն հաջորդողներին շարունակել այդ գործը, պարտավորեցնելով. «Նմանապէս և դուք ըստ այսմ կանոնի ամբողջապէս և հաւատարմօրէն պահելով զկնի յաջորդողացդ ձերոց ընծայեցէք, զի մի անհետասցին և կորիցեն և այսոքիկ մնացեալք որպէս և շատքն անհետացեալք են յանհոգութենէ անցելոցն երանելեաց»:[18] Բնութագրելով իր ապրած ժամանակաշրջանի ոչ նպաստավոր պայմանները՝ Երևանցին միաժամանակ պատմական զուգահեռ է անցկացնում նախորդ շրջանների հետ, երբ «...ի Դվին, յԱնի, և ի Սիս նստողք հայրապետքն ի ժամանակս իշխանութեան մերայնոց թագաւորաց և իշխանացն էին, նստէին, և որոց օրինականութեամբն կառավարէին զգործս և վարէին զհայրապետական իշխանութիւնն, որք որպէս թէ ի վարդէ և ի մանուշակէ կազմէին զդեղս առողջարարս»:[19]

Սակայն Երևանցին լավ էր գիտակցում, որ հայոց եկեղեցու տնօրենը նաև քաղաքական գործիչ է, և նրա խոսքն ունի պետական քաղաքականության նշանակություն: Ահա թե ինչու նա մի կողմից քննադատում է օտար տիրակալներին («ի ժամանակս իշխանութեան տաճկաց»), մյուս կողմից դրվատում Ջհան շահին, որի համաձայնությամբ հայոց ընդհանրական աթոռը 1441թ. կրկին վերադարձավ Էջմիածին:

Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշխատությունը հիմնականում բաժանված է չորս մասի. ա) հայոց եկեղեցու և նրա աթոռանիստ կենտրոնի պատմություն, բ) Էջմիածնի վանական տնտեսության պատմություն, գ) հայ եկեղեցուն և նրա կենտրոնին իրանական ու թուրքական իշխանությունների կողմից տրված հրամանագրերի սեղմ շարադրում, դ) Արևելյան Հայաստանի վանական թեմերի տնտեսության պատմություն:

Հատկապես արժեքավոր են Երևանցու հայտնած տեղեկությունները Արևելյան Հայաստանի 15-18-րդ դդ. ագրարային հարաբերությունների՝ մասնավորապես հողատիրության տեսակների, մասնավոր տիրույթների ստացման ուղիների, ավատական հողային ռենտայի վերաբերյալ: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև ջրատիրության իրավունքի ու ջրօգտագործման ձևերի, գյուղական համայնքի, վանքապատկան ու վանքահպատակ վայրերի բնակչության սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ նրա հայտնած տեղեկությունները:

---

[17] Նույն տեղում, էջ 2:
[18] Նույն տեղում, էջ 4:
[19] Նույն տեղում, էջ 18:

Առանձնակի կարևորվում են Սիմեոն Երևանցու վկայությունները էջմիածնի վանական հաստատության տնտեսական կյանքի մասնավորապես գյուղատնտեսական արտադրանքի, հացահատիկային, տեխնիկական ու այգեգործական կուլտուրաների մշակության, գյուղատնտեսական գործիքների, հողամշակման ձևերի, անասնապահության, արհեստավորական արտադրության և առևտրական գործունեության մասին և այլն:

Դարաշրջանի թե քաղաքական և թե սոցիալ-տնտեսական պատմության լուսաբանման համար նշանակություն ունի «Վաղարշապատցի Յարութիւն Արարատեանի կեանքը» անունը կրող ինքնակենսագրական բնույթի երկը:[20]

Այստեղ կան արժեքավոր շատ տեղեկություններ 17-18-րդ դդ. Արևելյան Հայաստանի վարչա-տնտեսական կառուցվածքի, խանական իշխանության հարկային համակարգի, էջմիածնի վանական հաստատության երկրի կյանքում ունեցած դերի, նրա տնտեսական կարողությունների մասին և այլն:

Նույն բնույթի սկզբնաղբյուրների շարքին է դասվում Մ. Թաղիադյանցի ուղեգրական աշխատությունը:[21] Չնայած դրանք հիմնականում վերաբերում են 19-րդ դարին, այնուհանդերձ պատմական էքսկուրսների իմաստով մեծ արժեք են ներկայացնում երկրի տնտեսական կյանքի ուսումնասիրման համար:

Պետականության բացակայության պայմաններում, երբ երկրում հաստատված էր անկայուն օտար նվաճողների իշխանությունները, հայ պատմագրությունը հանդես եկավ հիշատակարանների ու ժամանակագրությունների կերպարանքով:[22] Դրանց հեղինակները, լինելով նկարագրվող դեպքերի ժամանակակիցը, հաճախ նաև այդ դեպքերի ականատես, հաղորդում են չափազանց ճշգրիտ տեղեկություններ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

---

[20] Վաղարշապատցի Յարութիւն Արարատեանի կեանքը, Թիֆլիս, 1892, տես նաև Богданов А. Жизнь Артемиш Араратского, уроженца селения Вагаршапат близ Горы Арарат, СПб, 1813.

[21] Թաղիադյանց Մ., ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847 (այսուհետև Թաղիադեանց Մ.):

[22] Դիւան հայոց պատմութեան. Գ, Ժ, հրատարակեց Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912 (այսուհետև Դիւան): ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Խաչիկյան Լ. Ս., Եր. 1955, մասն Բ, կազմեց Խաչիկյան Լ., Եր., 1958, մասն Գ, Եր. 1967 (այսուհետև ԺԵ դարի հիշատակարաններ): ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Եր., 1974թ. հ. Բ, կազմեց Հակոբյան Վ., Եր., 1978 (այսուհետև ԺԵ դ. հիշատակարաններ): Մանր ժամանակագրություններ, հ.1, կազմեց Հակոբյան Վ., Եր.,1951, հ. 2, կազմեց Հակոբյան Վ., Եր., 1956 (այսուհետև Մանր ժամանակագրություններ):

Որպես կոնկրետ նյութ պարունակող սկզբնաղբյուրներ թեմայի ուսումնասիրման համար գիտական մեծ արժեք են ներկայացնում վիմական արձանագրությունները:[23]

Դրանք պարունակում են հարուստ տեղեկություններ ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, մասնավորապես եկեղեցական հողատիրության ու վանական տնտեսության պատմության վերաբերյալ:

Առանձնակի կարևորություն ուներ ՀՀ հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «Կաթողիկոսական դիվան» անունը կրող ֆոնդում պահվող վավերագրերը:[24] Ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառներին վերաբերող բազմակողմանի ու հարուստ փաստական նյութի պարունակությամբ, դրանք չունեն իրենց հավասարը: Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Էջմիածնի վանական հաստատության ելքն ու մուտքը պատկերող վավերագրերը: Դրանք վերաբերում են եկեղեցական հողատիրությանը, վանքապատկան ու վանքահպատակ համայնքների բնակչությանը, այդ համայքները եկեղեցական այս կամ այն թեմի մեջ հաստատելուն: Այս առումով ուշագրավ է մատյանների տեղեկությունները վանքապատկան գյուղացիության սոցիալական իրավիճակին, նրա ավատական կախման բնույթի մասին: Դրանք հավաստում են, որ քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում ճորտական հարաբերություններ գոյություն չեն ունեցել, որ գտնվելով տնտեսական կախման մեջ, գյուղացիները երբեք հողատերերի սեփականությունը չեն հանդիսացել և որ դասակարգային ներհակությունները նրանց միջև առաջացել են միայն տնտեսական հողի վրա: Այստեղ միաժամանակ տեղեկություններ կան ջրատիրության ու ջրի օգտագործման կարգի, երկրագործական կուլտուրաների մշակության, անասնապահական զբաղմունքի և շատ այլ հարցերի մասին: Երկրի տնտեսական կյանքին վերաբերող մատյանների տվյալների ուսումնասիրումը բերում է այն հաստատ համոզման, որ երկիրը գտնվելով օտար տիրապետության տակ՝ չի զրկվել տնտեսական իր ինքնուրույնությունից, չի վերածվել նրանց վարչական ու տնտեսական սիստեմի դիմազուրկ կցորդի:

---

[23] Կոստանյանց Կ., Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913 (այսուհետև՝ Վիմական տարեգիր):

[24] ՀՀ հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, 142, 241, 242, 252, 258 (այսուհետև՝ Մատենադարան, Կթղկ. դիվան), Վավերագրերի մի մասը հրատարակվել է Աբրահամյանի Հ. կողմից, տես «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների մասին արխիվային վավերագրեր», կազմեց Աբրահամյանը Հ., Եր., 1941 (այսուհետև՝ Կալվածագրեր):

Պակաս կարևորություն չունեն նաև նույն բնույթի այն վավերագրերի ուսումնասիրությունները, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերում:[25]

Իրենց պարունակած հարուստ ու հավաստի տեղեկություններով վստահելի սկզբնաղբյուրներ են նաև Մատենադարանի առանձին ձեռագրերը:[26] Նրանց հաղորդած տեղեկությունները երկրի թե քաղաքական և թե տնտեսական կյանքի մասին ավելի որոշակի ու կոնկրետ են և ուշադրության արժանի:

Դեպքերի հաղորդման հավաստիության տեսակետից ուսումնասիրության համար կարևորվում են օտար գրավոր սկզբնաղբյուրները: Դրանց մեջ առանձնանում են պարսկերեն վավերագրերը, որոնք գիտական հրատարակման գործում մեծ է Հ. Փափազյանի վաստակը: Ընդարձակ առաջաբաններով ու հարուստ ծանոթագրություններով կազմած նրա «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը»[27] անունով ժողվածուները հարուստ նյութ են պարունակում ինչպես հայ եկեղեցու աթոռանիստ կենտրոնի ու մնացած վանական հաստատությունների, այնպես էլ Արևելյան Հայաստանի 15-17-րդ դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին: Այդ վավերագրերի արժեքը նրանումն է, որ դրանք անմիջականորեն և ստույգ կերպով արտացոլում են իրականությունը, արձանագրում կառավարության քաղաքականության մեջ տեղի ունեցած բոլոր փոփոխությունները, հուսալի են թվականների, անունների և ընդհանրապես փաստական նյութի տեսակետից:

Օգտագործել ենք նաև պարսկերեն սկզբնաղբյուրների Ս. Ջալալյանցի,[28] Հ. Շահխաթունյանցի,[29] Մ. Սմբատյանցի,[30] Հ. Տեր-Հովհանյանի,[31] Մ. Բարխուդարյանցի[32] և Հ. Աճառյանի[33] կողմից հայերեն թարգմանված օրինակները:

---

[25] ՀԱԱ, Ֆ. 57, g.1, Գ. 1-7:

[26] Մատենադարան, Ձեռագրեր (համարական հաջորդականությամբ) 736, 1488, 1760, 2527, 3031, 7092, 7757, 7823, 8185:

[27] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտակներ, պր.1 (ԺԵ-ԺԶ դդ.), կազմեց Փափազյանը Հ. Դ., Եր., 1956, պր.2)1601-1650թթ.), Եր., 1959 (այսուհետև ՄՊՀ), Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, 2, Կալվածագիր, պր.1 (ԺԴ-ԺԶդդ.), կազմեց Փափազյանը Հ. Դ., Եր., 1968 (այսուհետև ՄՊԿ):

[28] Ջալալեանց Ս., ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա-Բ, Տփղիս, 1858 (այսուհետև՝ Ջալալեանց Ս.):

[29] Շահխաթունեանց Հ., Ստորոգութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատա, հ. 2, էջմիածին, 1892 (այսուհետև Շահխաթունեանց Հ.):

[30] Սմբատեանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառս, Վաղարշապատ, 1895 (այսուհետև Սմբատեանց Մ.):

[31] Տեր-Հովհանեան Հ., Պատմութիւն Նոր-Ջուղայու, որ յԱսպահան, հ. Ա-Բ, Նոր Ջուղա, 1880-1881:

Պարսկերեն սկզբնաղբյուրների մեջ իր առանձնակի տեղն ունի շահ Աբաս I-ի քարտուղար Իսքանդար Մունշիի «Թարիխ-ի ալամ ի արաի Աբասի» աշխատությունը, որը արևելագետ Վ. Մինորսկու կողմից թարգմանված է անգլերեն «Tahkirat al-muluk» վերնագրով:[34] Այն հիմնականում վերաբերում է Սեֆյան իրանի վարչական կարգերին, միաժամանակ ընդարձակ վկայություններ հաղորդելով երկրի ագրարային հարաբերությունների ու Անդրկովկասյան տիրությունների տնտեսական կյանքի մասին:

Օտարալեզու սկզբնաղբյուրների մեջ կարևորվում են նաև թուրքական[35] ու վրացական[36] աղբյուրները, որոնց հաղորդած տեղեկությունները հողատիրության ձևերի, հարկային համակարգի, բնակչության սոցիալական դրության, տնտեսական առանձին ճյուղերի մասին լրացնում են հայկական աղբյուրներին և հնարավորություն տալիս ավելի ընդգրկուն լուսաբանելու մեզ հետաքրքրող հարցերի զանազան կողմեր:

Նույն բնույթի սկզբնաղբյուրների շարքում առանձնակի արժեքավորում ունեն եվրոպական ուղեգրողների գրառումները: Ճիշտ է եվրոպացի ուղեգրողները Արևելք էին ուղարկվել իրենց կառավարությունների կողմից տրված կոնկրետ առաջադրանքներով, ինչպես նաև կաթոլիկ հաստատությունների կողմից տրված կոնկրետ հանձնարարականներով, այնուհանդերձ, չնայած իրենց գործունեության հստակ միտումնավորությանը, հաճախ հաջորդում են ճշգրիտ տեղեկություններ մեզ հետաքրքրող հարցերի մասին:

Հարկ է նշել, որ նրանք հիմնականում հյուրընկալվել են էջմիածնի վանական հաստատությունում և իրենց նոթագրություններում թողել են հայ հոգևոր կենտրոնի, ինչպես ագրարային հարաբերությունների վերաբերող, այնպես էլ նրա տնտեսական կյանքին առնչվող վկայու-

---

[32] Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ.Բ, Թիֆլիս, 1907 (այսուհետև՝ Բարխուդարեա Մ. նց):

[33] Աճառյան Հ., Վավերագրեր հայ–պարսկական հարաբերությունների մասին, Եր., 1927:

[34] **Tadhnirat al-muluk, a manuab of Safavid administration, by V. Minorsky, London, 1943** (այսուհետև՝ **Tadhnirat al-muluk**).

[35] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. 2, կազմեց Սաֆրաստյան Ա.Խ., Եր., 1964 (այսուհետև՝ Թուրքական աղբյուրներ), հ.3, Էվլիա Չելեբի, Ուղեգրություններ, Եր., (1967) այսուհետև՝ Էվլիա Չելեբ, Օսմանյան օրենքները Արևելյան Հայաստանում (16-17-րդ դդ.) Կանոնանամեներ, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Սաֆրաստյանի Ս. Խ. և Զուլալյանի Մ.Կ., Եր., 1964 (այսուհետև՝ Օսմանյան օրենքները):

[36] Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Եր., 1936, հ. Գ, Եր., 1956:

թյուններ: Դրանց շարքում առանձնանում են Ժ. Շարդենի,[37] Ժ. Տավերնիեի[38] ու Ս. Օլեարիուսի[39] երկերը: Նույն բնույթի սկզբնաղբյուրների շարքում կարևորվում են նաև վենետիկցի ճանապարհորդներ Կատերինո Զենոյի, Զոզեֆա Բարբարոյի, Ամբրոսիո Կոնտարինիի, Ջիովան Մարիա Անջիոլելլոյի, Վինչենցո դ'Ալեսանդրիի, անգլիացիներ Անթոնի Ջենկինսոնի ու Ջոն Նիուբերիի նոթագրությունները, որոնց գիտական վերհանման ու բնագրին հարազատ հայերեն թարգմանության գործում անգնահատելի է Հովհ. Հակոբյանի վաստակը:[40]

Որպես սկզբնաղբյուր կարևոր արժեք ունեն նաև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո ցարական աստիճանավորների կողմից երկրի տեղազննման արդյունքներն ամփոփող փաստագրական ժողովածուներն ու առանձին հետազոտություններ:[41] Դրանց շարքում հատկապես կարևոր է Ի. Շոպենի ուսումնասիրությունը, որը չնայած վերաբերում է 19-րդ դ. 30-50-ական թթ., այնուհանդերձ հեղինակի կողմից առանձին հարցերի վերաբերյալ կատարած պատմական էքսկուրսները խիստ ուշագրավ են մեզ հետաքրքրող թեմայի ուսումնասիրման առումով:[42] Հատկապես կարևորվում են էջմիածնի վանական հաստատության ագրարային հարաբերություններին ու տնտեսական կյանքի մասին Շոպենի հայտնած վկայությունները:

Քննարկվող թեմայի լուսաբանման գործում զգալի ներդրում ունի հայ պատմագիտությունը, որի առանձին ներկայացուցիչներ իրենց ուսումնասիրություններում մասնակի կամ էլ հպանցիկ անդրադարձել են խնդրո առարկա հարցին: Հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության գիտական հետազոտության գործում առաջին փորձը կատարել է Մ. Չամչյանը, որը իր «Պատմութիւն հայոց» մեծածավալ աշխատության երրորդ հատորում հայ պատմիչներին վերաշարադրելու մեթո-

Ա 92068 II

---

[37] J. Chardin, Voyages du chevalir Chardin en Perse et autres Lieux du L'Orient, voe 1-5, Paris 1811 (այսուհետև Chardin).

[38] Tavernier J.B, Les six voyages de Jean Babtist Tavernier en Perse et aut Indes, Paris, 1681 (այսուհետև՝ Tavernier).

[39] Подробное описание путишествия Голитонского посольства в Московию и Персию в 1633, 1636, и 1639 годах, составленное секретарем посольства Агамом Олираем, СПб, 1906 (այսուհետև Олеарай).

[40] Հակոբյան Հ., Ուղեգրություններ. Եր., 1932:

[41] Сборник материалов для описания местностеи и племен Кавказа, вып. 1 Тифлис, 1881 (այսուհետև Сборник материалов). Материалы для описания экономического быта государственных крестьян Закавказкого края, т. 1, Тифлис, 1885 (այսուհետև՝ Материалы): Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказкого края т. 4, Тифлис, 1888 (այսուհետև Свод материалов): Гакстгаузен А. Закавказкого край, т.1, СПб, 1856.

[42] Шопен И. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852 (այսուհետև Шопен И.).

դով, օգտագործելով միաժամանակ առկա մյուս սկզբնաղբյուրները, շարադրել է հայ եկեղեցու պատմությունը՝ լայն ընդգրկումով ժամանակաշրջանի քաղաքական անցուդարձի հետ:[43]

Անգնահատելի է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի դերը հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրման գործում: Ինչպես նշում է նա իր «Հայոց եկեղեցին» աշխատության նախաբանում, ինքը նպատակ է հետապնդել «Հայոց եկեղեցին իւր իսկական տեսակետէն նկատել, անոր բնութիւնը ճշտութեամբ բացատրել, անիկայ օտարներուն հաւատարմութեամբ ծանօթացնել, անոր նկատմամբ տարածուած սխալ տարածայնութիւնները պարզել»:[44] Այդ նպատակից էլ ելնելով՝ հեղինակը մանրամասնորեն նկարագրում է հայոց եկեղեցու ներքին կառուցվածքը: Հատկապես կարևորվում է աշխատության հավելվածի բաժինը, ուր ճշգրտումներով տրված են կաթողիկոսների ժամանակագրությունն ու թեմերի վիճակագրությունը:

Վանական եկեղեցական հողատիրության, վանական հաստատության ու վանքապատկան գյուղացիության սոցիալ-իրավական փոխհարաբերությունների հարցերին է անդրադարձել Ս. Եղիազարովը:[45] Համադրելով Արևելյան Հայաստանի խանական ժամանակաշրջանի հողային հարաբերությունների վերապրուկները միջնադարյան Եվրոպայի ու Ռուսաստանի հողային հարաբերությունների հետ, նա գտնում է, որ այստեղ թեկուզ մասնակիորեն գոյություն է ունեցել հողի մասնավոր սեփականություն: Անդրադառնալով գյուղական համայնքին Ս. Եղիազարովը իրավացիորեն հանգում է այն տեսակետին, որ համայնքը այն հավաքական կազմակերպությունն էր, որի վրա էր դրված հարկերի ու տուրքերի ժամանակին գանձումը և որ այն հանդիսանում էր գյուղատնտեսական արտադրության կազմակերպման հիմնական օղակը:

Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրության բնագավառում Հ. Մանանդյանի նախընթաց ամբողջ գործունեության վերջնական արդյունքն է «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատությունը, որի երրորդ մասը նվիրված է 12-15-րդ դարերին:[46] Աղբյուրների մանրազննին վերլուծությամբ Հ. Մանանդյանը բացահայտել է քաղաքական այն իրադրությունը, որի պայմաններում հնարավոր դարձավ Մայր Աթոռի ղեկավարությունը Սսից տեղափոխել Էջմիածին:

---

[43] Միքայել Չամչեան, Պատմութիւն հայոց , հ.Գ, Վենետիկ, 1786 (այսուհետև՝ Չամչեան Մ.):

[44] Մաղաքիա Օրմանեան, Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911, էջ 3 (այսուհետև՝ Օրմանեան Մ.):

[45] Егиазаров С., Сельская община, Казань, 1883 (այսուհետև՝ Егиазаров С.).

[46] Մանանդյան Հ., Երկեր, հ. Գ, Եր., 1977 (այսուհետև՝ Հ. Մանանդյան):

Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից էջմիածին համարելով «ազգային խոշոր նշանակություն» ունեցող երևույթ, Լեոն իր «Հայոց պատմություն» աշխատության երրորդ հատորի առաջին և երկրորդ գրքերում հայ և օտար սկզբնաղբյուրների ու գիտական գրականության լայն ընդգրկմամբ շարադրել է Հայաստանի 16-18-րդ դդ. քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի պատմությունը:[47] Լուսաբանելով հայ ժողովրդի քաղաքական ու ազգային ազատագրական կյանքում հայ հոգևոր կենտրոնի ունեցած դերը՝ Լեոն իրավացիորեն նշում է, որ նրա ջանքերով «ազգային ոգին պահպանվում էր հեռավոր ու կորած անկյուններում»: Հեղինակը միաժամանակ ուսումնասիրել է Հայաստանում հաստատված ագրարային հարաբերությունների էությունը և այդ ֆոնի վրա տվել վանական-եկեղեցական հողատիրության առանձնահատկությունները: Հարկ է նշել, որ այս հարցում Լեոն վկայակոչել է հիմնականում Ի. Շոպենի, Իվանենկոյի, Ս. Զելինսկու և Ս. Եղիազարովի որոշ դրույթներ և հարցի նոր մեկնաբանությունների որևէ նշանակալի փորձ չի կատարել: Աշխատության առանձին էջերում անդրադառնալով հայ գյուղացիության սոցիալ-իրավական դրությանը, Լեոն լուսաբանում է նաև գյուղական համայնքի կառուցվածքին վերաբերող մանրամասնություններ:

Թ. Ավդալբեգյանը առաջիններից մեկն է, որ առանձին ուսումնասիրության բնագավառ դարձրեց 17-18-րդ դդ. Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունը:[48] Առանձին նշանակություն տալով եկեղեցական հողատիրության ուսումնասիրությանը, հեղինակը մանրամասնորեն անդրադարձել է եկեղեցու հողային տիրույթների ընդլայնման պայմաններին, նվիրաբերված ու գնված հողատարածությունների տնօրինման կարգին, եկեղեցական կալվածքների ապահարկության իրավունքին, ավատական հողային ռենտային և այլն: Հարկ է նշել, որ ագրարային հարաբերություններին վերաբերող առանցքային որոշ հարցերում Թ. Ավդալբեգյանը տալիս է երկիմաստ պատասխաններ: Օրինակ չի կարելի համաձայնվել սրությամբ վիճարկվող հողի մասնավոր սեփականության հարցում Թ. Ավդալբեգյանի մի ընդհանուր ձևակերպման հետ, թե «հողի սեփականացումն արտադրության մեջ անմիջական մասնակցություն չունեցող խավերին հողագործի արտադրած արդյունքից որոշ բաժին ունենալու իրավունք էր տալիս»:[49] Նշենք, որ նույնանման իրավունքից օգտվում էին նաև պետական ծառայության մեջ գտնվող բարձրաստիճան անձնավորություն-

---

[47] Լեո Երկերի ժողովածու, հ. 3, հ. 1, Եր., 1969, հ. 2, Եր., 1973 (այսուհետև Լեո):
[48] Ավդալբեկյան Թ., Բահրան և մյուլքը 17-18-րդ դդ. «Նորք», գ. 2-րդ, Եր., 1923: Երկրագործական հավելյալ արդյունքի նորման 17-18-րդ դդ. և 19-րդ դ. սկզբներին, «Նորք», գ. 3-րդ: Աբ-ի քուրան ջրանցքը Պարսկաստանում և համանուն լաբ-ի քուրան հարկը, ՊԲՀ, թիվ 1, Եր., 1958:
[49] Ավդալգեկյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 427:

ները, որոնք չունեն հողի մասնավոր սեփականության իրավունք: Արևելյան Հայաստանի իրանական տիրապետության ժամանակաշրջանի ագրարային հարաբերությունների պատմության վերլուծությանն է նվիրված Ս. Մարկոսյանի աշխատությունները, որոնցում իրենց լուսաբանումն են գտել նաև վանական-եկեղեցական հողատիրությանը վերաբերող մի շարք հարցեր:[50]

Ժխտելով հողի մասնավոր սեփականության գոյությունը, նա գտնում է, որ հողը բաժանված չէր առանձին սեփականատերերի միջև և որ այն կազմում էր խաների, բեկերի ու մելիքների պետականորեն կազմակերպված խմբական սեփականություն: Հենց հողի պետական սեփականության առկայությամբ էլ նա ժխտում է ճորտության գոյությունը ուշ-միջնադարյան Հայաստանում: Նա 17-18-րդ դդ. վերաբերող տվյալների հետազոտման հիման վրա գալիս է այն եզրակացության, թե Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերություններն իրենց էությամբ ֆեոդալական լինելով հանդերձ, իրենց արտահայտության ձևերով չեն համընկնում կլասիկ ֆեոդալիզմի արտահայտության ձևերի հետ:

Աղբյուրագիտական հիմք ունենալով հիմնականում Ս. Երևանցու «Զամբռ» աշխատությունը, Բ. Հարությունյանը լուսաբանում է էջմիածնի վանական հաստատության 17-18-րդ դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությունը:[51] Եթե ժամանակի ագրարային հարաբերությունների վերաբերյալ նրա հայտնած տեսակետները ավելի հիմնավոր են և վիճահարույց տեսքով կարելի է ընդունել կամ մերժել, ապա տնտեսական և այլ բնույթի մի շարք հարցեր անընդունելի են: Օրինակ, չի կարելի համաձայնվել այն մտքին, թե էջմիածնի տնտեսության վերականգնումը և հետագա զարգացումը հնարավոր դարձավ «Գյուղացիության չունևոր շերտի դաժան շահագործման» միջոցով: Կամ, հեղինակի կարծիքով էջմիածնի վանական տնտեսությունը հիմնված էր վարձու աշխատուժի օգտագործման վրա, որն էլ մատնացույց է անում ավատական կարգերի քայքայումը: Էջմիածնի վանական տնտեսության 17-18-րդ դդ. ագրարային հարաբերությունների պատմության ուսումնասիրմանն է նվիրված Ս. Պողոսյանի «Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17-18-րդ դդ. և էջմիածինը որպես

---

[50] Մարկոսյան Ս., Հողային հարաբերությունները Անդրկովկասի խանություններում ռուսական տիրապետության նախօրյակին, ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գ.1, Եր., 1936: Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում 17-18-րդ դդ. և 19-րդ դ. առաջին քառորդում, Եր., 1959: Ռուսաստանին միանալու նախօրյակին Արևելյան Հայաստանի հողատիրության և ճորտատիրության հարցի շուրջ, ՊԲՀ, թիվ 3-4, Եր., 1961:

[51] Арутюнян Б. М., Крупное Монастырское хозяйство в Армении в 17-18 вв., Ер. 1940: Նույնի, Վարձու աշխատանքը Երևանի խանության մեջ 18-րդ դ. և 19-րդ դ. առաջին քառորդում, ՊԲՀ, թիվ 1, Եր., 1959 (այսուհետև Арутюнян Б. М., Крупное Монастырское хозяйство).

խոշոր կալվածատեր» ստվարածավալ հոդվածը:[52] Հիմնականում ճիշտ վերլուծելով մուլքի, որպես մասնավոր հողային սեփականության արտահայտման հիմնական տեսակի էությունը, հեղինակը հետևելով Բ. Հարությունյանին հանգում է այն սխալ կարծիքին, թե էջմիածնի վանական տնտեսությունում լայն չափերով կիրառվող վարձու աշխատուժի օգտագործումը քայքայում էր ավատական արտադրահարաբերությունները և ճանապարհ հարթում կապիտալիզմի զարգացման համար:

Արևելյան Հայաստանի հիմնական մասը կազմող Երևանի խանության 18-րդ դ. վերջին երկու տասնամյակների պատմության լուսաբանմանն է նվիրված Վ. Գրիգորյանի մենագրությունը:[53] Օգտագործելով բազմաթիվ հայտնի և անհայտ արխիվային նյութեր, հեղինակը աշխատության առաջին գրքում վերլուծության է ենթարկում խանական վարչական սիստեմը և տալիս ագրարային հարաբերությունների ընդհանուր պատկերը: Միաժամանակ, ուշադրության են արժանի հեղինակի այն դիտարկումները, որոնք վերաբերում են էջմիածնի վանական հաստատության տնտեսական կյանքին:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով բազմաթիվ հայրենի և օտար տպագրված և անտիպ նյութեր Աշ. Հովհաննիսյանը հանգամանորեն լուսաբանելով հայ ազատագրական մտքի դեգերումները 15-18-րդ դդ.՝ մանրամասնորեն վերլուծում է նաև նշված ժամանակահատվածի ավատական հարաբերությունները կատարելով մատենագիտական ու ժամանակագրական կարևոր ճշգրտումներ:[54] Վեր հանելով հայ եկեղեցու ու նրա աթոռանիստ կենտրոնի դերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման գործում, նշելով այդ ուղղությամբ նրա արգասաբեր գործունեությունը, Աշ. Հովհաննիսյանը միաժամանակ լուսաբանում է հայ եկեղեցու իրավական դրության, նրա սոցիալ-տնտեսական վիճակի մի շարք մանրամասնություններ: Դրվատելով Մովսես Տաթևացու և Հակոբ Ջուղայեցու վերանորոգչական գործունեությունը՝ հեղինակը միաժամանակ լուսաբանում է նրանց լուսավորչական ջանքերը, որի նպատակն էր հակազդել դասալքման ու բարոյալքման այն գործընթացին, որ ծավալվել էր վանական միջավայրում 15-16-րդ դդ.:

Լուսաբանելով 18-րդ դ. առաջին քառորդի հայ ազատագրական շարժման պատմությունը՝ Պ. Հարությունյանը անդրադառնում է նաև

---

[52] Պողոսյան Ս., Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17-18-րդ դդ. և էջմիածինը որպես խոշոր կալվածատեր, Երևանի պետական, համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 13, Եր., 1940 (այսուհետև Պողոսյան Ս., Եկեղեցական հողատիրությունը):

[53] Գրիգորյան Վ., Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում, Եր., 1958:

[54] Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2-րդ, Եր., 1959 (այսուհետև Հովհաննիսյան Ա., Դրվագներ):

երկրի ագրարային հարաբերություններին:[55] Վկայակոչելով Ի. Պետրուշևսկու եզրակացությունները, Պ. Հարությունյանը բացառապես վանական-եկեղեցական հողատիրության օրինակով հիմնավորում է մուլքի, որպես մասնավոր հողային սեփականության առկայությունը Արևելյան Հայաստանում:

Տնտեսագետ Հ. Թումանյանը վկայակոչելով մուլքերի օտարումը ու ժառանգումը հաստատող որոշ վավերագրեր, ամփոփել է, թե «մուլքադարությունը Հայաստանում երևան է եկել փոշիացած հայկական ֆեոդալիզմի փլատակների վրա, փոխարինել է ֆեոդալական հողատիրությանը»:[56] Ըստ էության չկատարելով փաստական նյութի ինքնուրույն վերլուծություններ, հեղինակը խիստ ընդհանուր գծերով (9 էջի սահմաններում) փորձել է ներկայացնել նաև էջմիածնի վանական տնտեսության 17-18-րդ դդ. պատկերը:

Հ. Փափազյանի ուսումնասիրություններում ի մի ամփոփված հարուստ պատմական փաստական նյութերը որոշակի լույս են սփռում հայ ժողովրդի պատմության 16-18-րդ դդ. ամենակնճռոտ հարցերի լուսաբանման վրա:[57]

Արգասաբեր աշխատանքի արդյունք հանդիսացող նրա «Ագրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում 16-17-րդ դդ.» ուսումնասիրությունը, որը շարադրված է հայկական ու պարսկական սկզբնաղբյուրների հիման վրա, չափազանց կարևոր է Արևելյան Հայաստանի սեֆյան տիրապետության ժամանակաշրջանի ագրարային հարաբերությունների ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրման համար:[58] Բացահայտված է հողային սեփականության

---

[55] Арутюнян Л.Т., Освободительное движение армянского народа в первой четверти 18 в., М, 1954 (այսուհետև՝ Арутюнян Л.Т., Освободительное движение).

[56] Թումանյան Հ.Ե., Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Եր., 1960:

[57] Փափազյան Հ., Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, Հայաստանի ԳԱ «Տեղեկագիր», թիվ 8, Եր., 1955: Նույնի՝ Վաղարշապատ գյուղի 1725 և 1728թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», թիվ 5, Եր., 1960: Նույնի՝ К вопросу о техническом значении налогового термина "Малиджахат", "Известия" АН Армения, серия общ наук, N 2, Ер., 1961. Նույնի՝ Շարիաթական իրավական նորմերը և հողի ֆեոդալական սեփականության հարցը Արևելքում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ. թիվ 12, Եր., 1960: Նույնի՝ Զրատիրության մասին դիվանական վավերագրերը և շահ Սաֆիի 1638թ. հրովարտակը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 12, Եր., 1973: Նույնի՝ Այգիներն ու այգետեղերը ըստ հայերեն և պարսկերեն կալվածագրերի, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ. թիվ 1, Եր., 1982: Նույնի՝ Սոֆիայի Կիրիլ և Մեֆոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը, ՊԲՀ, թիվ 3, Եր., 1984:

[58] Папазян А.Д., Аграрные отношения в Восточной Армении в 16-17-вв. Ер. 1972 (այսուհետև՝ Папазян А.Д. Аграрные отношения).

էությունը, լուսաբանված է եկեղեցական հողատիրության պատմությունը, վեր է հանված երկրի հարկային համակարգի առանձնահատկությունները և այլն:

Տպագիր ու ձեռագիր նյութերի մանրազնին հետազոտությամբ ուսումնասիրելով Երևան քաղաքի պատմությունը՝ Թ. Հակոբյանը իր աշխատության 2-րդ մասում Հայաստանի մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի լուսաբանմամբ ընդհանուր գծերով տվել է երկրի ագրարային հարաբերությունների էությունը, պարզաբանել քաղաքում կառուցված վանքերի ու եկեղեցիների պատմությունը և դրան զուգընթաց վեր հանել էջմիածնի հոգևոր կենտրոնի խաղացած դերը:[59]

16-18-րդ դդ. թուրք-իրանական հարաբերությունների առնչությամբ հայ ժողովրդի պատմության մի շարք կարևոր էջերի լուսաբանմանն են նվիրված Մ. Զուլալյանի աշխատությունները:[60] Թեև դրանք հիմնականում վերաբերում են Արևմտյան Հայաստանին, միաժամանակ լայն զուգահեռներ են անցկացված Արևելյան Հայաստանի թե՛ քաղաքական կյանքի և թե՛ սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ: Ուշադրության են արժանի հեղինակի դիտարկումները Արևմտյան Հայաստանի թեմերից հօգուտ էջմիածնի գանձվող հասույթների, էջմիածնի և Աղթամարի կաթողիկոսությունների հակամարտության, 17-րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում էջմիածնի գերիշխանությունը սահմանափակելու կամ դրանից իսպառ ազատվելու վերաբերյալ:

10-16-րդ դդ. Արցախի քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության գիտական հետազոտության գործում կարևորվում է Բ. Ուլուբաբյանի «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դդ.» մենագրությունը,[61] ուր հեղինակը հենվելով սկզբնաղբյուրների ու հայագիտական երկերի մանրակրկիտ հետազոտության վրա, լուսաբանել է «Հայոց Արևելից կողմանց» կաթողիկոսության կենտրոնատեղի Գանձասարի վանքի հետ կապված մի շարք հարցեր: Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում հեղինակի դիտարկումները էջմիածին-Գանձասար փոխհարաբերությունների մասին:

Իրանական տիրապետության վերջին շրջանում Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության, երկրի արտաքին քաղաքական կացության, հասարակական տարբեր հոսանքների ու նրանց նպատակադրումների վերաբերյալ հարցերն է քննարկված Վ. Դիլոյանի մե-

---

[59] Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800թթ.), Եր., 1972:

[60] Զուլալյան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը օսմանյան կայսրության մեջ, Եր., 1966: Նույնի՝ Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Եր., 1980 (այսուհետև՝ Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը):

[61] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դդ., Եր., 1975:

նագրությունում:[62] Եթե աշխատությունում ընդհանուր գծերով տրված է Արևելյան Հայաստանի 19-րդ դ. սկզբի տնտեսական հարաբերությունների պատկերը, ապա «Էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դ. սկզբին» հոդվածում առավել հանգամանորեն վերլուծված է վանական հաստատության տնտեսական կյանքը:[63]

Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմաքննական վերլուծությանն է նվիրված Ս. Ալեքսանյանի մենագրությունը :[64]

Աշխատությունում իբրև երկրի ագրարային համակարգի կարևոր առանձնահատկություն ընդգծվում է հողային սեփականության պետական ձևի գերիշխումը, որը ըստ հեղինակի խոչընդոտում էր առաջադիմական տեղաշարժերը տնտեսական կյանքում:

Հայաստանի 14-րդ դ. վերջին քառորդի և 15-րդ դ. ժամանակահատվածի պատմության ուսումնասիրությանն է նվիրված Գ. Կիրակոսյանի աշխատությունը:[65] Հեղինակը մատենագրական, վիմական և այլ աղբյուրների հավաստի քննությամբ պարզաբանել է քաղաքական այն իրադրությունը, որի պայմաններում հնարավոր դարձավ Էջմիածին տեղափոխել Ամենայն Հայոց ընդհանրական աթոռը:

Քննարկվող հարցին մասնակի մոտեցում է ունեցել և օտար պատմագրությունում, որի մեջ առանձնանում են Ի. Պետրուշևսկու ուսումնասիրությունները:[66] Դրանցում հեղինակը աղբյուրագիտական լայն հիմքի վրա հանգամանորեն քննում է հողային սեփականությանն ու ավատական ռենտային վերաբերող հարցերը: Առարկելով Ս. Մարկոսյանին, Ի. Պետրուշևսկին ցույց է տալիս, որ Անդրկովկասյան խանություններում հիմնականում տիրապետել է ֆեոդալական հարաբերությունների միևնույն տիպը և որ մուլքը լայն իմաստով նախ հողային մասնավոր սեփականություն էր, նեղ իմաստով հողային ռենտայի արտահայտման ձև: Անդրադառնալով գյուղացիության սոցիալ-իրավա-

---

[62] Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դ. առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989:

[63] Դիլոյան Վ., Էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դ. սկզբին, «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Եր., 1971, էջ 153-180:

[64] Ալեքսանյան Ս., Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմությունը, Եր., 1991:

[65] Կիրակոսյան Գ., Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմենական ցեղերի արշավանքների շրջանում, Եր., 1997:

[66] Петрушевский И., Вакфные имения Ардебильского Мазара 17в,)Труды института им. А. Бакиханова АН Аз. ССР Т. 1, Баку, 1947: Նույնի Персицкие официальные документы как источник по истории феодальных отношений в Азербаджане и Армении 16-начале 19 вв. Проблеми источниковедения кн. 3, Л. 1940: Նույնի Очерки по истории феодальных отношений в Азербаджане и Армении в 16-начале 19вв. Л, 1949 (այսուհետև Петрушевский И., Очерки).

կան դրությանը՝ հեղինակը նաև էջմիածնի վանական հաստատության ու վանքապատկան գյուղացիության փոխհարաբերության օրինակով փորձում է լուսաբանել գյուղացիության ավարտական կախման բնույթը: Նա գտնում է, թե Սեֆյան տիրապետության սահմաններում առկա են եղել ճորտատիրական հարաբերություններ և որ գյուղացիների հողին ամրացնելու գործընթացը կապված է եղել դեռ թաթար-մոնղոլական քոչվոր ցեղերի տիրապետության, քոչվորական ֆեոդալիզմի սոցիալ-իրավական հարաբերությունների և գործող նորմերի հետ:

Սեֆյան տիրապետության սահմաններում ագրարային հարաբերությունների պատմության լուսաբանմանն է նվիրված Ն. Ֆիլրոզեի ուսումնասիրությունը:[67] Հեղինակը նաև հոգևոր հաստատությունների հողային սեփականության օրինակով հիմնավորում է մուլքի, որպես մասնավոր հողասեփականության հիմնական տեսակի առկայությունը:

Տարալեզու սկզբնաղբյուրների համադիր քննությամբ Ա. Նովոսելցևը լուսաբանել է 17-18-րդ դդ. Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների էությունը:[68] Նրա կարծիքով, հողային սեփականության զարգացումը, մասնավորապես Հայաստանում, բազմիցս ընդհատվում էր և դրանով թուլացնում մասնատերերի տնտեսական նախաձեռնությունը:

Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում Ա. Ռախմանիի աշխատանքը,[69] ուր շահ Աբաս 1-ի կենսագիր Իսքանդար Մունշիի երկի համակողմանի վերլուծությամբ փորձ է արվում գնահատել Անդրկովկասյան խանությունների թե քաղաքական և թե սոցիալ-տնտեսական կյանքին առնչվող մի շարք հարցեր:

Հայերեն լեզվի իմացությունը հնարավորություն է ընձեռել Ս. Մամեդովին օգտագործելու հիմնականում հայկական աղբյուրներ 17-18-րդ դդ. Իրանի Անդրկովկասյան տիրույթների սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրման համար[70]: Ուշագրավ են հեղինակի եզրակացությունները հողատիրության տեսակների, մասնավոր հողային սեփականության, վանական-եկեղեցական հողատիրության աճի ու զարգացման մասին և այլն: Սակայն որոշ հարցերում հեղինակը կատարում է նպատակային շեղումներ: Մասնավորապես, երբ փորձ է արվում Ադրբեջան անվան տակ ընդգրկել թե Շիրվանի, թե՛ Թավրիզի և թե Ղարաբաղի խանությունների տարածքները, ինչպես նաև Նախիջևանի խանության Շարուրի ու Զանգեզուրի

---

[67] Фильрозе Н. к вопросу о формах земельной собственности в государстве Сефевидов "Очерки по новой истории стран Среднего Востока" М. 1951.

[68] Новосельцев А.П., Пути развития феодализма М., 1972: Նույնի՝ Города Азербайджана и Восточной Армении в 17-18 вв "История СССР" N 1, М., 1959.

[69] Рахмани А., Тарих-и алам фай-и Аббаси как источник по истории Азербайджана, Баку, 1960.

[70] Мамедов С. А. Исторические связи азербайджанского и арманского народов во второй половины 17 первоы 18 вв., Баку 1977.

շրջանները: Նախ նշենք, որ 17-18-րդ դդ. «Ադրբեջանի տարածք» հասկացողությունը, ինչպես նշում է Ս. Մամեդովը, գոյություն չուներ որպես ինքնուրույն վարչական միավոր: Եվ բացի այդ, ինչպես վկայում են աղբյուրները, Երևանի խանության վարչական բաժանումը 17-18-րդ դդ. համապատասխանում էր Այրարատի և Սյունիքի գավառներին, իսկ 18-րդ դ. վերջերին Երևանի խանությանն է միացել նաև Նախիջևանի խանությանը ենթական Շահուլի մահալը:

Տալով թեմայի գիտական մշակման համառոտ պատմությունը, կամենում ենք նշել, որ աշխատությունը շարադրելիս օգտվել ենք նաև Լ. Տիգրանովի,[71] Ե. Շահազիզի,[72] Վ. Բդոյանի,[73] Վ. Բայբուրդյանի,[74] Ա. Համբարյանի,[75] Պ. Բուդկովի,[76] Ն. Դուբրովինի,[77] Ն.Դ. Միկլուխա Մակլայի, [78] Մ. Արունովայի և Կ. Աշրաֆյանի[79] ուսումնասիրություններից, ուր արծարծված են մեզ հետաքրքրող թեմայի հետ առնչություն ունեցող մասնակի մի շարք հարցեր:

---

[71] Тигранов Л., Из Обществено-экономических отношений в Перси, СПб, 1909.

[72] Շահազիզ Ե., Հին Երևանը, Եր., 1931:

[73] Բդոյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972:

[74] Байбуртян В.А., Армянская колония Новой Джульфы в 17 в. (Роль Новой Джульфы в ирино-заподноевропейских политических и экономических связах), Ер., 1969.

[75] Համբարյան Ա., Առևտրական հողագործության աճի պատմությունից Երևանյան նահանգում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», թիվ 12, Եր., 1954:

[76] Бутков Л., Материалы для Новой Истории Закавказа с 1722-1803 год, т. 2, СПб, 1869.

[77] Дубровин Н., История война и владычества на Кавказе, т. 2, СПб, 1886.

[78] Миклухо-Миклой Н., К вопросу о налоговой политике в Иране при шахе Аббасе 1 (1587-1629) советское востоковедение т. М, 1949.

[79] Арунова М. и Ашрифян П., Государство Надир-шаха Ашира М., 1958.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ամենայն Հայոց կաթողիկոսությունը XV-XVIII դարերում

Հայաստանում թուրքմենական կարա-կոյունլու և ակ-կոյունլու ցեղերի շուրջ հարյուրամյա տիրապետությունը և վարած տնտեսական քաղաքականությունը երկիրը հասցրին կործանման եզրին: Այդ ցեղերի բախումները և նրանց հետևանքները նվազ դաժան չէին քան սելջուկների ու մոնղոլների բոլոր արհավիրքները: Տարիներ շարունակ սրի ու գերության էր մատնվում խաղաղ ազգաբնակչությունը ողջ Հայկական Լեռնաշխարհում «ի յամեհին չար և ի դառն և ի նեղութեան ժամանակի, յորում ամի բոլոր աշխարհս հայոց ի յառ և ի յաւարի, ի սուր և ի գերութիւն մատնեցաւ վասըն ծովացեալ մեղաց իմոց և ի ձեռս անաւրէն և անիծյալ ազգին նետողաց»,- դառնացած գրում է Թովմա Աբեղան 1425 թ. Կարա-կոյունլու Իսքանդարի կողմից Վանի գրավման առիթով, Աղթամարում գըրված ավետարանի հիշատակարանում:[1] Նույն անցքերը արձագանք են գտել նաև Թովմա Մեծոփեցու մոտ հետևյալ խոսքերով «Եւ երկիր. եւ աշխարհ ամենայն գերեօք, լալով, սգով եվ կոծով»:[2] Օգտվելով անիշխանության պայմաններից Հայաստանի տարբեր շրջաններում թուրքմենական և քրդական առանձին ցեղապետեր հաստատել էին իրենց տիրապետությունը: Թեև Իսքանդարը ստեղծել էր ինքնիշխան պետություն, թեմուրիդներն իրենց հերթին փորձում էին պահպանել իրենց գերիշխանությունը Լանկ-Թամուրի նվաճած երկրների վրա: Մի կողմից թեմուրիդների և, մյուս կողմից Հայաստանում ինքնագլուխ դարձած ցեղապետերի միջև տեղի էին ունենում անընդմեջ կռիվներ: Ինչպես վկայում է 1425 թ. գրված հիշատակարանը, Ակ-կոյունլուների առաջնորդ Օսմանը հարձակվելով Արճեշի ու Արծկեի շրջանների վրա, կոտորել ու գերի է տարել տեղի բնակչությանը:[3] Հաջորդ, 1426 թ. գարնանը, Թովմա Մեծոփեցու վկայությամբ, Արծկեի շրջանը ենթարկվել է նոր ավերածության, երբ Բաղեշի քրդերի առաջնորդությամբ գրավել են քաղաքը ու բնակչությանը ենթարկել կողոպուտի և ավերածության:[4] Մեծոփեցու վկայությամբ նույն բախտին է արժանանում նաև Թոխատի, Սեբաստիայի, Խարբերդի ու Դերջանի բնակ-

---

[1] Տես Լալայան Ե., Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, Թիֆլիս, 1915, էջ 353:
[2] Թովմա Մեծոփեցի, էջ 121:
[3] Տես Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, էջ 353:
[4] Թովմա Մեծոփեցի, էջ 85:

չությունը, ուր 1435 թ. այցելում է Իսքանդարը:[5] Պակաս ավերիչ հետևանքներ չունեցան ներքին երկպառակտական կռիվները, որոնք շարունակական երեվույթներ էին: Նման մի բախման պատկեր է նկարագրում Թովմա Մեծոփեցին, երբ Իսքանդարի ու նրա եղբոր Ջհանշահի միջև 1436-1437 թթ. ծագած կռիվներից ավերածության է ենթարկում Արարատյան երկիրը:[6]

Աղբյուրների վկայությամբ երկրի քայքայման պատճառներից եղել են ինչպես բազմաթիվ ու բազմատեսակ հարկերը, այնպես էլ նրան գանձման դաժան ձևերն ու ամեն տեսակի երաշխիքի բացակայությունը, երբ բնակչության կողմից վճարված գումարները նույն այդ վճարողներից երկրորդ, երրորդ անգամ չեն գանձվի: Ահա թե ինչ է ասում այդ մասին ժամանակի գրիչներից մեկը. «Եւ ի հասանել ի պահս առաջնաւորաց դարձեալ միաբանեալ արարին խորհուրդ և գնացին ասպատակաւ ի գաւառն Սանձկերտու և անդ է (եօթն) ղշլաղ զամեն ի սուր քաշեցին: Եւ զոչխարն ամէն և զտաւարն առին և բերին յԱրճէշ: Եւ դարձեալ նոր ոճիր գործեցին և յԱրճէշ, զինչ որ յԱրճկէ, և այլ աւելի: Դճ (400)բիւր մալ ուզեցին, յաւուր բարիկենդանին, որ և անկաւ մամէն գլուխ ԴՌ (4000) դեկան, և յամէն գութան ԺՌ (10000) դեկան: Եւ ողորմելի քրիստոնեայքն ոչ գիտէին թե զինչ արացեն: Եւ դիմեցին չար կատաղիքն ի վերայ (2) տան, մէկ հանօլայ (փոխանակագրով դրամ պահանջող) և բազում տանջանօք չարչարէին՝ կախէին, ծեծէին և ոչ գտանէր դրամ, վասն որոյ թէ հոգւոյ էր և թէ մարմնոյ, թէ ի վերայ հողոյք թէ ի ներքև հողոյ, թէ գինդ է, թէ մատանի է, թէ լանջանոց է, թէ ոսկի է, թէ արծաթ, զամէն զինչ ունէին տուին, և դեռ ոչ կարացին ազատել: Եւ անողորմն իմամացիքն մտանէին ի տներն, զինչ որ գրաստ կայր, և գէր տաւար, զամէն առին և քաեցին»[7]:

Առավել սոսկալի էր բնակչության բռնի տեղահանությունը, երբ երկրի տարբեր հատվածներ, գրկվելով աշխատող ձեռքից ամայանում էին: Նկարագրելով Խարբերդի ու Դերջանի շրջանների 1436թ. Իսկանդարի կազմակերպած բռնագաղթը, Թ. Մեծոփեցին գրում է «Եւ էին աւորք դառնաշունչ և դժնդակ օդոյն ծներային. և յետ աւուրց յանկարծակի ձիւն սաստիկ եկն ի վերայ նոցա. և ի գիշերին յոյնմիկ ադեցաւ երկիրն. և բազում քրիստոնեայք պաղեալ մեռանէին» [8]: Սյունիքի ամայացման մասին նույնպես ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Թ. Մեծոփեցին: Նա հայտնում է, որ սյունյաց իշխան Սմբատ Օրբելյանի որդին՝ Բեշքենը, և նրա որդի Ռուստամը, որի երկիրը շարունակ ավերվում էր Իսկանդարի և Լանկթամուրի որդի Շահռուխի միջև մղվող կատաղի կռիվներից «Առեալ զամենայն կողմն Սիւնեաց և զամենայն գա-

---

[5] Նույն տեղում, էջ 104:
[6] Նույն տեղում, էջ 107:
[7] Մանր ժամանակագրություններ, հ.1, էջ 128:
[8] Թովմա Մեծոփեցի, էջ 104-105:

ւառա շրջակայ մերձ ի Սիւնիս, աւելի քան զ6000 քրիստոնեայ տունս և ազատեալ ի Շահ-ռուհեն հասոյց ի կողմն վրաց»:[9]

Ահավասիկ, նման պայմաններում չափազանց կարևորվում էր հայոց եկեղեցու դերը, քանզի պետականության կորստից հետո ժողովուրդը կաթողիկոսության մեջ էր որոնում այն, ինչը կորցրել էր: Եվ ինչպես ճիշտ նկատում է Լեոն. «Կաթողիկոսությունն այդ ժողովրդի միակ ազգային իշխանությունն էր, որ եկեղեցու միջոցով և մանավանդ եկեղեցու համար՝ կատարում էր ազգի զանազան մասերը միացնողի, հավաքողի խոշոր դերը»:[10] Այս առումով նա կապված էր աշխարհիկ իշխանության հետ կատարելով քաղաքական իշխանության առանձին ֆունկցիաներ:

Բագրատունյաց թագավորության անկումից հետո, երբ հայ ժողովուրդը պետական կազմավորման մակարդակի հասավ Կիլիկիայում, այնտեղ տեղափոխվեց և ամենայն հայոց կաթողիկոսությունը, որի իրավունքները տարածվում էին ողջ Հայոց աշխարհի վրա: Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը 1066 թ. աթոռանիստ դարձրեց Կիլիկիայի սահմանների մոտ գտնվող Ծամնդավը: Ավելի ուշ աթոռանիստը տեղափոխվեց նախ Սև լեռան Կարմիր վանքը (1105-1116), ապա Ծովք (1116-1147), այնուհետև Հռոմկլա (1147-1292) և վերջապես Գրիգոր 7-րդ Անավարզեցին 1293 թ. այն տեղափոխեց մայրաքաղաք Սիս: Կիլիկիայում իր գոյատևության ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսության ողջ գործունեությունը դրսևորվում է ժողովրդի ինչպես ներքին (հոգևոր, դպրության, մշակույթի) այնպես էլ արտաքին (քաղաքական-միջպետական, դավանական-միջպետական եկեղեցական հարաբերությունների) կյանքի ոլորտներում: Թեև սկզբում հայ-քաղքեդոնական, ապա նաև հայ-կաթոլիկ դավանաբանական խնդիրների շուրջ ընթացող վեճերը Հայոց կաթողիկոսության գործունեության մեջ կարևոր տեղ էին գրավում, ու չնայած գահակալներից ոմանք Բյուզանդիայի ու կաթոլիկ Եվրոպայի աջակցությունն ու համակրանքն ստանալու նպատակով նահանջեցին հայոց եկեղեցու դավանաբանական դիրքերից՝ այնուհանդերձ, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը կարողացավ անաղարտ տանել հայ առաքելական լուսավորչական եկեղեցու օրենքները՝ ապահովելով հայոց եկեղեցու ամբողջական անկախությունը:

Կիլիկիայի հայկական թագավորություն անկումից հետո (375 թ.) հրամայական դարձավ կաթողիկոսության տեղափոխումը: Անդրադառնալով տեղափոխության խնդրին՝ Լեոն սխալմամբ կարծում է, թե Սսի կաթողիկոսարանը ամեն տեսակ շահատակությունների ասպարեզ դարձավ, որ սրբավաճառությունն այլանդակ չափեր էր ընդունել, որ կաշառքի համար փող չունեցող եպիսկոպոսացուն իր կարգը գրավ էր դնում կաթողիկոսի մոտ և այդպիսով ձեռնադրություն ստանում: Այնու-

---

[9] Նույն տեղում, էջ 117-118:
[10] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 130:

հետև մեղադրվում է Կոստանդին 6-րդ Վահկացի կաթողիկոսը, որի կարգադրությամբ 1439 թ. առանց եկեղեցական ժողով գումարելու իր կողմից ներկայացուցիչներ ուղարկեց Ֆլորենցիայի եկեղեցական ժողովին, որոնք պաշտոնապես, հայ եկեղեցու անունից ընդունեցին կաթոլիկությունը:[11] Իրականում պատճառն այն էր, որ պետականության կորստից հետո, կաթողիկոսությունը, զրկվելով հուսալի պաշտպանությունից, բազմիցս ենթարկվում էր օտար իշխանությունների հալածանքներին: Հայոց կաթողիկոսությունը կորցրել էր իր քաղաքական հենարանը, իսկ կաթոլիկ եկեղեցու ոտնձգությունների դեմ մղած երկարամյա պայքարի ու երկրամասում հայ բնակչության հետզհետե նոսրացման պատճառներով քայքայվել էր նաև տնտեսապես: Ծանր էր վիճակը նաև հոգևոր-մշակութային կյանքում: Դրությունը ավելի վատթարացավ, երբ 1426 թ. հետո, երբ Կիլիկիայի վերջին հայ իշխանավոր Կոստանդինը թողեց Սիսը և բազմահազար արտագաղթողների հետ ապաստանեց Կիպրոսում: Քաղաքական ու տնտեսական այդպիսի անբարենպաստ պայմաններում Հայոց կաթողիկոսությունն անզոր էր օտար երկրներում գոյացած հայկական գաղթօջախների հետ մշտական մշակութային կապեր հաստատելու, ուսումնական կենտրոններ ստեղծելու և տարաստիյուռ զանգվածներին ազգային ավանդույթներով շաղկապելու գործում: Մեկուսանալով Կիլիկիայում՝ այն կտրվել էր բնաշխարհի ժողովրդից, նրա համար կորցրել քաղաքական և կրոնական երբեմնի կենտրոնի նշանակությունը: Նկատի ունենալով այդ հանգամանքները՝ հայ հասարակական-քաղաքական, եկեղեցական ու մշակույթի առաջադեմ գործիչները դեռևս 14-րդ դ. վերջերից ցանկանում էին Հայոց կաթողիկոսությունը տեղափոխել ավելի ապահով վայր: Հարկ է նշել, որ այս գործի նախաձեռնողը հանդիսացավ Գրիգոր Տաթևացին, որն անհաշտ պայքար էր մղում լատինամոլության ամեն տեսակ դրսևորումների դեմ: Նրա գործի շարունակողները հանդիսացան Թովմա Մեծոփեցին և Հովհաննես Հերմոնեցին: Նրանց հաջողվեց համոզել Աղթամարի հակաթոռ կաթողիկոս Զաքարիա Գ-ին, որը ցանկություն ուներ ժառանգելու Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը: Հարկ է նշել, որ 1272 թ. Աղթամարի կաթողիկոսությունը ժառանգած նշանավոր Սեֆեդինյան ավատական տան ներկայացուցիչները, ունենալով զինական ուժեր, կարողացան օտար նվաճողներից պաշտպանել ոչ միայն կաթողիկոսական աթոռը, այլև ողջ Վասպուրականը: Եվ ինչպես հետագայում կտեսնենք, նույն Զաքարիա Գ-ին հաջողվում է Կարա-կոյունլու Ջհանշահի օժանդակությամբ իր գահակալության տակ կարճ ժամանակով միավորել էջմիածնի և Աղթամարի կաթողիկոսությունները: Իսկ մինչ այդ Մեծոփեցին և Հերմոնեցին շրջաբերականորեն դիմում են հայ հոգևոր ու աշխարհիկ երևելիներին՝ նպաստելու իրենց մտադրության իրականացմանը: Հուշագիր ուղարկվեց նաև Սսի Հայոց կաթողիկոս

[11] Լեո, նշվ. աշխ., էջ 130-131:

Գրիգոր Մուսաբեկյանին. «... գրեցին եպիսկոպոսունք և վարդապետիք առ Գրիգոր Մուսաբեկեանց և հրաւիրեցին գալ յէջմիածին»:[12] Թեև կաթողիկոսը հրաժարվեց մասնակցել էջմիածնում գումարվող ժողովին, այնուամենայնիվ ստիպված էր համակերպվել: Հաջողվեց ստանալ նաև Երևանի կուսակալ Յաղուբ բեկի համաձայնությունը, որը Մեծոփեցու կայությամբ անձամբ առաջնորդեց պատվիրակներին ընտրության վայրը՝ էջմիածին «փողով և թմբուկով»:[13] Օտար տիրակալի հայ պատվիրակության նկատմամբ ունեցած այս բարեհոժար վերաբերմունքը պատճառաբանվում է այն հանգամանքով, որ վերջինս պակաս շահագրգռված չէր Ամենայն Հայոց կաթողիկոսությունը Արարատյան Աշխարհում տեսնելու, որը նրան կտար հուսալի հենարան:

Էջմիածնի մեջ գումարված ազգային ընդհանուր ժողովը տեղի ունեցավ 1441թ. մայիսին, որին ըստ Մեծոփեցու մասնակցում էին 300-ից ավելի պատվիրակներ հոգևոր և աշխարհիկ դասից. «ազատք և որդիք ազատաց, ձեռնաւորք և տանուտէրք», այդ թվում հանվանե 4 արքեպիսկոպոս «Գրիգոր Եպիսկոպոս Արտազ գաւառի առաջնորդ ուխտին Թադևոսի, Շմաւոն եպիսկոպոս Սիսականի առաջնորդ ուխտին Տաթևու, Գրիգոր եպիսկոպոս առաջնորդ Հաղբատայ, Յովհաննէս եպիսկոպոս՝ առաջնորդ Բջնոյ որք էին առաջնորդք չորից աթոռոյ, որոց հաւանութեամբ լինէր ընտրութիւն կաթողիկոսի»[14], 13 եպիսկոպոս, 15 վարդապետ, ինչպես նաև այլ հոգևորականներ, տանուտերեր, ձեռնավորներ: Որոշ բարձրաստիճան հոգևոր գործիչներ էլ ինչ-ինչ պատճառներով չկարողանալով մասնակցել, ուղարկել էին իրենց համաձայնագրերը: Քանի որ Սսի Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգոր Մուսաբեկյանը հրաժարվել էր ներկայանալ և վերաօծվել, ուստի առաջադրվել են այլ թեկնածություններ: Առաջադրվեցին Աղթամարի կաթողիկոս Զաքարիան, Հավուց Թառի եպիսկոպոս Զաքարիան, Արտազ գավառի արքեպիսկոպոս Գրիգոր Ջալալբեկյանը և Վայոց ձորի Հերմոն վանքի վանահայր Հովհաննես Հերմոնացի վարդապետը: Հավանաբար կողմերից և ոչ մեկը չի հավաքում անհրաժեշտ քվե պարունակող ձայներ, ուստի և որոշում են կաթողիկոս ընտրել չեզոք մի անձի: Ընտրությունը կանգ է առնում Ակոռի գյուղի ս.)Հակոբ վանքի վանահայր Կիրակոս վարդապետ Վիրապեցու վրա: 32 տարի շարունակ նա եղել էր Խոր-Վիրապ վանքի վանահայրը, որտեղից և ստացել էր «Վիրապեցի» անունը: Վիրապեցուն օծում են եպիսկոպոս և հաստատում Ամենայն հայոց կաթողիկոսական գահին: Այսպիսով, դարավոր դեգերումներից հետո Ամենայն Հայոց ընդհանրական աթոռը վերահաստատվեց էջմիածնում, որը քաղաքական ու ազգային-պատմական նշանավոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Վիրապեցին, որ բնութագրվում է «այր խո-

[12] Չամչեան Մ., հ. Գ, էջ 486: Նաև Յիշատակարան, էջ 68:
[13] Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, էջ 68:
[14] Թովմա Մեծոփոցի, նույն տեղում: Նաև՝ Չամչեան Մ., հ. Գ, էջ 486-487:

նարի և հեզահոգի, զգաստ ի անս իւր խիստ ի ճգնողական վարս, խոհական խորհրդով և վարժ յիմաստս աստվածային գրոց»[15] արտահայտություններով, հովվապետության հենց առաջին օրվանից ծեռնամուխ է լինում բարենորոգչական աշխատանքների իրականացմանը «ձեռն էարկ և ի շինութիւն վանորէից և եկեղեցաց և նորոգեցաւ զտաճարն էջմիածնի, ևս և Հռիփսիմեայ և Գայիանեայ. և ջանայր վայելչացուցանել զաթոռն, և ի յանգորրու պահել զառաջնորդս ազգին»:[16] Վիրապեցին փորձում է արգելել մեռոնի վաճառահանման գործընթացը և այն դարձնել միայն էջմիածնի մենաշնորհը. «մի ոք իշխեսցէ յայսմ հետէ աստուածավաճառութիւն առնել, այսինքն զմեռոնն կամ զքահանայութիւնն վաճառել»:[17] Այնուհանդերձ, Վիրապեցուն չհաջողվեց կացությանը տիրապետել և երկու տարի անց նա ստիպված էր հրաժարական տալ: Երևանի կուսակալ Յաղուբ խանի համաձայնությամբ կաթողիկոս առաջադրվեց Գրիգոր Ժ Ջալալբեկյանը)1443-1465 թթ): Գրիգոր Ջալալբեկյանը («Մակվեցի») ավելի փութաջանորեն շարունակեց Վիրապեցու շինարարական-բարենորոգչական գործունեությունը «փոյթ կալաւ ի գլուխ տանիլ զնորոգութիւն ի շինուածոցն, յորս բուռն հարեալ էր Կիրակոս և յաւել ևս նորոգել զվանս էջմիածնի, ժողովեալ 'ի նպաստ այսօր ամի բազում դրամս յիշխանաւորացն հայոց»:[18] Քաջ գիտակցելով, որ էջմիածնի հեղինակության բարձրացման համար անչափ կարևոր է նրա տնտեսական կարողությունների ընդլայնումը, Մակվեցին ձեռնամուխ եղավ կալվածական հարստություն ձեռք բերելուն: Անդրադառնալով Մակվեցու կողմից 7 գյուղերի (Վաղարշապատ, Աշտարակ, Բաթռինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Քրիաջլու, Մուղնի) սեփականության իրավունքի ձեռք բերմանը, Լեոն սխալմամբ այն տարածում է վերջինիս կաթողիկոսական տարիների վրա:[19] Իրականությունը այն է, որ դեռևս 1431թ., երբ Գրիգորը պաշտոնավարում էր այլ վայրում, Իսքանդարի արքունիքում բարձր դիրքի արժանացած («գերափառ բարձրիշխան, հռչակաւոր, մերձաւորագոյնն մեծին փադիշահի, բարձրապաշտօն մեծ վեզիրն, գլխաւոր արքունու խորհրդական»)[20] Ամիր Ռուստամը, որը Օրբելյան նշանավոր տոհմից էր, օգտվելով իրեն ընձեռված հնարավորություններից ձևակերպել է նշված գյուղերի վաճառքը և ապա գնող Գրիգոր Մակվեցու կողմից դրանք նվիրել վանքին: Պետք է ենթադրել, որ Ռուստամ Օրբելյանը ցանկություն է ունեցել Այրա-

---

[15] Չամչեան Մ., հ. Գ, էջ 488:
[16] Նույն տեղում, էջ 489:
[17] Մատենադարան, Ձեռագիր 4669, էջ 203բ: Հմմտ. Թովմա Մեծոփեցի, Յիշատակարան, էջ 70:
[18] Չամչեան Մ., հ. Գ, էջ 431:
[19] Լեո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 131: Նույնը սխալմամբ կրկնում է Աբրահամյանը Հ., տե՛ս Կալվածագրեր, էջ 12:
[20] Կալվածագրեր, էջ 12:

բատյան աշխարհում ստեղծել հայկական վասալ իշխանություն, ինչպես նաև ամուր նյութական հենարան ստեղծել եկեղեցական համազգային կենտրոնի համար:

Ընդհանուր առմամբ Մակվեցին ևս անկարող գտնվեց տիրապետել իրադրությունը: Ավելին, նա չկարողացավ նույնիսկ օգտվել Ջհանշահի՝ դեպի կաթողիկոսական աթոռն ունեցած հանդուրժողական վերաբերմունքին: Կաթողիկոսական իշխանությունը վերացավ այն բանից հետո, երբ վերջինիս կարգադրությամբ Արիստակես վարդապետը նշանակվեց փոխանորդ «...նեղեալ ի բռնութիւնէ այլազգեաց որիք պահանջէին բազում հարկս ի հայրապետանոցէ, և ոչ կարելով առանձինն տանիլ զվիշտս ազգի տառապանաց ընտրեա իւր գործակից զոմն ի վարդապետաց Արիստակէս անուն. յանձն արարեալ ի ձեռս նորա զհոգ արտաքին կառավարութէ կարգեաց զնա փոխանորդ և երկրորդ իւր»:[21] Նման պատճառաբանությունը դարձյալ խոսում է կաթողիկոսի անվճռականության մասին: Փորձելով արդարացնել Մակվեցու այս որոշումը Մ. Օրմանյանը գրում է. «Այս կացութեան բուն նպատակն էր զանազան ազդեցիկ եկեղեցականներու փառասիրութիւնը շահիլ, իսկ օգտակար կողմը եղաւ, աթոռոյ յաջորդութիւնը ապահովել»:[22] Թե ինչպես ապահովվեց աթոռի հաջորդությունը, ցույց տվեցին հետագա դեպքերը: Օգտվելով կաթողիկոսի անկարողությունից Կարապետ Եվդոկացի եպիսկոպոսը, որը ուներ Ամենայն Հայոց կաթողիկոսության հավակնություն, չճանաչելով էջմիածնի գերագահությունը 1446 թ. Սիս քաղաքում, հիմնադրում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը, որը նշանակում էր հայոց եկեղեցու պառակտում: Մակվեցու անկարողությունը հասցրեց նրան, որ 1460 թ. կաթողիկոսական փոխանորդ Արիստակես վարդապետը ընբոստանում է նրա դեմ և զրկում լիազորություններից «...մինչև զօրացաւ Արիստակէս, և ինքնին վարէր զիշխանութիւն հայրապետութեան»:[23] Իր հերթին Սարգիս վարդապետը, որին Մակվեցին նշանակել էր աջատարի պաշտոնում, գողանալով Լուսավորչի Սուրբ Աջը աճապարում է Թավրիզ նպատակ ունենալով տեսակցել Ջհանշահին ու ստանալ նրանից կաթողիկոսական աթոռին հաստատվելու աջակցություն: Սակայն Աղթամարի Զաքարիա կաթողիկոսը կարողանում է ավելի շուտ տեսակցել Ջհանշահին և ստանալով վերջինիս կնոջ Բեկում խաթունի աջակցությունը, 1461թ. հաստատվում է Հայոց Կաթողիկոսական Աթոռին: Ջհանշահի ցանկությամբ Սարգիս վարդապետը օծվում է եպիսկոպոս ու նշանակվում փոխանորդ: Նույն թվականի Ջհանշահը 12000-ոց հեծելազորով շարժվում է Բաղեշ ճնշելու Միջագետքում ու Արևմտյան Հայաստանում ընբոստացած Ակ-կոյունլու թուրքմեններին ու քրդերին: «Ընդ այմն ժամանակին,-գրում է Առաքել

---

[21] Չամչեան Մ., հ. Գ, էջ 501:
[22] Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, էջ 98:
[23] Չամչեան Մ., հ. Գ, էջ 503:

Դավրիժեցին,-եղև ցասնուլ փատշահին ի վերայ ամիրային Բաղիշու և բարկութեամբ առաքեաց դ (4) զօրագլուխս երկոտասան հազար հեծելազօրոք ի վերայ քաղաքին Խլաթայ, և գնացեալ աւարեալ քանդեցին զնա և բազում աւար ի մի ժողովեալ նստան ի մի ժողովեալ նստան ի վերայ բերդին և նեղէին յաւնուլ զնա և զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղեշ, և ի Մուշ, ի Խութ և ի Սասունք և յամենայն գաւառսն նոցա»:[24] Հասկանալի է, որ արշավանքի ընթացքում առաջին հերթին կոտորվելու ու գերեվարվելու էր տեղի հայ բնակչությունը, որն էլ գիտակցելով Զաքարիա կաթողիկոսն աճապարում է միջնորդի դեր խաղալ Ջհանշահի ու Բաղեշի ամիրայի միջև, մինչև որ նրան հաջողվում է: Զգալով, որ Զաքարիան վայելում է Ջհանշահի վստահությունը և օգտվելով այն հանգամանքից, որ վերջինս զբաղված է Շիրազում իր որդու՝ Փիր- Բուդաղի ապստամբությունը ճնշելով, Գրիգոր Մակվեցին և Արիստակես աթոռակալը իրենց հետ ունենալով մի քանի հայ երևելիներ, մեծաքանակ նվերներով 1462 թ. ուղևորվում են Նախիջևան, տեղի կուսակալ, Ջհանշահի մյուս որդի Հասան-Ալու մոտ: Խոստանալով հարկերի պարբերաբար վճարում՝ Մակվեցին հանում է նրան, որ Հասան-Ալին ուղևորվում է Արարատյան երկիր՝ Զաքարիային հեռացնելու, ինչպես նաև կաթողիկոսության ունեցվածքը կողոպտելու նպատակով: Տեղեկանալով այդ մասին Զաքարիան վերցնելով Լուսավորչի Աջն ու հարստությունները, աճապարում է Աղթամար: Կաթողիկոսությունը կրկին ստանձնում է Գրիգոր Մակվեցին: Վերջինիս մահից հետո, 1465 թ-ից կաթողիկոսության տեղապահի կարգավիճակով հովվապետեց Արիստակես աթոռակալը՝ տեղապահ ունենալով Սարգիս վարդապետին: Արիստակեսի աթոռակալության տարիներին կրկին արվեց հակամարտությունը կարա-կոյունլու և ակ-կոյունլու ցեղախմբերի միջև: 1467 թ. մայիսին Ջհանշահը մի խոշոր բանակով արշավեց դեպի Ամիդ, որը ակ-կոյունլուների աթոռանիստն էր: Վեց ամիս շարունակ ասպատակելով Վասպուրական աշխարհն ու Տարոնը՝ կարա-կոյունլուները այնտեղ միայն ավերածություններ ու կոտորած էին սփռում: Ժամանակի ծեռագրերից մեկը այդ մասին հայտնում է. «Արդ գրեցաւ ի թվին հայոց Ջ և ԺԷ ի դառն և ի դժուար ժամանակի, զի յայսմ ամի էլ Ջհանշահ ղանն ի քաղաքէն շահաստանայ, որ է Թավրէգ. բազում հէնիւ և զաւրաւք և կամէր երթալ ի վերայ քաղաքին Ամթայ և ի յերթալն ի ճանապարհին բազումք դողային ի յահէ, զի այս Ջհանշայս բազում գաւառաց և քաղաքաց տիրէր: «...Եվ արևելք և արևմուտք ի յահէ սրոյ սորայ դողային և մնամ թէ հիւսուս և հարաւ ի հարկուպահանջութիւն էր սորայ: ... Արդ ի չռել ճանապարհի սորա բազում գաւառք աւերեցան և բնակիչք գաւառացմն փախչէին ի յայրս և ի ծերպս վիմաց հովալլուկ մեռանէին: Եւ եկեալ եհաս ի գաւառն Տարաւնոյ ի դաշտն Մշոյ. և անդ բազում աւերս արարին զաւրքն նորա, զի բազում էին և անհամար և ոչ ճանաչէին զաստուած, և ասէին, թէ ինչ է

[24] Առաքել Դավրիժեցի, էջ 421:

քրիստոնեայն և քրիստոնէին աչք և բերան կայ: Եվ դիմեցին ի վանքն Ղազարու և զլուսարարն խորովեցին ի կրակն և նահատակեցին և անցին գնացին»:[25] Աղբյուրների լռությունը Արիստակեսի գործունեության մասին բացատրվում է նրանով, որ վերջինս ոչինչ չի ձեռնարկել հայ բնակչության կյանքը ապահովելու համար, ինչպես դա կատարեց Զաքարիա կաթողիկոսը: 1467 թ. նոյեմբերի 20-ին ճապաղջուր գետի մոտ՝ Սանջախ կոչված վայրում, ակ-կոյունլու Ուզուն-Հասանի զորքերը պարտության են մատնում Ջհանշահին, սպանում նրան, իսկ հաջորդ տարում նաև կարա-կոյունլու վերջին տիրակալ Հասան-Ալուն Հայաստանի թե Արևմտյան և թե Արևելյան մասերում հաստատում են իրենց տիրապետությունը:[26]

Ակ-կոյունլու Ուզուն-Հասանի իշխանության հենց առաջին տարում էջմիածնի հովվապետությունը ստանձնած Սարգիս Բ Աջատարը (1469-1474 թթ.) իր գործունեությունը սահմանափակեց միայն Լուսավորչի Աջը Աղթամարից էջմիածին տեղափոխելու խնդրով: Սակայն դա հաջողվեց իրականացնել միայն 1477 թ. երբ Ամենայն Հայոց կաթողիկոսն էր Հովհաննես է աջակիրը (1474-1484 թթ): Իսկ մինչ այդ հայոց երկիրը կրկին ենթարկվեց դաժան փորձության: 1472 թ. փորձելով կանխել օսմանյան թուրքերի օրավուր աճող հզորությունը և պահել իր հեգեմոն դերը Առաջավոր Ասիայում՝ Ուզուն-Հասանը 100000-ոց բանակով Դերջանի ու Երզնկայի վրայով շարժվեց Թոխատ-Եվդոկիա ուղղությամբ: Պատերազմական գործունեությունները ուղեկցվում էին բնակավայրերի ավերմամբ, հայ բնակչության մասսայական կոտորածով ու կողոպուտով: Այդ մասին ուղղակի վկայություն ունի Ուզուն-Հասանի մոտ Վենետիկի դեսպանը՝ Կատերինո Զենոն «Պարսկական բանակը (Ուզուն-Հասանի բանակը Հ. Թ.) մտավ Դերջան սեպտեմբեր ամսին, և հուր ու սուր տարածեց այդ յերկրում, մոտ ու հեռու, կողոպտելով և կոտորելով ժողովրդին, ահաբեկելով բնակչությանը, այնպես վոր ամեն վոք փախավ այս փոթորքից: Յեվ անցնելով Յերզնկա և Թոխատ՝ նույն կարողությամբ ամեն տեղ այրեց քաղաքներն ու գյուղերը»:[27] Թեև ունեցած մասնակի հաջողություններին, Ուզուն-Հասանի ճակատագիրը

---

[25] Մատենադարան, Ձեռագիր 7751, հմմտ. Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 171-172:

[26] Հարկ է նշել, որ այդ ճակատամարտի թե թվականի և թե վայրի վերաբերյալ ինչպես աղբյուրներում, այնպես էլ պատմագիտության մեջ տարբեր տեսակետներ են հայտնվում, տես Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 168, 392, հ. 2, էջ 152, 171-172: ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Բ: էջ 21 Путешествие И., Государство Азербайджана в 15в., ст. 168: Կիրակոսյանը Գ. կատարելով մատենագիտական ճշգրտումներ ու համադրելով պատմագիտական տարբեր տեսակետներ. իրավացիորեն այդ թիվը համարում է 1467-ը, իսկ տեղավայրը Սանջախը, Կիրակոսյան Գ., Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի աշխավանքների շրջանում, էջ 114-217):

[27] Ուղեգրություններ, հ. Ա, էջ 165:

վճռվեց 1473 թ. օգոստոսի 12-ին օսմանյան թուրքերի հետ Դերջանի դաշտում տեղի ունեցած երկրորդ խոշոր ճակատամարտում, ուր նա ծանր պարտություն կրելով նահանջեց Թավրիզ:[28] Օսմանյան թուրքրին անցավ Մեծ Հայքի՝ Էրզրումի, Կամախի, Դերջանի ու Բաբերդի շրջանները: Ուզուն-Հասանի մահից հետո (1478 թ.) նրա ստեղծած հսկայածավալ պետությունը ապրեց ցնցումներով լեցուն մի ժամանակաշրջան, երբ նրա հինգ որդիների միջև ծավալվեց գահակալական կռիվներ:[29] Կարճ ժամանակահատվածով հակամարտ տիրակալները փոխարինեցին միմյանց և 15-րդ դ.վերջին ակ-կոյունլուների իշխանությունը վերջնականապես կործանվեց: Այս ընթացքում էջմիածնի հովվապետական աթոռին բազմած Սարգիս Գ-ն (1484-1515 թթ.) իր գործունեությամբ ոչնչով աչքի չընկավ: Ավելին, ինչպես վկայում է 1499 թ. Արծկեում գրած հիշատակարանում Հակոբ գրիչը, կաթողիկոս Սարգիսի հալածանքներից խուսափելով ապաստանում է Հաղպատի վանքում :[30]

16-րդ դ. հայ ժողովրդի պատմության ամենամռայլ իրադարձություններով լեցուն ժամանակաշրջաններից մեկն է: Հայաստանը դեռ չէր ամոքել իր վերքերը թուրք-թաթարական տիրապետության հասցրած հարվածներից, երբ նրա արևելյան ու արևմտյան հատվածները կրկին դարձան ավերիչ պատերազմների թատերաբեմ՝ այս անգամ աշխարհակալական մոլուցքով տարված Օսմանյան կայսրության և անզուսպ հետևողականությամբ հզորության ձգտող Սեֆյան Իրանի միջև: Կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր Անդրկովկասի նվաճումը դարձնել ոչ միայն եկամուտների աղբյուրի, այլև, որ ամենակարևորն է իր հսկողության տակ առնել Առաջավոր Ասիայի ստրատեգիական դիրքերը ու Հնդկաստանից և Միջին Ասիայից դեպի լևանտյան նավահանգիստները տանող ուղիներն ու առևտրի հանգույցները: Ինչպես վկայում է 16-րդ դ. անգլիացի ուղեգիր Ջենկինսոնը, այս պատերազմը մղվում էր հիմնա կանում առևտրական ուղիների համար:[31] Մերձավոր ու Միջին Արևելքի այդ երկու հզոր պետությունների միջև մոլեգին կատաղությամբ մղվող պատերազմը անասելի տառապանքներ պատճառեց հայ ժողովրդին: Պատերազմի առաջին տարվա 1501թ. իրադարձությունների մասին Հակոբ Կարնեցին գրում է. «ի թվականիս մերոյ ՉՆ (1501) զորացաւ ազգն պարսից, որ Սօֆի ասեն, որ է Ղզլպաշ, որոյ անուն թագաւորին շահ Իսմայիլ, եղեալ ի Սպահանայ և եկեալ էառ զԹավրէզ: Եվ

---

[28] Նույն տեղում, էջ 265:

[29] Петрушевский И., Государство Азербайджана в 15в. ст. 176-177. ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 56, 60, 96, 99: Մանր ժամանակագրություններ, հ.1, էջ 194:

[30] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 276:

[31] Ուղեգրություններ, հ. Ա, էջ 380-386:

առաքենաց զօրս բազում երկիրս հայոցէ գերեաց, աւերեաց և ասպատակեաց բազում գիւղք և գաւառք»:[32]

1508 թ. պատերազմական գործունեությունները վերսկսվում են Բաբերդի և Երզնկայի շրջաններում, որը դարձյալ ուղեկցվում է հայկական բնակավայրերի կողոպուտով ու բնակչության կոտորածով. 1514 թ. օգոստոսի 22-ին Չալդրան կոչված վայրում հաղթելով պարսիկներին՝ սուլթան Սելիմ Ահեղը ստիպեց Իսմայիլին կնքել զինադադար: Հաշտության պայմանագրի համաձայն, Իրանն ստիպված էր Թուրքիային զիջել ողջ Արևմտյան Հայաստանի տարածքը: Սակայն հաշտությունը ժամանակավոր էր և պատերազմական գործունեությունները նոր թափով վերսկսվեցին 1530 թ.: Փոխնիփոխ հաջողություններով ընթացող ռազմական գործողությունները դարձյալ ավարտվում են հայկական բնակավայրերի ավերով, բնակչության մասսայական կոտորածով ու գերեվարությամբ: Ժամանակի թուրք պատմիչ Իբրահիմ Փեչևին հայտնում է, որ թուրքական հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերն այն աստիճան են ամայացել, որ տեսնողին սարսափ էին պատճառում:[33] Իսկ գրեթե մեծի մասամբ իրանական զորաջոկատների հրամանատարների զինվորական մարտավարությունն էր հարձակվող ուժի առջև ստեղծել ամայի տարածություններ: Ժամանակի աղբյուրներից մեկը այդ մասին ցավով արձանագրում է «Վասն մեղացը մերոց փախուցեալ ընդ միաբանա ի յետ բազմացն. ի յանիրաւ և յանաստուած ազգեն ղզլպաշէն... զի ի ՌԱ(1552) թվին եկն բարկութեամբ շահ Դահմանն (Թահմասպ-Հ.Թ.) զօրօքն իւրովք ի վրա երկրին այնմիկ և պաշարեաց զծովն բոլոր, զՎասպուրականն և զՌշտունիքն, զԲաղէշ և զՏարօնն, զԽլաթ և զԲզունիք զԲաջբերունի և զՏարբերունին, զնուս մինչ ի յԱզրում, զԱշբակ և զՄահմուտանք, ամեն առհասարակ պաշարեաց խստութեամբ ...Զբնակութիւն տեղոյն այնոցիկ քանդեցին, աւերեցին և հրմնայատակ արարին, որ ոչ մնաց քար ի վերա քարի: Թե քակէ և զբնակիչան ամենայն զոմանս անողորմ սրոյ ճարակ արեցին, և մնացեալին մազապուրծ եղեալ ի գիշերի և ոչ ի ցերեկի, ահիւ և դողութեամբ, կսկածագին սրտիւ և դառն արտասուօք և յոգոց հանելով բաժանացան ի միմիանց հայր յորդոց և մայր ի դստերաց, եղբայր եղբօրէ և ազգական և սիրելի միմիանց ուղիողորմ հուռացմամբ»,- և որ ամենասարսափելին էր, շարունակում է աղբյուրը «մնացեալ փախստական ոմն ի Հորմոց տունն, ոմն ի Թուրքատունն, ի ոմն ի Գուրջստունն»:[34] Ժամանակակից մեկ ուրիշ գրիչ պատմում է, որ նահանջող իրանական զորքերը «չթողին շինութիւն ի կողմանց Վանայ մինչև յԵրզնկայ սուր և տապար ի ձեռին այսր անդր ընթացա առեալ՝ հատին զայգեստանեայս

---

[32] Մանր ժամանակագրություններ, հ.1, էջ 239·
[33] Թուրքական աղբյուրներ, հ.1, էջ 33-35
[34] Մատենադարան, Ձեռագիր 6282, էջ 625ա-625բ:

Խլաթեայ և Արծկէոյ, և կոտորեցին զծառատունկս անտառաց և զփայտս պտղաբերս և հրծիդ արարին զարտորայս Կարնոյ» :[35]

1555 թ. մայիսի 29-ին Ամասիայում պատերազմող կողմերի մեջ կնքվեց հաշտության պայմանագիր: Թուրքիային անցան Արևմտյան Հայաստանի գավառները, իսկ Իրանին Արևելյան Հայաստանն ու Վրաստանի մեծ մասը, ինչպես նաև Անդրկովկասի արևելյան շրջանները:

Երկրում հաստատվել էր հետամնաց վաչկատուն ցեղերի գիշատիչ տնտեսության վարչածևը, որի պայմաններում հայ երկրագործի տնտեսությունը հետզհետե կորցնում էր իր նշանակությունը երկրի տնտեսական կյանքում: «Հողագործք և երկրագործք որք իւրաքանչիւր տեղիս գոյին, վախուցեալք ի բերդս և ի դղեակս ամրանային և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձան ամենեքին»,-ցավով հայտնում է Առաքել Դավրիժեցին:[36] Տիրանալով երկրագործական բարձր կուլտուրա ունեցող այնպիսի մի երկրի, ինչպիսին Հայաստանն էր, իրանական ու թուրքական քոչվորական ցեղախմբերը տեղի արգավանդ հողերը օգտագործում էին հիմնականում որպես արոտատեղիներ, քանի որ նվաճողների տնտեսական քաղաքականությունը բնութագրվում էր նրանով, որ վերջիններս բոլոր միջոցները գործադրում էին երկրի տնտեսական կառուցվածքը՝ իրենց քոչվորական կյանքի պարզունակ կառուցվածքին համապատասխանեցնելուն:

Երկրագործության անկումը, ինչպես նաև նվաճող ցեղերի կողմից արոտների անխնա օգտագործումը մեծ հարված էր հասցրել անասնապահությանը: Եթե մինչ Հայաստանի նվաճումը քոչվոր ցեղերի համար անասնապահության զարգացման միակ միջոցը հոտի բնական վերարտադրությունն էր, ապա այժմ հոտի ընդլայնման նոր աղբյուր էր նվաճած երկրի բնակչությունից բանող և մթերատու անասունների հափշտակումը:

Ծանր անկում էին ապրում առևտուրն ու արհեստը: Գյուղատնտեսության քայքայման ու քաղաքներում արհեստագործության և առևտրի վրա դրված ծանր հարկերի հետևանքով քաղաքային կյանքը լրիվ անկման էր հասել:

Ցարդ պատմական գրականության մեջ այն տեսակետն է առաջնային, թե թուրք-իրանական պատերազմների տարիներին հայ եկեղեցին և նրա աթոռանիստ կենտրոնն իրենց առաջնորդների խոհուն քաղաքականության շնորհիվ կարողացան պահպանել եկեղեցական ունեցվածքի ամբողջությունն ու դիրքը տիրող վարչա-քաղաքական սիստեմում: Իրականում մինչև 16-րդ դ. կեսերը էջմիածնի հովվապետությունը ստանձնած Զաքարիա Բ (2) Վաղարշապատցին (1515-1520 թթ.), Սարգիս Դ (4) Վրաստանցին (1520-1537 թթ.) և Գրիգոր ԺԱ (11)

---

[35] Տե՛ս Չամչեան Մ., հ. Գ, էջ 514:
[36] Առաքել Դավրիժեցի, էջ 87:

Բյուզանդացին (1537-1542 թթ.) հիմնականում զբաղված լինելով իրենց սեփական անձերի փրկությամբ՝ անկարող գտնվեցին լուրջ գործեր ձեռնարկելու: Իրականում հայ եկեղեցին զերծ չմնաց պատերազմի պատճառած արհավիրքներից: Ինչպես տեսնում ենք 1548 թ. ձեռագրերից մեկում «...յունայն էր սուրբ աթոռն էջմիածնի, պարծանս հայոց ազգի, քանզի միապետ էր թախթն Դաւրիժոյ Դահնամ (իմա՝ Թահմազ Հ.Թ.) փատշահն, որ հետամուտ եղև հետ խոնդքարին»[37]: Նույն դարի ժամանակագրություններից մեկում կարդում ենք, «իսկ ՈԲ (1553) թվին դարձեալ խունթքարն ի Ստամպոլ գնաց ի Ամասիա և եսպան զաւագ - որդին իւր, որ էր թագաւորեցուցեալ ի Ամասիա ԼՈ (30000) հեծելազորօք և անցեալ գնաց ի վերայ շահին և ոչ ինչ կարաց առնել, բայց հաշտեցան ընդ միմեանս և դարձաւ խօնթքարն ի Ստամպոլ: Եւ ապա շահի հեծեալքն շատք ի հայոց ազգաց սպանին՝ քահանայք, եպիսկոպոսք և վարդապետք և յաշխարհականաց անթիւ անձինս կոտորեցին»[38]:

Պետք է նկատի ունենալ, որ եթե անցյալ դարերում օտար նվաճողների դեմ ժողովրդի մղած ազատագրական պայքարում հոգևորականության ներկայացուցիչները ելնելով հայրենիքի պաշտպանության ու եկեղեցու շահերից, գնացել են առաջին շարքերում, իսկ առանձին դեպքերում կազմակերպել ու գլխավորել այդ պայքարը, ապա 16-րդ դ., երբ չընկար միասնական հայկական պետականություն, երկիրն էլ դեռ չթոթափած թաթար քոչվորների ասպատակությունների հետևանքները, ներքաշված էր նոր պատերազմի մեջ, բնական է, որ եկեղեցին չէր կարող խաղալ ազգի առաջնորդի դերը ազգային ազատագրական պայքարում: Այնուհանդերձ, այդ շրջանում էր եկեղեցին չէր հեռացել քաղաքական ասպարեզից, դեգերում էր եվրոպական ուղիներում ազատագրության ճանապարհներ ու միջոցներ որոնելու: Դեռ 1547թ. էջմիածնում Ստեփանոս Սալմաստեցի (1542-1564 թթ.) կաթողիկոսի գլխավորությամբ անցկացրեց մի խորհրդաժողով, որում որոշում կայացվեց պատվիրակություն ուղարկվել Արևմուտք Հայաստանի դրության շուրջ բանակցություններ վարելու և կենտրոնացնելու եվրոպական պետությունների ուշադրությունը Հայաստանի ազատագրման վերաբերյալ: «Եւ մենք խեղճ Հայքս,- ասվում է խորհրդաժողովում կազմված աղերսագրում,-ի մասին Պարսից, ի ներքոյ խիստ տառապանաց այլազգենից, կու սպասեմք ձեր գալուն, ինչպէս սուրբ նախահարքն սպասէին փրկչին Քրիստոսի»:[39] հենց կաթողիկոսի գլխավորությամբ էլ, որը տիրապետում էր եվրոպական լեզուներին, պատգամավորությունը եղավ Վենետիկում,Հռոմում,1550 թ. հանդիպում ունեցավ գերմանական կայսր Կառլ 5-րդի հետ, անցավ Լեհաստան, Ռուսաստան ու վերադարձավ էջմիածին:

---

[37] Նույն տեղում:
[38] Մանր ժամանակագրություններ. հ.1, էջ 136
[39] Տես Ալիշան Ղևոնդ, Հայ-Վենետ. էջ 329:

Սալմաստեցու հաջորդ Միքայել Սեբաստացու (1564-1570 թթ) նախաձեռնությամբ, տակավին 1562 թ., երբ Միքայելը կաթողիկոսի աթոռակիցն էր, Սեբաստիայում գումարեց մեկ այլ խորհրդաժողով, որտեղ որոշվեց դպիր Աբգար Թոխատեցու գլխավորությամբ նոր պատվիրակություն ուղարկել Եվրոպա: Պատվիրակության առաջ խնդիր էր դրված ա) հիշեցնել առաջին պատվիրակության հետ համաձայնեցված պարտավորությունները, բ) պարզել Արևմուտքի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ իրենց ստանձնած պարտականությունների նկատմամբ, գ) հարց բարձրացնել հայ գաղթականների վիճակի մասին, դ) նախապատրաստել հայ կաթողիկոսների (էջմիածնի և Սսի) ուղևորությունը Հռոմ:[40] Աբգարի պատվիրակությունը, ինչպես ճիշտ նկատում է Աշ. Հովհաննիսյանը, «այս հանգամանքներում մի փորձ էր՝ հրահրելու հայոց պատմության նախաբեմից հետ քշված հին խնդիրը: Հարց էր հարուցված իսլամի դեմ կազմակերպելիք համաքրիստոնեական արշավանքի միջոցով վերականգնել ոչ միայն հայերի քաղաքական անկախությունը, այլև նրանց համազգային եկեղեցական միությունը»:[41] Իսկ այն, որ պատվիրակությունների ձեռնարկումները հաջողություններ չունեցան, բացատրվում է այն պարզ պատճառով, որ կաթոլիկ Եվրոպան շահագրգռված չէր Թուրքիայի հետ առաջացնել քաղաքական լարված իրադրություն ու դրանով իսկ փակի տակ պահել Արևելքի ու Արևմուտքի առևտրական հիմնական մայրուղին:

Դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ էջմիածնի իրավասության սահմաններում տիրող բազմիշխանության պայմաններում ոչ Գրիգոր ԺԲ (12) Վաղարշապատցին (1570-1587 թթ) և ոչ էլ կաթողիկոսական աթոռի ղեկավարությունը ստանձնած Դավիթ Դ (4) Վաղարշապատցին (1587-1629 թթ.) չկարողացան շարունակել իրենց նախորդների գործունեությունը: Ավելին, ինչպես տեղեկանում ենք ձեռագրերից մեկում, պահպանված 1574 թ. Գրիգոր Բ (2) Սեֆեդինյան «Փոքր» մականվամբ կաթողիկոսի հրովարտակից, Աղթամարի կաթողիկոսությունը իր վիճակի մեջ է փորձել մտցնել Վանի, Արճեշի, Խլաթի, Մուշի, Բաղեշի և Դիարբեքիրի թեմերը: «Ի հայրապետութեան Տեառն Գրիգորիս կաթողիկոսին (Աղթամարայ), որ և զծովու բոլորն էառ մինչև ի Մուշ»:[42] Օգտվելով շահ Թահմասպի մահից հետո Իրանում ստեղծված անկայուն վիճակից՝ խախտելով Ամասիայի հաշտության պայմանագիրը, 1758 թ. թուրքական զորաբանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ, ներխուժեց Արևելյան Հայաստան. «Ի սորայ Բ (2) յամի իշխանութեանն, թագաւորն Բիւզանդիոյ, յազգաւ Յաւթմանի, Մուրատ յանուն, որ և խոնդկեար ասի, հրաման եհան զօրաց իւրոց գալ ի վերայ աշխարհիս կարմրագլխոյն: Եւ ելեալ ոմն զօրագլուխ լալայի

---

[40] «Հանդէս ամսօրեայ», 1906, էջ 323:

[41] Հովհաննիսյան Ա., Դրվագներ, գ. 2-րդ, էջ 54:

[42] Լալայան Ե., Ցուցակ հայերեն ձեռ. Վասպուրականի, հ.1, էջ 669:

կոչեցեալ, բազում զօրօք եկն և եհաս ի յերկիրն յԱրարատեան»,- հայտնում է ժամանակագիրը:[43] Թե ինչ անասելի տառապանքներ կրեց ժողովուրդը այս արշավանքից, բավական է հիշատակել միայն Իսրայել Երեցի 1580 թ. թողած հետևյալ տեղեկությունը. «Երեկ սարդար (Լալա) փաշէն Երևան, արար փախստական Մահմատ խանն, էառ Երևան, Ծաղկունաց ձորն, Լոռ, Եղեկաց ձոր, Շարուր, Գեղագունի: Գերեցին և թալանեցին, որի հայր զորդի կանչէր, և մայրն զդուստրրն: Հայս եղուկ ազգիս Հայոց»:[44] Պատերազմի հարազատ ուղեկիցներն էին սովն ու համաճարակը, որից ցնցող մի նկարագրության հանդիպում ենք Հովհաննիսիկ Ծարեցու 1580 թ. ժամանակագրությունում, «Դարձեալ ի սոյն յամի ընդ երկուց պատժոցն մահուն և սրոյն, եղև ահագին և անասելի սով սաստիկ, այնքան մինչ մարդիք գազանապէս անկան ի հմայակերութիւն, վասն յորբ մնալոյն, ի մահոյն և վասն անիչք և անյարկ շրջելոյն ի գերչացն: Քանզի ամենայն գաւառք Հայոց, որ ընդ իշխանութեամբ Կարմրագլխոյն կայր, քակեալ աւերեցաւ»:[45] Նույն ժամանակագրի վկայությամբ Վարանդա և Դիզակ գավառներում տեղի ունեցան նաև մարդակերության դեպքեր :[46]

Քաջ գիտակցելով ստեղծված ռազմա-քաղաքական իրադրությունը՝ Իրանի երիտասարդ գահակալ շահ Աբաս 1-ը 1590 թ. մարտի - 21-ին Թուրքիայի հետ Կ. Պոլսում կնքեց հաշտության մի պայմանագիր, ըստ որի Թուրքիային անցավ ամբողջ Անդրկովկասը:

Պատերազմի ընթացքում ավերածությունից զերծ չմնացին վանքերն ու եկեղեցիները: Նկարագրելով 1584 թ. Ֆահրատ փաշայի՝ Երևանի կատարած հարձակումը, ժամանակագիրը ասում է «բազում եկեղեցիք, խաչ և տապանք քակեցին, և քարն ի բերդն տարան, քրիստոնէից ազգս ամէն թալանուեցաւ»[47]: Ինչպես տեղեկացնում է Առ. Դավրիժեցին, 1585 թ. Թավրիզի անկումից հետո, երբ նվաճված էր ողջ Հայաստանը, թուրք տիրակալները բնակչության հետ միասին անասելի ծանր հարկման ենթարկեցին և Սուրբ Աթոռը. «Հարկապահանջութիւն այլազգեաց ծանրացեալ էր ի վերայ քրիստոնէից որք կեղեքէին զկեանս նոցա, որև ի կաթուղիկոսէն ևս պահանջէին ինչս յոլովս»[48]: Կաթողիկոսական տեղապահ Առաքելը (1584-1586 թթ.) չկարողանալով պահանջված հարկը վճարել՝ հեռանում է Աթոռից: Նոր կաթողիկոս Դավիթ Վաղարշապատցին ևս ստիպված էր թողնել կաթողիկոսության տարածքը և շրջագայելով երկրով մեկ՝ փորձեց հավաքել պահանջված հարկագումարը: Սակայն, ինչպես Վաղարշապատցու, այնպես էլ նրա խնդրանքով

---

[43] Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 241:
[44] Մատենադարան, Ձեռ. 4173, էջ 85ա:
[45] Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 242-243:
[46] Նույն տեղում, էջ 244:
[47] «Էջմիածին», 1950, N11-12, էջ 87:
[48] Առաքել Դավրիժեցի, էջ 8:

օգնելու հրավիրված, միաժամանակ կաթողիկոս ձեռնադրված գառնեցի հոգևորական Մելիքսեթի ջանքերը արդյունք չտվեցին, քանզի, ինչպես գրում է Առ. Դավրիժեցին, «թէպէտ եղեն երկու կաթողիկոսք, զի թերևս թեթևացուցանեն զպարտսն, ի ևս առաւել բազմացուցին, զի մինչ ցարդ մի էր կաթուղիկոսն, և մի էր մսխող, այլ այժմ եղեն որկու կաթուղիկոսք և որկու մսխողք: Արդ, եթէ ի ծախելոյն նոցա և թէ ի հարկապահանջութենէ ժամանակին, և յայլս ինչ պատճառ է, սակայն բազմացաւ, բարդեցաւ, դիզացաւ պարտքն ձեռամբ նոցա ի վերայ սրբոյ Աթոռոյն էջմիածնի, և ասեն թէ մինչ ի ՕՌ (5000) ղուռուշ եհաս պարտքն, և ոչ կարէին վճարել: Եւ յորժամ լինէր, որ գային տուողք պարտուցն և խնդրէին զիւրեանց տուեալ պարտսն, նաև թագաւորական և իշխանական հարկահանքն յորժամ եկեալ պահանջէին զդիմոսական (զգլխահարկ) հարկսն, և կաթուղիկոսքն ի չքաւորութենէ ոչ ունէին գոյք առ ի վճարել»:[49] Վշտացյալ կաթողիկոսը (իմա՝ Դավիթ Դ Վաղարշապատեցին-Հ. Թ.), ինչպես շարունակում է Առ. Դավրիժեցին «... զերս ոչ կարէր տայր՝ հալածական լինէր և թաքչէր և պահանջողացն և այնպէս հալածական և գաղտագողի կենօք կացեալ ի ժամանակս ինչ, որոյ ծանձրացեալ և տառապելի կենաց՝ որ հանապազ փախչէր և թաքչէր»:[50] Կաթողիկոսների խնդրանքով Տիգրանակերտ քաղաքի վանահայր Սրապիոն Ուռհայեցի վարդապետը ստանձնում է վճարել պարտքերը, պայմանով, որ ինքը օծվի կաթողիկոս: Կայացվում է համաձայնություն «Եթե գաս և վճարես զպարտքն, քեզ լիցի աթոռն և կաթուղիկոսութիւնն»:[51] Սրապիոնը Ջուղայի և Ագուլիսի վաճառականության օժանդակություն ստանալով օծվում է կաթողիկոս, իսկ պարտքի մարումը թողնում նախորդ երկուսի վրա: Բնականաբար դա առաջ է բերում խաբված երկու հոգևոր հայրապետների զայրույթը: Մելիքսեթը իսկույն մեկնում է Սպահան և հորդորում թուրքերի դեմ նոր պատերազմի նախապատրաստվող Աբասին՝ նախահարձակ լինել Արևելյան Հայաստանի տարածքով, միաժամանակ նրան խոստանալով ակտիվ աջակցություն իր և Դավիթ կաթողիկոսի կողմից:

Շուրջ մեկ տասնամյակ լրջորեն նախապատրաստվելուց հետո, շահ Աբաս 1-ը 1603 թ. սեպտեմբերի 14-ին Սպահանից արագընթաց երթով շարժվում է Թավրիզ ու գրավում այն: Այնուհետև անցնելով Արաքսը՝ նա մտնում է Ջուղա, գրավում Նախիջևանը և պաշարում Երևանը: Նոյեմբերի 15-ին թուրքերը հանձնում են Երևանը: Աբասի նման արագ հաջողությունները բացատրվու է այն հանգամանքով, որ թուրքական համեմատաբար ծանր լուծը Անդրկովկասի ժողովուրդների մոտ առաջ էր բերում խիստ դժգոհություն և դրանից ազատագրվելու միակ միջոցը նրանք կապում էին սպասվող նոր պատերազմում Իրանի

---

[49] Նույն տեղում, էջ 8-9:
[50] Նույն տեղում, էջ 9:
[51] Նույն տեղում:

շահի հաղթանակների հետ: Ավելին, ինչպես նշում է Առ. Դավրիժեցին. «Բազում ոմանք յաշխարհէս Ատրպատականի իշխանք և կողմնակալք, մահմետականք և քրիստոնեայք, գնացեալ էին առ թագաւորն պարսից, վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ, և կեղեքմամբ զրկէին և կողոպտէին և հաւատոց կուռեցութիւն (խստութիւն) առնէին, և այլ բազում տառապանօք չարչարէին ոչ միայն զազգս հայոց, այլ նաև զազգս վրաց և զմահմետականաց, և վասն այնր նեղութեան գընացին առ թագաւորն պարսից, զի քերևս նովաւ դիւրութիւն գտցեն զեղծեալք ի ծառայութենէ օսմանցւոց»:[52]

Շահ Աբասն սկսելով հարձակումը հաշվի էր առել նաև Օսմանյան կայսրությունում ստեղծված անկայուն վիճակը՝ կայսրության արևելյան վիլայեթներում գլուխ բարձրացրած Ջալալիների ապստամբությունը, ինչպես նաև ենիչերիների հուզումները մայրաքաղաք Կ. Պոլսում:[53] Երևանի գրավման հետ միաժամանակ շահի կարգադրությամբ Ալավերդի խանը զորաջոկատներով ներխուժեց Արևմտյան Հայաստանի տարածքը՝ հրաման ունենալով տեղի բնակչությանը բռնի տեղափոխել Արարատյան դաշտավայր: Թե ինչպես կատարվեց տեղահանումը, առավել պատկերավոր նկարագրել է Առ. Դավրիժեցին «... և յարձակեցաւ ի վերայ գաւառաց աշխարհին, և զամենայն երկիրն Արծկեոյ հաւասար աւերեաց, և հրդեհ արկեալ այրեաց, և զամենայն արս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստերս և զդստերս, և զկանայս յաւար և ի գերութիւն առեալ: Եւ եղեալ անտի ակն յԱրծէշ՝ և ի Բերկրի, և ի Վան, և յամենայն գաւառս նոցա արար այնպէս ... Եւ ժողովեալ զամենայն գերեալսն, և հօրանս անդէոց, և ջոկս ոչխարաց, և երամակս ձիոց, իբրև մեծ և յորդորեալ հեղեղ զամենեսեան վարեալ ածեալ բերեալ հասուցին յԵրևան ի լիութիւն բանակին Պարսից»:[54] Փաստորեն Հայաստանի և Անդրկովկասի փրկարարը դարձավ այդ երկրների ավերողը; Եվ զուր էին Մելիքսեթ ու Դավիթ կաթողիկոսների հույսերը: Շահը շուտով իրենց մոտ է հրավիրում նրանց և ասում «սուորութիւն է թագաւորաց և կարգ. նաև յայտնի է ձեզ, թէ որպէս երկիրս յառաջն օսմանցւոց էր, և այժմ մեր եղև, սոյնպէս և ամենայն ինչք և ստացուածք նոցա՝ որ անտէր մնացեալ են, պարտի լինիլ արքունական, այսինքն միրիմալի: Արդ առ ձեզ գան բազումք գանձք օսմանցւոց՝ զոր դուք պարտք առեալ էք ի նոցունց, և պարտիք վճարել առանց իմիք պատճառի, քանզի պարտք են, և վճար գանձուցդ և գանձարանս արքունի պարտի լինիլ՝ քանզի ստացուածք օսմանցւոց է. որպէս զերկիր նոցա կալաք, սոյնպէս և ամենայն ինչք նոցա միրիմալի պարտի լինել: Եւ յոր-

---

[52] Նույն տեղում, էջ 15:

[53] Ջուլալյանը Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ:

[54] Առաքել Դավրժեցի, էջ 32-33:

ժամ դուք վճարեք ի գանձարանս արքունի, ես տաց ձեզ զթուղթ ազատութեան դիւանաւ և դատաստանաւ՝ թե ես առի զամենայն գանձսն՝ զոր պարտ էին դոքա, և մի ոք լիցի պահանջող ի սոցունց զի ինձ վճարեցին»:[55] Շահի կարգադրությամբ ձերբակալվում է Սրապիոն կաթողիկոսը, և միայն ջուղայեցի խոջաներից մեծ փրկագին ստանալով, նրան արձակում է: Վերջինս մեկնում է Տիգրանակերտ, ուր և 1606 թ. վախճանվում է:

Պատերազմի ամենաաղետալի իրադարձությունը հայ բնակչությանը բռնի կերպով Իրան գաղթեցնելու Աբաս 1-ի որոշումն էր, որը հայ ժողովրդի պատմության արյունալի էջերից մեկը դարձավ:[56] Ղեկավարվելով կռվի իր նախորդների տակտիկայով, Աբաս 1-ը որոշեց նախահարձակ լինել, Ջղալ-օղլի Սինան փաշայի առջև ստեղծել ամայի տարածություններ: «Այդ ժաանակ աստծո ստվեր նորին սրբություն շահը,-գրում է Աբաս 1-ի կենսագիր իսքանդար Մունշին,-թշնամուն նեղը դնելու և պարտության մատնելու նպատակով, հաղթական զինվորներին գունդ առ գունդ և ջոկ առ ջոկ ուղարկեց Կարսի և Զարիշատի երկրները, որպեսզի նրանք այրեն ու ոչնչացնեն այդ կողմերի հացահատիկը ու արոտավայրերը: Որոշվեց, որ այն ճանապարհներում, որոնցով պետք է անցնեին թշնամու զորքերը մի քանի օրվա ճանապարհի տարածության վրա գտնվող շեն վայրերը ամայացվեն, իսկ դաշտերում գոյություն ունեցող ցանքսերից, արոտավայրերից ու բնակավայրերից ոչ մի հետք չմնա»[57]: Թե ինչպիսի բարբարոս մեթոդներով կատարվեց բռնագաղթը, բավական է մեջ բերել միայն իտալացի ճանապարհորդ Դելլա-Վալերի հետևյալ վկայությունը. «Ինչպիսի դժբախտությունների տեղի տվեց այդ ողբերգական տեղահանումը, ինչպիսի սպանությունների, ինչքան մարդիկ մահացան սովից, ինչպիսի հափշտակումներ, աղջիկների ու կանաց բռնաբարումներ, ինչքան երեխաներ հուսահատության պատճառով խեղդվեցին կամ ջրահեղձ արվե-

---

[55] Նույն տեղում, էջ 27-28:

[56] Բռնագաղթման ենթարկված բնակչության թվաքանակի մասին աղբյուրները տարբեր տեղեկություններ են հաղորդում: Ձեռագրերից մեկում միայն Արևմտյան Հայաստանից տեղահանվածների թիվը հաշվում է 60000 մարդ (Մատենադարան, ձեռ. 5315, էջ 208): Ըստ Առաքել Դավրիժեցու գաղթվածներից միայն 500 ընտանիք տեղավորվել են մայրաքաղաք Սպահանում և նույնքան էլ Շիրազում (Առաքել Դավրիժեցի, էջ 48): Աբաս 1-ի կենսագիր Իսքանդար Մունշիի հաղորդմամբ միայն Էրզրումի ու Կարսի շրջաններից տեղահանվել է շուրջ 20000 հայություն (տես՝Рахмани, ст. 101): Համեմատական վրացական աղբյուրների, տեղահանվել է մոտ 80000 ընտանիք (Վրաց աղբյուրներ, հ. Բ, էջ 112): Թերևս իրավացի է Առաքելյանը Հ., որը բաղդատելով եղած թվերը եկել է այն համոզման, որ բռնագաղթված բնակչության թիվը հասել է մոտ 500-600 հազարի, որից կեսին է հաջողվել տեղ հասնել (Առաքելյան Հ., Հանրագիտական բառարան, Թիֆլիս, 1915, էջ 6):

[57] ՄՊՀ, պր. 2-րդ, էջ 15:

ցին իրենց հարազատների աչքի առաջ, այլք սպանվեցին պարսիկ զինվորների կողմից կամ խլվեցին իրենց մոր կրծքից ու նետվեցին փողոցները՝ դառնալու համար կենդանիների սնունդ կամ դրվեցին բանակի ծիերի ու ուղտերի ոտքերի տակ: Կազմվեցին մարդկանց ու կանանց ճամբարներ, որոնց զգալի մասը էժան գներով վաճառվեցին, ինչպես անասուններ» :[58]

Հարկ է նշել, որ Աբաս 1-ի հայ ժողովրդի տեղահանման քաղաքականությունը պայմանավորված էր ոչ այնքան թշնամու առաջխաղացումը կասեցնելու մտադրությամբ, որքան բռնագաղթված բնակչության միջոցով նպաստելու իր տերության կենտրոնական երկրամասերի տնտեսության բարգավաճմանը: Այդ մասին ուղղակի վկայություն ունի Առ. Դավրիժեցին «Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անգերծանելի հարկատուք ծառայք և հողագործք մինչև ցյաւիտեան»:[59]

Պատմագիրը շարունակում է, որ «բաժանեալ տրոհեցին ի նոցունց արհեստաւորսն զամենայն և տարան ի քաղաքն Ասպահան վասն արուեստին, որ պիտոյանար անդ ի գործս շինութեանց տան թագաւորին, և համօրէն ազգին պարսից»:[60] Հիմնավոր փաստերը շահին բերին այն հանգամանքը, որ պարսիկների մոտ բացակայում են առևտրական ունակությունները և տեղահանված վաճառաշահ Ջուղայի բնակչությունը մեծ արտոնություններով բնակեցրեց մայրաքաղաք Սպահանի մատույցներում, ուր շուտով կառուցելով Նոր Ջուղան, հայ վաճառականները արդարացրին շահի հույսերը :[61]

Բռնագաղթն ու դրան ուղեկից սովը հայազրկեցին երկրի բազում շրջաններ: Շատերն էլ ստիպված էին բռնել օտար ափերի ճանապարհները: Ժամանակի գրիչներից Կարապետը այդ մասին հիշատակում է. «Եւ այն, որ մնաց փախեան ի Ջզիեն, ի Բաղդադ և յԱրաբստան և ի Գուռջստան և հազարէն մէկ չի դարձի յետս»;[62] Առ. Դավրիժեցու հավաստմամբ «Եւ յայսմ ժամանակի եղեն ցիրուցան ազգն հայոց և գնացին իւրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ: Ոմանք յՈւռումելի, ոմանք ի Բուղդան, ոմանք ի Լեհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի ծովեզերաց Պոնտոսի» ;[63]

Ինչպես հայ եկեղեցին, այնպես էլ նրա հոգևոր կենտրոնը զերծ չմնացին համաժողովրդական աղետից: Քանդվում ու ավերվում էին վանքերն ու եկեղեցիները, կողոպտվում նրանց ունեցվածքը: Ավելին, բռնագաղթվածների շարքերում էին ոչ միայն եկեղեցու սպասավոր-

---

[58] Տես Ջուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., էջ 59-60:
[59] Առաքել Դավրիժեցի, էջ 38:
[60] Նույն տեղում, էջ 456:
[61] Тер-Австикян С., Город Джуга, Тифлис, 1937. Байбуртян В. А., Армянская Колония Новой Джульфы в. 17в., Ер., 1969.
[62] Տես Тер-Аветикян С., Город Джуга, с. 48-49.
[63] Առաքել Դավրիժեցի, էջ 88:

ներից շատերը, այլըև Դավիթ ու Մելիքսեթ կաթողիկոսները: Ճիշտ է Մելիքսեթին հաջողվեց փախչել քարավանից ու ապաստանել Էջմիածնում, սակայն Սուրբ Աթոռի ավերակ վիճակը տեսնելով ստիպված էր մեկնել Երևան. «Բայց 'ի չռել անդ ժողովրդոց 'ի պարս, Մելիքսէթ կաթողիկոս հնարիվք ինն փախուցեալ 'ի կէս ճանապարհէ ենկ էջմիածին. և գտեալ զթաքուցեալ և զզերծեալ եպիսկոպոսունս և զաբեղայս՝ նստաւ՝ անդ ամիսս ինչ. բայց քանզի անապատ էր դարձել տեղին, ելեալ անտի գնաց յԵրևան»:[64]

Նկատի ունենալով, որ Մելիքսեթը մեկնելով Երևան բարձիթողի է մատնել կաթողիկոսական աթոռը, բարձրաստիճան հոգևորականության մի մասը դիմում է Սպահանում վերաբնակվող Դավիթ կաթողիկոսին՝ վերադառնալու և տեղում հայրապետի աշխատանքները կազմակերպելու խնդրանքով: Սակայն Դավթի վերադարձով էլ չի կասեցվում կաթողիկոսության շարունակվող քայքայվածությունը: Շուտով, վերջինիս հորդորներին ընդառաջ գնալով Աբաս 1-ը ձերբակալում է Մելիքսեթին՝ մեղադրելով նրան շահական հրամանները չկատարելու. մեջ: Մելիքսեթն էլ իր հերթին խոստանալով շահին երեք տարվա ընթացքում միանվագ ամեն տարի 100 թուման վճարել, կրկին տեր է դառնում կաթողիկոսական աթոռին:[65] Հասկանալի է, որ Մելիքսեթին այս հանձնարարությունը մեծ հարված էր առանց այդ էլ քայքայված կաթողիկոսության համար: Հենց դա նկատի ուներ Առ. Դավրիժեցին, երբ գրում է. «Եւ այս եղև բեռն ծանր, և լուծ տաժանելի ու անուր անխզելի ի վերայ սրբոյ աթոռոյն էջմիածնի և զուր և ի տարապարտոց. և ամենայն ազգին Հայկայ սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի եկեղեցականաց և աշխարհականաց»:[66] Առանց այդ էլ պարտքերի մեջ թաղված էջմիածնի վանական հաստատությունը անկարող էր պարտապանի նոր պարտավորություններ ստանձնել: Մելիքսեթի բոլոր ջանքերը բնակչությունից գումար հավաքելու ուղղությամբ, ի չիք դարձան: Կառավարության ներկայացուցիչները դաժան միջոցներ էին գործադրում գանձելու համար հիշյալ գումարը ինչպես հոգեվորականներից, այնպես էլ աշխատավորներից: Մելիքսեթի կ գ»ողմից նույնիսկ գրավ էին դրվել էջմիածնի սրբությունները:[67] Ի վերջո ծանր իրավիճակից ելք չգտնելով, բազում տառապանքներից հետո վշտացեալ կաթողիկոսը հանձնելով սուրբ Աթոռի ղեկավարությունը իր ազգական Սահակ Գառնեցի վարդապետին, դիմում է փախուստի, ապաստանելով սկզբում Թուրքիայում, ապա Լեհաստանում, որ և վախճանվում է 1626 թ.:

Արժանին մատուցելով Դավիթ և Մելիքսեթ կաթողիկոսների գործունեությանը, չպետք է կարծել, թե վերջիններս մտահոգված էին բա-

---

[64] Չամչեան Մ., հ. Գ, էջ 554:
[65] ՄՊՀ, պր.1-վավ. 12:
[66] Առաքել Դավրիժեցի, էջ 221-222:
[67] Նույն տեղում, էջ 222-228:

ցառապես իրենց սեփական անձերի պահպանությամբ: Հայտնի է, որ Մելիքսեթ կաթողիկոսը օգնության խնդրանքով դիմել է կաթոլիկ եկեղեցու առաջնորդին, ուր նկարագրելով թուրքական տիրապետության դաժան ռեժիմը, գրում է. «...ընդ երկաթեղէն լծով անհնարին բռնությամբ թուրքաց հարստահարի և ի դառնագոյն կապանս անկեալ հեծէ»:[68] Ճիշտ է, իր նամակում նա հանդես է գալիս իբրև հայ խոջայության շահերի արտահայտիչ, պետք է ենթադրել, որ հայոց քաղաքական կյանքում կարևոր դեր խաղացող վերջիններիս օգնությամբ էլ ձգտել է հասնել որոշակի հաջողության: Իսկ Դավիթ կաթողիկոսի 1607 թ. Հռոմի Պողոս 4-րդ պապին հասցեագրված նամակում խնդրվում է պապի միջնորդությունը, որպեսզի շահը հոգևոր ու աշխարհիկ գործերում ինքնավարության շնորհի իրենց:[69]

1624 թ. կաթողիկոսական աթոռի ղեկավարությունը ստանձնած Սահակ Գառնեցին երկրի շարունակ աճող քայքայվածության պայմաններում անկարող գտնվեց շտկել էջմիածնի վանական հաստատության գործերը: Ավելին, թե ժողովրդի և թե՛ Նոր Ջուղայի խոջայության կողմից չընստանալով անհրաժեշտ վաստահություն և օգնություն, նա անկարող է գտնվում շահական արքունիքին անդեն 700 թումանի հասած պարտքի գումարը վճարել, հեռանում է ասպարեզից:

1629 թ. Մովսես Տաթևացի (Սյունեցի) վարդապետը ստանձնում է հայ եկեղեցու հովվապետի աթոռը: Ժամանակակիցները խոր ակնածանքով են խոսում Խոտանանցու մասին: Օրինակ՝ Առաքել Դավրիժեցին, որ մեծ խանդավառանքով է բնութագրում նրա կյանքն ու գործը, 1632 թ. վերջինիս մահվան կապակցությամբ գրում է. «...Եւ որպէս կենդանությամբ սորա զուարճացեալ ցնծայր ամեն ոք, ոչ միայն քրիստոնեայք, այլ և մահմետականք, նաև քաղաքապետ ինքն Թահմազ կուլի խան, որդին Ամիրգունայ խանին, և ամենայն իշխանք իւր որքն եկին ի թաղումն Մովսէսի կաթողիկոսին, և սգակիր լեալ քրիստոնէից ողբացին զմեռանիլն նորին զի այնպիսի աստուածահաճոյ և աշխարհաշէն այր պակասեցաւ յաշխարհէն»:[70] Մովսեսի արարչագործությունների մասին հիացմունքով է արտահայտվում նաև Գրիգոր Դարանաղցին: Հատկապես դրվատված է հայ գերիներից շատերի ազատումը Մովսես կաթողիկոսի ջանքերով. «... զմարաց ազգացն, որ են քրդաց, որ սոքա մերձ լինելով վերին աշխարհացն, հանապազ ասպատակ առնելով ի վերայ նոցա և գերի վարելով Բաղէշ, ի յԱրճէշ և ի Վան և յամենայն Ոստան: Եւ նոքա զՊարսից տէրութեան Հայքն հանապազ գերեցնելով, որ ահա երեսուն և երկու ամ է (նկատի ունի 1604-1636 թթ. Հ. Թ.), որ հանապազ թշնամիք են միմեանց պարսիկք և տաճիկք և ոչ դադարեն հառնել ի վերայ միմեանց սաստկագին պատերազմաւեւ

---

[68] Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1934, էջ 238:
[69] Հովհաննիսյան Ա., Դրվագներ, գ. 2-րդ, էջ 105-106:
[70] Առաքել Դավրիժեցի, էջ 290-291:

ահա այնպէս ի մէջ երկուց ազգաց գերչաց լինելով տառապեալ ազգս և Տէր Մօսեսն լոյսհոգին ազատէր զնոսա զամենեսեան»:[71]

Նոր կաթողիկոսի առաջին ձեռնարկումներից մեկը եղավ վանական տնտեսության վերականգնումը, որում մեծապես օգտագործվեց թե՛ մասնավոր հատկացումները և թե՛ գնման ճանապարհով ձեռք բերվածները: Կարևոր էր վանքի պարսպի վերանորոգման աշխատանքների իրականացումը, որի ժամանակ քանդված մասերը ամբողջությամբ վերականգնվում են քարով ու թրծված աղյուսակով, իսկ հողաշեն մասը ամրացվում է: Դրան զուգընթաց, ինչպես գրում է Մ. Չամչյանը. «ի հիւսիսային և յարևելեան կողմանս շինեաց սենեակս ի բնակութեան միաբանից. և ի հարաւային կողմն՝ սեղանատուն և փռատուն և տնտեսատուն և համբարանոցս, և յարևմտակողմն հիւրանոցս և զանազան օթևանս»:[72] Իսկ ամենակարևոր ձեռնարկումը վանքի պարտադրված 200 թուման տարեկան պարտքի վճարման պարտականությունների վերացումն էր, որի ընդհանուր չափը արդեն կազմում էր 700 թուման: Նրան այդ գործում մեծ աջակցություն ցույց տվեց իրանական արքունիքում մեծ դիրք ունեցող նշանավոր խոջա Նազարը: Հարկ է նշել, որ հենց խոջա Նազարի ջանքերով էր, որ խափանվեց շահ Աբաս 1-ի չար մտադրությունը՝ տեղահանված հայ բնակչությունը Իրանի հետ ամուր կապելու նպատակով էջմիածնի վանքի քանդումը և նրա քարերով նույնատիպ վանքի կառուցումը Նոր Ջուղայում:[73] Իսկ շահ Սեֆու էջմիածնի տարեկան 100 թուման վճարելու պարտավորությունից ազատելու մասին գրված 1629 թ. հրովարտակում ասված է. «Հաջորդ քայլը, որին ձեռնամուխ եղավ Մովսես Տաթևացին, խաթարված վանական կարգերի վերականգնում էր»:[74] Առաջին հերթին վերացվեց աթոռակալության կարգավիճակը, երբ միաժամանակ հոգևոր հովվապետի աթոռը զբաղեցնում էին մի քանի անձնավորություններ, որն էլ իր հերթին անվերջ խռովությունների ու բռնությունների պատճառ էր դառնում. «... զի ոչ թէ մի էր, այլ երեք և չորք կաթողիկոսք, -գրում է Առ. Դավրիժեցին, վասն զի յաղագս փառամոլութեան և ագահութեան իբրև զմաքսաւորս դաբուլայի և հարկիւ ի պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթողիկոսութեան՝ և զսուրբ Աթոռն էջմիածնին, և ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն թագաւորական ծառայս և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս, և զիրաւունս և զհասս՝ որք ի ժողովրդենէն՝ ճշդիւք և բռնութեամբ ուժգին առնուին»:[75] Կաթողիկոսը

---

[71] Գրիգոր Դարանաղցի, էջ 298-299:

[72] Չամչեան Մ., հ. Գ, էջ 609:

[73] Առաքել Դավրիժեցի, էջ 200-201: Սակայն այդ նախագիծն ավարտվեց էջմիածնի վանքի մի քանի քարերի և Լուսավորչի Աջի Փոխարկումով Իրան: (Առաքել Դավրիժեցի, էջ 213):

[74] ՄՊՀ. ժր. 2, վավ. 19, հմմտ. Ջամբռ, էջ 104:

[75] Առաքել Դավրիժեցի, էջ 289:

պայքար է սկսում հոգևոր սքեմ հագած այն հայրերի դեմ, որոնք հանուն շահասիրության և ընչաքաղցության պատրաստ են զոհելու բոլոր սրբությունները, այն մարդկանց դեմ, որոնք գողանալով եկեղեցուն պատկանող նյութական արժեքները օգտագործում են սեփական տնտեսություն վարելու համար: Այս առումով տիպական է Առ. Դավրիժեցու հետևյալ վկայությունը. «...ամենայն վանօրայք ազգիս Հայոց իւրաքանչիւր սնագլուխ ունէր իւր զինչս առանձին, այգի և ջուրաստան, փեթակս և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին: Եւ զայն ամենայն ինքեանց, և ազգայնոց և իւրեանց հաճելաց որոնց ծախէին ի պէտս կարեաց: Եւ զնուիրեալ տեղիսն Աստուծոյ որք բնակարան են նշխարաց, սրբոյ և սքանչելագործ, և շնորհակիր նշանաց Աստուծոյ, լցեալ էին զայնոսիկ կանամբք և տանտիկինօք և իւրեանց ազգայնօք: Եւ բնաւ ոչ գիտէին թէ պարտ է կարգաւորի վեղար և փիլոն ունիլ զիւրեաւ, այլ որպէս աշխարհական, և զմարմնաւոր իշխանս փափուկ և ազնիւ զգեստիւ պճնէին»:[76] Առաջադիմական այս ջանքերի նպատակն էր հակադրել դասալքման և բարոյալքման այն այրոցեսում, որ ծավալվել էր վանական միջավայրում 15-16-րդ դարերում: Պակաս կարևորություն չէր ներկայացնում Տաթևացու լուսավորչական գործունեությունը: Ինչպես տեղեկացնում է Խաչատուր Կեսարեցին, Մովսես ը «յամենայն տեղիս դասատուն և դպրոցս կարգեաց և լուսաւորեաց զազգս Հայոց»:[77] Իսկ Ստեփանոս Լեհացու հավաստմամբ Էջմիածնի վանքում այդ պահին կային շատերը, որոնք «ի հրահանգս իմաստութեան կրթէին զանձինս իւրեանց», որ նրանց մեջ կային «երևելիք վարդապետք քաջաբանք, բանաստեղծք աստուածային գրոց, քաջ գիտունք և հմուտք», որոնց թվում նա հիշատակում է «քաջ ռաբունի և վիպասան, որ ժամանակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց գեղեցկայարմար բանիւք դրոշմեաց» Առ. Դավրիժեցուն:[78] Նա ձեռնամուխ եղավ նաև տպագրության աշխատանքների իրականացմանը, սակայն տեղեկացնում է Խաչատուր Կեսարեցին. «...չեղև ձեռնհաս զի փոխեցաւ աստի յանանց կեանս»:[79]

Տաթևացին ևս դիմեց արևմտյան տերություններին ու հատկապես Հռոմի Ուրբանոս պապին հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին օժանդակելու համար: Այս առումով հետաքրքրական է կաթողիկոսի պատասխանները կաթոլիկ միսիոներ ոմն Պողոսի, հետևյալ բովանդակությամբ. «բազում ունիմք գրեալ առ նա նամակս սիրոյ, որպէս և ես իսկ գրեցի ի սկզբան հայրապետութեան իմոյ յամի 1679 թ. այլ ոչ գիտեմ՝ եհաս այն առ նա թէ ոչ: ... Այլ դու եթէ կարես յապահովի և

---

[76] Նույն տեղում, էջ 288-289:
[77] Տես Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն պարսից, էջ 116:
[78] Տես Հովհաննիսյան Ա., էջ 164:
[79] Տես Խաչատուր Ջուղայեցի, էջ 117:

անվտանգ յղել զթուղթ մեր, գրեցից այժմ միևս ևս նամակ նոր, և տաց քեզ հասուցանել 'ի Հռովմ: Եւ 'ի յանձն առնուլ նորա յօժարութեամբ գրեաց Մովսէս միւսանգամ թուղթ սիրոյ և հպատակութենէ ընտանի և քաղցր բանիւք առ սրբազան պապն Ուրբանոս, որում ստորագրեցին և երկոտասան եպիսկոպոսունք հայրապետանոցին և ետ ի ձեռս Պողոսի»:[80]

Հայոց հոգևոր հովվապետությունը 1633 թ. ստանձնեց Մովսես Տաթևացու աշակերտ Փիլիփոս Աղբակեցին, որը ականատես պատմիչի վկայությամբ, բնութագրվում է որպես «...վարուքն յոյժ ճգնող և պահող, և մտօքն սրբախորհուրդ»[81]: Շարունակելով իր նախորդի բարեկարգությունները, Աղբակեցին հատկապես մեծ ուշադրություն կենտրոնացրեց քանդված ու քայքայված վանքերի վերաշինմանը, նոր եկեղեցիների կառուցմանը: Առ. Դավրիժեցին նկարագրելով Աղբակեցու կողմից 1636 թ. Երևանի սբ. Անանիա եկեղեցու վերաշինման աշխատանքները, հաղորդում է, որ «...զայնս ևս զբովանդակն ամենատև վերստին շինեաց ոչ թէ փայտիւ այլ քարիւ և բոով զմբէթայ զժամատունն, զսեղանատունն, զխցերն, և զայլ ևս շինուածսն ամենայն»:[82]

Նույն հաջողությամբ Աղբակեցին շարունակում էր աշխատանքները նաև եկեղեցական բարքերի վերականգման ուղղությամբ: Նա պայքարում էր այն հոգևոր առաջնորդների դեմ, ովքեր հանուն դրամի անարժաններին առաջ են քաշում աստծու սպասավորության գործերում, գանգատվում է, որ պղծությունները սրբագործում են, իսկ սրբությունները պղծում: Արդարությունն ու ազնվությունը իրենց տեղը զիջել են խարդախություններին ու խաբեբայություններին, որոնք դառնում են հարստություններ կուտակելու հանրահայտ ու սովորական միջոցներ: «Սա ի սկզբան անդ կաթողիկուութեան իւրոյ, - գրում է ականատես պատմիչը Աղբակեցու մասին, - շրջեալ յայցելութեան մերձակայ վանորէից՝ յորդորէր զամենեսին ի զգաստութեան սրբութեան վարուց. և եթէ ուրեք գտանէր զոք ցոփակեաց, ջանայր յուղղութիւն վերածել խրատուք և սաստիւք, իսկ զանուղղայս վարէր արտաքս, զի մի փոքր մի խմոր զամենայն ապականեսցէ»:[83] Խոսելով այդ ուղղությամբ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի մասին՝ ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին հաղորդում է. «Ջեռնադրեաց սա աւելի քան զչորս հարիւր եպիսկոպոս և վարդապետ» :[84]

Փիլիպոս Աղբակեցու բարենորոգումները սակայն շուտով ընդհատվեցին, քանի որ Հայաստանը կրկին դարձավ թուրք-իրանական պատերազմների թատերաբեմ:

---

[80] Տե՛ս Չամչեան Մ., հ. Գ, էջ 611:
[81] Նույն տեղում, էջ 614:
[82] Առաքել Դավրիժեցի, էջ 318:
[83] Նույն տեղում, էջ 614:
[84] «Դիվան հայոց պատմության», գիրք Ժ, էջ 52:

Որոշ չափով ազատվելով ներքին ճգնաժամից, թուրքական սուլթան Մուրադ 4-րդը նախապատրաստվում է արշավանքի: Ինչպես վկայում է Զաքարիա Քանաքեռցին, Օսմանյան կայսրությունում պատերազմի նախօրյակին կատարվում է մեծ զորահավաք:[85] Գր. Դարանաղցին ևս վկայելով սուլթանի այդ նախապատրաստության մասին գրում է. «Եւ ի մէջ ձմերանի սաստիկ ցրտութեան աւուրսն ժողովեցան և եղեն բանակ մեծ և անհուն և անհամար, ի փետրուարի ամսոյն հետէ կու ժողվին յՈւսկուտարն, մինչև յելս մարտի ամսոյս դեռ տակաւին բանակեալք են և կամին շտապով գնալ ի վերայ պարսից և ի վերայ մեր երեք թշուառութեան տառապեալ ազգացս հայոց»:[86] Առ. Դավրիժեցին օսմանյան բանակի թիվը հաշվում է 700000.« իսկ յորժամ ստամբօլայ սուլթան Մուրատ կոչեցեալ այդր կարի խրոխտ, հզօր յաղթող և իմաստուն, ելեալ ի Ստամբօլայ եօթն հարիւր հեծելազօրօք, և եկն յաշխարհս Արարատու»:[87] 1635 թ. մարտին թուրքական բանակը Կարին-Կարս-Երևան ուղղությամբ անցնում է հարձակման: Չկարողանալով կազմակերպված դիմադրություն ցույց տալ՝ Երևանի Թահմազ կուլի խանը քաշվում է Երևանի բերդը, իսկ շրջակա վայրերի բնակչությունը դիմում է խուճապահար փախուստի: «Եւ ելին,-գրում է Զաքարիա Քանաքեռցին,-ի բնակութենէ իւրեանց և ցրուցան, ոմանք յաշխարհն Վրաց, ոմանք յԱղուանս, ի Զական, ի Գեանճայ, ի Խաչէն, ի Վարանդ և այլ ուր, ուր և կարացին»:[88] Օգտվելով պատերազմական իրավիճակից, քոչվոր առանձին ցեղախմբեր զբաղվում են թալանով ու հարստահարությամբ: Նկարագրելով թուրքական բանակից կարբեցիների փախուստը, տեղի խոշոր վաճառականներից մեկը շահ Սեֆիին պատմում է այդ չարագործությունների մասին, որ կատարեց քուրդ մի ցեղախումբ իր հայրենակիցների նկատմամբ. «Զի լուաք թէ օսմանլու է եալիս յաշխարհս մեր, մեք ղըզլբաշի ենք սովոր, գեղով ելանք փախանք թէ օսմանցւոցն ծառայ չենք կարող լինել և եկաք դէպ ի սահմանս քոյդ տէրութեանդ. և անդ եկեալ քուրդք կողոպտեցին զմեզ և զբազումս ի մէնջ կոտորեցին, և զկանայս մերկացուցեալ խայտառակեցին և զմանկունս մեր գերեցին. զամենայն ինչս մեր յափշտակեցին և մնացեալ կանայք մեր և մանկունք կան մերկ ողորմելի»:[88]

1635 թ. հուլիսի վերջին օսմանյան բանակը պաշարում է Երևանը և 9 օրվա ընթացքում գրավում այն: Բերդի գրավումից հետո, ինչպես վկայում է թուրք պատմագիրը, սկսվում է նյութական արժեքների հարբունիս գրավումը ու բնակչության կողոպուտը: «Ներսի ու դրսի բոլոր գույքերը,- գրում է նա,- ինչպես առկա ու պահված բոլոր հարստությունները

---

[85] Զաքարիա Քանաքեռցի, հ 2, էջ 4-5:
[86] Գրիգոր Դարանաղցի, էջ 299:
[87] Առաքել Դավրիժեցի, էջ 316:
[88] Զաքարիա Քանաքեռի, հ. 2, էջ 6:
[88] Նույն տեղում:

ները հաշվառման ենթարկեցին ու վերցրին: Նրանք հափշտակեցին իրենց համար անսպասելի այն գանձերն ու անհաշիվ հարստությունները, որ երեսուն տարվա ընթացքում կուտակել էին Երևանի տիրակալն ու նրա հայր Ամիրգունա խանը: Ստնելով խազինան (պետական գանձարանը) ու պահեստները՝ այնտեղ այնքան հարստություն՝ ու մթերք հայտնաբերեցին, որ բանակին երկու տարի կբավարարեր»:[89] Երևանի գրավումից հետո օսմանյան բանակը շարժվում է դեպի Թավրիզ ու սեպտեմբերի 12-ին գրավում ու հրկիզում քաղաքը:

Հասկանալի է, որ Իրանի երիտասարդ թագավորը շահ Սեֆին չէր կարող այդքան հեշտությամբ հրաժարվել եկամտաբեր երկրամասերից և շտապ կարգով կազմակերպելով 100000-նոց բանակ, 1636 թ. ծմռանը շարժվում դեպի Երևան: Երևանի բերդի պաշարումը տևում է մինչև մարտի 30-ը, երբ դրսից որևէ օգնության հույս չունենալով, թուրքական կայազորը հանձնվում է: Այս արշավանքը անհետևանք չի անցնում հատկապես Արարատյան աշխարհի վրա. «Եւ ի շարժմանէ այս երկուց ինքնակալ թագաւորաց,-գրում է Առ. Դավրիժեցին,-աւերեալ ապականեցան աշխարհք՝ արևելք և արևմուտք և մանաւանդ աշխարհն Արարատու իւր շրջակայ գաւարքն. ծասն զի երկոքին թագաւորքն իւրեանց հեծելօք և հետնելուք անդը գումարեալ կատարեցին զգործս իւրեանց, և դարձան»:[90]

Թեև 1637-1638 թթ. պատերազմական գործողությունների թատերաբեմը տեղափոխվեց Միջագետք, այնուհանդերձ առանձին զորախմբեր կրկին արշավանքներ էին կատարում Հայաստան ու կոտորածի և ավարի ենթարկում երկիրը: Նման թալանչիական մի արշավանքի մասին է հաղորդում Գր. Դարանաղցին. «Դարձեալ յայսմ ի թուին ՌՁԷ (1638),- գում է նա, - կրկին զերևան և շրջակայ գաւարքն զգերեցոյց տաթարն, այլ յորժամ թագաւորն գնաց տնպուն զօրօք դէպի Պաղտատու, հրաման արար տաթար խանին ամենայն զօրօք դէպ ի յԱրզրում, իսկ տէր Արզրումին Քէնան փաշան զօրագլուխ լիցի ամենայն զօրաց անդ հաւաքելոյն, զի միաբանութեամբ գնացին ի վերայ Երևանու գաւառացն և գերեցին առհասարակ զամենայն հայք և զտաճկահաւատսն, և զամենայն անասունք զորս գացեն յաւարի առցեն, որպէս և արարին իսկ»:[91]

Վերջապես, 1639 թ. մայիսի 17-ին Կասրե Շիրինում պատերազմող կողմերի միջև կնքվում է հաշտության պայմանագիր, որով վերջնականապես Հայաստանի բաժանումը հաստատվում է սուլթանական թուրքիայի և շահական Իրանի միջև: Արևելյան Հայաստանը, որի կազմում էին Լոռին, Շիրակը, Արարատյան նահանգը, Նախիջևանի, Ղարաբաղի և Մակվի խանությունները անցնում են Իրանին, իսկ Արևմտյան

---

[89] Տես Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16 -18-րդ դդ., էջ 69-70:
[90] Առաքել Դավրիժեցի, էջ 317:
[91] Գրիգոր Դարանաղցի, էջ 578:

Հայաստանը Կարսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Բաղեշի և Բայազետի փաշայությունները Թուրքիային:

Արշավանքների բերած հետևանքները չշրջանցեցին էջմիածնի վանական տնտեսության սահմանները: Ինչպես վկայում են ժամանակակիցները, այն նույնպես ենթարկվել է ավազակային արձակումների, բազմիցս ավերվել, իսկ հարստությունները կողոպտել են. «Ի նոյն աւուրս,- գրում է ժամանակակիցը,- և Փիլիպպոս կաթողիկոս ձեռն հարկ ի նորոգութեան քանի մի շինուածոց, զոր դեռևս չէր լրացուցեալ Մովսէսի. բայց անդրէն եհաս ի մօտոյ ի վերա Աթոռոյն այլ իմն պատահար անակնուելի աւերածոյ, և ոտնակոխ եղև էջմիածին: Քանզի շարժեցան պատերազմն մեծի ի մէջ օսմանցւոց և պարսից: ...Ինչ շինուածք կային անդ, աւերեցան և քանդեցան. վասնորոյ և Փիլիպպոս կաթողիկոս վերստին փոյթ տարեալ բազում ծախիւք սկսաւ նորոգել զնա»:[92] Պատերազմի ավարտը, որը իրոք համեմատաբար երկարատև խաղաղության մի ժամանակահատված ստեղծեց հայոց պատմության մեջ, նպաստավոր պայմաններ ստեղծեց Փիլիպպոս կաթողիկոսի վերականգնողական աշխատանքների համար: Դրան մեծապես նպաստեց նաև իրանական շահերի և տեղական որոշ կառավարիչների ներքին քաղաքականությունը, որոնք երկրի տնտեսական շահերից ելնելով, նպաստում էին տեղի ժողովրդի կառուցողական աշխատանքներին: Նման կառավարիչներից մեկի, ծագումով վրացի Խոսրով խանի մասին է հաղորդում է Զաքարիա Քանաքեռցին: «Եւ էր Խոսրովս այս այր լաւ և բարեսէր. և բարեկամ քրիստոնէից, զնայր ի վանորայս և տայր պարգևս և ընծայս վանորէիցն... Թեթևացոյց և զհարկն քրիստոնէից: Երարև մաքսն ի ճանապարհաց»[93]: Նման պարագաներում միաժամանակ ավելի բարձրացավ Աղբակեցու հեղինակությունը, որը չէր խորշում նույնիսկ կառավարական այն պաշտոնյաների դեմ պայքարելուց, որոնք փորձում էին ոտնահարել էջմիածնի իրավունքները:

Նման մի պաշտոնյայի Ղարա-ղուբաթ անունով, որը կաշառքի միջոցով ձեռք էր բերել Երևանի խանության հարկային տեսչության ատենապետի պաշտոնը ու սկսել հարստահարել ժողովրդին, ահա նրա ոտնձգությունների դեմ է ըմբոստանում Աղբակեցին կարողանալով նրան հեռացնել զբաղեցրած պաշտոնից:[94]

Եկեղեցական բարեկարգությունների ընթացքը արագացնելու և այդ նպատակի իրագործման համար մեծահարուստ հայ վաճառականության նյութական ու բարոյական աջակցությունը ստանալու, ինչպես նաև էջմիածնի համար մեծագույն սրբություն համարվող Լուսավորչի աջը ետ բերելու համար, Փիլիպպոս Աղբակեցին 1638 թ. ուղևորվում է Նոր Ջուղա, որ և կարճ ժամանակամիջոցում իր մտադրությունները:

---

[92] Տես Չամչյան Մ., հ. Գ. էջ 617:
[93] Զաքարիա Քանաքեռցի, հ. 2, էջ 39:
[94] Նույն տեղում, էջ 39-40:

Դավրիժեցու հաղորդմամբ կաթողիկոսը Լուսավորչի աջը էջմիածին տեղափոխելու թույլտվություն ստացավ, միայն այն բանից հետո, երբ «...սկսաւ շրջել և դրուցս իշխանաց թագաւորին և առատածեռն տրօք զսիրտս ամենեցուն հաճեցոյց: Եվ ապա յետ ամենեցուն լցեալ զուտ ոսկի դահեկան յսկուտեղ և ընդ սմին գրեալ թուղթ արգայի մատոյց առաջի շահսեֆի արքայի...»:[95] Հարկ է նշել, որ կաշառատվությունը որպես նվիրատվություն (փիշքաշ) անվան տակ խիստ տարածված երևույթ էր սեֆյան տերության սահմաններում: Օգտագործելով պայքարը հատկապես կաթողիկոսական աթոռի համար, իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչներն հաճախ հանդես էին գալիս պաշտոնների վաճառքով: Եվ պատահական չէ, որ Դավրիժեցու տեղեկությունը այն մասին, թե «արծաթով և կաշառօք, դաբալայիւ և հարկիւ ի պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթողիկոսության և զսուրբ Աթոռն էջմիածին» :[96]

Հաջորդ քայլը, որին ձեռնամուխ եղավ Աղբակեցին էջմիածնի իրավասությունների վերահաստատումն էր: Բանն այն է, որ 1441թ. կաթողիկոսական աթոռը կրկին էջմիածին տեղափոխվելուց հետո Սսի և Աղթամարի կաթողիկոսություններն, ինչպես նաև Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքությունները ամեն կերպ ձգտում էին էջմիածնի եկեղեցական գերիշխանությունը սահմանափակել և նույնիսկ դրանից իսպառ ազատվել: Այսպես, դեռ 1574 թ. Աղթամարի Գրիգոր կաթողիկոսը պատրվակ բռնելով, թե իր ենթակայությունից դուրս են եկել կաթողիկոսության թեմի մեջ մտնող մի շարք բնակավայրեր, որի պատճառով էլ իբր կաթողիկոսությունը ի վիճակի չէ պետական հարկը վճարել, սուլթանից ստացած հատուկ հրովարտակով վերահաստատում է իր իրավունքները այդ վայրերի նկատմամբ[97]: Նման ձևով 1655թ. Մարտիրոս կաթողիկոսը վերահաստատում է Աղթամարի իրավունքները Վանի, Բերկրիի, Խլաթի, Բաղեշի, Մուշի,և Ամիդի վիճակների վրա[98]: Հայտնի է նաև Սսի կաթողիկոսի հակաէջմիածնական գործողությունները, եթե վերջինս դուրս գալով իր իրավասության սահմաններից, եպիսկոպոսական ձեռնադրումներ էր կատարում էջմիածնի վիճակի մեջ մտնող վայրերում:[99] Իսկ Կ. Պոլսի պատրիարքությունը բանակցելով օսմանյան կառավարության հետ ու կաշառելով թուրք պաշտոնյաներն պառակտիչ աշխատանքներ էր տանում էջմիածնի նկատմամբ: Հար և նման գործողություններին վերջ տալու նպատակով, որ 1651թ. Աղբակեցին մեկնեց նախ Երուսաղեմ, ապա Կ. Պոլիս: Երուսաղեմում նա

---

[95] Առաքել Դավրիժեցի, էջ 320:
[96] Նույն տեղում, էջ 289-290:
[97] Ջամբռ, էջ 93:
[98] Նույն տեղում:
[99] Յուսիկ եպիսկոպոս, Թուղթ Սիմեոնի: Սսոյ կաթողիկոսի առ Փիլիպոս էջմիածնի կաթողիկոս, Վաղարշապատ, 1904:

հանդիպում ունեցավ Կիլիկյան թեմի առաջնորդ Ներսես կաթողիկոսի հետ, որը, ինչպես վկայում է Առ. Դավրիժեցին, չուներ իր նախորդի Սիմեոն կաթողիկոսի անհաշտությունը ընդդեմ էջմիածնի և կողմերը շուտով համաձայնության եկան մի շարք հարցերում, որով և որոշվեց երկու աթոռների իրավասության սահմանները:[100] Միաժամանակ, ինչպես տեղեկացնում է Սիմեոն Երևանցին, Ներսեսը, տեսնելով Փիլիպպոսի ուղղամիտ վարկը և անսխալ աստվածապաշտական գործունեությունը, հայտնեց նրան իր հպատակությունը և իր գործունեության մեջ էջմիածնի հրահանգավորումներով առաջնորդվելու պատրաստակամությունը:[101] Նման հաջողությունների Աղբակեցին հասավ և Կ. Պոլսում, ուր տեղի հայության կողմից նա ընդունվեց մեծ ջերմությամբ ու հավատով. «Յետ այսորիկ Փիլիպոս կաթողիկոս ճանապարհ արար և եկն ի Կոստանդինուպօլիս և անդի բազում անգամ քարոզելով ի մէջ ժողովրդեան զիջոյց զխռովութիւն պառակտելոցն. և հաստատեաց զսէր ի մէջ նոցա և կացոյց պատրիարգ զՅովհաննէս Մուղնեցի յԱրարատայ»:[102]

Փիլիպպոս Աղբակեցու հովվապետության շրջանում բավականին սրվեցին էջմիածնի ու Աղվանից հայոց կաթողիկոսության փոխհարաբերությունները:

Աղվանքի Հայոց կաթողիկոսությունը ստեղծել էր Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց անմիջապես հետո: Նրա կաթողիկոսների ձեռնադրումը և օծումը կատարվում էր մշտապես էջմիածնի կողմից, հետագայում երբ Հայաստանը վերածվելով քոչվոր նվաճողների թատերաբեմի կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Կիլիկիա Աղվանքի կաթողիկոսությունը իրեն անկախ հայտարարեց: Եվ միայն 1548 թ. շահ Թահմասպ 1-ը ընդառաջելով էջմիածնի Միքայել Սեբաստացի կաթողիկոսի ձգտումներին, հատուկ հրովարտակով Աղվանքի հայոց կաթողիկոսությունը կրկին դնում է էջմիածնի ենթակայության տակ: Հրովարտակում մասնավորապես ասվում է. «Որովհետև Չուխու Սաադի (իմա Երևանի խանություն- Հ. Թ.) Ուչքիլիսայի կաթողիկոսությունը պատկանում է Միքայել կաթողիկոսին և այդ մասին նա հրամանագրեր ու վավերագրեր ունի իր ձեռքում. ուստի թող նույն կարգով հաստատված ճանաչվի և հիշյալ օլքայի (իմա երկրամասի), ինչպես և Թուճանե Նախչևանի Գյոքլու-Դանգիզի (իմա Գեղարքունիքի), Ղափանաթի, Խոյի. Սալմաստի, Գանջայի, Բարդայի, Ախոտաբադի, Զաքամի և Լոռու հայ կրոնավորներն ու քահանաները ինչ կարգով, որ վարվել են նախկին կաթողիկոսների հետ նրա հետ նույն ձևով վարվեն և վաղեմի կարգերի ու հին օրենքների սահմաններից դուրս չգան, այլ անհրաժեշտ համարեն հարգել և պահպանել դրանք, նրա ձեռքում գտնվող հրամանագրե-

---

[100] Առաքել Դավրիժեցի, էջ 255-256:
[101] Զամբռ, էջ 22:
[102] Չամչեան Մ., հ. Գ, էջ 629:

որի ու վավերագրերի իմաստից չշեղվեն և թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն»:[103] Ստանձնելով կաթողիկոսական աթոռը Փիլիպպոս Աղբակեցին, ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, կամենալով վերականգնել Աղվանքի կաթողիկոսության հետ կրկին խաթարված փոխհարաբերությունները, ողջույնի թուղթ է հղում Աղվանքի Հովհաննես 9-րդ կաթողիկոսին, միաժամանակ հրավիրելով նրան էջմիածին, ներկա լինելու մեռոնի շնորհաբաշխության արարողության: Սակայն Հովհաննեսի մահը պատճառ է հանդիսանում պատվիրակության մեկնումին:[104] 1634 թ. Աղբակեցին «սիրախառն» ոճով մեկ այլ կոնդակ է հղում Աղվանքի կաթողիկոսությանը հորդորելով ընտրել մի այնպիսի կաթողիկոս, որը կճանաչի էջմիածնի իրավունքները, «ըստ սուրբութեան նախնեաց»:

Նույն թվականին Աղվանքի Հայոց կաթողիկոսական աթոռի ղեկավարությունը ստանձնում է Գրիգոր 4-րդ Ջալալյանը: Հենց նույն ժամանակ էլ Խաչենի և Աղվանքի ժողովուրդը մի գանգատ է գրում շահ Սեֆի 1-ին ասելով, թե «Մենք ի բնէ վիճակուած ենք լինել թեմ էջմիածնի, այժմ էլ կամենում ենք լինել թեմ էջմիածնի, մեր վերայ չիշխէ Գանձասարի կաթողիկոսն»:[105] 16 տարի անց, նույն պահանջով շահ Աբաս 2-ին են դիմում Շամախու և Շիրվանի հայությունը:[106] Շահի 1650 թ. հրովարտակում ասվում է, որ էջմիածնի Փիլիպոս կաթողիկոսն «իրաւունք ունի իւր հովանաւորութեան ներքո ընդունել գանգատաւորները»:[107] Սակայն պարսից շահերի Աղվանքի հայոց կաթողիկոսությանը տրված հրովարտակներից երևում է, որ նրանք ճանաչել ու հաստատել են նաև վերջինիս իրավունքները:[108] Այսպիսով պարզ է դառնում, որ շահական արքունիքը հայոց կաթողիկոսությունների նկատմամբ գլխավորապես պառակտիչ քաղաքավարություն է վարել: Եվ ինչպես ճիշտ նկատել է Բ. Ուլուբաբյանը, «Այդ նրանք էին, որ հայատակներին անընդ-

---

[103] ՍՊհ, Պր.1, էջ 59:

[104] Ջամբռ, էջ 18:

[105] Տես Բարխուտարեանց Մ., Պատմութիւն Ադուանից, հ. Բ, էջ 65

[106] Ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև Շիրվանի խանությունում բնակչության մեծամասնությունը հայեր էին: Այդ մասին է վկայում Եսայի Հասան-Ջալալյանի հայերեն վկայությունը: «Եւ երկիրն էր բարելի և չէն, թէ հայ ազգոք, որի Ղարաբաղու երկրէն ժողովուրդք յոլովք անցեալ էին յերկիրն աւելի քան տեղեկանսն», (Եսայի Հասան-Ջալալյան, էջ 15): Ինչ վերաբերում է տեղի մահմեդական ազգաբնակչությանը, ապա, ինչպես նկատել է Սամեդովը Ս., հիմնականում զբաղված էր անասնապահությամբ, բայց ոչ այն պատճառով, թե խանության ցածրադիր վայրերը ջրազուրկ էին: Նկատենք, որ Արևելյան Հայաստանի ցածրադիր վայրերում ևս բնությունից առատորեն չէին վարձատրված: Այստեղ ոռոգման ցանցի ստեղծման շնորհիվ, երկրագործական կուլտուրան զարգացման նշանակալի մակարդակի հասավ:

[107] ՍՊհ, պր.2, էջ 147-148:

[108] Նույն տեղում, էջ 83-84, 110:

հատ հրահում էին իրար դեմ, խափանում ամեն մի քայլ, որ կարող էր տանել դեպի միասնություն, ազգային, պետական կամ հոգևոր մարմնի ստեղծում»:[109] Փիլիպպոս Աղբակեցին ևս անտարբեր չէր հայոց ազգային-ազատագրական ձգտումներին, սակայն դրանց նկատմամբ նա շատ զգույշ էր վերաբերվում. չգրգռել ոչ իրանական և ոչ էլ թուրքական կառավարիչներին: Ահա թե ինչու Հռոմի Ինիկենտիոս 10-րդ պապին հղած իր հայտնի նամակում նա իր զարմանքն է հայտնում այն առթիվ, որ հավատքի գործերում Իրանում և Թուրքիայում հայ եկեղեցին իրեն ավելի ազատ է զգում, քան պապին ենթակա քրիստոնյա Եվրոպայում.«...զի մենք,-գրում է կաթողիկոսը, թէպէտ նեղութիւն ինչ հարկապահանջութեան կամ նախատինս կրիցեմք յայլազգեաց, աստի, սակայն ի կողմանէ հաւատոյ կամ եկեղեցւոյ սակս ոչ երբէք տեսեալ ենք հակառակութիւն ինչ կամ կրեալ վիշտ. այլ ամենայն համարձակութեամբ պաշտեմք մեր, և յայտնութեամբ կատարեմք զամենայն խորհուրդ եկեղեցւոյ և զկարգադրութիւն աղօթից փառաւորեալ յաչս տղայաբարոյ ազգաց»:[110] Դժվար չէ կռահել, որ կաթողիկոսը այս գրությամբ հետապնդել է Հայաստանի վրա եվրոպական տերությունների ուշադրության մեծացման նպատակ: Չի կարելի նաև աչքաթող անել այն հանգամանքը, որ ելնելով իրենց տերությունների տնտեսական շահերից, հատկապես Սեֆյան տերության սահմաններում իշխող տիրակալները հաճախ ընդառաջել են հայության տնտեսական ձեռնարկումներին: Օրինակ, Եսայի Հասան-Ջալալյանը դրվատում է շահ Աբաս 2-ի (1642-1666) ընդառաջող քաղաքականությունը. «Յաւուրս սորա,-գրում է պատմիչը,-շինեցան ամենայն աւերակ գեօղք և քաղաքք, և - երկիր աշխարհիս և պարսից, զի կարի քրիստոնեասէր և աշխարհաշէն էր, որոյ աղագաւ հաստատեցան յամենայն տեղիս եկեղեցիկքք, վանօրայք և անապատք. մանաւանդ սուրբ աթոռն էջմիածնի և սուրբ Գանձասարայ յԱղուանս, առ սրբազան հայրապետին Փիլիպոսու և Պետրոս կաթողիկոսին Աղուանից»:[111]

Օտար տիրակալների վերաբերմունքը դեպի հայերը մեծապես պայմանավորված էր միաժամանակ հայ հոգևոր առաջնորդների հաստատակամ, որոշ հարցերում նաև ինքնուրույն քաղաքականությամբ: Իսկ այդ առումով Փիլիպոս Աղբակեցու դերը իրոք անգնահատելի էր. «Եւ որքան եկած Փիլիպոս կաթողիկոսն ի վերայ երկրի,-գրում է Առ. Դավրիժեցին,- թէ ժամանակս վարդապետութեան իւրոյ և թէ ի ժամանակս կաթուղիկոսութեան, անդադար և անխափան արար և գործեաց նա արդիւնս ի մէջ աշխարհի, և մանաւանդ բարձրագահ աթոռն սուրբ էջմիածնի սակաւ առաւել հաստատեցաւ և փարթամեցաւ ...այլ և բազմազան կերպիւ հոգւոր և մարմնաւոր արդեամբ օգտակար լինէր

---

[109] Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դդ., էջ 382:
[110] Տես «Դիւան Հայոց պատմութեան», հ. Ժ, էջ 100:
[111] Եսայի Հասան-Ջալալյան, էջ 15:

աշխարհի. զի իբրև զբերդ ամուր էր նա շուրջ զազգին հայոց ընդդէմ մահմետականաց, որք ոչ կարէին ի հարբստահարել զհայս, վասն զի ամենայն ներհակ, ախոյեանք որք իբրև զլեառն հզօր ընդդէմ կային, ամենեքեան խորտակեալք ի միջոյ բարձան, թէ եկեղեցականք և թէ աշխարհականք, և թէ այլասեռ և այլազգի փառավոր իշխանք»:[112]

1655 թ. Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի ղեկավարումը սըտանձնում է Հակոբ Ջուղայեցին, ժամանակի գրիչները անվանում են նրան «այր սուրբ և ընտիր, որ ոչ գոյ նման իւր»:[113] Ջուղայեցին մինչև կաթողիկոս օծվելն էլ, երբ պաշտոնավարում էր Նոր Ջուղայի սբ. Նախավկայի վանքում, աչքի էր ընկնում իր ծեռներեցությամբ ու կրթվածությամբ «Բնակէր յայնժամ ի նոյն վանս Նախավկային յԱկոբ Ջուղայեցի, որ էր ժամանակին յայնմէկ երևելի ի մէջ վարդապետանց հայոց» գրում է Առ. Դավրիժեցին:[114] Շարունակելով իր ուսուցիչ Փիլիպպոս Աղբակեցու բարենորոգչական աշխատանքները, Ջուղայեցին առաջին հերթին ծեռնամուխ եղավ վանական կարգերի վերականգնման աշխատանքների իրականացմանը: Այս ուղղությամբ նրա գործունեության հիմնական նպատակը վանական նոր կաղրերի պատրաստումն էր, որոնք միաժամանակ կծառայեին հայ եկեղեցու կուլտուրլուսավորչական կարիքներին: Հենց այս գործում Ջուղայեցու ունեցած հաջողությունները նկատի ուներ ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին, երբ 1663 թ. հայտնում էր, թե «ի մերում ժամանակիս կըրկին լուսաւորիչք եղէն ամենայն հայոց, զի ի ժամանակս սոցա աչօք մերովք տեսանեմք զսուրբ էջմիածինն անթիւ վարդապետք և աբեղայք և խարազանազգեստք կրօնաւորք աւելի քան (500) »:[115] Լուսավորական աշխատանքների գլուխ կանգնած Հակոբ Ջուղայեցին ծեռնամուխ եղավ էջմիածնում վանական մատենադարանի կազմակերպման աշխատանքներին. «Ընդ որս և մատենից գումարութիւնք ի մի, ոչ սակաւ և նորից խոկացողք և ի նոյնս պարապելք յոգնակ հանճարք», - վկայում է 1668 թ. մի հիշատակարան[116]: Սակայն ամենակարևոր քայլը, որ ծեռնարկեց Ջուղայեցին, այդ բնագավառում գործի կազմակերպումն էր: Իր կաթողիկոսության հաջորդ տարում նա Իտալիա է ուղարկում իր քարտուղար Մատթեոս Ծարեցուն, տեղի հայ վաճառականության նյութական աջակցությամբ կազմակերպելու հայ տպագրության գործը: Սակայն Վենետիկում Մատթեոսին դա չի հաջողվում, ուստի տեղափոխվում է Ամստերդամ և ոմն Ավետիս Երևանցու հետ ծեռնամուխ են լինում տպագրության գործի կազմակերպմանը: Շուտով, Ավետիսի հրավերով,

---

[112] Առաքել Դավրիժեցի, էջ 263-264:
[113] Տես Բաբգէն կաթողիկոս (Կյուլեսերյան), Ցուցակ ծեռագրաց վանուց Անկիւրոյ, էջ 218:
[114] Առաքել Դավրիժեցի, էջ 260:
[115] Տես «Դիւան հայ պատմութեան», հ. Ժ, էջ 52:
[116] Մատենադարան, Ձեռագիր 981, էջ 502 ա:

ունենալով իր հետ կաթողիկոսի հատուկ նամակը, մի քանի աշակերտների հետ Ամստերդամ է մեկնում նրա եղբայր Ոսկան Երևանցին. «Իբրևեառ Ոսկան զգիր եղբօր իւրոյ, ուրախ եղև յոյժ. և տարեալ եցոյց յԱկոբայ կաթողիկոսին. և նա ևս ուրախացեալ հրամայեաց ոսկանայ գնալ անդր, և հոգ տանիլ իրանց, և ձեռնարկել ի տպագրութիւն աստուածաշնչին» :[117]

Հակոբ Ջուղայեցին, որ աղբյուրների գնահատմամբ միաժամանակ «շինօղ» «հաւաքող» էր, ձեռնամուխ եղավ նաև ինչպես կաթողիկոսարանի, այնպես էլ երկրով մեկ սփռված վանքերի ու եկեղեցիների տնտեսությունների բարեկարգման իրականացմանը: Սկզբնապես նա ոչ միայն ավարտեց էջմիածնի վանքի զանգակատան շինությունը, այլև երկրի մի շարք այլ վայրերում վերանորոգեց ու կառուցեց նոր վանքեր ու եկեղեցիներ: «Կան և այլ ևս բազում վանօրայք նորոգեալ,- գրում է Առ. Դավրիժեցին,- և բազում եկեղեցիք ի հիմանց նոր շինեալք ի քաղաքն Տփխիս և ի գաւառն Լոռւոյ, և յաշխարհն Արարատու, ի գաւառն Սիսակայ և յաշխարհն Ղափանայ ի քաղաքն Նախչուան, և ի գեղօրայս նորա. որպէս չքնաղ և մեծաշուք և վայելուչ եկեղեցին Աստապատու, և քաղաքին Նախչուանու, և ճահկայ գեղջն, և Շահկերտու գեղջ և Գաշ գեղջ, որք շինեցան յաւուրս Յակոբ կաթողիկոսի և Շոռօթ եկեղեցին, և Ագուլեաց վանքն և գերջ չորս եկեղեցիք, և Թավրիզու քաղաքի եկեղեցին. և Դարաշամբայ եկեղեցին և ծղնոյ եկեղեցին, սոքա և այլք յոլովք զորս ոչ յիշեմ»:[118]

Ջուղայեցու հայրապետության տարիներին էջմիածնը դառնում է ավատական մի խոշոր կազմակերպություն, ունենալով 23 գյուղերի սեփականատիրական իրավունքը[119]: Սկզբնաղբյուրներում պահպանված մի շարք վկայություններից ակնհայտ է դառնում, որ հիշյալ գյուղերի բնակիչները իրենց անձնական աշխատանքով ու արտադրամիջոցներով մշակում էին վանական հողատարածքները, աշխատում էին ասնասնապահության բնագավառում և վանական տնտեսության տարբեր ճյուղերում, միաժամանակ նպաստելով սեփականատիրոջ բերքի 1/19-րդի չափով ռենտա գանձելու իրավունքը:

Վանական հողատարածություններն առավել արգավանդ դարձնելու նպատակով էր, որ Ջուղայեցին ձեռնամուխ եղավ ջրաշինարարական մի շարք աշխատանքների կազմակերպմանը. «Այլ և եհան զջուրս երկուս (որ քանքան սուի) ի ներքոյ երկրի ի միջոյ արևմտից և հիւսիսոյ ի գետոյն կուսէ, զմին հանեալ ի վայր կոյս գեղջ մերոյ, որով ոռոգին արտորայք բազում», - հայտնում է Սիմեոն Երևանցին:[120]

---

[117] Առաքել Դավրիժեցի, էջ 265

[118] Նույն տեղում, էջ 267-272:

[119] Ջամբռ, էջ 19-129: Զաքարիա Քանաքեռցի, հ. 2, էջ 62: Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 242, վավ 2, 202: ՀԱԱ, ֆ. 57, ց.1. գ.7. էջ 8-10:

[120] Ջամբռ, էջ 24:

էջմիածնի վանական տնտեսությունը մեծ եկամուտներ էր ստանում նաև ավատական տնտեսությանը սպասարկող տնտեսական-արտադրական մի շարք ձեռնարկություններից (համբարանոց, ջրաղաց, հացատուն, խանութ, իջևան), որոնց թիվը, ինչպես մատնանշում է Սիմեոն Երևանցին, հատկապես շատացան Հակոբ Ջուղայեցու օրոք:[121]

Հակոբ Ջուղայեցու բարենորոգչական-շինարարական գործունեությունը առավել մեծ չափերի կհասներ, եթե նա ստիպված չլիներ երկարատև ու համառ պայքար մղել էջմիածնի իրավասությունների վերահաստատման համար: Բանն այն է, որ 17-րդ դարի 60-ական թվականներից կրկին բարձրացվեց թրքահայ թեմերը էջմիածնի ընդհանրականությունից անջատելու ձգտումը: 1661թ. Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիազար Այնթափեցին տեղում կառուցելով «էջմիածին» անունով մի եկեղեցի, ձգտում էր «...լինել գլուխ ազգին հայոց, և նստիլ առանձին կաթուղիկոս ի վերա այնոցիկ որք կային ընդ իշխանութեամբ օսմանցւոց»:[122] 1664 թ. ունենալով Սսի Խաչատուր կաթողիկոսի և մեծահարուստ հայ խոջա, թուրքական մեծ վեզիր Ահմեդ Քյոփրյուլու փաշայի սեղանավոր Աբրահամ (Ապրո) Չելեպու համաձայնությունն ու գործակցությունը, ինչպես նաև բազում կաշառքներ տալով («փութացեալ էառ ընդ իւր ոսկի բազում յոյժ»), հաստատվում է թուրքահայ համայնքի կաթողիկոսական աթոռում[123]: Հարկ է նշել, որ Այնթափցին հաջողությամբ օգտագործում էր ոչ միայն պոլսահայ խոշոր առևտրականների դժգոհությունները ընդդեմ էջմիածնի («թէ հաւազար գիր գրէի ամենեցուն յերկիր, Ակոբ կաթողիկոսին յիշութիւնն չէի կանար պատմել. Աստուած այլ իր խելաց կօրա է իրեն տվեր: Երբ տեսայ յան օրէն ի վեր գոհութիւն կու տամ անպակաս, որ զքեզ ունիմ քովն մեր,- Եղիազար Այնթափցուն է ասում Ապրո Չեզեպին»),[124] այլ նաև գավառահայության: Վերջիններիս դժգոհությունը հիմնականում պայմանավորված էր եկեղեցական այն վճարների հետ (աթոռահաս, խոստմունք, հոգեբաժին, գավազանապտուղ, ժամուց և այլն), որ պարտավոր էին նվիրակների ձեռքով տրամադրել էջմիածնին: «Ի բնէ ամենայ ազգ հայոց,-ասում է Հակոբ Ջուղայեցին,-թէ յաշխարհին Օսմանցւոց, թէ ի Ֆռանկաց, թէ Հնդկաց, թէ Մոսկովաց, և ուր և զտանի յազգէն հայոց, ամենեքեան հնազանդին էջմիածնի որ է ներքոյ տէրութեան քում, և ըստ օրինաց մերոց հարկս տան բնակչաց էջմիածնին»:[125] Հարկ է նշել, որ օգտվելով այդ մենաշնորհից, էջմիածնի նվիրակները տեղերում անօրինակ գործողություններ էին կատարում՝ կամովին բարձրացնելով հասույթների չափերը:

---

[121] Նույն տեղում, էջ 202-207:
[122] Չամչեան Մ., հ. Գ, էջ 697:
[123] Նույն տեղում, էջ 699:
[124] Տես Հովհաննիսյան Ա., Դրվագներ, գ. 2-րդ, էջ 151:
[125] Տես Զաքարիա Քանաքեռցի, հ. 2-րդ, էջ 81:

Գավառահայության բողոքները առ էջմիածին, ոչինչ չէին փոխում. «...զայն ևս գիտեմք, - կարդում ենք նման բողոքներից մեկում, թէ սոք ինչ կու հասուցանեն ի յԱթոռն, զի վասն ագահութեան իւրեանց շրջին և ոչ վասն աթոռոյն, զի զոր ինչ ժողովեն ի հանդերձս երևելիս տան...զի ի եթանոսաբար պաճուճեն զինքեանս, ոչ քրիստոնէաբար: Նոյնպէս և պալարակապ երիվարօք, իբրև զբռնաւոր և այս վասն պճղութեան իւրեանց, և կամ ի կերակուրս և ի յընմբելիս ծախեն զժողովելսն իւրեանց, զկնի հոմանեաց և գործակցաց իւրեանց պէսպէս անառակութեամբ: Եվ այս վասն որովայնի իւրեանց: Եւ մակ ի տօգանս տան այլազգեաց և այս վասն չար գործոց իւրեանց: Եւ կամ կաշառս տան բռնավորաց և այս վասն հակառակասէր բարուց իւրեանց. ահա աշխարհն տաղտկացեալ է ի սոցանէ և տունս Թորգոմայ ծանծրացեալ է գարշահոտութենէ վարուց սոցա:[126] Փաստորեն թրքահայ բոլոր շրջանները էլ կամա թե ակամա մասնակից էին Հակոբ-Եղիազար պայքարին. «յայլևայլ տեղիս ծագեցաւ շշնջիւն ի ժողովուրդս հայոց. զի ոմանք հաւան ցուցանէին զինքեանս ընդ, այն, և բազումք ևս ոչ. նաև ի Կոստանդնուպօլսի յերկուս պառակտեցան ժողովուրդք. կէսք ի կողմն էջմիածնի էին, մանաւանդ նոքա որք եկեալ էին ի քաղաք անդր յաշխարհէ Մեծին Հայոց և պարսից, որք և կոչէին արևելիք. և լէսք մանաւանդ թէ յոլովք ի կողմն եղիազարու, և սոքա էին բնակք քաղաքին ժողովեալ անդր ի սահմանաց Փոքուն Հայոց և Հոռոմստանու. և կոչէին հոռոմցիք: Սկսան ապա այս երկու գասք մաքառիլ ընդ միմեանս, և անգոսնել զիրեարս», - գրում է Մ. Չամչեանը:[127] Հարկ է նշել, որ թուրքահայ գավառների բնակչությունը անզուսպ կեղեքման էր ենթարկվում նաև արևմտահայ հոգևորականության և հատկապես Կ. Պոլսի պատրիարքության կողմից, որը պետությանը վճարելիք պարտքերի գանձումը ամբողջությամբ դրել էր հասարակ ժողովրդի վրա: Այդ մասին Առ. Դավրիժեցին հաղորդում է հետևյալը. «Եւ պատճառ պարտուցս էին, նախ սոսկ միայն կոչմամբ և եթ պատրիարք անուանեալ առաջնորդին, որ նստին թագաւորական իշխանութեամբ, և արծաթոյ ընտրութեամբ սպրդեալ ի ներքս մտանեն յանձանց, և ի սուտակապասից ընծայելք. և ոչ յԱստուծոյ: Եւ երկրորդ խաշմասէրքն և խռովարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան, և վասն նախանձու, և վասն մարմնաւոր չափուց ակնկալութեան, գումարտակ լինէին, ոմանք ի վերայ այսմ առաջնորդի, և ոմանք այնմ առաջնորդի, և սուտակասպաս արբանեաք, և զօրավիգ լինէին նոցա, ի ապա գնացեալ առ դավթարդար, և առ վեզիր, և առ թագաւորն, տային կաշառս յոլովս նոցա, և վանէին զախոյանն, և առնուին զիշխանութիւն սոսկ անուն պատրիարգութեան և առաջնորդութեան: Եւ այլ ևս բազմապատիկ կաշառս ի դրունս իշխանացն ցրուիէին աստ և անդ, և այսպէս առնելով բազմացաւ, բարդեցաւ,

---

[126] Մատենադարան, Ձեռագիր 1363, էջ 220:
[127] Չամչեան Մ., հ. Գ, էջ 100-101:

և դիզացակ պարտքն և եհաս ի ԽՌ (4000) դուռուշն»:[128] Ժամանակագիր Արիստակես վարդապետը ցավով հայտնում է, որ թե նման ճանապարհներով պատրիարքության աթոռին տիրանալը ունեցավ այն հետևանքը, որ «...թափեցաք յինչից ի գանձուց և յայլ կարևոր պիտոյից աղքատացաք»:[129]

Բարվոք չէր նաև էջմիածնի վանական տնտեսության վիճակը: Արդեն նկատելի դարձած վանական տնտեսության քայքայվածությունը մի կողմից, մյուս կողմից թուրքահայ գավառները կրկին էջմիածնի գերիշխանության տակ հաստատելու համար օսմանյան իշխանությունների պահանջած գումարի հատկացումը, Հակոբ Ջուղայեցուն դրել էին անելանելի վիճակի մեջ: 1671թ. լեհահայերի հղած իր խնդրագրում կաթողիկոսը հայտնում է.« Ահա ձեզ ամենեցուն յայտնի եղι, թէ որքան վիշտ նեղութիւն յամենայն դիմաց պատեաց զմեզ, վասն ի միջոյ բառնալոյ զանկարգութիւն եղիազարին, և զպարտ վճարելոյ, եօթն տարի է, որ ի սուրբ Աթոռոյս հեռացեալ՝ օր ըստ օրէ հաշիմք և մաշիմք ի տառապանս, և ոչ կարեմք աստի ելանել, զի մի կաշառօք, աւերեսցին զուղղեալ մեր, այլ միրով շահեցաք զնոսա»:[130] Ընդառաջելով կաթողիկոսի խնդրանքներին Ագուլիսի, Երևանի, Նոր-Ջուղայի ու Կ. Պոլսի մեծահարուստ հայ վաճառականները նրան փոխատվական կապիտալներ են տրամադրում: Ու թեև ստացած գումարներով Ջուղայեցուն հաջողվում է առժամանակ էջմիածնի ընդհանրական իրավասությունները վերահաստատել թուրքահայ թեմերի վրա, վանական տնտեսության շարունակ աճող քայքայումը ավելի ու ավելի է մեծանում, միաժամանակ բարձրանում էին պարտամուրհակների տոկոսները: Զաքարիա Ագուլեցու հաշվարկներով 1672թ. կաթողիկոսի վճարելիք պարտքը կազմում էր 8000 թուման:[131] Ջուղայեցին ստիպված էր շրջաբերական գրություններով հանգանակություն սկսել, որը դարձյալ արդյունք չտվեց: Ժողովուրդը հրաժարվում էր պարտահատույց լինել նրա փոխարեն: Իր նկատմամբ առաջացած անբավականությունից դրդված «վշտացեալ» կաթողիկոսը դիմում է աթոռակալ Մինաս վարդապետին և պարտատերերից Երևանի դրամահատարանի պետ խոջա Շմավոնին՝ փորձելով ստանալ նրանց հովանավորությունը. «Մի թէ միայն իմ փառացս էր այս ցաւս որ դուք այդպէս նայիք: Մեր այսքան վիշտս ձեզ ոչինչ է թւում: ...Դարձեալ սիրելի որդիք, մեք այսքան պարտուց միջի գալով յամենայն կողմանէ տարակուսեալ կամք. Հնդստան ընկեր չունիմք և ֆռանգստան ապրում: Մեր ճարն այդ է, որ կողմանէ որ լինի

---

[128] Առաքել Դավրիժեցի, էջ 335:
[129] Մատենադարան, Ձեռագիր 3881, էջ 47:
[130] Տե՛ս Ղևոնդ Ալիշան, Կամենից, էջ 264:
[131] Զաքարիա Ագուլեցի, էջ 66:

հնարենք լինի թէ բարերարն աստուած գթայ որ այս ցաւոյս ազատուինք»:[132]

Այնուամենայնիվ, Հակոբ Ջուղայեցու գործունեության հիմնական նպատակը հայ ազատագրական շարժումը մի նոր աստիճանի բարձրացնելն էր: Այդ ուղղությամբ նրա ծավալած գործունեությունը առաջին հերթին Եվրոպայի հետ մերձենալու նպատակ էր հետապնդում: Հենց դրանից էլ ելնելով նա սերտ կապեր է հաստատում Նախիջևանի, Երընջակի ու Ջահուկի շրջաններում հաստատված կաթոլիկ միսիոներների հետ: Հակոբ Ջուղայեցու կապերը կաթոլիկ միսիոներների հետ այնքան է սերտանում, որ նա նույնիսկ ընդառաջում է վերջիններիս ցանկությանը պատարագել ու քարոզել հայ եկեղեցիներում: Իսկ 1677թ. նրա նախաձեռնությամբ էջմիածնում գումարվում է մի գաղտնի խորհրդաժողով, որը որոշում է կաթողիկոսի գլխավորությամբ Եվրոպա ուղարկել մի պատվիրակություն Հայաստանի ազատագրման ծրագրի հարցը տեղում բարձրացնելու նպատակով: Սակայն, Հակոբ Ջուղայեցու քաղաքական այս ձեռնարկումը հաջողությամբ չավարտվեց, քանի որ 1680 թ. օգոստոսի 2-ին շուրջ մեկ տարի Կ. Պոլսում մնալուց հետո նա վախճանվում է, իսկ պատվիրակությունն էլ իրեն անկարող համարելով հետագա գործողությունները վարելու, վերադառնում է էջմիածին:[133]

Հարկ է նշել, որ լինելով ժամանակի առաջադեմ քաղաքական գործիչներից մեկը, Հակոբ Ջուղայեցին հայության ազատագրական դեգերումներում մեծ տեղ է հատկացնում նաև ռուսական պետությանը: Չի բացառվում նաև այն հանգամանքը, որ էջմիածնի խորհրդաժողովում արծարծվել է և Ռուսաստանի օգնությանը դիմելու առաջարկը: Համենայն դեպս, դրա մասին է խոսում այն իրողությունը, որ Իսրայել Օրին Մոսկվայում հայտնում է, թե էջմիածնի խորհրդաժողովը որոշել է դիմել Մոսկվայի ցարին:[134] Պակաս կարևորություն չուներ 17-րդ դարի երկրորդ կեսից Արևելքի ու Արևմուտքի միջև տարանցիկ առևտրի մենաշնորհի իրավունքը իրենց ձեռքը վերցրած, առևտրի ու հաղորդակցության ռուսական ուղու հետ հայ առևտրական կապիտալի ունեցած անմիջական կապը:[135] Հավանաբար հենց այդ կապերը նկատի ուներ կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին, երբ դիմելով ռուսական ցարին խընդրում է միջնորդել Իրանի շահի առաջ ժողովրդի վիճակը փոքր-ինչ բարվոքելու համար. «Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա,- գրում է Ջուղայեցին,- պարսից պաշտոնյաների կողմից դրվում են ահա օտարոտի հարկեր և մեզ, որ չենք կարողանում մեր չքավորության և աղքատության պատճառով հատուցանել այդ հարկերը, քշում են դեպի

---

[132] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 244, վավ. 243:
[133] Հովհաննիսյան Ա., Դրվագներ. գ. 2-րդ, էջ 202-223:
[134] Նույն տեղում:
[135] Փափազյան Վ., Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում 16-17-րդ դդ., Եր., 1990:

բանտ, չարչարում են, տանջում և վերջապես, որ մահմեդականների հետապնդած նպատակների հետինն է ու գլխավորը, հարկադրում են ընդունել իրենց դավանանքը: ...արցունքներ թափելով տիրոջ պատկերի առաջ, մոտենում են նաև Ջերդ Մեծությանը, Ռուսաց թագավորության մեջ աստծո տեղապահ կայսրիդ, բարեհաճ օգնություն խնդրելու թշվառության մեջ ճնշվածների համար և աղաչելու, որ երբ ձերդ ամենազոր մեծությունը պարսիկների մոտ դեսպաններ ուղարկելու լինի՝ նրանց հրամայե մի քանի խոսք ասել ի պաշտպանություն մեր ստացվածքի, այլև գործ դնել համապատասխան ազդեցություն»:[136]

Հակոբ Ջուղայեցու մահից հետո մոտ երկու տարի կաթողիկոսական աթոռը մնացել էր թափուր: Թեև իր կենդանության օրոք Ջուղայեցին իրեն փոխանորդ նշանակել էր Թավրիզի սբ. Թադևոս վանքի վանահայր Իսահակ Մակվեցի վարդապետին, սակայն նրա ընտրության դեմ ընդդիմացած մի քանի հոգևոր գործիչներ երկյուղելով, որ դա առաջ կբերի եղիազար Այնթափեցու դժգոհությունը, որը բնավ էլ ներկա վիճակում ծեռնտու չէր էջմիածնին, պահանջում են կաթողիկոսական աթոռին տեսնել հենց Այնթափեցուն: Նկատի էր առնվում նաև եղիազարի նյութական մեծ կարողությունները, որը և հնարավորություն կտար ծածկելու էջմիածնի պարտքերի մի մասը: 1682 թ. ստանձնելով հայ հոգևոր հովվապետի աթոռը, եղիազար Այնթափեցին իր հիմնական ուշադրությունը կենտրոնացրեց վանական քայքայված տնտեսության վերականգնմանը, մանավանդ 1679 թ. ավերիչ երկրաշարժից հետո, որի էպիկենտրոնը Արարատյան դաշտին հարող Կոտայքի շրջանն էր. «հայեցաւ աստուած բարկութեամբ յարաբաձս իւր,-հայտնում է Զաքարիա Քանաքեռցին,-յետ համբարձման երեքշաբթի աւուր յեօթներորդ ժամում յանկարծակի գոռաց որպէս ամպք, յետ գոռալոյն ահագին թնդմամբ շարժեցաւ երկիրն Արարատեան: ... Եւ եկեալ շարժս այս ի կողմնաց Գառնւոյ՝ և փլան ամենայն շինուածք և գեղեցկայարկ բնակութիւնք և վանորայք, և եկեղեցիք: Այսորիկ են աւերեալ եկեղեցիք. Աղչոց վանք, Այրի-վանք, Հավուց-թառ, Տրդակերտն, Խորվիրապն, Ջրվէզ, Ջորագեղ, Նորք, Գամրէզ, մզկիթ և մինարայք ...»:[137] Եղիազարի նախաձեռնությամբ վերականգնվում են վանքերն ու եկեղեցիները, նորոգվում էջմիածնի վանքը: «Արար և բազում շինուածս յէջմիածին և կանգնեաց անդ զայլ ևս երիս փոքր զանգակատունս, և զզանգակատուն սրբոյն Գայիանեայ. ևս և զեկեղեցիս յանապատին Ջորագեղայ»:[138] Շարունակելով իր նախորդների գործունեությունը, Այնթափեցին աշխատում էր վերացնել եկեղեցա-կան խմբավորումներն ու պառակտումները. «Զի ինքն յորմէ հետէ նստաւ կաթողիկոս՝ հանապազ զհետ

---

[136] Տես Հովհաննիսյան Ա., Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին, «Արարատ», 1915, էջ 775:
[137] Զաքարիա Քանաքեռցի, հ. 2, էջ 125
[138] Չամչեան Մ., հ.Գ, էջ 790:

էր խաղաղության հոտին. և յամի հսկէր պահել զիւրսն ի սէր միաբանութեան ընդ այլ եկեղեցիս քրիստոնէից», - տեղեկացնում է Մ. Չամչյանը:[139] Այժմ անդեն էջմիածնի ընդհանրականությունը ընդունում էին և Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունը, և Աղթամարի կաթողիկոսությունը:

Եղիազար Այնթափեցին ևս տոգորված լինելով հայ ժողովրդի ազատագրական ձգտումներով, որոշ քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ: Փորձելով համերաշխության եզրեր որոնել եվրոպական տերությունների հետ, շարունակում է իր նախորդի քաղաքականությունը կաթոլիկ միսիոներների նկատմամբ:

Եվ պատահական չէ, որ, ինչպես ճիշտ նկատել է Լեոն, վերջիններս առաջվա պես վայելում էին հայոց ընդհանրական աթոռը լիակատար վստահությունն ու համակրանքը:[140]

Ինչպես երևում է միսիոներ Գասպար դյու Պյոսի ֆրանսիական արքունիքին ուղված հաղորդումից, հայոց կաթողիկոսն իրեն թույլ է տալիս քարոզել և պատարագել հայոց եկեղեցիներում և որ հետևելով կաթողիկոսի աջակցության վրա, ինքը շատ դյուրություններ է ստեղծել ֆրանսիացի կրոնավորների համար:[141] Որոշ տեղեկություններ էլ վկայում են, որ Այնթափեցու նախաձեռնությամբ էջմիածնում գումարվել է մեկ այլ գաղտնի ժողով, որտեղ և որոշվել է կաթողիկոսի գլխավորությամբ մի նոր պատվիրակություն ուղարկել Հռոմ, սակայն պատվիրակությունը հասնելով Կարին հետ վերադարձել է, հանդիպելով թուրքական կողմի խոչընդոտներին:[142]

Եղիազար Այնթափեցու մահից մեկ տարի անց, 1691թ. Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվում Նահապետ Եղեսացին: Սիմեոն Երևանցու տեղեկացմամբ, բնավորությամբ լինելով «այր ծոռոմախոս և փառապերծ, իշխան և ահարկու» Նահապետ Եղեսացին իր գործունեության մեջ գործում էր անկախ ու ինքնագլուխ:[143] Նա չափից ավելի մեծ խստապահանջություն է հանդես բերում եկեղեցական այն գործիչների նկատմամբ, որոնք այս կամ այն չափով հեռացել էին հոգևոր գործերից և իրենց դիրքը օգտագործում անձնական կարիքների համար: Այդ մասին ուղղակի վկայություն ունի Զաքարիա Քանաքեռցին. «իսկ կաթողիկոսն Նահապետ,-գրում է պատմիչը,-կարի սաստիկ էր ի վերայ յանցաւորաց. և եթէ ոք պակասութիւն ինչ գործէր, սա կալեալ հրապարակաւ կախէր և գանալից առնէր, և տուգանէր մարմնաւոր իշխանութեամբ. հարէր զմօրուսն և զանգուրն և արկանէր ի բանտ և շղթայէր: Եւ այսպէս ահարկութեամբ կայր ի վերա ամենայն եկեղեցականաց և քա-

---

[139] Նույն տեղում, էջ 722:
[140] Լեո, Հայոց պատմություն, հ. 3-րդ. էջ 341:
[141] Նույն տեղում:
[142] Նույն տեղում, էջ 343:
[143] Չամբռ, էջ 26:

հանայից»:[144] Նահապետ եղեսացին ակտիվ պայքար ծավալեց հատկապես բարձրաստիճան այն հոգևոր գործիչների դեմ, ովքեր խախտելով եկեղեցական կանոնները՝ խուսափում էին այն վերադիր ծախսերի վճարումից, որ պետք է կատարեին՝ նրանք հոգևոր թեմի առաջնորդ կամ եպիսկոպոս ձեռնադրվելիս. «Ամենայն առաջնորդք ըստ կամաց իւրեանց առնէին,- գրում է Զաքարիա Քանաքեռցին,-և կաթողիկոսացն ոչինչ լինէ փոյթ զի ինքեանք զոր ինչ իւրեանց աշխարհին վարեալ էին, զնոյն և ասա առնէին»:[145]

Իր նախորդների համեմատ Նահապետ կաթողիկոսը ծավալեց էլ ավելի ակտիվ շինարարական գործունեություն. «իսկ կաթուղիկոսն Նահապետ կայր յիւրում գործս ի սուրբ էջմիածին և յաւելոյր շինութիւն ի սուրբ Աթոռն էջմիածին և յամենայն վանորայք», - հայտնում է պատմիչը:[146] Հատկապես նշանակալից էին նրա կատարած ջրաշինարարական աշխատանքները, որով հնարավոր դարձավ ոռոգելի դարձնել էջմիածնի վանական տնտեսության շատ հողատարածություններ: Նրա ջանքերով վերանորոգվեցին կամ նոր կառուցվեցին շատ եկեղեցիներ ու վանքեր: Օրինակ, երկրաշարժից կործանված Երևանի սբ. Անանիա եկեղեցու արևմտյան պատի վրա եղած չափածո արձանագրությունը տեղեկացնում է, որ այն վերանորոգվել է 1691թ. « հայոց ազգի լուսաւորիչ», «արի և քաջ հովվապետ», «տեառն նահապետ կաթողիկոսի» ջանքերով:[147] Նրա միջոցներով նույն Երևանում 1694թ. կառուցված է Կաթողիկե եկեղեցու ժողովրդարանը, ինչպես նաև Քանաքեռի եկեղեցին:[148] Նահապետ կաթողիկոսը մեծ ուշադրություն էր հատկացնում նաև վանքերի ու եկեղեցիների տնտեսությունների կազմակերպմանը, վանքապատկան ու վանքահպատակ բնակավայրերից կատարվող գանձումներին, այդ գանձումների շուրջ առաջացած դժգոհությունների հարթեցմանը: Թերևս այդ մասին է վկայում 1694 թ. նրա կողմից գրված հրովարտակը Աստապատ գյուղաքաղաքի բնակչությանը, որում պատասխանելով բնակչության բողոքներին, պարզաբանում է, որ Աստապատը դեռևս վաղ ժամանակներից ի վեր եղել է սբ. Ստեփանոս Նախավկայի վանքի թեմ ու թեև «նարդեանս ժամանակի չարաբարոյք ոմանք կամեցան գրկել զտէր ի շնորհաց և յօրհնութիւնից սրբոյն Ստեփանոսի նախավկայի, բայց մեզ ոչ կամեցաք զգրկիլն ձեր ի շնորհաց և յօրհնութեանց նորին»:[149]

---

[144] Զաքարիա Քանաքեռցի, հ. 2, էջ 136:
[145] Նույն տեղում, էջ 107:
[146] Նույն տեղում, էջ 136:
[147] Տես Հովհ. եպիս. Շահխաթունյաց, Ստորոգութիւն կաթողիկէ էջմիածնի, հ. 2-րդ,. էջ 144:
[148] Դաֆթաղարյան Կ., Երևանի Կաթուղիկեի և նորահայտ հուշարձանի արձանագրությունները, ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գ.1, 1938, էջ 175:
[149] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 244, վավ. 252:

Նահապետ Եղեսացու շինարարական գործունեությունը էլ ավելի մեծ չափեր կընդուներ, եթե դրան չխանգարեր շահ Սուլթան - Հուսեյնի ներքին քաղաքականությունը: Փորձելով կասեցնել պետության շարունակ աճող քայքայվածությունը, փոխանակ անհրաժեշտ տնտեսական բարենորոգումների դիմելու, Իրանի շահը, որը ռուս դեսպան Վոիլինսկու բնութագրմամբ. «...ոչ միայն չի իշխում իր հպատակներին, այլև ինքն իսկ հպատակ է իր հպատակներին»[150], 1699 թ. վարեց հարկային նոր քաղաքականություն, որն էլ ավելի ապակայունացրեց երկրի վիճակը: Նոր հարկային քաղաքականության ընդհանուր ֆոնի վրա մոռացության մատնվեցին նաև Սեֆյան նախկին տիրակալների կարգադրությամբ ընդունված հայ հոգևոր հաստատությունների ապահարկության իրավունքները: Վանական-եկեղեցական տնտեսությունը մատնվեց քայքայման: Այդ մասին ականատես Եսայի Հասան-Զալալյանը հայտնում է.« ի տասներորդ ամի թագաւորութեան իւրում (պետք է լինի «ի հինգերորդ» քանի որ շահ Սուլթան Հուսեյնը սկսել է թագավորել 1694 թ.-Հ.Թ.) Հիւսէին կոչեցեալ շահ Սուլթանն արար հրաման մարդաթիւ և աշխարհագիր առնշել ազգիս հայոց և ամենայն ազգաց ըստ իշխանութեանը իւրով եղելոց, և ելեալ հրամանատարք նորին, արք իբրև հաւատարիմք տան նորա, գրիչք և քարտուղարք, զի անսխալ և առանց թազուցանելոյ զրեսցեն զամենայն հասակ ի հնգետասամենից և ի վեր: ...Ապա յետ այսորիկ գրեցին և զվանորայս, զանապատս և զգիւղօրէից եկեղեցիսն, ընդ նմին և զեպիսկոպոսունս և զաբեղայս և զերիցունս առհասարակ ի թիւ արկին: ...ի վերայ եկեղեցական պաշտօնէից որ յառաջնումն ոչ երևէր բնաւ, տասնապատիկ առաւել քան աշխարհականաց ծանր բեռինս եդին. և զայն աշխարհագրութիւն հազիւ մինչև յերիս ամս աւար-տեցին. զի ՌԵԽԸ (1699) թուին սկսան և ի ՌԵՇԱ (1702) թուին հրաման արարին զերեք տարուայ զգլխահարկ ժողովրդեանն զոր նոր եդին)հաւաքել). նաև վասն եկեղեցականաց և կրօնաւորաց կարգեալ ընդ սմին միահողոյն առնուլ»:[151]

Հակառակ իր նախորդների, Նահապետ Եղեսացին կաթոլիկ միսիոներների նկատմամբ հրաժարվեց հանդուրժողական քաղաքականություն վարելուց, ինչը և առաջ բերեց նրանց հակազդեցությունը: Վերջիններս կարողացան օգտագործել այն ներհակությունը, որ ստեղծել էր կաթողիկոս և շնորհազրկված հոգևոր գործիչների միջև. « Եւ վասն այս գործոյ վիրաւորեցան ոմանք ի սև գլխոց մերում յաշխարհի, և գրովք միաբանեցան ընդ եպիսկոպոսացն Նախչուանայ և Գողթանայ», - հայտնում է Զաքարիա Քանաքեռցին:[152]

Կաթողիկոսի հակառակորդները կաթոլիկադավան Մատթեոս Կարբեցի վարդապետի միջոցով դիմում են Նոր-Ջուղայի հոգևոր առաջ-

---

[150] Նույն տեղում:
[151] Եսայի Հասան-Զալալյան, էջ 17-19:
[152] Զաքարիա Քանաքեռցի. հ 2-րդ, էջ 136:

նորդ Ստեփանոս եպիսկոպոսին ու տեղի խոջայությանը, որպեսզի եպիսկոկոսը ստանձնի կաթողիկոսի պաշտոնը, իսկ խոջայությունը միջնորդի շահի առաջ՝ հաստատման հրամանագիր ձեռք բերելու նպատակով: Տալով իր համաձայնությունը և ստանալով շահից համապատասխան հրովարտակ, Ստեփանոս եպիսկոպոսը պահանջում է եղեսացուց թողնել էջմիածինը ու մեկնել Տաթև: Սակայն Ստեփանոսը, որ հայտնի էր իր հակակաթոլիկ գործունեությամբ, ընդհամենը երկու ամիս մնաց կաթողիկոսական աթոռին: Այս անգամ արդեն, հենց կաթոլիկ միսիոներների ակտիվ օգնությամբ Նահապետ Եղեսացին մեծ գումար վճարելով՝ շահից կրկին իրավունք ստացավ նորից դառնալ կաթողիկոս, իսկ Ստեփանոսն ու նրա համախոհները բանտարկվեցին. «Եւ էին համախոհք նորա,-գրում է Զաքարիա Քանաքեռցին, - Պետրոս վարդապետ Վայոց-Ձորոյ, որ է աթոռական սուրբ էջմիածնի, Գրիգոր վարդապետ ի Մողնայ վանից, Յոհաննէս վարդապետ ի ծաղկունոց ծորոյ, որք ընդ նմա եղան ի բանտի ընդարձակ և ետուն տուգանս նոքա՝ և արձակեցան: Իսկ Ստեփաննոսն հանին ի թեթ բանտէն, և եդին ի մթին և գարշահոտ զնդան, և ոտին ի ծնկացն եդին ի կոճեղս որ է տօմրուղ, և ի ներքո թիկանց քար ողորկ. և ի զազրութենէ հոտոյն և յաճմանէ հերացն՝ և ի բազմանալոյ որդանցն վշտացեալ մեռաւ անդէն, և ըստ կտակաց նորին տարեալ ի Խոր-Վիրապ և թաղեցին անդ ի ՌՃԽԷ (1698) և ի յունվար Դ (4)»:[153]

Հասկանալի է, որ կաթողիկոսը պետք է վարձահատույց լիներ կաթոլիկ գործիչներին ցույց տված օգնության համար: Եվ իսկապես, նրա հետագա գործունեության մեջ նկատում ենք կարուկ շեղում դեպի Հռոմը: Եվ պատահական չէ, որ դրան ի պատասխան Կղեմես 11-րդ պապը 1701թ. սիրո և բարեկամության գիր է ուղարկում Նահապետ կաթողիկոսին և «յորդորէ զնա հաստատուն կալ ի սէր միաբանութեան»:[154] Սակայն կաթոլիկ Հռոմի հիմնական նպատակը, ինչպես ճիշտ նկատում է Աշ. Հովհաննիսյանը, հայադավան եկեղեցականների ներքին երկպառակությունները այս կամ այն չափով օգտագործելով աջակցում էին պայքարող կողմերից մերթ մեկին, մերթ մյուսին՝ հունալով հաղթողի միջոցով գլուխ բերել եկեղեցիների վերամիավորումը:[155] Նույն երևույթը նկատելի էր և արևմտահայ գավառներում: Դեպքերի ժամանակակից թուրք գործիչը այդ մասին գրում է. «Կաթոլիկ միսիոներներից սատանայական մոլուցքով պաշարված անձիք ստոր նպատակներով, շրջագայելով օսմանյան երկրի մեծ ու փոքր քաղաքները հույն և հայ հպատակների մոտ տարածում էին ֆրանսիական սնոտի ու կեղծ դավանանքը և ֆրենտի (սիֆիլիսի) ախտի նման վարակելով նրանց, տարածում էին կաթոլիկական կրոնը: Դրանով իսկ, նրանք սերմանում էին

---

[153] Նույն տեղում, էջ 137:
[154] Չամչեան Մ., հ. Գ, էջ 727:
[155] Հովհաննիսյան Ա., Դրվագներ, գ. 2-րդ, էջ 304:

նրանց մեջ խռովություն ու ապականություն, նենգություն ու ոճրագործություն»:[156] Այս ամենը լավ էին գիտակցում հայոց հայրապետները, որոնք թեև հարկադրաբար օգնության ձեռք էին մեկնում Հռոմին, այնուհանդերձ եկեղեցիների միավորման հարցում ապակողմնորոշիչ քաղաքականություն էին վարում: Հենց դա նկատի ուներ 1701թ. էջմիածին այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Տուրնֆորը, երբ գրում էր. «Էջմիածնի վանականները ցույց են տալիս Հռոմից ստացած իրենց նվերները, բայց հեգնանքով ժպտում, երբ նրանց հետ խոսում ես եկեղեցիների միավորման մասին: Իրենց վարկի և արծաթի ուժով հերձվածող հայերը գահընկեց կանեին Հռոմին ձեռք մեկնող կաթողիկոսին. նրանց ատելություն դեպի լատին եկեղեցին չի հանդուրժում որևէ հաշտություն: Հերձվածող եկեղեցականները կամենում էին բացարձակորեն իշխող լինել իրենց տանը և կաթողիկոսները ստիպված են հպատակվել նրանց, երկյուղ կրելով, թե հակառակ դեպքում ժողովուրդը կըմբոստանա իրենց դեմ»:[157]

Նման քաղաքականություն ավելի ցայտուն արտահայտվեց Ալեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսի գործունեության մեջ, որը կաթողիկոսական աթոռին նստեց 1706-1714 թթ.: Հենց կաթոլիկ միսիոներների իրավունքների սահմանափակման խնդրանքով էլ 1710 թ. Ջուղայեցին դիմեց շահ Սուլթան Հուսեյնին: Դեռ 1703 թ. գնահատելով Հակոբ Ջուղայեցու լատինամոլ քաղաքականությունը, Ալեքսանդր Ջուղայեցին մեծ դժգոհությամբ է խոսում այդ մասին. «աւաղ կենաց իմոյ,- գրում է ապագա կաթողիկոսը,-թէ քանի ներհակքը հակառակք յարեան ընդդէմ սորա, և քանի ոճիրք գործեցան ի ժամանակս սորա յարևելս, և յարևմուտս, ի հարաւ, ի հիւսիս, և ի միջերկրեացս ոչ լինի ընդ գրով արկանել և յամենայն ժամանակս կենաց իւրոյ ի կապանս ի բանտի, ի կալանս, մանաւանդ թէ ի փախուստ և ի հալածանս յերկրէ յերկիր և յաշխարհէ յաշխարհ»:[158] Կաթողիկոսը լավ է հասկանում, որ պապի գերիշխանության բացահայտ ճանաչումը կարող է առիթ տալ դաժան հալածանքի թե իրանական և թե թուրքական իշխանությունների կողմից: Կաթոլիկ միսիոներներից ոմն Վիլլոտ հենց Ալեքսանդր Ջուղայեցուն է համարում 1707-1709 թթ. Կ. Պոլսում, Թավրիզում, Շամախիում ու Գանձակում կաթոլիկ գործիչների դեմ հալածանքների նյութողը: Դիմելով կաթողիկոսին՝ նա ասում է. «Ետուր փակել վանքն Քափուչինաց, որ ի Թավրէզ քաղաքի, զի մի բարձրասցի սուրբ խաչն Քրիստոսի ի մէջ անհաւատից, և զի մի կրթիցին մանկունք տառապեալ և աղքատ ժողովրդեանն այնմիկ: Որպէս ի սկզբան կաթուղիկոսութեանդ յորժամ հասիր ի Սպահանայ Թավրէզ և երկրորդում աւուր երեկոյեան ժամուն ի մէջ եկեղեցւոյ սկսար հայոյութեամբք քարոզդ ընդդէմ

---

[156] Տես Ջուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., էջ 84:
[157] Նույն տեղում:
[158] «Ազգասէր», 1839, էջ 93:

կաթողիկէ եկեղեցւոյ Քրիստոսի»: «...Այլ և կրկին սկսար աղմկել և ի հիմանց շրջել տունս հայոց եթէ ի Թավրէզ և ի Շամախի, եթէ ի Գանջայ և ի Թիփլիզ, և այլ գաւառս և քաղաքս»:[159] 1709 թ. Կղեմես 11-րդ պապին ուղղված իր մի գրությունում Ալեքսանդր Ջուղայեցին այն միտքն է արծարծում, թե իրանական իշխողները ավելի համբերատար են դեպի հայերը, քան պապական ներկայացուցիչները:[160] Հավանաբար հենց նման զգուշավորությունն էր այն հիմնական պատճառը, որ էջմիածինը խուսափում էր բացահայտ ընթացք տալ Իսրայել Օրու ձեռնարկումներին:

18-րդ դ. սկզբներին կրկին սրվեցին էջմիածնի ու Գանձասարի փոխհարաբերությունները, որն այս անգամ պայմանավորված էր նաև Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հայ ազատագրական շարժման պարագլուխ հանդես գալու հետ: Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսը աշխատելով պահպանել էջմիածնին տրված շահական շնորհատու իրավունքներն ու տնտեսության ամբողջությունը, ամեն կերպ աշխատում էր ամրապնդել իր հավատարմությունը շահին: Նույնիսկ Իսրշայել Օրու այցելության հետ կապված ռուսական ցարին հղած իր նամակում Ջուղայեցին ակնարկ անգամ չի անում հայ ժողովրդի ազատագրական ձգտումների մասին:[161] Մինչդեռ Գանձասարի հայոց առաջնորդը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ հայկական ինքնապաշտպանական զինված ուժերի կազմակերպմանը, ամրությունների կառուցմանն ու ռուսական տերության զինական միջամտության հովանավորությունը ստանալուն: 1713 թ. Օրու գործի շարունակող Մինաս վարդապետի նամակում Եսայի կաթողիկոսը գրում է. «Եթէ իրականանար այն գործը մեր ցանկության և դիտավորության համաձայն, որպեսզի բռնակալների ձեռքերից ազատվեր մեր ժողովուրդը: Քանի որ բոլոր հայ խեղճ քրիստոնյաները, որոնց մասին մենք յաստեղ հոգում ենք, ինչպես մեծերը, այնպես և փոքրերը, ցանկանում են ազատություն, և նրանք բոլորը կազմ ու պատրաստ են և ամբողջ սրտով սպասում են այն օրվան, երբ կստանան իրենց նոր ու վաղուց ակնկալված ազատությունը»:[162] Օգտագործելով Աղվանքի կաթողիկոսության շուրջ Ներսես-Եսայի պայքարը,[163] Ջուղայեցին հասնում է

---

[159] Տե՛ս Գալեմքարյան Գ., Ով է Ջուղայեցի Հակոբ Դ. կաթողիկոսի հաջորդը, «Հանդէս ամսօրեայ», 1912, թիվ 7:
[160] Տե՛ս նույն տեղում:
[161] Տե՛ս Հովհաննիսյան Ա., Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, «Էջմիածին», 1921, հավելված թիվ 5:
[162] Տե՛ս նույն տեղում:
[163] Դեռ 1675թ. Աղվանքի Պետրոս կաթողիկոսի մահից հետո Բարդայի հայ առաջնորդ Սիմեոն եպիսկոպոսը կաշառքով, առանց Հակոբ Ջուղայեցու համաձայնության, առավ լեռան անտառապատ մի վայրում իր ձեռքով կառուցված Երից-Մանկունք վանքում օծվեց հակաթոռ կաթողիկոս: 1677թ. իր մոտ հրավիրելով Սիմեոնին և Գանձասարի առաջնորդ Երեմիա կաթողիկոսին, Ջուղա-

նրան, որ Արցախի, Շամախու շրջանների բնակչության պահանջով կրկին էջմիածնի թեմակալության մեջ է ընդգրկում այդ վայրերի համայնքները, դրանով իսկ զրկելով Գանձասարի կաթողիկոսությանը հիշյալ վայրերից եկամուտներ ստանալու հնարավորությունից: Դա միաժամանակ կթուլացներ Գանձասարի կաթողիկոսի հեղինակությունը: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Գանձասարի հայոց կաթողիկոսությունը դարձավ հայ ազգային-ազատագրական պայքարի կենտրոններից մեկը:

Ալեքսանդր Զուղայեցու մահից հետո 1715 թ. էջմիածնի կաթողիկոսական աթոռին նստում է Աստվածատուր Համադանցին: Իր գործունեության սկզբնական շրջանում նա ծավալեց բուռն շինարարական գործունեություն. «Սա զարդարեաց զեկեղեցի էջմիածնի ի ներքուստ սպիտակափայլ մաքրութեամբ և ազգի նկարուք և ոսկեզօծ զարդոք. և բերեալ ի հեռաւոր տեղաց ազնիւ քարինս մարմարիոնեայս վայելուչ և գեղեցիկ յօրինեաց զտեղի իջման միածնին. արա և զայլ նորոգութիւնս և բարեզարդութիւնս»:[164] Մեծ աշխատանքներ կատարեց Համադանցին նաև վանական հողատարածությունների ջրարբիացման գործում:[165]

Շարունակելով իր նախորդի Աղվանքի Հայոց կաթողիկոսության նկատմամբ վարած քաղաքականությունը, Համադանցին ոչ միայն սահմանափակեց Եսայի կաթողիկոսի իրավունքները վանքահպատակ վայրերից հասույթների ստացման գործում, այլև կրկին անգամ վերահաստատեց այդ համայնքների նկատմամբ էջմիածնի ունեցած իրավունքները:[166] Սակայն հետագայում, երբ Անդրկովկասում քաղաքական իրադրությունը կտրուկ սրվեց ու երբ սկսված հայ ազգային-ազատագրական շարժման գլխում կանգնեց Գանձասարի կաթողիկոսությունը, նկատելի դարձավ, որ էջմիածինը զրկված է Աղվանքի հայոց թեմի վրա ունեցած իր երբեմնի իրավունքներից: Եվ պատահական չէ, որ Համադանցին այս անգամ արդեն դիմելով տեղի հայությանը, պահանջում է, որ էջմիածնին վճարվող բոլոր հասույթները այժմ պետք է վճարվի Գանձասարի կաթողիկոսությանը:[167] Եվ ոչ միայն տնտեսական իրավունքի արտոնություններից զրկվեց էջմիածինը, այլև փաստորեն Գանձասարի կաթողիկոսությանը զիջեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոսության իրա-

---

յեցին կարողանում է հաշտեցնել ախոյաններին, սակայն պայմանով, որ Սիմեոնի ազգականներից և ոչ մեկը իրավունք չունի կաթողիկոս օծվելու: Հետագայում, երբ Աղվանքի կաթողիկոսությունը ամբողջությամբ ներգրավված էր հայ ազգային-ազատագրական շարժման գործում, կրկին հին ախոյանների թշնամանքը բորբոքվեց, այս անգամ արդեն Սիմեոնի ազգական Ներսես եպիսկոպոսի և Գանձասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի միջև: Զամբռ. էջ 82-83:

[164] Չամչեան Մ., հ. Գ. էջ 768, հմմտ., Զամբռ. էջ 27:

[165] Զամբռ. էջ 28:

[166] Նույն տեղում. էջ 83:

[167] Նույն տեղում. էջ 84:

վունքները: Այս առումով արժանահիշատակ է Գանձասարի Եսայի կաթողիկոսի 1723 թ. ռուսական պետության ղեկավարին ուղղած նամակը, որտեղ նա իրեն իրավունք է վերապահում հանդես գալ համայն հայության անունից. «Քրիստոսի նուաստ ծառայ Եսայի կաթողիկոս Աղուանից ի մասին հայոց, - ասվում է նամակում,-այլ և ընդհանուր Հայաստանեայց քրիստոնէից մեծ և փոքր ժողովրդականացս հասցէ երկրպագութիւն և օրհնութիւն հանդերձ քրիստոսաւանդ ողջունի և աստուածային սիրով»:[168] Հենց Եսայի կաթողիկոսն էր, որ վրաց Վախթանգ 6-րդ թագավորի հետ նախապատրաստում էր հայ-վրաց զինակցությունը, ճանապարհ հարթում ռուսական զորքի դեպի Անդրկովկաս սպասվող արշավանքի համար: «Պարսկաստանի ներկա խառնակ դրության մեջ,- գրում է Եսային Ռուսաստանում գտնվող Մինաս վարդապետին, - նորին Մեծությանը, չէր կարող ավելի լավ և բարեհաջող ժամանակ գտնել պարսկական վայրերը մտնելու և գրավելու համար, որովհետև վրացիներն ու հայերը այժմ միահամուռ մի միության մեջ են և բացի Նորին Կայսերական Մեծությունից ուրիշ ոչ ոքի վրա հույս չունին և միայն նրա ազատությանն են սպասում: Այժմ հայերն ունին պատրաստ մինչև 40000 զինված. մարդ, իսկ առաջիկայում, երբ նրանք կտեսնեն Նորին Կայսերական Մեծության շնորհն ու հուսադրությունը, կարող են էլի մի 40000 մարդ հանել, այս մտադրության մեջ բոլոր վրացիներն էլ միակամ են հայերի հետ և սպասում են Նորին Կայսերական Մեծության օգնության և ազատության»:[169] Ռուսական բանակի առաջխաղացումը, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ամբողջությամբ չկատարվեց: Օսմանյան Թուրքիան, որ նպատակ ուներ տեր դառնալ Անդրկովկասի իրանական տարածքներին, խոչընդոտեց Ռուսաստանի հետագա գործունեությունների իրականացմանը: Ավելին, օգտվելով Ռուսաստանի համար ստեղծված ոչ նպաստավոր քաղաքական իրադրությունից, Թուրքիան հասավ նրան, որ 1724 թ. Կ. Պոլսում կնքված ռուս-թուրքական պայմանագրով Ռուսաստանը ճանաչեց Արևելյան Հայաստանի, Վրաստանի և Իրանի հյուսիս-արևմտյան շրջանների նվաճումը Թուրքիայի կողմից:

Պատերազմը, որ մղվեց Օսմանյան կայսրության և ներքին խառնաշփոթության հետևանքով կործանման եզրին կանգնած Սեֆյան Իրանի միջև, դարձյալ ավերի մատնեց Հայաստանը: Նկարագրելով 1723 թ. Քյուփրյուլու Աբդուլահ փաշայի գլխավորությամբ թուրքական բանակի հարձակումները, դրանց հետևանքները, ժամանակի տարեգիրներից մեկը գրում է. «ՌՃՀԲ (1723) ապա հրաման եկն ի թագաւորէն եկին Վան, Ամասիայ, Ուրհայու, Չանգռու փաշայքն եւ այլ բազում փաշայս իւրեանց զօրօքն առ Ավտուլայ փաշան, որ եղու սարասքար և

---

[168] Տես Эзов Г., Сношения Петри Великого с армянским народам..., с. 360-361.
[169] Նույն տեղում, էջ 333:

գնաց ի վերայ Պարսից. և էառ զՀոյ, զԵրևան, զԹավրէզ և այլ բազում տեղիս, և որչափ գերի տարան և արիւն հեղին, և աւար առին թիւ ոչ մտանէ»:[170]

Թուրքական բանակի կողմից կատարած ավերումների, ազգաբնակչության կողոպուտի ու գերեվարման մասին սրտի ամբողջ կսկիծով է հայտնում նաև Ստեփանոս Շահումյանը. «Ուստի հրաման տայր (Ահմեդ 2-րդ սուլթանը-Հ.Թ.) իշխանի զօրուն ելանել զօրաժողով լինիլ յամենայն աշխարհաց,-գրում է նա, և երթալ հասանիլ ի վերայ պարսից, և ունիլ զքաղաքս նորա: Եւ ել նա ըստ հրամանի արքային անթիւ և անհամար զօրօք ի կողմանս Մեծին Հայոց, որ ի վիճակի պարսից: Եւ ուր ուրեք հասանէին, ի սուր սուսերի սատակէին զամենայն դիմակայս իւրեանց, և զօրքն ամենայն դառնային բազում աւարաւ ամ յամէ, մինչև չղփացան փարթամացան, և լցրին զամանայն քաղաքս և զիւղս իւրեանց ի բազմութենէ աւարաց, և գերեաց ի հայոց, և ի պարսից: Բայց ով կարէ պատմել զաղետս մարց և տղայոց ի ձեռաց անօրէն գերչացն, և նոցին հարց և եղբարց անողորմ կոտորածն»:[171] Օսմանյան բանակի առաջխաղացմանը դիմադրող միակ զինված ուժը հայկականն էր: Աֆղանների արշավանքները, Սպահանի գրավումն ու Սուլթան Հուսեյին շահի գլխատումը, օրհասական վիճակ էին ստեղծել Իրանում: Նորընծա Սեֆյան հարստության վերջին տիրակալ Թահմասպ 2-ը, որը աղբյուրների հավաստմամբ թույլ ու վախկոտ մի անձնավորություն էր, ի վիճակի չէր թուրքերին կազմակերպված դիմադրություն ցույց տալու: Վրաստանն էլ սպասելով ռուսական միաջամտությանը, չէր շտապում օգնության ձեռք մեկնել: Վրաց Վախթանգ 6-րդ թագավորին ու նրա Շահնավազ որդուն հղած նամակում Եսայի Հասան-Ջալալյանը գրում է. «Թագաւորազն և քաջատոհմ մեծի և աստուածազօր Վախտանգ թագաւորի և ահնաւազ խանի: Քրիստոսի նուաստ ծառայ Եսայի կաթողիկոսէ Աղուանից և ամենայն մեծ և փոքր ուզպաշոց և մէլիքաց և գլխաւորաց և տանուտերաց և ժողովրդոց երկրիս Ղարապաղու: ...զի ահա Երեվան, Նախջուան իւր երկրովն առան օսմանցիք: ...Վրացտան միայն քաղաքումն կայ Շօշուն, այլ ուրիշ տեղ չկայ ... ապա զայս յայտնի լիցի ձեր մեծութեանդ, զայս աղուհացիս Դ (4) շաբաթումն, մարտի մէկում, Գ (3) փաշայ շահին, Սալահ և Ալի անունով ԴՌԷճ (4700) մարդով Գանջու ներքիանց անցան եկին մեզ մօտ Վարանդայ. մէ Բ (2) օր տեսանք միտքներն ծուռ, կռիւ անելով էլ օհդէն կարել չեմք գալ, ղօնաղ արինք գեղուգեղ ճ (100)-ով, Բճ (200)-ով, Գճ (300)-ով, Դճ (400)-ով թամամ կոտորեցինք: Միայն մէկ ճՕ (150) մարդ փախան, Բճ (200) էսիր թափեցինք, հիմա մուղախաս, որ մեզ վերայ մեծ ղօշուն կու գայ, քանի օրումս. այլ մեք այս բաներս ձեր արխով և ումիտով և գրովն ենք անում դուք որ գնացեալ էք տեղտ էք, մեք մեծ յուսով ենք, և մեր աչքն գիշեր և

---

[170] Մանր ժամանակագրություններ, հ.2-րդ, էջ 486:
[171] Ստեփանոս Շահումեան, էջ 42-43:

ցերեկ ձեր գալու ճանապարհին և գրին է, ապա էլ նոր արգ գրեցինք թագաւորին, վասն որոյ ձեզանէ կու խնդրեմք, որ թէպէտ հեռացաք մեզանէ, զմեզ չհոռանաք, ահա օգնութեան և քօմակի օրն այս օր է. եթէ մինչև ի մէկ Բ (2) ամսին մեզ օգնութիւն չհասաւ այդ կողմէդ, թամամ քրիստոնեայ ազգս բնաջինջ կու լինի»:[172] Շուտով թուրքական բանակը Գիլահդար Իբրահիմ փաշայի գլխավորությամբ մտավ Վրաստան, ինչպես դիպուկ բնութագրում է Լեոն. «զրկվելով մայրաքաղաքից և գահից, թափառում էր Վրաստանի լեռներում և անդադար օգնություն խնդրում Պետրոս Մեծից»:[173] Իսկ հայկական զինված ուժը թե՛ Սյունիքում ու Արցախում և թե՛ երկրի այլ տարածքներում ազատագրական կռվի փայլուն օրինակներ տվեց:[174]

Հայ ժողովրդի համար ճակատագրական այս ժամանակաշրջանում էջմիածնի կաթողիկոսին շատ ավելի հետաքրքրում էր էջմիածնի տիրույթների պահպանության հարցը, քան իր ազատագրման համար ոտքի կանգնած ժողովրդի ազատագրական ձգտումներին նեցուկ լինելը: Նման կարծիքի տեղիք է տալիս այն իրողությունը, որ երբ Երևանի Մուհամմեդ կուլի խանի կարգադրությամբ, իբրև ժողովրդական հուզումներին մասնակից ձերբակալվում է Աստվածատուր Համադանցին, նա ամեն ջանք գործադրում է ապացուցելու, թե ինքը այդ ամենի մեջ ոչ մի մասնակցություն չունի, և որ ապստամբած հայերը իրեն չեն էլ լսի: Վճարելով 700 թուման տուգանք՝ կաթողիկոսը ազատվում է բանտից:[175]

Նույնկերպ ազատվում է կաթողիկոսը նաև Թահմասպ 2-րդի բարկությունից, երբ շահի մոտ ամբաստանվել էր կաթողիկոսը, թե իբր նա է Իրանի բոլոր չարիքների պատճառը. «Անդ ոմանք 'ի պարսից,-կարդում ենք Մ. Չամչյանի մոտ,-որք թշնամութեամբ էն ընդ հայս՝ չարխօս եղեն զնոցանէ առ շահն և ասեն. նոքա են գրգռիչ թշնամեաց: ...Եւ զի շահ Թահմազ դառնացեալ էր յանձն շարժեցաւ թափել զբարկութիւն իւր ի վրա հայոց: էր շահ Թահմազայ ժամանակազմ ոմն զազգէ հայոց Յոհաննէս անուն՝ սիրեցեալ ի նմանէ. սա աճապարեալ դիմեաց առ մեծամեծս, և միջնորդութեամբ նոցա աղերս արկեալ առաջի արքայի՝ զիջոց զբարկութիւն նորա, և զերծայց զազգն ի վտանգէ անտի: ...Էանց ապա անտի ի Նախչուան, և կոչեալ առ ինքն զկաթուղիկոսն հայոց զտէր Աստծատուր՝ էառ ի նմանէ ինչ ինչ, և արձակեաց զնա»:[176] Որ Հա-

---

[172] Տե՛ս նշվ. աշխ. , էջ 420-421:
[173] Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 139:
[174] Գրիգորյան Վ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Եր., 1960: Միրզոյան Ա., Հայ ազատագրական շարժումները Սյունիքում (1722-1730 թ.), Հայաստանի պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», Եր. 1949, հ.2-րդ:
[175] Լեո, հ.3-րդ, գիրք 2-րդ, էջ 137:
[176] Չամչեան Մ., հ. Գ, էջ 782:

մադանցուն հաջողվեց կանխել էջմիածնի նկատմամբ եկվոր տիրակալների գոյությունը և պահպանել նրա կալվածք-ների ամբողջականությունը, վկայում է Սիմեոն Երևանցու այն տեղեկությունը, ըստ որի թուրքական բանակի զորահրամանատար Ռաջար փաշան վերահաստատեց այդ տարածքների նկատմամբ էջմիածնի իրավունքները. «Ի ՌՃԼԷ (1137) թուին տաճկաց (հայոց տոմարով 1725) մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ Օսմանցւոց, և նստի յԵրևան Ռաճապ կոչեցեալ փաշայի ծանուցանէ նմա Աստուածատուր կաթողիկոսն զմաղաֆութենէ (իմա ապահարկության Հ.Թ.) Սրբոց Աթոռոյս»:[177] Իսկ 1725 և 1728 թթ. Վաղարշապատ գյուղի թուրքական հարկացուցակներից տեղեկանում ենք, որ էջմիածինը սուլթանից ստացել է ապահարկության հատուկ հրովարտակ, որտեղ մանրամասն նշված են վանքապատկան կալվածքները, շեշտված են, որ դրանք հարկման ենթակա չեն և որ էջմիածինը միանվագ որոշ գումար վճարելով որպես «բերաթի փեշքաշ», ամբողջապես ազատվում է հարկերից:[178] Աստվածատուր Համադանցուն հաջորդած Կարապետ Ուլնեցին (Զեյթունցի), որը բնութագրվում էր «այր զգօն և իմաստուն փառացի անձամբ և գովելի վարուք, և սիրելի յաչս ամենեցուն»,[180] բառերով, իր կարճատև հովվապետության տարիներին (1726-1729 թթ.) կրկին անգամ փորձեց եվրոպական տերությունների ուշադրությունը կենտրոնացնել հայ ժողովրդի ազատագրության հարցերին: Հենց այդ նպատակով էլ նա նամակ գրեց Հռոմի Բենեդեկտիոս 30-րդ պապին միաժամանակ հայտնելով նրան իր հպատակությունը:[181] Սակայն կաթողիկոսի ձգտումները արդյունք չտվեցին: Կաթոլիկ եվրոպան այս անգամ էլ խուսափեց ձեռք մեկնել հայությանը:

Աբրահամ Խոշաբեցու (1730-1734 թթ.) ու նրան փոխարինած Աբրահամ Կրետացու կաթողիկոսության տարիներին (1734-1737 թթ.) Մերձավոր ու Միջին Արևելյան քաղաքական իրադրությունը կրկին սրվեց: Թուրքիայի և Իրանի դեմ մոտ ութ տարի տևած Սյունիքի ու Արցախի ազատագրական շարժումները ճնշելուց հետո, Օսմանյան կայսրությանը հաջողվել էր իր համար ձեռնտու հաշտության պայմանագրով տեր դառնալ Իրանի անդրկովկասյան տարածքներին: Շուտով Իրանում կատարված քաղաքական փոփոխությունների հետևանքով ռազմական ասպարեզ իջած Թահմասպ-կուլի Նադիր խանի օգնությամբ Սեֆյան տիրակալը կարողացավ երկիրը մաքրել աֆղաններից ու նախապատրաստվել Թուրքիայի դեմ նոր պատերազմի: Սակայն 1731թ. արշավանքը Թահմասպ 2-ի համար ունեցավ ծանր հետևանք-

---

[177] Չամբռ, էջ 133-134, 143:

[178] Տես Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728թթ. թուրքական հարկացուցակները:

[180] Չամչեան Մ., հ. Գ. էջ 801:

[181] Նույն տեղում, էջ 803:

ներ: Իրանական բանակը պարտություն կրեց, և 1732թ. շահը ստիպված էր նոր պայմանագրով վերահաստատել իր անդրկովկասյան տիրույթների կցումը Օսմանյան կայսրությանը:[182] Դրանից անմիջապես հետո, Նադիր խանը, որն իր զորաբանակով գտնվում էր Հերաթում, շարժվեց Սպահան, գահընկեց արեց Թահմասպ 2-ին և փաստորեն դարձավ Իրանի ինքնիշխան տիրակալը: 1733 թ. աշնանը Նադիրը շարժվում է Անդրկովկաս: Մինչ այդ Մոսկովյան իշխանությունը Իրանին զիջեց մերձկասպյան տարածքները: Անդրկովկասյան ուղղության առաջին լուրջ բախումը թուրքական բանակի հետ տեղի է ունենում 1735 թ. հունիսի 8-ին Երևանին մոտակա եղվարդ ավանի շրջակայքում, որը վերջանում է թուրքական բանակի ջախջախումով: Սպանվում է և թրքական բանակի հրամանատար Աբդուլլահ փաշան: Հաղթանակը, որ բերկրանքով էր լցրել կաթողիկոս Աբրահամ Կրետացու սիրտը, իբրև ականատեսի գրում է. «Առ ժամայն ի փախուստ դարձան օսմանցիքք, և պարսիկքն զկնի կոտորելով հասուցին զմի ծայրն ի վերի կողմն Արայի լերան հանդէպ Սաղմոսավանից, և զվարի ծայրն զօրաց ի կողմն Աշտարակու. և ի միջի եղեալսն դէմ ածին Քարսահ գետոյն ի դիմաց Յոհանավանից և Կարբու և Մօղնու, որ և թուի թէ բազումք էին գահավիժեալքն ի ձօրն Քարսահ զետոյն՝ քան թէ սրով սպանեալքն: ...Եւ այսպէս մեծ կոտորած առնելով հասուցին զմի ծայրն վերի կողմումբն ի Ախուրյան գետոյ, որ է Արփաչային, և զմի ծայրն վայրի կողմամբն ստորուտով լերինն Արագածու կրկին մինչև ի նոյն գետն»:[183] Նույն թվականի աշնան սկզբներին պարսկական բանակը պաշարեց Կարսը: Թուրքական կողմը խրնդրեց թողնել պաշարումը, փոխարենը խոստանալով առանց կռվի հանձնել Երևանը. «Եւ ապա զիջան և հագարացիքն ի բարձրավզութենէ և ի գոռոզութենէ իւրեանց, և ելեալ յԱրզրումայ արք ոմանք երևելիք և եկին իբրև դեսպան առ խանն, որ դեռևս նստել կայր ի վերայ Ղարսայ. և միաբանեալ ընդ դարսեցւոց մեծամեծացն գնացին առ խանն յաղերս և յաղաչանս, զի մի աւերեցէ զերկիրն իսպառ. և խոստացան տալ զերևան»:[184] Նադիրը սիրով ընդունում է թուրքերի առաջարկը և թողնելով Կարսը՝ շարունակում անդրկովկասյան տիրույթների ետնվածումը: Նադիրի հաջողությունները պայմանավորված էին նաև այն հանգամանքով, որ Արևելյան Հայաստանում թուրքերի բռնություններից ու կեղեքումներից նեղված ժողովուրդը թե՛ տնտեսական և թե՛ զինական միջամտությամբ օգնում էր իրանական զորքերին: Մի շարք փաստեր վկայում են, որ Նադիրի զորաբանակում կռվում էին նաև Գեղարքունիքի մելիք Շահնազարյաններից, Սյունիքի ու Արցախի մելիքական տների ներկայացուցիչները:[185] Նադիրի հետ

---

[182] Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., էջ 102-103:
[183] Աբրահամ Կրետացի, էջ 18-19:
[184] Նույն տեղում, էջ 23:
[185] Տես Լեո, հ.3, գիրք 2-րդ, էջ 223-226:

անձնական սերտ կապեր է հաստատել նաև կաթողիկոս Աբրահամ Կրետացին: Ինչպես վկայում են փաստերը, կաթողիկոսը 1736 թ. հրավիրված էր Մուղանի դաշտում մասնակցելու Նադիրի թագադրմանը ոչ միայն որպես դիտորդի, այլև սուրը կապելու գլխավոր արարողության կատարողի. «և կոչեալ անդ ի Մուղան զԱբրահամ կաթուղիկոս հայոց ետ նմա օրհնել զսուր իւր, և ածել զմիջով իւրով»:[186] Ինքնին հասկանալի է, որ Կրետացին Իրանի վեհապետի հետ ունեցած իր անձնական կապերը պետք է օգտագործեր թե հայ ժողովրդի դրության բարելավման և թե էջմիածնի տնտեսության քայքայվածությունը կասեցնելուն: Հենց կաթողիկոսի ջանքերով էլ ընդհատվում է Նադիր շահի այն կարգադրությունը, ըստ որի շատ հայ ընտանիքներ Թիֆլիսից ու Երեվանից պետք է գաղթեցվեին Իրան:[187] Տնտեսության վերականգման նպատակով էր, որ Կրետացին կարողանում է միջնորդել շահի առաջ Թուրքիայի և Իրանի միջև հաղորդակցության ու առևտրի նորմալ պայմաններ ապահովելու. «Եւ ըստ պատուիրելոյ մեծի քանին ես և Երևանայ խանն,- գրում է Կրետացին,- գրեցաք ի Ղարս, յԱրզրում, և յայլ տեղիս, ես իմ ազգին, և նա յատուկ Ղարսայ փաշային, եթէ հրաման եղև մեզ ի մեծ խանէն ծանուցեալ յերկրին, և արզ առնել մեծի տերութեան ձերում. որովհետև խաղաղութիւն և հաշտութիւն եղև, յայսմհետէ անկասկած գայցեն սևտակարքն և ամենայն ոք անկասկած և աներկիւղ վաճառեսցեն, և գնեսցեն, զոր ինչ կամեսցին և արեսցին: Եւ այսպէս կոնդակս ծանուցի ի Ղարս, յԱրզրում, ի Թոխաթ, ի Պայազիտ, ի Վան և ի Բաղէշ»:[188] Սակայն դա շատ չնչին հատուցում էր այն ամենի, ինչ կատարվեց հայոց երկրում Նադիր շահի արշավաքների ժամանակ: Նրա հրոսակախմբերը տարածվեցին Արևմտյան Հայաստանով մեկ, ուր սոսկալի ավերածություններ կատարեցին, իսկ բնակչության մի մասին էլ տեղահանելով գաղթեցին Իրան: Ինչպես վկայում է նույն Կրետացին. «Այլև ասպատակս արձակեաց երկուց կողմանց, մինչ գնայր ի Ղարս յաջ և յահեակ, զմի կողմն ի վերայ Պայազիտու կրկին և զմիւս կողմն ի վերս Կաղզուանայ և ինքն ի միջի: Յորում գնացեալ քանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, գերեցին զմարդիկք և զանասունս և բազում աւարաւ դարձան ի բուն բանակն ի Ղարս: Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ հասին մերձ Թեոդուպոլսոյ: Եւ գերեցին զնարիմանու նահանգն զՁաւախէթու, զՁլտրու և զՂայի ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ; Եւ քշեցին զայր և զկին, զծէր և զտղայ և տարան ի խորասան թուով ՁՌ (6000), որպէս և լսեմք»:[189]

Նադիր շահի բռնություններն էլ ավելի մեծ չափերի հասան Ղազար Ջահկեցու կաթողիկոսության տարիներին (1738-1751թթ.): Ժա-

---

[186] Ջամչյան Մ., հ. Գ, էջ 815:
[187] Ջամբռ, էջ 31: Լեո, հ.3-րդ, գ.2-րդ, էջ 226:
[188] Աբրահամ Կրետացի, էջ 27:
[189] Նույն տեղում, էջ 67:

մանակի գրիչներից մեկը անհուն ցավով է նկարագրում այն բազում տառապանքները, որ կրեց հայությունը Նադիրի դաժան քաղաքականության հետևանքով. «Վասն որոյ այս դառնաշունչ ժամանակին յոյժ նուազեցաւ զամենայն երկիրս,-գրում է նա,-գրեթէ զօղուլ ուշաղն իւրեանց ձեռօքն վաճառէին, ի գնօղ ոչ գոյր թէ գնեսցեն, այլ կին զորդիս և դուստրս թողէին փախչէին այլ երկիր ...ժողովեաց հայոց ազգս յամենայն տեղաց բազում քրիստոնեայք տանով և օղուլ ուշաղով անհամար և ուղարկեաց Խորասան, և անդրէ ի յերկիրն Մաշատ: Եւ այս վերստին կսկիծ եղեւ մինչև անդ հասանել և շատ կոտորուեցան ճանապարհին, արք, կանայք, տղայք և աղջկունք: Ապա զայս ասեմք լալով, որ չութ կապեաց զամէն յերկրի յոյժ լալով, զի ոչ կարէին տալ զի ծանր էր բեռն, ցանգ ունելով ոչ կարէին տալով ագեցուցանել զնա, զինչ որ ցանէին զամենն իսպառ կալին տանէին և տիրոջն ոչ մնայր հատ մի, յետ նորա ապրանքն ոչ բաւականեսցի տալով, այլ որդիս և դուստրս վաճառէին և դրամ տային մնացելոյն բեռին: Եւ վասն այս պատճառի ցրուցան եղեալ փախեան յօտար յերկիր»:[190] Իսկ Հովհաննես Սեբաստացին անդրադառնալով 1743-1745 թթ. թուրք-իրանական նոր բախումներին՝ գրում է. «... էր սով սաստիկ և պատերազմ այլազգեաց ընդ պարսից իբրև զհուր բորբոքեալ, վասն որոյ և բազմութիւնք դաժանագոյն զօրացն երթ և եկս արարեալ, գրեթէ լափէին, կիզէին և խարէին զգիւղ և զքաղաք և նեղեալ տառապեցուցանէին զազգս մեր հարկապահանջութեամբ»:[191] Նադիր շահի բռնություններից չխուսափեց և Ղազար Ջահկեցին: Ջանազան առիթներով շահը մեղադրում էր կաթողիկոսին, իսկ մեկ անգամ էլ նույնիսկ ծեծի ենթարկելով հեռացրեց կաթողիկոսությունից: Եվ ամեն անգամ շորթելով կաթողիկոսից հսկայական գումար, ազատ էր արձակում. «Էառ ապա ի նմանէ Թահմազ հազար հինգ հարիւր թուման զոր ունէր նա: Եւ ետ դնել ի տեղի նորա անուամբ կաթողիկոսի ընդ խնդրոյ Ֆէթալի նախարարին զՅովհաննէս վարդապետ ագուլեցի, որ կալաւ զաթոռն տեղապահութեամբ ամիսս իբր 5: Իսկ Ղազար բազում ինչ ծախեալ ի դրունս մեծամեծաց ձեռամբ եղբօր իւրոյ տնէ Յովսեփայ վարեաց զնա յէջմիածնայ, և ինքնին նստաւ վերստին յաթոռ կաթողիկոսութեան»:[192]

Նադիր շահի մահից հետո (1747թ.) հաստատված անիշխանության պայմաններում առօրյական դարձավ հարստահարումների ու թալանի, հալածանքների ու դաժանությունների պրակտիկան: Ահա թե ինչ է ասում այդ մասին Ղազար Ջահկեցի կաթողիկոսը իր հիշատակարանում. «Չարաչար և զանազան տառապանօք ջանիւ, կեղեքմամբ և զանազան տառապանօք անբարշտացան ընդ ազգս հայոց, թարց ամբաստանութեան և վկայի ըմբռնէր զանմեղս և կապէր զարդարս

---

[190] «Արարատ», 1988, էջ 33:
[191] Հովհաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, էջ 87:
[192] Չամչեան Մ., հ. Գ, էջ 822:

պրկեցուցանելով ի վերայ յերկրի, ակցի և բռտնցի: Խոշոր և ստուար փայտօք կբռէին և հարկահանէին, զոմանս զընկունս ոտիցն հանէին և զոմանս մատունս և զթաթս ի գարշապարաց թափէին և զայնպիսի անողորմ և դառն ջանիւ տանջանօք կիսամահ արարեալ եղեալ ի բանդի, առնէին զինչս և վաճառէին զտունս: ...Զի ոչ գոյ քննութիւն ի մէջ նոցին: Եւ զայսպիսի գործս անօրէնութեան որով գործեցին ի յորբս և յայրիս, ի վանս և ի յանապատս, ի կարգաւորս և ի ճգնակիր կրօնաւորս Աստուծոյ»:[193] Անսահմանափակ իրավունքներով օժտված և չափ ու սահման չճանաչող խանությունների կառավարիչների կատարած կամայականություններն ու բռնություններն աներևակայելի չափերի են հասնում: «Քանի բարձաւ միապետական թագաւորութիւն սոցա,- գրում է Սիմեոն Երևանցին,-և իւրաքանչիւր քաղաքի խանք եղեն ինքնագլուխք և աներկիւղք յամմեքէ, որք ևս սկսան ի վերայ միմեանց յառնել և յերկիր իւրեանց քակել և աւերել որք և գրեթէ ամայացուցանեն զբոլոր երկիրս պարսից և հայոց, մինչ երկիր և յայլ նահանգ որում այլ խան իշխէ, ոչ կարէ ոք գնալ, և կամ կարի դժուարաւ»:[194]

Ղազար Ջահկեցու մահից հետո համեմատաբար կարճ ժամանակահատվածներով էջմիածնի վեհապետությունը ստանձնում են Մինաս Ակնեցին (1751-1753 թթ.), Ալեքսանդր Կոստանդնուպոլիսեցին (1754-1755 թթ.) և Սսհակ Կարնեցին (1756-1759 թթ.): Իրենց կարճատև հովվապետության տարիներին համարյա թե ոչինչ չկարողացան ձեռնարկել նրանք, մանավանդ, որ երկիրը ներքաշված էր ներքին երկպառակչական կռիվների մեջ: Նրանցից նույնիսկ Սահակը չփորձեց գալ էջմիածին, քանի որ, ինչպես տեղեկացնում է աթոռակալ Հակոբ Շամախեցի վարդապետը Սահակին ուղղված իր նամակներից մեկում. «Մի եկեսցես այսր. զի իշխանք տեղւոյս որք պէկք կոչին, առին և առնուն բազում ինչ յաթոռոյ, և նեղեն զմեզ. և եթե եկեսես դու այժմ, առաւել ևս նեղեսցեն զմեզ և զքեզ»:[195] Դա մի այնպիսի անիշխանության ժամանակաշրջան էր, որ նույնիսկ կաթողիկոսի ընտրությունը կատարվում էր ոչ թե էջմիածնում, այլ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանում: Եվ հենց պատրիարքարանում էլ 1759 թ. կաթողիկոս է ընտրվում Հակոբ Շամախեցին:

Լինելով ժամանակի առաջադեմ գերծիչներից մեկը՝ Հակոբ Շամախեցին իր ամբողջ գործունեությունը նվիրեց հայ ժողովրդի ազատագրության գաղափարի իրականացմանը: Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը մի կողմից, մյուս կողմից կովկասյան լեռնականների ավերիչ ասպատակությունների առաջն առնելը, նորից հրամայական դարձրին հայ-վրացական դաշինքի անհրաժեշտությունը: 1760 թ. Ելիզավետա կայսրուհուն հղած նամակում Հակոբ Շամախեցին խընդ-

---

[193] Մատենադարան, Ձեռագիր 2121, էջ 367ա:
[194] Ջամբռ, էջ 57:
[195] Տես Ջամչեան Մ., հ.Գ, էջ 865:

ռում է ամեն կերպ ընդառաջել օգնություն հայցելու նպատակով Ռուսաստան մեկնած վրաց Թեյմուրազ 2-րդ թագավորին. «Զի յայտնի է մեծագոյն աստուածասիրութեանդ ներում, - գրում է նա, - որ ողորմելի և խղճալի ազգս մեր հայոց, նոյնպէս և ազգն վրաց, յամաց բազմաց հետէ անտի մինչև ցայժմ կան անկեալք ի ներքոյ ծառայութեան այլազգեաց վասն մեղաց մերոց բազմաց, որ բազմօք տառապակրութեամբ և պէս պէս նեղսակրութեամբ անցուցեալք եմք և անցուցանեմք զկեանս մեր: Այսպիսիք և այլք աւելիք չար դիպուածք, որ պատահեցան և պատահին ևս մեզ՝ հայոց և վրաց, ոչ թէ միայն յայլոց մեր երկրականացս այլազգեաց պատահեցան և պատահին մեզ, այլ մանաւանդ ի կովկասաբնակ լէզքեացն մարդագողաց և շաղխակերուց և վայրենաբարոյից: Եւ մի անտես և անյոյս առնիցէք զմեծահաւատ արքայս այդ, այլ որպէս հայացք զձեր օրհնեալ և բարգաւաճեալ ազգի, խնդրեմք նոյնպէս զազգս մեր հոգայք զձեր օրհնեալ և բարգաւաճեալ ազգդ, խնդրեմք նունպես զազգս մեր ողորմելի և զազգն վրաց հոգալ»:[196] Շամախեցու գործունեությամբ, ինչպես նկատում է Լեոն, հայոց հարցի պատմության մեջ սկսվում է էջմիածնական շրջանը, որը ի տարբերություն գանձասարյան շրջանի, հայ ազատագրությունը չէր հիմնում հայերի ապստամբության վրա, այլ հասկանում էր հայոց հարցն այն մտքով, թե հայերին պիտի ազատի մի որևէ ուժեղ պետություն, ամենից շուտ՝ Ռուսիան:[197]

Հենց Ռուսաստանի օգնության հետ էր կապում հայ ժողովրդի ազատագրական ձգտումները 1763 թ. կաթողիկոս ընտրված Սիմեոն Երևանցին: Ռուսաստանում տարածված հայկական համայքները միավորելու և դրանք էջմիածնի իրավասության տակ դնելու նպատակով, կայսրուհի Եկատերինա 2-րդին հղած կոնդակում Սիմեոն Երևանցին միաժամանակ արծարծում էր Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրման հարցը: Ինչպես երևում է կայսրուհու 1768 թ. գրած պատասխանից, նա՝ ոչ միայն ընդառաջում է կաթողիկոսի խնդրանքին, այլև իր հովանավորության տակ վերցնում թե՛ հայոց կաթողիկոսին և թե՛ ողջ հայ ազգը:[198] Սիմեոն Երևանցու կարգադրությամբ 1774 թ. Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդությունը ըստանձնում է Հովսեփ եպիսկոպոս Արղությանը, որը աշակերտելով կաթողիկոսի մոտ, դարձել էր նրա ջերմ գաղափարակիցը:

Որքան էլ, որ Երևանցին տոգորված էր հայ ժողովրդի ազատագրական գաղափարներով, իր քաղաքական գործունեության մեջ նա շատ զգույշ էր ու շրջահայաց, դիտելով, որ յուրաքանչյուր անխոհեմ քայլ կարող է ծանր հետևանքներ ունենալ: Եվ պատահական չէ, որ հենց նա ուղերձ է հղում վրաց Հերակլ թագավորին՝ պահանջելով հեռացնել Վրաստանից Հովսեփ Էմինին, թեև կիսում էր վերջինիս հայացք-

---

[196] Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, հ.Գ, էջ 121:
[197] Լեո, հ.3-րդ, գիրք 2-րդ, էջ 278-279:
[198] Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, էջ 128-130:

ները: Բանն այն է, որ էմինի ազդեցությամբ Հերակլ 2-րդը հուսադրական մի նամակ էր հղել Մշո սբ. Կարապետ վանքի վանահայր Հովնանին, ուր հայ-վրացական համատեղ ապստամբության կոչ էր արվում: Իսկ նամակատար մահտեսի Գրիգորը Երևանում ձերբակալվում է, իսկ նամակը հայտնաբերվում: Թագավորի հենց այդ անխոհեմ քայլը նկատի ուներ Սիմեոն Երևանցին, երբ գրում էր. «Յօհան որքան մարդ է, որ դու նորա գիր գրիցես վասն այդպիսւոյ բանի և գրատարն ևս այդպէս յիմար, որ ամենեցուն ցույց տայցէ պարծելով: Խնդրեմ զի լաւապէս մտածեալ որոճայցես, և մանաւանդ զդա ևս զգաստացուցես զի զգիրն և զմարդիկս իւր յինքն ժողովեսցէ ու խոհեմութեամբ շարժիցէ, զի երկիրս այլազգոյ ձեռաց է և մեք ի ձեռս սոցա կամք»:[199] Հենց նույն պատճառաբանությամբ էլ Սիմեոն Երևանցին չի ընդառաջում Շահամիր Շահամիրյանի և Մովսես Բաղրամյանի ազատագրական ծրագրերին: Այստեղ չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ եկեղեցին պետությունից անջատելու Մադրասի խմբակի ծրագրային կետը խիստ դժգոհությամբ պետք է ընդունվեր հովվապետի կողմից, որը իր հերթին կբերեր եկեղեցու իրավունքների կրճատում:

Իսկ մինչ այդ, երկրում կրկին սրվում է քաղաքական իրադրությունը այն աստիճան, որից այնքան խուսափում էր Սիմեոն Երևանցին: Երևանի խանի վրաց թագավորին վճարելիք հարկի դադարեցումը[200] առիթ հանդիսացավ Հերակլ 2-րդի զորքերի ներխուժմանը խանության տարածք: Թե ինչ հետևանքներ ունեցավ այդ ներխուժումը, վկայում է հետևյալ տեղեկությունը. «Եւ ետ երկուց աւուրց ինքն արքայն հանդերձ Բ (2) որդովքն և անթիւ զօրօք եկն ի սահմանս Երևանու. և սկսաւ զՂազախու տաճիկսն և զլեզկիս և զայլ բարբարոսս, որք ծարաւք էին արեան քրիստոնէից՝ յառաջագոյն ասպատակ սփռել առի քակել և աւերել, թալանել և կողոպտել և վերջապէս հրդեհել զգիւղորայսն նախ քան զիւր հասանելն»:[201] Ձուր է խնդրում Սիմեոն Երևանցին Հերակլին հաշտվել խանի հետ, չամայացնել երկիրը: «Այլ խաժամուժն ամբոխից զօրացն Հերակլայ սփռեալ ընդ աշխարհին աւար հարկանէր և ապականէր զգեօղս և զգաւառս Արարատայ, և ուտելով զբերս այգեաց և սեղխենեաց՝ ապականել լինէին և ինքեանք ախտիւք թանջից, մինչև կարի իսկ պակասիլ նոցա», - ցավով հայտնում է ժամանակի հիշատակագիրներից մեկը:[202] Միաժամանակ Հերակլի կարգադրությամբ Վրաստան են

---

[199] Տե՛ս Иосив Эшин, Ер., 1945, стр. 159.

[200] Նախիջևանի Մահմադ խանին պարտության մատնելու նպատակով Երևանի խանը օգնություն է խնդրում Հերակլից: Վերջինիս 1750 թ. վրացական զորքով շտապում է օգնության և պարտության մատնում Մահմադ խանին: Երևանի Փիր Մուհամմադ խանը իր հպատակությունը հայտնելով վրաց թագավորին միաժամանակ պարտավորվում է տարին որոշակի գումար հարկ վճարել:

[201] Տե՛ս «Արարատ», 1901, թիվ 3, էջ 185:

[202] Տե՛ս Կռունկ Հայոց աշխարհի, 1862, թիվ 4, էջ 279:

քշվում հազարավոր հայեր: Ժամանակակիցներից մեկի հավաստմամբ, գաղթեցված բնակչության թիվը հասնում էր 30000-ի. «ի սոյն թւին յուլիսի 6-ին արքան վրաց Հերակլ եկն ի վերայ Երեվանայ քաղաքին քառասուն հազար զօրօք և շատ աւերութիւն արար երկիրն բոլոր քանդեաց և այրեաց, վերջ հարիւր հիսուն գեօղ քշեալ տարաւ, երեսուն հազար ոգիս և հարիւր հազար տաւարս համարով...»:[203] Թեև ասպատակություններից զերծ մնաց էջմիածնի վանքն ու նրա հողատարածությունները, այնուհանդերձ կաթողիկոսը ևս ստիպված էր մի պատկառելի գումար վճարել Հերակլին:[204]

Սիմեոն Երևանցու կարևոր ձեռնարկումներից մեկը էջմիածնի կաթողիկոսական աթոռի ընդհանրական իրավունքների կրկին անգամ վերահաստատումն էր: Այն պայմանավորված էր հիմականում Աղվանքի հայոց կաթողիկոսության շուրջ ծագած վեճերին: Բանն այն է, որ 1763թ. 120-ամյա կաթողիկոս Ներսեսը իր եղբորորդի Իսրայելին ձեռնադրել էր եպիսկոպոս, որը Ներսեսի մահից հետո հռչակվեց Աղվանքի կաթողիկոս: Սակայն, նույն 1763 թ. Գանձասարի վանական միաբանությունը միջնորդում է էջմիածնի Սիմեոն կաթողիկոսին ճանաչել Աղվանքի հայոց կաթողիկոսության իրավունքներում Հովհաննես վարդապետ Հասան-Ջալալյանին, միաժամանակ փաստարկելով 1677թ. էջմիածնի ժողովի որոշումը, ըստ որի Ներսեսի ազգականներից ոչ ոք իրավունք չուներ օծվելու Աղվանքի հայոց կաթողիկոս: Սիմեոն Երևանցին մերժում է միջնորդությունը, պատճառաբանելով, թե Իսրայելը արդեն օծված է և մնում է, որ նա տեղափոխվի Ելից-Մանկուցից Գանձասար: Գանձասարի միաբանությունը վերադառնում է և առանց էջմիածնի հավանության, տեղում կաթողիկոս օծում Հովհաննես վարդապետին: Կրկին բորբոքվեց Իսրայել-Հովհաննես պայքարը, որը կարող էր վերածել ազգամիջյան ընդհարումների: Թեև Սիմեոն Երևանցին ձգտում էր թուլացնել Հասան-Ջալալյանների ազդեցությունը, ստիպված էր ի վերջո ընդառաջել Գանձասարի միաբանության պահանջներին, հակառակ դեպքում կկորցներ Աղվանքի հայոց կաթողիկոսության նկատմամբ էջմիածնի ընդհանրական իրավունքները:

Սիմեոն Երևանցու մեծագույն ձգտումներից մեկն էլ էջմիածինը հայ մշակույթի կենտրոն դարձնելն էր: Հենց նրա ջանքերով էլ 1771թ. Հայաստանում առաջին անգամ բացվում է տպարան, իսկ 1776 թ. նույն տեղում հիմնվում թղթի արտադրման ձեռնարկություն:[205] Նրա գործուն միջամտությամբ կարգի բերվեցին հայ եկեղեցական տոնակատարու-

---

[203] Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 494:

[204] Хубов Е. Описание достопимитных происшествий в Армений с 1779-1809 гг. СПб, 1881 с. 3-4.

[205] Այդ մասին մանրամասն տես Շահնազարյան Շ., Նոր նյութեր Հայաստանի առաջին տպարանի պատմության վերաբերյալ, ՊԲՀ, Եր., 1963, թիվ 1:

թյունները, վերանորոգվեցին էջմիածնի և երկրի մի շարք այլ վանքեր ու եկեղեցիներ:

Սակայն ամենամեծ ձեռնարկումը, որ կազմակերպեց Երևանցին, էջմիածնի վանական տնտեսության գործերի կարգավորումն էր: Խոսելով էջմիածնի վանքի տնտեսական վիճակի մասին՝ Երևանցին նշում է, թե եթե դատելով լինենք նրա մեծահոչակ անունով, ապա նա իշխում է շատերի վ րա, իսկ իրականում ոչ ոքի, խոսքով նա ամեն բարիքի տեր է, իսկ իրականում կարոտ է ամեն ինչի, գտնվում է խստասիրտ և գազանաբարո, հափշտակող անիշխան տերերի իշխանության ներքո, իսկ ինքը անզոր է ու անզեն, նա ենթակա էր իր ազգակիցների ու օտարների բազմապիսի դաժան շորթման, իսկ ինքը կամավոր ու երկյուղածությամբ մուրացող է և դրանից հետո,- շարունակում է Երևանցին,- փորձված մարդկանց մնում է դատել, թե որքան անհրաժեշտ է այդ տանը, նրա տիրոջը, աշխատակիցներին ու հարազատ ընտանիքին ապահովել անցյալի ցնցումներով ու օրինակներով, ուսումնասիրել պաշտպանության միջոցներն ու եղանակները:[206] Նա կարողացավ պետականորեն ապահովել վանքի և կալվածքների ամբողջականությունը, ընդլայնել դրանց չափերը, կատարել ջրոռոգման հասկայական աշխատանքներ, կարգավորել վանքապատկան ու վանքահպատակ բնակչությունից վանական հասույթների նորմալ ստացումը և տնտեսական բնույթի բազում այլ աշխատանքներ:

Նախապատրաստվելով դեպի Անդրկովկաս արշավանքի՝ Եկատերինա 2-րդի հանձնարարությամբ Պետերբուրգում 1780 թ. հունվարին հրավիրում է մի խորհրդակցություն, որտեղ քննարկվում է և Հայաստանին վերաբերող մի շարք հարցեր: Խորհրդակցությունը հայկական կողմից մասնակցած Հովսեփ Արղությանը գրում է. «Թուին 1780 յունվարի մուտն Իւան Պետրովիչ Գօրիչն եկն առ մեզ և յայտնեաց զգնալն իւրեանց ի վերայ պարսից առ ի տիրել զծովեզերայ տեղիսն, հարցումն արար վասն պարսից երկրայն և որքան հեռաւորութեանց քաղաքացն ի միմեանց և կարողութեանց նոցին և որքանութիւն զօրացն հայոց և տաճկաց, սկսեալ ի Դարբանդու և ի Գիլանու մինչև ցԹարվէզ և ի յԵրևան, և անտի մինչև ցՂարաբաղ և ի Շրուան»:[207]

1780 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրված Ղուկաս Կարնեցին սկսեց ամեն կերպ օժանդակել Հովսեփ Արղությանի ու Հովհաննես Լազարյանի գործունեությանը:

Դեպի Հայաստան նախատեսված արշավանքի սկզբին, 1784 թ. սկզբին Ղուկաս Կարնեցին արշավանքի նախաձեռնողներից իշխան Պոտյոմկինին հղած նամակում մասնավորապես գրում է. «...Արդ՝ ըստ սոյնոյ բնութենական կանոնի և աստուածանոյ պատուիրի, պարտական

---

[206] Զամբռ, էջ 2:

[207] Տես «Յովսէփի կաթուղիկոսեի յիշատակարանը, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1863, էջ 510-513:

համարիմք զմեզ շնորհակալ լինելով զազնութենէ քումմէ, քանզի ահա որչափ ժամանակ է, որ հաստատեալ ես ի քեզ զճշմարիտ և զանկեղծ սէր և զգութ առ Քրիստոսաէջ Սուրբ Աթոռն և առ տառապակիր ազգս մեր: ...Իսկ առ աստուածազարդ և շահաւէտ առաջադրութիւնդ ձեր որ ամենաբարեպաշտ և ինքնակալուհի մայրն ողորմութեան մեծ կայսերուհւոյն ձերովդ գթաշարժական միջնորդութեամբ կամի այց և ազատութիւն առնել երկրիս և տառապեալ ազգիս մերում, թէ որքան է ջերմեռանդ բաղձանք մեր և յօժարութիւն առ այդ, որ լինի երկարել»:[208] Ելնելով երկրի պատմա-քաղաքական շահերից, դեպի հարավ առաջխաղացող ռուսական ցարիզմը ձգտելով իր ազդեցության ոլորտի մեջ ներգրավել Անդրկովկասը քաղաքական շռայլ խոստումներ էր տալիս հայերին ու վրացիներին: Ահա թե ինչու կովկասյան արշավանքների նախաձեռնող իշխան Պոտյոմկինը իր ազգական գեներալ Պոտյոմկինին հղած հրամանագրում կարգադրում է. «Շուշու Իբրահիմ խանին պետք է պաշտոնանկ անել, որովհետև Ղարաբաղն այսուհետև կկազմի բացի Ռուսաստանից ոչ ոքի չենթարկված անկախ մի երկիր: Ամեն ջանք գործ դրեք, որ այս նոր երկիրը կազմակերպվի ժողովրդի համար ամենաշահավետ կերպով: Այս միջոցով ուժեղ հայկական նահանգները կհետևեն այս օրինակին»:[209] Իսկ նույն իշխան Պոտյոմկինի Ղուկաս Կարնեցուն հղած նամակից ակնհայտ է դառնում, որ Ռուսաստանի հետաքրքրությունը հայ եկեղեցու վիճակով գնալով ավելի գործուն ձև է ստանում: Նա այլևս կարիք չի զգում անհարկի քաղաքական խոստումներ տալ, այլ ելնելով տերության գործերի կոնկրետ իրավիճակից, պահանջում է գործուն մասնակցություն. «Բախտավոր կլինեմ ես, - գրում է Պոտյոմկինը, եթե աստծու ձեռքը, որ օրհնում է Մեծ Եկատերինայի բոլոր մտադրությունները, առաջնորդի ինձ հաջողությամբ ի կատար ածելու առաջիկա մեծ գործերը: Աջակցեք և դուք, ամենահարգելի հովիվ, այսքան աստվածահաճո և օգտակար գործին: Ձեր ջերմառանդությունը հավատի մեջ, ձեր բարձրագույն աստիճանի արժանավորությունը, ձեր մեծ սրտի ձիրքերը, թող լինեն հայ ազգի սրտերն ողողողը: Կանչեցեք նրանց, թող ամենքը գան Մեծ Եկատերինայի ամուր վահանի տակ»:[210]

Սակայն, դեպքերի հետագա ընթացքը հանգեցրեց նրան, որ Ռուսաստանի համար ստեղծված միջազգային անբարենպաստ հանգամանքների պատճառով ցարիզմը չկարողացավ իրականացնել իր առաջխաղացման նպատակները: Ավելին, 1796 թ. Եկատերինա 2-րդին փոխարինած Պավել 1-ը դադարեցրեց Իրանի դեմ նախապատրաստվող պատերազմական գործունեությունները, դրանով իսկ ծանր վիճակի մեջ դնելով հայ ժողովրդին: Անդրկովկաս էին թափանցել Իրանում

---

[208] Տե՛ս Լեո, հ.3-րդ, գիրք 2-րդ, էջ 352-353:

[209] Տե՛ս Дубровин Н., История ивлидичества русских на Кавказе, т. 2, СПб - 1886, с. 29.

[210] Տե՛ս Լեո, հ.3-րդ, գիրք 2-րդ, էջ 348:

հաստատված խազարական դինաստիայի ահավոր բռնակալ Աղա-Մահմեդ խանի զորաջոկատները՝ ամենուր մահ ու ավերածություններ սփռելով: Ռուսաստանը բավարարվում է միայն խոստումներով ու առաջարկներով պահպանել կապը հայ եկեղեցու հետ: Երբ 1799 թ. մահացավ Ղուկաս Կարնեցին ու կաթողիկոս ընտրվեց Կ. Պոլսի Դանիել պատրիարքը, որը հայտնի էր միաժամանակ իր հակառուս գաղափարներով, ցարական արքունիքը ամեն ինչ արեց վերջինիս հեռացնելու ու 1800 թ. ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի թեկնածությունը անցկացնելու համար: Թե՛ Ռուսաստանը և թե՛ Իրան ու Թուրքիան ջանում էին ամեն կերպ հայոց կաթողիկոսական աթոռին տեսնել իրենց դրածոյին և այդ եղանակով ամրապնդել իրենց ազդեցությունն ու տիրապետությունը հայ ժողովրդի վրա:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հողային սեփականության իրավունքը: Հողատիրության տեսակները

15-18րդ էջմիածնի վանական հաստատության սոցիալ-տնտեսական դրության պատմության ուսումնասիրության համար անհրաժեշտ է առաջին հերթին քննության առնել երկրում հաստատված ագրարային հարաբերությունների հիմքը կազմող հողային սեփականության հարցը, որի վերաբերյալ մինչև օրս էլ պատմական գրականության մեջ կան իրարամերժ երկու տեսակետներ: Համաձայն տեսակետներից մեկի (Ի. Շոպեն, Մ. Կուշան Հ. Մուսայելյան, Ս. Մարկոսյան և այլոք) Հայաստանում մուսուլմանական դինաստիաների տիրապետության ժամանակաշրջանում հողի սեփականության պետական-թագավորական գերագույն իրավունքն է իշխել: Ի. Շոպենը ժխտելով մուլքի, որպես հողի մասնավոր սեփականության տեսակի հիմնական արտահայտությունը, գրում է. «Պարսպաստանում և Երևանյան խանությունում չի եղել հողի մասնավոր սեփականություն ու ամբողջ հողը պատկանել է շահին: Մուլքի տերերը պետական գանձարանի հասարակ մասնակիցներ էին և նրանց ռոճիկը մուլքն է»:[1] Ինչպես տեսնում ենք, Շոպենը գտնում է, որ մուլքի տերեր հանդիսացող խաները, բեկերն ու մելիքները պետական հողերի սոսկ կառավարիչներ են, որ աշխատավարձի փոխարեն նրանց իրավունք է տրված եղել իրենց իշխանության տակ գտնվող վայրերի հասույթներից լիովին, կամ մասնակի, օգտվելու իրավունք: Հիմք ընդունելով, որ Ղուրանը բացառում է հողի մասնավոր լինելը, Լ. Տիգրանովը գրում է. «Պարսկաստանում ունեցվածքային բոլոր հարցերը լուծվում էին հիմք ընդունելով շարիաթը կամ Ղուրանը: Դրա համար էլ Իրանի ողջ տերիտորիայի հողերն ու ջրերը պատկանում էին շահնաշահին»:[2] Տիգրանովի տեսակետը որոշ վերապահությամբ շարունակում է Հ. Մուսայելյանը, ժխտելով Հայաստանում հողային սեփականության գոյությունը նա գրում է. «Քանի որ սկզբունքորեն բոլոր տեսակի հողերն վաճառքի ենթակա չէին և մյուս կողմից պետությունն էլ հնարավորություն չուներ իր պաշտոնյաների միջոցով այդ հողերի գործերը վարել, ուստի նրան մնում էր երկու միջոց. ա) հողերը կապալով տալ, բ) որպես ավատ հանձնել այն մարդկանց, որոնք իրենց ծառայությամբ աչքի էին ընկնում»[3]: Մի կողմից ընդունելով, որ Սեֆյան Իրանը չկարողացավ վերացնել Արևելյան Հայաստանում վաղուց գոյություն ունեցող հողային սեփականությունը, Լեոն միաժամանակ գտնում է, որ 16-17-րդ դդ. շատ խիստ էր շեշտված հողատիրության այն գլխավոր

---

[1] Տես Шопен И., ст. 926-927

[2] Տես Тигранов Л., ст. 1.

[3] Մուսայելյան Հ., նշվ. աշխ.., էջ 43:

սկզբունքը, թե բոլոր հողերը պետության սեփականությունն են, և որ մասնավոր անհատը չի կարող սեփականության իրավունք ունենալ, այլ կարող է մասնակից դառնալ պետական սեփականությունից ստացվող արդյունքներին:[4] Առարկելով հողային սեփականության վերաբերյալ մի շարք հեղինակների հայտնած կարծիքներին, Ս. Մարկոսյանը փորձում է ապացուցել, թե սեփականության առուծախով չի հիմնավորվում հողային սեփականության գոյությունը Արևելյան Հայաստանում: Նա գտնում է, որ եղել է հողի ոչ թե մասնավոր, այլ պետական սեփականություն: «Շահագործող բեկական դասի ամեն մի ներկայացուցիչ չէր,- գրում է, նա,- որ շահագործում էր առանձին բուն արտադրողին, այլ արտոնյալների ամբողջականությունը կազմակերպված որպես դասակարգային ապարատ, շահագործում էր առանձին արտադրողներին գյուղական համայնքի միջոցով»:[5]

Համաձայն մյուս տեսակների (Ս. Եղիազարով, Բ. Հարությունյան, Ի. Պետրուշևսկի, Հ. Փափազյան) ժխտվում է հողի նկատմամբ պետության, կամ թագավորի գերագույն սեփականատիրական իրավունքի գոյությունը: Ս. Եղիազարովը առաջին հայ պատմաբաններից էր, որ ապացուցեց Անդրկովկասում թեկուզ մասնակիորեն հողի մասնավոր սեփականության գոյությունը: «Մուլքի շնորհիվ իր դիրքի բացառիկությանը, - գրում է նա, - կարող է լինել ցանկացած քաղաքացիական հատուցվող, կամ ոչ հատուցվող գործարքի առարկա, լինի դա ապրանքի գնում, գրավական, նվիրատվական և այլն: Երկրի մի շարք շրջաններում մուլքը դիտվում է որպես մասնավոր սեփականություն»:[6]

Անդրադառնալով հողային սեփականության ու մուլքադարական իրավունքի հարցին իրավագետ Ս. Եսայանը հանգում է այն կարծիքին, որ Արևելյան Հայաստանում մուլքի տեսքով առկա է եղել հողի մասնավոր սեփականություն:[7]

Բնութագրելով մուլք հասկացությունը որպես ռենտա-հարկի ձև, Բ. Հարությունյանը գտնում է, որ միայն մասնավոր հողատիրության իրավունքն էր հնարավորություն տալիս գանձելու մուլք, որպես տասանորդ:[8]

Քննարկելով մուլքի, որպես մասնավոր հողատիրության ձեռք բերման ուղիները, Հ. Փափազյանը այն համեմատում է հին հայկական «հայրենիք» հողատիրության ձևին: «Գոյություն ունի միայն որոշակի տերմինաբանական տարբերություն հայրենիք և մուլք բառերի միջև,- գրում է նա, քանի որ առաջին տերմինը ընդգծում է ավատատիրական

---

[4] Լեո, հ.3-րդ, գ.1-ին, էջ 83:
[5] Մարկոսյան Ս., Հողային հարաբերությունները..., էջ 20:
[6] Егизаров С., Сельские община, ст. 148.
[7] Арутюнян Б. М., Крупное монастырское хозяйство в Армении в 17-18 вв., с. 33.
[8] Նույն տեղում, էջ 33:

մասնավոր սեփականության ծագումը տոհմական, վոտչինային հողատիրությունից, մինչդեռ երկրորդը բխում է այդ հասկացության ծագումը բացատրող աղբյուրների բազմազանությունից»:[9]

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ագրարային հարաբերությունների էությունը բացահայտող պայմանական փաստաթղթերի գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն փաստարկումը, թե հողը պետության կամ թագավորի գերագույն սեփականությունն էր, գիտականորեն հերքվում է: Հողատիրության հարցերը մեկնաբանելիս առաջին հերթին պետք է ելնել տվյալ ժամանակաշրջանում հաստատված սոցիալ-տնտեսական հարաբերությունների օբյեկտիվ վերլուծությունից: Այդ հարցերը չի կարելի բացատրել միայն մուսուլմանական կրոնական դոգմաներով, որոնք, ինչպես ճիշտ նկատել է Վ. Մինորսկին. «...յուրաքանչյուր երկրում այլ տեսք ունեին և մեզ հետաքրքրող հարցերի համար ոչ այլ ինչ էին, եթե ոչ միայն իրավական ծածկույթ, որ տալիս էին ծածկելու տեղում ընդունված կարգերը»:[10] Դեռևս Հայաստանի արաբական տիրապետության ժամանակաշրջանի ագրարային հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ժամանակ էլ խալիֆի՝ հողի գերագույն սեփականատեր լինելը ձևական էր: Իրականում ավատական վերնախավի ներկայացուցիչները հողեր էին ձեռք բերում ժառանգական կամ էլ պայմանական հողատիրության սկզբունքներով: Ժամանակի ընթացքում պայմանական հողատիրությունն էլ վեր էր ածվում ժառանգականի, և հողը դառնում էր ավատատիրոջ լիակատար սեփականությունը:[11] Հողատիրության նույն բնույթի էվոլյուցիա էր տեղի ունենում Հայաստանում նաև 15-րդ դարից սկսած: Եվ չնայած 16-րդ դ. Սեֆյան տիրակալների գործադրած բոլոր ջանքերին՝ որքան հնարավոր է ընդարձակել պետական հողատիրության չափերը, դա նրանց միայն մասամբ հաջողվեց: Բավական է նշել, որ ըստ Իսկանդար Մունշիի տեղեկությունների, ողջ իրանական տիրապետության սահմաններում 1576 թ. հաշվվում էր 114 ժառանգական խոշոր ավատատերեր, ապա 1628 թ. դրանց թիվը պակասեց միայն 24-ով:[12] Իսկ դա նշանակում էր, որ Աբաս 1-ին տոհմիկ ավատատերերի իշխանության ժառանգական բնույթը ժամանակավոր պաշտոնակատարությամբ փո-խելու քաղաքականությունը չհաջողվեց:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում մասնավոր հողային սեփականության հիմնական ձևը մուլքն է, որն ընկած էր թե պետական, արքունական, թե կրոնական հաստատություններին պատկանող և թե համայնքապատկան հողատիրության տեսակների հիմ-

---

[9] Папазян А., Аграрные отношение..., стр.156.
[10] Talhkirut al-muluk. p.195.
[11] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, եր., 1984, էջ 366-367:
[12] Տես Петрушевски И., Очерки ..., с.108.

քում: Հողատիրության մուլք ձևը երևան է եկել արաբական տիրապետության շրջանում, խալիֆաթի ձևավորման հետ միաժամանակ: Հայաստանում սելջուկ-թուրքական ու մոնղոլական տիրապետության տարիներին ասպարեզից վերացան մի շարք խոշոր հայկական ավատական տներ, որոնց փոխարինելու եկավ մուսուլմանական ռազմաքոչվորական ավագանին:

Դա որոշակի փոփոխություններ առաջացրեց երկրի ագրարային հարաբերություններում:

Տիրապետող դարձան հողատիրության այլ ձևեր (խաս, դիվանի, վակֆային, իկտատարական): Աստիճանաբար տարածվեց ու հաստատվեց հողատիրության մուլք տեսակը: Արդեն 15-րդ դ. վավերագրերում ավելի հաճախ է հանդիպում մուլք արտահայտությունը հողային սեփականության իմաստով: Այսպես, Տաթևի վանքապատկան գյուղերի սահմանների մանրամասն նկարագիրը պատկերող 1400 թ. մի կալվածագրում ասվում է, որ Խոտ, Շնհեր և Հալիձոր գյուղերը իբրև մուլք հաստատված և դրված են եղել Տաթևի վանքի տիրապետության տակ, ուստի և կարգադրվում է, որ ոչ ոք հիշյալ մուլքերում որևէ բաժին կամ ստանալիք չպահանջի:[13] Իսկ Ս. Անեցու ժամանակագրության շարունակողը խոսելով Կարա-Յուսուֆի 1406 թ. արշավանքների մասին՝ գրում է, որ նա. «...արար շատ աւէր և գնաց ի Թավրէզ և այլ յառաջ, և մլքեաց (իմա սեփականացրեց - Հ.Թ.) տեղիս մինչև ի Սուլտանիայ»:[14]

Արաբական տիրապետությունից ժառանգություն մնացած այդ տերմինը նշանակում էր ոչ միայն հողատիրության նշված տեսակը, այլև ընդհանրապես սեփականություն կազմող անշարժ գույքը լինի դա կալվածք, արտ, թե տուն, ջրաղաց թե ոռոգման կառույցներ և այլն: Նկարագրելով 1534 թ. շահ Թահմասպ 1-ի Վասպուրականում կատարած արշավանքի արհավիրքները, Հովհաննես Արծիշեցի ժամանակագիրը նշում է, որ «շատ մուլք և մէրէրն (կողակից) անտէր մնաց»:[15]

Իսկ ինչ պայմաններ էին կանխորոշում հողի մասնավոր սեփականությունը և որոնք էին այդ սեփականության առկայությունը դրսևորող հիմնական գործոնները: «Հողային սեփականությունը, - գրում է Կ. Մարքսը,- ենթադրում է որոշ անձերի մենաշնորհը տնօրինելու երկրագնդի այս կամ այն մասերն իբրև նրանց մասնավոր կամքի բացառիկ ոլորտներ: ...Հենց իրավաբանական պատկերացումն ինքը ոչ մի ուրիշ բան չի նշանակում, քան այն, որ հողի սեփականատերը իր հողի հետ կարող է վարվել այնպես, ինչպես ամեն մի ապրանքատեր իր ապրանքի հետ»:[16] Հետևապես, հողի մասնավոր սեփականություն լինելու չափանիշը նախ հողի վրա որոշ անձերի մենաշնորհն է, այդ

---

[13] ՄՊԿ, է. այր., 1, էջ 55-56:
[14] Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 214:
[15] Նույն տեղում, էջ 231:
[16] Մարքս Կ., Կապիտալ, հ.3-րդ, մաս 2-րդ, Եր., 1949, էջ 158-159:

անձերի կողմից հողն ըստ նրանց կամքի տնօրինելն է: Այդ իրավունքն արտահայտվում էր հետևյալում. մուլքը լիակատար ժառանգական սեփականություն էր: Ավատատերերը սովորաբար ունեցած ժառանգական կալվածքները կտակում էին իրենց որդիներին՝ նշելով, որ նրանք այդ կալվածքները ստանում են որպես «ի վայելումն յետագայ որդւոց և զաւակաց իւրեանց»: Այդ մասին է հավաստում, օրինակ, շահ Թահմասպ 1-ի 1558 թ. հրովարտակը, տրված Գեղարքունիքի ավատատեր Մելիք Բեկին, որտեղ մասնավորապես ասվում է. « ...Որովհետև Մելիք-բէկ քրիստենեայն յայտնեաց, թէ Ալթուն-թախթ, Բիւղի-Կարաք, Գիւրճի վերան, Փոքր Ենկիջայ, Մեծ Ենկիջայ, Միրաբաղ, Մաղաք գիւղորայքն, որք ի նահանգին ծովակին Գէօգչայի ժառանգութիւն նորա են սեպհական և ունի ի հաստատութիւն բանից իւրոց զգիրս օրինադրոշաց մերոյ ի ձեռին իւրում. վասն որոյ մեք հաստատեցաք լինել ժառանգութիւն նորա որպէս էին, և ոչ ոք առանց իրաւանց օրինաց լինիցի ձեռնամուխ սեպհական հողոյ նորայ»:[17] Նման իրավունքներից, որպես անհատ քաղաքացիներ, օգտվում էին նաև հոգևոր դասի ներկայացուցիչները: Սեֆյան շահ Թահմասպի Տաթևի վանքապատկան կալվածքների վերահաստատման և վանքի ավատատիրական իրավունքների մասին 1557թ. տրված հրովարտակում ասվում է. «Որովհետև դավթարից հաստատեցին, որ Թուման-ե Նախչեվանի Սիսաջանի օլքայի և Ղափանաթի Օրոտ Նահիայի կից հիշատակված վայրերը եղել են Ղափանաթի Տաթևի վանքի անգեղակոթցի Շմավոն վարդապետի ժառանգական մուլքը, գտնվել են նրա տնօրինության տակ և դիվանին չեն վերաբերվել, ուստի թող այդ գյուղերի տնօրինության տակ գտնվելը համարվի հնարավոր, և ոչ մի մարդ արարած հակառակ սույն հրամանի ապօրինի կերպով այդ գյուղերի գործերին չմիջամտի»: Կից ներկայացվում է գյուղերի ցուցակը.

Հ	Գյուղ	Նահիա
1.	Բնունիս	Սիսաջան
2.	Թաս	----/----
3.	Ղարաքիլիսա	----/----
4.	Դաստագերդ և Գյուլյազի	----/----
5.	Ավարի	Օրոտ
6.	Աղաքյանդի	----/----
7.	Տանձատափ	----/----
8.	Տաշու	----/----
9.	Տաթև	----/----
10.	Խոտանան	---/----

[17] Տես Սմբատյան Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, էջ 784:

11.	Հալիձոր	----/----
12.	Շնհեր	----/----
13.	Խոտ	----/----
14.	Բորգի	----/----
15.	Կից	Գեղի:[18]

Նույն բովանդակությունն ունեցող և գյուղերի նույն ցանկը պատկերող Սեֆյան շահ Իսմայիլի 1510 թ. հրովարտակում հաստատվում են անգեղակոթցի Շմավոն վարդապետի իրավունքները իր ժառանգական մուլքերի վրա:[19]

Կարելի է եզրակացնել, որ այս երկրորդ Շմավոն վարդապետը եղել է առաջինի պապը, որի ժառանգական իրավունքներն էլ 1557 թ. վերահաստատվում են: Շահական նույնանման հրովարտակով Վարանդայի տեր է հաստատվում մելիք Բաղին, հաստատվում են իրենց իրավունքներում Ներքին Խաչենի տերեր Հասան Ջալալյանները, Ծարա նորաստեղծ իշխանության տերեր, Դոփյան Հասանի սերունդներից Ջհանշահյանք, Դիզակի և Գյուլիստանի իշխողները և այլն:[20]

Սերնդից սերունդ ժառանգաբար փոխանցված հողային սեփականության նկատմամբ իրավական հիմք չունեցող յուրացումները անկախ այն բանից, թե ովքեր են դա կատարել, ենթակա էին բողոքարկման: Այդ մասին է վկայում հետևյալ փաստը. Երևանցի Խոջա Սեթի որդի Խոջա Հակոբը դիմում է մուսուլմանական հոգևոր օրենսդրական դատական խորհրդին Շար, Երևանի խանության Յայջի, Ջորագեղ և Գյոլքյանդի գյուղերի մուլքերի նկատմամբ իր սեփականատիրական իրավունքները վերականգնելու խնդրանքով: Բանն այն էր, որ 1637 թ. շահ Սեֆիի կարգադրությամբ բռնագրավվել ու պետական սեփականություն էին հաստատվել անհավատարմության մեջ մեղադրված Երևանի Թահմասպ կուլի խանի կալվածքները, ի թիվս վերը հիշատակված գյուղերի, որոնց սեփականատիրական իրավունքը զարտուղի միջոցներով յուրացրել էր հիշյալ խանը: Մանրակրկիտ ստուգումներից հետո, համոզվելով խոջա Հակոբի բողոքի իսկությունում, շահ Աբաս 2-րդը 1648թ. հատուկ հրովարտակով վավերացնում է հիշյալ խոջայի ժառանգական իրավունքները թվարկված գյուղերի մուլքերի նկատմամբ:[21] Այս առումով արժանահիշատակ է նաև հետևյալ օրինակը. 1709 թ. Գեղարքունիքի մելիք Շահնազար 2-րդը դիմում է շահ սուլթան Հուսեյնին հետևյալ խնդրանքով. «...գիւղն Գեօզչայի կոչեցեալ Ղանդուլեղդարայ ի բնէ ժառանգական կալուածք են իմ ի Միրզաջան հօր

[18] ՄՊՀ, պր.1, էջ 60-61:
[19] Նույն տեղում, էջ 57-58:
[20] Բարխուդարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Կարապետ եպիսկոպոս (Տե ս Մկրտչյան), Նյութեր հայ մելիքությունների մասին, Բ, պրակ:
[21] ՄՊՀ,1, պր. 2, էջ 358-362:

եղբօր որդւոյ իմ է. որ այժմ յԱսպահան կայ ի ծառայութեան շահին և այդ հինգ ամ է յորմէ հետէ Մեհդի խան բէգն զրկողութեամբ տիրեալ է, խնդրեմք ըստ իրաւանց ըստ մեր ըստ հինգ ամեայ եկամտին ստասջիք. և զնոսա ի վնասակարութենէ արգելջիք»:[22] Շահը համոզվելով մելիք Շահնազարի նեկայացրած թղթերի իսկության մեջ, վերահաստատում է նրա իրավունքները հիշյալ գյուղերի վրա: Ինչպես տեսնում ենք, սեփականատիրական իրավունքի անձեռնմխելիության հարցում նույնիսկ տիրակալները նախանձախնդրություն էին ցուցաբերում: Ինչ վերաբերում է բարձրաստիճան անձնավորության ունեցվածքի հարքունիս գրավմանը, ապա դա կատարվում էր միայն այն ժամանակ, երբ վերջինս մեղադրվում էր պետական դավաճանության մեջ: Նման բռնագրավումներն էլ կատարվում էին միայն սեփականատիրոջ դատական իրավազրկումից հետո: Այդ դեպքում, ինչպես նկատում է Հ. Փափազյանը, շահը մարմնավորում էր և' պետական գերագույն իշխանությունը, և' արդարադատության բարձրագույն ինստանցիան:[23]

Չնայած սեփականատիրական իրավունքի անձեռնմխելիությանը, չէր բացառվում նաև բռնագրավումների ճանապարհով հողային սեփականության իրավունքի ձեռք բերման հնարավորությունը: Իրենց կալվածքները գյուղական համայնքի հաշվին կատարած հողային բռնագրավումների, ինչպես նաև իշխողների բռնություններից ու կամայականություններից բնակության վայրը փոխած գյուղացիների ունեցվածքը սեփականելու ճանապարհով ընդարձակեցին հատկապես հոգևոր հաստատությունները: Այսպես, մի կալվածագրից տեղեկանում ենք, որ 1621թ. Խաչենի Քարագլուխ գյուղի համայնքը ստիպված էր Գանձասարին զիջել Կոռաբան կոչված հանդամասը:[24] Ձեռագրերից մեկն էլ տեղեկացնում է, որ Ապարանի գավառի Կթանից գյուղի բնակչության մի մասը իշխողների կամայականություններից հուսալքված «կու թողուն զտունն և զայգին և զայլ ապրանքն ու փախին»: Փորձելով օգտվել նպաստավոր իրադրությունից, Ապարանի սբ. Նշան վանքի միաբանությունը աշխատում է՝ իրեն վերապահել այդ կալվածքների սեփականումն ու օգտագործումը՝ անեծք կարդալով այն մարդկանց հասցեին, ովքեր տեր կկանգնեն գյուղից փախածների մուլքերին:[25] Նույն պրակտիկան լայն չափով կիրառվել է նաև Սանահնի վանական տնտեսության առաջնորդների կողմից: Ինչպես վկայում է վանքի պատմությունը նկարագրող ձեռագիրը, 15-16-րդ դդ. Սանահնի տնտեսական դրությունը շատ ծանր է եղել, քանի որ խլել էին «ի վանիցս մուլքս և հայրենիքս»:[26] Հետագայում շնորհիվ իր առաջնորդներ Սարգիս և Բար-

---

[22] Տե՛ս Սմբատյան Մ., նշվ. աշխ., էջ 793-794:
[23] Փափազյան Հ., Շարիաթական իրավական նորմերը..., էջ 26:
[24] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 240, վավ. 81:
[25] Նույն տեղում, Ձեռագիր 7757, էջ 1ա:
[26] Նույն տեղում, Ձեռագիր 3031, էջ 330:

սեղ եպիսկոպոսների ջանքերի, վանական հաստատությունը կրկին սկսում է տնտեսական վերելք ապրել: Վերջիններս, վկայում է աղբյուրը, իրենց գործողություններում որևէ սահանափակում չեն դրել, ինչպես օրինակ. «գնոյ գնեցաք կամ գրաւեցաք, առաջի մեծաց և իշխանաց կաշառուք թափեցակ, կամ բռամբ տիրեցաք»:[27] Կարելի է կարծել, որ գյուղական համայնքների ու վանական հաստատությունների միջև եղել է նախնական պայմանավորվածություն, հակառակ դեպքում այդ տարածքներին տեր կդառնային եկվոր տիրակալները: Պետք է փաստել, որ 16-17-րդ դդ. առօրյական էին դարձել եկեղեցական հաստատություններին առանձին անհատների կողմից հողատարածքների նվիրատվության փաստերը: Վերջիններս քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, իրենց հողային տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով դրանք նվիրում են վանքերին ու եկեղեցիներին՝ նկատի ունենալով, որ այնուհետև դրանք դառնում էին պետականորեն ապահովված: Շատ հաճախ էլ ավատատիրական տան որևէ ներկայացուցիչ ընդունում էր հոգևոր կարգ և իր ձեռքում կենտրոնացնում նույն շրջանի աշխարհիկ հոգևոր իշխանությունը: Ստանձնելով հոգևոր պաշտոններ՝ հայ ավատատերերը կարող էին ազատորեն հողեր գնել և նվիրել վանքերին: Հենց այդպես վարվեց, օրինակ, արդեն հիշատակված Բարսեղ եպիսկոպոսը, որը 1690-ական թվականներին Սանահնի վանքին նվիրեց իր «սամծերու երկու էգին իւր հնձանովն, զՏալվերու գեղն էգին իւր հնձանովն, զԽոշորնաձորի Բ (2) էգին Ō (50) աւրավար հողն, Բրդաձորի հողն իւր հնձանովն»:[28]

Հայտնի է, որ հին հայկական ազատ գյուղական համայնքը, որ ստեղծվել էր դեռ տոհմական հարաբերությունների քայքայումից անմիջապես հետո, շարունակում էր պահպանել իր գոյությունը ոչ միայն վաղ ֆեոդալիզմի, այլև հետագա ժամանակաշրջանում: Սակայն, հանրային սեփականության կողքին մասնավոր սեփականության աճն ու զարգացումը, համայնքի ներսում նյութական ու սոցիալական շերտավորման ուժեղացումը, աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի համայնքի նկատմամբ ձեռնարկած միջոցառումները կործանեցին գյուղական ազատ համայնքներից շատերը: Արդեն 16-17-րդ դ. գյուղական ազատ, նախկին իմաստով իր հողերի տեր ու տնօրեն համայնքներ շատ քիչ էին մնացել: Գյուղական ազատ համայնքներ են եղել, օրինակ, Դարաշամբի Դիպքյանդ, ինչպես նաև Շամբի ձորում գտնվող Բաշքյանդ ու Օրդաքյանդ գյուղերը, որոնց մուլքը շարիաթական ձևակերպմամբ պատկանել է հիշյալ գյուղերի համայնքներին: Օրինակ, Դիպքյանդ գյուղի մուլքը նույն գյուղի բնակիչների սեփականությունը լինելը հաստատող 1506 թ. կալվածագրում ասվում է, որ այդ գյուղը իր «ներքին ու արտաքին ամեն ինչով գյուղի բնակչության քրիստոնյա համայն-

---

[27] Մատենադարան, Ձեռագիր 3031, էջ 330:
[28] Տես Ջալալյան Ս., էջ 31:

քի իրավունքն ու մուլքն է զուտ հարստությունն ու անխառն ու անբաժան սեփականությունն է և, որպես մուլք իր սահմանակցության իրավունքով դեռևս հին ժամանակներից մինչև այժմ գտնվում է նրանց տիրապետության տակ և նրանց շարիաթական հաստատուն տիրապետության ներքո, և ոչ ոք վայրերի նկատմամբ երբեք, ոչ մի դեպքում և ոչ մի նպատակով, պատճառով կամ պատճառաբանությամբ ոչ մի իրավունք, բաժին կամ մաս, պահանջ կամ վեճ չունի և չի կարող ունենալ»:[29] 1658 թ. Թավրիզի Շեյխի մզկիթի միաբանությունը փորձում է բռնագրավել վերը հիշատակված գյուղերի սեփականության իրավունքը՝ պատճառաբանելով, որ այդ գյուղերը իբր ժամանակին ապահարկության իրավունքով նվիրված են եղել մզկիթին: Վեճը շարունակվում է, և միայն 1668 թ. հիշյալ գյուղերի բնակիչների պատգամա-վորությունը մեկնելով Սպահան, համապատասխան վավերագրերով բարձրագույն դիվանին ապացուցում է իր սեփականատիրական իրավունքները:[30]

Բռնագրավումներին համարժեք մասնավոր հողասեփականության իրավունքի ստացման ուղիներից մեկն էլ նվաճումներն էին, երբ մոբիլիզացվում էր երկրի հողային ֆոնդը ու կենտրոնացվում արքունիքի կամ պետության տրամադրության տակ: Դրան մեծապես նպաստեց շահ Աբաս 1-ի բնակչության մասսայական գաղթեցման քաղաքականությունը, որի հետևանքով երկրի մշակելի հողային տարածությունները փաստորեն մնացին անտեր: Առ. Դավրիժեցին այս մասին հաղորդում է հետևյալը. «Եւ յաւուրսն յայնոսիկ ի խորհուրդ չարեաց Շահաբասն կոչեաց զԴաւիթ կաթողիկոսն և զՄելիքսէթ կաթողիկոսն առաջի իւր և ասաց. սուորութիւն է թագաւորաց և կարգ նաև յայտնի է ձեզ, թէ որպէս երկիրս յառաջն օսմանցւոց էր, և այժմ մեր եղև, սոյնպէս և ամենայն ինչէ և ստացուածք նոցա՝ որ անտէր մնացեալ են, պարտի լինիլ արքունական, այսինքն՝ միրինալի»:[31]

Արքունական (խաս) հողերը Սեֆյան Իրանի կենտրոնական, բերքատու վայրերն էին: Այստեղ էին կենտրոնացված նաև առևտրական հիմնական կենտրոնները, որոնց հասույթներից արքունական գանձարան էին հոսում հսկայական գումարներ: Օրինակ, Իսկանդար Մունշիի վկայությամբ, շահ Աբաս 1-ի թագավորության 21-րդ տարում արքունի կալվածքները գնահատվել՝ են ավելի քան 100000 թուման, իսկ այդ վայրերից ստացվող տարեկան միջին եկամուտը կազմել է 7000 թուման:[32]

Արևելյան Հայաստանում արքունական կալվածքների մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Զաքարիա Ագուլեցին: Ըստ

---

[29] ՄՊԿ, 1, էջ 96-97:
[30] Նույն տեղում, էջ 88:
[31] Առաքել Դավրիժեցի, էջ 27-28:
[32] Տե՛ս Рахманин А., Тарих-ы, стр. 131.

այդ տեղեկությունների, «խաս» էին համարվում Ագուլիս, Մեղրի, Շոռոթ, Լեհրամ և Աստապատ գյուղաքաղաքները:[33] Ճիշտ է, վարչական հարցերում «խաս» կոչված այդ վայրերն ենթարկվում էին Նախիջևանի խանին, սակայն բացարկվում էին տեղական պաշտոնյաների իրավասությունից: Հարկային պարտավորություններով կապված լինելով անմիջապես արքունիքին՝ նրանք ենթարկվում էին արքունի գործակալների անմիջական տնօրինությանը: Նույնիսկ վերջիններիս կամայականությունների դեմ բողոքելով՝ հաճախ այդ վայրերի բնակիչները կարողանում էին իրենք բողոքը տեղ հասցնել: Ինչպես վկայում է Զաքարիա Ագուլեցին, 1654 թ. իր իրավունքներից զրկվեց Ագուլիսի ոստիկանապետ Ուղուրլու բեկը, որի կամայականությունների դեմ բողոքել էր տեղի բնակչությունը:[34]

Արքունական հողերից գանձվող հարկերի մի մասը ժամանակավոր վարձակալության իրավունքով (զաբթ) տրված էր ազնվականությանը զինվորական ու պետական ծառայության դիմաց: Ըստ որում, վարձակալման այդ իրավունքը տրվում էր պայմանական կարգով: Վարձակալողը կարող էր դրանից օգտվել այնքան ժամանակ, քանի դեռ նա կատարում էր արքունիքի հանդեպ իր վասալական պարտականությունները: Ինչպես տեղեկանում ենք Զաքարիա Ագուլեցու օրագրությունից, վերը հիշատակված «խաս» բնակավայրերը երկար ժամանակ գտնվել են Ատրպատականի վեզիր Միրզա Իբրահիմի զաբթում: 1675 թ. մեկ տարով այն տրվել է Երևանի Սաֆիկուլի-խանին, իսկ հաջորդ տարում 1000 թումանով կրկին վերադարձվել է Միրզա Իբրահիմին:[35] 1677 թ. այն տրվում է ագուլեցի Իսախան բեկին. «1677-ումն, - կարդում ենք օրագրությունում, - «Աքուլիս էր աքունեցի Սուսաբեկի տղայ Իսախան-բեկի զաֆտումն: Ոչ միայն Աքուլիս, այլ և ե (5) խաս գեղն, որ Մեղրի, Աքուլիս, Շոռոթ, Լենրամ, Աստապատ, այս ե (5) գեղն շահն տվելայ Իսախան բեկի զաֆտն»:[36]

Պետական (դիվանի) հողերը այն նյութական բազան էին, որոնցից ստացվող եկամտով պահվում էր պետական ապարատը: Դրա մի մասը անվերապահորեն գտնվում էր պետական գանձարանի տրամադրության տակ, և ստացված ողջ եկամուտը մտնում էր այնտեղ: Պետական հողերի մյուս մասի օգտագործումը վարձակալության իրավունքով տրվում էր գերազանցապես զինվորական ծառայության մեջ աչքի ընկած անձնավորություններին՝ սոյուրղալի ու թիուլի տեսքով:

Մոնղոլական ծագում ունեցող սոյուրղալ տերմինը, որ նշանակում էր նվիրատվություն, պարգևում, ցմահ օգտագործում, հետմոնղոլական շրջանում դարձավ ավատային տիրապետություն ձեռք բերելով

---

[33] Զաքարիա Ագուլեցի, էջ 134:
[34] Նույն տեղում, էջ 42:
[35] Նույն տեղում, էջ 68-70:
[36] Նույն տեղում, էջ 134:

ժառանգական բնույթ: Ճիշտ է, ամեն մի նոր տիրակալ հաստատում էր իր նախորդների սոյուրղալական շնորհումները, սակայն այն կրում էր ձևական բնույթ: Օրինակ, քուրդ էմիր Շամս-ադ-դին Ռուզեկին Կարա-Յուսուֆից ստացել էր Խլաթի, Մուշի, Բիթլիսի և Խնուսի սոյուրղալական իրավունքները: Հետագայում, երբ պարզվել էր, որ Ռուզեկին համագործակցել է Լանկ-Թամուրի որդու Շահռուխի հետ, նրան ենթարկում են մահապատժի: Սակայն այսքանից հետո էլ նրա սոյուրղալական իրավունքները շարունակում են մնալ իր ընտանիքի ձեռքում՝ ամբողջ 15-րդ դարի ընթացքում:[37] Ինչպես վկայում է Աբդ-ար-Ռեզակ Սամարղանդին, կարա-Յուսուֆի որդի Իսքանդարի օրոք, կարա-կոյունլուների արքունիքում էր ծառայում Ռուստամ Օրբելյանը՝ վարելով մեծ վեզիրի և արքունի խորհրդականի պաշտոնը: Ունեցած ծառայությունների դիմաց Ռուստամը Իսքանդարից ստացել էր սոյուրղալներ Սյունիքում, ինչպես նաև Արագածոտն ու Կոտայք գավառներում:[38] Ժառանգական իրավունքի հետ միաժամանակ, սոյուրղալ արտոնությունը արքունական ու պետական հարկերից ազատում էր գրեթե ամբողջությամբ: Փաստորեն, ինչպես նկատում է Վ. Մինորսկին. «իր մշտական ու ժառանգաբար անցնելու բնույթով սոյուղլալ տերիտորիաները իրենցից ներկայացնում էին անկախ ու ինքնիշխան տիրույթներ երկրի ներսում»:[39] Հետագա՝ 16-17-րդ դարերում բավականին փոփոխություններ կատարվեցին սոյուրղալ հողային ինստիտուտի մեջ: Պարգևական հողատիրության թիուլային տեսակի համատարած հաստատումով սոյուրղալը վերածվեց թիուլային ընդհանուր սիստեմից բխող ավատական պարգևատվությունների տեսակի: Համաձայն «Թազկիրաթ ալ-մուլուք» - ի, 17-րդ դ. Իրանում սոյուրղալների ողջ եկամուտը կազմում է 3677-78800 դինար, իսկ թիուլ ունեցողներին՝ մոտ տասն անգամ ավելի:[40]

Թիուլը սկզբնապես ծագել է որպես պետական հարկ, որը պետության կողմից տրվում էր այս կամ այն պաշտոնական անձնավորությանը՝ մատուցած ծառայությունների դիմաց: Թիուլի տերերի (թիուլդար) իրավունքները հողի և գյուղացիների նկատմամբ սահմանափակ էին: Նրանք չէին վարում իրենց տնտեսությունը, չէին խառնվում գյուղացիների տնտեսական գործերին:

«Թիուլը,-գրում է Ի. Պետրուշևսկին,-Սեֆյան Իրանում նշանակում էր հողային հարկի (մալոջիաթ) մի մասի, երբեմն էլ այլ տուրքերի, բայց ոչ հողի, և այդ հողի վրա բնակվող հարկատու բնակչության (ռայաթ) պարգևումը ծառայության մեջ գտնվող մարդկանց՝ որպես ծառայության վարձ, հողային այնպիսի հարկեր ու տուրքեր, որոնք մինչ

---

[37] Տես Пётрушевски И., Государство Азербажана в 15в. с.79-82.

[38] Փափազյան Հ., Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, էջ 89: Նաև՝ Петрушевски И., Очерки ..., с.147-148.

[39] Talhkirat al-mulut, p.27.

[40] Նույն տեղում, էջ 107-108:

այդ որոշյալ գյուղերից և բնակավայրերից գանձվում էին հոգուտ դիվանի»:[41] Նման իրավունքով, օրինակ, 1622 թ. 54909 դինար ընդհանուր արժողությամբ Բորչալուի հաքիմին տրված է եղել Սիսիանի գավառի Դաստակերտ գյուղը:[42] Մեկ այլ վավերագիր տեղեկացնում է, որ ոմն Ջալ-բեկի տրված է եղել Գեղարքունիքի գավառի Հասանքյանդի և Կարմունջ գյուղերի թիուլի իրավունքը 88450 դինար ընդհանուր գումարով:[43]

Թիուլեր տրվում էին ոչ միայն աշխարհիկ անձնավորություններին, այլ նաև հոգևոր դասի առանձին բարձրաստիճան անձնավորությունների: Ինչպես վկայում են աղբյուրները, նման իրավունք տրվել է նույնիսկ այլակրոն հոգևորականության ազդեցիկ ներկայացուցիչների: Օրինակ, ինչպես տեղեկացնում է Առ. Դավրիժեցին, երբ 1629 թ. Դավիթ Վաղարշապատեցին դիմում է շահ Աբաս 2-րդին կաթողիկոսական աթոռից իր հրաժարականը հաստատելու խնդրանքով, շահը հաստատելու հետ մեկտեղ նրան է նվիրում Իրանի Ջղախոռ գավառում մի գյուղ. «... զի կերիցէ զմուտս գեղջն այնմիկ և աղօթեսցէ վասն կենաց թագաւորին» իրավունքով:[44] Դժվար չէ նկատել, որ այս նվիրատվության հիմքում ընկած է թիուլին հատուկ պայման, այսինքն հողային հարկի կամ նրա մի մասի պարգևում:

Աղբյուրները վկայում են, որ նվիրատվության ֆոնդում կարող էին լինել ոչ միայն պետական, այլև սեփականատիրական որևէ գյուղից, կամ մի քանի գյուղերից գանձվող ողջ պետական հարկերը, կամ այլ հարկերի մի մասը: Այսպես, 1650 թ. շահական հրովարտակներից մեկը տեղեկացնում է, որ էջմիածնի վանքապատկան Վաղարշապատ գյուղից գանձվող եկամտահարկը թիուլի իրավունքով հատկացվել է Երևանի Քեյխտոսրով խանին:[45] Իսկ շահ Աբաս 2-րդի 1646 թ. ոմն Աբասկուլի Սուլթանին տրված հրովարտակից պարզվում է, որ Քաշաթաղի մելիք Հայկազյաններին պատկանած չորս գյուղերից գանձվող գլխահարկը՝ 4 թուման 5640 դինար ընդհանուր գումարով, հատկացված է եղել Սուլթանին իբր թիուլ:[46] Նման դեպքում ծագում է իրավունքների մի բարդ համագումար: Բանն այն է, որ հանդես գալով իբրև վարձակալության ձև, թիուլն իր բնույթով պայմանական կալվածատիրություն էր: Այն ընդհատվում կամ ուրիշի էր փոխանցվում թիուլի տիրոջ մահվան կամ պաշտոնից ազատելու պետքում: «Չնայած այդ խանների որդիները, - գրում է Աբաս Օլեարիուսը,-հավակնում էին ժառանգելու իրենց հայրերի ունեցվածքը, անյուամենայնիվ նրանց համար չէր պահպան-

---

[41] Петрушевски И., Очерки ..., с.124-125.
[42] Տե՛ս Папазяан А. , Аграрние отнашения..., с.98.
[43] Տե՛ս Նույն տեղում:
[44] Առաքել Դավրիժեցի, էջ 217:
[45] ՄՊՀ 1, պր. 2-րդ, էջ 140-143:
[46] Նույն տեղում, էջ 124-125:

վում հայրերի ոչ իշխանական տիտղոսը, ոչ էլ իրավունքները, եթե նրանք իրենց բարեմասնություններով դրան արժանի չէին, կամ շահը չէր հանձնում նրանց այդ իրավունքը հատուկ ողորմածությամբ»:[47] Հատկապես, եթե պետությունը սեփականատիրական գյուղերից պետական հարկերի գանձման իր իրավունքը նվիրում էր մեկ ուրիշի, ռենտան, այսպիսով, կենտրոնանում էր երկու մարդու ձեռքում, սակայն տարբեր իրավունքներով: Մեկը անձամբ մասնատիրական հողի սեփականատերն էր, որին ռենտայի մեծ մասն էր բաժին հասնում և որն էլ նրա ցանկությամբ ազատորեն օտարվում էր, մյուսը՝ հանդես էր գալիս պետական գանձարան մտնող ռենտա-հարկի ժամանակավոր օգտագործող: Դա նշանակում է, որ թիուլի տերերի քաղաքական բարձր դիրքը որևէ չափով հողի նկատմամբ սեփականատիրական իրավունք չի ընձեռել նրանց:

Հողային սեփականության իրավունքի ձեռք բերման հիմնական միջոցը թերևս առք ու վաճառքի ուղին էր: Անշարժ գույքի օտարման բազմաթիվ վկայությունները ապացույց են այն բանի, որ մուլքը նաև օտարելի սեփականություն էր առանց որևէ սահմանափակումների: Օտարվող հողերն ստացվող ավատատերերն այժմ իրենք էին դառնում այդ հողերի բացարձակ տնօրենը: Նրանց իրավունք էր վերապահվում ձեռք բերած գանձագին մուլքերը «ուտել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և գրաւական դնել և զինչ կամք են առնել մինչև յաւիտեանս ժամանակաց»:[48] Ստորև ներկայացնում ենք Աստապատի սբ. Ստեփանոս Նախավկա վանքի կողմից գնված այն հողերի ցանկը, որոնք վանքը ձեռք է բերել 1667-1780 թթ.:

Հ. Հ.	Վաճառված հողատարածքի չափը	Գնման արժեքը	Գնողը	Վաճառողը	Գնման թվականը
1.	4 սոմար[49] հող	30000 դինար	Մլիքայել վարդապետ	Աշանանե և Անդրեաս	1667
2.	1 արտ	5 թուման	--------	Համասփյուռ, Հուռիկ	1680
3.	6 սոմար հող	15000 դինար	Պետրոս վարդապետ	Սուքիաս	1682
4.	4 սոմար հող	8 սոմար ցորեն	Հակոբ վրդպ.	Ասատուր	1708
5.	17 չվան[50] հող	4 թուման	Օհան վրդպ.	Հովհաննես	1732
6.	5 սոմար հող	18000 դինար	Հովհաննես վարդապետ	Աննա,Բազում	1736

[47] А. Олеарий с. 884.
[48] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 242, վավ. 9, 62,91,172 և այլն: Վիմական տարեգիր, էջ 177-179, 131-182:
[49] Սոմարը կազմել է մոտ 0.25հա:
[50] Չվան-երկարության չափ:

7.	10 սոմար հող	15000 դինար	-----	Շահվերդի	1737
8.	10 սոմար հող	5 թուման	-----	Հովհաննես	1738
9.	11 սոմար հող	8 թուման	-----	Մեսրոպ	1739
10.	12 սոմար հող	5 թուման	-----	Վարդան	1739
11.	1 արտի կեսը	3 թուման	Միքայել վարդապետ	Հեղինե	1748
12.	1 արտ	4 թուման պարտքի դիմաց	-------	Հայրապետ	1748
13.	1այգի և այգեստուն	2 թուման	Գրիգոր վրդպ.	Աբրահամ, Ստեփան	1750
14.	18 սոմար արտ	2թուման	-----	Էվրում	1772
15.	6 սոմար արտ	40000 դինար	-----	Ստեփան	1780[51]

1. Վանական-եկեղեցական հողատիրություն

Իր ունեցած առանձնահատկություններով հողատիրության տեսակների մեջ տարբերակվում էր վանական-եկեղեցական հողատիրությունը: Հարկ է նշել, որ թեև Հայաստանը իր երկու մասերով էլ նվաճված էր, այնուհանդերձ եկվոր նվաճողներն չհաջողվեց երկրում արմատավորել իրենց հոգևոր ինստիտուտները: Թեև չկար միասնական հայկական պետականություն և երկիրն էլ դեռ չթոթափած թաթար քոչվորների ասպատակությունների թողած հետքերը, դարձել էր թուրքմենական ցեղերի անվերջ կռիվների թատերաբեմ, հայ եկեղեցին կրկին փորձեց ստանձնել ազգի առաջնորդի իր երբեմնի դերը: Հասկանալի է, որ անհրաժեշտ էր առաջին հերթին պայմաններ ստեղծել վանական-եկեղեցական տնտեսության առաջընթացի համար: Այն սկսվեց հայ աշխարհիկ ավատատերերի նվիրատվություններով: Այս ուղղությամբ անհրաժեշտ է կարևորել այն իրողությունը, որ բնաշխարհի ազատական դասի ներկայացուցիչների նախաձեռնությամբ հայ հոգևոր ինստիտուտներին տրվող և բավական մասսայական բնույթ ստացած նվիրատվությունների փաստերը ստեղծված պայմաններում նվաճողների սոցիալ-տնտեսական քաղաքականության դեմ պայքարի յուրահատուկ ձևեր էին: Նման գործի նախաձեռնողը հանդիսացավ կարա-կոյունլուների արքունիքում մեծ վեզիրի պաշտոնն զբաղեցնող, կարա-Իսկանդարի գլխավոր խորհրդական Ամիր Ռուստամը, որը Օրբելյան իշխանական տան ներկայացուցիչն էր: Դեռ 1431թ., երբ արդեն տեսանելի էր հայոց ընդհանրական Աթոռը էջմիածին տեղափոխելու իրողությունը, Ռուստամ Օրբելյանը Արագածոտն և Նիգ գավառներում իր սեփականությունը հանդիսացող թվով 7 գյուղեր Վաղարշապատ, Աշտարակ, Բաթռինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Քիրաղլու և Մուղնի 540000 դինարով վաճառում է բարձրաստիճան հոգևորական Գրիգոր Մակվեցուն, որն էլ իր հերթին դրանք նվիրում է էջմիածնի վանքին:[52] Նկատի

[51] Կալվածագրեր, էջ 29-71:
[52] Կալվածագրեր, էջ 12-14:

ունենալով այն իրողությունը, որ հայ ավատատերերի կարծիքով եկեղեցու իրավունքների ամրապնդումը կնպաստի հետագայում իրենց իշխանության վերականգնմանը, պետք է ենթադրել, որ տվյալ դեպքում վաճառքը զուտ ձևական էր, քանզի չէր բացառվում, որ նշված գումարը Մակվեցուն տված լիներ հենց Ռուստամ Օրբելյանը:

Էջմիածնի վանական հաստատությունը սեփականատիրության իրավունքով հողերի նվիրման փաստերը առավել լայն չափեր ընդունեցին 17-18-րդ դարերում: 1658 թ. կալվածագրերից մեկում, ուր նկարագրվում է Նորագյուղ և Եղվարդ գյուղերի սեփականության իրավունքի էջմիածնի վանքին նվիրելու պատմությունը, կարդում ենք. «Պատճառ այսր շարիաթի բացատրէ այն, զի բարեպատեհ միջոցի և ի բարէ վայրկեանի ներկայացաւ շարիաթին բարեհամբաւեալն ի քրիստոնէից խոջա Յակովբ որդի Խոջայ Սէթի հայ բնակիչ Երևանայ և ըստ իւրեանց անձնական համաձայնութեան և ցանկութեան անբաւարար թումբք է յոժարակամ նուիրեաց ի վերա հիման կանոնաց շարիատի, վանիցն էջմիածնի զամբողջ գիւղն Նորագէղ յԵրեվանայ նահանգի ու զչորորդ ու կէս մասունս ի վրայ ամբողջ մասեաց գիւղն Եղվարդ ի գաւառին Գառնայ»:[53] Արժանահիշատակ է վրաց Ռուստամ թագավորի Նախեդուռ գյուղը էջմիածնին նվիրելու վերաբերյալ կալվածագիրը: Դա հավաստումն է էջմիածնի հեղինակության բարձրացմանը ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Կալվածագրում մասնավորապես ասվում է. «Կամաւ և օգնականութեամբն աստծոյ մեք թագաւոր թագաւորաց Քարթլայ և Կախեթու երկուց իշխանութեանց իշխող և տիրող տէր և թագաւոր Ռուստամ ... շնորհեցանք այնպէս Նախէդռան մեր արքունի հայրենիքն, որք կային ի Նախեդուռն, վասն երկարակից մեզ լինելոյ, Նուիրեցաք էջմիածնայ»:[54] 1769 թ. մեկ այլ կալվածագիր վկայում է քանաքեռցի ոմն Ջավահիրի ու նրա դուստր Գայանեի կողմից էջմիածնի վանական հաստատությանը հողատարածք նվիրելու մասին. «Զօրութիւն գրոյս այս է. որ ես քանաքեռցի Ջավահիրս և իմ դուստր Գայանէս ... մեր յօժար կամօք և ուղիղ սրտիւ և երկոքեանս ի միմեանցս հաւանութեամբ յիշատակ և վախֆ տվինք մեր մուլքն մեր ինչքն Սուրբ իջման տեղին վասն փրկութեան հոգւոյ և բոլոր ննջեցելոց մերոց»:[55]

Թուրք-իրանական պատերազմի ավարտից հետո, երբ երկրում հաստատվեց համեմատաբար երկարատև խաղաղության մի ժամանակաշրջան, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին էջմիածնի վանական տնտեսության կարգավորման, նրա հետագա զարգացումը ապահովելու ուղղությամբ: Եվ պատահական չէ, որ Եսայի-Հասան Ջալալյանը 17-րդ երկրորդ քառորդը բնութագրում է որպես հայոց աշխարհի և

---

[53] ՀԱԱ, Ֆ.57, ց.1, գ.4, էջ 8:
[54] Կալվածագրեր, էջ 18-19:
[55] Նույն տեղում, էջ, էջ 241:

էջմիածնի նորագման պատմության ժամանակաշրջան[56]: Շնորհիվ Մովսես Տաթևացի, Փիլիպոս Աղբակեցի ու հատկապես Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների կառուցողական ջանքերի, աստիճանաբար կարգավորվում է վանական հաստատության տնտեսական գործունեությունը: Դրվատելով Փիլիպոս Աղբակեցու այդ ուղղությամբ կատարած աշխատանքները՝ Առ. Դավրիժեցին գրում է. «Եւ որքան եկաց կաթուղիկոսն իր վերայ երկրի, թէ ի ժամանակս վարդապետութեան իւրոյ, և թէ ի ժամանակս կաթուղիկոսութեան, անդադար և անխափան արար եւ գործեաց նա արդիւնս ի մէջ ա շխարհի, եւ մանաւանդ բարձրագահ աթոռն սբ. էջմիածնին, սովաւ առաւել հարստացաւ և փարթամեցաւ եկեղեցական անօթով, ոսկւով եւ արծաթով: ... Այլ եւ հոյլք անբան կենդանեաց, ուղտք, եւ չորիք, եւ ջոլիրք մատակ ձիոյ, եւ ջոկք խաշանց եւ անդէոց, այլև եւ արտս, եւ զայգիս եւ բուրաստանս»[57]:

Գոյանում են ֆինանսական միջոցներ, որոնց օգտագործումով հնարավորություն է ստեղծվում ընդարձակելու վանական հաստատության հողատարածությունների չափը: Գնումների ճանապարհով էջմիածնի հողատիրական իրավունքների ընդարձակումը դարձավ կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու գործունեության հիմնական առանցքը: Ստորև ներկայացնում ենք այն գյուղերի ցանկը, որոնց սեփականատիրական իրավունքը գնումների ճանապարհով ձեռք է բերել Հակոբ Ջուղայեցին.

	Գյուղի անունը	Որ մասն է գնվել	Արժեքը	Վաճառողը	Գնման տարեթիվը
1.	Ֆրանկանոց	6 դանգ[58]	9500 դինար[59] 9 թուման	Ալի աղայի որդիները	1655
2.	Քեշիշքենդ	6 ---	2 թուման	Իսմայիլ աղա	1671
3.	Նորք	6 ---	55 թուման	Խոջա Սարգիս	1674
4.	Ամիր	4,5 ---	30 թուման	Քալանթար Սահակ	1664
5.	Մելիք	6 ---	2 թուման	Ոզակուլի	1664
6.	Բաթրինջ	1 ---	16000 դինար	Բայրամ բեկ	1665
7.	Ղարաշոյունլու	6 ---	22 թուման	Խոջա Ծուքիաս	1650

[56] Եսայի -Հասան Ջալալյան, էջ 15:
[57] Առաքել Դավրիժեցի, էջ 263:
[58] Դանգ-Սեփականությունն օտարման ենթարկվելու դեպքում բաժանվում էր 6 հավասար մասերի, որը պարսկական աղբյուրներում կոչվում էր դանգ, իսկ հայկականում հաճախ գործածվում էր ստակ բառը: Մեկ ամբողջական կալվածքը 6 դանգ ֆստակ) էր:
[59] Դինար-Արծաթ դրամի միավոր: 17-րդ դ. 200 դինարը, որ կոչվում էր մեկ աբասի, կշռում էր մոտ 7-9 գրամ մաքուր արծաթ: 10000 դինարը կազմում էր մեկ թուման:

8.	Մանկանոց	6 ---	11000 դինար	Հաբի բեկ	1670
9.	Օշական	1,5 ---	13 թուման	Հանադան կուլի	1655-1676
10.	Քյատուր	6 ---	2 թուման	Ոզա կուլի	1674
11.	Մաստարա	2,5 ---	3 թուման	Ոզա կուլի	1664[60]

Դժվար չէ նկատել, որ որոշ գյուղերի սեփականության իրավունքն համեմատաբար թանկ է վճարվել: Դա բացատրվում է հիմնականում այդ գյուղերի հողերի բերքատվության աստիճանով, նրանց եկամտաբերությամբ: Այդ մասին է վկայում թեկուզև Օշական գյուղի օրինակը, որի 4,5 մասը գնվել է Փիլիպոս Աղբակեցու, իսկ 1,5-ը Հակոբ Ջուղայեցու կողմից.

	Որ մասն է գնվել	արժեքը	վաճառողը	երբ է գնվել	ով է գնել
1.	0.5 դանգ	5 թուման	Սուլթան բեկ	1639	Փիլիպոս Աղբակեցի
2.	1 ---	7---	Բաբա, Բանգալի, Բեկում	1640	---
3.	0.5 ---	6 ---	Հասան, Հուսեյն	1640	---
4.	0.5 ---	5 ---	Իսմայիլ բեկ	1641	---
5.	0.5 ---	6 ---	Սեֆինկուլի բեկ	1642	---
6.	0.5 ---	4 ---	Շահգեյնաբ	1643	---
7.	0.5 ---	6 ---	Մեջլում բեկ	1644	---
8.	0.5 ---	5 ---	Հուսեյն բեկ	1644	---
9.	0.5 ---	5 ---	Խանադար կուլի	1655	Հակոբ Ջուղայեցի
10	0.5 ---	7 ---	Բազազ Բարգահ	1676	---
11	0.5 ---	10 ---	Գասպար	1676	---[61]

Ամենայն հայոց կաթողիկոսների կողմից հողային սեփականության իրավունքի ձեռք բերման գործում փութաջան աշխատանքներ են կատարել նաև Ալեքսանդր Ջուղայեցին. և Աստվածատուր Համադանցին: Այդ ուղղությամբ նրանց կատարած աշխատանքներից է հատկապես Մաստարա գյուղի սեփականատիրական ամբողջացումը, որի վրա ծախսվում է 22 թուման 5000 դինար գումար[62]: Մինչ այդ ձեռք է բերվում նաև Նորագյուղի 6 դանգը 1660 թ., Եղվարդի 4.5 դանգը 1660թ., Բոխենիսի՝ 6 դանգը 1660 թ., Դիպակլուի՝ 6 դանգը 1683 թ.,

[60] Ջամբռ, էջ 109-129: Զաքարիա Քանաքեռցի, 2-րդ հ, էջ 62: Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ, 242, վավ. 2, 204:
[61] Ջամբռ, էջ 108-111: Զաքարիա Քանաքեռցի, հ. 2-րդ, էջ 62:
[62] Նույն տեղում, էջ 115:

Ծոպանիսի 6 դանգը 1687 թ.:[63] Ընդհանուր առ-մամբ մինչև 17-րդ դարի վերջերը էջմիածնի վանական հաստատությունը մասամբ կամ ամբողջովին տիրել է 23 գյուղերի սեփականատիրական իրավունքին, ընդ որում՝ դրանցից 7-ին, ինչպես արդեն նշել ենք, դեռ 1431թ.-ից տիրել է վակֆային իրավունքի պայմանով:

Վակֆայի (աղբյուրներում նաև վախմ) իրավունքի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Սիմեոն Երևանցին: Նկարագրելով Գրիգոր Մակվեցու կողմից էջմիածնի վանքին Վաղարշապատ գյուղի նվիրատվության օրինակը, նա գրում է. «Եւ Գրիգոր կաթուղիկոս գրեցուցանէ ի յերիս Ղապալայոգսն ևս թէ Գրիգոր խալիֆայն առնու զգեօղս զայս վախըֆ տա էջմիածնի Աթոռոյն: Քազի որովհետև յամենայն յազգի օրէն է, զի վախըֆն ոչ վաճառէ և ոչ յետս դառնայ վասն այսորիկ այսպէս գրեցուցանէ, զի մի ոք իշխեսցէ յետոյ վաճառել և գնել»:[64] Հետևապես, վակֆային իրավունքի հիմնական նախապայմանը այն է, որ նվիրված հողը պետք է լինի նվիրողի «հալալ ինչքը», այսինքն ժառանգված կամ հանձագին տիրույթը, հակառակ դեպքում գործարքը օրինական չէր համարվի: Այս տեսակետից հատկանշական է Մաստարա գյուղի օրինակը: Ինչպես տեղեկացնում է Սիմեոն Երևանցին, հիշյալ գյուղի սեփականության 2.5 դանգը 12000 դինարով 1656 թ. ոմն Ոսկանի որդի Թարխանը նախ գնում է, վեր ածում այն իր «հալալ ինչքի» և նոր միայն նվիրում էջմիածնի վանքին:[65] Նույն կերպ 1660 թ. էջմիածնի իրավասությանն է անցնում Կոտայքի գավառի Նորագյուղ համայնքի սեփականության ամբողջական իրավունքը, նույն գավառի Եղվարդ գյուղի սեփականության իրավունքի 4.5 մասը:[66] Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Բոխենիս գյուղի սեփականատիրական իրավունքի ձեռք բերման փաստը: Ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին. «Գեօղս այս ի բնէ անտի ի զգիւղականաց իւրոց վախմ է տուեցեալ սրբոյ Աթոռոյս կամաւ և յօժարութեամբ իւրեանց»:[67] Հետագայում, ինչպես նշում է «Ջամբռ» - ի հեղինակը, գյուղացիները կամ իրենց չունևորության կամ էլ օգտվելով վանքի թուլությունից («յանշքութենէ Աթոռոյս») հրաժարվում են վանքի նկատմամբ որևէ պարտականություն կատարելուց: Եվ միայն կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու հորդորանքներից հետո գյուղի բնակչությունը վճռում է «անդրէն

---

[63] Ջամբռ, էջ 117-129:
[64] Նույն տեղում, էջ 101:
[65] Նույն տեղում, էջ 114-115: Սիմեոն Երևանցու հավաստմամբ, այդ գործարքը օրինական չի համարում ոմն Ռզակուլի, որին հաջողվում է դատարանում հաստատել իր պահանջը: Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին ստիպված էր 1664 թ. նրան վճարել 3 թուման և ետ բերել գյուղի սեփականության իրավունքի 2.5 դանգը:
[66] ՀԱԱ, ֆ. 57, ց.1,գ.4, էջ 8-9, հմմտ. Ջամբռ, էջ 121:
[67] Ջամբռ, էջ 126:

դարձուցանեն զվեց դանկ մուլք գեղջն իւրեանց ի սուրբ Աթոռս»:[68] Կարծում ենք, որ Երևանցին այստեղ առանձին միտումով է շեշտում «ի բնէ անտի» արտահայտությունը: Հավանաբար մենք գործ ունենք դեռևս նոր իր ազատ իրավունքներից զրկված ու արդեն կախյալ դարձած գյուղական համայքնի հետ, այլապես ոչնչով չէր պատճառաբանվում գյուղի բնակչության ընդգրկումը: Եթե ազատ գյուղական համայնքի տարբերիչ գիծը ոչ ազատ գյուղական համայնքներից եղել է բնակչության օգտագործած հողի նկատմամբ սեփականության իրավունքը և ավատատիրոջ հանդեպ պարտավորություններից ազատ լիներ, ապա, հասկանալի է, որ կախյալ համայնքի բնակիչը չի եղել իր օգտագործած հողի սեփականատեր և, բացի պետական հարկերից ու տուրքերից սեփականատիրոջը վճարել է տասանորդ: Ինչպես վկայում է 1661 թ. մի կալվածագիր, Դադի վանքը տարիներ առաջ յուրացրել է Ադրենիս, Ուրցափոր, Քավթարանց, Հաճով, Բորգի և Գոմեր գյուղերի սեփականության իրավունքը և միայնակ տնօրինել այդ գյուղերից եկամուտների ստացման կարգը: Հետագայում, ինչպես տեղեկացնում ենք կալվածագրից, հիշյալ գյուղերի բնակիչները բողոքում են Գանձասարի առաջնորդ Պետրոս կաթողիկոսին առ այն, թե վանքը իրավասու չէ միայնակ տնօրինելու սեփականության իրավունքը, քանի որ իրենք ունեն համապատասխան վավերացված փաստաթղթեր, որոնք վկայում են, որ հիշյալ բնակավայրերում իրենք ևս ունեն ժառանգական սեփականության իրավունք: Համոզվելով վավերագրերի իսկությունում, կաթողիկոսը կրկին վերահաստատում է բնակիչների իրավունքները իրենց ժառանգական սեփականությունների վրա:[69] Արժանահիշատակ է այն իրողությունը, որ դեռ չորս տարի առաջ, ինչպես Բոխենիսի դեպքում էր, հիշյալ գյուղերի սեփակաության իրավունքը ևս վախմ էր արված Դադի վանքին, որի դեմ էլ հաճախ ըմբոստացել են համայնիկները: Կալվածագրում մասնավորապես այս մասին ասվում է. «Որովհետև յայտնեցաւ մեզ, զի յառաջ քան զայս ցյայտնի կալուածս (ագարակք և շինութիւնք) ի յերկրին Ղարապաղայ, ոմանք ի հայոց գիւղացոն նուիրելով մեծի վանիցն Խօթայ տուեալ են զայնս ի վանիցն և ի ժամանակէ անտի և ցայտ յիշեալ կալուածքն իբրև վախֆ եդեալ են ընդ տիրապետութեամբ վարդապետաց և պաշտոնէից վանիցն, այլև այժմ-անձինք ոմանք ի հայոց առանց օրինաւոր պատճառաց հակառակ լուսաւորեալ օրինաց վիշտս հասուցանին հանգիստ կենցաղավարութեան նոցա»[70] Ինչպես դժվար չէ նկատել, կալվածագրում խոսք անգամ չկա այդ գյուղերի նկատմամբ Դադի վանքի սեփականատիրական իրավունքի փաստի ժխտման վերաբերյալ: Դա նշանակում է, որ հիշյալ գյուղերը հանդիսացել են Դադի վանքի գանձագին կալվածքները, որոնցից նա իբրև սե-

---

[68] Նույն տեղում:
[69] ՀԱԱ, Ֆ. 57, ց.1, գ.4, էջ 4:
[70] Նույն տեղում, էջ 1-2:

փականատեր իրավասու էր տասանորդ գանձելու: Ինչ վերաբերում է այդ գյուղերում վանքի կողմից գյուղացիների իրավունքները սեփականելուն, ապա այն վերաբերում է վերջիններիս ոչ թե հողասեփականության ժառանգական իրավունքին, որից զուրկ էին նրանք միչև այդ էլ, այլ նրանց հողօգտագործման ժառանգական իրավունքին, որի պաշտպանության համար էլ պայքարում էին: Ճիշտ է, հողը ավատատիրոջ սեփականությունն էր, և նա կարող էր այն ազատորեն օտարել, սակայն այդ հանգամանքը բնավ էլ չէր բացառում նաև այն, որ նույն կերպ կարող էր վարվել համայնական իր ունեցած հողակտորի հետ միայն այն տարբերությամբ, որ եթե առաջին դեպքում օտարվում էր հողի սեփականության իրավունքը, ապա երկրորդ դեպքում օտարվում էր միայն նրա օգտագործման իրավունքը: Պետք է նշել, որ գյուղացիների կողմից հողերի օտարումը բնավ էլ չէր շոշափում հողասեփականատիրոջ շահերը, քանի որ անկախ այն բանից, թե հողն ով է օգտագործում, սահմանված ռենտան անփոփոխ կերպով պետք է ստանար հողատերը: Ահա թե ինչու վերջինս չէր խոչընդոտում, երբ գյուղացին օտարում էր իր հողը, միաժամանակ, ինչպես վկայում են կալվածագրերը, գյուղացիների կողմից օտարվող հողերը մեծ մասամբ գնում են նույն վայրի սեփականատերերը: Այսպես, 1660 թ. կալվածագրերից մեկում մակվեցի ոմն Դեմուր հայտնում է, որ իր ցանկությամբ ի «փայ մուլքն» երկու թումանով վաճառում է նույն վայրի տասանորդ գանձող Մակվի սբ. Թադևոս Առաքյալի վանքին:[71] Մեկ այլ կալվածագրից տեղեկացնում ենք, որ 1682 թ. ոմն Սուքիաս իր վեց սոմարի տեղ արտը վաճառում է իրենց գյուղի մուլքադար Դարաշամբի սբ. Ստեփանոս Նախավկայի վանքին:[72] Գրելով համայնքի կամ նրա առանձին անդամների օգտագործման տակ գտնվող հողը, ավատատերը այդ հողի նկատմամբ տիրապետման ու տնօրինման իրավունքից զատ ձեռք է բերում և օգտագործման իրավունք: «Զամբռ» - ի ուսումնասիրությունից պարզվում է, որ նման իրավունք էջմիածնի վանքն ուներ Վաղարշապատ գյուղի վրա: Եվ պատահական չէ, որ Սիմեոն Երևանցին այդ գյուղի անունը հիշատակելիս հաճախ այն անվանում է «ի գեօղս մերոյ», «ի կից գեօղս մեր», «ի գեօղիս մերում»,[73] այն դեպքում, երբ նման տերմիններ չի օգտագործում վանքապատկան մյուս գյուղերի վերաբերյալ: Իզուր չի շեշտում Սիմեոն Երևանցին, թե Վաղարշապատի բնակիչները «...ոչ կարեն սերմանել ինչ առանց հրամանի մերոյ, բայց և յայլ արտորայս գեղջս մերոյ՝ որք են գեղականցն, մեք կարեմք սերմանել ըստ պահանջման ժամանակին, եթէ կամիցիք: Քանզի Սրբոյ Աթոռոյս է գեղն այս բոլոր սահմանօքն իւրովք»:[74] Այդ գյուղի նկատմամբ էջ-

---

[71] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 242, վավ.127:
[72] Կալվածագրեր, էջ 33:
[73] Զամբռ, էջ 102-103, 152, 158, 264:
[74] Նույն տեղում, էջ 158:

միածնի վանքն ուներ մեկ այլ արտոնություն ևս: Եթե մնացած գյուղերում ավատատերերը հաճախ չէին արգելում գյուղացիների կողմից անշարժ ունեցվածքի առուծախի գործարքները և կամ էլ դրա համար պարտադիր չէր ստանալ սեփականատիրոջ համաձայնությունը (եթե գործարքը կատարվում էր նույն գյուղի բնակիչների միջև), ապա Վաղարշապատում գյուղացին իրավասու չէր առանց վանքի թողտվության անշարժ կալվածք օտարել: Ահա թե ինչ է հաղորդում այդ մասին Սիմեոն Երևանցին. «Ի զգեօղս Կակոս անուն մարդ մի զայգին իւր ծախեալ էր գեօղիս տառուղայ՝ ի մէնջ ծածուկ, յետոյ ի գիտելն մեր, ճնշելով զծախողն և զառնողն ևս, յետս առաք զայգին ի տաճկէն և դարձուցաք ի Կակօսն և տաճիկն ի գեօղէս և ի տառուղայութենէ հանեալ վարեցաք» :[75]

Աղբյուրների միաբերան վկայությամբ վակֆային իրավունքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նման կալվածքները ազատվում էին պետական հարկերի վճարումից, այսինքն՝ ստանում են մուաֆության (նաև մաշաֆության, թարխանություն) իրավունք: Հայ իրականության մեջ մուաֆության իրավունքի մասին հիշատակություններ կան ավելի վաղ ժամանակներից: Ինչպես վկայում է արծանագրություններից մեկը, 1210 թ. Սարգիս Զաքարյանի Զաքարե որդին Հաղպատի վանքին է նվիրում իր «հայրենիք» Աշոցք և Հալալաշեն գյուղերը. «...ամենայն սահմանաւանք, ոնց բնական եղել է հողով և ջրով, խոտամարգերով, լերամբ և դաշտիւ ազատ և թարխան յամենայն հարկէ»:[76] Երկրորդ տիրակալների համար ևս առանձին դեպքերում մուաֆության իրավունքը դիտվել է որպես իրենց գործունեության նախապայման: Հենց դրա մասին է վկայում կարա - կոյունլու Հասան-Ալիի 1468 թ. հրովարտակը Տաթևի և Վաղադնի վանքերը հարկերից ազատելու, վանքապատկան գյուղերի բահրան նրանց նվիրելու մասին: Հրովարտակում մասնավորապես ասվում է. «Թող հայտնի լինի, որ քրիստոնյաների պարծանք Շմավոն վարդապետը և Ստեփանոս կրոնավորը եկան աշխարհի ապավենի դուռը և խնդրարկու լինելով, արքայական ողորմածությանը ներկայացրին իմ հանգուցյալ նահատակ հոր կողմից նրանց անվամբ շնորհված հրովարտակները այն մասին, որ Տաթևի և Վաղադիի վանքերը, որոնք նրանց պաշտոնատեղին ու բնակավայրերն են եղել, և այդ վանքերի վակֆերին վերաբերով ու նրանց կողմից մշակվող հողերից՝ մալ, իխրազար և ավարիզ չպահանջեն, նրանց և նրանց հետ կապ ունեցող մարդկանց վարելահողերից ու ցանքսերից մալ ու խարազ չվերցնեն»:[77]

Ինչպես տեղեկանում ենք շահ Աբաս 2-րդի 1644 թ., ինչպես նաև Երևանի Քեյխոսրով խանի 1649 թ. էջմիածնի վակֆային իրավունքնե-

---

[75] Նույն տեղում, էջ 169:
[76] Վիմական տարեգիր, էջ 50-51:
[77] ՄՊՀ, պր.1 էջ 47-48:

ը հաստատող հրովարտակներից, Վանքն միայն Վաղարշապատում ուներ թվով տասը տարբեր չափերի առանձին հողակտորներ ու հինգ այգիներ, Օշականում երկու, Ձորագյուղում, Նորքում և Շիրաբադում մեկական այգիներ, որոնցից պետական հարկերի գանձումը արգելված էր:[78] Իհարկե, էջմիածնի վանական տնտեսությունն ուներ հողային այլ տարածքներ ևս, սակայն այն հանգամանքը, որ հիշյալ հրովարտակներում թվարկված են միայն որոշակի քանակի տնտեսական օբյեկտներ, ապացույց է այն բանի, որ մնացածներն իբրև գանձագին մուլք, ապահարկ դառնալու իրավունք չեն ունեցել: Ինչպես նշել ենք, Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության տարիներին էջմիածնի վանքը տիրել է թվով 23 գյուղերի սեփականատիրական իրավունքին, որոնցից 12-ին ամբողջական կամ մասնակի վակֆային իրավունքով, իսկ մնացած 11-ին գանձագին մուլքի իրավունքով: Հետագայում, ծանր պարտքերի տակ ընկնելով կաթողիկոսը մեծահարուստ որոշ անձանց գրավ է դրել վանքապատկան շատ կալվածքներ, որոնք նրա մահից հետո, երբ լրացել է պարտքերի մարման ժամկետը, յուրացվել են պարտատերերի կողմից:[79] Աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ տվյալ դեպքում իբրև գրավ յուրացվել են կաթողիկոսության ոչ թե վակֆային, այլ գանձագին մուլքերը: Հետևապես, այն փաստը, որ 17-րդ դ. վերջին Հակոբ Ջուղայեցու ձեռքով գնած մուլքերը համարյա ամբողջությամբ դուրս են եկել էջմիածնի վանքի տնօրինությունից, վկայում է, որ ի տարբերություն վակֆային կալվածքների այն գանձագին մուլքերը, որոնք իրավական ձևակերպմամբ չէին հաստատված իբրև վակֆ, ենթակա էին ամեն կարգի օտարման, ինչպես նաև նրանց նկատմամբ չէր կիրառվում մուաֆության իրավունքը:

Վակֆային իրավունքի անձեռնմխելիության մասին է խոսում նաև այն փաստը, որ նման իրավունք կալվածքների նկատմամբ ոտնձգություն անողները պատժվում էին պետական իշխանության կողմից, իսկ բռնագրավված վակֆային կալվածքը կրկին վերադարձվում էր նախկին տիրոջը: Այս առումով հատկանշական է Մուղնի գյուղի օրինակը: Ինչպես գիտենք, այդ գյուղը այն յոթից մեկն էր, որ 1431թ. վակֆային իրավունքի պայմանով տրվել էր էջմիածնի վանքին: 329 տարի անց, 1760 թ. Երևանի Հուսեյն-Ալի խանի ոստիկանապետ Իբրահիմ աղան զարտուղի ճանապարհներով սեփականում է գյուղի մուլքը: Եվ միայն 1768 թ. Սիմեոն Երևանցուն հաջողվում է համապատասխան փաստաթղթեր ներկայացնելուց հետո, այդ թվում և 1431թ. հայտնի կալվածագիրը, շարիաթական դատարանի վճռով կրկին ետ բերել խլվածը:[80] Հիշատակության է արժանի նաև Վաղարշապատ գյուղի օրինակը: Ինչպես հայտնի է, Երևանի խանության կազմավորումից հետո, նրա

---

[78] ՄՊՀ, պր. 2 էջ 114-116: Ջամբռ, էջ 138-139:
[79] Ջաքարիա Ագուլեցի, էջ 110,139, հմմտ, Ջամբռ, էջ 106:
[80] Ջամբռ, էջ 118:

կառավարիչ է նշանակվում Ամիրգունա խանը: Վերջինս ի թիվս այլ կալվածքների բռնագրավում է նաև Վաղարշապատ գյուղի սեփականության իրավունքը («զաւթեալ ուտէ զգեօղս մեր», - կարդում ենք «Ջանբռ» -ում): Մի քանի բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես տեղեկացնում է Սիմեոն Երևանցին. «Ժողովեալք ի յԱթոռս գնացեալ արզ առնեն Ամիրկիւնէ խանին, և զԳրիգոր կաթողիկոսի մեծ վախուպնամայ Ղապալայն ևս ցուցանեն, ասելով թէ այս գեղջ զվեց դանկ մուլքն սրբոյ էջմիածնի է ի բնի անտի: Եւ Ամիրկիւնէ խանն ևս վերահասու լեալ իրին սուգութեան, վերադարձուցանէ զվեց դանկ մուլք գեղջս այսմիկ Աթոռոյս, և հաստատուն գիր ևս տայ կնքով թէ այսուհետև ով ոք յազգէ իմմէ և յայլոց իշխեսցէ զմուլքն գեղջս այսմիկ հանել ի յէջմիածնայ, նզովեալ լիցի».[81]

Բնավ, չպետք է կարծել, թե հայ եկեղեցու աթոռանիստ կենտրոնի հողային տարածությունների ամբողջականության ապահովումը միշտ էլ արժանացել է եկվոր տիրողների ուշադրությանը: Հարկավ, մուսուլման տիրակալների պետական քաղաքականությունից իբրև իրավազուրկ հարկատու ժողովուրդ, բազմապատիկ տուժում էր հայ աշխատավորությունը, սակայն հայ եկեղեցու ու հոգևոր դասի վիճակն էլ բնավ մխիթարական չէր: Այդ ակներև է թեկուզ և գեթ այն նկարագրությունից, որ մեզ է թողել ռուսական արքունիքին հասցեագրված նամակի հեղինակ Հակոբ Ջուղայեցին: Շատ փաստեր էլ վկայում են, որ հայ եկեղեցուն հանդիսացող հրովարտակներով տրված խոստումները կյանքում ամենակոպիտ ձևով ոտնահարվում էին: Այս առումով հատկանշական է հենց Բաքրինջ գյուղի օրինակը: Այս գյուղը, ինչպես նշել ենք, դեռ 1431թ. վախմ է արված եղել էջմիածնի վանքին: Հետագայում, ինչպես տեղեկացնում է Սիմեոն Երևանցին. «զկնի ժամանակս ի խառնակմանց երկրիս» գյուղի սեփականության իրավունքը բռնազավթվում է օտարների կողմից: Հակոբ Ջուղայեցու ջանքերը՝ կրկին կաթողիկոսությանը վերադարձնել գյուղի սեփականության իրավունքի վեց ամբողջական մասը, անցնում են ապարդյուն: Եվ միայն 1655 թ. նրան հաջողվում է 10000 դինարով գնել մեկ դանգ մուլքը[82]:

Հարկ է նշել, որ մուաֆության իրավունքը միօրինակ երևույթ չէր: Պետական հարկերից լրիվ ազատված լինելը տալիս էր ամբողջական մուաֆության իրավունք, այսինքն, ինչպես ասվում է «Ջամբռ», - ում «Հայրապետն և միաբանք ոչ տայցեն զկերպիւ իւիք հարկս մարմնաւոր տերանց՝ որպէս տան աշխարհականք: Անդ, այգիք և կալք սորին ոչ չափիցին, անասունք և դրաստքն ոչ ի թիւ արկցին, ջրաղացք և այլք այսպիսիք ոչ գրիցին մուտը և ելք սորին, ոչ տայցեն զմաքս, և ոչ տալ զգլխահարկս, զհնգորդս, տասանորդս, զտնախարճ, զանասնախարճ և

[81] Նույն տեղում, էջ 103:
[82] Նույն տեղում, էջ 125-126:

զմլքախարճ»:[83] Նման իրավունքներ ունեին տեղի մուսուլմանական հոգևոր հաստատու-թյունները, ինչպես նաև էջմիածնի վանքի միաբանությունը: Նույն պայմա-նով էջմիածնի վեհապետության իրավունքները ճանաչվել էին և օսմանյան սուլթանների կողմից: Ինչպես ճիշտ նկատում է Մ. Զուլալյանը. «նկատի ունենալով էջմիածնի ամենայն Հայոց կաթողիկոսների՝ հովվյալների վրա ունեցած դերն ու կշիռը քաղաքական կողմնորոշման խնդրում, սուլթանները նրանց հատկացնում էին հողային տարածություններ»:[83] 1774 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսը սուլթանից ստանում է մի հրովարտակ արտոնագիր, համաձայն որի «Կարգաւորք ազատք են յամէն հարկապահանջութենից», և որ կաթողիկոսը պարտավոր է «վերահասու ի գործել ի վերայ ամէն յիշատակաց վակֆ անուանեալ և այլք մի ծեռնամուխ լինիցեն ի նա»:[84] Հասկանալի է, որ էջմիածնի միաբանությունը աշխատում էր որքան հնարավոր է ընդարձակել իր ապահարկ հողատարածությունների չափը: Եթե 1654 թ. էջմիածնի վանքը ծեռք է բերում հողատարածքի մեկ գութանի սերմի չափով մուաֆության իրավունք, այսինքն մեկ գութանի տեղի բերքից բահրա չտալու արտոնություն («մէկ գութանի վարելոյ չափ տեղ հազիւ կարեմք զսերմն արկանել») ապա 1710 թ. վանքը ստանում է երկու գութանի տեղից բահրա չվճարելու իրավունք («ի ժամանակս Ալեքսանդր կաթողիկոսին Զուղայեցւոյ զերկուս գութանս սկսանի ի կիր արկանել սուրբ Աթոռս») :[85] Եթե Աբրահամ Կրետացին 1735 թ. բահրա չվճարող հողերի քանակը հասցնում է «վաթսուն և վեց խալվարի, որ է վեց հազար վեց հարիւր լիտր Երեւանու», ապա 1763 թ. Սիմեոն Երևանցին այդ թիվը հասցնում է 75 խալվար 25 լիտրի:[86] Մուաֆության իրավունքից օգտվող էջմիածնի վանքապատկան վարելահողերի թվաքանակը միայն Վաղարշապատում 18-րդ դարի երկրորդ կեսին հասնում էր 11-ի, ընդհանուր առմամբ 1500 սոմար տարաշքով:[87]

Մուաֆության երկրորդ տեսակը, բահրայի մասնակի ապահարկությունն էր: Այն որոշվում էր սերմանելիքի որոշակի քանակի շրջանակում, այսինքն, շատ ցանելու համար ավելորդի դիմաց պետք է հնգորդ կամ համարժեք վճարեին: Դա տալիս էր սահմանափակ մուաֆության իրավունք: Եկվոր իշխողները փորձել են էջմիածնին ամեն կերպ պարտադրել մուաֆության հենց այդ իրավունքը. «Իսկ չարն Մահմատ-Ղուլի, որ խան էր երկրիս Երևանու, - գրում է Սիմեոն Երևանցին,- կամեցավ հնգորդ առնուլ ի ցանելոց հասիցն սրբոյ Աթոռոյս»:[88] Երևանի

---

[83] Նույն տեղում, էջ 130:
[83] Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ. էջ 222:
[84] Տես նույն տեղում:
[85] Զամբռ, էջ 131-133:
[86] Նույն տեղում, էջ 135,145,149,151:
[87] Նույն տեղում, էջ 154-155:
[88] Նույն տեղում, էջ 131:

Նաջաֆ-Կուլի խանի նման ոտնձգության դեմ շահ Աբաս 2-րդին բողոքում է Հակոբ Ջուղայեցին, ասելով. «....մէկ գութանի տեղ հազիւ կարենք սերմանել, ի նմանէ ևս կամին զհարկս առնուլ»:[89] Ինչպես վկայում են հետագա իրադարձությունները, նույնիսկ շահական կարգադրությունները ի զորու չէին օգնելու էջմիածնի միաբանությանը: Այն բանից հետո, երբ Ալեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսին հաջողվեց էջմիածնի համար ծեռք բերել «երկու գութանի» սերմանելիքի չափով իրավունք, տեղի իշխողները պատճառաբանելով, թե էջմիածինը ուներ մուաֆության իրավունք միայն մեկ գութանի չափով, կրկին պարտադրում են տնտեսությանը բահրա վճարել: Թեև Սուլթան-Հուսեյնը 1711թ. հատուկ հրովարտակով կարգադրում է չանհանգստացնել էջմիածնին, դրությունը ոչնչով չի փոխվում: Այս անգամ արդեն կաթողիկոս Աստվածատուր Համադանցին նույն խնդրանքով 1723 թ. դիմում է շահ Թահմասպ 2-րդին:[90] Էջմիածինը ստիպված էր չնախատեսվածի համար վճարել: Այդ մասին ուղղակի վկայություն ունի Սիմեոն Երևանցին: Նկարագրելով մուաֆության իրավունք ունեցող հորատարածքները՝ նա այնուհետև գրում է. «Իսկ մնացեալ տեղիքն, որք ի վերդ գրեցան, և ի մէջ ռաղամիցդ ոչ գոն» պարտավոր են հարկվելու: Այդ հողատարածքների չափը միայն Վաղարշապատում հասնում էր 15-ի, 1370 սոմար ընդհանուր չափով:[91]

Մուաֆության երրորդ տեսակին պատկանում էին այն հաստատությունները, որոնք այլ հարկեր վճարելու պարտականությունից ազատված էին, բայց ռենտայի ապահարկության իրավունք չունեին: Նման հաստատությունները, ինչպես նշվում է «Ջամբռ» - ում, գլխահարկի և այլ հարկերի կողմից «մաշաֆ» -են, բայց հնուց սովորություն ուներ տարին 17 թուման 500 դինար արժողությամբ գումար կաթողիկոսի ծեռքով վճարել պետությանը, իսկ ցանքսը՝ որքան ցանեն, ջրաղաց, այգի և այլ այդպիսիք, որքան ունենան նրանց հարկը տալիս են սահմանված կարգի համաձայն:[92] Նման իրավունքը, ինչպես նշում է Սիմեոն Երևանցին, կիրառվում էր «Երևանու յերկրի» թվով 19 վանական հաստատությունների վրա (Խոր-Վիրապ, Աղցվանք, Ամենափրկիչ, Գեղարդ, Սևան, Այրիվանք, Կեչառիս, Կիպչագ, Գետարգել, Բժնի, Կարենիս, Սաղմոսավանք, Մուղնի, Ուշի, Թեղեր, Կոշ, Սաղմոսանք, Հովհաննավանքի անապատներ, Հովհաննավանք) :[93]

---

[89] Նույն տեղում, էջ 132:
[90] Նույն տեղում, էջ 132-133:
[91] Նույն տեղում, էջ 132-155:
[92] Նույն տեղում, էջ 145:
[93] Նույն տեղում, էջ 139-143:

2. Ջրատիրություն

Պատմական փաստաթղթերի վկայությամբ, հողային սեփականատիրական իրավունքն իր մեջ պարփակում էր նաև ջրային իրավունքը, այսինքն մուլք էր համարվում նաև ջրատիրությունը: Ս. Եղիազարովը իր հանրահայտ աշխատությունում գործածելով «եթե ջուր տանելն անհրաժեշտ է, ապա այն կարելի է տանել եկեղեցու միջից» տարածված ասացվածքը փորձում է հիմնավորել, թե ոռոգելի ջրի նկատմամբ մուլքադարը չի ունեցել մասնավոր սեփականատիրական իրավունք, որ իր հողի միջով ջուր անցկացնելու համար հողատերը իրավունք չուներ հատուցում պահանջելու:[94] Համաձայնվելով Ս. Եղիազարովի տեսակետին Լեոն գրում է. «Ջրի ճամփան անտես էր անում և մասնավոր սեփականության իրավունքը» :[95]

Ջրերը օգտագործման տեսակետից բաժանվում էին երկու խմբի. բնական ջրեր և հանած ջրեր: Առաջին խմբին էին պատկանում գետերը, լճերն ու լճակները, աղբյուրները և այլն: Երկրորդ խմբի մեջ էին մտնում ջրհորները, արհեստական առուները, քանքանները և այլն: Այդ երկու խմբերի նկատմամբ տարբեր իրավահարաբերություններ էին ծագում: Եթե բնական հոսող ջրերից անխտիր օգտվելու իրավունք ունեին տվյալ վայրի բոլոր բնակիչները, ապա հանած ջրերը, որոնց ջուրը չէր հասնում ավատատիրոջ հողերի սահմաններից դուրս, ենթարկվում էր նրա բացարձակ տիրապետության իրավունքին: Ինչպես նշում է Հ. Փափազյանը. «Որևէ ջրից ոռոգման նպատակով օգտվելու իրավունքը դիտվել է որպես սեփականություն կամ մուլք և որպես այդպիսին ժառանգվել է սերնդից-սերունդ, կամ ենթարկվել տարբեր կարգի օտարման».[96] Վավերագրերի ուսումնասիրությունից երևում է, որ հողի ու այլ տնտեսական օբյեկտների վաճառման դեպքում պարզվում ու արձանագրվում էին ոչ միայն կալվածքների սահմանները, այլև ջրատիրական իրավունքին վերաբերող մանրամասները: Օրինակ, Երևանցի Խոջա Հակոբը 1658 թ. շարիաթական դատարանով վավերացնում է Եղվարդ գյուղի իր սեփականատիրական իրավունքի 4.5 մասը էջմիածնի վանական տնտեսությանը նվիրելու փաստը.« գետուք, ջրուք և առուք»:[97] Իսկ Ագուլիսի Խոջենց Մեհրաբի որդի Թումանին պատկանող այգու վաճառքին վերաբերող 1670 թ. կալվածագրում ասվում է, որ վաճառվում է ամբողջ մի կտոր խաղողի այգի իր ջրի իրավունքով:[98] Ջրատիրության իրավունքը օտարվում էր ինչպես ամբողջությամբ, այնպես էլ մաս-մաս: 1774թ. կազմված մի կալվածագրում ասվում է. «Ես մահտեսի Ղազարի

---

[94] Егиазаров С., Селсквая община, с.287.

[95] Լեո, հ. 3-րդ, գիրք 1-ին, էջ 86:

[96] Փափազյան Հ., Ջրատիրության մասին դիվանական վավերագրեր, էջ 226:

[97] ՀԱԱ, ֆ. 57, ց.1, գ. 4, էջ 8:

[98] Տես Փափազյան Հ., Այգիներն ու այգետեղերն..., էջ 69:

որդի Աստուածատուրս իմ յօժար կամաւս ծախեցի Մակարի գայրէգեն երկու գլուխ ջուր, և ջրի օրն է ուրբաթ, սբ. Նախավկայի առաջնորդ Գրիգոր վարդապետին ութն հազար դիան փող առի»[99]: Ջրատիրության իրավունքի նկատմամբ ամեն մի բռնարարք ենթակա էր բողոքարկման, որն էլ հաճախ լուծվում է հօգուտ բողոքարկուի: Այս տեսակետից արժանահիշատակ է Նահապետ Եղեսացի կաթողիկոսի կարգադրությունը Կոտայքի գավառի սբ. Ամենափրկիչ վանքի աղբյուրի խնդիրը կարգավորելու մասին, ուր մասնավորապես ասվում է. «Յիսուս Քրիստոսի ծառայ տէր Նահապետ կաթուղիկոսէ ...ահա գրեմ քեզ սակս այս Ամենափրկչի սափաթ յաղբյուրին կողմանէ, որ այլ մարդիք զավթին արել. իսկ այժմս քանի և քալանթարի և մեր մարիֆաթովն հարցայփորձ եղաք, որ այդ յաղբյուրն ի բնէ Ամենափրկչին է ելեալ: Ահա կրկին և վերստին զայդ յաղբյուրն շնորհեցաք Ամենափրկչի առաջնորդ Մովսէս վարդապետին անքակտելի պայմանով: Այսուհետև ոչ ոք իլազայ չունի զայդ յաղբյուրին հետ»[100]:

Աղբյուրների հավաստմամբ, ջրատիրական իրավունքը կիրառվում էր անհատական, ընտանեկան-խմբակային, ներքին համայնական և միջհամայնական ձևերով:

Ջրի անհատական տիրապետության իրավունքի դեպքում առանձին անձնավորություններ, իրենց սեփական միջոցներով կառուցում էին ոռոգման ուղիներ ու միայնակ տնօրինում դրանց շահագործման իրավունքին: Հասկանալի է, որ նման հնարավորություններ կարող էին ունենալ կրկին ազդեցիկ անձնավորությունները, կամ էլ առանձին հոգևոր հաստատություններ:

Ինչպես տեղեկանում ենք «Ջամբռ»-ից, Երևանի Սաֆիկուլի խանը ու նրա կին խաթունը, Մեծամոր գետից անցկացնում են ջրանցքներ, որոնց օգտագործման շնորհիվ էլ ջրարբի տարածքներում կառուցվում են Սեֆիպատ և Խաթունարխ գյուղերը: Ջրի օգտագործման դիմաց հիշյալ գյուղերի բնակիչները պարտավոր էին տասանորդ վճարելու. «Խանս այս և կին սորա,-գրում է Սիմեոն Երևանցին,- մինչ հանին զայս երկուս առուս և զջուր բերեն յայսոսիկ տեղիս, ապա ուխտեն և կանօնագրեն յերկրոջս առաջի ամենեցուն թէ՝ զայսոսիկ ջուրս մեք բերաք, վախմ և խէյրաթ արաք մեզ և մերայնոցն յաւիտեան, զի ով ոք և իցէ՝ թէ յայսց գեօղօրէիցս և թէ յայլ ուստեքէ, թէ ի տաճկաց և թէ ի հայոց, զոր ինչ սերմանեն ընդ բերեալք ջրովի մերովք, զմուլք՝ այս ինքն զտասանորդ մի տայցեն ունեք յայնց սերմանացելոցն»[101]: Նման իրավունք է իրեն վերապահում նաև էջմիածնի վանական հաստատությունը, երբ Փիլիպոս Աղբակեցին «մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ» փոխեց Արագածից սկիզբ առնող ու Ախուրյան գետը

---

[99] Կալվածագրեր, էջ 112:
[100] Կալվածագիր, էջ 113-114:
[101] Ջամբռ, էջ 159:

լցվող («որ յոտար թագաւորութիւն գնայր») Գեղածորի վտակի ընթացքը և ջրանց անցկացրեց մինչև Քասախ գետը, վերջինիս ջուրը ավելացնելով մինչև «ութն ջրաղացի» չափով, որով և «մեծ օգնութիւն եղև երկրիս սերմանցն և արքունական հասիցն»[102]:

Ջրի ընտանեկան-խմբակային օգտագործման դեպքում մի քանի ընտանիքներ միանում էին և իրենց ծախսերով ջրանցք անցկացնելով տնօրինում դրա օգտագործման իրավունքին: Այդ մասին 1676 թ. մի կալվածագրում ասվում է. «Ես Մէլիքի կին Օղլանս և մեք Մէլիքի որդիք Նիկողիոս, Մատաթս, Մկրտիչս, և ես Թաթառի որդի Աւետիկս մեր կամաւս ծախեցինք Ցուլիկենց գահրէզի մին գլուխ ջուրն Միքայէլ վարդապետին վեց հազար դինար նաղտ ապասի առինք»[103]: Ուշագրավ է, որ կալվածագրի վերջում միաժամանակ նշվում է, որ «ոչ ում իլաղաց չկայ, որ մէր հանած գահրեզնայ այս ջուրս հայրենիք չի մնացել»: Ուրեմն, հիշյալ ընտանիքները սեփական միջոցներով անցկացնելով ջրանցք, նախ այն վեր են ածել հայրենիքի, իսկ դրա մեկ բաժինը վաճառելուց հետո, կորցրել են դրա վրա ունեցած սեփականատիրական իրավունքը:

Ջրի համայնական օգտագործումը բացատրվում էր համայնքի ներքին կառուցվածքով, երկրի հասարակարգին բնորոշ սեփականության ձև էր մեծ ընտանիքը և դրա հիման վրա ստեղծած գյուղական համայնքն իր սահմանափակ հողատարածություններով ու համայնական ջրատիրությամբ: Համայնական հողաբաժանության դեպքում, որպես միավոր ընդունում էին 16 շնչից բաղկացած ընտանիքը, որը կոչվում էր «համփա»: Այնուհետև հաշվում էին, թե քանի այդպիսի միավոր կա գյուղում, և վարելահողի ընդհանուր տարածությունը բաժանելով համփաների վրա, որոշում էին մեկ համփային հասնող հողի և ջրի քանակությունը: Բայց, քանի որ համայնքի շնչերի թիվը փոփոխական էր, ուստի բաժանված հողը պարբերաբար ենթարկվում էր վերաբաժանման: Հասկանալի է, որ նման պայմաններում մեծ ընտանիքն ավելի պաշտպանական էր ու տնտեսական ուժեղ, ուստի և նրան էլ բաժին էր հասնում համայնական օգտագործման տակ եղած հողային ֆոնդի մեծագույն մասը: Ջրի համայնական սեփականությունը պայմանավորված էր նրանով, որ ոռոգման ուղիների անցկացումը կատարվում էր համայնքի անդամների սեփական միջոցներով: Ինչպես վկայում է 1722 թ. մի կալվածագիր, Օշական գյուղի համայնքը էջմիածնի վանքին է վաճառել գյուղի առվի 1/3-րդ մասը, իսկ մնացածը թողել է անփոփոխ, քանի, որ ինչպես կալվածագրում է նշվում, հիշյալ առվի կատարած

---

[102] Ջամբռ, էջ 131-132:

[103] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 242, վավ. 93:

աշխատանքի և ծախսի իրավունքը պատկանում է նույն գյուղի բնակիչներին[104]:

Միջհամայնական ջրատիրությունն առաջանում էր այն ժամանակ, երբ ոռոգման ցանցերն անցկացվում էին մեծ կամ փոքր գետերից և սպասարկում էին մի քանի գյուղերի, նույնիսկ շրջանների: Հաճախ նման օրինակ ջրանցքներ անցկացվում էին իշխանության ներկայացուցիչների, էջմիածնի միաբանության կողմից՝ մի քանի համայնքների համատեղ աշխատանքով. «Նախ սկսաւ շինել զրերդն, և ապա ապարանս, և զայգիս, և զբուրաստանս, և զպարտէզս, և հանել զառուս, և առաւելուլ զջուրսն», - Երևանի Ամիրգունա խանի գործունեության մասին հիշատակում է Զաքարիա Քանաքեռցին[105]:

Միջհամայնական ջրատիրությունը միաժամանակ նշանակում էր բնական հոսող ջրերի վրա մի քանի համայնքների ունեցած սեփականության օգտագործման իրավունք: Այդպիսի իրավունք, օրինակ, Քասախ գետի ջրերի կեսի վրա ունեին շրջական մոտ քսան համայնքներ: Ջրի մյուս կեսը պատկանում էր էջմիածնի վանքին: Այդ իրավունքը վավերացված էր շահ Աբաս 2-ի 1650 թ. Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսին տված հատուկ հրովարտակով, որտեղ մասնավորապես ասվում է.«...ջուր Քարծաղ գետոյդ որքան և իցէ յերկուս բաժանիցի հաւասարապէս, մին բաժինն միւս գեղօրէիցն դաշտիդ, և միւս բաժինն էջմիածնի Աթոռոյն և իւր գեղջն լիցի»[106]: Գյուղական համայնքների ու վանքի միաբանության միջև ջրի օգտագործման համար հաճախ վեճեր էին ծագում: Բանն այն է, որ տարվա տարբեր եղանակների սահմանված էր ջրից օգտվելու առանձին կարգ: Գարնան սկզբին և աշնանը, երբ ջրերն առատ էին, իսկ պահանջը քիչ, ջրի հերթականությունը չէր սահմանվում: Ամռանը, երբ ջրի մակարդակը իջնում էր ու մեծանում նրա պահանջարկը, կողմերից յուրաքանչյուրը աշխատում էր ձեռք բերել նախատեսվածից ավելի քանակի ջուր: Այդ գործում հատկապես մեծ ակտիվություն էին ցուցաբերում Օշականի ու Հաջիղարայի բնակիչները: Հաճախ հարկ էր լինում դիմել նույնիսկ պետական օրգանների միջամտությանը. «Այս ի սոյն գեօղիս մերձ (իմա՝ Օշական - Հ.Թ.),- գրում է Սիմեոն Երևանցին, - Հաջիղարայ կոչեցեալ գեօղացիքն ի վերայ մեր ջրոյն գոլով՝ երբեմն ի մեր առուէն զջուրն գողացեալ ի գեօղս իւրեանց տանին: Իսկ Ղազար կաթողիկոսն ճահկեցի արզ առնէ Երևանում խանին, և իբերանց հաճիղարացւոցն գիր առնու տաճկերէն, թէ եթէ անգամ մի ևս ձեռնամուխ լինիմք ի յէջմիածնի ջուրն, տասն և երկու հազար դիան դիւանի տալոյ լինիմք»[107]:

---

[104] Տես Փափազյան Հ., Ջրագիտության մասին դիվանական վավերագրեր, էջ 226:

[105] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 46-47:

[106] Ջամբռ, էջ 192:

[107] Ջամբռ, էջ 195:

Միջհամայնական ջրաւորիրության ու ջրօգտագործման սիստեմին է վերաբերում նաև 1733 թ. հետևյալ վավերագիրը. «Այս գրության պատճառն այն է, որ ներկայումս Ուչքիլիսայի (Էջմիածնի) կաթողիկոս Սարգսի որդի Աբրահամի կողմից շարիաթական կարգով և ընդունված ձևով լիազորված հայրապետի որդի Պետրոս վարդապետ սրբազան շարի նիստում հայտարարությամբ հանդես գալով ասաց. ինձ լիազորող հիշյալ Աբրահամը ցանկացել է կրկին անգամ Ուչքիլիսա (Վաղարշապատ) գյուղի համար Կարասու (Մեծամոր) գետից որոշ քանակությամբ ջուր վերցնել: Սակայն հիշյալ Կարասուի ակունքը նշված Ուչքիլիսա գյուղից 5-ից 6 ժամով հեռու է և նրանց արանքում կան մի քանի գյուղեր: Ուստի ներկայումս նորոգվող առուն վարպետորեն նախատեսմամբ անպայման այդ գյուղերի հողերով պետք է անցնի, ու չմիջամտելով և չարգելելով այդ բանին, հիշյալ գյուղերի բնակիչները կարող են այդ ջրից օգտվել: Այդ հարցը երկրի վալի, հաջի Իբրահիմ փաշայի իմաստուն կարգադրությունն էր ներկայացվել: Եվ նույն գերազանցությունը կարգադրել է, որ նորոգվող Կարասու առվից հոսող ջրի կեսը պիտի պատկանի այն գյուղերին, որոնց հողերով կտրում անցնում է առուն, իսկ մյուս կեսը՝ Ուչքիլիսային: Առ ի գործադրություն այդ որոշմանը, հրամանագիր է հրապարակվել, որին իրենց համաձայնությունը հայտնեցին հիշյալ գյուղերի բնակիչները: Եվ ինձ լիազորող վերոհիշյալ կաթողիկոսը ևս իր հոժարությունը հայտնեց այս կարգադրությանը»[108]:

Այսպիսով, խնդրո առարկա ժամանակաշրջանում հողային իրավունքն իր մեջ պարփակում էր նաև ջրային իրավունքը, այսինքն՝ մուլք էր համարվում նաև ջրատիրությունը: Որպես այսպիսին այն ազատորեն վաճառվում էր, կամ էլ փոխանակվում: Ջրի օտարումը կատարվում էր կամ լիակատար տիրության իրավունքով, կամ մասնակի: Առաջին դեպքում ոռոգվող ջուրը դառնում էր ավատատիրոջ բացարձակ իրավունքի օբյեկտ, երկրորդ դեպքում՝ ջրից օգտվելու իրավունք ունեին նաև մյուսները: Ջրի դերը այնքան մեծ էր, որ առանձին ավատատերերի հողային կարողությունները սահմանվում էին ոչ թե հողի ու կալվածքի չափերով, այլ ջրի քանակի իրավունքով: Եվ քանի որ համայնքի, կամ առանձին ավատատերերի տնտեսական ուժը կախված էր ջրից, ապա ամեն մեկն աշխատում էր անցկացնել առանձին սեփական առու և ապահովել իրեն անհրաժեշտ քանակի ջրով:

---

[108] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 339:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Մուլքը որպես հողային ռենտայի յուրացման տնտեսական ձև

Ավատական հասարակության արտադրական հարաբերությունների հիմքը հողի նկատմամբ ավատատիրոջ սեփականությունն էր: Ավատատիրոջ սեփական տնտեսությունը հողի մասն էր կազմում: Հողի մյուս մասը նա օգտագործելու էր տալիս գյուղացիներին: Ժառանգաբար օգտվելով իր հողաբաժնից գյուղացին պարտավոր էր աշխատել ավատատիրոջ համար, ավատատիրոջը տալու իր աշխատանքի հավելյալ արդյունքը՝ բնամթերային կամ դրամական ձևով: Հետևապես, գյուղացու աշխատաժամանակը բաժանվում էր անհրաժեշտ և հավելյալ ժամանակի, որից անհրաժեշտ ժամանակի ընթացքում նա ստեղծում էր իր սեփական գոյության համար արդյունք, իսկ հավելյալ ժամանակի ընթացքում նա ստեղծում էր այն հավելյալ արդյունքը, որը տրվում էր սեփականատիրոջը: Ավատատիրոջ տնտեսության մեջ աշխատող գյուղացիների հավելյալ աշխատանքը, կամ այն հավելյալ արդյունքը, որ ստեղծում էր գյուղացին իրեն օգտագործման տրված տնտեսությունում, և որը իրացվում էր սեփականատիրոջ կողմից, կազմում էր ավատական հողային ռենտան:

Քննարկվող ժամանակաշրջանում էջմիածնի վանական տնտեսության մեջ մուլք էր կոչվում ոչ միայն հողային սեփականությունը, այլև այդ սեփականությունից օգտվելու իրավունքը, այսինքն՝ ոչ միայն անմիջական օգտագործման տակ գտնվող հողի մասնավոր սեփականությունն էր կոչվում մուլք, այլև այդ սեփականության յուրացման տնտեսական ձևը կամ ռենտան: Պետական և մասնավոր սեփականատիրական հողերում գյուղացին հողի օգտագործման համար սեփականատիրոջը վճարում էր ռենտա: Պետության վճարող հողային ռենտայի մասը կոչվում էր «Բահրաշե և Դիվանի» (դիվանական Բահրա), իսկ ավատատիրոջը հատկացվող մասը՝ «Բահրաշե և Մուլիքանե» (սեփականատիրական Բահրա): Պետությանը վճարվող հողային ռենտայի մասը կազմում էր բնամթերքի 1/5 մասը, իսկ սեփականատիրոջը 1/10-ը: Այդ մասին Սիմեոն Երևանցին վկայում էր հետևյալը. « Զի որպէս է սովորութիւն երկրիս, որք ի յամենայն գեօղօրայս զոր ինչ սերմանեն՝ ի հնգեն մէկ՝ զհնգորդ տան յարքունիս որ Բահրայ անի, ի տասէն մեկ

զտասանորդ մլքատեաուն որ մուլք ասի»:[1] Հետևապես պետությունը և սեփականատիրոջը վճարելիք ռենտան կազմում էր ամբողջ բերքի 1/3-ը, այսինքն՝ 1/5+1/10=1/3: Մուլքի բնորոշումը իր երկրորդական նշանակությամբ Սիմեոն Երևանցին հիշատակում է նաև այլ առիթներով: Այսպես, նկարագրելով այն հանգամանքները, որոնց պայմաններում Վաղարշապատ գյուղի մուլքը անցել է էջմիածնի վանքին, նա գրում է «Արդ այս Գրիգոր կաթողիկոսն որ նստաւ հրամանագրով Ջհան-Շահ թագաւորին Դավրիժու ի ՊՂԲ (1443) թուոջն մերում ի սուրբ Աթոռս էջմիածնի, գնէ զլել դանք, մուլքն զեղջս այսմիկ որ է տասանորդ »:[2] Իսկ Օշական գյուղի վերաբերյալ նա գրում է «Յաշագս յՕշական կոչեցեալ գեղջն, որոյ վեց դանկ մուլքն այսինքն տասանորդն է սրբոյ Աթոռոյս:[3] Մուլքը որպես հողագործ գյուղացիության կողմից պետությանն ու ավատատերերին վճարվող հողային ռենտա հիշատակվում է նաև հարակից այլ աղբյուրներին: Այսպես, Տաթևի վանքի եկամտացանկերը պատկերող ձեռագիրը վերնագրված է «Տաթևու վանքին պահրէքն, որէ մուլքն նախատեսությամբ»:[4] Իսկ նույն վավերագրում Տաշու-Մալդաշ գյուղի տասանորդի վերաբերյալ մասնավորապես ասվում է «Մալդաշու-մուլքն ժ (10) են մեկը տան»:[5] Այսպիսով, մուլքը իր սոցիալ-տնտեսական իմաստով միաժամանակ գյուղացիությունից գանձվող հողային ռենտան է:

Կային գյուղեր, որոնք սեփականատիրոջը վճարում էին կրկնակի մուլք: Նման գյուղերից Սիմեոն Երևանցին հիշատակում է Օշականն ու Ֆրանկանոցը: Ինչպես տեղեկանում ենք («Ջամբռի») ընթերցումից, մինչև 1681թ.-ը էջմիածնի միաբանությանը հաջողվում է ձեռք բերել և վանքի տնօրինմանը հանձնել Օշական գյուղի սեփականության ամբողջական իրավունքը: Մոտ քառասուն տարի օշականցիք վճարում են վանքին մեկ մուլք: Հետագայում, տարրերային աղետների և անբերության պատճառած վնասների հետևանքով չկարողանալով վճարել պետական հարկերը գյուղացիները Աստվածատուր Համադանցի կաթողիկոսից խնդրում են 150 թուման փող՝ պարտավորվելով, որ գումարը ստանալուց հետո վանքին կվճարեն կրկնակի մուլք, այսինքն 2/10-ը «Արդ այժմ այնքան դրամ տուր մեզ և մենք այսուհետև երկու մուլք տացուք քեզ, որ լինի ի հնգեն մեկ և ի տասնեն երկու մուլք»:[6] Ինչպես դժվար չէ նկատել պետական բահրան՝ «Հնգորդը» մնում է անփոփոխ, ավելանում է միայն ազատատիրական բահրան: Նույն պատճառաբանությամբ 1732 թ. Աբրահամ Բ Խոշաբեցի (1730-1734)

---

[1] Ջամբռ, էջ 159:
[2] Նույն տեղում, էջ 100:
[3] Նույն տեղում, էջ 108:
[4] Մատենադարան, Ձեռագիր 1488, էջ 213 բ:
[5] Նույն տեղում:
[6] Ջամբռ, էջ 111,112:

կաթողիկոսին են դիմում նաև Ֆրանկանոց գյուղի բնակիչները. « Եւ յետ այսորիկ ի յաւուրս Աբրահամ կաթուղիկոսին մերոյ Մշեցւոյ և ի յիշխանութեան օսմանցւոց՝ սույն գեօղականքս ի պատահմանէ իմեքէ և կամ ի յաւելի պահանջմանց հարկաց այլազգեաց ի նեղ անկեալ՝ տան յԱթոռս առ Աբրահամ կաթուղիկոսն՝ և խնդրեն զվեց հարիւր Ղուրուշ օսմանցւոց դրամ, որ է ըստ հաշռի երկրիս քառասուն թուման, այսու զայմանաւ, զի բաց ի տասնէն մէկ մլքէն, որ պարտին տալ սրբոյ Աթոռոյս, զմուլք մի ևս տայցեն, որ լիցի ի հնգէն մէկ»:[7] Իրավացի չեն Թ. Ավդալբեկյանն ու Պ. Հարությունյանը, երբ գտնում են, թե հիշյալ հմայնքների բնակիչները երկրորդ մուլք կարող էին վճարել այն անհատին կամ հաստատությանը, որը կտար նրանց իրենց խնդրած գումարը:[8] Նման դեպքում, ինչպես դժվար չէ նկատել, միևնույն սեփականության ամբողջական իրավունքը կկենտրոնանար երկու տարբեր անձնա-վորությունների կամ էլ հաստատությունների ձեռքում: Ճիշտ է, մուլքն իբրև ուներ տրոհման հատկություն, սակայն դա չի նշանակում, թե գյուղի ամբողջական սեփականությունը 1/10-ի չափով ռենտա ստանալու իրավունքով կարող էր մասնատվել: Մուլքն իբրև տասանորդ հանդես է գալիս հողն օգտագործելու դեպքում: Դա նշանակում է, որ որևէ վայրի սեփականության ամբողջությունը այն տնօրինելու և տիրապետելու իրավունքով կենտրոնացված է եղել մեկ անձնավորության ձեռքում ու հենց այդ իրավունքն է, որ տիրոջ ցանկությամբ ազատորեն օտարվել է, այսինքն օտարվել է ոչ թե հողը, այլ հողից կամ ամբողջությամբ, կամ էլ մասնակի ռենտա գանձելու իրավունքը: Տվյալ դեպքում Օշական ու Ֆրանկանոց գյուղերի սեփականության ամբողջական իրավունքը գտնվել է էջմիածնի վանքի տնօրինման տակ, այսինքն, միայն վանքն էր իրավասու այդ համայնքներից ռենտա գանձելու: Այնպես որ, չպետք է կարծել, թե էջմիածնին դիմելը բացատրվում է նրանով, որ Օշական ու Ֆրանկանոց գյուղերի բնակիչները գերադասում էին իբրև մեկ անգամ ծանոթի նրա հետ գործ ունենալ, քան մի պատահական մուլքատիրոջ հետ: Կրկնակի մուլք վճարում էին Տարոնի վանքապատկան որոշ գյուղեր: Արդեն հիշատակված Տարոնի վանքի եկամտացանկերում ասվում է, որ Դաստակերտ ու Ղարաքիլիսա գյուղերը վանքին որպես մուլք վճարում են «Ժ (10) նէն (2) ը»:[9] Պետք է նկատի ունենալ, որ չնայած կրկնակի մուլք վճարելու դեպքում թե՛ առաջին և թե երկրորդ մուլքերը միևնույն անունն ունեին ու միևնույն չափը, այնուհանդերձ նրանց մեջ կար էական տարբերություն: Եթե առաջին մուլքը հանդես գալով իբրև հողն օգտագործելու դիմաց ավատատիրոջը վճարվող ռենտա ուներ մշտական բնույթ, ապա

---

[7] Նույն տեղում, էջ 113:

[8] Ավդալբեկյան Թ., Բահրան և մյուլքը 17-18-րդ դդ: Նաև՝ Арутюнян Л., Освободительное дбижение..., с. 40-41.

[9] Մատենադարան, Ձեռագիր 1488, էջ 214 ա:

երկրորդը, պայմանավորված հիմնականում ավանդավորված դրամագլխի դիմաց կատարվող գանձումներով իբրև երկկողմանի համաձայնության արդյունք, ուներ ժամանակավոր բնույթ: Այդ տեսակետից հատկանշական է հենց նույն Ֆրանկանոց գյուղի օրինակը: Ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, 1760 թ. Երևանի Հուսեյն Ալի-խանը դիմում է կաթողիկոս Հակոբ Շամախեցուն առ այն, որ ինքը կարող է Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններից առանձին հայ ընտանիքներ վերաբնակեցնել դատարկված Ֆրանկանոց գյուղում («Արդ գեօղս այն ի բաւունիլ թագաւորութեանն պարսից և ի վրդովիլն երկրի Երևանու ամայացաւ ի բնակչաց իսպառ որպէս և այլք բազումք»)[10] պայմանով, որ իրեն հատկացվի այդ գյուղի սեփականության երեք դանգ ռենտայի գանձման իրավունքը:

Ստանալով կաթողիկոսի համաձայնությունը, խանը գյուղի տնտեսության վերականգնումից հետո, մոտ ութ տարի միայնակ տնօրինում է գանձվող ռենտայի ամբողջությամբ: Եվ միայն 1768 թ. հենց իրեն Սիմեոն Երևանցուն հաջողվում է մեծ ջանքերի գնով «զերեք դանկ մուլք գեղջս այսորիկ ի յԱթոռս դարձուցանել»:[11] Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսք չկա Ֆրանկանոց գյուղի երբեմնի կրկնակի մուլքը վճարելու պարտականության մասին: Հավանաբար համայնքը մինչ այդ արդեն վճարել էր պարտքը, ուստի և՝ազատվել երկրորդ մուլքը տալու ծանր պարտականությունից: Իսկ այն համայնքները, որոնք սահմանված ժամկետում չէին վճարում պարտքը, վերջնականապես զրկվում էին տվյալ տարածքի հողօգտագործման ժառանգական իրավունքից: Այս առումով հատկանշական է Ալիբեկլու գյուղի օրինակը, որի բնակիչները 1713 թ. ծանր կացության պատճառով էջմիածնի միաբանությունից խնդրում են 14 թուման պարտք պարտավորվելով դրա դիմաց կաթողիկոս Ալեքսանդր Զուղայեցու մոտ գրավ դնել Իմամ-արիւ կոչվող հողատարածքի եկամուտների տնօրինման իրավունքը: Այդ մասին կալվածագրում կարդում ենք «Պտճառ գրոյս այս է. մենք Ալբեկլուի գեղի մեծ և փոքր մէլիքս, քահանայիս և այլ քետխուտայքս, մեք գեղովի մեծ և փոքր ժողովուրդիս մեր կամաւս և մեր յօժարութեամբ մեր Յիմամ ստխի հողերն դրինք գրաւ սուրբ Աթոռոյն էջմիածնայ և նորին սրբազան կաթուղիկոսի մօտն, տասն է չորս թումանի»:[12] Հետագայում գյուղացիները ամեն կերպ փորձում են վերադարձնել հողերը, սակայն չկարողանալով պարտքը վճարել, 1736 թ. վերջնականապես հրաժարվում են դրանից:

Հողից օգտվելու դիմաց ռենտա պարտավոր էին վճարել նաև թիուլային հողերի վրա ապրող գյուղացիները: Երբ գյուղն իր ամբողջ հարկային պարտավորություններով պատասխանատու էր դառնում

---

[10] Զամբռ, էջ 113:
[11] Նույն տեղում:
[12] Կալվածագրեր, էջ 45-46:

միայն այս կամ այն թիուլդարին և այդ վիճակը շարունակվում էր մի քանի տասնյակ, իսկ թիուլդարի մահվանից հետո փոխանցվում նրա ժառանգներից որևէ մեկին, այդ դեպքում ահա թիուլդարի ու նրա հարկատու գյուղացիների միջև ստեղծվում էին հողատիրոջ և հողը վարձակալող գյուղացու փոխհարաբերություններ և ավելի ամուր էին, քան մուլքադարի և նրա գյուղացիների փոխհարաբերությունները: Այս դեպքում արդեն գյուղացին պարտավոր էր թիուլի տիրոջը վճարել իր համախառն բերքի 1/ 3 -ը, այսինքն թիուլը իր մեծությամբ հավասար էր կալվածատիրոջն ու պետությունը վճարվող ռենտայի բաժնի գումարին: Տարբերությունը միայն կայանում էր նրանում, որ կալվածատիրականի դեպքում ռենտան տրոհվում էր երկու մասի 1/10+1/5, ապա այստեղ այն չէր տրոհվում, թեև աղբյուրները միայն մեկ անգամ են շեշտում այլակրոն հոգևոր ներկայացուցչին)տվյալ դեպքում Դավիթ Վաղարշապատեցի կաթողիկոսին) թիուլային իրավունքի պայմանով («զի կերից է զմուտս գեղջն այնմիկ») Իրանի Զղախոռ գավառում մի գյուղի նվիրաբերումը,[13] այնուհանդերձ «Զամբռ»-ի ուսումնասիրումից պարզվում է, որ Վաղարշապատ գյուղին էջմիածնի վանքը տիրել է միաժամանակ թիուլային իրավունքով, այսինքն վանքին է տրված եղել այդ գյուղի պետական հարկերը գանձելու իրավունքը: Դա պարզ երևում է «Զամբռ»-ի հետևյալ նախադասությունից «... այս գյուղիս վեց դանկ մուլքն, մուտախիլն, բայրէն, և այլ հասեն, բոլորովին սրբոյ էջմիածնի են լեալք»:[14]

1. Գյուղացիության սոցիալական դրությունը: էջմիածնի վանքապատկան ճորտերը:

Ավատական հողային ռենտայի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում ունենալու համար հարկավոր է միաժամանակ քննության առնել այդ ռենտան վճարողի սոցիալական դրության հարցերը:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում գյուղերի օտարման մասին վկայող վավերագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանք օտարվում էին իրենց ամբողջ սահմաններով, այն է՝ վարելահողերով, դաշտերով, այգիներով ու ջրերով, կամ, ինչպես վավերագրերն են տեղեկացնում. «այն բանը, ինչ որ շահրիատով գյուղի վրա հաստատված է»: Իսկ ինչ էր կատարվում այդ գյուղերում բնակվող, հողն ու ջուրը օգտագործվող, բուն արտադրապրոցեսը կատարող գյուղացիության հետ, օտարվում էր նա հողի հետ միասին, թե ոչ: Հետևապես, մեր խնդիրն է պարզաբանել օտարվող գյուղերի բնակչու-

---

[13] Առաքել Դավրիժեցի, էջ 217:
[14] Զամբռ, էջ 105:

թյան հողի հետ կապվածության ու ավատաիրոջից կախվածության բնույթը, որը և կորոշի նրա սոցիալական դրությունը:

Պրոբլեմի լուսաբանման ուղղությամբ մասնագետների հայտնած կարծիքները հանգում են հետևյալին. ա) ճորտական հարաբերությունների լրիվ բացառում (Վ. Բարտոլդ, Լեո, Ա. Մարկոսյան, Հ. Փափազյան), բ) ճորտական հարաբերությունների որոշ տարրերի գոյության ընդունում (Հ. Թումանյան, Ա. Եսայան), գ) (ճորտական հարաբերությունների ընդունում (Ի. Պետրուշևսկի):

Անդրադառնալով գյուղացիության դասային կառուցվածքին՝ Լեոն գրում է. «Գյուղական ժողովուրդը անդրկովկասյան խանությունների մեջ բաժանված էր երկու մասի՝ ռահաթ և ռանչբար: Ռահաթ անվանում էին այն գյուղացիներին, որոնք ունեին իրենց սեփական տնտեսությունը, իսկ ռանչբար էին այն գյուղացիները, որոնք տնտեսություն չունեին»: Մահմեդական աշխարհում ճորտություն չկար, և բոլոր գյուղացիները անձնապես ազատ էին:[15]

Նույն հարցի վերաբերյալ երկակի կարծիք է հայտնում Հ. Թումանյանը. «Ճիշտ է, որ Թուրքիայում և Պարսկաստանում պաշտոնապես ճորտություն գոյություն չուներ,- գրում է նա,-սակայն դա բնավ էլ չէր նշանակում, թե գյուղացիներն առանձնապես ազատ էին: Ռահաթի, որպես շահագործվող դասի, սոցիալական դրությունը բնութագրող գծերից մեկն էլ այն էր, որ նա, որպես հարկատու, ամրացված էր տվյալ գյուղին, որ ռահաթի դասին պատկանողները չէին կարող ինքնակամ կերպով թողնել իրենց բնակավայրը և հեռանալ»:[16] Ի. Պետրուշևսկին, փորձելով հիմնավորել ճորտության առկայությունը, սխալմամբ վկայակոչում է Առ. Դավրիժեցուն:[17] Դավրիժեցին նկարագրելով 1618 թ. շահ Աբաս 1-ի կողմից Երևանի ու Գանձակի խանություններից հայ ազգաբնակչության բռնագաղթի ևս մի պատկեր, որ շահի կարգադրությամբ գաղթեցման էր ենթակա միայն եկվոր բնակչությունը. «Զի յորժամ էր թևականն մեր ՌԿԷ (1618) միւսանգամ հրամայեաց վերոյասացեալ թագավորն առաջին Շահաբասն վասն ազգին հայոց արտասահման առնել: Յորոյ հրամանէ եղեալ գնացին նորին իշխանքն բազում զօրօք ի քաղաքն Երևան և ի գաւառս նորա, ի Գեանջայ և ի գաւառս նորա և սկսան քննութիւն և որոնումն առնել ի մէջ ազգին հայոց, թէ որ ոք իցէ բնիկ բնական ի հարց և ի հաւուց տեղական, և որ ոք ոչ, այլ յայլմէ աշխարհէ եկամուտ և ժողովածու զբնիկսն թուշին և զեկամուտցն զամենացուն ջրեցին ի քարտիսի և կացուցին ի վերայ նոցա ցազօրէն հայոց պետս և վերակացուս և անառանեցին զնոսա մելիք, և նոցա յանձնեալ աւանդեցին զամենայն ժողովուրդսն, զի թէ ոք պակասեցի ի գրեալ

---

[15] Լեո, հ. 3-րդ, գ.1, էջ 79:

[16] Թումանյան Հ., Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, էջ 293:

[17] Петрушевски И., Очерки..., с., 250-251.

ժողովրդոցն փախստեամբ կամ այլով կերպիւ, նոքա զտեալ ածցեն ի գումարս ժողովրդոցն, և թէ ոչ գտցեն, ինքեանք լիցին պարտաւորք թագաւորին և արժանիս սպանանելոյ: Արդ այսպիսի օրինակաւ զամենեսեան հանին ի բնակեալ տեղացն, և վարեալ տարան ի Պարսկաստան»:[18] Անդրադառնալով պատմիչի այն վկայությանը, թե գաղթեցման էին ենթակա միայն եկվորները, պետք է ասել հետևյալը. շահ Աբաս 1-ի 1604-1605 թթ. կազմակերպած հայ բնակչության զանգվածային բռնագաղթը տնտեսական հեռուն գնացող նպատակներից բացի, հետապնդում էր նաև ստրատեգիական նպատակներ, որն էր՝ ամայի տարածություններ ստեղծելով արգելել դեպի երկրի խորքը թուրքական ուժերի ներթափանցումը: Սակայն Իրանի տիրակալը, որ երբեք էլ մտադիր չէր թուրքերին զիջելու եկամտաբեր Անդրկովկասյան տիրույթները, շուտով համոզվեց, որ անհրաժեշտ է երկրամասում բնակչության հիմնական մասը կազմող հայ ազգաբնակչության մեջ կայուն հենարան ստեղծել, միաժամանակ տալով նրան որոշ արտոնություններ: Այնուհետև հետևեցին Ամիրգունա խանի արշավանքները Արևմտյան Հայաստան, որի տարբեր շրջաններից հայ ընտանիքներ բռնի տեղափոխվեցին Արևելյան Հայաստան:

1618 թ. բռնագաղթը հենց վերաբերում էր Արևմտյան Հայաստանից տեղահանվածներին, իբրև ոչ տեղաբնակների, բացառությամբ այն ընտանիքների, ովքեր արդեն ստեղծել էին իրենց սեփական տնտեսությունները: Հետևապես, Ի. Պետրուշևսկու փաստարկը նույնիսկ հեռավոր ապացույց չի կարող ծառայել գյուղացիության հողին ամրացված լինելու մասին:

Աղբյուրների միաբերան վկայությամբ, ֆեոդալիզմին հատուկ գյուղացու նկատմամբ կիրառվող արտատնտեսական հարկադրանքը Հայաստանի երկու մասերում էլ հանդես էր գալիս ոչ թե հողին ամրացնելու ճանապարհով, այլ համայնքին կապելու միջոցով: Ինչպես վկայում է վավերագրերից մեկը, 1710թ. Նախիջևանի խանության Դարաշամբ գյուղի համայնքը դիմում է շահ Սուլթան-Հուսեյնին վճիռ կայացնելու խնդրանքով՝ Դարաշամբից Աստապատ տեղափոխված 15 ընտանիքների հարցում, քանի որ վերջնականապես չէր լուծված այդ ընտանիքներից հարկերի գանձման կարգը:[19] Բանն այն էր որ, թեև տեղահանված ընտանիքները ունեին նոր բնակատեղ, հարկերը շարունակում էին վճարել հին բնակավայրի համայնքի հաշվին: Իսկ ըստ մուսուլմանական օրենքի, բնակության վայրը փոխած և մինչև 12 տարի այնտեղ ապրած մուսուլման գյուղացիներին վերադարձնում էին նախկին բնակավայրը, երբ հարկերի գանձման ժամանակ տարաձայնություն էր առաջանում հին և նոր բնակավայրերի համայնքների միջև: Այն հանգամանքը, որ շահի հատուկ կարգադրությամբ հիշյալ 15 ընտանիքները

---

[18] Առաքել Դավրիժեցի, էջ 455-456:

[19] Տե՛ս Папазян А ., Аграрное отношения..., с. 213

պետք է վերադարձվեին իրենց նախկին բնակատեղին, վկայում է, որ այդ օրենքը կիրառվում էր նաև հայ ազգաբնակության նկատմամբ: Այս առումով հատկանշական է Մուղնի գյուղի օրինակը: Ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, այդ գյուղի սեփականության ամբողջական իրավունքը տիրելիս Աղբակեցի կաթողիկոսը նվիրել էր սբ. Գևորգ վանքին: Որոշ ժամանակ անց, գյուղի բնակչությունը վճարվող տասանորդի չափերի կամայական բարձրացման ու պետական հարկերի ծանրության պատճառով մոտ քսան տարի թողնում է իր բնակավայրի սահմանները: Եվ միայն 1768 թ. կաթողիկոս Սիմեոն Երևանցու միջամտությունից հետո գյուղի բնակչությունը կրկին վերադառնում է:[20] Նման երևույթը կիրառվում է նաև Օսմանյան կայսրության տարածքում: Ինչպես երևում է 16-րդ դ. թուրքական կանոնամեներից, դավթարներում գրանցված գյուղացին իրավունք չուներ ինքնակամ լքել իր ապրած տարածքը: «Եվ եթե ռայաթը,- գրված է Էրզրումի կանոնամում,- իր տրամադրության տակ հող ունենալով հանդերձ փախչի, ապա սիփահին (իմա ավատատերը-Հ.Թ.) օրենքով իրավունք ունի նրան ետ դարձնել իր նախկին վայրը: Սակայն մի տեղում տասը տարուց ավել ապրողներին հետ բերելը արգելված է»:[21]

Այս հանգամանքը, ինչպես նկատում է Մ. Զուլալյանը, վկայում է, որ ֆեոդալը Օսմանյան կայսրության մեջ, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի ֆեոդալի, գյուղացու անձի նկատմամբ չուներ իրավական իշխանություն, որովհետև նա հողի տերը չէր, այլ հողը տրված էր նրան ժամանակավոր օգտագործման համար:[22] Փաստերը միաժամանակ վկայում են, որ եթե չէր հաջողվում բնակչությանը կրկին վերադարձնել, ապա այդ բնակատեղիները հիմնականում կցվում էին պետական հողային ֆոնդին: Այդ մեթոդը առավել հաճախ կիրառվում էր Արևմտյան Հայաստանում: Ինչպես վկայում է աղբյուրներից մեկը, 1715 թ. Էրզրումի նահանգում կատարված ստուգումներից պարզվում է, որ «հիշյալ էյալեթի սանջակներից 602 հոգի բացակայում են, մինչդեռ 1517 ավատներ դատարկվել են ռայաթներից, այսինքն՝ անմարդաբնակ են դարձել»:[23] Սուլթանական հրամանը կարգադրում է այս 2119 թիմարները և զեամեթները «վերածել որոշակի մուկատայի ու կցել այն սուլթանական խասսերին»:[24] Ինչպես դժվար չէ նկատել, վերը բերված երկու օրինակներում էլ բողոքարկումները վերաբերվել են ոչ թե գյուղացիների այս կամ այն սեփականատիրոջը պատկանելուն, այլ գանձվող ռենտային: Իսկ դա նշանակում է, որ հողատերը երբեք չէր խառնվում նրանց արտադրական պրոցեսին և առանձին նրանց հետ փոխհարաբերության

---

[20] Զամբռ, էջ 118-119:
[21] «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», էջ 22:
[22] Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., էջ 257:
[23] Տես նույն տեղում, էջ 207:
[24] Տես նույն տեղում:

մեջ չէր մտնում: Նա բոլոր պահանջները ներկայացնում էր համայնքին: Նույն գնով էլ գյուղացին ոչ մի հարաբերություն չէր ունենում հողատիրոջ հետ: Նա ճանաչում էր իր համայնքը և իր պարտականությունները կատարում էր նրա ղեկավարությամբ: Ավատատերը միջամտում էր գյուղացիների գործերին այն դեպքում միայն, երբ վերջիններս ժամանակին չէին կատարում իրենց պարտականությունները, կամ էլ խախտում էին ընդունված կարգ ու կանոնը:

Ինչպես նշել ենք, հողային ռենտան ուներ տրոհման հատկություն, այսինքն՝ այն կարող էր մասնատվել և առանձին բաժիններով կենտրոնանալ տարբեր անձնավորությունների ձեռքում: Իսկ դա նշանակում է, որ տվյալ համայնքը վճարվող ռենտայի առումով կունենար մեկից ավելի սեփականատեր, որը և հենց ճորտությունը բացառող կարևոր պայմաններից մեկն է: Որպես այդպիսին հատկանշական է Բաթրինջ գյուղի օրինակը, երբ 1655 թ. կապվում է վաճառման ակտ առ այն, որ Կարբիի մահալի Բաթրինջ գյուղի մուլքադար ոմն Բեյբութ բեկ գյուղի սեփականության ամբողջական իրավունքի մեկ մասը 1 թուման 600 դինարով վաճառել է էջմիածնի վանքին:[25] Կամ, Ամիրի գյուղի վաճառքի օրինակը, երբ գյուղի սեփականատեր երևանցի խոջա Սեթի որդի քալանթար Սահակը 1660 թ. էջմիածնի վանքին է վաճառում գյուղի սեփականության ամբողջական իրավունքի 4/5-րդ մասը, շարունակելով իր ձեռքում պահել մնացած 1/5-րդ մասը:[26]

Նման դեպքերում ռենտան վճարելիս գյուղերի բնակիչները չէին բաժանվում առանձին խմբերի, որոնցից յուրաքանչյուրը պետք է վճարեր առանձին ավատատիրոջ, այլ բոլորը միասին վճարում էին երկու ավատատերերին էլ ռենտայի նրանց հասանելիք չափը:

Մասնավոր սեփականատիրոջ՝ գյուղացու անձի նկատմամբ իշխանություն ունենալու դեմ վկայում է նաև այն փաստը, որ մուլքադարական գյուղերում գյուղացիները միաժամանակ կախման մեջ էին գտնվում և մուլքադարից և կենտրոնական իշխանության տեղական ներկայացուցիչ՝ թիուլդարից: Գյուղացիները պարտավոր էին իրենց ստեղծած հավելյալ արդյունքի մի մասը տրամադրել հողատիրոջը, որպես հողից օգտվելու վարձ, իսկ մի մասն էլ պետական իշխանության ներկայացուցչին, որին իրավունք էր տրված որպես ռոճիկ յուրացնել տվյալ վայրի պետական հարկը: Ինչպես տեղեկանում ենք 1682 թ. մի վավերագրից, Սիսիանի գավառի Դաստակերտ գյուղը իր մուլքադարին տասանորդ վճարելուց բացի, կենտրոնական իշխանության ներկայացուցիչ Բորչալուի հաքիմին պետք է Բահրա վճարեր 54909 դինար ընդհանուր արժողությամբ գումար:[27]

---

[25] Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 242, վավ. 2ա-բ:
[26] Չամբռ, էջ 124:
[27] Տես Папазян А ., Аграрное отношения..., с. 101-102.

Քննարկելով գյուղացիության սոցիալական դրության, նրա դասային կախվածության հարցերը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք ամբողջությամբ վերցրած միօրինակ տեսք չունեին: Աղբյուրները բացի հողային հարկերից հիշատակում են նաև հարկադիր աշխատանքի ու կոռային պարտավորությունների առկայություն, իհարկե ոչ նրա դասական իմաստով: Խոսքը վերաբերում է Վրաստանի վալիության կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններին: Այս առումով անգնահատելի արժեք ունի «Քյոթոկ Սանահնի վանց» անունը կրող ձեռագիրը, որում կան արժեքավոր շատ վկայություններ ճորտերի, նրանց տնտեսության, հողատերերի հետ ունեցած նրանց փոխհարաբերությունների մասին և այլն: Արժանահիշատակ է նաև «Ջամբռ»-ի այն հատվածը, որում տեղեկացվում է բուն Վրաստանում էջմիածնի վանական տնտեսության ունեցած ճորտերի, նրանց զբաղմունքի, էջմիածնի հետ ունեցած փոխհարաբերությունների մասին և այլն:

Ընդունելով ճորտությունը մերժող հեղինակների տեսակետները հարկ է որոշ բացատրություններ տալ հիշյալ աղբյուրներում հաճախակի գործածվող ճորտ հասկացության մասին: «Ջամբռ»-ում կարդում ենք. «Ի քաղաքն Թիֆլիզ Աստուածատուր կաթուղիկոսն Համատանցի զԽախուտի որդի Յաթոռինն գնէ ի ճորտութիւն սրբոյ Աթոռոյն որդւովքն և բոլոր ընտանիքներն ի ՌՃԿԴ (1715)թուոջն մերում: Դարձեալ նույն Աստվածատուր կաթողիկոսն գնէ ի նույն քաղաքն ի Թումանենց ազգէն զՅակոբի որդի Պապէն, զնորին որդիսն՝ զՅակովբն և զՄամուլօն բոլոր ընտանեօքն՝ ի ճորտութիւն սրբոց Աթոռոյն ՌԾՀ (1721)թուին մերում»:[28]

Բնականաբար, հարց է ծագում, ինչու ճորտ չեն անվանված էջմիածնի վանքապատկան Վաղարշապատ և մնացած գյուղերի բնակիչները: Ինչպես երևում է «Ջամբռ»-ի ուսումնասիրությունից, Սիմեոն Երևանցին բացառապես Վրաստանի օրինակով է օգտագործում ճորտ հասկացությունը: Դա հետևանք էր այն հասարակական հարաբերությունների, որոնք հաստատվել էին Վրաստանում դեռևս առաջին Բագրատունիների օրոք և առավել կատարելագործման հասել հետագա դարերում:[29] Աղբյուրների վկայությամբ կատարվել է ճորտերի օտարում ոչ միայն անհատապես, այլև ամբողջ գյուղերով: Այսպես, ի պատիվ Հակոբ Ջուղայեցու Վրաստան կատարած այցելության, Կախեթի Թեյմուրազ խանը կաթողիկոսին է նվիրում Թասմալուր գյուղը «ամենայն այգեստանեօքն՝ զրօքն և ամենայն պարագայիւքն ի ծառայութիւն սրբոյ Աթոռոյն»:[30] Իսկ 1664 թ. նույն կաթողիկոսի Սանահնի վանք կատարած այցելության մասին պատմող ձեռագրում ասվում է «...վասն

---

[28] Ջամբռ, էջ 209:

[29] Пурнделадзе Д., Грузинские крестьянские грамоты, крепостные и судебные акти.

[30] Ջամբռ, էջ 207:

ուխտանելոց վանորէից եկաք Սանահնոյ վանքն, Արդութեցոց ջամիաթն ամենեքեան իտեանց բերանով իշրար արին ինձ մավտ, թէ մեր յօժար կամօք Ռռնակա շինականքն իտեանձ հողովն, ջրովն ծախեցինք Սարգիս Եպիսկոպոսին»:[31] Ճիշտ է, պարտադիր աշխատավճարումների, կամ կոռային աշխատանքի չափերի մասին աղբյուրներում ուղղակի վկայություններ չկան, սակայն կան անուղղակի տեղեկություններ, որոնք հավաստում են Սանահնի վանական տնտեսությունում գյուղացիների նկատմամբ կիրառվող արտատնտեսական հակադրանքի մասին: Այսպես, վերը հիշատակված ձեռագրի էջերից մեկը տեղեկացնում է, որ երբ առանձին անձնավորությունների ու վանքի միաբանության միջև կատարվում է ճորտերի վաճառք, առաջինները հավաստիացնում են, որ վանքին վաճառված Ռռնակ գյուղի ճորտերի նկատմամբ իրենք այլևս «ոչ խարճի, ոչ կոռի բան չունին»:[32] Ուրեմն Սանահինի վանքն էր արդեն իրավասու վաճառված ճորտերից գանձելու թե հողային հարկը և թե աշխատավճարային ռենտան: Հարկ է նշել, որ ճորտ տերմինը որպես գյուղացիության ու ավատատերերի միջև եղած հարաբերությունները արտահայտող, որպես գյուղացու կախվածությունը բնորոշ տերմին, լայն հասկացություն ունի: Եթե ճորտությունը իր դասական իմաստով հասկացվում է գյուղացու ամրացումը հողին, որով նա կորցնում է անձնական ազատությունը և ամբողջապես կախյալ վիճակում դրվում ավատատիրոջից, ապա ոչ դասական իմաստով թեև գյուղացին կապված էր այն պարտավորությունների հետ, որ պետք է կատարեր հողատիրոջ ու պետության հանդեպ, այնուամենայնիվ հողատերը անմիջական իշխանություն չուներ գյուղացու անձի վրա, ուստի և չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ուներ և սեփականտնտեսություն էր, իրավունքներով հավասազոր էր 10-11-րդ դդ. հայ իրականության մեջ լայն տարածում ստացած ծառա-աղախին-սպասավորների դասին: Հատկանշական է, որ դեռևս վաղ միջնադարից գործածված «ի հարկի ծառայութիւ»,«ընդ հարկոք ծառայութիւն», «ի սպասու ծատայութիւն» իսկատիննը գործածվում են նաև 18-րդ դարում: Եվ պատահական չէ, որ Սիմեոն Երևանցին էջմիածնի վանքի՝ Վրաստանում ունեցած ճորտերին անվանում է «հարկատու ծառայք սրբո Աթոռոյ»[33]: Ուշադրություն դարձնելով էջմիածնի վանքի Վրաստանում ունեցած ճորտերի սոցիալական կազմին, նկատում ենք, որ դրանք հիմնականում արհեստավորներ ու մանր առևտրականներ են. «Այլ և են ճորտք սրբոյ Աթոռոյս ղալայծի Պաղտասարն, դաբաղ մահտեսի Դաւթի որդի Յովհաննէսն, խելթուփնեցի տէր Դաւիթն, խելթափնեցի Աւթանդիլն և իւր որդի Աբրահամ, Բախալ Լալու որդի Յովհաննեսն և Մկրտումն, պասմաճի

[31] Մատենադարան, Ձեռագիր 3031, էջ 407-408:
[32] Նույն տեղում, էջ 407:
[33] Ջամբռ, էջ 209:

Ասլանի որդի Գրիգորն, գիւրջի Մարգարի որդի Յովհաննէսն, թեղպազ Ասլանի թոռ Պապէն, ծկանցի Աւթանդիլի որդիք Դաւիթն և Յարութիւնն, Ղալայճի Յարութիւնն, Երևանցի Աւաջի որդի դաբաղ Յարութիւնն, Ճաշկեցի Աշաջանն, Դիլաջանցի տէր Սարգիս որդիք Մելքսն և Պաղտասարն, Ղատաիվեցի դաբաղ Մարգարն, Երևանցի պազազ Գաբրիէլն,[34]: Դժվար չէ նկատել, որ թվարկվածները որոշակի կարողությունների տեր են եղել, այսինքն ունեցել են գույքային սեփականության իրավունք, որը ժառանգաբար փոխանցել են որդիներին: Արժանահիշատակ է նաև այն, որ ճորտերի թվում հիշատակվում է նաև հոգևորականի խելէուփնեցի տեր Դավիթը: Մեկ այլ աղբյուրի տեղեկություններից պարզվում է, որ էջմիածնի ճորտերից պղնձագործ պարոն, Ենոքը և իր որդին Ստեփանը, էջմիածնի վանքին որպես «աղջամբուլ» 1793 թ. նվիրել են վեց ոսկյա և մեկ արծաթյա գավաթ:[35] «Պարոն» տերմինով է մեծարվում նաև ճորտ Աստվածատուրը:[36] Կասկած լինել չի կարող, որ «պարոն» տիտղոսով մեծարվող անձնավորությունները առանձնանում են մնացած ճորտերից իրենց կարողություններով ու հեղինակության աստիճանով: Սիմեոն Երևանցու հիշատակարանից միաժամանակ պարզ է դառնում այն հիմնական պարտավորությունները, որ կատարում էին էջմիածնի ճորտերը: Թիֆլիսում էջմիածնի միաբանության գործակալ տեր Ղազարին ուղղված կաթողիկոսի հանձնարարականում ասվում է, որ վերջինս պարտավոր է «վերահասու լինել ամենայն ճորտից սրբոյ Աթոռոյս, և զամենայն հոգևոր և զմարմնավոր հասս և իրաւունս նորից, նաև զմաքսն առևտրոց նորից առնուլ լիապէս և ի ձեռն առաջնորդին և սուրբ Աթոռոս հասուցանել»:[37]

Ինչպես վկայում են մատենագիտական աղբյուրները, ծառաաղախին-սպասավորների դասին պատկանողները ի սկզբանե իրավունք ունեին փրկագին վճարելուց հետո ազատել ոչ միայն իրենց, այլև իրենց ընտանիքի անդամներին. « Ապա թէ տէր իւր տացէ նմա կին և ծնանիցի նմա որդիս և դատերս, կինն և որդիքն տեառնե նորա եղիցին և նա միայն ելցէ. փրկանօք ելցեն և նոքա»,-կարդում ենք Մխիթար Գոշի դատաստանագրքում:[38] Բնականաբար հարց է առաջանում, ինչու այդ դեպքում էջմիածնի հատկապես «պարոն» ճորտերը չեն ձգտել փրկագնվել: Ինչպես երևում է աղբյուրների ուսումնասիրությունից էջմիածնի վանքին ճորտ լինելու հանգամանքը նրանց համար հուսալի պատնեշ էր առևտրական ու արվեստագործական լայն տարածքներ կիրառելու գործում: Դա նրանց հնարավորություն էր տալիս նույնիսկ արտոնյալ իրավունք ձեռք բերելու հարկային պարտավորությունների

---

[34] Նույն տեղում:
[35] Տե՛ս Арутюнян Б. Крупное монастырское хозяйство..., с. 96.
[36] Նույն տեղում:
[37] Դիւան հայոց պատմութեան, գ. ԺԱ, էջ 273:
[38] Նույն տեղում:

բնագավառում: Նույն Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում այդ մասին կարդում ենք. «Եւ զի չէր անդ (ի Թիֆլիզ) սովորութիւն քաղաքացւոցն կամ այլոց՝ առնուլ հարկ կամ մաքս ի մեր ճորտիցն, այլ սուրբ Աթոռս առնոյր, միայն սակաւ մի տուրս ասէին տալ նոցա ի վաղուց, այսու կանոնաւ, զի թէ քաղաքացիք հարիւր թուման տային, մեր ճորտին եռ)5000) դիան տային»:[39] Հետագայում էլ, նկատի ունենալով ճորտերի գործունեության խիստ եկամտաբերությունը Մայր Աթոռի համար, թե՛ Սիմոն Երևանցի և թե՛ նրան հաջորդած Ղուկաս Կարնեցին նորանոր արտոնություններ են հատկացնում նրանց:

1. Հողային ռենտայի արտահայտման տեսակները

Ինչպես հայտնի է ավատական հողային ռենտան իր զարգացման ընթացքում անցել է երեք փուլ՝ բնավճար, աշխատավճար և դրամական: Հողային ռենտայի հիշյալ երեք տեսակներն էլ գոյություն են ունեցել միջնադարյան Հայաստանում և արտացոլել են գյուղացիության շահագործման ձևերն ու աստիճանը: Սակայն, չպետք է կարծել, թե ռենտայի տեսակները Հայաստանում հանդես են եկել իրենց զուտ տեսքով: Ճիշտ է, ֆեոդալական արտադրաեղանակի էությունը բոլոր երկրներում էլ դրսևորվում է այդ հասարակարգի դասակարգային հարաբերությունների ձևով, սակայն դա չի խանգարում, որ այդ հարաբերությունները տարբեր երկրներում, տարբեր հանգամանքների ու պայմանների հետևանքով ունենան որոշակի առանձնահատուկ ձևեր, դրսևորվեն տարբեր աստիճաններով:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում ինչպես Հայաստանում ամբողջությամբ վերցրած, այնպես էլ Էջմիածնի վանական տնտեսությունում տակավին գերիշխող էր հողային ռենտայի բնարարքային ձև: Դրա պատճառն այն էր, որ ավատատիրական տնտեսությունները հիմնականում վանական-եկեղեցական էին, փակ նատուրալ տնտեսությամբ, ուր գյուղական համայնքներից ավելի շատ ռենտան վերցնում էին բնեղեն տեսքով:

Ճիշտ է, բնավճար ռենտան գյուղացիներից գանձվել է զանազան անուններով ու տարբեր չափերով, այնուհանդերձ, ինչպիսի չափերով էլ նա դրսևորվի և ինչ անուն էլ կրի, նրա ժամանակ հատկանիշն այն է, որ գյուղացին հողատիրոջը վճարում է այն բնեղեն նյութից, որը ինքն է արտադրում, լինի դա հացահատիկային, թե տեխնիկական, բանջարաբոստանային ու այգեգործական կուլտուրաներ, թե անասնապահական մթերքներ: Այդ մասին, ինչպես արդեն նշել ենք, ուղղակի վկայություն ունի Սիմեոն Երևանցին. «Զի որպես է սովորութիւն երկրիս,- գրում

[39] Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց, ի Վաղարշապատ, 1880, էջ 335:

է նա,- որք ի յամենայն գեօղորայս զոր ինչ սերմանեն ի հնգէն մեկ զինգորդ տան յարքունիս, որ բահրայ ասի, և ի տասնէն մեկ զտասանորդ տան մլքատեսուն որ մուլք ասի»:[40] Համաձայն 1692 թ. Տաթևի վանքի եկամտացանկերը պատկերող վավերագրերի տեղեկության Տաթև գյուղի համայնքը պարտավոր էր վճարել 24բեռ (1բեռը=շուրջ 10-0-120կգ.) ցորեն, 4լիտր (1լիտրը=Երևանում 4.8կգ, Նախիջևանում 3.5կգ, Իրանում 7կգ) մեղր, Ավարի գյուղը 15 բեռ 3 մարզան (1մարզանը=35-40կգ) ցորեն, Աշանց գյուղը 9բեռ 1 մարզան ցորեն, Տանձատափը 6 բեռ 5 մարզան ցորեն, Շնհերը 25բեռ ցորեն, 3 լիտր մեղր, 6 արզան հոն և ընկույզ, Հալիձորը 8բեռ 5մարզան ցորեն, 1լիտր մեղր, 3.5 մարզան հոն և ընկույզ, Բնունիքը 24բեռ ցորեն:[41] Այդ պարտավորությունները, որ ձեռագրում վերնագրված են «հուլավար, անունով ոչ թե հարկեր էին, այլ ավատատիրոջ սեփականությունը հանդիսացող հողի վրա աշխատող, այդ հողը օգտագործող գյուղացու ստեղծած հավելյալ աշխատանքն էր, որը և ստանում էր ավատատերը բնեղեն տեսքով: Այդ մասին ուղղակի վկայում է ձեռագրի վերնագիրը. «Հուլավարն գիւղօրէից տասանորդքն այսք են»: Ավատական հողային սեփականության գոյության պայմաններում գյուղացին սեփականատիրոջը հարկ չի վճարում, քանի որ հարկը որպես տնտեսական կատեգորիա բացառապես առնչվել է պետության հետ: Հետևապես «Հուլավարը» տասանորդի ձևով գանձվող հողային ռենտա էր կամ մուլքը: Ռենտայի չափը կողմերի պայմանավորվածության համաձայն կարող էր տարբեր լինել: Այդ ձևը կիրառվում էր հիմնական կապալավարձով կատարվող գործարքներում: Այդ մասին է վկայում 1735 թ. հետևյալ կապալագիրը. «Կամաւն աստծոյ և ողորմութեամբն նորին, որ ես թուխուրգանցի տէր Գրիգորի որդի Մինասս սուրբ էջմիածնայ այգին իզարայ (կապալավարձ) արի սուրբ էջմիածնայ միաբան Սարգիս վարդապետիցն մինչև Ժ (10) տարին տարէնն ԴՃՈ (450)լիտր չոր չամիչ տամ անխօսք յայգին բար տայ և թէ չտայ, տարէց տարի ով որ ղապգն (ստացական) բերէ սուրբ էջմիածնայ թուխուրգան այգու իջարէն տամ իրեն»:[42]

Հարկ է նշել, որ կապալավարձով ռենտայի գանձումը քիչ կիրառելի էր, քանի որ չէր բացառվում երկկողմանի դժգոհությունները: Եվ պատահական չէ, որ 1648 թ. շարիթական դատարանում հաստատված կալվածագրում երևանցի խոջա Հակոբը Հովհաննավանք գյուղում ունեցած իր հողային տարածությունները տեղի սբ. Կարապետ վանքին նվիրելիս պարտավորեցնում է, որ «ոչ մինը չվաճառին և ոչ էլ կապալաս տան երևար միջոցաւ»:[43] Չէր բացառվում, որ կողմերի համաձայնությամբ եկամուտների տնօրինումը (տասնորդը առանձին-առան-

---

[40] Դիւան հայոց պատմութեան, գ. ԺԱ. էջ 273:
[41] Ջամբռ, էջ 159:
[42] Մատենադարան, Ձեռագիր 1488, էջ 213-214ա:
[43] Կալվածագրեր, էջ 80:

ծին) կարող էր հավասար չափով կիսվել: Այդ կարգը գործածվում էր հիմնականում անմշակ հողերի վարձակալության դեպքում, երբ վարձակալողը պարտավորվում էր իր միջոցներով տարածքը մշակելի դարձնել: Այդ մասին է վկայում հետևյալ կալվածագիրը.«Դիտումն գրոյս այս է, որ եղէ ի ՌՄԿԷ (1798) թվին, որ ես՝ յաշտարակցի դալլուք Վարդազարի որդի Յօսէփս իմ յօժար կամաւս յանձս առի այս խամ տեղն, որ է կողեցեալ Սաղմոսավանքից այգւոյ տեղ, որ շինեմ նորտունկ յայգի, որ ժամանակն որ մասիլ տայ կատարեալ, այն ժամանակն ի սուրբ Աթոռն մեր էջմիածնայ հետ կես բաժին անեմք կէսն իմն լինի, Յօսէփ կողեցեալիս և կէսն սուրբ Աթոռոյն էջմիածնայ»:[44] Կիսրարության սկզբունքով եկամուտների տնօրինման կարգը գործածական էր նաև Արևմտյան Հայաստանում: Ինչպես տեղեկանում ենք 1633 թ. մի կալվածագրից. «Խարբերդի ենթական Կեսրիկ գյուղի բնակիչներից Վարդանը, որդին ու եղբոր տղան՝ Սեմիկը և Մուշեղը և Դավթի որդի Կոկիսը շարիաթական դատարանում Խարբերդի Կասամբայի բնակիչներից էլիազ Ջաֆերի որդի Հասան Չելեբուց վերցրել են երեք հարյուր ռիալի ղուրուշ ու փոխարենը նրա համար դարձ մարաբաներ ցանքսի ենթակա գարու ու ցորենի կեսը հիշյալին է պատկանում, իսկ մյուս կեսը իրենցն է, իրենց մուլք հողերում ինչ որ մշակենք, բերքի ժամանակ տասնորդ տալուց հետո, կես առ կես սկզբունքով բերքը պիտի բաժանենք»:[45] Թեև քննարկվող ժամանակաշրջանում ավատական հողային ռենտայի տիրապետող ձևը բնավճարայինն էր, դրա կողքին գոյություն է ունեցել և աշխատավճարային ռենտա: Աշխատավճարումների կամ կուռային աշխատանքի չափերի մասին կան որոշակի մատենագրական տեղեկություններ: Դրան ցույց են տալիս, որ աշխատավճար ռենտան բացառապես պարտադիր աշխատանքային պարտավորություն էր, որ իշխողների կողմից դրվում էր գյուղացիների վրա՝ պետության կարիքների համար զանազան տիպի կառուցումներ կատարելու պայմանով:

Օրինակ, Զաքարիա Քանաքեռցին տեղեկացնում է, որ Երևանի Ամիրգունա խանը իր ղեկավարության տարիներին (1605-1625 թթ.) «ձեռն էարկ շինութեան և մարդաշատութեան»: «Այլև ի տեղիս-տեղիս թեթևացուց զհարկն և եբարց զծանր լուծ ի պարանոցէ ռամկաց: Բայց զի բազմացույց զսուխրայն, այսինքն կռուն»:[46] Բերված վկայությունից չպետք է կարծել, թե խանն իրոք թեթևացրել է հարկերը: Նա պարզապես իրեն հանձնված կուսակալությունում աշխատավոր բնակչության թվաքանակի ավելացման նպատակով նախաձեռնություն է ցուցաբերել, որի հետևանքով Հայաստանի տարբեր շրջաններից հարյուրավոր հայ ընտանիքներ տեղափոխվեցին մշտական բնակության Երևանի

---

[44] ՀԱԱ, ֆ. 57, ց.1, գ. 7, էջ 31:
[45] Կալվածագրեր, էջ 100:
[46] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 45-46:

խանություն: Փաստերը միաժամանակ վկայում են, որ նվաճողները որոշակի նկատառումներից ելնելով, այլ հարկերի հետ միասին հրաժարվել են մի քանի օրվա տևողությամբ մշտական դարձած պարհակային աշխատանքներից: Դա արվել է հիմնականում անհնազանդ շրջաններում, ուր զավթիչները ձգտել են կանխել բնակչության դիմադրությունը: Այսպես, 1725 թ. երբ թուրքական բանակը Երևանի բերդը գրավելուց հետո պատրաստվում էր ճնշելու Արցախի ու Սյունիքի հայության դիմադրությունը, արքունիք ուղարկված պաշտոնական զեկուցագրում ասվում է. «Երևանի ենթակա վայրերից Զարուզբիլի (ՀՀ Վարդենիսի շրջան) նահիան նախապես սանջանքի իրավունքով տրված է եղել Օմար փաշային: Սակայն, երբ աստծո կամքով պատուհասի ենթարկվեց, ռայաթները սարսափի ներքո միացան Աշնախի անհավատներին ու թեև հետո նորից հնազանդելու ցանկություն ունեցան, սակայն քանի որ նրանց խրտշումն ու կատաղությունը դեռ չի անցել առայժմ նպատակահարմար է դիտվել նրանցից պահանջվող ուշուրն (ռայաթներից գանձվող հողային ռենտան բնեղենի 1/10-ի չափով)ու ռեմսը (այսպես էր կոչվում տարվա ընթացքում մի քանի օրվա տևողությամբ գյուղացու պարհակային աշխատանքը) անտես առնել»:[47]

Գյուղացու պարտադիր աշխատանքի կապակցությամբ հաճախ կատարվել է մարդահամար, ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվել գյուղացիներից առողջներին ընտրելու վրա: Այդ մասին ընդարձակ վկայություն ունի Զաքարիա Քանաքեռցին: «Երբ մի անգամ,- հայտնում է պատմագիրը,- մարդահամար կատարող Ասլան աղան եկել է Քանաքեռ, նրան է ներկայացել նաև իր հայր Մկրտիչը շալակին ունենալով կաղ Զաքարիային: Երբ Ասլան աղան տեսել է նրան փոքր, կաղ ոտքերով, բարկացել է ու ասել առողջ ոտքերիդ պահել ես ու անդամալույծին ես բերել»:

Եվ հրամայել է երեսի վրա վայր գցել նրան, ջրառողող անել և գլխին ու ոտքերին մեկական մարդ նստեցնելով այնքան ծեծել, մինչև նա անշնչացել է:[48]

Ինչ վերաբերում է գյուղացու կողմից կատարած կոռային աշխատանքի չափին, ապա այն կախված էր գյուղատնտեսական արտադրության զարգացման մակարդակից, նրա տեխնիկական պատվանդանից, ինչպես նաև գյուղացու աշխատանքի արտադրողականության աստիճանից: Երբ նկատի ունենանք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում տարածված չէր ավատական տնտեսությունը (այն հիմնականում վանական-եկեղեցական էր) այսինքն նստակյաց ավատական տնտեսություն վարող ավատատերերի թիվը մեծ չէր, ապա պարզ է, որ աշխատավճարումների հիմնական մասը կատարվել է պե-

---

[47] Տես Փափազյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մերուզի ժողովրդական գրադարանի օսմանյան դեկանակսն վավերագրերը, էջ 198:
[48] Զաքարիա Քանաքեռցին, հ. Ա, էջ 66-67:

տության կարգադրությամբ և քիչ է կապված եղել գյուղատնտեսության հետ: Հետևապես, այստեղ տարածված է եղել աշխատավճարումների սկզբնական ձևը՝ բեգարը, երբ հողագործ գյուղացիները պարտադիր ձրի աշխատանք էին կատարում ճանապարհների, կամուրջների, բերդերի, պալատների ու ջրանցքների կառուցումների վրա, ինչպես նաև ռազմական արշավանքների ժամանակ: Երբ նկատի ունենանք, որ պատերազմներն ու ավերումները այնքան էին հաճախակի կրկնվում, ապա հասկանալի կդառնա, որ հարկադիր աշխատանքները դարձել էին սովորական ու ամենօրյա: Եվ պատահական չէ, որ Զաքարիա Քանաքեռցին հետևյալ դիպուկ ասացվածքով է բնութագրում պետության համար կատարվող կոռային պարտականությունը. «Վասնորոյ առասպելեցին,- գրում է պատմիչը,- թէ՝ կին յոի գոլով՝ այր նորա տանէին կոռ, և ոչ թողուին գնալ ի տուն իւր և կինն ծնանէր որդի և զարգանայր, և առաքէին զնա՝ կոռն, զի հայրն երթիցէ ի տուն»:[49] Իսկ Հարություն Արարատյանի հաղորդման համաձայն, 1795 թ. Երևանի խան Մահմեդկուլին տեղեկանալով դեպի Երևանի խանություն շարժվող Աղա-Մամադ շահի արշավանքի մասին, կարգադրում է ողջ խանությունից Երևանի բերդը ամրացնելու համար հարկադիր աշխատանքի քշել բազմաթիվ մարդկանց: Միայն Աշտարակ գյուղը պարտավոր էր տրամադրել 40 մարդ իրենց բեռնակիր ձիերով հանդերձ:[50] Իսկ ավելի կանոն, 1672-1674 թթ. Երևանի բերդի կիսատ մնացած շինարարության ավարտի համար, ըստ Զաքարիա Ագուլեցու տեղեկության, Աթլիս և Դաշտ գյուղաքաղաքներից հարկադիր աշխատանքի են քշվել տասնյակ մարդիկ: Օրագրի հեղինակի հավաստմամբ, այդ երկու բնակավայրերը պարտավոր էին աշխատողներ ուղարկել 1000 բանվորական օրվա ծավալով:[51]

Ինչ վերաբերում է վանքապատկան գյուղերի բնակչության կոռային աշխատանքին, ապա դատելով այդ աշխատանքի մասին եղած փաստերից կարելի է եզրակացնել, որ վանական հողերի վրա նստած կոռապարտ գյուղացիների այդ աշխատանքը ևս խլել է քիչ ժամանակ: Այն կրում է սեզոնային բնույթ և չէր գերազանցում տարեկան 5-6 օրից: Այսպես, Տաթևի վանքի եկամտացանկերը պատկերող արդեն հիշատակված վավերագրում ասվում է, որ վանքի «սեպական ժառանգութիւն» հանդիսացող Տաթև գյուղի բնակիչները «գլխուին բոլոր տեղօւն մեկ» պարտավոր էինԱ (1) «մէկ օր վար անեն, Բ (2) օր հունձ անել, և մեկ օր ալ ջառ անեն ինչ որ լինի, և մէկ օր եզնարածքն վանքիս համար խոտ հարե»: Ավարանց գյուղի բնակիչները պարտավոր էին «Ա (1) օր վար անեն, Բ (2) օր հնձեն, և եզնարածքն Ա (1) օր խոտ հանեն» Տանձատուփի բնակիչները «Ա (1) օր վարեն, Գ (3) օր հնձեն, Ա (1) օր

---

[49] Նույն տեղում, էջ 45-46:

[50] Жизнь Артемия Араратского, с. 194-195.

[51] Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, էջ 109-119:

խոտ հարեն, Ա (1) օր ինչ բան որ հանդիպի ջառ անեն վանքիս»:[52] Որ էջմիածնի վանական տնտեսությունում ևս կիրառվել է կոռային պարտականության նախնական տեսակը, արժեքավոր վկայությունների ենք հանդիպում էջմիածնեցի Հարություն Արարատյանի կյանքը նկարագրող ինքնակենսագրական երկում: Երկի ընթերցումից պարզ է դառնում, որ հատկապես էջմիածնի բնակչությունը, ինչպես շեշտում է Սիմեոն Երևանցին «ոչ կարեն սերմանել ինչ առանց հրամանի մերոյ, բայց և յայլ արտորայս գեղջս մերոյ որք են գեղականցն, մէք կարեմք սերմանել ըստ պահանջման ժամանակին եթե կամիցիք: Քանզի սրբոյ Աթոռոյս է գեղջս այս բոլոր սահմանօքն իւրովք»:[53] Ըստ Հարություն Արարատյանի նկարագրության, մեկ անգամ, երբ ինքը դեռ 10 տարեկան էր, որենց տուն է գալիս վանքի կողմից նշանակված վերակացուն և պահանջում, որ մայրն ու տղան ներկայանան աշխատանքի, իսկ խղճուկ մայրը թախանձագին խնդրում է գոնե մեկ օր համբերեն:[54]

Ինչպես վկայում են աղբյուրները, աշխատավճարումներին համարժեք կիրառվել է և վարձու աշխատանք: Նույն Զաքարիա Ագուլեցին, որը ոչ միայն ժամանակի նշանավոր առևտրականներից էր, այլև ընդարձակ հողամասերի տնտեն, տեղեկացնում է, թե իր տնտեսությունում օգտագործել է նաև վարձու աշխատանք «Տնգարք ամեն նոր տնգեցի, նոր շինեցի, շատ չարչարանք քաշեցի այս այքուս վերայ ե (5) տարի, որ մինչ ԲՈ (2000) մշակ բանացրի»,- գրում է նա: Վարձու աշխատանքին հատկապես մեծ տեղ է հատկացված էջմիածնի վանական տնտեսությունում: Այս առումով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում վանական տնտեսության 18-րդ դ. «ելից-մտից» մատյանները: Ըստ 1739 թ. մատյանի, վանական տնտեսությունում վարձու աշխատածի օգտագործումը հետևյալ պատկերն է ներկայացնում.

N	Ամիս	Վարձու աշխատուժի (մշակներ) քանակը		Վճարման արժեքի չափը		Այլ ծախսումներ
		Երկրագործ և անասնապահ	Արհեստագործ	Երկրագործ և անասնապահ	Արհեստագործ	
1	Մայիս[55]	863	16	7000դինար 5204 ապասի 20256 շահի 9143 փող	595 ապասի 6000շահի	1 թուման 14000դինար 8044 շահի 3078 ապասի 28 փող
2	Հունիս	1546	12	13109ապասի 32144 շահի	6000 դինար 17058ապասի	24000.5դինար 13075 ապասի

[52] Մատենադարան, Ձեռագիր 1488, էջ 213 բ:
[53] Զամբռ, էջ 158:
[54] Վաղարշապատի Հարութիւն Արարատեանի կեանքը, էջ 45-48.
[55] Հաշվետվությունները հիմնականում կատարվում են գարնան ամիսներից, քանի որ ձմռանը վարձու աշխատուժ կամ չի օգտագործվել, կամ էլ օգտագործվել է քիչ բանակությամբ :

				62 փող	61699 շահի	6178 շահի 8077 փող
3	Հուլիս	4518	20	8 թուման 27034 դինար 47212 ապասի 28250 շահի 18066 փող	26000 դինար 4036 ապասի 19090 շահի	10000 դինար 6162 ապասի 14199.5 շահի 17 փող
4	Օգոս-տոս, սեպ-տեմբեր	3217	20	5000 դինար 19217 ապասի 85392.5 շահի 63 փող	20000 դինար 32 ապասի 21000 շահի 8 փող	11000 դինար 3159.5 ապասի 17205.5 շահի 2024 փող
5	Հոկ-տեմբեր	1357	11	12000 դինար 16151.5ապասի 31221.5 շահի 22 փող	1000 դինար 23 ապասի 5100 շահի 6 փող	1 թուման 4000 դինար 6157 ապասի 25120.5 շահի
6	Նոյեմ-բեր, դեկ-տեմբեր	509	24	4000 դինար 14129 ապասի 9299 շահի 10 փող	11000 դինար 40 ապասի 8100 շահի	5 թուման 28000 դինար 19087 շահի 13 փող[56]

Մատյաններում բոլոր տարիներին հաշվարկով հունվար և փետրվար ամիսներին քիչ ծախսումներ են կատարվել: Օրինակ, 1742 թ. համար օգտագործված 90 մշակների վճարվել է 8850 դինար, 1743 թ. 5 մշակների՝ 1455 դինար և այլն:[57] Այդ ամիսներին վանքի միաբանությունը հիմնականում գարնան նախապատրաստական աշխատանքներ է կատարել և ծախսումները հիմնականում դրան են ուղղված: Օրինակ, 1799 թ. մատյանում կարդում ենք» ԴՌ (4000) շահի ետո 1000 թիոյ գին, մէկ թին ԺԳ (13) փողով, վէքիլ Այվազի ձեռօքն յունվարի ե (5) օրն»:[58]

Ինչպես երևում է բերված աղյուսակից առավել շատ բանվորական ուժ օգտագործվել է մայիս-սեպտեմբեր ամիսներին, այսինքն՝ գյուղատնտեսական աշխատանքների ամենաեռուն շրջանում: Մեր կարծիքով ներկայացված թվերը ճիշտ չեն արտահայտվում բանվորական ուժի թվի քանակը և այն մի քանի անգամ պակաս է: Համոզված պետք է ենթադրել, որ նույն բանվորական ուժը օգտագործվել է գյուղատնտեսական տարբեր բնույթի աշխատանքներում (էտ, փոր, հունձ, քաղհան և այլն): Հաճախ միևնույն վայրի նույն աշխատանքը տարբեր ժամանակահատվածներում կատարել են նույն մշակները: Այսպես, 1741թ. մատյանում կարդում ենք.«իե (25) շահի ետու յՕշական փայտ կտրող իե (25) մշակաց օգոստոսի թ (9)», իսկ նույն տարվա սեպտեմբեր ամսվա հաշվեմատյանում կարդում ենք. «ԲՌ (2000) ապասի և Ա (1) շահի ետու յՕշական փայտ կտրօղ ՕԴ (54) մշակաց ղարսցի ալիորի ձեռօք սեպտեմբերի ի (20)»:[59] Կամ ասենք «Գ (3) թուման ԵՌԴՃԽ (5440) դիան ետու Ղազարապատու բանւոր ԸՃՀԱ (871) մշակաց Կ(60) մշակն Ժ)10)

[56] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 1-17:
[57] Նույն տեղում, էջ 46-56:
[58] Նույն տեղում, էջ 117:
[59] Նույն տեղում, էջ 40:

փողով, իսկ ԸՆԺԱ (811) մշակն Բ (2) փողով տէր Թադէոսի ձեռօք մայիսի ԻԳ (23)» և «Գ (3) թուման ԱՌԳԵԿ (1360)դիան ետու Ղազարապատու պարսպի բանւոր ՁԵԺԹ (619) մշակաց ԽԱ (41) մշակն ԺԲ (12) փշով, իսկ ԵԵՂԲ (578) մշակին Ա(1) շահով տէր Բարդուղեմիոսի ձեռօք յուլսի ԻԵ(25)»:[60] Պետք է նշել, որ այդ հանգամանքը որոշ տարակարծություններ է առաջացրել ուսումնասիրողների շրջանում: Այսպես, Բ. Հարությունյանի կարծիքով «էջմիածնի տնտեսության մեջ, նրան հատուկ պայմանների շնորհիվ հնարավոր էր դառնում արտադրության մեջ երևան եկած կապիտալիստական տարրերի հյուսումը սպառման այնպիսի ձևերի հետ, որոնք հատուկ են ֆեոդալական-նատուրալ տնտեսությանը»:[61] Նույն տեսակետին համամիտ Ս. Պողոսյանի կարծիքով էջմիածնի վանքապատկան տնտեսությունը խարսխված է եղել վարձու աշխատանքի վրա և դեռ իբր տանում էր ազատական հարաբերությունների քայքայում և կապիտալիզմի սաղմերի սկզբնավորում:[62] Անժխտելի է, որ էջմիածնի վանական տնտեսությունում կիրառվել է վարձու աշխատանք, սակայն աշխատանքի այդ ձևը նախ չի հանդիսացել տիրապետող և ոչ էլ ապացուցում է ավատական պարտքերի քայքայումը: Ինչպես վկայում են վանքի ելք ու մուտքի մատյանները, այստեղ կիրառվել է ժամանակավոր, սեզոնային մշակների աշխատանքը, որոնք իրենց կատարածի դիմաց ստացել են սնունդ և դրամական վարձատրություն: էջմիածինը չուներ ֆինանսական այնպիսի հնարավորություններ, որոնք կիրառելով հնարավորություն ստանար իր տնտեսությունը խարսխել վարձու բանվորական ուժի վրա: Ավելին, գտնվելով օտար իշխանությունների տիրապետության տակ, հայ հոգևոր դասը հաճախ զրկվել է իր իրավունքներից, ենթարկվել հալածանքների ու ավառարության:[63]

Եթե նկատի ունենանք, որ մինչև Սիմեոն Երևանցին էջմիածնի գանձագին մուլքերը համարյա ամբողջությամբ դուրս էին եկել նրա տնօրինությունից, պատկերն առավել ամբողջական կլինի: Կան փաստեր, որ վանքի միաբանությունը նույնիսկ ստիպված էր երկիերթ աշխատանքներ հանձնարարել միևնույն մշակներին, վճարելով նրանց համեմատաբար քիչ գումար: Օրինակ, 1741թ. հոկտեմբեր ամսվա մատյանում մատնանշված է խաղող տրորող 12 մշակների աշխատանք, որոնք աշխատել են.

«Ենկիպարն, Ձ96 (ցերեկ, և Ը (8) գիշէր, Աւագն, ԺԹ (19) ցերեկ, և ԺԹ (19) գիշէր

---

[60] Նույն տեղում, էջ 48-49:

[61] Арутюнян Б.,Крупное монастырское хозяйство..., с.125.

[62] Պողոսյան Ս., Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում, էջ 287:

[63] Եսայի Հասան-Ջալալյան, էջ 14-15:

Ասլանն, Թ (9) ցերեկ, և ԺԲ (12) գիշէր, Ստէփանն, Դ (4) ցերեկ, և Գ(3) գիշէր

Մաթոսն, ԺԴ (14) ցերեկ, և ԺԶ (16) գիշէր , Մամօն, Դ (4) ցերեկ, և Գ(3) գիշէր

Ասատուրն, ԺԷ (17) ցերեկ, և ԺԸ (18) գիշէր, Ալլահվէրտին, ԺԱ (11) ցերեկ, և ԺԱ (11) գիշէր

Մէլքոնն, ԺԹ (19) ցերեկ, և ԺԹ (19) գիշէր Կիրակոսն, Ա (1) ցերեկ, և Ա (1) գիշէր

Մարտիրոսն, Թ (9) ցերեկ, և Ը (8) գիշէր, Բէժանն, Ե (5) ցերեկ և Դ (4) գիշէր»:[64]

Կատարված աշխատանքի դիմաց վճարվել է 7525 դինար, այն դեպքում, երբ ավելի թեթև աշխատանքի համար («սոխ հանող ԺՀ (18) մշակաց») վճարվել է 9000 դինար:[65] Էջմիածնի անվճարունակության մասին են խոսում նաև այն հանգամանքը, որ մշակների վճարումը ավելի հաճախ կատարվել է տարվա վերջին: «Հին վարձէն» արտահայտությունը հանդիպում ենք մատյանների տարեվերջյան ամփոփիչ համարյա բոլոր էջերում: Շատ քիչ դեպքերում է, որ շեշտվում է «փողն այժմս ետու» արտահայտությունը:

Հարկ է նշել, որ մատյաններում բավականին հիշատակություններ կան արհեստագործությամբ զբաղվողների մասին: Թեև չի նշվում նրանց մշակներ լինելու հանգամանքը, այնուհանդերձ հաշվի առնելով, որ այդ արհեստավորները հաճախ այլ վայրերից եկածներ են, պետք է կարծել, որ վերջիններս աշխատել են հեշտ մշակի կարգավիճակով: Այս առումով հատկանշական է հետևյալ վկայությունը «ԺԸ(18) թուման ԴՌԵճՕ(4550) դիան ետու ԺԱ(11) քարտաշ վարպետաց, որոց անունանք ի ներքոյ գրեալս է.

Խեչում քարտաշ կարբցի. ԺԲ (17) օր, Բ)2) շահի կեսով, ԲՌԲճՕ (2250) դիան

Վանի քարտաշ յՕշականցի ԻՀ (26) օր, Բ (2) շահի կեսով, ԳՌԵճ (3500) դիան

Յակոբ քարտաշ էջմիածնեցի ԻԵ (25) օր, Ա(1) շահի կեսով. ԱՌՀճՀԵ)1855) դիան

Անանիաց քարտաշ դարսցի Է(7) օր, Բ (2) շահի կեսով, Էճ (700) դիան

Եսայի քարտաշ առընջեցի ԽԲ (48) օր, Բ (2) շահի կեսով. Ձճ)600)դիան

Գրիգոր քարտաշ քրդատանցի ԲճԽԷ (247) օր, Ե (5) շահով Զ (6) թուման ԱՌԸճՕ (1850) դիան

Սահակ նորին տղայն Ղ (80) օր, Գ)3) շահով, Ա)1) թուման ԳՌԵճ (3500) դիան

---

[64] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ . 13, էջ 42:

[65] Նույն տեղում, էջ 51:

Յովանես քարտաշ էջմիածնեցի ԱԵՁ (180) օր, Բ (2) շահով, Բ (2) թուման ՁՈԲԵ (6800) դիան

Թորոս քարտաշ էջմիածնեցի ԱԵԾԷ (157) օր, Բ (92) շահի կեսով Բ (2) թուման ԵՈ (5000) դիան

Յարութիւն քարտաշ քրտատանցի ԲԵ (200) օր, Բ (2) շահի կեսով Բ (2) թուման ԵՈ (5000) դիան

Ղարիբջան քարտաշ քրտատանցի ԲԵ 9200) օր, Բ (92) շահի կեսով Բ (2) թուման ԵՈ (5000) դիան»[66]

Նույնանման վկայությունների հանդիպում ենք նաև թվով 18 խառատների վերաբերյալ, որոնցից միայն 2-ն են հիշատակված էջմիածնեցի, 3-ը կարբեցի, 1-ը օշականցի, 1-ը աշտարակցի, 1-ը մուղնեցի, 2-ը վանանդեցի, 7-ը սիսիանցի և 1-ը նախիջևանցի:[67] Մատյանների հայտնած փաստերից երևում է, որ մշակների քիչ մասը վարձվում է ոչ միայն սեզոնային, այլև երկարատև աշխատանք կատարելու պայմանով: Խոսքը վերաբերում է, ինչպես էջմիածնեցի, այնպես էլ նրան մոտակա բնակավայրերի այն արհեստավորներին, որոնք աշխատում էին վանական տնտեսության արտադրական բնույթի ձեռնարկություններում:

Թե ինչպես էին որոշում վարձկանների օրավարձը, կարելի է եզրակացնել Մատթեոս Ջուղայեցու թողած հետևյալ վկայություններից. «Մշակն,-գրում է նա,- ի վարձու ամենայն ոք վասն գործոյ կալնու... ըստ կամաց տեառն առնէ զգործն... մի օրն մին դահեկան լինի մին մշակի վարձն»:[68] Բայց ոչ բոլոր մշակ-վարձկաններն էին որպես օրավարձ ստանում մեկական տարեկան: Ամենայն հավանականության այդչափ օրավարձ ստանում էին միայն արհեստավորները: Այն մշակը, շարունակում է Ջուղայեցին,- որ «ոչ կարէ ազնիւ նիւթ գործել կամ կարել» այնքան չնչին վարձ է ստանում, որ «ոչ կարէ ինչս յետս ձգել վասն վազառանն, զի հազիւ զաւուրն հանէ պայենի»: «Զարչարեալ, աղտոտեալ և սհացեալ» վարձկան-մշակները, շարունակում է Ջուղայեցին, վարձում էին ամբողջ օրը աշխատելու պայմանով: Բայց եթե նրանք թերանում են աշխատանքում կամ հիվանդանում, ապա օրավարձ չէին ստանում: «Այլ թէ հիվանդանա ի կէսօր՝ ոչ առնու զվարձ», կամ եթե «ոչ արասցի զգործն կամաց վարձողին՝ ոչ առնու զվարձ»:

Օրավարձի չափը սահմանելիս նկատի է առնվում արտադրամիջոցների նկատմամբ ունեցած իրավունքի հարցը: Եթե մշակը աշխատում էր ոչ իր սեփական աշխատանքային գործիքներով, ապա վաստակած գումարից դուրս էին գալիս օգտագործված գույքի գինը:

Այդ մասին ուղղակի վկայություն կա մատյանի էջերից մեկում, ուր ասվում է «Գ (93) թուման ԴՌԷԵԱ (4700) դիան ետու Ղռի այգվոյ

---

[66] Նույն տեղում, էջ 54:

[67] Նույն տեղում, էջ 54-55:

[68] Տես Խաչիկյան Լ., Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, «Բանբեր մատենադարանի», Եր. 1956, N 3, էջ 77:

փորվոր ԷԵԺԲ (712) մշակած Ա(1) շահով, ԿԴ (64) չայիջոց Գ(3) փողով Ի (20) փորւորաց ԲՌԱԵԷ (2105) դիան, կտրեցին ԴԵԻԱ (421) բահի վարձ, զերա բահն մեր էր»:[69] Նույն պայմանը իրագործվել է այգեթաղի ժամանակ «Ը (8) թուման ՁՌԻԵ (6025) դիան ետու գեղիս Գ (3) այգեաց թաղվոր ԱՌԷԵՀ (1770) մշակած Ա (1) շահով ԴԵՂԵ (495) բահ մեր էր, մին-մին փողով կտրեցինք Յովանէս վարդապետի ձեռոք»:[70]

Օրավարձի սահմանման դեպքում նկատի էր առնվում նաև տարրիքային առանձնահատկությունները: Համեմատաբար էժան էին վճարվում այն աշխատանքների դիմաց, որոնց կատարումը տրվում էր մանկահասակներին: Մատյանների էջերում բազմիցս հանդիպում ենք «Լուծ քշող, ղուշ քշող, էգ հավաքող, արքատ կրող, փուշ քանտող, պզտկի՛ վարձ յետո, արտահայտություններին: Որ իսկապես «պզտիկների» վարձատվությունը համեմատաբար քիչ էր, երևում է 1746 թ. ընդգրկող մատյանի վկայությունից, թվով 222 մարկոսավոր մշակների վճարվում է 7775 դինար, որից 177 մշակների օրը յուրաքանչյուրին 40 դինար, 45 «լուծ քշող պզտկի» օրը յուրաքանչյուրին 15 դինար»:[71] Նույն բնույթի մեկ այլ հաշվեմատյանում կարդում ենք «ԲՌԵՁԷ (98115) դիան յետու ԱԵԻԸ (128) մարտկոցավորի ԺԱ (11) փողով, ԺԲ (18) լուծ քշող Բ (92) տղոյ Ձ (6) փողով, ԻՁ (26) հաւք քշող Գ (3) տղայոց Դ (4) փողով Մարտիրոսի ձեռոք»:[72] Համեմատաբար էժան էր գնահատված նաև կանանց աշխատուժը: Օրինակ, կես շահով է գնահատվել «ծաւար աղուն անող և բրինձ յիստակող ԻԱ (21) կանանց» աշխատանքը,[73] իսկ մեկ այլ դեպքում ընդամենը 6 շահի է տրամադրվել բրինձ շինող ԺՁ (16) պառաւի»:[74]

Հաճախ դրամական վարձատրության մեջ մտնում էր մշակին հատկացվող հագուստի և սննդամթերքի արժեքը. «Շ (10) ապասի ետու հոտաղ Ղազարին, հէսկուն գոտուն և շալվարին»,[75] նման կարգի բազմաթիվ վկայություններ կան հաշվեմատյանների էջերում: Այն մշակները, որոնք իրենց հացով էին սնվում («խոշկամուզդ»), ավելի բարձր էին վճարվում: Այսպես, 1785թ. տեղեկությունների համաձայն վանքի՝ Աշտարակում ունեցած այգիներում աշխատող 105 փորվորներ «խոշկամուզդ» կարգավիճակով աշխատելով, որպես օրավարձ ստացել են օրը 1 ապասի, իսկ օրականի 253 մշակներ սնվելով եկեղեցու հաշվին («մեր հացովն»), ստացել են 2 շահի»:[76]

---

[69] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 47:
[70] Նույն տեղում, էջ 43:
[71] Նույն տեղում, էջ 89
[72] Նույն տեղում, էջ 43:
[73] Նույն տեղում, էջ 42:
[74] Նույն տեղում, էջ 3:
[75] Նույն տեղում, էջ 9:
[76] Арутюнян Б. Крупное монастырское хозяйство..., с.125.

Այսպիսով, ամբողջացնելով վերը շարադրվածը հանգում ենք հետևյալ ընդհանուր եզրակացության: Էջմիածնի վանական տնտեսությունում աշխատավճարումները չդարձան ռենտայի տիրապետող ձևը, այն պատճառով, որ ավատական տնտեսության կողքին շարունակում էր իր գոյությունը պահել ազատ գյուղացու տնտեսությունը, որը քանակական գերակշռություն ուներ: Ինչ վերաբերում է վանական տնտեսությունում վարձու աշխատանքի կիրառմանը, ապա դա բացատրվում էր այն հանգամանքով, որ վանքը չունենալով ճորտագրված գյուղացիներ, մուլքադարական գյուղերից վերցվող պարհակներով չէր կարող ապահովել վանական տնտեսության բանվորական ուժի պահանջները, ուստի դիմում էր վարձու բանվորական ուժի օգտագործմանը:

Սովորական ռենտայի քննարկված երկու տեսակներից բացի էջմիածնի վանական տնտեսությունը որոշ կիրառություն է ստացել և դրամական ռենտան:

Արդյունքներում ռենտայի փոխարկումը դրամականի ենթադրում է առևտրի քաղաքային արդյունաբերության ու սրա հետ փողային շրջանառության արդեն զգալի զարգացում: Թեև այս պայմանները Հայաստանում արդեն 17-րդ դարի կեսերից աստիճանաբար ստեղծվում էին, այնուհանդերձ այն չհասավ ազգային մասշտաբի: Երկրի տնտեսական կյանքի զարգացումը ամբողջությամբ վերցրած տենդենց ուներ բնատնտեսական հարաբերություններն ամրացնելու, քան այն քայքայելու: Դրամական ռենտան այստեղ կիրառություն գտավ լոկ այն չափով, ինչ չափով որ քաղաքային կյանքի համեմատական զարգացման, առևտրի ու փոխանակության ծավալման կապակցությամբ ավատատերերի մոտ փողի պահանջ էր առաջանում: Այս էր այն չափանիշը, որ պայմանավորում էր բնավճար ռենտայի որոշ մասի փոխարկումը դրամականի, ընդ որում այդ փոխարկումը կատարվել է ոչ թե ուղղակի ձևով, այլ անուղղակի, այսինքն օգտագործվել է փողի որպես ընդհանրական համարժեքի ֆունկցիան և անհրաժեշտության դեպքում բնավճար ռենտան գանձվել է փողով: Այս առումով հատկանշական է Օշական և Ֆրանկանոց գյուղերի օրինակը: Ինչպես արդեն անդրադարձել ենք, այդ գյուղերը «աւելի պահանջմանց հարկաց այլ ազգեաց» իրենց մուլքադար էջմիածնի վանական հաստատությունից համեմատաբար 150 և 40 թուման փող էին վերցրել հետագայում վանքին կրկնակի մուլք վճարելու պայմանով: Տվյալ դեպքում կատարվում է միակողմանի փողի առևտուր, որից վանքի միաբանությունը ոչնչով չէր տուժում, քանի որ ստացվելիք բնամթերային ռենտան արժեքով շատ անգամ տվածից ավելին էր: Դրան զուգահեռ կատարվում էր և հակառակ պրոցեսը, և հոգևոր հաստատությունը գյուղական համայնքին էր զիջում գանձվող բնամթերային ռենտայի որոշ մասը, որի դիմաց պահանջում է վճարել դրամով:

Այս առումով ուշագրավ է հետևյալ օրինակը. 1656 թ. Ընձեռնու Բերդ գյուղի համայնքը դիմում է կաթողիկոս Հակոբ Ջուղայեցուն առ

այն, որ եթե Դարաշամբի սբ. Նախավկայի վանքի ստակ ու կես մուլքը իրենց օգտագործման տրվի, ապա դրա դիմաց իրենք պատրաստ են վանքին տարեկան վճարելու 12000 դինար:[77]

Էջմիածնի վանական տնտեսությունում հողային ռենտան նաև փողով գանձելու կարգի մասին արժանահիշատակ տեղեկությունների ենք հանդիպում ելից-մտից մատյանների էջերում: Պատկերելով 1745 թ. հունվարից մինչև մայիս ամիսն ընկած ժամանակահատվածի տնտեսության եկամտացանկերը, տնտեսվարը այն վերնագրել է. «գիւղիս գեալուրն» անունով: Այն կազմել է 2 թուման 92000 դինար, 31 ապասի և 144 շահի:[78]

Քննարկվող ժամանակաշրջանում, երբ հողային մասնավոր սեփականությունը ավատական սեփականության տարբեր տեսակներով էր դրսևորում, հողային ռենտան և պետական հարկերը ու տուրքերը այդ պայմաններում սերտ կերպով կապված էին միմյանց հետ: Ըստ այդմ էլ հողային ռենտայի տարբեր ձևերը կենտրոնացված էին 1 ռենտա-հարկի մեջ, որը կոչվում էր «Մալոջհաթ»: Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, որ այդ տերմինի տակ պետք է հասկանալ վճարումը միայն բնամթերքով, իսկ ոմանք էլ դրամով: «Մալոջհաթը- գրում է Ի. Պետրուշևսկին,- որպես կանոն մուծվում է մթերքով՝ ցորեն, գարի, բրինձ, բամբակ, մետաքս և այլն: Մալոջհաթը Երևանի և Նախիջևանի խանություններում կազմում էր բերքի 1)3-րդը».[79] Պ. Հարությունյանը գտնում է, թե մալոջհաթի հարցում Ի. Պետրուշևսկու տեսակետը հաստատուն չէր Արևելյան Հայաստանի համար: Նրա կարծիքով այստեղ այն վերցվում էր միայն դրամով:[80] Մալոջհաթը դրամով վճարվող հարկ է դիտում նաև Հար. Աբրահամյանը:[81] Լեոն մալոջհաթի հարցում հայտնում է հետևյալ կարծիքը. «Գյուղական հարկատվության հիմքը հողագործությունն էր: Հարկ ստացվում էր հողային բերքերով և այդ հարկը զանազան տեղեր այլ և այլ անուններ ուներ-մի տեղ բահրա, մի տեղ թովջի, մի տեղ մալոջհաթ: Դա հին տասնորդն էր, բայց հասկացված զանազան չափերով: Ստացվում էր և իսկական տասնորդ (3/30), կային և շատ տեղեր ուր 15/30 և նույնիսկ 20/30 մասը ցորենի, գարու և ուրիշ արմատիքների ամբողջ հունձից, իսկ բամբուկից և շերամից վերցվում էր 6/30 մասը: Միևնույն չափով հարկ ստացվում էր հարդից և առևտրից:[82] Ի լրումն Ի. Պետրուշևսկու Լեոյի այն կարծիքների, թե մալոջհաթը նախ ռենտա-հարկն էր, որ վերցվում էր երկրագործությունից, Հ. Փափազյանը ավելացնում է «Մալոջհաթ» տերմինը կազմված է «մալ»

---

[77] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 240, վավ. 90:
[78] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 70:
[79] Петрушевский И., Оченка..., с.. 267.
[80] Арутюнян П., Освободительное движение... , с. 106-107.
[81] Կալվածագրեր, էջ 183-184:
[82] Լեո, հ. 3-րդ, գ .1, էջ 94:

(ապրանք, հարստություն) և «ջհաթ» (կողմեր, վայրեր, վարելահողեր) բառերից: Մալը սեփականության հարկն է, իսկ ջհաթը գյուղի վարելահողերից գանձվող հողային հարկը: Այդ երկու հարկերը միշտ միատեղ էին հաշվվում և ընդհանուր գումարով գանձվում գյուղական համայնքից: Մալոջհաթը բնակչությունից գանձվող ռենտա-հարկի մեծ մասին էր և մի անգամ որոշված անխախտ չափերով գանձվում էր ռայաթներից: Դրա համար էլ շատ հաճախ այս անվան տակ հասկանում էին տվյալ օբյեկտից գանձվող նաև այլ հարկեր: Այս դեպքում մալոջհաթ տերմինը դիտվում էր որպես հավաքական հարկային տերմին:[83] Աղբյուրների ուսումնասիրությունից պարզվում է, որ մալոջհաթը առաջին հերթին հողային ռենտայի իմաստ է արտահայտել: Այդ տուրքը, նայած թե տվյալ գյուղը հողատիրության որ տեսակին է պատկանում, վերցվում էր կամ ամբողջապես պետության օգտին, կամ էլ ամբողջապես հողատիրոջ: Այդ մասին բազմաթիվ տեղեկություններ կան վանքի ելք ու մուտքի մատյաններում: Դրա էջերից մեկում մոտավորապես կարդում ենք. «Ետուք ևս Խալիլ խանին 20 թուման, ի սմէ Ժ (10) թուման ԹՌԱՆԻԵ (9125) դիանն էր ի կոչման է մեր դիւան տալիք մալուջհաթին, իսկ Թ. (9) թուման ՈՇԻԵ (825) դիանն ասաց թէ ձեր գեղացւոց տալիք մալջհաթին հեսաբ կանենք, որ գեղացիք ձեզ տան յետոյ».[84] Հայ հոգևոր հարստությունների պետությանը վճարելիք ռենտա-հարկի մասին տեղեկությունների հանդիպում ենք ավելի վաղ շրջանում: Ինչպես երևում է Կարա-կոյունլու Հասան Ալիի Տաթևի և Վաղադնիի վանքերը հարկերից ազատելու, վանքապատկան գյուղերի բահրան նրանց նվիրելու և հոգևոր տուրքերը կանոնավոր վճարելու մասին 1468 թ. հրովարտակից մուաֆության կարգով հիշյալ վանքերին է զիջվել դիվանական մալը:[85] Նման իրավունք վերապահված է եղել և էջմիածնի կաթողիկոսությունը, իսկ Արարատյան երկրի մնացած թվով 19 եկեղեցիներ, ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, պարտավոր էին տարին 17 թուման 5000 դինար գումար մալոջհաթի անվան տակ կաթողիկոսի ձեռքով վճարել պետությանը:[86] Հարկ է նշել, որ էջմիածնի ունեցած այս առանձնաշնորհ կարգավիճակը հաճախ խախտվել է եկվոր տիրակալների կողմից: Նույն Երևանցու հայտնած տեղեկությունների համաձայն Նադիր շահի կարգադրությամբ արքունական «զհասն և զհարկսն» հաշվառող միրզաբյազիմը դիվանական մալը եկեղեցու օգտին գանձելու իրավունքը թողնում է միայն վարելահողերի վրա, իսկ այգիներն ու տնտեսական բնույթի կառուցումները դարձնում հարկա-

---

[83] Папазян А., К вопросу о техническом значении налогобого термина "Малоджахат" ст. 61.
[84] Մատենադարան, կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 325:
[85] ՄՊՀ 1, էջ 47:
[86] Զամբռ, էջ 144:

տու:[87] Այդ մասին ևս ելից-մտից մատյանները հայտնում է շատ տեղեկություններ, մասնավորապես. «Ետուք ևս մեր Քալարու դնկի մալջհաթին, չորս հազար ԷՃՈ (750) դիան»[88], կամ «ԵՌ (5000) յետու ևս Հուսեյին մուհասիլին վան Անանիայի Առաքելոյ վանքին մալզա-հաթին, որոց մասին մեք էին զաֆդել:[89]

Մալոջհաթը հիշեցնում է արաբական տիրապետության ժամանակաշրջանի հողային ռենտահարկը՝ խարաջը, որը իրավունք է տալիս՝ հարկատուին հողն օգտագործելու և ժառանգելու:[90] Հատկանշական է, որ չնայած 15-18-րդ դդ. այդ տերմինը քիչ գործածական էր և հասկացվում էր որպես հավաքական, հարկային տերմին առանձին դեպքերում խարաջ և մալոջհար տերմինները հաճախ նույն իմաստով գործածվում էին միասին: Այսպես, Շամբ գյուղի բնակիչներին 1644 թ. ուղղված մի մահախոսականից տեղեկանում ենք, որ այսուհետև սբ. Նախավկայի վանքին պատկանող մեկ այգուց և արտից «մալջհաթ կամ խարաջ» չեն պահանջելու քանի որ այդ տարին պահանջել են:[91] Այսպիսով, մալոջհաթը հողային ռենտայի ամենաընդհանուր ձևն էր ավատատիրոջ սեփականությունը հանդիսացող հողի վրա ապրող գյուղացու ստեղծած հավելյալ արդյունքն էր, հօգուտ սեփականատիրոջ գյուղից գանձվող եկամտահարկի և հողային հարկի ընդհանուր գումարը: Եվ ինչ անունով էլ որ կատարվեին այդ մուծումները (հողային հարկ, բանջարանոցներից ու այգիներից հավաքված հարկ, գյուղացիներից ու դինկերից, ձիթհանքերից հավաքված հարկեր), դրանք բոլորը միասին կազմելով ավատատիրոջը վճարվող բնավճար ռենտան, ցույց են տվել, թե գյուղատնտեսական կուլտուրայի առանձին տեսակներից ստացվող արդյունքից, կամ անասնապահական մթերքների առանձին տեսակներից գյուղացին որքան պետք է վճարեր ավատատիրոջը: Այսինքն, մալոջհաթ տերմինը լայն իմաստով գործածվել է որպես սեփականատիրոջը բնարդյունքով վճարվող բոլոր տուրքերը բովանդակող տերմին:

---

[87] Նույն տեղում, էջ 143-144:
[88] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 320:
[89] Նույն տեղում, էջ 371:
[90] Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Եր., էջ 371-373:
[91] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 27:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՎԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

1. Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Այգեգործություն

Շուրջ երկու հարյուրամյակ ներքաշված լինելով մուսուլմանական քոչվոր ցեղերի ու պետությունների ավերիչ պատերազմների հորձանուտում Հայաստանի տնտեսությունը հասել էր կատարյալ անկման:

Տեղական էքնիկ ազգաբնակչության մի մասի ոչնչացումը և նրա սոցիալական կառուցվածքում կատարված փոփոխությունները ուղղակի կերպով ներգործել էին ժողովրդական տնտեսության վրա, փոխել նրա ճյուղային կառուցվածքը: Հայ երկրագործի տնտեսությունը իր տեղը զիջել էր քոչվորական խաշնարածությանը: Չմանրամասնելով Հայաստանի տնտեսական կյանքի անկման մասին ժամանակի գրիչների հայտնած բազում տեղեկությունները սահմանափակվենք միայն Առ. Դավրիժեցու հետևյալ վկայությամբ. «Հողագործի և երկրագործի,- գրում է պատմիչը,- որք իւրաքանչիւր տեղիս գոյին, փախուցեալք ի բերդս և ի դղեակս ամրանային և ոչ կարէին առնել զերկրագործութիւն, վասն որոյ սերմանել և հանձնել և կալ և կուտ բարձրաւ ամենին»:[1] Եթե դրան ավելացնենք պարբերաբար կրկնվող բնական աղետները էլ (երաշտ, ցրտահարություն, կարկտահարություն, մորեխ),[2] պարզ կդառնա, որ գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր չափի պակասելը անխուսափելի էր:

1639 թ. հաշտությամբ առ ժամանակ հաստատված խաղաղությունը համեմատաբար նպաստավոր պայմաններ ապահովեց երկրի տնտեսական կյանքի վերելքի համար: Հակոբ Կարնեցու արտահայտությամբ այդ պայմանագրով կողմերը պարտավորվել էին. «միմյանց թուր չքաշեն, վաճառականք և շինականք աներկիւղ գայցենք. հոտք սոցա և նոցայ այժմ խառնին ընդ միմիանս: Զի խաղաղութիւն աստուծոյ նախախնամութեամբն եղև, և այսպէս, որ ազատեցալ ազգս հայոց իր երկուց կողմանց, զի այն կողմի բնակիչք երկրին հայք էին և են և յայս ամենայն հայոց ազգ էին»:[3] Դրվատելով շահ Աբաս 2-րդի գործունեությունը Գանձասարի Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսը գրում է, որ կատարվեցին մեծ ծավալի շինարարական աշխատանքներ, վերականգնվեցին

---

[1] Առաքել Դավրիժեցի, էջ 87:

[2] Մանր ժամանակագրություններ, հ. 1. էջ 162, 211, 213, 345, հ 2, էջ 140, 285, 356 և այլն:

[3] Նույն տեղում, հ. 2, էջ 565:

վանքերն ու եկեղեցիները, հատկապես նպաստավոր պայմաններ ստեղծվեցին էջմիածնի վանական տնտեսության համար:[4] Ժամանակի պատմիչների վկայությամբ 17-րդ դ. երկրորդ քառորդից սկսվում է էջմիածնի նորոգման պատմության ժամանակաշրջանը: Էջմիածնի տնտեսական վերելքը պայմանավորված էր առաջին հերթին Հայոց հոգևոր հայրապետների նպատակասլաց գործունեության հետ, որոնք սկսած Մովսես Տաթևացուց կարողացան օտար տիրակալների դեպի էջմիածին ունեցած համեմատաբար հանդուրժողական վերաբերմունքը և մեծ աշխատանքներ կատարեցին ինչպես վանական հաստատությունում, այնպես էլ ողջ երկրում տնտեսական-մշակութային ոլորտի զարգացման ուղղությամբ:

Քննարկելով էջմիածնի վանական հաստատության տնտեսական կյանքին վերաբերող հարցերը, նկատենք, որ երկրի բնակլիմայական նպաստավոր պայմանները լայն հնարավորություն էին ստեղծել վանական տնտեսության մեջ գյուղատնտեսության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման համար: Եթե հարթավայրային շրջաններում տնտեսության հիմնական ճյուղերը կազմել են այգեգործությունը, տեխնիկական և բոստային կուլտուրաների մշակությունը, ապա վանքապատկան նախալեռնային ու լեռնային շրջաններում կերաբույսերի ու հացահատիկային կուլտուրաների մշակությունը: Գրեթե բոլոր շրջաններում պակաս կամ առավել չափով տարածված էր նաև անասնապահությունը, մեղվաբուծությունը, թռչնաբուծությունը, գետերի ու լճակների շրջանում՝ ձկնորսությունը և այլն:

Էջմիածնի վանական տնտեսության մեջ երկրագործական զբաղմունքի կարևորագույն բնագավառներից մեկը ավանդական այգեգործությունն էր: Թերևս այդ մասին են խոսում ժամանակի կալվածագրերում, վիմական տարեգրություններում, հիշատակարաններում ու ժամանակագրություններում, մատենագրական երկրներու հաճախ հանդիպող այգիների օտարման, այգիներից վերցվող առանձին հարկերի մասին հիշատակությունները: Հատկապես արժեքավոր է այգեգործության մասին Առ. Դավրիժեցու հայտնած տեղեկությունները: Նա գանձատվում է հոգևորականներին այն պատճառով, որ նրանք թողել են իրենց խցերն ու վանքերը, գնացել գյուղ և իրենց համար ընդարձակ ու բերրի տարածություններ ձեռք բերել, որ նրանք այդ հողամասերի վրա այգիներ են տնկել և իրար հանդիպելիս փոխանակ հոգու փրկության մասին իրարից հարց ու փորձ անելու, հարցնում են թե ինչ վիճակում է այգին այս տարի, ինչպես են պաշտպանում տնկիներն ու այգին վնասատուներից: «Ամենայն վանօրյաք ազգիս հայոց,-եզրափակում է պատմիչը,-իւրաքանչիւր սնագլուխ ուներ իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, ի մարան, և համբարանոցս և զմուտս ստացուածոց նաև զմուտս հասարակուց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժա-

[4] Եսայի Հասան-Ջալալյան, էջ 15:

նէին»:[5] Իսկ սոցիալական բովանդակություն ունեցող 17-րդ դ. մի վկայությունում ասվում է «Տեսանեքէ մեծատունք ի ծեռն չարամիտ ծառայից և նենգաւոր մշակաց փշօք պատեն զայգին և զդրախտն և նոքօք պահեն զմիրգն, բայց ի ժամ ճաշակման մրգին ոչ յիշեն զմշակսն և զծառայսն, որք պահեցին և ոչ զփուշն, այլ միայն զտանուտէրն գովեն և լինեն շնորհակալ աղոթիւք»:[6] Այգեգործության տնտեսական նշանակության գիտակցումով էր բացատրվում, այն իրողությունը, որ Սեֆյան տիրակալները պետության տնտեսական շահերից ելնելով ընդառաջել են երկրագործության այդ առաջնակարգ ճյուղի զարգացմանը: Եվ պատահական չէ, որ Զաքարիա Քանաքեռցին Երևանի Ամիրգունա խանին դրվատում է որպես կառավարիչ. «Յորժամ էառ շահն զԵրևան, զարքեաց անդ իշխան Ամիրգունա խանն և պարտուիրեց նմա նորոգել զբերդն, և տնկել զայգիսն, և փոյթ լինել շինութեան: Վասնորոյն ամենեքեն սկսան լինել և տնկել զայգիս»:[7]

Ի տարբերություն խաղողի այգիների մասին մանրամասն տեղեկությունների, համեմատաբար քիչ են էջմիածնի վանական տնտեսությունում պտղատու ծառերի մշակությանը վերաբերող վկա-յությունները: Ըստ եղած տվյալների ծառատունկ այգին անվանվել է «պարտեզ» կամ «բաղչա»: Թվարկելով վանական տնտեսության այգիների քանակը Սիմեոն Երևանցին մասնավորապես գրում է. « Դարձեալ ունի սուրբ Աթոռս յայս գեւղս (իմա Վաղարշապատ - Հ. Թ.) մերձ իւրեան զերկուս ծառուտ պարտէզս՝ կից գերեզմանատան մերոյ»:[8] Իսկ Բջնիի վանքի կալվածքները նա գրում է. «Դարձեալ ի Քանաքեռ Վանդիկ անուն աղջիկ ունի զմեկ լաւ ծառոտ բաղչայ հանդերձ իւր տներովն տայ վախմ ի ծեռն Յովհաննես վարդապետին ի ՌԵՕԷ (1708) թուոջն մերում»:[9] Եղած տեղեկությունների համաձայն էջմիածնի վանական տնտեսությունում պտղատու ծառերի մշակությունը ունեցել են հիմնականում արտադրական նշանակություն: Նման տիպի այգիները առանձնանում էին տարածական մեծ չափերով: Այն գցելու համար առանձնացված հողատարածքը նախ բաժանվում էր մի քանի ուղղանկյունաձև մասերի, որից հետո առանձին շարքերով տնկում էին միևնույն տեսակի ծառեր: Ծառերը միմյանցից բաժանվում էին երկուսից-երեք մետր լայնություն ունեցող արահետներով ծառաբուծական աշխատանքներ կատարելու նպատակով: Նման տիպի այգիներից վանական տնտեսության մեջ հիշատակվում է՝ բուն Վաղարշապատում «Ղռի» և «Մանկասարենց» այգիները, ուր մշակվել է խնձոր ու տանձ. « Խնձոր ծախեցինք, թէ Ղռի այգևոյն և

---

[5] Առաքել Դավրիժեցի, էջ 288-289: Հմմտ Գր. Դսարանաղցի, էջ 296:

[6] Տես էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ, Եր. 1957թ., էջ 10:

[7] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 58:

[8] Զամբռ, էջ 269:

[9] Նույն տեղում, էջ 286:

թէ Մանկասարի այգեոյն ՉԵԿԳ (663) լիտր, մէկ լիտրն Ա (1) ապասով ԲԵԽ 9240) լիտր, մէկ լիտրն կէս շահով, գինն եղև Ա (1) թուման, ԳՌԱԵԿ (3160) դիան»,- կարդում ենք վանքի հաշվեմատյաններում:[10] Աղբյուրների հավաստմամբ առավել շատ տարածություն է ունեցել խնձորի «Սուլթանի» տեսակի մշակությունը, որը միջին չափի էր, ուներ վառ կարմիր գույն, քաղցր համ ու պահվում էր մինչև խոր ծմեռ:[11] Ըստ հասունացման առանձնահատկությունների վանական տնտեսությունում մշակվել է տանձի ինչպես վաղահաս, այպես էլ ուշահաս տեսակները: Վաղահասների շարքին էր դասվում «մալաչա» կոչված տեսակը, որը Ադամ Օլեարիուսի հավաստմամբ արտաքին տեսքով նման էր լիմոնի, ուներ դուրեկան հոտ և շատ հյութեղ էր:[12] Ուշահաս տանձի տեսակների մեջ առանձնացել է «Դաշ արմուդ» անունը կրող տեսակի մշակություն, որը ուներ ամուր կեղև, փոքր չափսեր և պահպանվել է ողջ ծմեռ:[13]

Առանձին դեպքերում ծառերը տնկվում էին միայն ուղղանկյունաձև հողատարածքի անկյուններում: Այն կիրառելի էր հիմնականում տարածական մեծ չափեր ընդունող ծառերի նկատմամբ, երբ վերջիններս մեծանալով կպնում էին միմյանց, ստվերելով հողատարածքը: Նման ծառերի շարքին էին դասվում ծիրանենին և ընկուզենին: Միաժամանակ, ստվերոտ հողատարածքում ցանում էին կերաբույսեր. «Ե (5) մշակ Վերի յայգու ծառիրու մեջն ջրեցին, որ խոտ լինի ծիանքն արածեն, վարձն ետու մէկ շահով ծեռամբ վաքիչ Այվազին»:[14]

Ծիրանենին, որը տնկելուց 4-5 տարի անց տալիս էր առաջին պտուղը, իսկ 8-րդ տարում դառնում լրիվ բերքատու, Ղ. Ալիշյանի հավաստմամբ Եվրոպա մուտք է գործել Հայաստանից, որի համար էլ անվանվել է armenica: Վանական տնտեսությունում պարբերաբար կատարվել է ծիրանի ծառատունկ. «ԵՈԷԵ (5500) դիան ետու Ժ (10) ծիրանի ծառի»,[15] ինչպես նաև չորացած ծառերի արմատահանում. «ԳՌ (3000) շահի ետու ծառ հանող ԿԱ (61) մշակաց»:[16] Մ. Թաղիադյանի հավաստմամբ լայն տարածում ուներ ծիրանի նովրուստ, առջանաբատ, թափարզու, աբութալիբ, կայսարի տեսակների մշակությունը:[17] Մեծ իրացում է ունեցել հատկապես աբութալիբ կոչված պատրաստած չիրը, որը ունեցել է բարձր ինքնարժեք. «Ա (1) թուման, ԷՌ (7000) դիան, ետու Լ (30) ԼՏՐ ծիրանի չրի, որ Ի (20) լիտրն ապութալապի էր, և Ժ (10)

---

[10] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1. վ. 13, էջ 339:
[11] Свод материалов, т. 4, г.2, с. 3.
[12] Адам Омарий, с. 157.
[13] Свод материалов, т. 4, г.2, с. 106.
[14] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ., 1, վավ. 27, էջ 43:
[15] Նույն տեղում, վավ. 13, էջ 65:
[16] Նույն տեղում, էջ 145:
[17] Թաղիադյան Մ., էջ 300-301:

լիտրն ուրիշ պատվական ծիրան»,- կարդում ենք վանքի հաշվեմատյաններից մեկում:[18] Անդրեաս Սարկավագ Եվդոկացու ժամանակագրության շարունակողի հաղորդման համաձայն, մեծ քանակության ծիրանի ինչպես թարմ, այնպես էլ չորացած վիճակում արտահանվել է Օսմանյան կայսրության տարածքներ:[19] Մեծ արժեք էր ներկայացնում հատկապես ծիրանի փայտը, որը կարծրության որակով մեծամասամբ օգտագործվել է երկրագործական գործիքներ պատրաստելիս:

Ընկույզ մշակվել է քիչ քանակությամբ, այն էլ գերազանցապես վանական տնտեսության նախալեռնային տարածքներում: Ստացվածը նույնիսկ չի բավականացվել միաբանության պահանջները և այդ պատճառով էլ հաճախ կազմակերպվել է մեծ քանակության ընկույզի գնում:

Օրինակ հաշվեմատյանների էջերից մեկում կարդում ենք, որ գնվել է մեկ թումանի ընկույզ,[20] իսկ մեկ այլ տեղ նշվում է, որ 7000 ընկույզի համար վճարվել է 1000 դինար և 3 աբասի:[21]

Հաջորդ ծառատեսակը, որի մշակմամբ զբաղվել են վանական տնտեսության հարթավայրային և նախալեռնային շրջաններում՝ դեղձն էր: Շնորհիվ իր արագ աճի և բարձր բերքատվության հատկությունների, դեղձի տնկիների մշակությունը հիմնականում կենտրոնացվել է խաղողի այգիների ոռոգման ուղիների երկայնքով: Ըստ զարգացման առանձնահատկությունների տարբերվել են դեղձի վաղահաս և ուշահաս տեսակներ: Վաղահասների մեջ առանձնացվել է հատկապես «գյուլի» տեսակը, որն ունեցել է դեղնասպիտակավուն գույն և հեշտությամբ անջատվել է կորիզից:[22] Հենց այս տեսակն է, որն ուներ դեղնակարմրավուն գույն, մսալի է, սակայն չէր անջատվում կորիզից:[23] Բերքահավաքը կատարվել է աշնանը և թարմ վիճակում պահվել մինչև խոր ձմեռ:

Որոշ տարածում է ունեցել և թթենու մշակությունը: Թեև այն վանական տնտեսության սահմաններում չի ունեցել արտադրական այն նշանակությունը, ինչ ուներ Ղարաբաղի և Նախիջևանի խանություններում կապված շերամապահության հետ, այնուհանդերձ այստեղ այն օգտագործվել է որպես դոշապ և օղի ստանալու հիմնական նյութերից մեկը: Օրինակ Սիմեոն Երևանցին թվարկելով էջմիածնի վանական տնտեսության այգիների քանակը նշում է, որ Նորագյուղում վանքը ունեցել է մի այգի, որը լի էր «ապրշումեայ ծառօք»:[24] Ըստ պտուղների գույնի, մշակվել է սև և սպիտակ թութ: Մեծ պահանջարկ է ունեցել

---

[18] Մատենադարան, Կթղկ, դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 54:
[19] Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 161-182:
[20] Մատենադարան, Կթղկ, դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 153:
[21] Նույն տեղում, էջ 256:
[22] Свод материалов, т. 4, г.2, с. 108.
[23] Свод материалов, т. 4, г.2, с. 108.
[24] Զամբռ, էջ 184:

հատկապես «Բեդանա» կոչված տեսակը, որը չուներ սերմ, պտուղները սպիտակավուն էին ու պարունակում էր մեծ քանակությամբ շաքար:[25] Այն միաժամանակ չորացվել է ու օգտագործվել որպես չամիչ: Սև տեսակների մեջ առանձնացվել է «Խարթուքը», որը մշակվել է վանքապատկան, ինչպես հարթավայրային, այնպես էլ նախալեռնային շրջաններում:[26] Ադամ Օլեարիուսը տեղեկացնում է, որ որոշ տարածում ուներ նաև թթի «Բանավուշ» տեսակը, որի պտուղը կարմրավուն էր ու շատ քաղցր:[27]

Որոշ ծառատեսակներ մշակվել են տնամերձ հողատարածքներում, որոնք սովորաբար կոչվում էին պարտեզներ: Որպես այդպիսիք, դրանք տների հետ միասին ենթարկվել են օտարման: Օրինակ, նկարագրելով 1711թ. Նորագյուղում ոմն Արիստակեսի աղջկա՝ Սիրիխանի կողմից էջմիածնի վանքում կատարած նվիրատվությունները, Սիմեոն Երևանցին հայտնում է, որ վերջինս վանքին է նվիրում Երևանում ունեցած մի պարտեզ՝ տան հետ միասին:[28] Պարտեզը տան հետ միասին հիմնականում պարսպապատ էր, որն էլ հիմանական պայմանն է նրա վաճառքի, իսկ եթե պարիսպ չուներ, ապա անպայմանորեն այն կառուցվում էր: Օրինակ, Սիմեոն Երևանցու հավաստմամբ Եղիազար Այնթափեցի կաթողիկոսը 1690 թ. Երևանում գնում է մի տուն իր պարտեզով և դրանց շուրջ կառուցում բարձր քարե պարիսպ:[29] Տնամերձ պարտեզներում մշակվող ծառատեսակներից առավել շատ հայտնի էր սալորը: Ըստ զարգացման առանձնահատկությունների տարբերվել են սալորի վաղահաս և ուշահաս տեսակները: Վաղահասը, որն ուներ դեղին գույն, քաղվել է հունիս-հուլիս ամիսներին, իսկ ուշահաս տեսակը ուներ սև գույն և համեմատաբար մեծ չափեր: Բերքահավաքը կատարվել է ուշ աշնանը, ուշահաս խնձորի հետ միասին. «Թվին ՌՁԷ (1636) նոյեմբեր ԻԳ (23), ես՝ Բարդուղիմեոս երէցս զնոր սալորն քաղեցա ի ծառէն»:[30]

Տնամերձ այգիների ոռոգման ուղիների երկայնքով տնկվել են փշատի ծառեր: Փշատի լավագույն տեսակներ են համարվել «Խաթունը» և «Մատնափշատը»: Հատկապես առաջինը բնակչության կողմից օգտագործվել է իբրև դեղամիջոց (կաթի պակասության դեպքում երեխամայրերը նորածիններին կերակրել են փշատի ալյուրով):[31]

Էջմիածնի վանական տնտեսությունում փշատի մշակության մասին է խոսում այն փաստը, որ առանձին հանդամաս է «փշատի ծառ»

---

[25] Ղևոնդ Ալիշան, Սիսական, էջ 333:
[26] Свод материалов, т. 4, г.2, с. 104.
[27] Адам Олеарий ст. 757.
[28] Զամբռ, էջ 183:
[29] Նույն տեղում, էջ 205:
[30] Ժէ դ. հիշատակարաններ, հ. 2-րդ, էջ 602:
[31] Свод материалов, т. 4, г.2, с. 108.

անունով:[32] Իսկ 1741թ. հաշվեմատյանից տեղեկանում ենք, որ միաբանությունը 5500 դինար է ծախսել փշատի և ծիրանի տնկիներ ձեռք բերելու համար:[33] Աղբյուրների հավաստմամբ ջրարբի հողատարածքներում մշակվել է թթու հատիկներ ունեցող նռենի: Ազգաբնակչությունը հատիկները սովորաբար հանում էր, չորացնում: Այն հայտնի էր «նարդան» անունով: Այն օգտագործվում էր սնունդը մգացնելու և թթված դարձնելու համար: Վանական տնտեսությունում մշակվող տարածված ծառատեսակներից էին նաև թուզը, կեռասը, նուշը, սերկևիլը և այլն:

Էջմիածնի վանական տնտեսությունում խաղողագործությունը հանդիսանում էր այգեգործության հիմնական ճյուղը: Դա բացատրվում էր նրանով, որ այդ մշակից ստացված արտադրանքը հանդիսացել է ոչ միայն անմիջական արտադրողի ու բնակչության այլ խավերի համար կարևոր սննդամթերքներից մեկը, այլ վաճառքի է հանվել ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս թե՛ որպես թարմ կամ չոր միրգ, և թե՛ մշակված, գինու վերածված: Ըստ Սիմեոն Երևանցու հայտնած տեղեկությունների, վանական տնտեսությունում խաղողամշակ տարածությունները հետևյալ պատկերն են ներկայացնում.

N	Այգու անվանումը	Գտնվելու վայրը	Ձեռք բերման միջոցը	Արժեքը	Ժամանակը	Օտարողը	Ստուգողը
1	Ղոի այգի	Վաղարշապատ	սեփական		Սկզբնապես		
2	Տեր Նահապետի այգին		գնված	14 թուման	1741	Տեր Նահապետ, Սողոմոն	Ղազար Ջահկեցի
3	Մանկասարենց այգին 4 տախտակ		վակֆ		1681	Մեհրամ	Եղիազար Այնթափեցի
4	Մանկասարնեց այգին 1.5 տախտակ		գնված	5000 դինար	1692	Հարություն	Նահապետ Եղեսացի
5	Մանկասարնեց այգին		գնված		1692	Ղունճ Ալի	

[32] Զամբ, էջ 153:
[33] Մատենադարան, Կթղկ, դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 65:

	6 տախտակ						
6	Մանկա-սարենց այգին [34]		գնված	2000 դինար			Մինաս վարդապետ
7	Վերի կամ շահի ղլի այգին		գնված			Հակոբ	
8	Հակոբի այգին		գնված			Հակոբ	
9	Վարդանի այգին		գնված			Վարդան	
10	Հովսեփենց այգին 4 տախտակ		հոգե-բաժին			Հովսեփ	Ղազար
11	Մկրտումի այգին 4 տախտակ		հոգե-բաժին			Մկրտում	
12	Ղևոնդենց այգին 7 տախտակ		գնված	2թթու-ման և 2 փոքր այգի-ներ	1766	Հերամ, Աջամ	Սիմեոն Երեվանցի
13	Խանբաբի այգին		գնված	40թու-ման	1766	Սահդ	
14	Սբ. Հռիփ-սիմեի վանքի այգին						
15	Սբ. Շողակաթ վանքի այ-գին		գնված				
16	Սբ. Գայանե վանքի այգին						
17	Տեր Ներսեսի այգին		վակֆ		1749	տեր Ներ-սես	Ղազար Զահկեցի
18	Հարությունի այգին		վակֆ		1689	Հարություն	Եղիազար Այնթափեցի
19	Հովհաննես և Զաքարիա եղբայրների այգին		գնված	8 թու-ման		Հովհաննես Զաքարիա	Նաւսպետ Եդեսացի
20	Մխիթարի այգին		գնված	9 թու-ման	1691	Մխիթար	

[34] Մանկասարենց այգու վերաբերյալ Սիմեոն Երևանցին հայտնում է. «Զայս վերոյիշեալ չորս բաժին այգիս ի մի խառնեալ միաւորեն, և զերկու այգի շինեն յատկացեալ պարսպօք, որք կողին Մանկասարենց», Զամբռ, էջ 166:

21	տեր Խաչա-տուրի այգին		գնված	5թում ան	1692	տերԽաչա-տուր	
22	Մարտիրոսի այգին		վակֆ		1713	Ոսկեհատ	Ալեքսանդր Ջուղայեցի
23	Կիրակոսի այգին		վակֆ		1711	Կիրակոս	
24	Հարությունի այգին		վակֆ			Հարություն	
25	Խաչատուրի այգին[35]		վակֆ			Նավասարդ	
26	Մկրտումի այգին		գնված	23000 դինար	1713	Մկրտում	
27	Մեծ այգին	Օշական	Գնված	80ղու-ռուշ	1592	Ալի-Ղուլի	Մելիքսեթ Գառնեցի
28	Ազիզի այգին		Գնված		1643		Փիլիպոս Աղբակեցի
29	Անտոնի այգին		Գնված	8 թու-ման	1735	Դավուդ, Հովսեփ, Խեչում	Աբրահամ Կրետացի
30	Արեգունի կամ Վերի ա-յգին		վակֆ		1684		Եղիազար Այնթափեցի
31	Բապամի այգին		գնված	3 թու-ման	1684	Բապամ	Վարդապետ Վարդան
32	Ալիարի այգին		գնված		1651	Ալիար	
33	Սբ. Սարգիս վանքի այ-գին[36]						
34	Ալեքսանի այգին		վակֆ		1691	Ալեքսան	Եղիազար Այթափեցի
35	Թումանի և Մուրադի այ-գին		գնված	20թու-ման		Թուման, Մուրադ	Մինաս վարդապետ
36	Այվազի և Թումանի այգին		գնված	6թու-ման	1691	Այվազ, Թուման	
37	Մարուքի այգին		գնված	5թու-ման	1696	Մարուք	Նահապետ Եդեսացի
38	Էլումի և Հովհաննեսի այգին		գնված	5թու-ման	1735	Էլում, Հոհաննես	Անտոն վարդապետ
39	Մատթեոսի		գնված	7թուման	1735	Մատթեոս	Մարտիրոս

[35] Հետագայում, ինչպես նշում է Սիմեոն Երևանցին. «Վերոյիշեցեալ այգետեղիքդ զորս արտ արարեալ ցանեմք, որք հասարակօրէն Մխիթարենց այգիք կոչին», Զամբռ, էջ 171:

[36] Հիշյալ այգու մասին Սիմեոն Երևանցին հայտնում է. «Դարձեալ կից սոյնոյ այգւոյս, ի հիւսիսակոյսն զայգի մի սուրբ Սարգսի վանքն ունի, որ է այժմ չէն և ընդ ձեռամբ սրբոյ Աթոռոյս: Զի սուրբ Սարգսի վանքն ամայի է ընդ այլոցն», Զամբռ, էջ 173:

	այգին			5000դի-նար			վարդապետ
40	Էվումի այ-գին		գնված	2թու-ման 5000դի-նար	1736	Էվում	Անտոն վարդա-պետ
41	Խոզա Մովսեսի 9 այգին		գնված	40թու-ման	1718	Մովսես	Աստվածա-տուր Հա-մադանցի
42	Հաճի Մու-համմատ Հուսեյնի 20այգին[37]		գնված	55թու-ման	1721		
43	Հատիի այգին	Աշտարակ	գնված	5թու-ման	1596	Հատի	
44	Գրիգորի այգին		զավ-թած[38]				Ալեքսանդր Կ. Պոլսեցի
45	Աբրահամ	Փա-	զավ-		1636	Փիլիպոս	

[37] Հիշյալ այգիները Օշականցիք, ինչպես հայտնում է Սիմեոն Երևանցին «...հարեալ ի կարկտէ և յայլոց ծախորդական պատահմունց չքաւորին և ի նեղ անկանին» խանության վեզիր Միրզա Մուհամատ Բեկից և Քալանթար Մուհամատ Հուսեյնից 180 թուման գրավով դրամ են վերցնում պարտավորվելով 20 այգի և 5 ջրաղաց տալ 7 ամիս ժամկետով: Նույն կերպ 150 թուման վերցնում են երևանցի Խոջա Մովսեսից, 9 ամիս ժամկետով գրավ դնելով 9 այգի և 12 ջրաղաց: Նշված ժամկետում չկարողանալով պարտքերը վճարել, գյուղացիները ստիպված էին գրավ դրվածներից հրաժարվել: Հետագայում Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը նկատի ունենալով, որ Օշական գյուղը էջմիածնի մուլքն է («որ մուլք է սրբոյ Աթոռոյս»), չի հանդուրժում կատարվածին («զոռայ այսքան այգին և ջրաղացն այլք առեալ տիրեն, ոչ հանդուրժէն») և վճարելով պարտատերերին համապատասխանաբար 40 և 55 թուման գումար, վանքին է վերադարձնում այգիների սեփականության իրավունքը: Իսկ գումարի պակաս վճարելը կաթողիկոսը պատճառաբանում է, թե «զի յայնքեան յամս կերեալ էին նոքա զայնքան նոքան»: Հետ գնված այգիների մի մասը վանական միաբանությունը վերադարձնում է նախկին տերերին, նախապես գումարելով վճարած գումարի չափը. Ջամբռ, էջ 174, 175: Գյուղացիների այգիների մի մասը վերադարձնելու մասին է վկայում հետևյալ կալվածագիրը. «...ես Տեր Աստվածատուր կաթուղիկոս ի թվին ՌՃՀԱ (1722) -ին, որ յօշականցիք իւրանց այգոնցէն 20 այգի և Ե (5) ջրաղացք ծախած էին վեզրին, իսկ մեք այս վերոյ գոեալ այգիքս և և ջրաղացքս յիւրեանց գնօվն յետս առաք վեզրէն և մինն այս այգոնց էր Մխիթարի որդի Տէր Խաչատուրինն, և այս Տէր Խաչատուրի այգիս իւր գնօվն, որպէս ի մէք առեալ էաք վեզրէն յետս դարձուցաք այս Տէր Խաչատուրի որդոցն Մարուդ վարդապետին, Պետրոսին, Պողոսին և Անդրէասին: Այսուհետև այս այգուս հետ ոչ ոք իլախայ չունի, զի սիրով և յօժարութեամբ ծախեցաք սոյն Տէր Խաչատուրի որդոցն»: Կալվածագրեր, էջ 79:

[38] «Յետոյ ի ժամանակս Ալեքսանդր կաթուղիկոսին Պոլսեցւոյ մեռանին Գրիգորն և կինն անզաւակ, վասն որոյ սուրբ Աթոռս զաւթէ զերիս կտոր այգիսն»,- Ջամբռ, էջ 177:

	վարդապետի այգու մեկ բաժինը	ոաքար	թած			Ալբակեցի	
46	Աբրահամ վարդապետի այգու երկու բաժինը		գնված	4 թուման	1637	Մուհամմատ	
47	Միքայելի այգին		գնված	5 թուման	1665	Միքայել	Հակոբ Ջուղայեցի
48	Մկրտչի այգին		գնված	2 թուման	1666	Մկրտիչ	
49	Թադևոսի այգին		վակֆ		1703		
50	Մինասի այգին		գնված	4 թուման 5000 դինար	1736	Մինաս	Աբրահամ Կրետացի
51	Կարուգյոզի այգին		վակֆ		1670		Հակոբ Ջուղայեցի
52	Եղսումի այգին		վակֆ		1714	Եղսում	Ալեքսանդր Ջուղայեցի
53	Հովհաննեսի այգին		վակֆ		1750	Հովհաննես	Ղազար Ջահկեցի
54	Տիգրանի այգին		գնված	7թուման	1745	Տիգրան	Անանիա վարդապետ
55	Նիկողայոսի այգետեղերը		գնված		1745	Նիկողայոս	
56	Միքայել վարդապետի այգին	Երևան	վակֆ		16551	Միքայել վարդապետ	Փիլիպոս Աղբակեցի
57	Մարխանենց այգին		վակֆ		1658	Խոջա Հակոբ	Հակոբ Ջուղայեցի
58	Ղարաղաշենց այգին		վակֆ		1676	Խոջա Սահակ	
59	Ջիմշիտենց այգին		գնված	10թուման	1728[39]	Ջիմշիտ	Աստվածատուր Համադանցի
60	Ավետիկի այգին		վակֆ		1644	Թորոս, Մանուկ	Փիլիպոս Աղբակեցի
61	Մատթեոսի և Թադևոսի այգին		գնված	1-5թուման	1644	Մատթեոս, Թադևոս	

[39] Սիմեոն Երևանցին այդ գործարքի հիմքում դնում է 1139 մուսուլմանական տարեթիվը, որը սխալ է: Այդ տարեթիվը համապատասխանում է հայկական 1728-1729 թթ., որի ընթացքում կաթողիկոսներ Կարապետ Ուլնեցին (Զեյթունցի) : Իսկ, քանի որ որպես ստացող հիշատակվում է Աստվածատուր Համադանցուն, ուրեմն գործարքը հավանաբար կատարվել է մինչև 1725 թ.:

62	Մատթեոսի և Թադևոսի կես այգին		վակֆ		1644	Մատթեոս, Թադևոս	
63	Հասան աղայի այգին	Նորագյուղ	գնված	10թում-ան	1714	Հասան աղա	Ալեքսանդր Զուղայեցի
64	Արիստակես ի այգին		վակֆ		1711	Միրիխան (աղջիկը)	
65	Համազի այգին		վակֆ		1712	Համազ	
66	Շուլավերցի-ներ Թահմա-զի, Բայրա-մի, Բա-յանդուրի այ-գին		վակֆ		1678	Թահմազ, Բայրամ, Բայանդուր	Հակոբ Զուղայեցի
67	Թորոսենց այգին	Զորա-գյուղ	վակֆ		1656	Խոջա Հակոբ	
68	մեկ այգի	Թավ-րիզ	սեփակ-ան				
69	Այգի Թավրիզի մոտ գտնվող Դուխուրգան գյուղում	Դու-խուր-գան	գնված	4թո-ւման	1655	Մահմատ-Ալի	
70	Միրզա Մահմատի այգին	Դուխուրգ ան	գնված	7թումա ն	1656	Մահմատ	
71	Մահմատի այգին	Դուխուր-գան	գնված	14թում ան	1656	Մահմատ	
72	Խանումի այ-գին	Թիֆլիս	վակֆ		1767	Խանում	Սիմեոն Երևան-ցի[40]

Այգիների ձեռք բերումը շարունակվել է նաև Սիմեոն Երևանցուն հաջողված կաթողիկոսների օրոք: Այդ մասին է վկայում 1790 թ. գրված հետևյալ կալվածագիրը.«Թվին ՌՄԼԹ (1790) Զորութիւն գրոյս այս է, որ ես՝ հաշտարակցի Կիւրեղս վերոյ թարիղիս և իմ կենդանութեամբս կտակ արարի գիտութեամբ ներքոյ կնքեալ քահանայից և իշխանաց. այսինքն ինձ Հաշտարակ մուլք ունեմ մեկ այգի և մեկ ձեռն տուն, որ այգիս իմ յոժար կամովս վախուպ արարի սուրբ իջման տեղին»:[41] Աղբյուրների վկայությամբ էջմիածնի վանական միաբանության կողմից միաժամանակ, առանձին դեպքերում կատարվել է այգիների վաճառք: Խոսքը մասնավորապես վերաբերում է արդեն հիշատակված Օշականի գրավի դիմաց վաճառված այգիներին, որոնց սեփականության իրա-

[40] Զամբռ, էջ 164-185:
[41] Կալվածագրեր, էջ 99:

վունքը կրկին վերադարձնում է Աստվածատուր Համադանցին: Այգիների մի մասը, ինչպես վկայում են աղբյուրների մի մասը, հետագայում վերավաճառվել են նախկին տերերին, մի մասն էլ այլ մարդկանց: Կալվածագրերից մեկում այդ մասին կարդում ենք. «Զօրութիւն գրոյս այս է յՕշականայ այգոնցէն լուսաւորեալ հոգի Աստուածատուր կաթուղիկոսն ի (20) այգիեր և յետ առեալ վեգրիցն. ի նոցանէ ոմանք սրբոյ Աթոռոյս համար պահեալ էր, և ոմանք դրամով ծախեալ էր այլոց. ի ծախսելոցն մինն է յօշականցի Փիլիպոսի որդի Առաքելի այգին, որ վերոյ գրեալ Աստուածատուր կաթուղիկոսն ծախեալ էր էջմիածնեցի Աղաբէկի որդի Մկրտումին. յետ մեռանելոյ Մկրտումին և իվրայնոցն ամենեցուց, այգին այլվի վախուպ էին արարեալ սրբոյ Աթոռոյս: Իսկ այժմ ես Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Պետրոսս, կաթուղիկոսս սրբոյ էջմիածնի և ամենայն հայոց,[42] նույն Մկրտումի այգին կրկին ծախեցի սբ. Գայանեի առաջնորդ եղիազար վարդապետին, 3 թուման փողի»:[43] Որոշ դեպքերում կատարվել է այգիների նվիրատվություններ առանձին վանական հաստատությունների: Այդ մասին 1743 թ. գրված մի կալվածագրում կարդում ենք. «Տէր Ղազար կաթուղիկոսս ամենայ հայոց, որ զնյոնտայ սրբոյ Անանիայի Առաքելոյ վանաց Տերծ ելեալ այգին, որ կոչի Ճըմշտի և լուսաւորեալ հայրապետքն առեալ էին ի տնոց ի Ճըմշիտ անուն այլազգւոյ և ի ժամանելն իմ սուրբ Աթոռս, դաւաճի դուրս եկն, որ կրկին առի հաստատուն դապալայիւ և տեսի, զի լուսատուին մեր սուրբ Խորվիրապի վանայ այգի ոչ գոյր և անդրէն բնակեալ միաբանքն յոյժ անմխիթար, վասն որոյ ի գութ շարժեալ զվերոգրեալ այգին ընծայեալ վախմն արարի մեծի լուսաւորչին մերոյ սրբոյ Հորին և զայս եղև գիտութեամբ արիապատուացն մերոյ»:[44] Նույնկերպ ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, Աշտարակում այգի է հատկացվում Սաղմոսավանքին. «Զայս այգիս Յակովբ կաթուղիկոսն Զուղայեցի առնուի ի տաճկէ տասն և չորս թումանի և տայ Սաղմոսավանիցն յիշատակ»:[45] Իսկ սբ. Անանիայի վանքին տրված այգու նվիրատվության մասին Սիմեոն Երևանցին տեղեկացնում է. «Դարձեալ երևանցի Աւետիքի որդիք խոճա Թորոսն ի խոճա Մանուկն գոլով իւրեանք ի յԱսպահան զմէկ այգին իւրեանց յերևան տան վախմ Փիլիպոս կաթուղիկոսին, և Փիլիպոս կաթուղիկոս ևս տայ վախմ՝ սրբոյ Անանիայ առաքելոյ անապատին ի ՌԵԴ (1054) թուին տաճկաց (իմա 1644 թ. հայոց - Հ.Թ.)»:[46] Սկզբնաղբյուրներում այնքան էլ սակավ չեն տեղեկությունները խաղողի այգիներ տնկելու, մշակելու, հնձան և կարաս օրինելու, տնկիների ընտրության,

---

[42] Հավանաբար Ղազար Զահկեցու բացակայության պատճառով Պետրոս Բ աթոռակիցը իրեն վերագրել է Ամենայն հայոց կաթողիկոսի իրավունքներ:
[43] Կալվածագրեր, էջ 88:
[44] Նույն տեղում, էջ 83:
[45] Զամբռ, էջ 177:
[46] Նույն տեղում, էջ 181:

բուժման միջոցառումների մասին: Ըստ այդ տեղեկությունների վանական տնտեսությունում իրենց զարգացման առանձնահատկություններով տարբերվել են խաղողի որթի երկու խմբի մշակության՝ պառկած վազերով և կանգնած: Հիմնականում տարածված էր պառկած վազերով խաղողի հաչաբաշ, խարջի, հալեորուկ, գոմշի մամա, խոզակաշի, եզաղք, կարկիր և սպիտակ Ահաբի, մսխալի, ճիլառ, կարմիր և սպիտակ քիշմիշ, կոթոունջ, հալաղի և գինուկ տեսակների մշակությունը: Շարդենը հատկապես առանձնացնում է քիշմիշ տեսակը, որը նրա խոսքերով ոչնչով չէր զիջում իրենց մուսկաթին:[47] Տնամերձ հողատարածքներում, ինչպես նաև բոստանային մշակություններին շրջապատող վայրերում մշակել են կանգնած խաղողի իծապտուկ, խալիլի, սերկևիլի, ալի-դերեսի, խաթուն-բարմաղի, արազբարի, թանի տեսակները, որոնց մեջ, ինչպես նշում է Ադամ Օլեարուիսը, առանձնանում էր ալի-դերեսին իր սև հատիկներով, մեծ ողկույզով և հյութալիությամբ:[48]

Պետք է նշել, որ կանգնած վազերով խաղողի համեմատաբար քիչ տարածումը պայմանավորված էր նրա տեսակների թույլ բերքատվությամբ: Բացի այդ, այն մշակում էին բացառապես քամոտ ու ավազոտ վայրերում, ուր ունակ լինելով պատատուկի նման բարձրանալու հատուկ պատրաստված ցանկապատերին՝ արգելք էին հանդիսանում ավազախառն քամիների ներթափանցմանը:

Համեմատած երկրագործական մյուս կուլտուրաների հետ, խաղողի վազի մշակությունը հսկայական աշխատանք էր պահանջում: Այն բազմացնում էին, ինչպես ցողունային կտրոններով, այնպես էլ անդալիսի ծնով:

Ցողունային կտրոններով բազմացման դեպքում աշնանը, իսկ ավելի հաճախ գարնանը որպես կտրոն ընտրում էին բարձր բերքատու տեսակներից առողջ և լավ զարգացած միամյա ընձյուղներ: Կտրոնները սովորաբար ոռոգման ուղիների երկայնքով տնկում էին հատուկ պատրաստված ակոսների մեջ 20-30սմ խորությամբ ու 10-15սմ հեռավորությամբ, որից հետո դրանց վերին ծայրերը կտրում էին այնպես, որ հողից դուրս մնա 2-3 բողբոջ (աչք): 2տարի անց, տնկիները լավ արմատակալելուց հետո, գարնան սկզբին տեղափոխում էին այգու համար նախատեսված հողամասը, որը կոչվում էր աղբյուրներում նորատունկ այգի: Կալվածագրերից մեկում այդ մասին կարդում ենք. «Կամաւն աստծոյ և հրամանաւ տեառն Սիմեոն սրբազան կաթուղիկոսին ամենայն հայոց ևս սրբոյ Խորվիրապու առաջնորդ Աւետիք վարդապետս, մեր չարեքանոց կողեցեալ այգւոյ տեղն, որ ի գեօղն Նորք, ետո նորգցի Ղազարի որդի Մարկոսի այսու պայմանալ որ իւր բոլոր խարծովն և մասրաֆովն նորապես այգի և ծառ տնկեսցէ ի նմա. յորժամ պտուղն հասանիցի և այգի շինեսցէ այգւոյ կէսն սրբոյ Խորվի-

[47] Chardin, rol, III, p. 337.
[48] Адам Олеарий, ст. 756.

ռապու վանիցն լինիցի և կէսն վերոյ յիշեալ Մրկոսինն ելիցի, որքան այգին շէն մնացէ և պտուղ բերեցէ. և ի միասին ըստ օրինի հարակաղի զխարծն հոգասցուք և զպտուղն կիսեցուք: Իսկ եթե զկարիսցէ թամամ և կատարեալ այգի շինել, վերստին բոլոր այգետեղն սրբոյ Խորվիրապու վանիցն է և եղիցի:.. Գրեցաւ պայմանագիրս ի ՌՄԻ (1771) թուին ի մարտի ԺԶ (16) »:[49] Հարկ է նշել, որ բավականին շատ են տեղեկությունները «նորաշեն», «նորատունկ», «այգետեղ» այգիների վերաբերյալ: Այսպես, թվարկելով Փարաքար գյուղում էջմիածնի վանական տնտեսության այգիների քանակը, Սիմեոն Երևանցին հիշատակում է. «Դարձեալ սույն Անանիա վարդապետս ի սոյն գեղջս ի մեր թուոջն ՌԵՂԴ (1745) առնու ի Յովսեփի որդի տիրացու Նիկողայոսէն զայգետեղ մի»:[50]

Իսկ 1754 թ. վանքի հաշվեմատյանի էջերից մեկում կարդում ենք. «Նորաշէն այգու ԼԸ (38) փորոզի վարձն ետո Ե (5) փողով, ԴՌ (4000) ապասի Գ (3) շահի գիտութեամբ տեղապահին և ժամօրհնօղին»:[51]

Կալվածագրերից մեկն էլ հայտնում է. «Դիտոմն գրոյս այս է, որ եղև ՌՄԿԷ (1798) թվին, որ ես յաշտարակցի դալլաք Վարդազարի որդի Յօսէփս իմ յօժար կամուս յանձն առի այս խամ տեղն, թե կողեցեալ Սաղմոսավանից այսոյ տեղ, որ շինեմ Նորատունկ այգի»:[52]

Այգու համար առանձնացված հողամասը պատրաստելուց հետո, ջրի հոսքին զուգահեռ բաժանում էին մարգերի կամ առուների, որոնց վրա էլ մոտ 1մ հեռավորությամբ տնկում էին արդեն արմատակալած տնկիները: Այնուհետև, մոտ 3-4 տարի շարունակ կատարվում էր մարգերի վերածնափոխում, երբ մարգերի միջև ընկած հողատարածքից (որը սովորաբար 1.5-2մ էր) հողի մի մասը աջ, մյուսը ձախ մարգի վրա էին լցնում («թումբ թափել»), որով և առաջանում էին ապագա այգու թմբերը : Մինչև տնկիների բերք տալը, մարգերի արանքում աճեցնում էին բոստանային կուլտուրաներ: Այդ մասին էլ Զաքարիա Քանաքեռցու հետևյալ հիշատակությունը.«ցանեաց ի մեջ որթոցն վարունգ և սեխ»:[53] Թմբային սիստեմով այգիների հիմնումը բացատրվում էր հիմնականում ջրի սակավությամբ: Բանն այն է, որ յուրաքանչյուր թմբային այգի ուներ իր առանձին ջրման կետը (բանդ), որտեղից ջուրը լցվում էր այգու մեջ պտտվելով թմբից թումբ, դուրս գալիս այգու վերջնամուտից: Այգին ամռանը և աշնան սկզբին ջրվում է 15 օրը մեկ, իսկ քանի որ նշված ժամանակամիջոցում հաճախ դժվար էր հասցնել ջրել, ուստի նման պայմաններում թմբային սիստեմի նպատակահարմարությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր թումբ ջրելու ժամանակ իր մեջ վերցնում էր

---

[49] Կալվածագրեր, էջ 92:
[50] Զամբռ, էջ 179:
[51] Մատենադարան, Կթղկ, դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 266:
[52] Կալվածագրեր, էջ 100:
[53] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 59:

մեծ քանակությամբ ջուր) միաժամանակ թմբերի վերջնամասերում քարից փոքր պատնեշներ էին պատրաստում), որը ներծծվում էր 3-4 օր անց: Դա հնարավորություն էր տալիս թմբային այգիներին մինչև հաջորդ ոռոգումը պահպանելու բավարար չափով խոնավություն:

Ինչպես նշեցինք, խաղողի բազմացման համար կիրառվել է նաև անդալիսի սիստեմը: Նման սիստեմի մասին վկայությունների, թեկուզ քիչ, հանդիպում ենք վանական տնտեսության ելքի ու մուտքի մատյաններում: Այսպես, օրինակ՝ 1745 թ. հաշվեմատյանում կարդում ենք. «ԱՌԵՆ (1500) դիան ետոյ Երևանու այգու անդալիս խաղողի վարձ գործապետ վարդապետի ձեռքն»:[54] Հարկ է նշել, որ անդալիսով բազմացումը հադիսացել է իբրև լրացում բաց մնացած տարածքի համար: Անդալիսով լրացում կատարելիս հող մտցվող մատի ծայրը հանվում էր դուրս և աճող շիվերը կապելու համար վերջինիս կողքին տնկվում էր փայտե ձող: Գարնանը կատարած անդալիսները էտում էին 2-3 բարձրությամբ, իսկ աշնանը՝ առանց էտելու խնամքով թաղում էին: Կատարվում էր նաև կանաչ անդալիս: Այն իրագործում էին հիմնականում հունիսի կեսերից և ավարտում հուլիսի կեսերին: Կանաչ անդալիսի համար օգտագործվում էր վազերի կամ թփերի համար ուժեղ աճած շիվերը կամ հոռոշիվերը: Հիշենք, որ բոլոր դեպքերում անդալիսը մինչև 2 տարի մայր վազից չէր անջատվում:

Աղբյուրներում, որպես խաղողի այգու չափման միավոր, հիմնականում հիշատակվում է «տախտակ»-ը «զիւր բաժին 4 տախտակ այգին տայ յիշատակ սրբոյ Աթոռոյս», «զիւր բաժին յայգւոյն մէկ տախտակ և կէսն ծախէ»,-կարդում ենք «Ջամբռ»-ում:[55] Տախտակն իրենից ներկայացնում էր խաղողի այգիների զուգահեռ ծգվող հողի թմբաշարք: Ճիշտ է, տախտակի չափերը առանձին վայրերում տարբեր են եղել, սակայն այն չի անցել 50-60 թմբից: Ավելին լինել չէր կարող, քանի որ կկատարվեր գերջրում, որի դեպքում այգու սկզբի թմբերը ավելի շատ ջուր կընդունեին, քան վերջինները և դրա հետևանքով այգու սկզբի թմբի վազերի մազարմատները կնեխեին, իսկ վազը կչորանար:

Հարթ տեղերում գցված տախտակները կոչվում էին «Դոլամաս», իսկ լանջային տեղայնքում գցվաները՝ «Քոնդալան» «Սոյնոյ տեղւոյն ներքին ծայրի կողմն մեկ քեօնտալահան հող ևս գոյ, որ է տասն և հինգ ուսմարի տեղ»,- կարդում ենք «Ջամբռ»-ում:[56] Նման տախտակները միմյանցից բաժանվում էին ուղիղ ծգված թմբերի սահմանագծերով՝ միջնակներով. «Այգւոյս այս ի միջի մեծ միջնակէն ի վայր»-կարդում ենք նույն «Ջամբռ»-ում:[57] Հարկ է նշել, որ նորատունկ այգին միշտ չէ, որ հարթ կամ լանջային տեսք է ունեցել: Պատահում էր, որ մեկ կամ երկու

---

[54] Մատենադարան, Կթղկ, դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 75:
[55] Ջամբռ, էջ 165-166:
[56] Ջամբռ, էջ 152:
[57] Նույն տեղում, էջ 166:

զուգահեռ տախտակներ գցելուց հետո ավելացած հողակտորի վերևի մասը լիներ լայն իսկ ներքևինը՝ նեղ: Նման տարածքում տնկված այգիները կոչվում էին «քաշ» (պարսկերեն՝ թեք բառից) «Յոթն տախտակ և երկու քաշ»-ասվում է «Զամբռ»-ում:[58]

Վավերագրերում, որպես խաղողի այգու չափման միավոր գործածվել են «առռ», «օրավար» և «լրդր» հասկացությունները: Դեռ 13-րդ դ. Ստեփանոս Օրբելյանը նկարագրելով Սյունյաց գահերեց Գրիգոր Սուփան իշխանի կողմից 901թ. Մաքենոցած վանքին կատարած նվիրատվությունը գրում է, թե իշխանը Գառնի գյուղաքաղաքից վանքին է նվիրում Շ (500) առռ այգի:[59] 1718 թ. կալվածագրերից մեկում ասվում է. «Ես՝ Արամի որդի Յակոբս, ես իմ կամաւս և իմ ըռազութեամբս ծախեցի իմ մայրենիքե բերած այգին, որ և 5 յառռ տեղ մալում Սիամոնի որդի Մուքիլին ե (5) թուման»:[60] Նույն բնույթի 1722 թ. գրված մեկ այլ կալվածագրում ոմն Հովհաննես տեղեկացնում է, որ իր «Հայրենիք այգին մալում, որ և 8 յառռ տեղ» վաճառում եմ Սարգսի որդի Ստեփանին 17 թումանով:[61]

Առուն երկու թմբերի միջև ընկած այն տարածություններ, որտեղից հոսում էր ջուրը: Եթե ընդունենք, որ թմբի երկարությունը սովորաբար լինում էր մոտ 20-25 մետր, իսկ թմբից-թումբ ընկած տարածությունը 2-2.5 մ. հեշտությամբ կարող ենք որոշել 500 և թե 5 կամ 8 առռ այգու ծավալը: Ինչ վերաբերում է պատմիչի նշած «500 առռ» ունեցող այգուն, ապա պետք է նշել, որ այն վայրերում, որտեղ այգիների քանակը մեծ չէ, նշվում է այգիների թիվը, իսկ Գառնիում տրված է նվիրվող բոլոր այգիների առռների քանակը միասին վերցրած: Իրոք, հաշվի առնելով, ինչպես Գառնիի, այնպես էլ երկրի նախալեռնային մի շարք այլ շրջանների հողային կառուցվածքը, տախտակները հնարավոր չէր զուգահեռ գցել: Տվյալ դեպքում 500 առռ այգի ասելով պետք է հասկանալ նույն վայրում կտրված առանձին այգիներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է 500 առռ: «Օրավար» այգի ասելով պետք է հասկանալ 1 օրվա ընթացքում վարվող հողի տարածաչափը: 1750 թ. գրված կալվածագրերից մեկում կարդում ենք. «... ես Օձոպոցի Մկրտչի որդի եղումս ծախեցի մեր Ծատուրէնց այգի Օձոպայ վանքից առաջնորդ Մարկոս վարդապետին, Դիմաթ ԻՁՌ (26000) դիան, Դ (4) հատովն կէս օրավար այգի Ա (1) չարէք հող, որ իմ կամով ծախեցի Դ (4) հատովն մղտարընն ԻՌՁ (26000) դիան Ա (1) հատն Աբրահամէնց հողն Ա (1) հատն՝ Ասկարխանէնց Պետրոսի այգին Ա (1) հատն՝ Սիմայմոնէնց Տէր

---

[58] Նույն տեղում:
[59] Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս 1911, էջ 179:
[60] Կալվածագրեր, էջ 76:
[61] Նույն տեղում, էջ 77:

Կիրակոսի հողն, Ա (1) հատն՝ վանանց հողն, որ էս մղտարիս կէսը կանի ԺԳՌ (13000) դիան»:[62]

«Լըդր» այգու չափի վերավերյալ 1753 թ. կալվածագրերից մեկը տեղեկացնում է. «Զորությիւն գրոյս այս է, որ ինձ թարվեզէցի Նուբարդի որդի Յակոպիս, որ ունեմ Տուխուրկան էջմիածնու էքու հետն խառն Խ)40) լիտր այքի, որ է մատրն, կամեցայ, որ ծախեմ...»:[63] Հարկ է նշել, որ կալվածագրերը կազմող Հար. Աբրահամյանը ճիշտ չի ընկալել լըդր բառի իմաստը և այն սխալմամբ դարձրել է լիտր: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե ծանրության չափին, ինչպիսին է լիտրը, այլ մակերեսի չափին, ինչպիսին է լըդրը: Նշված ժամանակահատվածում մեկ լըդրը կազմել է 227մ^2, իսկ 1հեկտարը 44 լըդր է: Հետևապես «40 լըդր»-ը պետք է կազմեր 9080մ^2:

Ինչպես երկրագործական մյուս կուլտուրաների, առավել ևս խաղողի վազի մշակությունը ժամանակի պայմաններում հսկայական աշխատանք էր պահանջում: Երբ համեմատում ենք քննարկվող ժամանակաշրջանում սկզբնաղբյուրների հայտնած տեղեկությունները ավելի վաղ հայտնածների հետ, ապա նկատում ենք, որ խաղողի մշակման ասպարեզում նորամուծություններ համարյա չեն կատարվել և մշակման ողջ պրոցեսը մնացել է նույնը:

Այս առումով արժանահիշատակ և Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ից վերցված տեղեկությունները: Հեղինակը տրտնջալով հոգևոր բարքերից շեղումների դեմ՝ ասում, թե նույնիսկ հոգևորականները տարվելով աշխարհիկ բարքերով, իրենց այգիների մասին ավելի էին մտածում, քան հոգևոր գործերի: Եվ փոխանակ առաքինության արվեստում ուսանելու միմյանցից, այգեգործության հնարքների մեջ վարժվում:[64] Նույնն է ասվում Առաքել Դավրիժեցին «Ամենայն վանօրայք ազգիս հայոց, - գրում է նա,- իւրաքանչիւր սևագլուխ ունէր իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, փեթակ և տուն; և մարան և հանբարանոցս, ի զմուտս ստացուածոց նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին» :[65]

Այնուհետև Շնորհալին թվարկում է վազի մշակության հնարները, ինչպիսիք են էտելը, փորելը, մոլախոտերը հեռացնելը, պարվաստերը և բժշկելը:

Այն հանգամանքը, որ էջմիածնի վանական տնտեսության այգետարածքներում վազերն էտելու ժամանակ օգտագործվել է մեծ քանակության աշխատուժ, ու ծախսվել մեծ չափի գումար, վկայում է այդ աշխատանքի խիստ կարևորության մասին: Օրինակ, վանքի հաշվեմա-

---

[62] Նույն տեղում, էջ 27

[63] Նույն տեղում, էջ 90:

[64] Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսեսի Շնորհալոյ էջմիածին, 1865թ., էջ 29:

[65] Առաքել Դավրիժեցի, էջ 288-289:

տյանների առանձին էջերում հանդիպում ենք հետևյալ տեղեկություններ. «է (7) թուման ԳՌ (3000) շահի, Ա (1) փող ետու տեղիս մեր Գ) (3) այգեաց յետոյ ԸՃ (800) մշակաց»,[66] «Գ (3) թուման ԳՌԹՃ (3900) դիան ետու մեր Դ (4) այգեաց էտվոր ԹՓՐԲ (678) մշակաց»[67], կամ «Ղուի և Վեդի մեր այգւոյ յետօղ հինգ հարիւր ԼԸ (38) մշակաց վարձն մեկ շահիով տուաք, երկու թուման վեց հազար ԹՃ (900) դիան»[68] և այլն: Էտը կատարվում է վաղ գարնանը, մինչ վազի բողբոջները բացվելը. «ՉՌ (6000) դիան, է (7) շահի, Բ (2) փող ետու ՃՕԹ (159) էտվոր մշակած վարձ մարտի ԺԹ (19) վերի այգւոյն »,- տեղեկացնում է հաշվեմատյանը:[69] Էտի ժամանակ հեռացվում էին չորացած հին և նոր ավելորդ ու անկանոն աճած ճուղեր: Վազին անհրաժեշտ բեռնաձուություն տալու համար կատարվում էր էտի երկու ձև՝ երկար և կարճ: Երկար էտելու դեպքում կրճատվում էր շիվերի քանակը, իսկ կարճի դեպքում թողնվում էր համեմատաբար ավելի շատ շիվեր՝ պահպանելու վազերի բեռնվածության համապատասխան աչքերի քանակը: Այդ մասին ուշագրավ վկայություններ է հաղորդում Ներսես Շնորհալին «Այլև հատանելու,- գրում է նա,- այդ իմաստունների մետ տարբերակված է՝ ըստ տնկիների տեսակի, քանի որ մի քանիսը արմատի մոտից, մյուսները հեռվից են կտրում. մի մասի վրա ավելի շատ և այս անենը որպիսգի այգիները ավելի շատ պտղաբերեն և գինու չափն ու քանակը ավելի ևս աճեցնե» :[70] Խոշոր ողկույզներ և որակյալ պտուղներ ստանալու համար, ելնելով վազի տեսականու առանձնահատկություններից և հզորությունից պարտադիր չէր վազի երկարությամբ բոլոր բերքատու աչքերը պահպանել: Որքան վազի վրա մատերը կարճ էտվեին, այնքան ողկույզների քանակը քիչ կստացվեր, իսկ որակը՝ բարձր:

Էտի կարևորությունը առավել շատ երևում էր այն ժամանակ, երբ այգին ցրտահարվել էր կամ էլ բնական աղետների) կարկտահարության, արևահարություն) ենթարկվել: Այս մասին դարձյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Շնորհալին. «Եվ նա - գրում է Շնորհալին, - թախծալի սրտով պատասխանում է, ինչ ասեմ պատահած աղետների մասին, քանի որ մի մասը ճճիներից վնասվեց, մի մասի ծաղիկները թափվեցին և մյուսներն էլ արևակեզ լինելով ողկույզի վրա չորացան և կամ էլ նեխությամբ ապականվեց և թե ինչ պիտի անեմ՝ չգիտեմ ելքը այս պատահած վտանգներից: Եվ ընկերը թելադիր լինելով նրան առաջարկում է՝ մի մասը պատվաստել և մյուսները փորձված հնարքներով բուժել»:[71] Այն դեպքում, երբ ցրտահարության պատճա-

---

[66] Մատենադարան, Կթղկ, դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 34:
[67] Նույն տեղում, էջ 47:
[68] Նույն տեղում, էջ 391:
[69] Նույն տեղում, էջ 101:
[70] Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 30:
[71] Նույն տեղում, էջ 30-31:

ռով վնասվում էր վազերի աչքերի 60-70%, էտը խորն էր կատարվում, հեռացվում էին բոլոր ոչ պիտանի մասերը, որպիսի արագանա առողջ մնացած կամ քնած բողբոջների զարգացումը: Շատ ուժեղ ցրտահարության դեպքում, երբ խիստ վնասվում էր վազի ամբողջ վերգետնյա մասը, այն բնատում էին (կունդ անել) հողի մակերեսին հավասար կամ կենդանի մնացած մասից 8-10սմ բարձր: Կանաչ հատումների ժամանակ հարմար դիրք ունեցող հողաշիվերը պահում էին, վաղ ժամկետում ծերատելով 4-5-րդ հանգույցից հետո: Միաժամանակ, ցրտահարված այգիները ջրում էին վաղ գարնանը, նախքան էտելը, այնուհետև վեգետացիայի ընթացքում սովորականից երկուսից երեք անգամ ավելի: եթե ցրտահարությունը տեղի էր ունենում էտից հետո մինչև աչքերի բացվելը, սպասում էին մինչև առողջ մնացած և պահեստային բողբոջների ուռչելը, որից հետո հեռացնում էին ցրտահարված մասերը:

Կարկտահարության դեպքում այն մատերը որոնց կանաչ շիվերը շատ էին կոտրատվել, էտում էին խորը, թողնելով 1-3 հանգույց: Իսկ այն դեպքում, երբ մատի վրայի շիվերը մինչև հիմքը չէր կոտրված, էտում էին՝ թողնելով հիմքին մոտ գտնվող երկուսից -երեք շիվ և կարճացնում վերքի տակից: Հետագայում այդ շիվերի վրա առաջանում էին մեծ քանակությամբ բճաշվեր, որոնցից թույլերը և ոչ հարմար դիրք ունեցողները հեռացնուն էին, իսկ ծերատված շիվերի վերին մեկ-երկու հանգույցներից աճող բճաշիվերը պահպանում:

Էտելուն անմիջապես հետո հաջորդում էր կտրած մատերի «արքատ» հավաքումը, որը համեմատած էտին ավելի քիչ աշխատուժ էր պահանջում և հասկանալի էր, որ նաև քիչ վարձատրելի էր: Օրինակ, էջմիածնի վանքի Երևանում ունեցած մի այգին էտող 25 մշակների վճարվել է 500 դիան, իսկ նույն այգու «արքատ ժողով Դ)4) մշակած» 600 դիան:[72]

Խաղողի վազի մշակման հաջորդ աշխատատար պրոցեսը էտելուց հետո՝ թմբերի փորելն էր: Այն ոչ միայն փխրեցնում էր հողը, այլև ոչնչացնում մոլախոտերը: Փորը կատարվում էր բահերով, ոչ ուշ, քան ապրիլի կեսերը, երբ դեռ աչքերի բողբոջները չէին մեծացել, այլապես նոր բացվող բողբոջները բահերին շփվելիդ հեշտությամբ պոկվում և թափվում էին: «յՕշականայ և Աշտարակու մեր այգեաց փողով ԴԵԽԲ)448) մշակած,յորոց ԱԵՕԱ (181)-ին Դ (4) փարայով, իսկ ԲԵԿԷ (267)-ին Ե (5) փարայով վարձ ետու, 3 թուման 4000 ԴԵ (400) դիան, ձեռամբ վերակացու տէր Յարութիւն ի յապրիլ ամսոջ»,- կարդում ենք հաշվեմատյաններից մեկի էջերում:[73] Հարկ է նշել, որ առանձին բարենպաստ տարիներին այգիների փորելը կատարվել է ավելի վաղ: Այդ մասին է վկայում հետևյալ տեղեկությունը «Նորագյուղի մեր այգվոյ ՁԸ (88) փորող մշակած յետո վարձ Գ (3) շահի և կիսով մին թուման 5000

[72] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 73:
[73] Նույն տեղում, էջ 395:

ԴԵ (400) դիան ծեռամբ տէր Սահակին ի մարտ ամսոյ 20 և վեցին»:[74] Փորելու ընթացքում բացվում էին վազերի բները, հեռացվում մակերեսային արմատները, կոճղերը, բնի չորացած, փտած մասերը և դրանով իսկ կանխում վազի հյուսվածքների հետագա քայքայումը: Փորելու կարևորությունը նկատի ուներ Ֆրիկը, երբ երգում էր. «Զիս յօտէ և խոր փորէ,

Որ ես զարթչիմ զուարթանամ...
Առոգա յորդ վտակով,
Որ կանչեմ և մանկանամ...
Յիս սընոյ և դարմանէ,
Որ ի ժամու պտուղ քեզ տամ»:[75]

Փորելու ընթացքում անհրաժեշտ էր խնամքով հավաքել և այգուց դուրս տանել մոլախոտերի մնացորդները, որը և լայնորեն կիրառվել է հանձին մոլախոտ (չայիր) հավաքողների. «Ա (1) թուման ԱՌՉԵԻԵ (162-5) ետու մեր Երևանու Բօշայի այգւոյ էտւորի, փորվորի, չայիր հավաքօղի և արքատ ժօղօվի»,- հաղորդում է հաշվեմատյանում:[76] Փորելուց առաջ, որպեսզի հողը կոշտ չլինի, այգին սովորաբար ջրում էին, որը կոչվում էր «առաջին ջուր»:

Հենակավորումը (խչմարում) նպաստում էր վազերի թևերը և միամյա մատերը գետնից բարձրացնելուն, շիվերն ու ողկույզները պաշտպանում մեխանիկական վնասվածքներից, օգնում բույսի լուսավորմանը, օդափոխությանը, ծաղիկների փոշոտման պայմանների բարելավմանը, հեշտացնում բուժման աշխատանքների կատարումը: Հենակները վազերի շուրջը դրվում էին փորելուց անմիջապես հետո, երբ բողբոջները դեռ լավ չէին բացվել: «ԴՌ (4000) ետու Խ (40) բեռն խշմարի փայտի ի յՕշական Պապ մշակի ծեռօք ապրիլի Ի (20)»,- հաղորդում է մատյանը.[77]

Թեև տերևատման մասի աղբյուրները անմիջական տեղեկություններ չեն հաղորդում, այնուհանդերձ պետք է կարծել, որ այդ աշխատանքը ևս կարևորներից էր, երբ բերքի հասունացման շրջանում հեռացնում էին ողկույզների վրա ստվեր գցող, ծերացած, դեղնած, կենսունակությունը կորցրած տերևներ: Դա հնարավորություն էր տալիս ողկույզին կլանելու արևի ճառագայթները, դրանով իսկ պաշտպանվելով մի շարք հիվանդություններից:

Այգու խնամքի կարևոր պայմաններից մեկն էլ վազերի փաթաթված մոլախոտերի (սեզ) ոչնչացումն էր, որը կատարվում էր ամռան կեսերին. «Ա (1) թուման ԵՃՕ (550) դիան ետու Երևանա Պօլատի այգիք

---

[74] Նույն տեղում, էջ 392:
[75] Ֆրիկ, Բանաստեղծություններ, Եր., 1941, էջ 66-67:
[76] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 60:
[77] Նույն տեղում, էջ 66:

յետվորի, արքատ ժողովողի, փորւորի, սեզ հավաքողի»,- կարդում ենք հաշվեմատյաններում:[78]

Առանձնահատուկ նշանակություն ուներ այգու բուժումը, որը տարվա մեջ կատարվում էր 4-5 անգամ՝ տերևները բացվելու պես: Որպես բուժանյութ օգտագործվել է պղնձարջասպի և կրի խառնուրդը, ինչպես նաև ծծումբը: Վանքի հաշվեմատյաններում բազմիցս հանդիպում ենք. «կրչի» արտահայտությունը («Ետու ևս կրչի Վիրապին, որ մեզ կիր տալոյ»,[79] «ԲՈՒԲԵՇ (2250) դիան ետու ԽԵ (45) սոմար կրի»[80] և այլն) , որը վկայությունն է որպես բուժանյութի կրի լայն օգտագործման մասին: Հակոբ Կարնեցու վկայությամբ երկրի այգեգործական տնտեսությունները ծծումբ ստացել են Ալաշկերտի դաշտից, ուր ինչպես հայտնում է Կարնեցին . « ... ելանէ քուքուրդ բազում »:[81]

Սեպտեմբերի կեսերից սկսվում էր այգեկութը և շարունակվում մինչև հոկտեմբերի կեսերը: Այն ևս շատ աշխատատար պրոցես էր, ընդ որում դրանում ընդգրկված էին թե՛ տղամարդիկ, և թե՛ կանայք: Միաժամանակ կատարվում էր աշխատանքի վերաբաժանում, երբ կանայք զբաղվում էին միայն քաղելով, իսկ տղամարդիկ՝ տեղափոխելով և խաղող ճզմելով: Այդ մասին հաշվեմատյաններում կա հետևյալ հիշատակությունը.«ԺԳ (13) ապասի Ա (1) շահի ետու Երևանայ Պօշայի այգւոյ ԻԴ (24) կանաչ խողող քաղողի, ԺԶ (16) կթոց կրօղ և կոխավուրի Դ (4) ապասի Բ (2) շահի Անանիայ վարդապետի ծեռօ»:[82] Բերքահավաքի ընթացքում միաժամանակ կատարվում էր տեսակավորում, երբ առանձնացնում էին երկարատև պահպանման համար պիտանի տեսակներ (հաշաբաշ, մսխալի, եզախք) ու տեղափոխում հատուկ այդ նպատակի համար պատրաստած կառույցները (սառցատներ): Վանքի հաշվեմատյանները մեզ տեղեկություններ են թողել նման «ՉԵ (600) դիան յետու սառցատան տեղ քանդող ԺԲ (12) մշակա»,[83] կամ «Ժ (10) շահի ետու սառցատան շինողք Ի (20) մշակաց»[84] և այլն: Խաղողի, ինչպես նաև մյուս մրգերի պահպանման համար շատ կարևոր նշանակություն ուներ սառցատների ջերմաստիճանի կայունությունը: Ուստի սառցատները կառուցում էին գետնափոր ձևով, ուր օդի հարաբերական խոնավությունը լինում էր 70-80% ասիմաններում: Հաճախ էր պատահում, որ բարձր խոնավության պայմաններում խաղողը հեշտությամբ վարաքվում էր սնկային հիվանդություններով, որոնցից ամենավտանգավորն էին գորշ ու կանաչ փտումը: Այդ հիվանդությունների դեմ պայքարելու

---

[78] Նույն տեղում, էջ 47:
[79] Նույն տեղում, էջ 42:
[80] Նույն տեղում, էջ 45:
[81] Մանր ժամանակագրություններ, հ. 2-րդ, էջ 556:
[82] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 52:
[83] Նույն տեղում:
[84] Նույն տեղում, էջ 117:

համար կիրառվում էր ծծմբային գազով մշակման մեթոդը, երբ այրում էին ծծմբափոշին՝ կրկնելով այն 10-15 օրը մեկ անգամ: Այս եղանակով հնարավոր էր խաղողը պահել մինչև ապրիլ ամիսը:

Խաղողի այգու խնամքի պրոցեսը այգեթաղն էր, որը սկսվում էր բերքը հավաքելուն պես: Ինչպես վկայում է Շարդենը, Արարատյան դաշտում և նրան հարող նախալեռնային շրջաններում, ուր ձմեռը խստաշունչ էր, վազերը ցրտահարվելուց փրկելու համար ծածկում էին հողով:[85] Հարկ է նշել, որ այգեթաղը թերևս ամենաաշխատատար պրոցեսն էր, որը պահանջում էր շատ մեծ քանակության աշխատուժի օգտագործում: Եվ պատահական չէ, որ վանքի հաշվեմատյանները բազում տեղեկություններ են հաղորդում վանքապատկան այիգներում օգտագործված մեծ քանակի աշխատուժի ու այդ գործի համար ծախսված մեծ չափի գումարների մասին: Օրինակ, միայն Վաղարշապատի երեք այգիների «բաղաթաղին» մասնակցած 365 մշակների վճարվել է 755 դինար գումար:[86]

2. Հացահատիկային և տեխնիկական կուլտուրաների մշակություն

Էջմիածնի վանական տնտեսության երկրագործական մշակությունների մեջ հացահատիկային կուլտուրաների մշակմանը, նրանց տեսակների, բերքատվությանը վերաբերող վկայություններին աղբյուրները համեմատաբար սակավ են: Այնուհանդերձ ցորենի, գարու, հաճարի, կորեկի տարեկանի ու բրնձի մասին մատենագրական երկերում, ուղեգրություններում, ժամանակագրություններում ու հիշատակարաններում պահպանված առանձին տվյալներ հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ մշակությունը ևս տարածված էր: Իսկ ընդհանուր առմամբ հացահատիկային կուլտուրաների մշակությունը հիմնականում կենտրոնացված էր երկրի լեռնային շրջաններում, ինչպես օրինակ Բարձր Հայքում, Գեղարքունիքում, Շիրակի Սարահարթում և այլն: Առաքել Դավրիժեցին, օրինակ, նկարագրելով Զալալի ելուզակների ավարառությունները նշում է, թե նրանց հատկապես հետաքրքրում էր Գեղարքունիքի շրջանը, քանզի, ինչպես գրում է պատմիչը, գիտեին «...թէ անդ են համբարք ցորենոյ»:[87] Իսկ Հակոբ Կարենեցին Բարձր Հայքի վերաբերյալ հայտնում է, որ այնտեղ. «...գարի և ցորեան բազում լինի»:[88] 17-դ թուրք պատմիչ Էլվիա Չելեբիի վկայությամբ մասնավորապես գարունը հարուստ բերք էր աճում Նախիջևանի խանությունում, որտեղ

---

[85] Chardin, vol. III, p. 337:
[86] Մատենադարան, Կրկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 52:
[87] Առ.աքել Դավրիժեցի, էջ 83:
[88] Մանր ժամանակագրություններ, հ.3, էջ 569:

ինչպես հաղորդում է նա «Տարին շատ առատ է և ուժեղ»:[89] Հատկանշական է, որ Մակվի շրջանից ևս հաց է առաքվել արևելյան Հայաստանի երաշտով տառապող շրջաններ. « թէ ժամանակ մի եղև սղութիւն հացի, յերկիրն մակուայ ցորեան առատ է», - հայտնում է 1636 թ. Մակվից Կոտայքի գավառի Գյամրեզ գյուղում բնակություն հաստատած ոմն Կիրակոս:[90] Արարատյան դաշտի բնակլիմայական բարենպաստ պայմանները լայն հնարավորություններ էին ստեղծել էջմիածնի վանական տնտեսությունում հացահատիկային կուլտուրաների մշակության համար: Թեև այն հիմնականում փակ բնատնտեսական բնույթի էր, այնուհանդերձ այդ կուլտուրաներից որոշ տեսակների վաճառքը վկայությունն է դրա տարածվածության մասին: Այս առումով արժանահիշատակ են վանքի «ելից-մտից» հաշվեմատյանների հայտնած տեղեկությունները: Դրանցից մեկում կարդում ենք. «Ցորեան ծախեցինք ՀԲ (72) սոմար կես, մեկ սոմարը ԸՃ (800) դիան, ամբարտար տէր Հայրապետի ձեռօքն, հոկտեմբերի ԻԳ (23)» մեկ այլ տեղում էլ կարդում ենք. «գարի ծախեցի մէկ խալվար. ԵՌ (500) դիան ամբարդարի ձեռօք»:[91] Հատկանշական է, որ բավականին մեծ քանակի գումարներ են ծախսվելու սերմացու հացահատիկ գնելու համար:

Օրինակ, հաշվեմատյաններից մեկում տեղեկանում ենք, որ միայն օշականցի Հակոբ Վարդապետին տրվել է 10 թուման գումար «սերմացու ցորեան գեներոյ»,[92] իսկ ֆրանկանոց գյուղի բնակիչներից 40 սոմար սերմացու գարի ձեռք բերելու համար ծախսվել է 12000դիան գումար:[93]

Հացահատիկային կուլտուրաների մշակության անհրաժեշտությունով է բացատրվում այն հանգամանքը, որ վանական տնտեսությունում հաճախ այգետարածքները հատկացվել են այդ նպատակին: Այս առումով հետաքրքիր տեղեկությունների ենք հանդիպում Սիմոն Երևանցու մոտ: Թվարկելով Վաղարշապատում ունեցած վանական հաստատության այգիների քանակը՝ նա գրում է. «Դարձյալ ունեցեալ է սուրբ Աթոռս ի յայս գեօղս զքանի այգի ևս, որք այժմ են սերմանելի տեղի և արտք»:[94] Ընդհանրապես «Ջամբռում» հաճախ ենք հանդիպում «4 արտ արարեալ ցանեմք» արտահայտությանը:[95]

Ըստ Սիմեոն Երևանցու և հարակից տեղեկությունների, էջմիածնի վանական հաստատության ունեցած «սերմանելիք» հողատարածքները միայն Վաղարշապատում հետևյալ պատկերն են ներկայացնում.

---

[89] Էվլիա Չելեբի, էջ 72:
[90] Տե՛ս Զաքարիա Քանաքեռցի, հ. Բ, էջ 12:
[91] Նույն տեղում:
[92] Նույն տեղում, էջ 347:
[93] Նույն տեղում, էջ 32:
[94] Ջամբռ, էջ 169:
[95] Նույն տեղում, էջ 171-184:

N	Հողատարածքի անվանում	Չափը	Կարգավիճակը
1	Մեծ Յոնջալուղ	120 սոմար	
2	Քոնդալան հող	60	
3	Ջանիբեկի ջրաղացի ներքևի հողը	50	
4	Ջանիբեկի ջրաղացի արևելյան կողմի հողը	55	
5	Մեկ Քեռնդալան հող	15	
6	Մանկասարենց այգու հարավային կողմի հողը	70	Սեփական «ի բնե անտի»[96]
7	Քալառու կողմն ընկած հող	30	Սեփական «ի բնե անտի»
8	Շորաքեաթի հողեր	150	Սեփական «ի բնե անտի»
9	Հին Յոնջալուղ	180	Սեփական «ի բնե անտի»
10	Ղոչերի ուս կոչված հողը	80	
11	Հերանանք	350	Սեփական «ի բնե անտի»
12	Թեղուտներ	90	Սեփական «ի բնե անտի»
13	Փշատի ծառ	120	Սեփական «ի բնե անտի»
14	Սաղախլու	100	Սեփական ի բնե անտի»
15	Իլանլու	----	Սեփական «ի բնե անտի»
16	Շահարխ	50	Սեփական «ի բնե անտի»
17	Միջի ջրաղացի տակի հողը	90	
18	Վերին ջրաղացի մերձ հողը	100	
19	Քարաքթի	70	Սեփական «ի բնե անտի»
20	Քարաքթին մերձ հողը	150	Սեփական «ի բնե անտի»
21	Ճլուտ	170	
22	Խանլղ	160	
23	Հռիփսիմեի տեղ	90	Սեփական «ի բնե անտի»[97]
24	Մխիթարենց		
25	Ներքևի փոս	124	
26	Գայանեի վանաց ներքև ընկած	210	
27	Ակնանլու	140	

Թեև տեղեկություններ չկան վանքապատկան մնացած վայրերում հացահատիկային կուլտուրաների հատկացված հողատարածքների վերաբերյալ, պետք է կարծել, որ հատկապես նախալեռնային և լեռնային գոտիներում գտնվող Եղվարդ, Մաստարա, Ամիրի գյուղ, Քելիշքենդ, Դիպակլու, Քիրաղլու և Մելիք գյուղ համայնքների հողատարածքների հիմնական մասը հատկացված էր այդ մշակություններին: Ավելին, Մելիք գյուղի վաճառքին վերաբերող կալվածագրում ասվում է, որ գյուղի սեփականատեր Ոզա-Կուլի Ալփավուտը 1662 թ. Հակոբ Ջու-

[96] Թվարկված «ի բնե անտի» հողատարածքների սեփականությունը վակֆային իրավունքի պայմանով վերահաստատվում էր 1609 և 1641թթ.: Սեֆյան տիրակալներ Աբաս 1-ի և Աբաս 2-ի հրովարտակներով, Տես Ջամբռ, էջ 51-54:

[97] Ջամբռ, էջ 152,158: Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1. վավ. 13, էջ 376:

ղայեցի կաթողիկոսին 2 թումանով վաճառում է գյուղի սեփականության ամբողջական իրավունքը «...բոլոր պատկանելիությամբքն այն է՝ հացահատիկի ցանքսերով ու դաշտերով»:[98] Հաշվեմատյաններից տեղեկանում ենք նաև, որ վանքի միաբանությունը Գեղարքունիքից ստացել է 62 սոմար գարի:[99] Այն հավանաբար ստացվել է Ամիրի գյուղից, որի սեփականության իրավունքը 1660 թ. ձեռք էր բերել Էջմիածնի վանքը:

Առանձին շրջաններում կապված տեղանքի բնակլիմայական առանձնահատկությունների հետ, մշակվել է ցորենի 3 տեսակ՝ դեղին, կարմիր և սպիտակ: Կոշտ երկար և անկյունաձև հատիկներով դեղին ցորենը, լինելով միայն աշնանացան, վանական տնտեսության շրջանակներում համեմատաբար քիչ տարածում ուներ:

Կարմիր ցորենը, որը նույնպես կոշտ էր դեղին ցորենից, տարբերվում էր հիմնականում իր փոքր չափերով: Լինելով աշնանացան՝ այն տարածված էր Գեղարքունիքում, Կարբիի և Ապարանի գավառներում: Ցորենի քիչ դեղնավուն, սպիտակ տեսակը, որը գերազանցապես մշակվել է ոռոգելի հողատարածություններում, ու ցածրադիր վայրերում «Ֆրանկանոց, Փարաքար, Վաղարշապատ, Աղունատու», դասվում էր փափուկ տեսակների շարքին: Այն ցանում էին միայն գարնանը, որից և ստացել էր «գարնանի» անունը:[100] Թեև գարնանացան տեսակի գերակայությանը, վանական տնտեսությունում կատարվել է և աշնանացան: Ըստ 1752 թ. հաշվեմատյանների տեղեկությունների, Վաղարշապատում սեպտեմբերի 3-ից սկսվել և հոկտեմբերի 25-ին ավարտվել է աշնանացանը հետևյալ հողատարածքներում

1.Սադախլու - 70սոմար
2.Ներքևի փոս – 124սոմար
3.Գայանեի վանքից ներքև ընկած հողատարածքում – 86
4.Փշատի ծառ – 210
5.Ակլանլուի երեք հողերում – 140
Ընդամենը՝ 630սոմար:[101]

Նույն աղբյուրի հավաստմամբ գարնանացան է կատարվել հետևյալ չափով

1.Ցորեն – 140սոմար
2.գարի – 205սոմար
Ընդամենը՝ 345սոմար:[102]

---

[98] ՀԱԱ, ֆ. 57, ց 1 գ 7, էջ 8:
[99] Մատենադարան Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 154:
[100] Свод материалов, т. 4, г.1, с. 182.
[101] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 376:
[102] Նույն տեղում:

Համաձայն Ի. Շոպենի տվյալների իրանական տիրապետության վերջերին արդեն էջմիածնի վանական տնտեսության համախառն բերքը հիշյալ կուլտուրաների գծով կազմել է՝

1. Ցորեն – 200խալվար կամ 6000փութ
2. գարի – 60խալվար կամ 1800փութ:[103]

Ըստ Ղ. Ալիշանի տեղեկությունների էջմիածնի վանական տնտեսության ամբարը ի վիճակի էր տեղավորելու մոտ 1440 տ. հացահատիկ:[104] Հասկանալի է, որ վանքապատկան հողատարածքներից այսքան քանակի հացահատիկ չէր կարող ստացվել: Հետևապես, տնտեսության ղեկավարները նկատի են ունեցել հացահատիկի այն քանակությունը, որ ստացվում էր այլ վայրերից: Եվ իսկապես, հաշվեմատյաններից տեղեկանում ենք, որ օրինակ, միայն 1752 թ. խտացվել է.

Կարսից՝ հացահատիկ – 330 սոմար
գարի – 200 սոմար

Բայազետից՝ հացահատիկ – 74 սոմար
գարի 174 - սոմար:[105]

Աղբյուրների հավաստմամբ ցորենի և գարու հետ միասին որոշ տարածում է ունեցել նաև հաճարի, բրնձի, կորեկի և տարեկանի մշակությունը:

Հաճար աճեցվում էր հիմնականում Եղվարդում և Ապարանում ունեցած հողատարածքներում: Տարածված էր նրա կարմիր և սպիտակ տեսակների գարնանացան և աշնանացան մշակությունը: Հուլիսի վերջերին և օգոստոսի սկզբներին այն քաղել են, կալսել և տեղափոխել տնտեսության մթերանոցներ: Այնուհետև կատարել են մաքրման աշխատանքներ, որի մասին կարդում ենք. « Ժէ (17) շահի կես ետու աճար շինող Լե (35) պառաւաց կես շահով Յակոբ վարդապետի ձեռօք»:[106] Մաքրելուց հետո հաճարը որպես ծավար օգտագործվել է վանական ուտեստեղեն պատրաստելիս «Աջարի ծաւար իստակող ԼԴ (34) պառաւի վարձ ետու»,- հաղորդում է նույն աղբյուրը:[107]

Բնակլիմայական նպաստավոր պայմանների առկայությունը վանական տնտեսության համար հիանալի հնարավորություններ էր ստեղծել Արարատյան դաշտավայրում ունեցած հողատարածքներում բրնձի մշակության համար: Եվ պատահական չէ, որ հաշվեմատյաններում բազ-

---

[103] Шолен, И., Исторический памятник, с. 680.
[104] Ղևոնդ Ալիշան, Այրարատ, էջ 228:
[105] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 377:
[106] Նույն տեղում, էջ 34:
[107] Նույն տեղում, էջ 226:

մաքիվ տեղեկություններ կան մեծ քանակությամբ տնտեսությունից բրնձի վաճառքի մասին: Այսպես, 1746 թ. հաշվեմատյանում ասվել է. «Պրինձ ծախեցօմք ՕԲ (52) լիտր, ԲԵԻԵ (225) դիան, փոշի զամն է Ա (1) թուման ԱՌԵԵ (1700) դիան տնտեսի ձեռօքն Օվանէս և Յակոբ վարդապետաց գիտութեամբն»:[108] Իսկ 1758 թ. հաշվեմատյանում կարդում ենք. «Թուին ՌՄԷ (1758) պրինձ ծախեցաք ԵԿԳ (163) լիտր, Ա (1) լիտրն ԻԸ (28) փոշօվ ջինն եղև Ա (1) թուման ԲՌ (2000) դիա»:[109] Արարատյան դաշտում բրնձի մշակության մասին արժեքավոր տեղեկություններ է հայտնում Էվլիա Չելեբին: Նկարագրելով իր ուղևորությունը դեպի Երևան, նա հայտնում է, որ Հրազդան գետի ափով, բրնձի դաշտերի միջով անցնելիս հասնում է Խոջա-բաղի գյուղը, որը Երևանի խանի սեփականությունն էր:[110]

Բրինձը իր մշակության պայմաններով էապես տարբերվում էր հացահատիկային այլ կուլտուրաների մշակությունից: Բրնձի աճեցման համար նախատեսված հողամասը նախ բաժանվում էր տարբեր մեծության քառակուսիներ, որոնք շրջափակված էին հողապատնեշներով: Նախքան ցանքսը, հողամասը առատորեն ջրում էին այն հաշվով,որ հողաթմբերը ջրելուց հետո ամրանան, որից հետո նոր միայն սկսում էին միջցանքսային ոռոգումը: Ցանելուց առաջ սերմերը լցնում էին ջրի մեջ և խառնում՝ թողնելով երեքից վեց օր: «Ա (1) ապասի ետու ի կաւակերտ բրինձ խառնօղ Դ (4) մշակաց»,- կարդում ենք աղբյուրում:[111] Ջրի երես բարձրացած սերմերը իբրև ոչ պիտանի, հեռացվում էին «Թ (8) շահի Զ (6) փող ետու պրինձ իստակ ԻԳ (24) կանանց տնտեսապետի ձեռ»,- հաղորդում է նույն աղբյուրը:[112] Ցանքսը կատարվում էր ջրի հոսքին հակառակ, իսկ հոսքը ամենավերջին քառակուսում կտրում էին այն ժամանակ, երբ այտեղ ջուրը հասնում էր անհրաժեշտ մակարդակի: Ցանելուց երեք ամիս անց բրինձը ծաղկում էր, իսկ հասունանալ սկսում էր ծաղկումից 5-6 շաբաթ հետո: Դա մուտավորապես լինում էր օգոստոսի կեսերին և շարունակվում ամբողջ սեպտեմբերը: Բերքահավաքից մի քանի օր առաջ ջրի հոսքը կտրում էին և սկսվում էր հողերի չորացումը: Բրինձը քաղում էին մանգաղներով, կապում առանձին խրձերով և դնում հողապատնեշների վրա, ուր 2-3 օր անց դրանք չորանում էին: Այնուհետև կալսում էին ու հավաքելով հատիկները պարկերի մեջ՝ տեղափոխում ամբարանոց: Հարկ է նշել, որ բրինձը ոչ միայն օգտագործվել է զանազան ուտեստներ պատրաստելիս, այլև առանձին դեպքերում աղացվել է և օգտագործվել ալյուրի տեսքով «ԳԵ (300) դիան ետու Բ (2)

---

[108] Նույն տեղում, էջ 339:
[109] Նույն տեղում, վավ. 23, էջ 3:
[110] Էվլիա Չելեբի, էջ 85:
[111] Մատենադարան Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 35:
[112] Նույն տեղում, էջ 33:

կանաց, որ ՁՁ (66) օր բրինձ աղուն էին արել»,- տեղեկացնում է աղբյուրը:[113]

Հաշվեմատյանների հայտնած տեղեկությունների համաձայն վանական տնտեսության հողատարածքներում բավականին մեծ էր կորեկի տեսակարար կշիռը: Դա է վկայում այն հանգամանքը, որ վերջինիս մշակության մեջ օգտագործվել է մեծ քանակությամբ աշխատուժ: Օրինակ, 1741թ. կորեկի քաղին մասնակցել են 151 հնձվորներ, որոնց վճարվել է 7440 դինար գումար:[114] Ժամանակագրություններում և հիշատակարաններում հանդիպում ենք նաև «կորեկ հաց», «կըլկըլ կորեկ (խոշոր կորեկ)» արտահայտություններին, որոնք ևս վկայում են հացահատիկային այդ կուլտուրայի տարածվածության մասին:[115]

Ըստ Արամ Օլեարիուսի տեղեկությունների, իրանական տիրապետության սահմաններում տարեկանը հիմանականում մշակվել է Արևելյան Հայաստանում, իսկ բուն Իրանում այն դիտվել է իբրև մոլախոտ:[116] Տարեկանը մշակվել է լեռնային շրջաններում, քանի որ ցրտադիմացկուն է: Ըստ 1754 թ. հաշվեմատյանի տեղեկության, վանական տնտեսությունում տարեկանի ցանքսը կազմել է 39 սոմար:[117]

Ժամանակաշրջանի գլխավոր աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում ինչպես բուն երկրում, այպես էլ էջմիածնի վանական տնտեսությունում դաշտավարության մեջ կիրառվող սիստեմի մասին: Այնուհանդերձ, նկատի ունենալով մշակելի հողատարածությունների սակավությունը, ինչպես նաև ոռոգման ջրի ոչ բավարար լինելը, հնարավոր չէր դաշտավարության եռադաշտյան սիստեմի լայն տարածումը: Մեր կարծիքով այն կատարվել է Արարատյան դաշտում, այն էլ խիստ սահմանափակ տարածություններում: Հիմնականը հանդիսացել է սերմնափոխության սիստեմը, երբ միևնույն հողակտորի վրա ցանքս է կատարվել երկու անգամ, ընդ որում հացաբույսերի ցանքսերին փոխարինել են լոբազգիների, կերային կամ բոստանային կուլտուրաների ցանքսերը: Այդ մասին ուղղակի վկայություն ունի Ժ. Շարդենը: Նկարագրելով իր այցելությունը Արևելյան Հայաստանի տարածքով՝ նա գրում է. «Այստեղ հողը երբեք հանգիստ չի մնում, երբ հավաքվում է մի բերք, իսկույն նրա փոխարեն ցանվում է մի այլ կուլտուրա»:[118]

Ինչպես այգեգործության, այնպես էլ դաշտավարության մեջ բերքատվության բարձրացման կարևոր նախապայման էր հողի պարարտացումը: Որպես պարարտանյութ օգտագործվել է խոշոր և մանր

---

[113] Նույն տեղում, էջ 47:
[114] Նույն տեղում, էջ 63:
[115] ժէդ. հիշատակարաններ, հ. Ա, էջ 194, 302, 312, 430: Մանր ժամանակագրություններ հ. 2, էջ 451, 516:
[116] Адам Омарий, с. 737.
[117] Մատենադարան Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 376:
[118] Chardin, vol. IV, p. 105.

եղջերավոր անասունների աղբը: Ժ. Շարդենի վկայությամբ բարձր է գնահատվել հատկապես աղավնաաղբը և մարդկային արտաթորությունը:[119] Հողերի պարարտացումը կատարվել է մարտ - ապրիլ ամիսներին, երբ ձնհալի ու անձրևների ջրերը տարալուծում էին պարարտանյութը. «ԲՌ (2000) շահի հետ Շորաքեաթի հողերը փէին կրող ԻԱ (12) մշակած պաղչապանի ձեռօք յապրիլի ԺԳ (13)» - հաղորդում է աղբյուրը:[120]

Հողի բերքատվության բարձրացման կարևոր պայմաններից մեկն էլ ոչ միայն մոլախոտերի մաքրումն էր, որի մասին հաշվեմատյանները բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում, այլև քարերից հողատարածությունների մաքրումը և կոշտ հողակտորների մանրացումը: Այդ մասին 1758 թ. հաշվեմատյանում ասվում է «...հող քանդող և մանող ԼԲ (32) մշակաց վարձն ետու Գ (3) պիստով (դրամի միավոր հավասար է 20 դինարի - Հ. Թ) վերակացու Ակոբ վարդապետի ձեռամբ:»[121]

Հողամշակության համար կարևոր նշանակություն ուներ գյուղատնտեսական գործիքները կատարելագործումը, սակայն բնատնտեսության պայմաններում այն չափազանց դանդաղ էր ընթանում: Մատենագրությունից բերված օրինակները բավական են համոզվելու, որ ամենազարգացած հողագործական վայրերում անգամ բրիչային երկրագործության ձևերը մասամբ պահպանվում էին, դեռ 12- րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերտցին հայտնում է, որ վարուցանքը կատարում էին բրիչի օգնությամբ «...իսկ սոքա երկաթի բրիչ ի ձեռն առեալ՝ խոնջեալ աշխատէին ի տարի սերմանեաց»:[122] Նույնիսկ 19-րդ դ. - ի վերջին, ինչպես հավաստում է Ս. Հայկունին, տրապիզոնցի հայը «բրչով կսերմանե լազուտ, լյուբիա, դդում և այլն»:[123]

Դաշտավարության մեջ կիրառվող աշխատանքային գործիքներից հիմնականը արորն ու գութանն էին: Ընդ որում արորը օգտագործվում էր հիմնականում գարնանային ցանքի ժամանակ, քանի որ այն վարում էր մակերեսային, ոչ խորը: Արորի արտադրողականությունը օրական չէր անցնում 0.3 հեկտարից: Արորավարի ժամանակ զբաղվում էին 1-6 մարդ, իսկ որպես քաշող ուժ պահանջվում էր 1-2 զույգ եզ կամ գոմեշ: Զույգ եզներով արորավարը աղբյուրներում կոչվել է «Լուծ». «ԽԱ (40) լուծ սամի (երկաթից պատրաստված ծողեր, որոնց արանքում մտնում էին եզների գլուխները - Հ.Թ.) առինք է (7) անասուն վարուց ձեռամբ վաքիլին, գինն ետու Թ (9) շահի»,- կարդում ենք հաշ-

---

[119] Նույն տեղում, էջ 103-104:

[120] Մատենադարան. Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 34:

[121] Նույն տեղում, վավ. 23, էջ 61:

[122] Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերտցոյ, Թիֆլիս, 1912, էջ 33:

[123] Հայկունի Ս., Տրապիզոնցի հայ գյուղացու կյանքը, «Արարատ» 1905, էջ 938-939:

վեմատյաններից մեկում:[124] Հողամշակման հետ աղբյուրներում պահպանված տերմինների վերլուծությունը վկայում է, որ «Լուծ»-ի միջին միավորը հանդիսացել է 3 լուծ-եզով արորավարը, որը կոչվել է «վեցկի»: Այն գործածական էր նաև նախորդ դարերում: Այսպես, դեռ 12-րդ դ. Մաթեոս Ուռհայեցին նկարագրելով Արծն քաղաքի քորեպիսկոպոս Դավթակի հարստությունները՝ գրում է. «... ութ հարիւր վեցկի եզանց եղանէին ի տան է նորա»:[125] Անշուշտ, այդ թիվը չափազանցություն է: Հավանաբար խոսքը վերաբերում է 80 արորի, որը նույնպես մեծ թիվ էր: Նույնիսկ էջմիածնի վանական տնտեսությունում «լուծ» եզների թիվը չի անցել 30-ից, որի մասին հայտնում էր հաշվեմատյանները «ԺԹ (19) շահի ետու ԻԵ (25) լուծ եզանց սամի»,[126] կամ «Սամի առի Լ (30) լծեն, գինն ետու Ա (1) ապասի»:[127] Աղբյուրներում «լուծ»- ը հաճախ կոչվել է նաև «չութ»: Այդ մասին հաշվեմատյաններից մեկում կարդում ենք «Չութի լուծ քշօղաց ԻԶ (26) աւուրց վարձ ետու Զ (6) փօղով, Գ (3) ապասի, Գ (3) շահի, վեքիլ Այվազի գիտությամբ»: [128]

«Լուծ» – ը միաժամանակ գործածվել է իբրև հողի չափի միավոր, որը կախված հողակառուցվածքից և ոռոգման հնարավորություններից, ամենուրեք միևնույն չափը չի ունեցել, բայց և այնպես այն կազմել է գյուղատնտեսության սեզոնի ընթացքում մեկ զույգ եզով մշակվող հողատարածությունը: Վիմական տարեգրություններից մեկում այդ մասին կարդում ենք. «Եկեղեցուն տուինք Ա (1) լուծ հող ի Տայիս, Ա (1) լուծ հողի ի Դող, ի Գաղս Ա (1) ի Մոխրենիս»:[129] Ի. Պետրուշևսկու կարծիքով մեկ զույգ «լուծ» – ի գյուղատնտեսական սեզոնում վարած տարածությունը կազմել է 6 -7 հա: Որոշ հեղինակներ այդ թիվը հասցնում են 8-10 և նույնիսկ 10-12 հեկտարի: Կարծում ենք, որ բերված տվյալները հիմնականում ճիշտ են կախված հողակառուցվածքից և նրա ոռոգման հնարավորությունից:

Աղբյուրներում հանդիպում ենք նաև «օրաւար» արտահայտությունը: Կալվածագրերից մեկում այդ մասին կարդում ենք «Պատճառ գրոյս այս է, թվին ՌՆՂԹ (1750), որ ես օծոպեցի Սկրտչի որդի Եղումս ծախեցի մեր Ծատուրենց այգին Օծոպայ վանից առաջնորդ Մարկոս վարդապետին, Ղիմաթ ԻԶՌ (26000) դիան, Դ (4) հոտովն կէս օրավար այգի»:[130] Հանդիպում ենք նաև «օրաւար հող», «աւրաւար արտ» արտահայտություններին:[131] Հասկանալի է, որ «օրաւար»-ը այստեղ հան-

---

[124] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 23, էջ 42:
[125] Պատմութիւն Մատթեոսի Ուռհայեցւոյ, Երուսաղեմ, 1869, էջ 121:
[126] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 121:
[127] Նույն տեղում, էջ 197:
[128] Նույն տեղում, էջ 136:
[129] Վիմական տարեգիր, էջ 84:
[130] Կալվածագրեր, էջ 90:
[131] Մատենադարան, Ձեռագիր 3031, էջ 100,125, Վիմական տարեգիր, էջ 58, 64, 158:

դես է գալիս որպես հողատարածության չափ, այսինքն արորի՝ արևածագից մինչև արևամուտ կատարած վարի քանակություն:

Աշնանային ցանքի դեպքում գործածվել է թեթև ու ծանր գութանը: Թեթև գութանը վարել է երկաթե խոփ ունեցող արոտից ավելի խորը և որպես քաշող ուժ օգտագործվել է 3-4 զույգ եզներ: Օգտագործվել է նաև ավանակ, որի մասին հաշվեմատյաններից մեկում կարդում ենք «ԸԵ (800) դիան ետու Բ (2) էշ առի գութանի, ծեռամբ վէքիլ Մաղաքին ի մարտի Զ (6)»:[132] Թեթև գութանը հիմնականում աշխատեցրել են 6-8 մարդ: Օրվա ընթացքում նրա վարը չի անցել 0.75հա:

Ծանր գութանը, որը աշխատել է անիվի օգնությամբ ունեցել է ձևիչ, որի օգնությամբ հողը ճեղքվել է, շուռ տրվել: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ադամ Օլեարիոսը «Որպեսզի հողը վարեն,- գրում է նա,- պարսիկները (հեղինակը պարսիկներ է անվանում սեֆյան Իրանի ենթակա մյուս երկրների ժողովուրդներին ևս - Հ. Թ.) գութանը գործ են ածում այնպիսի տեղերում, որտեղ հողը խիտ է և կոշտ, ինչպես օրինակ, Երևանում և Հայաստանում: Այստեղ այդ գութաններն այնքան մեծ են, որ ակոսները արվում են մեկ ֆուտ (քայլ) խտությամբ և երկու ֆուտ լայնությամբ»: Հարկ է նշել, որ ծանր գութանը այնքան էլ լայն կիրառություն չուներ: Դա բացատրվում է ոչ միայն այն հանգամանքով, որ նրա օգտագործումը ավելի շատ ծախս էր պահանջում, այլև նրանով, որ պակաս էր բանող անասունների գլխաքանակը: Այս առումով շատ հատկանշական է կաթողիկոս Աբրահամ Կրետացու և Երևան այցելած Թահմազկուլի խանի (Նադիր շահ) հետևյալ հարցազրույցը.«Վերջապես եհարց խանն վասն վարի և ցանի: Եւ իսկույն բողոք բարձի, թե՝ ոչ գոյ ըստ բաւականի: Նաև ոչ գտանին եզինք որ վարեն, բայց քո տօլվաթեն լինի, թէ գարնան Պայազիտու և Ղարսայ եզինք ճարեն փողով կամ պարտքով և վարուցան անեն, որովհետև ջրելով է գարնանավարն, այլ լաւ պիտի լինի»:[133]

Գութանով վարը նույնպես ունեցել է իր տարածական չափը, որը աղբյուրներում հաճախակի գործածվող «գութանավար» արտահայտությունն է: Նկարագրելով Երևանի Մահմատ-Կուլի խանի կողմից էջմիածնի վանական տնտեսության նկատմամբ կատարած բռնարարքները՝ Սիմեոն Երևանցին տեղեկացնում է, որ այդ արարքների դեմ ըմբոստացած Փիլիպոս Աղբակեցին բողոքում է շահ Աբաս II -ին, ասելով, թէ՝ «Սուրբ Աթոռս ի բնէ անտի մաղաֆ է լեալ, այսինքն ազատ յամենայնէ, այժմ ի յաղքատութենէ մէկ գութանի վարելոյ չափ տեղ հազիւ կարեմք զսերմնն արկանել յերկիր, Մահմադ-ղուլի խանն կամի ի նման է ևս զպահրա առնուլ»:[134] Եթե Փիլիպոս Աղբակեցուն հաջողվում է պահպանել «մեկ գութանի» վարելաչափի իրավունքը, ապա Ալեքսանդր

---

[132] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 72:
[133] Адам Олеарий, с. 737.
[134] Զամբռ, էջ 131:

Զուղայեցին այդ իրավունքը հասցնում է «երկու գութանի» չափի: «Դարձեալ ի ժամանակն Ալեքսանդր կաթուղիկոսին Զուղայեցւոյ զերկուս գութանս սկսանի ի կիր արկանել սուրբ Աթոռս»:[135] «Գութանավար»-ը մեկ գութանի գյուղատնտեսական աշխատանքային օրվա կատարած հերկն է, որն իր տարածական չափերով համընկնում է արորի երեք օրվա կատարածին: Դաշտավարության մեջ հերկումից անմիջապես հետո սկսվում էր փխրեցումը: Այդ աշխատանքը կատարվել է փոցխով, որին լծել են 2-3 զույգ եզներ. «փոցխ քշող Ժ (10) մշակաց վարձն ետու Գ (3) պիսգով ձեռամբ տէր Մելիքսեթին»,- հաղորդում է հաշվեմատյանը:[136] Փոցխման աշխատանքի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Շարդենը. «Երբ ակոսները հանվում էին,- գրում է նա,- հողագործները փափկեցնում են հողը կարճ ատամներ ունեցող փայտյա հատուկ տախտակներով, որին լծում էին եզներ կամ գոմեշներ»:[137]

Աշխատանքային հաջորդ պրոցեսը սերմերի ընտրությունն ու տեսակավորումն էր: Հատկապես ուշադրություն էին դարձնում, որ սերմերը լինեն նույն տարվա բերքից հավաքած, խոշոր և ծանր: Վանական տնտեսությունում այդ աշխատանքները կատարում էին հիմնականում կանայք. «ԱՌ (1000) դիան ետու սերմացու ցորեն յիստակող Խ) (40) կանանց Ե (5) փողով, Ներսես վարդապետի ձեռօք»,- տեղեկացնում է մատյանը:[138] Եթե սերմերը նախատեսված էին աշնանային ցանքի համար, ապա դրանք ժամանակավորապես պահվում էին պարկերում, իսկ եթե գարնանային՝ հատուկ փորված հորերում: Այդ մասին մատյանները տեղեկացնում են. «Ե (5) շահի ետու ներսի ցորնի և գարու հորի վրա բանող Ը (8) մշակաց է (7) փողով»:[139]

Ցանքը կատարվում էր հետևյալ կերպ: Ցանողը մարմնի ձախ կամ աջ կողմում կախում էր 15-20 կգ տարողությամբ կաշվե տոպրակ և համաչափ քայլերով առաջ ընթանալով, ձեռքով ցրում սերմացուն այն հաշվով, որ հավասարապես թափվեր հողի մակերեսին:[140]

Ցանողին հաջորդում էր հողի տափանումը (չուբ), երբ սերմերը հողում ծածկելու համար գործածում էին երկուսից երեք լծասարք ունեցող դաքանը: Հաշվեմատյաններում բավականին շատ էին տեղեկությունները, ինչպես «տափի լուծ քշող» մշակների վարձատրության, այնպես էլ բանող անասունների ձեռք բերման մասին:[141] Սովորաբար տափանելուց հետո ոչ բոլոր սերմերն էին ծածկվում հողով և բաց

---

[135] Նույն տեղում, էջ 133:
[136] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 23, էջ 62:
[137] Chardin, vol. IV, p. 101.
[138] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 44:
[139] Նույն տեղում, էջ 31:
[140] Свод материалов, т. 4, с. 330.
[141] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 23, էջ 103,132,191:

մնացածները կեր էին դառնում թռչուններին: Դրա դեմ պայքարելու նպատակով վանական տնտեսություններում լայնորեն կիրառվել է երեխաների աշխատուժը. «Ղուշ պստկի վարձն ետու կես շահով ձեռամբ վեքիլին»,[142] հար և նման բազմաթիվ տեղեկությունների ենք հանդիպում հաշվեմատյանների էջերում:

Տափանելուց հետո սկսվում էր հողի մարկոսման աշխատանքները, երբ ծռված, լայն բերանով երկաթյա բահերով վարած տարածություններում ջրելու համար առուներ էին անցկացնում: Այն բավականին դժվար աշխատանք էր ու մեծ քանակի աշխատուժ պահանջող: Բավական է նշել, որ ըստ հաշվեմատյանների հայտնած տեղեկությունների միայն 1741-1742 թթ. վանական տնտեսության միայն Վաղարշապատում ունեցած հողատարածքներում մարկոսման աշխատանքներին մասնակցել են 556 մշակներ, որոնց վճարվել է 14940 դինար, 17 ապասի, 13050 շահի գումար:[143]

Հունձը կամ քաղը հիմնականում կատարվել է մանգաղով: Գերանդին գործածել էին այն դեպքերում միայն, երբ հարկավոր էր շտապ ավարտել բերքահավաքը, կամ էլ այն դեպքում, երբ հասկերը սովորականից բարձր էին, իսկ բերքը ոչ հարուստ: Բերքահավաքի շուտ կամ ուշ կազմակերպումը պայմանավորված էր նախ սերմերի տեսակից, արևի նկատմամբ տեղանքի ունեցած դիրքից, ոռոգման հնարավորությունից: Վանական տնտեսության Արարատյան հարթավայրում ունեցած հողատարածքներում հունձը կատարվել է հունիս-հուլիս ամիսներին. «Մանկասարենց յայգու մոտի յարտի հնձողացն վարձ ետու Ա (1) թուման, ԳՌ (3000) դիան, Ա)1) ապասի հուլսի ԺԲ (12) գիտութեամբ ժամօրինօղին»- վկայում է աղբյուրը:[144] Նախալեռնային շրջաններում հունձը կատարվել է օգոստոսին:

Հացահատիկային կուլտուրաների մշակման վերջին պրոցեսը կալսումն էր, որի մանրամասն նկարագիրը տալիս է Ժ. Շարդենը,- ցորենը շղթաներով չեն կալսում, ինչպես դա անում ենք մենք, այլ առանձնացնում են հատիկը ցորենից կալատեղում հետևյալ կերպ. նախ ցողունները իրար են կապում խրձերով 30-40 ֆուտ շառավիղով՝ մեզ նման չվախենալով ոչ գողերից և ոչ էլ քամուց: Հետո նրանք այդ խրձերը շրջում են գլխիվայր, որոնց վրայից գնում է կամնասայլը: Վերջինս ունի 3 ֆուտ երկարություն և 2 ֆուտ լայնություն: Կամնասայլի վերևի մասը ավելի նեղ է քան ներքևինը և ծառայում է որպես նստելու տեղ քշողի համար: Ներքևի մասը ունի քառակուսու տեսք, բաղկացած փայտե 4 ծողերից: Երկու ծողերի արանքում կան իրար մեջ մտած երեք, երբեմն էլ չորս կլորավուն փայտեր, որոնք ծառայում են իբրև սյուն և նման են հրուշակագործների գրտնակներին: Գլանաձև սունիների վրա

---

[142] Նույն տեղում, էջ 45, վավ. 13, էջ 226:
[143] Նույն տեղում, էջ 33-48:
[144] Նույն տեղում, էջ 275:

մեջ ընդ մեջ հարմարեցված են եռանկյունաձև կտրիչները, որոնք ունեն սղոցի նման սուր ատամներ: Սրանցից մեկը սունու վրա հարմարեցված է ուրագի ձևով, մյուսը կացնի, որպեսզի տարբեր դիրքերով փռված ծղոտները երկու ուղղությամբ էլ կտրատվեն: Կամնասայլը ունի փայտե քաշիկ, կամ կաշվե փափուկ ձգափոկ, որին լծում են ամեն տեսակի ձիեր, եզներ, գոմեշներ, ավանակներ, միայն առանձին-առանձին: Յուրաքանչյուր կենդանի վազում էր մոտ երեքից չորս ժամ, որից հետո փոխում էին: Մոտիկ կանգնած մարդիկ եղաններով հարդը առանձնացնում են հենց կալատեղում, իսկ հատիկները, որոնք ավելի ծանր են, մնում էին գետնին ու հավաքվում պարկերի մեջ:[145] Կալսման աշխատանքների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Զաքարիա Քանաքեռցին: Նա հայտնում է, թե ինչպես Գեղարքունիքի Մելիք Փարսադանը կալի ժամանակ ոմն Մխիթար երեցից պահանջում է նրա եզները, իսկ վերջինս, որը նույնպես կալսում էր իր բերքը, մերժում է: Այդժամ, շարունակում է պատմիչը, կատաղում է Մելիքը «որպես որդեկոտոր արջ և գոյնն սևացաւ որպէս զածուխ և զայրացմամբ առաքէ զերեքեան կամնաւար ծառայս և ասէ գնացեալ բերքի զեսինս այնպես լծեալ կամնասայլիւն և կամնավարաւն և ամենայն ար ինչ ի վերայ նորա է»:[146] Էջմիածնի վանական տնտեսության մեջ տեխնիկական կուլտուրաների ու հատկապես բամբակի մշակությունը եկամտաբեր ճյուղերից մեկն էր, այն ոչ միայն բավարարում էր վանական միաբանության պահանջմունքները, այլև, թե որպես հում հումք և թե վերամշակված, արտադրանքի վերածված, հանվում էր վաճառքի «բամբակ ծախեցինք ԴՃ (400) լիտր, մեկ լիտրն էճՕ (750) դիանով, որոյ զամն է փողի Լ (30) թուման ԲճՕ (250) դիան Յակոբ և Օվանէս վարդապետաց ձեռօք հոկտեմբերի է (7)»,- կարդում ենք մատյաններից մեկում:[147]

Իր բնակլիմայական բարենպաստ պայմաններով Արարատյան հարթավայրը խիստ հարմար էր տեխնիկական կուլտուրաների մշակության համար: Էջմիածնի վանական տնտեսության ըստ առանձին կուլտուրաների ցանքսերի ընդհանուր տարածությունը ցույց տվող սկզբնաղբյուրներում, որպես գարնանային ցանք թվարկված են նաև բամբակը, քունջութը և կտավատը, չնայած չի նշվում այդ կուլտուրաների զբաղեցրած տարածության չափը:[148]

Էվլիա Չելեբիի վկայությամբ մեծ ճանաչում էին ստացել Արևելյան Հայաստանում արտադրված չքե գործվածքները, որոնք պատրաստված էին բամբակից և վուշից:[149] Արարատյան դաշտավայրում մեծ քանակով բամբակի մշակության մասին է վկայում նաև Ադամ

---

[145] Chardin, vol. IV, p. 105-107.
[146] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 82-83:
[147] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 341:
[148] Նույն տեղում, էջ 376:
[149] Էվլիա Չելեբի, էջ 72:

Օլեարիուսը:[150] Իսկ վանքի հաշվեմատյաններում արժեքավոր տեղեկություններ կան ցանված բամբակի չափերի մասին: Այսպես, օրինակ, 1739 թ. հաշվեմատյանում կարդում ենք. «ԸՌԺ (8010) շահի ետու ԳԵԽ(340) լիտր բամբակի հունդի և տուինք ֆռանկանոցաց որ ցանեցին, Պետրոս վարդապետի, վէքիլի ծեռօքն»:[151] Ի. Շոպենի տվյալներով հայկական մարզում տարեկան ստացվել է 3000 խալվար բամբակի հումք, որը կազմում էր մոտ 90000 փուք:[152] Հասկանալի է, որ նշված քանակի մեջ ընդգրկված էր նաև էջմիածնի վանական տնտեսությունում մշակվածը:

Աղբյուրները հիշատակում են մշակվող բամբակի մի քանի տեսակներ, որոնք միմյանցից տարբերվում էին թելիկների երկարությամբ, գույնով ու ճկունությամբ: Էվլիա Չելեբին հիշատակում է վեց տեսակի բամբակի անուն. գազի, մոնլայի, զաֆերանի, լալի, խաս և սպիտակ:[153] Իրանական տիրապետության վերջերին առավել շատ հիշատակվում է մշակվող բամբակի «Կարա-կոզա» տեսակի մասին, որը մասնագետների կարծիքով նման էր հնդկական կամ պարսկական բամբակին «Երևանի նահանգում,- գրում է Ն. Տարատինովը,- որպես պարսկական նախկին գավառ, անհիշելի ժամանակներից նույնպես զբաղվել են բամբակագործությամբ: Բնականաբար, պետք է ենթադրել, որ Կարա-կոզան նույն հնդկական կամ պարսկական բամբակն է: Այդպիսի ենթադրությունը լրիվ հաստատվում է ինչպես թելի բնույթով, այնպես էլ սերմով և ամբողջ բույսի հատկություններով ընդհանրապես»:[154]

Ըստ հողի զանգվածի կառուցվածքի, բամբակի համար նախատեսված հողատարածություններում հերկոցը կատարվել է տարբեր ժամանակահատվածներում ու տարբեր քանակությամբ: Արարատյան հարթավայրում, օրինակ, այն կատարվել է երկու անգամ՝ աշնանը և գարնանը, իսկ Նախիջևանի խանությունում, որ հողը կարծր էր, կատարվել է երեք անգամ՝ մեկ աշնանը և երկուսը՝ գարնանը:[155] Վանական տնտեսության հողատարածքներում բամբակի հերկոցը կատարվել է թեթև անվավոր գութանով, որին լծել են 3-4 զույգ եզ, ինչպես նաև երկու զույգ եզով քաշվող արորով.«ԵՌԵԵԻԵ (5525) դիան ետու բամբակի ԺԸ (18) լուծ քշօղի»,-հաղորդում է հաշվեմատյանը:[156]

Հերկոցից անմիջապես հետո կատարել են փոցխման ու տափանման աշխատանքներ: Այդ մասին նույն հաշվեմատյանում կարդում

---

[150] Адам Олеарий, с. 737.
[151] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 1:
[152] Шолен И., Исторический памятник, с. 743.
[153] Էվլիա Չելեբի, էջ 72:
[154] Таратинов Н., Очерк хлопководстви в Закавказье; Труды обществи сельского хозяйства, Тифлис, 1888, с. 589.
[155] Свод материалов, Т. 4, г.1, с. 89.
[156] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 44:

ենք.«Բամբակի փոցխի և տափի լուծ քշող ԻԴ (24) մշակաց վարձ ետու Ե (5) փողով Գ (3) ապասի»:[157]

Կախված հողի ջերմաստիճանից, բամբակի ցանքը տարբեր շրջաններում կատարվել է տարբեր ժամանակահատվածներում: Ի. Շոպենի վկայությամբ, օրինակ , Արարատյան դաշտավայրում այն կատարվել է ապրիլի սկզբներին, երբ հողի ջերմաստիճանը հասել է 15 աստիճան տաքության:[158] Վերը հիշատակված Ֆրանկանոց գյուղի օրինակում ասվում է, որ բամբակի ցանքը կատարվել է մայիսի 10-11:[159] Ցանքը ամենուրեք կատարվել է ձեռքով հետևյալ կերպ. աշխատողներից մեկը նախապես պատրաստված շարքերի միջով, բահով փոքր փոսիկներ էր բացում, երկրորդը դրանց մեջ գցում էր սերմերը, իսկ երրորդը ծածկում այն փուխր հողով:

Բամբակենու մշակության համար որոշիչ դեր էր խաղում հմուտ կազմակերպված ոռոգումը: Նախ հողամասը բաժանվել է մի քանի առուների, որոնցից բաց է թողնվել ջուրը: Որոշ ժամանակ անց ամբողջ հողամասը ծածկվում էր ջրով, որը ներծծվում էր մի քանի ժամ անց: Սակավաջուր, կարծր հողակառուցվածք ունեցող վայրերում սնում էին բույսի միայն արմատային հատվածը, որը նպաստում էր ջրի տնտեսմանը: Ամառվա ընթացքում բամբակենին ջրում էին սովորաբար 5-6 անգամ, առանձին դեպքերում նաև 8 անգամ: Ավելի հաճախ այն ջրում էին ծաղկման ու պտղակալման շրջանում: Պտուղների հասունացման ու բացման շրջանում ջրելու քանակը պակասեցնում էին:[160]

Բամբակենու մշակության կարևոր պայմաններից էին հողուրագներով բների փափկեցման և մոլախոտերի հեռացման աշխատանքների կատարումը: Դա բավականին աշխատատար էր, որի համար էլ վանական տնտեսությունում պահանջվել է աշխատուժի մեծ քանակություն: Օրինակ, 1742 թ. այդ աշխատանքների համար օգտագործվել է 2084 մշակների աշխատանք, որոնց վճարվել է 9թուման 1840դինար,[161] 1748 թ. օգտագործվել է 556 աշխատուժ և վճարվել 1թուման 1100դինար,[162] 1749 թ. համապատասխանաբար 507 աշխատուժ, վճարվել է 1 թուման 700 դինար,[163] 1753 թ. 533 աշխատուժի վճարվել է 1 թուման 2 ապասի և այլն:[164]

Բերված թվերից դժվար չէ նկատել, որ վանական տնտեսությունում մեծ էր շահագրգռվածությունը բամբակենու մշակության ընդար-

---

[157] Նույն տեղում, էջ 174:
[158] Шолен И., Исторический памятник, с. 743-744.
[159] Մատենադարան, Կթղկ. դիվ, թղթ. 1, վավ. 13, էջ 1:
[160] Свод материалов, т. 4, г.1, с. 89.
[161] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ.1,վավ.13, էջ 49:
[162] Նույն տեղում, էջ 93:
[163] Նույն տեղում, էջ 133:
[164] Նույն տեղում, էջ 203:

ծակման գործում, քանզի այն բավականին մեծ եկամուտներ էր ապահովում: Օրինակ, 1760-ական թթ. վերջերին, ինչպես վկայում են հաշվեմատյանները, 20 լիտր (=է 96կգ) բամբակը վաճառվել է 1թուման 8000 դինարով,[165] իսկ 400 լիտր բամբակի վաճառքից ստացվել է 30 թուման 250 դիան գումար:[166] Եթե նկատի ունենանք, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո բամբակենու մշակությունը հանդիսացել է երկրագործական մշակույթի հիմնական ճյուղը, կարելի է համոզված նշել, որ դրանից առաջ էլ այն չէր կորցրել իր արժեքավորությունը: Ինչպես ճիշտ նկատում է Հ. Աթանեսյանցը. «Մեր երկրում աճող թանկագին բույսերի մեջ բամբակը բռնում է առաջին տեղերից մեկը և շատ շրջաններում նա խաղողից էլ ծեռնտու է: Երևանի նահանգի Գառնիբասարի մահալում շատ դեպքեր են եղել, երբ գյուղացիք արմատահան են արել իրենց խաղողի այգիները և տեղը բամբակ ցանել՝ առարկելով, թե բամբակի մուշտարին արտի գլխին կանգնած է, իսկ գինունը՝ օխտը սարի քամակին թաքնված է»:[167] Ըստ ռուսական աղբյուրների էջմիածնի գավառում մեկ դեսյատին հողատարածքի վրա բամբակենու մշակման ծախսերն ու եկամուտը հետևյալ պատկերն է ներկայացնում.

ծախսերը և եկամուտները	Ռ.	Կ.
հերկոցը գութանով	6	40
խմբեր քաշելը	1	80
փխրեցումը և սերմերի ցանելը	12	80
ջրելը	3	60
մաղհանելը	9	50
կնգուղների հավաքումը և նրանցից հումքի ստացումը զամբյուղներում	10	
թափահարելու միջոցով բամբակը կորիզից զտելը	4	40
ջուվարի վարձը		35
ընդամենը	53	35
համախառն եկամուտը	102	
մաքուր եկամուտը	48	65[168]

Բամբակենու կնգուղների հասունացումը և բացվելը սկսվում էր օգոստոսի վերջերին: Հենց այդ ժամանակ էլ սկսվում էր բերքահավաքը, որը սովորաբար կատարվում էր 3-4 անգամ, մինչև աշնան ցրտահարությունների սկսվելը: Բամբակի բերքը հավաքվում էր հատուկ պահեստարաններում («բամբակատուն»), որտեղից և տրվում էր

[165] Նույն տեղում, էջ 338:
[166] Նույն տեղում, էջ 341:
[167] Տես «Գյուղատնտես», 1909, էջ 322:
[168] Материалы для изучение экономического быта гос. Крестьян, т. 3, г. 1, с. 134, 315.

վերամշակման. «ԳՌԲԵ (3200) դիան ետու բամբակատան կտրի սվաղի բանւոր ԿԴ (64) մշակաց»,- տեղեկացնում է 1741թ. հաշվեմատյանը:[169]

Համեմատաբար սուղ են տեղեկությունները քունջութի մշակության մասին, սակայն ձիթհանների վերաբերյալ եղած բազմաթիվ վկայությունները հավաստում են տեխնիկական այդ կուլտուրայի տարածվածության մասին: Ի. Շոպենի տվյալներով, էջմիածնի վանքի հողատարածություններում իբրև գարնանային ցանք, քունջութը զբաղեցրել է 4,5 խալվար ցանովի տարածություն, որից ստացվել է 1500 փութ բերք:[170]

Քունջութի մշակությունը իր զարգացման առանձնահատկություններով քիչ էր տարբերվում բրնձի մշակությունից: Ցանքը կատարվել է գարնան վերջերին, երբ հողի ջերմաստիճանը բավականին բարձր էր: Հաշվեմատյանները առավել շատ տեղեկություններ են հաղորդում քունջութի քաղհանման և հնձման աշխատանքների մասին: Ընդ որում հունձը կատարվել է աշնան սկզբներին, «ԳՌԴԵՕ (3480) դիան ետու քունջիթ հնձող ՕԸ)58) մշակաց յԱկոբ մոնքի ձեռօք սեպտեմբերի Դ (4»:[171] Հնձելուց հետո, ոչ մեծ խրձերով կույտավորում էին, իսկ մեկ շաբաթ անց, երբ կանաչ խրձերից սկսվում էր գոլորշի դուրս գալ, առանձնացնում էին ու փռում արևի տակ չորանալու: 2-3 օր հետո, երբ տուփիկները պայթում էին, խրձերը գետնիվայր պահելով թափահարում էին առանձնացնելով հատիկները:[172]

Քունջութից ստացված ձեթը, որը հայտնի էր «Շիրբախտ» անունով, ուներ դուրեկան հոտ և քիչ էր տարբերվում ձիթայուղից:[173] Որպես ուտեստ առաջ էլ շատ օգտագործվել է քունջութի ձեթից պատրաստված հալվան: Քունջութի մնացորդները, որը ստացվում էր զտելուց հետո, իր ունեցած հատկություններով հիանալի անասնակեր էր և օգտագործվել է վանական տնտեսության անասնապահության բնագավառում: «Քնջթի քուսբ առի ԺԲ (18) լիտր. գինն ետու ԹԵ (900) դիան»,-կարդում ենք 1758 թ. մատյաններում:[174]

Տեխնիկական հաջորդ կուլտուրան, որի մշակությամբ զբաղվել են վանական տնտեսությունում, կտավատն էր: Այն հիմնականում մշակվել է Արարատյան դաշտին հարող նախալեռնային շրջաններում: Ինչպես վկայում է Մ. Թաղիադյանը. «Միայն լեռնակողմք նահանգիս Արարատայ առատությամբ մատակարարել կարեն սննդաբար կերակրոց բնակչաց համօրեն Երևանայ... և զամենայն ազգս կտաւոյ և

---

[169] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 51:
[170] Шолен И., Исторический памятник, с. 680.
[171] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 63:
[172] Свод материалов, т. 4, г.1, с. 207-208.
[173] Նույն տեղում:
[174] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 27, էջ 58:

ծիթոյ»:[175] Կտավիատի ցանքը կատարվել է հունիսի սկզբներին, երբ հողի ջերմաստիճանը շատ բարձր էր: Բերքահավաքը սկսվել է օգոստոսի կեսերին.«Կտաւատի հնձող Ō (50) մշակաց ետու վարձ մէկ շահով, ԲՌ (2000)դիան Բ (2) ապասի Բ (2) շահի վերակացու Սահակի գիտութեամբ օգոստոս ամիս»,- տեղեկացնում է աղբյուրը:[176] Կտավիատի հատիկները տուփերից անջատել են հարվածներով: Յուղը օգտագործվել է թե՛ որպես սնունդ և թե՛ որպես վառելանյութ: Ավելի հաճախ այն քսել են բանող անասուններին՝ նրանց վնասատու միջատներից պաշտպանելու համար: Կտավիատի թուփը միաժամանակ հիանալի անասնակեր էր:

Համեմատաբար քիչ տարածում է ունեցել կանեփի մշակությունը: Մեծամասամբ կանեփ ցանում էին ինչպես բանջարանոցների, այնպես էլ բամբակենու դաշտերի եզրերին, նեղ շարքերով: Կանեփի ու հատկապես նրա «տզկանեփ» տեսակի թփերը ունեին խիստ դառը համ, որը ուտելուց հետո անասունները խուսափում էին խորանալ հողատարածքից ներս:[177] Կանեփի յուղը միաժամանակ գործածվել է որպես վառելանյութ:

3.Բանջարաբոստանային կուլտուրաների մշակություն

Էջմիածնի վանական տնտեսության երկրագործական մշակույթի մեջ իր ուրույն տեղն ուներ նաև բանջարաբոստանայինը: Նկատենք, որ աղբյուրներում երկրագործության այս ճյուղի մասին տեղեկությունները խիստ սակավաթիվ են: Այնուհանդերձ, աղբյուրներում բանջարաբոստանային առանձին կուլտուրաների սոսկ անունների թվարկումը բավական է ենթադրելու երկրագործության այդ ճյուղի առաջնակարգ դերի մասին: Փաստենք, որ վանական տնտեսության սահմաններում այդ կուլտուրաների մշակությունը առանձին մեծ հողատարածքներում չի կատարվել: Ինչպես վկայում են փաստերը, դրանք հիմնականում կենտրոնացված էին տնամերձ հողամասերում, ինչպես նաև առանձնացված հողատարածքներում:

Իրենց լայն տեսականիով համեմատաբար մեծ իրացում են ունեցել բանջարաբոստանային կուլտուրաները: Այն վանական միաբանության համար հանդիսացել է ուտեստի հիմնական տեսակ: Դրանցից առավելապես տարածված էր կաղամբի մշակությունը, որը

---

[175] Թաղիադյանց Մ., Ճանապարհորդություն ի Հայս, հ. 1, էջ 227-228:

[176] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 23, էջ 136:

[177] Материалы для изучение экономического быта гос. Крестьян, т. 3, г. 1, с. 316.

Հայաստանում հայտնի էր դեռ 5-րդ դարից:[178] Ըստ հասունացման տևողության տարբերվել են կաղամբի վաղահաս և ուշահաս տեսակները: Մեծամասամբ մշակվել է ուշահաս տեսակը կամ գլուխ կաղամբը, որի արտաքին տերևները կանաչ էին, իսկ ներսինը սպիտակ: Մ. Թաղիադյանի վկայությամբ, 17 դ. սկզբներին Ջուղայեցի Կարապետ եպիկոպոսի միջոցով էջմիածնի վանական տնտեսության բանջարանոցներում աճեցվել է ծաղկակաղամբ:[179] Ինչպես վկայում են հաշվեմատյանները ձմռանը թարմ կաղամբ ունենալու համար վանական տնտեսությունում պատրաստվել են գետնափոր տարածքներ. «Ե (5) շահի, Զ (6) փող ետու ներսի քալամի հորի վրա բանօղ Ը (8) մշակաց»,- հայտնում է 1741թ. մատյանը:[180] Կաղամբի մշակման համար ընտրվել են փուխր ջրաթափանց և օրգանական նյութերով հարուստ ավազախառն հողեր: Մարկոսման ժամանակ բահերով հողամասը բաժանել են 1 ընդհանուր ջրման կետ ունեցող առու-մարգերի, որոնց միջով ջուրը պտտվելով հոսել է: Այնուհետև, ջրելուց անմիջապես հետո մարտի կեսերին թաց հողի մեջ կատարել են սածիլում, իսկ երբ հողը քեշացել է, հողուրագներով կատարել են քաղհանման աշխատաքններ. «Բ (2) ապասի ետու ներսի պաղչայի քալամի քաղհանավոր ԺՁ (16) կանանց ապրիլի ԺԷ (17) ոմն»-կարդում ենք մատյաններում:[181] Դրանից մոտ 20 օր անց, կատարվել է հաջորդ ոռոգումը, որից հետո այն դադարեցվել է, մինչև կաղամբի գլուխ բռնելը: Այդ ընթացքում կատարվել է բների փափկեցման աշխատանքներ. «Ներքի պաղչայի քալամի պօղազ լցնօղ Զ (6) մշակաց վարձն ետու բաղչապանի ձեռօք»,- հաղորդում է նույն մատյանը:[182] Կաղամբի բերքահավաքը կատարվել է աշնան վերջերին:

Հաջորդ բանջարանոցային կուլտուրան դդումն էր: Ըստ Ադամ Օլեարիուսի աճեցվում են դդումի կլոր, երկար ու կարճ կոթերով տեսակները:[183] Կլորը լայնատերև էր ու խոշոր: Ցանել են հիմնականում մարգերի վերջնամասերի հարթ տարածություններում, քանի որ այն տարածվող բույս էր:

Գործածել են կանաչ և թե հասած դեղին վիճակում՝ կերակուրներ ու մուրաբաներ պատրաստելիս: Երկար կոթերով դդումի համար, որը հայտնի էր «սուրահի» անունով, ձողեր էին տնկում, որոնց վրա բարձրանում էր բույսը, և երկար կոթերով պտուղ տալիս: Սրանցից բնակչությունը զանազան տիպի ծագարներ և գինեհաններ է պատրաստում: Կարճ կոթերով «դդմիկ» տեսակը ունեցել է նախորդից ավելի փոքր

---

[178] Բդոյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, էջ 11, 114.
[179] Թաղիադյան Մ., նշվ. աշխ., էջ 31:
[180] Նույն տեղում, էջ 40:
[181] Նույն տեղում, էջ 30:
[182] Адам Олеарий, с. 737.
[183] Նույն տեղում, էջ 757:

չափեր, որը չորացնելու և ներսի պարունակությունը դատարկելուց հետո, գործածել են զանազան տիպի ընդեղենների սերմեր ու համեմունքներ պահելու համար:

Բանջարանոցային տարածված կուլտուրաներից էր բադրիջանը, որի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ադամ Օլեարիուսը. «Հայերին,- գրում է նա,- հայտնի էր անհայտ բույսի մի տեսակ, որին անվանում էին բադրիջան: Այն իր ձևով և մեծությամբ նմանվում էր փոքր սեխի, կամ հասած վարունգի: Պտուղը ամբողջությամբ կանաչ է, իսկ կոթի մոտ կապտավուն: Հում վիճակում այն չեն ուտում, որովհետև դառն է: Եփած յուղի մեջ տապակած վիճակում շատ համեղ է»:[184] Բադրիջանը մշակվել է երկար ու հարթ մարգերում: Թմբի վրա այն չէր մշակվում, քանի որ նրա թուփը կանգուն է, ունի ամուր ցողուն և գետնի վրա չի փռվում: Սածիլումը կատարվել է գարնան կեսերին, երբ հողի ջերմաստիճանը նկատելիորեն բարձրացել է: Բադրիջանի մշակության համար կարևոր էր կանոնավոր քաղհանը և հաճախակի հողի փխրեցումը, որը վանական տնտեսությունում սեզոնի ընթացքում կատարվել է 3-4 անգամ. «Բադրիջանի Խ (40) քաղհանավորի վարձ ետու Դ (4) փողով ձեռամբ վեքիլին»,- տեղեկացնում է հաշվեմատյաններից մեկը:[185] Առաջին քաղհանը կատարվել է սածիլումից երկու շաբաթ անց, իսկ մնացածը ըստ պահանջի: Սածիլումից 40-50 օր անց բադրիջանը սկսում էր ծաղկել, 15-20 օրից տալիս էր առաջին պտուղը: Այնուհետև ծաղկումն ու պտղաբերումը շարունակվում էր մինչև աշնան ցրտահարությունները:

Մշակվող բանջարանոցային տարածված կուլտուրաներից էին սոխն ու սխտորը, որոնք օգտագործվել են ինչպես կանաչ, այնպես էլ գլուխ վիճակում: Մշակությունը կատարվել է վանական տնտեսության բոլոր շրջաններում: Նախատեսված հողամասի հերկը կատարվել է աշնանը, իսկ գարնանը կրկնահերկվել է, փոցխվել ու մարգոցվել: Որպես պարարտանյութ լավ արդյունք է տվել մոխիրը: Ցանքը կատարվել է վաղ գարնանը, երբ հողի խոնավությունը շատ բարձր էր: Այդ մասին հաշվեմատյաններից մեկի էջերում կարդում ենք. «ՉԾՈ (650) դիան ետու հասարակաց պաղչայի սոխի և սխտորի մարգ փորող ԺԷ (17) մշակաց Ը(8) փողով Յակոբ վարդապետի ձեռօք մարտի ժ (10) ոմն»:[186]

Մշակվել է սոխի երկու տեսակ, որոնցից մեկը ուներ մանր ու երկարաձիգ գլուխ, հաստ պարանոց, ոչ թույլ կծու համ, մյուսը ուներ կլոր մեծ գլուխ, խիստ կծու էր ու ջրահամ:[187] Բերքահավաքը վանական

---

[184] Նույն տեղում, էջ 757:

[185] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 23, էջ 44:

[186] Նույն տեղում, վավ.13, էջ 52:

[187] Հովհաննես Աթունասյանց, Երևանի նահանգի բուսականությունը, Եր. 1881, էջ 50:

տնտեսությունում ամենուրեք կատարվել է աշնան սկզբներին, երբ չէին սկսվել անձրևները և առաջին ցրտահարությունները. «ԺԲ (12) շահի ետու սոխ հանօղ ԺԲ (12) մշակաց տնտեսբաղու ձեռօք սեպտեմբերի ԺԶ (16) Բ (2) շաբթին»,- հաղորդում է մատյանը[188], կամ «է (7) ապասի Գ (3) շահի կէս ետու սխտօր հանօղ ԼԵ (35) մշակաց Թ (9) փօղով Յակոբ վարդապետի ձեռօք սեպտեմբեր ամսոյ Ի (20) ոմն»:[189] Հանելուց հետո բերքը չորացվել է ու պահեստավորվել:

Հետաքրքիր է նշել, որ վանական տնտեսությունում եկամուտներ է ստացվել սոխի ու սխտորի վաճառքից: Այդ մասին հաշվեմատյաններից հանդիպում ենք հետևյալ վկայությունների. «Երևան տարաց սոխագին առինք ԵՌ (5000)դիան Չ (6) շահ»,[190] «սխտոր ծախեցաք Ե (5)լիտր, Ա (1) լիտրն Չ (6) շահի գինն առինք էԼ (30) շահ»:[191] Միաժամանակ վանական տնտեսությունը հանդիսանում էր խանական իշխանությանը, այդ մշակությունների հիմնական մատակարարը. «Խանի ղաթրջուն, որ սոխի էր եկել ետու Ա (1) ապասի»,- կարդում ենք մատյանում:[192]

Բանջարանոցային տարածված կուլտուրաներից էին գազարն ու ճակնդեղը: Դրանց մշակությունը կատարվել է հիմնականում նախալեռնային շրջանների հողատարածություններում, ուր հողի խոնավությունը խիստ բարձր էր: Այս առումով հետաքրքրական է Կարբի գյուղաքաղաքի բնակչության ու սատանայի միջև տեղի ունեցած հետևյալ զավեշտական պատմությունը, որ գրի է առել Հար. Արարատյանը «Կարբեցիք,- գրում է նա,- սատանայի հետ պայման են դնում, որ բերքը հասած ժամանակը արտաքին երեսը պատկանի իրենց, իսկ ներքևի մասը սատանային: Նրանք ցորեն են ցանում և սատանային արմատն է բաժին ընկնում: Մի անգամ սատանան իր բաժնի վերաբերմամբ ավելի զգույշ վարվեց և իրա համար որոշեց արտաքին երեսը, կարբեցիներին ներքևի կողմը: Նրանք այն ժամանակ ցանեցին գազար, ճակնդեղ և ուրիշ արմատեղեն: Այսպիսով, սատանային միայն չոր խոտը հասավ»:[193] Ցանքը կատարվել է գարնան սկզբներին հողի բարձր խոնավության պայմաններում.«գազարի հունդ սոխ Բ (2) իստիլ, գինն ետու Բ (2) ապասի Բ (2) շահի գիտութեամբ լուսարար և ժամօրհնօղ վարդապետայն մարտի Թ (9) ոմն»,- տեղեկացնում է հաշվեմատյանը:[194] Գազարի և ճակնդեղի համար առանձին հողամասեր չէին հատկացնում, այլ օգտագործում էին բանջարանոցային այլ կուլտուրաների համար

---

[188] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ.1, վավ. 13, էջ 12:
[189] Նույն տեղում, էջ 44:
[190] Նույն տեղում, վավ. 23, էջ 5:
[191] Նույն տեղում, էջ 12:
[192] Նույն տեղում, վավ. 23, էջ 189:
[193] Վաղարշապատ Յարութին Արարատեանք Կեանքը, էջ 161-162:
[194] Մատենադարան Կթղկ. դիվ., թղթ.1, վավ. 13, էջ 172:

նախատեսված թմբերի ազատ մասերը: Դա միաժամանակ հողամշակության համար նպատակահարմար էր, քանի որ թմբերի վրա հողը միշտ փուխր էր մնում:

Կարևոր էր նաև բողկի և շաղգամի մշակությունը ոչ մեծ հողատարածքներում: Բնականաբար այդ կուլտուրաների մշակության համար քիչ քանակությամբ աշխատուժ է օգտագործվել: Օրինակ, հաշվեմատյաններից մեկում կարդում ենք. «Ամ (100) դիան ետու հասարակաց պաղչայի բողկի և շաղգամի տեղ փորող Բ (2) մշակաց Յակոբ վարդապետի ձեռօ»:[195] Նույն աղբյուրը հիշատակում էր, որ այդ աշխատանքները կատարվել են «մարտի ԺԲ (12) ոմ»: Ուրեմն խոսքը վերաբերում է բողկի ամսական տեսակի մշակությանը, քանի որ տարեկան տեսակը ցանվել է հուլիս-օգոստոսին, որպես նույն հողատարածքի երկրորդ բերք: Նույն հասարակաց «պաղչա», անունը կրող հողամասում, ինչպես վկայում է աղբյուրը, բողկի և շաղգամի համար տեղ է փորվել. «Ի յուլիս ամի»:[196]

Համեմատաբար տարածված չի եղել պղպեղի մշակությունը, և վանքի միաբանությունը հաճախակի գերադասել է այն գնել: Համենայն դեպս, հաշվեմատյաններում հաճախակի ենք հանդիպում «Պիպար առ» տեղեկությունների:[197]

Էջմիածնի վանական տնտեսության պակաս կարևորություն չուներ և ընդավորների դասին պատկանող բույսերի մշակությունը (ոսպ, սիսեռ, բակլաա, լոբի): Ոսպը մշակվել է բարձր խոնավություն ունեցող շրջաններում: Այս առումով առանձնացվել է խոշոր հատիկներով ու դեղնասպիտակավուն գույնով ոսպի «Գյուլլուլ» տեսակի մշակությունը Գեղարքունիքի շրջանում:[198] Սիսեռ մշակվել է հիմնականում ավազախառն հողերում, ինչպես նաև գետերին ու առուներին առափնյա հողատարածություններում: Նման տարածքներում, ինչպես վկայում են հաշվեմատյանները, սիսեռի հետ միասին ցանել են և ոսպ. «ԲՌԵԵ (2-500) դիան ետու ոսպն և սիսեռն քանդօղ ՕՋ (86) կանանց»,- հաղորդում է 1743 թ. մատյանը:[199]

Հաճախ հիշյալ կուլտուրաների հետ ցանվել է և բակլա: Այդ մասին հիշատակված հաշվեմատյանում կարդում ենք. «Ոսպի և սիսեռան և պակլայի ԲՃՁԳ (283) քաղհանավորված ետու ԲՌԸԼԵ (2830) դիան վերակացու Մաթոսի ձեռօքն»:[200] Հետաքրքրություն է ներկայացնում նաև ուշ միջնադարում գրի առնված առակներից մեկը, ուր կարդում ենք. «եւ արտ ահա մեծատուն ոմն հողագործ ցանեաց բակլաց և սի-

---

[195] Նույն տեղում, էջ 49:
[196] Նույն տեղում:
[197] Նույն տեղում, էջ 196, 202 և այլն:
[198] Свод материалов, т. 4, г. 1, с. 202.
[199] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ.1, վավ. 13, էջ 58:
[200] Նույն տեղում, էջ 92:

սեռն առ եզերս ետոյ միոց: Եւ ելանէին ի շամբէ անտի սատկ կռունկք ի քաղէին զսերմանս նորա»:[201] Լոբի մշակվել է տնտեսության ինչպես դաշտավայրային, այնպես էլ նախալեռնային շրջաններում: Առավել տարածված էր լոբու կարմիր, սպիտակ, սև բծերով «ՄԱՇ» կոչված տեսակների մշակությունը: Առաջին երեք տեսակների հատիկները եղել են տափակ ու ձվաձև, մաշինը փոքր ու կլոր:[202]

Բանջարանոցային հիշատակված կուլտուրաներից բացի, էջմիածնի վանական տնտեսության մեջ նշանակալից է եղել նաև բազմատեսակ կանաչեղենի (կոտեմ, անանուխ, գինձ, թարխուն, սավզի, ռեհան, սամիթ և այլն) մշակությունը: Երևանում, օրինակ, կանաչեղենի մշակության համար «Սավզիքերի» անունով հատուկ հողատարածություն էր առանձնացված, որտեղից կանաչեղենը վաճառվել է ինչպես քաղաքի շուկաներում, այնպես էլ ուղարկվել է էջմիածնի վանական միաբանությանը:[203]

Արարատյան դաշտավայրում ունեցած իր հողատարածքներում էջմիածնի վանական միաբանությունը մեծ տեղ էր հատկացրել բոստանային կուլտուրաների մշակությանը:

Բոստանային կուլտուրաներից համեմատաբար մեծ տարածում է ունեցել սեխի մշակությունը: Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենին, օրինակ, հայտի է եղել սեխի մոտ քսան տեսակների մշակություն, որոնցից նա առանձնացրել է «Գարմակ» կոչվող վաղահաս տեսակը:[204] Մ. Թաղիադյանցի հավաստմամբ միայն Արարատյան դաշտում մշակվել է սեխի ինը տեսակ (շալախ, դոստիջան, ջառ-ջառ, սնեյվազ, ղրզլբուռնի, ալեմիշ, գարաեմիշ, խորասանի, դուքմա), որոնց մեջ լավագույնը «շալախ» և «դուքմա» տեսակներն էին:[205] Սեխի «դուքմա» տեսակի մշակության մասին է վկայում հաշվեմատյաններից քաղված հետևյալ վկայությունը. «Տուքմա առի խանին համար Ի (20) հատ, մէկն ԺԲ (12) փող, գինն ետո Ա (1) ապասի գիտութեամբ տեղապահ և ժամօրհնօղ վարդապետացն»:[206] Ինչպես երևում է վկայությունից, սեխի այդ տեսակը ունեցել է բարձր արժեք Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ Երևանի շրջակա հողատարածություններում մշակվել է «մեղրապոպ» կոչվող սեխի լավագույն տեսակը:[207]

Իսկ Ադամ Օլեարիուսը տեղեկացնում է սեխի «շամամ» կոչված տեսակի մասին, որը ինչպես նշում է նա, ուներ դեղնականաչավուն

---

[201] Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Եր. 1957թ., էջ 11:
[202] Աթանեսյանց Յով. Հ. , նշվ. աշխ., էջ 33:
[203] Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 45: Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 27, էջ 45:
[204] Chardin, vol. 3, p. 330.
[205] Թաղիադյանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, էջ 77: Հմմտ. Ղևոնդ Ալիշանի, Այրարատ, էջ 316:
[206] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ.1, վավ. 13. էջ 287:
[207] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 201:

բծերով կլոր տեսք ու թեև այնքան էլ համեղ չէր, սակայն ուներ դուրեկան հոտ:[208] Արարատյան դաշտի սեխը իր հատկություններով ավելի լայն սպառում է ունեցել: Եվ պատահական չէ Մ. Թաղիադյանցի վկայությունը այն մասին, թե Նախիջևանի խանության «պտուղք հաւասարին պտղոցն Երևանաց բաց ի սեխաց»:[209] Նույնիսկ Երևանի խանության կառավարիչները էջմիածնից ստացված «փեշքեշների» մեջ գերադասել են Արարատյան դաշտի սեխը. «Խանին համար Երևանու եմիշ բերել տուի ԽԵ (45) հատ, գինն ետու ԲՌ (2000) դիան Ա (1) շահի», - տեղեկացնում է հաշվեմատյանը:[210] Ինչպես տեղեկանում ենք «Ջամբռ»-ի մի վկայությունից, Երևանի Հուսեին-Ալի խանը մեծ ուշադրություն էր հատկացնում բոստանային կուլտուրաների մշակությանը և նույնիսկ «Պոստան ցանէր ինքն»:[211]

Այն հանգամանքը, որ վանական տնտեսության մեջ համեմատաբար մեծ թվով աշխատուժ է օգտագործվել ծմերուկի մշակման ասպարեզում, վկայությունն է բոստանային այդ կուլտուրայի առավել տարածվածության մասին «Ջմերուկի պօստանի բար տնօղ ԲՃԻԹ (228) մշակաց ետու», - կարդում ենք աղբյուրում:[212] Ջմերուկի սերմի համար ևս բարձր գին է վճարվել «ԲՌԸՃ (2800) ետու պօստանի համար ծմերուկի հնդի», - հաղորդում է նույն աղբյուրը:[213]

Ջմերուկը մշակվել է հիմնականում ավազախառն հողերում: Ինչպես վկայում են աղբյուրները հիմնականում աճեցվել է երկու տեսակի ծմերուկ՝ պահունի և սովորական: Պահունու «սուլթան» տեսակը ուներ երկարավուն տեսք հաստ կեղև դեղնականաչավուն միջուկ և պահվել է ողջ ձմեռը: Սովորականի «չիր» տեսակը ուներ բարակ կեղև , կլոր տեսք, կարմիր միջուկ ու չի պահվել:[214] Տարածված բոստանային կուլտուրաներից է վարունգը, որի մշակությունը կենտրոնացված էր ինչպես ցածրադիր, այնպես էլ նախալեռնային շրջաններում: Մշակվել է վարունգի երկու տեսակ՝ գարնանային և աշնանային: Գարնանային վարունգը, որն ուներ երկարավուն ողորկ մաշկ, սածիլվել է գարնան սկզբին «ԴՌԵՃ (4500) ետու պօստանի համար խիյարի սերմի ձեռամբ տէր Կիրակոսին ի մարտի ժէ (17)»,- հաղորդում է մատյանը:[215]

Բերքահավաքը կատարվել է գարնան վերջերին, որի մասին ուղղակի վկայություն ունի Առաքել Դավրիժեցին. «Էր ժամանակն գարնանային, - գրում է նա, - վասն որոյ կայր ի մեջ սեղանին վարունգ

---

[208] Омарий, с. 751.
[209] Թաղիադյան Մ., նշվ. աշխ. էջ 255:
[210] Մատենադարան,Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 201:
[211] Ջամբռ, էջ 179:
[212] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 91:
[213] Նույն տեղում, էջ 75:
[214] Էվլիա Չելեբի, էջ 72:
[215] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 73:

որէ խիյար»:[216] Աշնանային վարունգը, որ փոքր չափի էր և փշոտ մաշկով սածիլվել է ամռան վերջերին, իսկ հավաքվել աշնան կեսերին: Ինչպես երկրագործական մյուս մշակությունները, այնպես էլ բոստանային կուլտուրաները պահանջում էին լուրջ նախապատրաստական աշխատանքներ: Նախ հատկացված հողագործությունները աշնանը գութանով հերկվել է, իսկ գարնանը արորով կրկնահերկվել: Կապված ոռոգման հնարավորությունների հետ, այդ կուլտուրաների մշակությունը կատարվել է ինչպես հարթ մարգերում, այնպես էլ թմբերի վրա: Քիչ ջրովի հողամասերում այն կատարվել է հարթ մարգերում, իսկ ջրովի պայմաններում՝ թմբերի վրա: Սովորաբար, թմբի լայնությունը վերցնում էին մինչև 1 մետր, իսկ երկարությունը՝ որքան թույլ տար ջրելու հնարավորությունը: Թմբերը այնպես էին գցում, որ ջուրը բոստանի ամբողջ տարածքով դանդաղ հավասար հոսի և ոչ մի տեղ չլճանա: Առաջին ջուրը կատարվում էր ցանելուց երկու-երեք օր առաջ, որի ընթացքում ցածր մնացած ու ջրով ծածկված թմբերը բահերով բարձրացնում ու հարթվում էին: Այդ նույն ժամանակ կատարվում էին թրջոց, երբ սերմերը լցնելով տոպրակների մեջ 2-3 ժամ ընկղմվում էին ջրում, ապա հանում և առվի եզրին ծածկում խոնավ հողով: Մինչ սերմերը ծլում էին, ջրած հողը քեշանում էր ու հողորատներով բացած բների մեջ գցում էին 3-5 ծլած սերմ ու ծածկում հողով: Մատյանները տեղեկություններ են հաղորդում, ինչպես սերմերով, այնպես էլ սածիլներով մշակության մասին: Դրանցից մեկում, օրինակ, կարդում ենք. «ԴՌ (4000) դիան բոստանի բար տնօղ ՂԸ (98) մշակաց ետու»,[217] իսկ մյուսում. « ԵՌԸԻ (5820) ետու բոստանի թաղար տնող ՃՂԴ (194) մշակաց»:[218] Այնուհետև ցանքը առանց ջրելու մնում էր մինչև ծլերի երևան գալը և 1-2 տերև գոյանալը: Տերևները կազմավորվելու ժամանակ կատարվել է առաջին նոսրացումը, երբ ամեն մի բնում թողնվել է 2-3 բույս: Այնուհետև կատարվում էր ամենակարևոր աշխատանքներից մեկը՝ վար դնելը, երբ հողուրագներով հեռացնում էին մոլախոտերը, իսկ բահերով փխրեցնում բույսի շուրջը եղած հողը: Աղբյուրներում այն կոչվել է նաև «պողազ լցնել»: Դրանցից մեկում այդ մասին կարդում ենք.«Զ (6) շահի ետու ներսի պաղչայի խիյարի պողազ լցնող Զ (6) մշակաց պաղչաների ձեռօք»:[219] Վար դնելու ընթացքում միաժամանակ կատարվում էր բույսերի վերջնական նոսրացում՝ թողնելով յուրաքանչյուր բնում մեկ բույս: Այնուհետև կապված տեղանքի առանձնահատկությունների հետ, տրվում էր 4-5 ջուր և բերքը հավաքվում էր:

Աղբյուրների վկայությամբ, ինչպես արդեն նշել ենք, բոստանային կուլտուրաներ մշակվել են նաև նոր տնկած խաղողի այգիների թմբերի

---

[216] Առաքել Դավրիժեցի, էջ 472:
[217] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 130:
[218] Նույն տեղում, էջ 76:
[219] Նույն տեղում, էջ 30:

արանքում, մինչև որթի բերքատու դառնալը. «Ցանված ի մեջ որթուն վարունգ և սեխ»,- հայտնում է Զաքարիա Քանաքեռցին:[220] Այն միաժամանակ օգտակար էր նորատունկ այգիների արագ զարգացման համար:

4. Ոռոգման աշխատանքներ

Քանի որ երկրագործության զարգացման հիմնական նախապայմանը ջրօգտագործումն էր, ուստի անհրաժեշտ է քննարկել միաժամանակ ոռոգման համակարգին վերաբերող հարցերը:

Դժբախտաբար, 15-16-րդ դդ. աղբյուրները շատ քիչ տեղեկություններ են հաղորդում ոռոգման վիճակի, ջրօգտագործման ձևերի և նրա հետ կապված շինարարական աշխատանքների մասին: Մատենագրական և վիմական աղբյուրներում պահպանված տեղեկությունները հիմնականում վանքերին ու եկեղեցիներին տրվող նվիրատվության առուծախի վավերագրեր են՝ ջրերի լիակատար կամ մասնակի տիրության իրավունքի մասին:

Արևելյան Հայաստանում ընդհանրապես և մասնավորապես էջմիածնի վանական տնտեսությունում ոռագման ցանքի կանոնավորման բնագավառում 17-րդ դ. երկրորդ քառորդից զգալի տեղաշարժեր են նկատվում, եթե պետական իշխանության կողմից չէին կատարվում առանձին ջրաշինարարական աշխատանքներ, այնուհանդերձ մեծ ուշադրություն էր դարձվում գոյություն ունեցող ջրանցքների պահպանմանը:

Ջրաշինարարական աշխատանքների կատարումը մեծ չափեր ընդունեց էջմիածնի վանական տնտեսության մեջ՝ դառնալով հոգևոր առաջնորդների գործունեության հիմնական ուղղությունը:

Այդ գործի սկզբնավորողը Փիլիպոս Աղբակեցին է: Նա հատկապես մեծ ուշադրություն դարձրեց Քասախ գետի ջրերի օգտագործման վրա: Քասախը, որը սկիզբ է առնում Ապարանի շրջանից, Արագածից բխող աղբյուրներից, խոր կիրճով հոսում է դեպի Արարատյան դաշտ, իր մեջ ներառելով մի քանի լեռնային վտակներ: Գետը Ֆրանկանոց գյուղի մոտ դուրս գալով նեղ կիրճից, բաժանվում էր առանձին ոռոգման 16 առուների, որից օգտվում էին ինչպես շրջակա գյուղական համայնքների բնակչությունը, այնպես էլ էջմիածնի վանական միաբանությունը: Սակայն ամռանը ջրի մակարդակը խիստ իջնում էր և դժվարություններ էր ստեղծվում ոռոգման գործում: Եղած ջուրը հազիվ բավականացնում էր 360 հա այգիների և մոտ 150 հա բամբակի ցանքսերի ոռոգմանը:[221]

---

[220] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 59:
[221] ՀԱԱ ֆ .810, g1, գ.75:

Ջրի սակավության պատճառով հողերի 1/4 մասն էր միայն մշակվում, իսկ ցորենի ցանքսերին և առվույտին հատկացված տեղերը մնում էին խոպան: Հենց այդ նկատառումով էլ Փիլիպոս Աղբակեցին ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին «Մեծավ աշխատութեամբ և դրամածախութեամբ» փոխեց Արագածից սկիզբ առնող ու Շիրակի դաշտը հոսող Ախուրյան գետի Գեղածոր վտակի ընթացքը և ջրանցք անցկացրեց մինչև Քասախ գետը, ավելացնելով վերջինիս ջուրը «ութը ջրաղացի չափով»:[222] Նույն կաթողիկոսի ջանքերով հիմնովին վերանորոգվում է Քասախից հանած հին ջրանցքը, որը ստանում է «Շահարխ» անունը:[223] Փիլիպոս Աղբակեցին միևնույն ժամանակ մեծ ուշադրություն է դարձնում Հրազդան գետի ջրերի օգտագործման վրա, որով ոռոգվում էին վանքապատկան հողատարածքները. «Այլ և սև յավել զջուր ի Հրազդան ի Սևանու ծովակէն բանալով զյառաջն մեծավ աշխատութեամբ և դրամածախութեամբ», - հայտնում է Սիմեոն Երևանցին: Աղբակեցու ջրաշինարարական ձեռնարկումների մասին:[224] Առանձնակի կարևորություն ուներ Դալմայի ջրանցքը, որով ոռոգվում էր Երևանից հարավ ընկած տարածությունները մինչև Նորագյուղ և Փարաքար գյուղի մոտից իջնում էր Վաղարշապատ ջրարբիացնելով վանքապատկան այգիները:[225] Վանական միաբանության համար հիշյալ ջրանցքի նշանակությունը այնքան էր կարևորվում, որ 1699 թ. Նահապետ Եղեսացի կաթողիկոսը ոմն Բուրջ-Ալի Ղազարի ընտանիքին վճարելով պատկառելի մի գումար, մոտ 50 թուման, ջրանցքի սեփականության իրավունքը վերադարձնում է վանքին:[226] Ջրանցքի նախկին տերերը հետագայում փորձել են կրկին տեր դառնալ ջրանցքի սեփականությանը, սակայն 1717 թ. Աստվածատուր Համադանցի կաթողիկոսին հաջողվում է Շարիաթական դատարանով վերահաստատել ջրանցքի նկատմամբ ունեցած էջմիածնի վանքի սեփականատիրական իրավունքը:[227] Աստվածատուր Համադանցուն հաջողվում է միաժամանակ 1718 թ. էջմիածնի վանքի տնօրինությանը հանձնել Մեծամոր գետից հանված ջրանցքի սեփականության իրավունքը՝ ջրարբիացնելով Սեֆիապատ և Ալիբեկլու գյուղերում ունեցած հողատարածքները:[228]

Ձյան հալոցքներից ու տեղումներից գոյացած ջուրը կուտակելու և ամռանն օգտագործելու նպատակով կառուցվում էին փոքրիկ ջրամբարներ: Այդ գործում առավել փութկոտ էր Հակոբ Ջուղայեցու գործունեությունը: Հենց նրա նախաձեռնությամբ էլ Վաղարշապատից հյուսիս,

---

[222] Ջամբռ, էջ 191-192:
[223] Նույն տեղում, էջ 162:
[224] Նույն տեղում, էջ 23:
[225] Շիրմազան Գ., Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից:
[226] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 1016:
[227] Նույն տեղում, վավ. 1017:
[228] Ջամբռ, էջ 160:

Մոլլա - Դուրսուն գյուղի մոտ կառուցվում է մի ջրամբար, որը հայտնի է «Քարաքթի գյոլ» անունով:[229] Այն ջրամբարը օգտագործվել է մինչև 1760 թ.: Նույն կաթողիկոսի նախաձեռնությամբ կառուցվում են ևս երեք ջրամբարներ՝ մեկը Քարաքթի գյոլից ցած ընկած տարածքներում, մյուսը՝ Հռիփսիմեի վանքից արևելք և վերջինը՝ Շռոլու շրջակայքում:[230] Այս վերջին ջրամբարը պատաշար էր, իսկ շրջապատը՝ ծառերով պատված. «Շինէ սույն երանելիս զմեծ ծովալ մի սև լայնարձակ և պարսպավոր ծառոտ և գեղեցկավայել»:[231]

Ջրային պաշարներն ավելացնելու նպատակով Փիլիպոս Աղբակեցին ու հատկապես Հակոբ Ջուղայեցին մեծ ուշադրություն են դարձնում ստորերկրյա ջրերի օգնագործմանը՝ կառուցելով քահրիզներ ու քանքաններ:

Քահրիզի կառուցման տեխնիկան հետևյալն էր՝ միևնույն ուղղությամբ փորում էին մի քանի հորեր, նրանց հատակները միացնում ստորերկրյա ջրացանքներով ու խառնելով բոլոր հորերի ջրերը միմյանց՝ ստանալով բավականին մեծ հոսանք: Հորերի խորությունը հաշվվում էր այնպես, որ նրանց հատակը միացման ժամանակ համընկներ թեք մակարդակին: Դա արվում էր ջուրը ազատ ու հեշտ դուրս հանելու նպատակով: Քանքանները փորված հատուկ գայլիկոնախոր հորեր էին, որտեղ ջուրը կուտակվում էր և ապա ջրհանների միջոցով, օգտագործելով քաշող ուժ (գոմեշ, եզ) 200-250 լիտրանոց կաշվե դույլերով ջուրը վեր էր հանվում. «ԸՌ (8000) դիան ետու, քանքան հանօղ Աստուածատուրին Խ (40) աւուր վարձ, օրն մէկ ապասով, գործապետ Յովհաննես վարդապետի գիտութեամբ», - կարդում ենք վանքի հաշվեմատյաններից մեկում:[232] Քանքոնների վերաբերյալ օգտագործելով Աբրահամ Երևանցու մի վկայությունը՝ Ղ. Ալիշանը գրում է. «Չորիվք մղոնք ի հր. Վաղավերիս՝ կայ փոքր գիվղն թուրքաց (իբր 20 տանց) Քանքան կամ Քեանքեան, յոր անուն, որպէս նշանակեցաք այլուր կողին շտեմարանք կամ գուբք հաւաքման աւելնորդ ջուր ի սահման էջմիածնի... և ի հնումն մեծ հավաքարան ջուրց եղեալ ի պէտս շուրջակայ վայրացն ելից կոսէ մղոնավ կամ ավելի բացագոյն այլ շինատեղի Գույուշի (ջրհորուտ) անուն»:[233]

Փիլիպոս Աղբակեցու կառուցած ստորերկրյա ընդուղիներից մեկը անցնում էր վանքի դրսի դռնից, տաճարի տակով ուղղվում էր դեպի Գայանեի վանքը և այնտեղից դուրս գալիս դաշտ:[234] Կաթողիկոս Սիմեոն Երևանցին 1768 թ. կառուցում է մի նոր ընդուղի, որը միան

---

[229] Նույն տեղում, էջ 198,199:
[230] Նույն տեղում, էջ 199-200:
[231] Նույն տեղում, էջ 199:
[232] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 76:
[233] Ղևոնդ Ալիշան, Այրարատ, էջ 286:
[234] Ջամբռ, էջ 197:

«երկու ջրաղացի» չափով:[235] Հակոբ Զուղայեցին շարունակելով իր նախորդի աշխատանքը՝ 1655-1670 թթ. փորել է տալիս մի մեծ քահրիզ և ջուրը հասցնում մինչև Գայանեի վանքից ներքև ընկած հողատարածությունները:[236] Նա միաժամանակ Քասախ գետից փորել է տալիս մի երկար ընդուղի ու, միավորելով Փիլիպոս Աղբակեցու կառուցածին, ավելացնում է վերջինիս ջուրը «երկու ջրաղացի» չափով. «Եւ լինէին երկոքեանն ըստ չափու ջրոյ երկուց ջրաղացից»:[237] Այս ջրի վրա կառուցված ջրաղացը անվանվում է «Քանքանի ջրաղաց»: Շարունակելով ջրաշինարարական աշխատանքները, Հակոբ Զուղայեցին նույն Քասախ գետից Ալիբեկլու գյուղ անցկացնում է մի նոր ընդուղի, որի ջրերով ոռոգվում է «ոսի հող» կամ «Հերանանքի հող» կոչված տարածքը:[238] Այդ ընդուղին 1768 թ. վերանորոգվում է Սիմեոն Երևանցու կողմից:[239]

Ջրանցքների և առուների ամենամյա մաքրումը նրանց վերանորոգումները, ինչպես նաև ջրից օգտվելու գործի կանոնավորումը, հստակ կարգավորումներ էին պահանջում: Ոռոգման սիստեմի կարգավորմանը հետևում էին միրաբները, ջուվարները կամ էլ գյուղական համայնքը:

Միրաբը նշանակվում էր խանի կամ գավառի կառավարիչների կողմից, յուրաքանչյուր գավառի համար մեկ տարի ժամանակով: Նրա հիմնական պարտականությունն էր բնական հոսող կամ մայր առվի ջրերը բաժանել առանձին գյուղական համայնքներին: Միրաբը ամեն գարնանն այցելում էր առվի բանդը, ստուգում առվի մեջ բաց թողած ջրի քանակը և հատուկ պատրաստված միրաբության տախտակե կնիքով դրոշմում: Ունենալով վարչական մեծ լիազորություններ միրաբը միաժամանակ հսկում էր իրեն ստորադաս վերահսկիչների՝ ջուվարների գործունեությունը, լուծում առանձին համայնքների միջև ջրի շուրջ առաջացած վեճերը, պահպանում համայնքային հերթականությունը, ժամանակին օգնության հասնում ծանր դրության մեջ ընկած գյուղերին: Միրաբի աշխատանքը վարձատրվում էր թե պետական իշխանության, թե համայնքների, և թե առանձին հաստատությունների կողմից: Էջմիածնի հաշվեմատյաններից մեկը, օրինակ, հայտնում է. «Ետու ևս երկու հազար դիան միրաբին, գիտութեամբ Ղունկիանս վարդապետի»':[240] Սովորաբար միրաբին հաջողվում էր պաշտոնավարել երկար տարիներ: Այսպես, օրինակ 1746 թ. հաշվեմատյանում կարդում ենք

---

[235] Նույն տեղում:
[236] Նույն տեղում:
[237] Նույն տեղում:
[238] Նույն տեղում, էջ 198:
[239] Նույն տեղում:
[240] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 27, էջ 16:

«Միրաբ Զէյնալին ետու ԳՌ (3000) դիան»,[241] իսկ 1753 թ. մատյանում ասվում է «ԳՌ (3000) դիան ևս ետու միրաբ Զէյնալին»:[242] Չնայած, ոչ մի գյուղական համայնք չէր կարող զրկվել իր հասանելիք հերթական ջրից, այնուամենայնիվ, ինչպես տեղեկացնում է Ժ. Շարդենը, բացառիկ դեպքերում միրաբին իրավունք է վերապահված դադարեցնել այս կամ այն գյուղի ջուրը և հատկացնել այն այլ համայնքի:[243] Նման երևույթը տեղի էր ունենում գիրդավի (պարսկերեն՝ ջուր կտրում) ժամանակ: Գիրդավին սովորաբար դիմում էին ամռանը, երբ ջուրը գետերում և առուներում պակասում էր և բոլոր գյուղերը չէին, որ կարող էին բավարար չափով ջուր ստանալ: Առաջանում էր վտանգ, երբ կարող էր կորցնել իր բոլոր ցանքսերը: Գիրդավ, ինչպես նշում է Ս. Եղիազարովը, էությունն այն էր, որ տվյալ շրջանի նույն ուղղությամբ հոսող բոլոր ջրերը 1-3 օրով հատկացվում էին առաջին հերթին վտանգի մեջ գտնվող գյուղերին, որոնք էլ պարտավոր էին սահմանված ժամկետում ոռոգել իրենց հողատարածքները: Ապա այն ըստ հերթականության փոխանցվում էր ուրիշ գյուղի:[244] Ջուրը բաժանելիս սովորաբար մնում էր որոշ ավելցուկ: Այն դրվում էր միրաբի տրամադրության տակ և կոչվում էր «ավելի ջու»: Այդ ջուրը նա կարող էր տնօրինել ըստ հայեցողության:

Ջուվարները նշանակվում էին սովորաբար մեկ առանձին գյուղի, կամ էլ ընդհանուր ոռոգման ուղուց օգտվող մի քանի գյուղերի համար: Նրանք նույնպես օժտված էին վարչական մեծ լիազորություններով:

Հաճախ ջրային ավագներ ընտրում էր համայնքը. «Այր մի Մխիկ անուն ի գեղջէն Քանաքեռոյ, որ էր ջրպետ գեղջ», - կարդում ենք Զաքարիա Քանաքեռցու մոտ:[245] Համայնքի ջրային ավագների ֆունկցիաները այն էին, ինչ ջուվարներինն էր՝ ջուրը հավասարապես բաժանել համայնքի անդամներին, լուծել նրանց միջև առաջացած վիճելի հարցերը, կազմակերպել ջրուղիների վերանորոգման աշխատանքներ և այլն: Հատկապես կարևորվում էր վերանորոգման աշխատանքների կազմակերպումը, քանզի դրանք ամենօրյա էին: Վանքի հաշվեմատյաններում բազմաթիվ են այն վկայությունները, որոնք վերաբերում են ոռոգման ուղիների վերանորոգմանը, լինի դա վերգետնյա, թե ստորգետնյա: Ներկայացնենք դրանցից մի քանիսը. «էճՕ (750) դիան ետու ժե (15) մշակաց, որ քալարի տնկի առուն հանած էին»,[246] ԲՌ)2000) դիան Դ (4) ապասի ԺՉ (16) փող ետու սառցատան քանքանի բանուոր

---

[241] Նույն տեղում, վավ. 13, էջ 218:
[242] Նույն տեղում, էջ 347:
[243] Chardin, vol. 4, p. 99-200.
[244] Егиазаров С., Сельская обшина, с. 256.
[245] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 57:
[246] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 47:

ԽԸ (48) մշակաց»,[247] «Քանքանի իստակող մշակաց որ է ԱԵԱ (101) որոց Կ (60) հոգւոյն Ա (1) շահի և Ա (1) փողով, իսկ ԼԴ (34) հոգւոյն Ա (1) շահի Գ (3) փողով և է (7) ին Ա (1) շահիյով ետու 5000 ԸԵԿ (860) դիա»:[248]

Ջրի կարևոր տնտեսական գործոն լինելու հետ են առնչվում բոլոր այն անախորժություններն ու վիճաբանություններն, որ մշտապես կատարվել է գյուղական համայնքներում, ինչպես նաև վերջիններիս ու առանձին հաստատությունների հետ, այս առումով արժանահիշատակ է Քասախ գետի ջրերի օգտագործման իրավունքի օրինակը, երբ Փիլիպոս Աղբակեցին ավելացնելով վերջինիս ջուրը «ութը ջրաղացի» չափով, չի կարողանում վանքի հասանելիքը ամբողջությամբ ստանալ, քանզի ինչպես գրում է նա շահ Աբաս 2-ին հղած բողոքում «...մեզ ոչինչ օգուտ, զի երկրացիքս զաւթեալ զջուր գետոյն տանին ի հողս իւրեանց աւելորդաբար և մեզ ոչ տան ըստ բաւականին»:[249] Եվ միայն շահի հատուկ կարգադրությունից հետո Երևանի Խոսրով խանի գործում միջամտությամբ հարցը կարգավորվում է.«Եւ ի տալ հրամանիս այսորիկ, երկրիս խանն յայնմ ժամանակին (որ Խոսրով կոչիւր) և այլք և հայք հանդերձ Փիլիպոս կաթողիկոսի ելեալ գնուն ի բանտն գետոյս ուր բաժանին ջուրք դաշտիս, որ է յաւարտն յՕշականու ձորոյն և մուտն նոյնոյ գետոյն ի լայնանիստ դաշտն Վաղարշապատու, ի վեր կոյս Հաճի շարայ կոչեցեալ գեղջն, որ և այժմ ասի բանտ. և անդ մեծամեծ արձանաքարիւ կալեալ զառաջս գետոյն զբոլոր ջուր նորին յերկուս բաժանեն, զմի բաժինն տան մեր դաշտիս եղելոց, միւս բաժինն Կարբու նահիայ կողեցելոց գեօղօրէիցն»:[250]

Ջուրը համայնքի ներսում բաժանվում էր հետևյալ կերպ. նախ համայնքը բաժանվում էր առանձին խմբերի՝ տասնյակների, որոնց մեջ մտնում էին հավասար թվով ծխեր: Այնուհետև յուրաքանչյուր տասնյակի համար սահմանվում էր հերթ: Նույնանման բաժանման էր ենթարկվում ջուրը նաև տասնյակի ներսում, այսինքն այն բաժանվում էր ըստ հողի չափի, և տասնյակի անդամները ամբողջ օրվա ընթացքում հերթով ջրում էին իրենց հողատարածքները: Ամբողջ օրը բաժանվում էր չորս քառորդի: Առաջին քառորդը սկսվում էր վաղ արշալույսից մինչև կեսօր, երկրորդը՝ կեսօրից մինչև մայրամուտ, երրորդը՝ մայրամուտից մինչև կեսգիշեր, չորրորդը՝ կեսգիշերից մինչև մյուս օրվա լուսաբաց:[251] Ջրօգտագործման այս սիստեմի պայմանում որպես ջրի չափի միավոր գործածում էին «լուխ», «բահ», «թուխդ», «բաժին», «լուլա», «ջրաշատ», «օրավար», «շաբաթական» ձևերը, ինչպես նաև աղբյուր-

---

[247] Նույն տեղում, էջ 40:
[248] Նույն տեղում, էջ 395:
[249] Ջամբռ, էջ 192:
[250] Նույն տեղում:
[251] Егиазаров С., Сельская обшина, с. 282.

ներից ժամով կատարվող հաշվարկը: «Գլուխ» ջուրը ջրաչափման այնպիսի ձև էր, որի հիմք ընկած էր հոսքի տևողության որոշակի ժամանակի սահմանափակման սկզբունքը: Կալվածագրերից մեկում այդ մասին կարդում ենք.«պատճառ գրոյն այն է. թվին ՌՃԿԸ(1718)-ին որ ես Ադամի որդի Յակոբս ես իմ կամաւս և իմ ըռազութամբս ծախեցի Նորահանի գահրէզէն Բ (2) գլուխ ջուր վերէն օրն Ե (5) շաբաթ ծախեցի Սիամոնի որդի Մուքիլին Ե (5) թուման»:[252] «Բահ» ջուրը մի շարք տեղերում կոչվել է նաև «բաղ» ջուր: Մեկ «բահ» ջուրը կազմում էր երկու «բաղ» ջուր, կես «բահ»-ը՝ մեկ «բաղ, ջուր:[253] «Բահ» ջրի չափը որոշելիս վերահսկողը առվի հոսող մասում բահն իջեցնում էր ջրի մեջ, և եթե ջուրը ծածկում էր բահի երկաթյա մասը ամբողջությամբ, ապա դա կազմում էր մեկ բահ ջուր, երկու բահերը ծածկելու դեպքում՝ երկու բահ ջուր և այլն: Ս. Ամատունու կազմած «Հայոց բառ ու բան» բառարանում բահ ջրի չափի վերաբերյալ ասվում է. «Այնքան ջուր, որ քցի բարձրանա ջրի մեջ տնկված բահի քուրը (վիզը)»:[254] Ս. Ջելենսկին «բահ» ջրի չափի վերաբերյալ գրում է.«Գյուղացիների հասկացությամբ բահ ջուրը հավասար է ջրի այն ծորին, որի առաջ կարելի է բռնել սովորական երկաթե բահով՝ կանգնեցնելով այն ուղղաձիգ հոսանքի դեմ»:[255] «Թուխդ»-ը կազմում էր յուրաքանչյուր քահրիզի ամբողջ ջրի 1/4 մասը: Կալվածագրերից մեկում այդ մասին կարդում ենք.« թվին ՌԾՂԷ (1748) որ ես՝ Խաչիկի որդի Ովսեփս իմ կամաւն ծախեցի մեկ թուխդ քահրէզ որ Մահմատ Թաղահիրէն էինք առել, Գ (3) թուխդն վանքինն, մին թուխդն իմ Ովսեփիս էր. ես էլ կրկին ծախեցի մեր առաջնորդ Մարկոս վարդապետին ԲՌ (2000) դինար փող առի»:[256] «Թուխդ» ձևին համարժեք ջրուղիներից կատարվող ջրի բաշխման դեպքում գործածվել է նաև «բաժին» ձևը: Ինչպես վկայում է 1676 թ. մի կալվածագիր ոմն Մելիքի որդիք 6000 դինարով վաճառել են իրենց քահրիզի մեկ «բաժին» ջուրը Դարաշամբի սբ. Ստեփանոս Նահավկայի առաջնորդ Միքայել վարդապետին:[257] «Լուլա»-ն որպես ջրի չափման միավոր գործածվում էր սակավաջուր վայրերում պարտեզներն ու բանջարանոցները ոռոգելիս: «Լուլա» (պարսկերեն փոքրիկ խողովակաձև իր, ծորակ) ջրի չափը որոշելու նպատակով, կավից թրծված տարբեր տարողության հատուկ խողովակներ էին պատրաստում, որոնք վերահսկողը դնում էր ջրավելակի տակ և մայր առվից այդ խողովակներով դուրս թողնում ջուրը: Էջմիածնի վանական տնտեսության «ելից-մտից» մատյանների վկա-

---

[252] Կալվածագրեր, էջ 76:
[253] Տես Շահազիզ Ե., Աշտարակի պատմությունը, էջ 54:
[254] Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ 1912, էջ 477:
[255] Материалы для изучения экономического быта государственних крестьян, с.15.
[256] Կալվածագրեր, էջ 144-145:
[257] Մատենադարան, Կրկ. դիվ., թղթ. 242, վավ. 93:

յությամբ, կարող էր տրվել նույնիսկ դինտի քարը պտտելու ունակ «լուլա» ջրի քանակություն. «Բ (2) շահի ետու կավակերտու տնկի լուլեն շինելոյ վարծ վեքիլ Գրիգորի ձեռօքն»,- կարդում ենք այնտեղ:[258] «Ջրաղաց» ջրի չափը որոշվում էր ջրաղացի մեկ քարը պտտելու ունակ ջրի քանակով: Ինչպես արդեն նշել ենք, ջրի չափի նման քանակությամբ կարողացավ ձեռք բերել Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը.«...ի յաջորթելն տեառն Փիլիպոսի երջանիկ զհայրապետութիւն սրբոյ Աթոռոյս, յետ բազմաց բարերարութեանցն առնէ սոյն երանելիս գովութեանց արժանի գործս: Քանզի ի ծոցվոյն լեռնէս մերմէ Արագածու յայն կուսէ երեսէն ջուր մի ելեալ (մինչև ութն ջրաղացի բաւական)... Այս երանելիս մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ բերեալ զայն ջուրն արկանէ յայսկոյս լերինն և խառնէ ի գետս մեր Քարձաղ, որով ոռոգանի դաշտս մեր»,- հաղորդում է Սիմեոն Երևանցին:[259] «Բաժին» ջրի չափը գործածվում էր հիմնականում բնական հոսող ջրերի վրա միջհամայնական ջրօգտագործման պայմաններում: Սիմեոն Երևանցու վկայությամբ.«յՕշականում գեղացիքն զվարելահողս ունին ի վերին ծայր դաշտիս մերոյ ի հիւսիսակոյսն ի գլուխ Մոլադուրսուն գեղջն: Եւ այս հողոյս աղագաւ ևս յատուկ ջուր ունին Քարձախ գետոյս ի պանտէն մերմէ բաժանեաց, զմին բաժինն ծախեն Աստուածատուր կաթուղիկոսին ինն թումանի և հինգ հազար դիանի»:[260] «Օրավար» և «շաբաթական» ջրերը տրվում էին հատուկ ժամանակով և անկախ հողային տարածության ամբողջական ոռոգումից, կտրվում էին պայմանավորված ժամկետում: «Շաբաթական» ջրի չափի մասին ուշագրավ վկայություն ունի 16-րդ դ. իտալացի ուղեգրող Վինչենցո Դ' Ալեանդրին. «Գյուղական շրջաններում,- գրում է նա,- սովոր են ջուրը տանել ջրելու համար դաշտերը, մի շաբաթ մի տեղում, և մի ուրիշը մի այլ տեղ և այսպես բավականաչափ ջուր են տալիս հացահատիկի որթատունկերի»:[261] Աղբյուրներից հոսող ջրերի ժամով կատարվող հաշվարկը հատկապես կիրառվում էր ջրի բաշխման անհատական տեսակի դեպքում, այգիների ու բանջարանոցների ոռոգման ժամանակ: Ինչպես վկայում է կալվածագիրը, ագուլեցի ոմն Խոջենց Թուման ունեցել է անձնական միջոցներով հանած մի աղբյուր, որի ջրի ընդհանուր քանակը հաշվվում էր 80 ժամ: 1670 թ. հիշյալ Թումանն խոջա Մուսաբեկին է վաճառում ամբողջ մի կտոր խաղողի այգի իր ջրի իրավունքով, որը ինչպես նշված է կալվածագրում «Ընդհանուր ութսուն ժամի վաթսուներկու ժամն է»:[262] Ժամով կատարվող հաշվարկ էր նաև «թաս»-ը կամ «թանգ»-ը, որի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում

---

[258] Նույն տեղում վավ. 13, էջ 41:
[259] Զամբռ, էջ 191:
[260] Նույն տեղում, էջ 194:
[261] Հակոբյան Հ., Ուղեգրություն , էջ 240:
[262] Տե՛ս Փափազյան Հ. , Այգիներն ու այգետեղերը, էջ 63:

Ժ. Շարդենը: Ըստ այդ տեղեկությունների, մայր առվի մեջ, որտեղից պետք է ջուր հատկացվեր դաշտը կամ այգին ոռոգելու համար, դնում էին մեջտեղում շատ փոքր անցք ունեցող կլոր, բարակ իրանով ու տարողունակությամբ բավականին մեծ պղնձյա թաս: Երբ թասը լցվում և սկսվում էր ընկղմվել, այն դատարկում էին և նորից դնում ջրի մեջ այնքան ժամանակ, քանի չէր ավարտվել նախատեսված տարածության ամբողջական ոռոգումը: Սովորաբար թասը լցվում էր 2-3 ժամում:[263]

Նկատի ունենալով ժամանակի շինարարական տեխնիկան պետք է կարծել, որ ոռոգման հետ կապված աշխատանքները, լինեն դրանք ջրանցքների, թե՛ առուների և թե՛ ջրամբարների, քահրիզ-քանքաների կառուցում ու վերանորոգում, չափազանց դժվար ու աշխատարար գործ էր: Ինչպես վկայում են վանքի մատյանները, ամեն տարի պարտադիր կարգով կատարվում էին ոռոգման ուղիների մաքրման աշխատանքներ: Տեղեկություններից մեկում կարդում ենք. «...ԹԵ (900) դիան ետու Քալարու ներքի տնկի առուն հանող ժԵ (15) մշակա»:[264] Մեկ այլ տեղեկության մեջ էլ ասվում է. «ԲՌԸԵ (2800) դիան ետու գեղիս մեր միջի ջրաղացի առուն հանող ՕԶ (56) մշակաց»:[265] Համեմատաբար դժվարություն էր ներկայացնում քանքարի մաքրման աշխատաքների կատարումը, որի վրա ծախսվել է ավելի մեծ քանակի աշխատուժ: Մատյաններից մեկում այդ մասին կարդում ենք. «Քանքանի իստակող մշակաց, որ է ԱԵԱ (101), որոյ Կ (60) հոգւոյ Ա (1) շահի և Ա (1) փողով, իսկ ԼԴ (34) հոգւոյ Ա (1) շահի Գ (3) փողով և է (7) ին Ա (1) շահիով ետու հինգ հազար ԸԵԿ (860) դիան»:[266]

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարող ենք նշել, որ 17-18 դդ. էջմիածնի վանական տնտեսության մեջ նշանակալի զարգացման էր հասել ոռոգման ցանցի շինարարությունը: Եվ, քանի որ գյուղատնտեսության համար, մասնավորապես Արարատյան դաշտում հողին հավասար նշանակություն ուներ ջուրը և երկուսը միասին կազմում էին արտադրության հիմնական պայմանը, ուստի ոռոգման ցանցի կատարելագործումը էապես նպաստեց վանական տնտեսության առաջընթացին:

5. Անասնապահություն

Անդրադառնալով էջմածնի վանական տնտեսությունում անասնապահությանը վերաբերող հարցերին ու բավարարվելով ընդհանուր կարգի մի քանի դատողություններով Բ. Հարությունյանը եզրակացնում

---

[263] Chardin, vol. 4, p. 99-100.
[264] Մանտենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 23, էջ 49:
[265] Նույն տեղում, էջ 51:
[266] Նույն տեղում, էջ 395:

է, թե այստեղ, որպես տնտեսության առանձին ճյուղ անասնապահությամբ չեն զբաղվել: Նա գտնում է, թե դրա պատճառը անասնապահական վայրերի բացակայությունն էր, հետևապես և կերի պակասությունը:[267]

Ճիշտ է, իրականում անասնապահությունը իր ճյուղավորվածությամբ ու զարգացման աստիճանով չէր կարող համեմատվել երկրագործության հետ, այնուհանդերձ, ինչպես վկայում է աղբյուրների ուսումնասիրությունը, այն ևս կարևոր տեղ էր գրավել էջմիածնի վանական հաստատության տնտեսական կյանքում:

Էջմիածնի վանական տնտեսությունում անասնապահության աճի մասին վկայում է առաջին հերթին այն փաստարկը, որ հաստատության հոգևոր առաջնորդները այդ գործում ցուցաբերել են անձնական մեծ շահագրգռվածություն: Այսպես, Առաքել Դավրիժեցին նկարագրելով Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսի տնտեսական ձեռնարկումները, հայտնում է, թե վերջինս շինարարական մեծ ծավալի աշխատանքներ կատարելուն զուգընթաց հավաքեց նաև.«ջոկք խաշաց և անդեռ»:[268] Սիմեոն Երևանցու հավաստմամբ Աստվածատուր Համադանցին մեծ աշխատանքներ կատարեց նորանոր արոտատեղեր ձեռք բերելու ուղղությամբ: Մասնավորապես նրան հաջողվում է 25 թումանով վանքի սեփականությունը դարձնել Ալիբեկլու գյուղի շրջակա հողատարածքները ու դարձնել այն «խոտատու և արօտատեղի անասնոց սրբոյ Աթոռոյ»:[269] Հենց ինքը Սիմեոն Երևանցին խոտատու տարածքներ է ձեռք բերում Երևանի շրջակայքում:[270] Պակաս կարևորություն չեն ներկայացնում Սիմեոն Երևանցու հայտնած տեղեկությունները անասնաքանակի վերաբերյալ: Ըստ այդ տեղեկությունների, էջմիածնի ապահարկության իրավունքները վերահաստատող Նադիր շահի կարգադրությունում ասվում է, որ շահի հրամանով միրզա Քյազումը և այլ գործակալներ գալով էջմիածին, Աբրահամ Կրետացի կաթողիկոսի հետ երկար քննարկումներից հետո, շահին ներկայացնում են մի զեկուցագիր, որտեղ այլոց հետ միասին ապահարկ է համարվում «ոչխար հինգ հարիւր մինն կէս շահով՝ լինի ընդամէնն մէկ թուման ԲՌԷԵ (2500) դիա»:[271]

Վանական տնտեսության մեջ անասնապահության տարածվածության մասին է խոսում թերևս հովվության ինստիտուտի լայն կիրառումը: Միայն 1741թ. հաշվեմատյանից տեղեկանում ենք, որ վանքը վճարել է.

«ԴՌ (4000) դիան նախրչի Ստեփանին հին վարձէն
ԲՌ (2000) դիան հոտաղ Մելիքին հին վարձէն

---

[267] Арутюнян Б., Крупное монистырское хозяйство, с. 69.
[268] Առաքել Դավրիժեցի, էջ 342:
[269] Ջամբռ, էջ 160:
[270] Նույն տեղում, էջ 179:
[271] Նույն տեղում, էջ 145:

Դ (4) ապասի չօպան Հարութին հին վարձէն
ԼԱ (31) շահի չօպան Աւետիսին հին վարձէն
ԲՌ (2000) դիան չօպան գառնարած Հովանեսին հին վարձեն
ԱՌ (1000) դիան գառնարած Սարգսին հին վարձեն
Թ (9) ապասի նախրարած Քօչարին նոր վարձէն
ԲՌ (2000) դիան հոտաղ Գրիգորին - վարձէն
Գ (3) ապասի նախրարած Ստեփանին հին վարձէն
Թ (9) ապասի հորդարած Թաթոսին հին վարձէն
Զ (6) ապասի հորդորած Արշամին հին վարձէն»:[272]

Բերված վկայություններից դժվար չէ նկատել, որ ի դեմս նախրչո, հոտաղի, չոբանի և հորդարածի, վանական տնտեսության մեջ զգալի էր նաև խոշոր եղջրավոր անասնապահության զարգացումը թերևս անհրաժեշտություն էր դարձրել մի երևույթի տարածմանը ևս: Դա գոմերի և մարաքների օտարման փաստն էր: Նման փաստի մասին է վկայում հետևյալ կալվածագիրը.«Ի թվին ՌՃՁԷ (1738) ես յուշականցի տէր Մարուքս և իմ եղբայր Գրիգորս և Բաբս մեր կամավս և մեր օժանդակութեամբ, մեր մարաքն ծախեցինք Սուրբ էջմիածնայ ԺԸՌ (18000) դիան, մուքվանչի Ներսես վարդապետի ձեռամբ»:[273] Իսկ վանքի 1742 թ. հաշվեմատյանից տեղեկանում ենք, որ աշխատանքներ են կատարվել գոմեր պատրաստելու ուղղությամբ. «ԲՃՕ (250) դիան ետու գեղիս գոմ շարող Ե (5) մշակաց»:[274]

Վանական տնտեսությունում անասնապահության աճի մասին է վկայում նաև անասունների վաճառքի փաստերը: Դրանցից մեկում, օրինակ, ասվում է. «Գ (3) թուման ԳՌԳՃ (3300) դիան ետու ԺԲ (18) ոչխարի»:[275] Մեկ այլ տեղ էլ կարդում ենք. «Ոչխար առի ԽՁ (46) հատ ձեռամբ Աստուածատուր վարդապետին, վարձն ետու Զ (6) թուման ԷՌԷՃ (7700) դիան»:[276] Փաստերի հավաստմամբ վանական հաստատությունը հաճախ ինքը է կազմակերպել անասունների վաճառք: Այդ մասին է վկայում 1746 թ. հաշվեմատյանը, ուր մասնավորապես ասվում է. «Էրէվան ծախած տավարների գինն առի Յակոբ վարդապետէն ԺԵ (15) թուման ԹՌԳՃ (9300) դիան շամախեցի Յակոբ և Օվանէս վարդապետաց գիտութեամբ»:[277] Նույնիսկ Երևանի խանին ուղարկված «կամավոր» կոչված նվերների շարքում, վանական հաստատությունը պար-

---

[272] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 32-33:
[273] Կալվածագրեր, էջ 141:
[274] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 52:
[275] Նույն տեղում, էջ 56:
[276] Նույն տեղում, էջ 152:
[277] Նույն տեղում, էջ 341:

տավոր է դասել նաև անասուններ.«Թոխլի ղրկի խանի պայրամն շնորհաւորելոյ Թ (9) հատ»,- կարդում ենք աղբյուրում:[278]

Այսպիսով, բերված փաստերը հիմք են տալիս եզրակացնելու, որ էջմիածնի վանական տնտեսության մեջ անասնապահությունը ևս հանդիսացել է զբաղմունքի ինքնուրույն ճյուղ: Եթե նկատի ունենանք, որ այստեղ նշանակալից էր նաև անասնապահական մթերքների վերամշակումը, ապա հասկանալի կդառնա, որ տնտեսությունում գերակշռող չէր միայն բանող անասունների գլխաքանակը, ինչպես գտնում է Բ. Հարությունյանը:[279]

Էջմիածնի վանական տնտեսությունում ոռոգման ցանցի կարգավորումը ոչ միայն երկրագործության զարգացման կարևոր նախադրյալներից մեկն էր, այլ նաև անասնապահության, քանի որ այն անհրաժեշտ պայման էր, թե կերի կուտակման, և թե՛ մթերատվության բարձրացման:

Բնական աշխարհագրական պայմանները լայն հնարավորություն էին ստեղծում անասնապահության զարգացման համար հատկապես Արարատյան դաշտում: Մ. Թաղիադյանցի հավաստմամբ Արարատյան դաշտասվայրի «արօտս հոտից» այնքան շատ էին, որ «խաշանք» լիուլի բավարարում էին ինչպես Երևանի, այնպես էլ նրա շրջակա բնակավայրերի բնակչության կաթնամթերքի պահանջմունքը:[280] Եթե երկրի նախալեռնային ու լեռնային շրջաններում անասուններին շուտ էին ծմեռանոց տանում ու կերակրում չոր խոտով, ապա Արարատյան դաշտում անասունները մինչև խոր աշուն, իսկ առանձին դեպքերում էլ մինչև ձմռան կեսերը կերակրում էին դրսում: Անասունների կերի մեջ գերակշռում էր ցանովի յոնջան կամ առվույտը: Առավել բարենպաստ տարիներին նույնիսկ հինգ անգամ յոնջայի հունձ է կատարվել: Ցանքը կատարվել է գարնանը մարտ-ապրիլ ամիսներին. «Զ (6)շահի ետու յօնջայի հունդ խառնող Զ (6) մշակաց սարկաւագ Գրիգորի ձեռօք յապրիլի ԺԳ (13)»,-կարդում ենք վանքի հաշվեմատյաններից մեկում:[281] Ցանքերն օգտագործում էին 5-6 տարի, իսկ ցանքաշրջանառության մեջ թողնվում էր 3-4 տարի: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Ադամ Օլեարիուսը: Ըստ այդ տեղեկությունների, Սեֆյան տիրապետության սահմաններում առվույտի ամենալավ բերքը աճում էր Երևանի շրջակայքում, ուր մեկ անգամ ցանելուց հետո մոտ վեց տարի նույն վայրում աճում էր, իսկ հաջորդ տարում հարկավոր էր այդ տարածությունները վարել ու կրկին ցանել:[282] Ի Շոպենի տվյալներով միայն Երևանի հողատարածքներից տարեկան

---

[278] Նույն տեղում, էջ 218:
[279] Арутюнян Б., Крупное монистырское хозяйство, с. 69.
[280] Թաղիադյանց Մ., Ճանապարհորդություն ի Հայս, հ. 1, էջ 228:
[281] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 34:
[282] Омарий, с. 738.

ստացվել է 500000 կապ առվույտ:[283] Համեմատության կարգով նշենք, որ 1745թ. միայն Վաղարշապատի հողատարածքներից վանքը ստացել է 2500 կապ առվույտ. «ՁՌ (6000) ետու մեր չարէքտարներին ԲՌԷԵ (2500) եօնճի վարձ, որ իւրեանց բաժիններ վէքիլ Մաղաքի գիտուբեամբ»,- տեղեկացնում է մատյանը:[284] Հարկ է նշել, որ բացի առվույտից որպես կանոնավոր, օգտագործվել են նաև այլ տեսակի խոտաբույսեր: Օրինակ, հաշվեմատյաններից մեկը հայտնում է. «Ա (1) թուման ետու չայիրի ի տեղական ի յՈւշի և ի Սէրկեւիլ որ վանքիս ձիանքն կապած էին»:[285] Օգտագործվել է նաև խաղողի թմբերի վրա աճած խոտը: Այսպես, միայն 1742 թ. Վաղարշապատի խաղողի այգիներից ստացվել է 1000 կապ չոր խոտ. «ԲՌԸԵ (2800) դիան ետու գեղիս մեր այգեաց կաթեպանացն ԱՌ (1000) խուրձի խոտագին»:[286]

Անասունների ձմեռային կերի մեջ նշանակալից էր դարմանը, որը ստացվում էր ցորենի և գարու ցողուններից: Այն վանական տնտեսություն էր բերվում առավել շատ նախալեռնային ու լեռնային շրջաններից (Կարբի, Ապարան): Հաշվեմատյաններից մեկում կարդում ենք. «Ետուք ևս կարբեցի Աշոտ եսավուլին երեք թուման փող, յորմէ և դարման գնեցինք գիտուբեամբ Ղունկիանոս վարդապետին»:[287] Թե՛ խոտը և թե՛ դարմանը պահել են հատուկ այդ նպատակով կառուցված մարաքներում. «Մարաքի կտիր ցխօղ ԿԹ (69) մշակաց վարձն ետու»,- տեղեկացնում է մատյանը:[288] Ձմեռային կերի մեջ անասունների կաթնատվության բարձրացման համար հատկապես կարևոր էր քուսբը, որը ստացվում էր քունջութի մնացորդներից. «Քեջքի քուսբ առի ԺԸ (18) լիտր, գինն ետու ԹՇ (900) դիան»,- հաղորդում է նույն մատյանը:[289]

Ըստ բնակչության զբաղվածության, անասնապահությունը վանքապատկան վայրերում երկու տիպի էր՝ նստակյաց և կիսաքոչվոր: Այն վայրերում, որտեղ արհեստական ոռոգման շնորհիվ կային փարթամ արոտավայրեր, գերակշռում էր նստակյաց անասնապահությունը: Սիմեոն Երևանցու հավաստմամբ, օրինակ, Կարբիի մահալի Բաթրինջ գյուղը ոչ միայն կաթողիկոսության ամառանոցային վայրն էր, այլև հրաշալի արոտատեղ էր. «Այլ և բաց ի մլքէն տեղիս ունեցեալ Սուրբ Աթոռս ի տեղս այս զխոտհարքս և զարոտատեղիս անասնոց և գեղս այս լեալ է կաթողիկոսացն մերոց հովանոց և զբօսարան»:[290]

---

[283] Шопен И., Исторический помятник, ст. 760.
[284] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 71:
[285] Նույն տեղում, էջ 63:
[286] Նույն տեղում, էջ 43:
[287] Նույն տեղում, վավ. 27, էջ 32:
[288] Նույն տեղում, վավ. 23, էջ 62:
[289] Նույն տեղում, էջ 52:
[290] Ջամբռ, էջ 126:

Կիսաքոչվորական կյանք վարող տնտեսությունները, ինչպես նաև ցածրադիր գոտու նստակյաց բնակչության մի մասը գարնան վերջերին իրենց անասուններով տեղափոխվում էին լեռնային շրջաններ, որտեղ կլիման զով էր, իսկ անասունների համար կերը՝ առատ: Որպես այդպիսին էջմիածնի վանական տնտեսության համար ծառայել է Արագած սարը, ուր մշակները տեղափոխել են վանքի անասունները. «ԱՌԲԵ (1200) դիան ետու մեր չորոց հետ ի սար գնացող մշակին Խ (40) օրէն վարձ, ղաթրջու ձեռօք»,-կարդում ենք աղբյուրում:[291] Ժամանակ առ ժամանակ նրանք իջնում էին յայլաներից իրենց տնտեսությունում երկրագործական աշխատանքներ կատարելու համար: Իսկ վերջնականապես նրանք իջնում էին աշնան կեսերին, երբ սարերում սկսվում էին ցրտերը, իսկ գյուղերում բերքահավաքը:

Հետաքրքիր է նշել, որ կատարվել են անասնաբուծական աշխատանքներ:

Հաշվեմատյաններում բազմաթիվ են նման արտահայտության տեղեկաթյուններ. «ետու կենդանի կամ մսի վաճառք»: Այսպես, 1755 թ. հաշվեմատյանում կարդում ենք. «ԵԵ (500) դիան ևս առի խոզագին - ձեռամբ աթոռակալին»:[292]

Վանական տնտեսության անասնապահական համալիր ճյուղերից էր և թռչնաբուծությունը: Պահել են հավ, հնդկահավ, սագ, բադ: Ի. Շոպենի վկայությամբ Երևանի խանը երկրի տարբեր գավառներից տարեկան ստացել է մոտ 20000 ձու և 10000 թև հավ:[293] Այն ստացվել է նաև էջմիածնի վանական տնտեսությունից: Օրինակ, հաշվեմատյաններում հանդիպում ենք հետևյալ տեղեկությունների. «Խանի եասաուլին Ղուլուղ ետու ԽԱ (41) հաւ»[294], «Հասան-Ալի խանի համար ճուտ էր առել թվանքլի Օվագիմ է (7) հատ, գինն ետու Բ (2) ապասի Բ (2) շահի»[295] և այլն:

Թեև աղբյուրներում ուղղակի վկայություններ չկան բուն տնտեսության ներսում մեղվաբուծության վերաբերյալ, սակայն կան անուղղակի մի շարք տվյալներ, որոնք վկայությունն են անասնապահության այս համալիր ճյուղի տարածվածության մասին: Հաշվեմատյանների էջերում բավականին շատ են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են միաբանության կողմից մեղր գնելուն:[296] Միաժամանակ վանական միաբանությունը ստիպված էր.«նվերների» անվան տակ պարբերաբար Երևանի խանին կամ փաշային մեղր ուղարկել «Մեղր առի Ալի Ղուլի խանին համար Բ (2) լիտր, գինն ետու ԲՌԳԵ (2300) դիան», -

---

[291] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 49:
[292] Նույն տեղում, էջ 366:
[293] Шопен И., Исторический памятник, ст. 785.
[294] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ 1, վավ. 13, էջ 205:
[295] Նույն տեղում, վավ.բ 23, էջ 58:
[296] Նույն տեղում, վավ. 13, էջ 195, 200, 219, 396 և այլն:

տեղեկացնում է մատյանը:[297] Վանական միաբանությունում առավել շատ գործածվել է մեղրամոմը թե՛ որպես պահները լուսավորելու միջոց և թե՛ որպես մոմ ստանալու հիմնական հումք.«Ետու չորս լիտր մեղրէ մոմի մէկ լիտրն ԲՌԸՆ (2800) դիան»,- կարդում ենք մատյաններից մեկում:[298] Եթե Տաթևի վանքի 1692 թ. եկամտացանկերը պատկերող սկզբնաղբյուրում թվարկվում են այն գյուղերի անունները, որոնք բնավճար ռենտա պարտավոր էին վանքին վճարել նաև մեղր, պետք է ենթադրել, որ նույնը պարտավոր էին անել նաև էջմիածնի վանքապատկան համայնքները:

6. Արդյունաբերական արտադրություն

Էջմիածնի վանական տնտեսության մեջ արդյունաբերական արտադրության նախնական տեսակը, որը տակավին չէր անջատվել գյուղատնտեսությունից, հանդիսացել է տնայնագործական արտադրությունը: Տնային նշանավոր գյուղատնտեսական հումքի վերամշակումը արտադրության կարևոր ձևն էր, քանի որ նա էր ապահովում սննդի ու հագուստ իինչպես նաև արտադրության միջոցներից որոշ տեսակների նկատմամբ բնակչության պահանջմունքը:

Տնայնագործական արտադրության տեսքով երկրագործական հումքից առավել շատ վերամշակման էին ենթարկվում այգեգործական կուլտուրաներից խաղողը, ինչպես նաև հացահատիկային ու տեխնիկական մշակաբույսերը:

Սկզբնաղբյուրներում խաղողի հնձանների մասին եղած առատ վկայությունները հավաստում են, որ վանական տնտեսության մեջ տնայնագործական արտադրության կարևոր ճյուղերից էր գինեգործությունը: Շարված անտաշ որձաքարից լցված կրաշաղախով և ներսից սվաղած գաճի տեսք ունեցող կրի հաստ շերտով, հնձանները սովորաբար ունեին զույգ հորեր, որոնցից մեկում լցվում էր քաղցուն, իսկ մյուսում՝ հեղուկ: Հավանաբար հնձանների առատությունն էր պատճառը, որ բավականին շատ գումարներ են ծախսվել կիր ձեռք բերելու համար: Օրինակ, միայն 1742 թ. վանքը գնել է 293 սոմար կիր՝ ծախսելով 1թուման 4150 դիան գումար:[299]

Հնձանները հիմնականում կառուցվում էին խաղողի այգիներին կից, որը հնարավորություն էր տալիս հենց տեղում, առանց լրացուցիչ աշխատանք ու կորուստների վերամշակել խաղողը. «Ալէքսանդր կաթո-

---

[297] Նույն տեղում, էջ 157:
[298] Նույն տեղում, վավ. 27, էջ 50:
[299] Նույն տեղում, էջ 53:

դիկոսն ջուղայեցի ի Նորագեօղ զայգի մի առնու, որ է երկու տախտակ իւր հնձանովն»,- կարդում ենք «Ջամբռ»-ում:[300]

Հնձանները կառուցվում էին նաև սեփական տներին կից և որպես առանձին կառույց ենթակա էին օտարման: Դրա մասին է վկայում հետևյալ կալվածագիրը.«Պատճառ գրոյս այս է, ես Յուշականցի Ղազարենց Յարութիւնի որդի Աբրահամս և իմ եղբոր որդի Գրիգորն մեր կամաւն և մեր յօժարութեամբն մեր տան մօտի յընծանն ծախեցինք ի սուրբ էջմիածնա, մլքանչի Աղաէկի ձեռովն դիմութն ՁՌ (6000) դիան: Թուին ՌԵՕԸ (1709) մարտի ժէ (17)»:[301]

Խաղողի վերամշակման հիմնական պրոցեսը քաղցու, ապա գինի և օղի ստանալն էր: Նախ, խաղողը քաշելուց հետո կողովներով տեղափոխել են հնձան. «ԱՌԲԵՕ (1250) դիան ետու Երևանայ Պօղայի այգւոյ ԻԴ (24) կանանց խաղող քաղօղի, Ե (5) գրոց կրողի»,- տեղեկացնում է աղբյուրը:[302] Հաջորդ պրոցեսը ճզմելն էր, որը կատարվել է ինչպես քարե ճզմիչի միջոցով, այնպես էլ ոտքերով. «ԹՌԵԵ (9500) ետու գեղիս մեր Գ (3) այգեաց հնձան կոխող ԱԵԻԵ (125) մշակաց»,- հաղորդում է նույն աղբյուրը:[303] Ճզմելուց հետո քաղցուն փոքր ինչ թեք մակարդակ ունեցող հատակից հոսելով ցածրադիր պատի տակով անցկացրած կավե փողրակով գնում էր դեպի հարևան սենյակը և հավաքվում նրա շատ ավելի ցածրադիր հատակին դրված կաթսաների մեջ. «Ետու ես յԵրևան Բ (2) կարասի քրեն վասն քաղցու ածելոյ, մինն Ռ (1000) դիան»:[304] Հնձանի այս երկրորդ բաժանմունքը սովորաբար ավելի ընդարձակ էր և ծառայում էր ինչպես մառան: Մառանում սովորաբար կաթսաներից բացի կային հատուկ հորեր, ուր լցվում է մաքրված քաղցուն: Որպեսզի հողերի, ինչպես նաև կաթսաների պատերը հեղուկ չներծծեն, այն պատել են ճարպով. «ԲԵ (200) ետու ճրագվի, վասն մէկ կարասն ճրագուելոյ ձեռամբ տէր Պետրոսին»,- հաղորդում է մատյանը: [305] Առանձին դեպքերում նույն նպատակի համար օգտագործվել է և մեղրամոմ. «Ետու ևս չորս լիտր մեղրէ մոմի, մեկ լիտրն երկու հազար ութ հարիւր դիանով»,- կարդում ենք մեկ այլ մատյանում:[306] Հորերը շարված էին անտաշ քարերով, լավ սվաղված հաստ կրաշերտով: Դրանք ունեին կարասի տեսք. բայց ավելի տարողունակ էին (մոտ 2500լիտր): Հորերի բերանները և եզրերը նույնպես սվաղված էին հաստ կրաշերտով և ծածկված բազալտից կամ տուֆ քարից շինված բոլորաձև, կենտրոնում լայն անցք ունեցող սալերով. Անցքը, որ փակ-

---

[300] Ջամբռ, էջ 182:
[301] Կալվածագրեր, էջ 130:
[302] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 52:
[303] Նույն տեղում, էջ 64:
[304] Նույն տեղում, վավ. 27, էջ 48:
[305] Նույն տեղում, էջ 28:
[306] Նույն տեղում, վավ. 23, էջ 390:

վում էր տուֆ կամ բազալտ քարից պատրաստված խցանաձև կափարիչներով, խմորման ժամանակ բացվում էր, որպեսզի կուտակված գազերը դուրս գան: Անցքը ծառայում էր նաև հորից քիչ քանակությամբ գինի հանելու համար: Գինին ամբողջությամբ դատարկելու կամ հորը մաքրելու համար վերցվում էր հորի բերանի սալը:

Գինու ստացման մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին: Մասնավորապես, խոսելով գինու օգտագործման վրա արգելք դնելու վերաբերյալ պետական հրամանի մասին՝ նա գրում է. «Եւ քանզի հրաման թագաւորին վասն արգելման գինոյ էր, և այժմ ևս պարսիկք կողմանէ սկսան ամբաստանութիւն առնել զքրիստոնեից, թէ նոքա գինարբո ազգք են և հանապազ գինեաւ պղծեն զջուրն, զի յորժամ զխաղողն ճմլեն զքաղցուն գինի առնեն և զկնճիռն վարեն ի ջուրն որով պղծի ջուրն և յորժամ կամին լուանալ զկարաս գինոյ, բերեալ դնեն ի մէջ առուին մեկ և երկու օր ի թրջոց, և ապա լուանան և լուացոնք ջուրն դարձեալ թափի ի յառուն ի մէջ ջրոյն»:[307] Իշխանությունների կողմից գինեգործության վրա արգելք դնելու մեկ այլ հրամանի մասին է հաղորդում Զաքարիա Ագուլեցին: Նա տեղեկացնում է. որ 1654 թ. Երևանի Մուհամմատ-Կուլի խանի կարգադրությամբ մոտ 6-7 ամիս ոչ միայն արգելվում է գինու պատրաստումը, գործածությունն ու վաճառքը, այլև բռնագանձվում է հատուկ հարկ:[308] Ըստ «ելից-մտից» մատյանների, 1761թ. հունվար-մայիս ամիսներին վանական տնտեսությունում վաճառվել է 8 կարաս գինի, իսկ հաջորդ՝ 1762 թ. մարտ-հունիս ամիսներին՝ 10 կարաս:[309]

Ըստ նույն մատյանների 1761թ. գինու ծախսը վանական տնտեսության մեջ հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Սեղանի ծախս
   41 կարաս
2. Կաթողիկոսի սեղանի ծախս
   6 կարաս
3. Միաբանության անդամների ծախս
   2 կարաս
4. Երթևեկող հյուրերի ծախս
   19 կարաս
5. Հարկավոր մարդկանց և ուխտավորների ծախս
   13 կարաս
6. Արհեստավորների ծախս
   27 կարաս

---

[307] Առաքել Դավրիժեցի, էջ 353:
[308] Զաքարիա Ագուլեցի, էջ 41-42:
[309] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ.4, էջ 49-56:

7. Վաճառված գինի
30 կարաս Ընդամենը 141 կարաս[310]

Կաթսաները սովորաբար պատրաստում էին 500-1000 լիտր տարողությամբ: Եթե միջինը ընդունենք 700 լիտր, ապա կստացվի, որ մեկ տարվա համար միայն կաթսաներում վանական տնտեսությունում պատրաստել են շուրջ 10000 լիտր գինի: Եթե դրան ավելացնենք նաև հորերում եղածը, ապա այդ թիվը կարող է շատ ավելին կազմել: Ի. Շոպենի հաշվարկներով, օրինակ, Արևելյան Հայաստանի Ռուսական տիրապետության սկզբնական շրջանում վանական տնտեսությունում տարեկան արտադրվել է 10000 դույլ գինի, որը կազմել է մոտ 240 կարաս:[311] Վանական տնտեսությունում գինու արտադրության մեծ չափերի մասին է վկայում 1756 թ. մատյանի այն վկայությունը, ըստ որի միայն մեկ օրում վաճառվել է 5 կարաս գինի. «Ապրիլի Ե (5)-ին գինի ծախեցաք Ե (5) կարաս պայազիտցի խոճոց Կարապետին Ա (1) կարասն ԺԲՌ (12000) դիան, գինն առի Զ (6) թուման ԳՌ (3000) դիան»:[312] Իսկ նույն տարվա հոկտեմբեր ամսվա մուտքը միայն գինու վաճառքից կազմել է երեք թուման յոթ հազար դինար:[313]

Որոշ տեղեկություններ էլ վկայում են օղու ստացման մասին: Այն ստանալու համար քաղցուի որոշ մասը և ճզմելուց հետո մնացած չանչը լցնում էր կարասները, որտեղ խմորվելու հետո լցնում էին հատուկ պատրաստած պղնձյա ամանի մեջ (60-100 լիտր տարողությամբ), ամուր փակում բերանը և տաքացնում: Ստացված գոլորշին պղնձյա խողովակով անցկացնում էին սառը ջրի միջով, որտեղ այն վեր էր ածվում հեղուկի: Դա էլ հենց թորած օղին էր: «Արաղ քաշելու է (7) մշակին վարձն ետու»,- հաղորդում է մատյանը:[314] Մեկ այլ տեղեկություն էլ վկայում է, որ վանական տնտեսությունում զբաղվել են օղու վաճառքով. «Արաղ ծախեցաք Գ (3) չարեք կէս, ԱՌԵԵ (1500)դիան, Շիրազի Մարտիրոսի ձեռք»:[315]

Խաղողի վերամշակումից ստացել են նաև դոշապ, չամիչ և քացախ: Սկզբնաղբյուրներում ջրաղացների ու դինգերի մասին եղած առատ վկայությունները ապացույց են վանական տնտեսությունում հացահատիկային կուլտուրաների վերամշակման մասին: Մի տնտեսություն, որ տարեկան արտադրել է 6000 փութ ցորեն, 1800 փութ գարի, 4500 փութ կորեկ և 4200 փութ չալթուկ, հասկանալի է, որ պետք է ունենար նաև երկրագործական այդ հումքն վերամշակելու հնարա-

---

[310] Նույն տեղում, էջ 48-106:
[311] Шопен И., Исторический памятник, ст. 681.
[312] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 23, էջ 4:
[313] Նույն տեղում էջ16,
[314] Նույն տեղում, էջ 343
[315] Նույն տեղում, վավ. 13, էջ 43:

վորություններ: Ըստ Սիմեոն Երևանցու հայտնած տեղեկությունների էջմիածնի վանքը տիրել է ջրաղացների ու դինկերի հետևյալ ցանկին.

N	Անունը	Վայրը	Կառուցված է, գնված, թե նվիրված	Կառուցողը ստացողը	Արժեքը	Օտարողը	Թվականը
1	Միջի ջրաղաց	Վաղարշապատ	սեփական				
2	Վերի ջրաղաց						
3	Գայանեի վանքի մոտ ջրաղաց		կառուցված	Հակոբ Ջուղայեցի			
4	Յուզբաշոնց ջրաղաց		գնված	Ալ. Ջուղ.	10թուման		1713
5	Գայանեի վանք արևմտյան կողմի ջրղ.		կառուցված	Ղազար Ջահկեցի			1748
6	Մեսրոպենց ջրաղաց		գնված	Ալ. Ջուղ.			1710
7	Իփրումենց ջրաղաց	Օշական	գնված	Հակոբ Ջուղ.	4.5թուման	Պետրոս էմին	1663
8	Գյուլենց Ջրաղաց		նվիրած	Ղազար Ջահկեցի		Գյուլի	
9	Ավագի ջրաղաց	Կավակերտ	գնված	Ղազար Ջահկեցի	3թուման	Ավագ	1744
10	Ավագի ջրաղաց	Գեոկգումբեթ	գնված	Ղազար Ջահկեցի	3թուման	Ավագ	1744
11	Գառնուկենց ջրաղաց	Ջորագեղ	նվիրված	Հակոբ. Ջուղայեցի		Խոջա Հակոբ ջան	1659
12	Սահակի ջրաղաց		գնված	Հակոբ Ջուղայեցի		Քալանթար Սահակ	1661
13	Բուդաղենց դինկը	Վաղարշապատ	գնված	Ղազար Ջահկեցի	5թուման	Բուդաղ	
14	Քաքանի դինկը		կառուցված	Հակոբ Ջուղայեցի			1653
15	Մեկ դինկ	Քալար	կառուցված	Ալ. Ջուղ.			1709
16	Մեկ դինկ		կառուցված	Ալ. Ջուղ.			1714
17	Մեկ դինկ	Կավակերտ	նվիրված	Աստվածատուր Համադանցի		Մելիք Սահակ	

Ջրաղացներում ու դինկերում աշխատելու համար առանձնացված էին հատուկ մշակներ, որոնք տարիներ շարունակ կատարելով նույն աշխատանքը, «աշունանոցի» ու «չալթուկ խառնօղի» մասնագիտական հմտություններ էին ձեռք բերել. «Գ (3) ապասի ետու աղունանող Սիմոնին նոր վարձէն»,[316] «ԲՃ (200) դիան ետու Ա (1) մշակի, որ ի Կաւակերտ տինկն Գ (3) ցերեկ և Բ (2) գիշեր չալթուկ էր խառնած»[317],- նմանօրինակ բազմաթիվ հիշատակությունների ենք հանդիպում հաշվեմատյաններում: Ընդ որում, եթե ջրաղացներում աշխատում էին բացառապես տղամարդիկ, ապա դինկերում տղամարդկանց հետ միասին նաև կանայք. «Թ (9) շահի Զ (6) փօղ ետու ի կաւակերտ տինկն պրինձ խառնօղ ԻԴ (24) կանանց տնտեսապետի ձեռօք»,- հաղորդում է մատյանը:[318]

Տնայնագործական արտադրության տեսք ուներ տեխնիկական կուլտուրաներից բամբակի, կտավատի ու քունջութի վերամշակումը: Բամբակը նախ պահեստավորվել է հատուկ պահեստարաններում, որոնք կոչվել են բամբակատներ. «ԳՌ (3000) դիան ետու բամբակատան կտրի սվաղի բանվոր ԿԴ (64) մշակաց»,- կարդում ենք մատյանում:[319] Այնուհետև, առանձնացված կառույցներում)«շղրխատուն»), կատարել են զտման աշխատանքներ. «ԱՌԲՃ (1200) դիան ետու շղրխատան պատերն սվազ անօղ Գրիգորին և Բաղդասարին ԺԲ (18) օր էն վար»,- հաղորդում է մատյանը:[320] Հարկ է նշել, որ չղրկատները որպես անշարժ գույք բավականին բարձր արժեք են ունեցել: Օրինակ, 1728 թ. կալվածագրերից մեկում այդ մասին կարդում ենք. «Ես, Ասկարի որդի Ալահվերտիս իմ կամաւվ ծախեցի իմ հայրենիք շարաղն)չրյրրխ) Յակոբի որդի Աւտալին ԻԵՌ (25000) դիան»:[321] Զտումը կատարվել է ձեռքով հետևյալ կերպ. բամբակին խառնում էին մանր քարեր, լցնում այն հատուկ պատրաստված փոքր անցքեր ունեցող զամբյուղների մեջ ու ձեռքով թափահարում: Սիմեոն Երևանցու հավաստմամբ, 1767 թ. վանական տնտեսությունում բամբակազտման համար սկսվել է օգտագործվել ջրի ուժը. «Դարձեալ ի հարաւակողմն Սրբոյ Աթոռոյս»,- գրում է Երևանցին,- «ի կից վերայ քանքանիս մերոյ ջրաղացին շինեաց տեղապահն մեր Մկրտիչ վարդապետն նորապես զչղրխատուն մի այսինքն բամբակահան, որ է մի տուն, և միջին երկու չզրեխ, որք ջրով քանքանին մերոյ հանեն զբամբակս»:[322] Բամբակը կորիզից անջատելու կիրառվող այս պարզունակ ձևը բացի լրացուցիչ

---

[316] Մատենադարան Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 32:
[317] Նույն տեղում, էջ 48:
[318] Նույն տեղում, էջ 33:
[319] Նույն տեղում, էջ 51:
[320] Նույն տեղում, էջ 45:
[321] Կալվածագրեր, էջ 136:
[322] Զամբռ, էջ 191:

աշխատանք պահանջելուց, խիստ իջեցնում էր նաև հումքի որակը: Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման սկզբնական շրջանում երկրամաս գործուղված մայոր Շեմյոտը, կայսրության երկրագործության և պետական գույքի նախարարությանը այդ մասին գրել է. «Տեղի բնակիչների կողմից գործուղվող բամբակի զտման ձևը ընդհանրապես ունի շատ թերություններ և արտակարգ դանդաղ է նրանով կատարված աշխատանքները: Երկու մարդ օրական հազիվհազ ի վիճակի են մաքրելու 20-30 փութ բամբակ: Բացի այդ, կորիզը բամբակից անջատելու ժամանակ վերջինիս թելը այնքան է կարճ լինում, որ նրան մանել կարելի է միայն ձեռքի իլիկով և այդ պատճառով այն վաճառվում է տեղական բնակիչներին միայն, որոնք վուշի կանեփի պակասության պատճառով այն օգտագործում են տնային մանվածքի և գործվածքի համար»:[323] Զտումին հաջորդում էր գզելը, երբ մետաղյա ատամնաշար ունեցող աղելով բամբակը մանելուց առաջ փափկեցրել են. «ԻԲ) (22) շահի ետու ԻԵ (25) լիտր կէս բամբակ գզելոյ վարձ»,- հաղորդում է հաշվեմատյանը:[324] Այնուհետև, բամբակը իլիկներով մանել են, որի ընթացքում միաժամանակ պատվիրվել է որոշակի ապրանքային տեսքի վերածել այն. «ԺԵ (18) շահի ետու Զ (6) լիտր պարանացու բամբակ մանելոյ վարձ»[325], կամ «բամբակ մանել տուաք Ժ (10) լիտր վասն ջռալի համար, վարձ ետու ձեռամբ ամբարտարին ԲՌ (2000) դիան»,[326] հաղորդում են աղբյուրները: Ըստ Սիմեոն Երևանցու տեղեկությունների վանական տնտեսության ներսում գործում էին երկու ծիթհանքեր, ուր արտադրվում էր բուսական յուղ: Դրանցից մեկը, որ աղյուսաշեն էր, կառուցվել էր Փիլիպոս Աղբակեցու կարգադրությամբ, հետագայում քանդվել է և կրկին փայտով վերաշինվել 1767 թ. Սիմեոն Երևանցու կաթողիկոսական հրամանով, մյուսը, ուր հիմնականում վերամշակվում էր քունջութ («որ է քունճթի ծիթհանք»), գործել է անխափան:[327] 18-րդ դարի սկզբներին, ըստ արքունի Դիվանի գրանցման, էջմիածնի մայր Աթոռին պատկանող թվով 5 ծիթհանք ունեին մաղաֆության իրավունք:[328] Էջմիածնի հոգևոր հայրապետերը հոգ էին տանում մնացած եկեղեցական կենտրոններում ևս ծիթհանքերի անխափան աշխատանքի համար: Կալվածագրերից մեկում, օրինակ, որը վերաբերում է Սևանի անապատին պատկանող ծիթհանքի մասին, Փիլիպոս Աղբակեցին գրում է. «...եւ ընդ աւրհնութեանս ծանիք հոգևոր որդիք մեր՝ զի այդ ծիթհանքդ Դանիել վարդապետին է: Նա իւր մահուան ժամանակն

---

[323] Акты собранные Кавказской археологической комиссией, т.10. Тифлис, 1885, стр.155.
[324] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ37:
[325] Նույն տեղում, էջ 48:
[326] Նույն տեղում, վավ. 23, էջ 52:
[327] Զամբռ, էջ 190-191:
[328] Նույն տեղում, էջ 140:

Սեւանայ սուրբ Առաքելոյն վախմ է տուէր: Քանի ժամանակ էր ձիթհանքն աւերակ կայր ձգեալ: Ի խնամոցն աստուածոյ խօճայ Գրիգորն եկեալ շինեաց:... Մենք ևս յանապատին պատշաճ տեսաք, զոր ահա զմեր հոգևոր որդի Զաքարիա Մահդասիդ վերակացու կարգեցի, որ այսուհետև վերայ կենայ ձիթհանքին և ջաղցին. զինչ որ լինի տանի յանապատն, բայց մի գուցէ եթէ ոք հակառակ կայցէ կամ ընդդիմակ գտանիցի նոցա, կամ այլ և այլ ստասցէ, զի հակառակք նոցին մեզ և Սուրբ Առաքելոցն են հակառակք: Եղև զայս բան ի թուին հայոց ՌՂԶ (1647)»:[329] Ըստ Ի. Շոպենի 1830-ական թթ. Հայկական մարզում կար 285 ձիթհանք, որից գործել են 35-ը և որ դրանք տարեկան արտադրել են 15000 փութ յուղ:[330] Քունջութի և կտավհատի սերմերի մշակումը կատարվում էր տեխնոլոգիական տարբեր պայմաններում: Նախ այն բովել են մեծ տարողության ամանների մեջ («ԵԵ (500) դիան ետու ձիթհանքի դազանն կարկատելոյ վարձ»),[331] ապա մանրացրել ու մաղել («Ժ(10) շահի ետու Բ (2) ձեթահանքի մաղի»)[332] հետո ջուտ են տվել ու մամլել: 3-4 օրվա ընթացքում մշակվել էր 30 փութ քունջութ. որից ստացվում էր 6-7 փութ յուղ, իսկ 12-13 փութ կտավհատի սերմահատիկը մշակվում էր 3 օրվա ընթացքում, որից ստացվում էր 1-1.5 փութ յուղ:[333]

Ձիթահանքերում աշխատանքը մշտական չէր: Դրանք հիմնականում գործում էին ձմռանը, քանի որ չկար պահեստավորված բավականաչափ հումք, հետևապես, չէր էլ պահանջվում մշտական բանվորական ուժի առկայություն: Ամենաաշխատարար պրոցեսներն էին սերմահատիկի առանձնացումը, ինչպես նաև մածուցիկ դարձած զանգվածը ոտքերով անընդհատ տրորելը. «ԴՃԻԵ (425) դիան ետու Գ (3) կանանց որ ԺԹ (18) օր կտաւհատի սերմն շինած էին», - կարդում ենք հաշվեմատյաններից մեկում:[334]

Տնայնագործական արտադրության տեսք ուներ նաև անասնապահական օրենքների վերամշակումը: Ընդ որում, եթե նկատի ունենանք, որ էջմիածնի վանական միաբանության մեջ կերակրվում էին թվով 500-ից ավելի մարդիկ («Աթոռս այս այսպես յայտնի և հռչակաւոր օճախ իմն է, յորում հինգ հարիւր աւելի մարդ հատ ուտեն»),[335] ապա հասկանալի կդառնա, որ կաթնամթերքը հիմնականում գնում էր սննդի պահանջմունքների բավարարմանը: Հաշվեմատյաններում բավական

---

[329] Կալվածագրեր, էջ 121-122:
[330] Шопен И., Исторический памятник, с. 861.
[331] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 56:
[332] Նույն տեղում, էջ 118:
[333] Хатисов К., Кустарные промысли Закавказского края, Тифлис, 1891, с. 108-109.
[334] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 47:
[335] Զամբռ, էջ 135:

շատ տեղեկությունները, որոնք վերաբերում են կով կթելուն, խնոցիների ձեռք բերման և այլն:[336] Հետաքրքիր է նշել, որ տնտեսությունում կար առանձնացված կառույց՝ կաթնամթերատուն. «Ետուք ևս Նուշիին, որ մածնատան վերակացու էր ԵՌ (5000) դիան»,- կարդում ենք մատյանում:[337]

Անասնապահական մթերքներից տնայնագործական եղանակով վերամշակման էր երթարկվում նաև կաշին, մորթին և բուրդը: Կաշվի և մորթու վերամշակման առաջին պրոցեսը աղ դնելն էր: Ընդ որում գերադասելի էր եզան կամ գոմշի կաշին. «Կաշի աղ դնել»,- տեղեկացնում է մատյանը:[338] Աղ դրվում էր հիմնականում գառան կամ ոչխարի մորթին. «ԳՌԺ (3010) շահի տվի գդակակար Անանքային ճՕ (150) ոչխարի և գառան մորթի աղ գնելոյ վարձ»,-կարդում ենք նույն մատյանում:[339] Այնուհետև մորթին քերել են («Ե (5) շահի ետու ԻԵ (75) մորթի քերողին»)[340] և պատրաստել արտադրանք: Կաշվից պատրաստել են ոտնամաններ, զանազան չափի և հաստության կոթեր, լծափոքեր և այլ հարմարանքներ, որոնք օգտագործվում էին արորի, գութանի, կամի և այլ գործիքների օգտագործման ժամանակ: Այս առումով հաշվեմատյաններում բավական շատ ենք հանդիպում «սէկ շինել ետու», «թոկ շինել ետու վասն գութանի», «կաշի շինել ետու վասն պատանի» և այլ արտահայտությունների:[341]

Մորթուց պատրաստվում էին զանազան տիպի հագուստեղեն. «Ա (1) թուման ԷՃՈ (790) ետու գդակակարերին, որ ԻԸ (28) քուրք էին կարած, Ա (1) քուրքն Ա (1) ապասով, ԱԵԵ (105) գդակ էին կրած Ա (1) ու կէս շահով, չորապանի ձեռօք»,- հայտնում է մատյանը:[342] Մորթուց պատրաստում էին նաև բեռնակիր անասունների համար փականներ. «ԷՌԺԱ (7010) շահի ետու սարմջուն, որ ԼԵ (35) ջորու սամար մարամաթ էր արած Գ (3) շահով, Գ (3) ջորու սահար նոր կարած էր Զ (6) շահով, ԺԴ (14) ձիոյ փալան (նորն Բ (2) շահով է, հինն Ա (1) շահիով) մարամաթ էր արած Բ (2) շահիով Զ (6) իշու փալան մարամութ էր արած զուտ զտուիօնք, իշու փալանն նորն Բ (2) շահիով է և հինն Ա (1) շահիով, Սուքիասի և Կիրակոսի ձեռօք, շորապանի գիտութեամ»:[343] Ուշագրավ է, որ միաժամանակ կատարվել է մորթիների վաճառք «Մորթի ծախեցինք ԱԵ (100) այծու, Զ 980)ուլի մեկ մորթին Բ (2) շահի կեսով, ուլի մեկ մորթին Ա (1) շահի կեսով փողի ջամն է ԺԸՌԵԵ (18500) դիան»:[344]

---

[336] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 33,199:
[337] Նույն տեղում, վավ. 27, էջ 23:
[338] Նույն տեղում, վավ. 13, էջ 217:
[339] Նույն տեղում, էջ 107:
[340] Նույն տեղում, էջ 109:
[341] Նույն տեղում, վավ. 23, էջ 38, 43:
[342] Նույն տեղում, վավ. 13, էջ 64:
[343] Նույն տեղում:
[344] Նույն տեղում, էջ 339:

Առավել նշանակալից էր բրդի վերամշակումը: Ըստ վանքի հաշվեմատյանների, առանձին տարիների վանական տնտեսությունում մանվել է.

1741 թ. – 56 լիտր բուրդ
1742 թ. – 34 լիտր
1745 թ. – 27 լիտր
1753 թ. – 25 լիտր[345]

Բրդի թելերից պատրաստում էին վերնազգեստներ, գուլպաներ ու ձեռնոցներ: Սակայն առավել շատ պատրաստում էին մեծ տարողության պարկեր. «ԱՌԾ (1050) դիան ետու է (7) լիտր բուրդ մանելոյ վարձ վասն ջուալի Ներսէս վարդապետի ձեռօք»,- տեղեկացնում է մատյանը:[346] Բրդի կոշտ տեսակներից պատրաստում էին զանազան չափի պարաններ, թոկեր, որոնք օգտագործում էին անասուններին կապելու, բարձած սայլերի բեռն ամրացնելու և այլ նպատակներով. «ԹՌԸՃԻԵ (8925) դիան ետու Ժ (10) բրդե պարանի վասն զորոց բեռնակրութեան վեքիլ Սողոմոնի ձեռօք»,- կարդում ենք մատյանում:[347]

Տնայնագործական արտադրության առանձին ճյուղ էր հացաթխումը, որի համար առանձնացված էր հատուկ կառույց «տնտեսատուն»: Այստեղ էին կենտրոնացված ինչպես փռերը, այնպես էլ թոնիրները «Տնտեսական թօնտներն շինել ետուք որոց բանոր եղեն Զ (6) ետուք ՉԵ (600) դիան»,- կարդում ենք վանքի 1767 թ. հաշվեմատյանում:[348]

Ընդ որում, հացաթխման պրոցեսում հացթուխից առավել շատ օգտագործվել է խմոր անողների աշխատանքը: Օրինակ, ինչպես վկայում է 1741 թ. մարտ ամսվա հաշվեմատյանը, վանքը վճարել է.

«ԴՌ (4000) դիան խմորանօղ Փիլիպոսին
ԲՌ (2000) դիան Բ)2) շահի խմորանօղ Յակոբին
ԲՌ (2000) դիան խմորանօղ Սարգսին
Զ (6) ապասի խմորանօղ Փիլիպոսին
Ժ (10) շահի խմորանօղ Ասատուրին
ԵՌ (5000) դիան խմորանօղ Սահակին
ԳՌ (3000) դիան հացթուխ Մացիլին»:[349]

Ուրեմն, թվով 6 խմոր անողների սպասարկել է միայն մեկ հացթուխ:

Տնայնագործական արտադրության կարևոր ճյուղերից մեկը, որը միաժամանակ էջմիածնի վանական տնտեսության մենաշնորհն էր, հանդիսանում էր մոմագործությունը: Կառույցը, որ կատարվում էր

---

[345] Նույն տեղում, էջ 33-74, 217:
[346] Նույն տեղում, էջ 43:
[347] Նույն տեղում, էջ 55:
[348] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 4, էջ 346:
[349] Նույն տեղում, թղթ.1, վավ. 13, էջ 32-33:

արտադրապրոցեսը, կոչվում էր մոմատուն. «ԺՁՈ (16000) դիան Գ (3) ապասի ետու ի մոմատան վրա բանօղ մշակաց Ա (1) շահով»,- տեղեկացնում է մատյանը:[350] Մոմի պատրաստման համար որպես հումք օգտագործվել է ծրագուն «Դ (4) թուման ՁՈԸԵ (6800) դիան ետու ԲԵԼԴ (234) լիտր ծրագուի, վասն հասարակաց մոմ թափելոյ»,- կարդում ենք 1742 թ. հաշվեմատյանում:[351] Կիրառվել է նաև մեղրամոմը, որը բավականին թանկ էր «ետու չորս լիտր մեղրէ մոմի մէկ լիտրն ԲՈԸԵ (2800) դինար»,- տեղեկացնում է մատյանը:[352]

Առանձնապես մեծ պահանջարկ է ունեցել սպիտակ մոմը, որը Գրիգոր Դարանաղցու հավաստմամբ ստացել է Մովսես Սյունեցի վարդապետը (հետագայում կաթողիկոս) վերամշակելով մեղրամոմը: Պատմիչի վկայությամբ, այդ բանի համար նա արժանացել է Սեֆյան շահ Աբաս 1-ի հատուկ վերաբերմունքին. «Եւ հրամայեաց վարդապետին թէ խնդրեա յինէն զինչ և կամիս: Եւ վարդապետն խնդրելով սայս ինչ թէ՝ ի քէն ոչ այլ ինչ խնդրեմ, բայց միայն զայս, որ դիտին է տալն և ոչ դիւրինիս, որ տարցես ինձ գիր հրամանի հաստատուն կնքող զՍուրբ էջմիածնայ վերակացութիւն եւ զնորոգութիւն նորին եւ զամենայն նորագութիւն եկեղեցաց: Եւ հրամեաց շահն թէ՝ զՈւչքիլիսին խալիֆութիւնն տամ քեզ, որն է կաթողիկոսութիւն»:[353]

7. Մանր ապրանքային և արհեստավորական արտադրություն

Էջմիածնում պատրստված սպիտակ մոմերը շատ բարձր էին գնահատվում: Դրանք շատ արժեքավոր նվերներ էին, որոնք կաթողիկոսների կողմից առաքվում էին այս կամ այն բարձր պաշտոնյայի: Օրինակ, Սիմեոն Երևանցու հիշատակարանում կան վկայություններ այն մասին, որ 1765 թ. կաթողիկոսը Կարսի և Էրզրումի փաշաներին ի թիվս այլ նվերների ուղարկել է նաև սպիտակ մոմ:[354]

---

[350] Նույն տեղում, էջ 35:
[351] Նույն տեղում, էջ 45:
[352] Նույն տեղում, վավ. 27, էջ 50:
[353] Գրիգոր Դարանաղցի, էջ 293-294:
[354] Դիւան հայոց պատմութիւն, հ. Գ, էջ 362:

Էջմիածնի վանական հատատության պատմությունը այս կամ այն չափով առնվող հեղինակներից ոմանք կարծում են, թե տնտեսությունը չի ունեցել հատուկ արհեստներով զբաղվողներ և որ դրանք հիմնականում վանքապատկան վայրերի գյուղացիներն էին և կատարում էին վարձու աշխատանք: Այսպես, Ա. Ալեքսանյանը գրում է. «Էջմիածնապատկան գյուղացիներից շատերը հաճախ վարձու աշխատանք էին կատարում վանքի տնտեսության մեջ, որպես խառատներ (հյուսներ), բաննահներ (պատդիրներ), քարտաշներ»:[355] Չենք ժխտում՝ կային արհեստներ, ինչպես, օրինակ, պարտիզպանը, ձիապանությունը, ուխտապանությունը, հայտարությունը, կատեպանությունը, նվագածությունը և այլն, որոնք կարող էին կատարել վանքապատկան գյուղացիները: Սակայն այդ արհեստները անմիջապես կապված չէին արտադրության հետ: Ինչ վերաբերում է արհեստներին, ինչպիսիք էին դարբնությունը, պղնձագործությունը, քարտաշությունը, հյուսնությունը, բրուտագործությունը, ջուլհակությունը, կոշկակարությունը, ներկարարությունը, ապա դրանով զբաղվում էին առանձին անհատներ և վանական տնտեսության մեջ ուրիշ այլ աշխատանքներ չէին կատարում:

Հարկ է նշել, որ ոչ արտադրական բնույթի արհեստավորներին աղբյուրները հիմնականում անվանում էին մեկ բառով՝ մշակ կամ բանվոր, իսկ ահա արտադրական բնույթի արհեստով զբաղվողների դեպքում շեշտվում է թե՛ արհեստավորի անունը և թե՛ արհեստի տեսակը: Օրինակ, 1741թ. հաշվեմատյանում կարդում ենք. «ՁՌ (6000) դիան ետու խառատ Կոստանդինին հին վարձէն»,[356] կամ «ՁՌԹՆ (6900) դիան ետու դերձիկ Դալումին»:[357] Նույնիսկ միևնույն աշխատանքը կատարողների մեջ առանձնացվել են մշակ-բանվորներն ու արհեստավորները: Այսպես, նույն թվականի հաշվեմատյանից տեղեկանում ենք, որ «...քարելանքի բանւոր Գ (3) մշակաց» վճարվել է 3 շահի, իսկ 9 ապասի և 15 փող տրամադրվել է «քարհատ Ատիպեկին»:[358] Հարկ է նշել, որ առանձին արհեստավորներ, որոնք առավել հմտացած էին իրենց աշխատանքում, մշտապես բնակվում էին վանական տնտեսությունում: Թերևս դրա մասին է վկայում Սիմեոն Երևանցու 1769 թ. մի տեղեկությունը ուղղված Թիֆլիսի իր գործավարներին: Տեղեկությունում մասնավորապես շեշտվում է, որ թիֆլիսեցի «ղազանչի» ենոքը «աստ ի Սուրբ Աթոռոյս ի պէտս հարկաւոր շիենելի պղնձեղենաց մերոց պահեմք, որ աստ է մնալոց առ ի պիտոյանալ մեզ միշտ»:[359]

---

[355] Ալեքսանյան Ա., Երկերի աշխ. էջ 274:
[356] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 32:
[357] Նույն տեղում, էջ 46:
[358] Նույն տեղում, էջ 34:
[359] ՀԱԱ Ֆ. 57 գ. 59, էջ 18:

Եթե արհեստավորը բնակվում էր Վաղարշապատում, ապա հաշվեմատյանները անպայմանորեն շեշտում են նրա տեղացի լինելը. «ԴՌ (4000) դիան ետու մէր գեղացի քարհատ Յակոբին ՕԶ (56) օրէն վարձ»,[360] իսկ եթե այլ վայրերից, ապա դա ևս շեշտվում է. «ԺՌԺԴ (10-14) շահի ետու Բ (2) քրտստանցի քարտաշներին ԼԹ (39) օրէն վարձ Գ)3) շահիյով»:[361] Հետաքրքիր է նշել, որ տեղացի արհեստավորների վարձատվությունը ավելի քիչ է եղել, քան դրսից հրավիրվածներինը: Օրինակ, 1742 թ. 11 քարտաշներին վճարած 18 թուման 4550 դինար գումարից, կարբեցի Խեչումին օրը հաշվարկվել է 2.5 շահիյով, իսկ էջմիածնեցի Հակոբին օրը 1.5 շահիյով:[362] Դրսից հրավիրված արհեստավորների փաստը վկայում է, որ վանական տնտեսությունում բուն արհեստով զբաղվող տեղացիների քանակը քիչ էր:

Էջմիածնի հոգևոր հայրապետները շարունակաբար հոգ էին տանում նոր արհեստների կազմակերպման ուղղությամբ: Թերևս դրա մասին է վկայում ժամագործ Գևորգի օրինակը, երբ կաթողիկոս Ղուկաս Կարնեցին վերջինիս ուղարկում է Կարին՝ կատարելագործվելու: Կարինի մեծանեծներին հղած իր նամակում կաթողիկոսը գրում է. «...Մանավանդ սրբոյ Տանս և մեզ ևս օգուտ է, որ յերկրոջս սահաթ սարքող գտանիցի: Քանզի մեծամեծ տաճկաց շատոցն՝ մինչև սահաթին սախաթին առ մեզ ծգեն և իմ մէջ զնորն խնդրեն, բայց թէ սահաթ սազ գտանիցի, փոքր մի սակաւք լինելոց են խնդրակքն»:[363]

Հաշվեմատյանների վկայությամբ միևնույն արհեստով զբաղվողները կատարած աշխատանքի դիմաց ստացել են հավասար վարձատրություն: Օրինակ, 1741թ. հաշվեմատյանից տեղեկանում ենք, որ խառատներ Հայրապետն ու Մկրտիչը 12-օրյա աշխատանքի դիմաց վարձատրվել են յուրաքանչյուրը 9 ապասիով:[364] 8 ապասի մեկ շահի է վճարվել խառատներ Հովակիմին և Պետրոսին 12 օր կատարած աշխատանքի դիմաց:[365] Իհարկե կային արհեստավորներ, որոնց աշխատանքը շատ ավելի բարձր էր վարձատրվում: Օրինակ, նույն 1741թ. գաջագործներ Բաղդասարին, Ղազարին և Սաֆրազին վճարվել է 12-օրյա աշխատանքի դիմաց 23000 դինար և 10 շահի:[366] Նշված գումարի մեջ մտնում էր նաև գաջի գինը: Հարկ է նշել, որ տարբեր տարիների հաշվեմատյաններում հաճախ նշվում է նույն արհեստավորի անունը: Օրինակ, վերը հիշատակված գաջագործները հիշատակվում են նաև հաջորդ տարիների մատյաններում: Դա նշանակում է, որ վանքը

---

[360] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 38:
[361] Նույն տեղում, էջ 44:
[362] Նույն տեղում, էջ 54:
[363] Մատենադարան, Ձեռագիր 4501, էջ 205:
[364] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 37:
[365] Նույն տեղում:
[366] Նույն տեղում:

ուներ իր հիմնական արհեստավորները: Աղբյուրների հավաստմամբ 17 և հատկապես 18-րդ դդ. էջմիածնի վանական տնտեսությունում առավել շատ օգտագործվել է շինարարական աշխատանքների հետ կապված քարտաշի, որմնադիրի և աղյուսագործի արհեստավորական աշխատանքը: Դա պայմանավորված էր 17-րդ երկրորդ կեսից սկսված էջմիածնի տնտեսական վերելքով, երբ անհրաժեշտ դարձավ տնտեսական շինությունների կառուցումը: Հումքը հիմնականում ձեռք էր բերվում վանական տնտեսություն սահմաններում բացված քարահանքերից, որտեղ բանվորները քարհատ արհեստավորների ցուցումներով կտրում էին քարերը. «Քարհանքի ՂԹ (98) մշակաց վարձն ետու մին շահով ԴՌ (4000) դիան Դ (4) ապասի Գ (3) շահի գիտութեամբ լուսարարին և ժամօրհնողին»,- կարդում ենք հաշվեմատյաններից մեկում:[367] Ոմն Խաչատուրի Վաղարշապատում ունեցած տների էջմիածնի վանքին վաճառելու վավերագրում հիշատակվում է նաև «Քարհատ Թօմասի» անունը, որպես վարպետի:[368] Քարհանքներից ստանալով հում նյութը քարտաշները այն հղկել են և հաճախ հենց իրենք էլ շարել: Վերջիններիս վարձատրությունը կատարվել է ոչ հավասար չափով: Հավանաբար նկատի է առնվել արհեստավորի կատարողական մակարդակի աստիճանը: Այդ մասին ամբողջական պատկերացում է տալիս 1743 թ. հաշվեմատյանը, որտեղից տեղեկանում ենք.

Արհեստավորներ	Աշխատած օրերի թիվը	Մեկ օրվա վարձի չափը	Ընդհանուր վարձատվությունը
Գրիգոր	138	5 շահի	3թուման 4500 դինար
Երանոս	78	3.5 շահի	1թուման 3650 դինար
Հովհաննես	13	3 շահի	1թուման 6950 դինար
Թորոս	9	2.5 շահի	1թուման 3750 դինար
Վանի	58	2.5 շահի	7250 դինար
Ղարիբջան	100	2 շահի	1թուման 7500 դինար
Սահակ	141	3 շահի	1թուման 7200 դինար
Նուրիբեկ	88	2 շահի	8800 դինար
Հարություն	74	2 շահի	7400 դինար
Դավիթ	12	1շահի	860 դինար[369]

Թեև քարտաշները միաժամանակ շարում էին, այնուհանդերձ որմնադիրի աշխատանքները կատարվում էին առմեջին արհեստավորներ՝ «պատադիր»-ներ ԱՌ (1000) դիան ետու «պարտադիր Սարքսին ձեռամբ Յովանէս վարդապետին»,- կարդում ենք մատյանում:[370]

---

[367] Նույն տեղում, էջ 204:
[368] Կալվածագրեր. էջ 154:
[369] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1,վավ. 13,էջ67:
[370] Նույն տեղում, էջ 74:

Բավականին շատ օգտագործվել է աղյուսագործ արհեստավորների աշխատանքը: Այն հիմնականում կապված էր հացաթխման հետ, երբ փռերի կառուցումը դարձել է խիստ անհրաժեշտ. «ԴՌ (4000) դիան ետու Ը (8) փռան քարփիչ այրելոյ վարձ»,- հաղորդում է մատյանը:[371] Աղյուս պատրաստելու արհեստանոցները գտնվել են ջրովի լի վայրերի մոտ, երբ անհրաժեշտ էր թրծված աղյուսը սառեցնել: Արդեն հիշատակված Խաչատուրի Վաղարշապատում գտնվող տների էջմիածնի վանքին վաճառելու գործարքում նշվում է իբրև սահման «հարաւային կողմն՝ կէօլն քատբիշ ցքելոս»:[372]

Վանական տնտեսության մեջ մեծ թիվ էին կազմում հյուսնության արհեստով զբաղվողները: Եվ դա հասկանալի է, քանի որ տնտեսությունում մեծ ծավալ էր ընդունել ծածկեր, տախտակամածներ, առաստաղներ, միաւիեղկ դռներ, պատուհանի շրջանակներ, ինչպես նաև երկրագործական փայտյա գործիքներ, փոխադրական միջոցներ և փայտյա այլ արտադրանքներ պատրաստելու պահանջը: Ստորև ներկայացնում ենք 1741թ. վանական տնտեսությունում աշխատած խառատների անունները, աշխատած օրերի թիվը և ստացած վարձատրության չափը.

Արհեստավորներ	Ամիսը	Աշխատած օրերի քանակը	Վարձատրության չափը
Աշամալ,Հայրապետ, Մկրտիչ, Շիրվան	մարտ-ապրիլ	24	13000 դինար 4 ապասի
Մկրտում	մայիս	22	3000 դիան, 6 շահի
Հայրապետ		22	3000 դինար, 6 շահի
Մկրտիչ		22	2000 դինար,1 ապասի
Շիրվան		6	18 շահի
Սաղաք		6	16 շահի
Պետրոս		4	3 ապասի
Հովակիմ	հունիս	15	200դինար,5 շահի
Հայրապետ		16	2000 դինար,18 շահի
Մկրտիչ		16	8 ապասի
Շիրվան		15	9 ապասի
Հովակիմ		15	2000դինար,12 փող
Պետրոս		3	9 շահի
Հայրապետ		12	9 ապասի
Մկրտիչ		12	9 ապասի
Պետրոս		12	8 ապասի
Հովակիմ		12	8 ապասի
Շիրվան		12	6 ապասի
Հայրապետ	հուլիս	12	9 ապասի
Մկրտիչ		12	9 ապասի
Շիրվան		7	14 շահի
Հովակիմ		5	14 շահի
Մարուք		14	30 շահի, 8 փող

[371] Նույն տեղում, էջ 53:
[372] Կալվածագրեր, էջ 154:

Զաքար		21	11ապասի,22 փող
Մկրտիչ		18	13.5 ապասի
Հովակիմ		18	12 ապասի,1.5 շահի
Զաքար		10	22 շահի
Մարուք		9	1000 դինար,8 փող
Զաքար	օգոստոս	12	6.5 ապասի, 4 փող
Մարուք		12	6.5 ապասի,4 փող
Աշամալ		29	5000 դինար,1 շահի
Հայրապետ		30	4000 դինար, 10 շահի
Մկրտիչ		24	3000 դինար,3 ապասի
Շիրվան		15	30 շահի
Պետրոս		12	33 շահի
Հովակիմ		23	3000 դինար, 33 փող
Աղամալ	սեպտեմբեր	18	3000 դինար, 3 շահի
Հայրապետ		15	2000 դինար,10 շահի
Պետրոս		18	2000 դինար, 9 շահի
Հովակիմ		17	2000 դինար, 6 շահի
Շիրվան		18	1000 դինար, 4 ապասի
Մկրտիչ		15	2000 դինար, 5շահի
Աղամալ	սեպտեմբեր-հոկտեմբեր	35	6000 դինար,2.5 շահի
Հայրապետ		33	5000 դինար, 5 շահի
Շիրվան		34	3000 դինար, 2 ապասի
Մկրտիչ		5	3 ապասի, 3 շահի
Աղամալ	Հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր	23	4000 դինար, 0.5 շահի
Հայրապետ		23	3000 դինար, 9 շահի
Հովակիմ		17	2000 դինար, 7 շահի
Մկրտիչ		32	4000 դինար, 4 ապասի
Հարություն		75	15000 դինար
Այվազ		65	9000 դինար,15շ ահի
Կիրակոս		57	8000 դինար, 11 շահի
Հարություն		41	6000 դինար, 3 շահի
Մկրտում		75	10000 դինար,5 շահի
Անտոն		75	10000 դինար,5 շահի
Հակոբ		75	8000 դինար, 10շահի
Հովհաննես		7	15 շահի[373]

Աղյուսակից երևում է, որ վանական տնտեսությունում աշխատել են 15 խառատներ, որոնցից առավել շատ աշխատանքային օրեր ունեն Մկրտիչը՝ 180, Հայրապետը՝ 164, Աղամալը՝129, Հովակիմը՝ 122 և Շիրվանը՝ 97: Այն հանգամանքը, որ հիշյալ խառատների անունները հիշատակված են համարյա բոլոր ամիսներին, վկայում է, որ վերջինները հիմնական արհեստավորներն էին, իսկ մյուսները՝ սեզոնային: Դա է վկայում նաև նրանց ստացած աշխատավարձի չափը: Այսպես, օրինակ, Հակոբը 75 աշխատանքային օրվա համար ստացել է ընդամենը

[373] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 32-46:

8000 դինար 10 շահի, իսկ Շիրվանը 97 օրերի համար՝ 22 ապասի 62 շահի, որը դինարային արժեքով կազմում է 7500 դինար: Եթե դրան ավելացնենք սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ստացած 3000 դինարը, ինչպես նաև մարտ-ապրիլ 3250-ը, ապա կունենանք 13750 դինար գումար: Որ հիշատակված արհեստավորներն են հիմնական, վկայում են նաև այն հանգամանքը, որ նրանց անունները թվարկվում են նաև հետագա տարիների մատյաններում: Այսպես, 1749 թ. մատյանում կարդում ենք. «ԺՁՌ (16000) դիան ետու խառատ Աղամալին»:[374]

Որպես շինանյութ օգտագործվել է բարդին և հաճարենին, որի մասին բավականին շատ տեղեկություններ են հաղորդում հաշվեմատյաններում:[375] Ներսի շինությունների համար օգտագործվել է լորենու փայտը. «ԺԲ (12) ապասի ետու ԼԵ (35) լորի լայն և թանձր տսխտակի ներսի շինութեան համար խառատ Մկրտումի ձեռօքն»,- հաղորդում է 1739 թ. մատյանում:[376] Արժեքավոր էր հատկապես ընկուզենին, որի փայտը համեմատաբար բարձր արժեք ուներ: Այդ մասին հաշվեմատյաններից մեկում կարդում ենք. «Տախտակ առի ընկուզի Գ)3) հատ, գինն ետու ԲՌ (2000)դիան, գիտութեամբ տեղապահին»:[377]

Էջմիածնի վանական տնտեսությունում տարածված արհեստների մի շարք տեսակների համար էական նշանակություն է ունեցել մետաղամշակությունը իր մի շարք ենթաճյուղերով: Դրանցից յուրաքանչյուրը օգտագործվել է արտադրության մեկ կամ մի քանի բնագավառներում: Հատկապես կարևորվում էր դարբնությունը, որը ապահովում էր երկրագործության համար անհրաժեշտ աշխատանքային գործիքների պատրաստումը: Տնտեսությունը ուներ իր հատուկ դարբնոցը, որում արհեստավորների հետ միասին աշխատել են օրավարձու մշակները. «ԲՌԷԵ (2700) դիան ետու դարբնոցի բանւոր ՕԴ (54) մշակաց ԺԲ (12) փողով Յակոբ վարդապետի ձեռօք»,- հայտնում է մատյանը:[378] Որ վանքը ունեցել է իր դարբինը, երևում է հետևյալ վկայությունից. «ԱՌԵԵ (1500) դիան ևս առի աթոռահաս մեր դարբին էն, ձեռամբ պարոն Ահարոնին»:[379] Դարբին արհեստավորների թիվը ի տարբերություն քարագործների և հյուսների, համեմատաբար քիչ է եղել: Օրինակ, 1739 թ. մատյանում հիշատակվում է դարբին Մարտիրոսը,[380] իսկ 1749 թ. մատյանում հիշատակվում է երեք դարբինների անուններ, որոնց վճարվել է. «Դարբին Կակասին՝ 600 դիան, դարբին Ավետիսին՝ 4000 դիան, դարբին

---

[374] Նույն տեղում, էջ 118:
[375] Նույն տեղում, էջ 37, 42, 110 և այլն:
[376] Նույն տեղում, էջ 6:
[377] Նույն տեղում, էջ 234:
[378] Նույն տեղում, էջ 49:
[379] Նույն տեղում, էջ 266:
[380] Նույն տեղում, էջ 12:

Աշաէկին 4000 դիան»:[381] Դարբնության համար հիմնական հումքը երկաթն էր. «Երկաթ առի ԽԴ (44) լիտր, գինն ետու Ա (1) թուման ՁՌ ()6000) դիան,Գ (3) ապասի, Բ (2) շահի», նման բազմաթիվ տեղեկությունների ենք հանդիպում մատյանների էջերում:[382]

Դարբնի կողքին տեսնում ենք նաև պայտագործին (նալբանդ). «ԺՌ (1000) դիան Ժ (10) շահի ետու նալբանդ Ներսեսին վասն ԴԵԿԵ) 465) իփշին նալնելոյ վարձ ԺԲ (18) ամսոյ և ԺԲ (12) օրոյ»,- հայտնում է մատյանը:[383] Հիշատակվում են նաև նալբանդներ Վարդանք, Բարսեղը, Սարգիսը և ուրիշներ:[384]

Նշանակալից էր հատկապես պղնձագործ վարպետների աշխատանքը, որոնք պատրաստում էին մեծ և փոքր կաթսաներ, բուրվառներ, ջահեր, մոմակալներ և այլ տեսակի իրեր: Հարություն Արարատյանի վկայությամբ, Երևանի Կոնդ թաղամասում ապրող ոմն Ռևազ, էջմիածնի հավատարմատարն էր և որոկյալ պղնձագործ:[385]

Պղինձը պատրաստվել է հենց տնտեսության ներսում, որի մասին վկայում է հետևյալ հիշատակությունը. «ԳՌՁԵ (3600) դիան ետու ԻԴ (24) պղնձի շինօղին ԺԲ (12) մեծէն և ԺԲ (12) փոքրէն տնտես Գալուստի ձեռօք»:[386] Վանական տնտեսության ներսում կիրառվել են նաև ոսկերիչ և արծաթագործ արհեստավորների աշխատանքը: Այս արհեստավորները վանքի համար պատրաստել են սկիհներ, խաչեր, ավետարանների ոսկեպատ և արծաթապատ տուփեր, պերճանքի առարկաներ և այլ ապրանքներ: «Ոսկերիչ Մարտիրոսին ետու վարձ տան բիլազուկ շինելոյ ԱՌ (1000) դիան»,- ասվում է մատյանում:[387] Ս. Եղիազարովի կարծիքով Հայաստանի ոսկերիչներն ու արծաթագործներն իրենց արհեստով հաջողությամբ զբաղվելու համար պետք է գիտակ լինեին դրանց տեխնիկական բոլոր մանրամասնություններին և որ նրանք կատարում էին ամենազանազան աշխատանքները՝ սկսած իրերի ձևերի պատրաստումից մինչև թանկարժեք քարերի ընտրություն կատարելն ու հարգի որոշելը:[388]

Եվ վերջապես մետաղամշակության հետ կապված մեծ տարածում է ունեցել ամաններ սպիտակեցնողների (կլայեչկի և ղալայջի) արհեստը: Մատյաններում հիշատակվում են (Ղալայջի) Վարդանի և Եղիազարի, Ադիբեկի և այլոց անունները:[389] Հիշարժան է, որ Եղիազարի

---

381 Նույն տեղում, էջ 146:
382 Նույն տեղում, էջ 137, 230 և այլն:
383 Նույն տեղում, էջ 34:
384 Նույն տեղում, էջ 34, 146 և այլն:
385 Жизнь Артемия Араратского, с. 87.
386 Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 121:
387 Նույն տեղում, էջ 283:
388 Егиазаров С., Исследованая, ...г. II, Городские уехи..., с. 81.
389 Մատենադարան, Կթղկ. դիվ. թղթ. 1, վավ. 13, էջ 37, 40, 123, 296:

վերաբերյալ շեշտվում է նրա էջմիածնեցի լինելու հանգամանքը. «Զ (6) ապասի ետու գեղիս ղալայջի եղիազարին»:[390]

Կապված գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ զարգացում է ստացել նաև բրուտագործությունը: Այն վանական տնտեսության համար ապահովում էր տարբեր չափսի ամանների պուտուկների, չանախների, կարասների, կժերի ու թոնիրների պատրաստումը: «Տնտեպան թօնտրերն շինել ետուք, որոց բանվոր մշակք եղեն Զ (6), ետուք ՁԵ (600) դիան»,- կարդում ենք 1767 թ. մատյանում:[391] Նույն մատյանը հիշատակում է բրուտ Խաչատուրին, որը հմտացել էր թոնիրներ ու կարասներ պատրաստելու մեջ:[392] Աղբյուրների հավաստմամբ բրուտագործական իրերի պատրաստումը վանական միաբանության կողմից պատվիրելի է հիմնականում նորգեցի վարպետներին. «ԴՌ (4000) դիան ետու նորգցի բրուտներին ԲԵ (200) ամանի ջին յԱկոբ վարդապետի ձեռօք»,- կարդում ենք մատյանում:[393]

Տնտեսական կաիքների համար բամբակի ու բրդի մշակումը, կտավի ու հասարակ մահուդի պատրաստումը նշանակալից չափով տարածված էր վանական տնտեսությունում: Հյուսվածքեղենի և այլ գործվածքեղենի արտադրությամբ զբաղվող առանձին արհեստավորների մասին բավականին հիշատակություններ են պահպանվել մատյաններում: Դրանք հիմնականում վերաբերում են ջուլհակությանը, դերձակությանը, գորգագործությանը, բեհեզագործությանը, կտավագործությանը, մանածագործությանը և այլն:[394]

Մանվածքեղենի զարգացման համար ոչ պակաս կարևորություն ուներ ներկը, որի արտադրությունը ևս կազմակերպվում էր վանական տնտեսության մեջ: «Կտաւ ներկել տվի ԱԵ (100) գազ, Ա (1) գազն Ե (5) փողով վարձ ետու»,- կարդում ենք մատյանում:[395]

Թեև հիշյալ արհեստները քանակապես բնութագրելու համար եղած վկայությունները բավարար չեն, այնուհանդերձ կարելի է որոշել, թե արհեստի որ խմբի արտադրանքն էր առավել արագ աճում: Օրինակ, ըստ 1753 թ. վանական տնտեսության ելքն ու մուտքը պատկերող մատյանի տվյալների Ա. բամբակի դզումը կազմել է 104լ, որի վրա ծախսվել է 3000 դինար, 5 ապասի, 9 շահի, Բ. ձեռք է բերվել 2054.5 գազ (երկարություն, չափ=71սմ) կտավ, որի վրա ծախսվել է 9 թուման, 72000 դինար, 39 ապասի, 29 շահի, Գ. ներկվել է կտավ 2196 գազ չափի, որի վրա ծախսվել է 8000 դինար 19 ապասի, 2 շահի, Դ. ներկվել է մանվածք 44 իստիլ, որի վրա ծախսվել է 1000 դինար 5

---

[390] Նույն տեղում, էջ 37:
[391] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 4,էջ 346:
[392] Նույն տեղում, էջ 198:
[393] Նույն տեղում, թղթ. 1, վավ. 13,էջ 60:
[394] Նույն տեղում, էջ 33, 37,45, 52, 79, 80,145, 392, 94:
[395] Նույն տեղում, էջ 292:

ապասի, 4 շահի, Ե. գործվել է մանվածք 23լ, ծախսվել է 13000 դինար, 3 ապասի, 3 շահի Զ. մանվել է 15լ բուրդ, ծախսը 3000 դինար:[396] Հետևապես, առավել շատ գործածվել է կտավագործի աշխատանքը: Մատյաններում առավել շատ գործածվում է «դերձիկ» Դոլումի անունը: Օրինակ, 1741թ. մատյանում կարդում ենք. «ԵՌ (5000) դիան ԺԳ (13) շահի ետու դերձիկ Դոլումին, որ վասն դպրատան մոնքերին, խցի մոնքերին և գործակալաց ԿԷ (67) կապայ, արխալուղ և ոտաց շոր էր կարած յաղունքն դպրապետի և շորապանի գիտութեամբ»:[397] Նույն Դոլումի մասին հիշատակվում է և 1746 թ. մատյանում. «Դոլումին ետու վարձ ՌԵԵ (1700) դիան, վասն հասարակաց միաբանաց, սարկաւագաց և մոնքեարաց շորեր կարած»:[398] Հիշատակվում է նաև «թերզի» Հարությունը. «ԻԳՈ (23000) դիան Բ (2) շահի ետու թերզի Յարութիւնին վասն շօր կարելոյ կողմանէ, զէրա ԲՃՕ (250) հատ շորեր կարած»:[399]

Պակաս կարևորություն չուներ թղթի արտադրությունը: Ինչպես հայտնի է, էջմիածնի թղթի գործարանը («թղթատուն») հիմնադրվել է Սիմեոն Երևանցու կողմից 1776 թ. հնդկահայ մեծահարուստ Միքայել Խաչաչանյանի միջոցներով:[400] Որպես հումք օգտագործվում էր բամբակը: Ինչպես երևում է Ղուկաս Կարնեցու Ախալցխա ուղարկած մի գրությունից, բամբակից բացի օգտագործվել է նաև հնամենի շորեր: Գրությունում կաթողիկոսը մասնավորապես խնդրում է հավաքել և էջմիածնի թղթի գործարանի պետքերի համար ուղարկել հնամենի շորեր:[401] Մատյանների վկայությամբ վանական տնտեսությունում թուղթ օգտագործվել է գործարանի հիմնադրումից առաջ:

Այսպես, դեռ 1751թ. մատյանում կարդում ենք «ԺԲ (18) շահի ետու Դ (4) դաստա թղթի, որ տէր Ոսկանն տարաւ ի Քանաքեռ թանաբոց փանջարայքն թղթերոյ»:[402] Նույն թվականի հոկտեմբեր ամսվա մատյանից տեղեկանում ենք 3 դաստա թղթի ձեռք բերման մասին:[403]

Արժանահիշատակ է վանական տնտեսությունում գրչության ու մանրանկարչության արվեստի կիրառումը: Գրչության ու մանրանկարչության համար անհրաժեշտ էին հատուկ ներկեր պատրաստողներ, գրիչներ, նկարիչներ, գծողներ և այլն: 1744 թ. մատյանում այդ մասին կարդում ենք. «Դ (4) թուման ԱՌԷՃԻԵ (1725) դիան ետու Յովնաթանի տղայոցն. ԻԸՌ (28000) դիան Ղազարապատու այվանին ծաղկելույն, յիշատարն գրելոյն և ծաղկունքն քաղելոյն վարձ, որ Թ (9) օր Բ (2)

---

[396] Նույն տեղում, էջ 247-295:
[397] Նույն տեղում, էջ 32:
[398] Նույն տեղում, էջ 80:
[399] Նույն տեղում, էջ 36:
[400] Այդ մասին ավելի մանրամասն տես «էջմիածին» 1958 թ.:
[401] Նույն տեղում, էջ31:
[402] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13,էջ 147:
[403] Նույն տեղում, էջ157:

վարպետն բանած էին Ա (1) օրն Գ (3) ապասով, ԸՌԳԵԻԵ (8325) դիան ետու Յովհանին, որ զՂազարապատու ներսի և դրսի շինուածոց սաչախներն ներկել էր ԼԷ (37) օր, Ա (1) օրն Դ (4) շահի կիսով Յակոբ վարդապետի ձեռօք»:[404] Նույն աղբյուրում հիշատակվում է նաև «ծաղկիր» Մկրտումի մասին, որին վճարվել է 12200 դիան:[405] Ինչպես հայտնի է կաթողիկոս Ղուկաս Կարնեցու իրականացրած շինարարական ամենանշանավոր աշխատանքը էջմիածնի մայր տաճարի վերանորոգումն էր, որ կատարվել է վրաց արքունիքից հրավիրված Նաղաշ Հովնաթանի կողմից: Վերջինս, ինչպես երևում է վերը բերված վկայությունից, պատրաստել է շատ հետնորդներ, որոնք և շարունակել են իրենց վարպետի աշխատանքները:

Թվարկված հիմնական արհեստներից բացի վանական տնտեսությունում գործածվում էին նաև արհեստներ, որոնցով զբաղվում էին առանձին անհատ արհեստավորներ: Հաշվեմատյանները որպես այդպիսին հիշատակում են վարսավիրությունը: Այսպես, օրինակ, 1742 թ. մատյանում կարդում ենք. «ԵՌԵՆՕ (5550) դիան ետու դալլաք էհտիբարին, որ էր Բ (2) տարէ մնացեալն, շամախեցի Յակոբ վարդապետի գիտութեամբ»:[406] Վարսավիրները ոչ միայն հարդարում էին մազերը և սափրում, այլև յուրահատուկ բուժակներ էին, որոնք օգտագործելով ժողովրդական բժշկությունը, վերքեր էին բուժում, հարկ եղած դեպքում արյուն առնում» և այլն:[407]

Այսպիսով, ընդհանրացնելով արհեստավորական արտադրության վերաբերյալ բերված վկայությունները, հանգում ենք հետևյալին. արհեստավորների մի որոշ քանակություն կապված էր վանական տնտեսության հետ և ի տարբերություն գյուղական արհեստավորների աշխատում էր վանական հատուկ գործարքներում, արտադրում էր վանքի պատվերով և բավարարում վանական միաբանության պահանջները:

Վանական հասույթների ստացումը և դրանց տնօրինման կարգը

Ինչպես արդեն նշել ենք, էջմիածնի հոգևոր հայրապետների գործունեության հիմնական կողմերից մեկն էլ վանական հաստատության տնտեսական հարաբերությունների կարգավորումն էր: Համեմատական կարգով ներկայացնելով ազգային պետականության և դրա

---

[404] Նույն տեղում, էջ 50:
[405] Նույն տեղում:
[406] Նույն տեղում:
[407] Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19դ. առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989, էջ 93:

բացակայության պայմաններում գործող հայոց հոգևոր հայրապետների գործունեությունը Սիմեոն Երևանցին գրում է, թե այն կաթողիկոսները, որոնք ապրում էին հայ թագավորների և իշխանների ժամանակ, հեշտությամբ էին կարողանում հարստացնել իրենց աթոռը կայքերով և կալվածքներով: Այսպես չէր այն կաթողիկոսների դրությունը, որոնք ապրում էին էջմիածնում՝ սուրբ Աթոռի վերահաստատումից հետո: Չկար ազգային իշխանություն, երկիրը ենթարկված էր մահմեդական բարբարոսների և կաթողիկոսը պիտի «մահացնող նյութերից պատրաստեին կենդանության դեղ»:[408] Սակայն ժամանակի ընթացքում և հատկապես 17դ. երկրորդ քառորդից շնորհիվ եռանդոտ ու գործունյա կաթողիկոսների նպատակասլաց գործունեության կաթողիկոսական իշխանությունը ուժեղացավ, ամրապնդվեց ամբողջ մի ազգի ներկայացուցչի իրավունքներով:

Ինչպես գիտենք վանքապատկան հողերից գանձվող ռենտան հանդիսանում էր էջմիածնի վանական հաստատության եկամուտների մշտական ու կարևոր աղբյուրը: Բացի հողային ռենտայի ստացումից, կաթողիկոսական աթոռի աղբյուրների մեջ առանձնակի տեղ էին գրավում եկեղեցական տուրքերը, որոնք հայտնի էին «աթոռահաս», «քառասնից», «խոստմունք», «հիշատակ», «հոգերածին», «աջահամբույր», «մատաղ», «գավազանապտուղ», «փոքրավորեք», «ժամուց», «պաշտոնեից», «սրբադրամ» և «կտակ» անուններով: Տուրքերի հավաքը, որը կատարվում էր Մայր Աթոռի հոգևոր պատվիրակների միջոցով, կոչվում էր նվիրատվություն: Դրա կարևորությունը միաժամանակ այն էր, որ կապելով հայության տարբեր շրջանները ազգային կենտրոնի հետ ապահովում էր էջմիածնի աթոռի համազգային իրավասությունը: «ի բնէ է ամենայն ազգ Հայոց ուր և իցէ թէ յաշխարհին օսմանցւոց, թէ ի Ֆրանգաց, թէ հնդկաց, թէ մոսկովաց, և ուր և գտանի յազգէն հայոց, ամենեքեան հնազանդին էջմիածնի... և ըստ օրինաց մերոց հարկս տան բնակղաց էջմիածնին»,- այսպես է պատճառաբանում նվիրակության էությունը կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին:[409]

Հարկ է նշել, որ եկվոր տիրակալները հայ հոգևորականությունը իրենց կողմը գրավելու նպատակով աշխատել են չխոչընդոտել նվիրակության ինստիտուտի աշխատանքներին: Դրա մասին են վկայում, օրինակ, Սեֆյան շահերի հրովարտակները էջմիածնի միաբաններին և կաթողիկոսական նվիրակների երկրի բոլոր նահանգներում ազատ երթևեկության իրավունք շնորհելու մասին:[410] Լուսաբանելով նվիրակության էությունը Սիմեոն Երևանցին մանրամասնորեն անդրադառնում է էջմիածնի նվիրակների լիազորություններին, մեկ առ մեկ թվարկում այն վայրերի անունները, որտեղից ստացվում էին այդ հասույթները:

---

[408] Զամբռ, էջ 18:
[409] Զաքարիա Քանաքեռցի, հ. Բ, էջ 81:
[410] ՄՊՀ, պր. 2, վավ. 6,11,14,16:

Այսպես, Թուրքիան բաժանված էր հետևյալ շրջանների՝ Կ.Պոլիս, Թոխուբ, Էնկյուրի, Էրզրում, Կարս, Բայազետ, Վան, Դիարբեքիր և Ռումելի (սրա մեջ մտնում էին Ղրիմը, Մոլդովան և Վալախիան): Իրանի շրջաններն էին՝ Նոր-Ջուղա, Թավրիզ, Նախիջևան և Երևան: Կային մի քանի նվիրակություններ, ուր էջմիածնից ուղարկված նվիրակները կատարելով միաժամանակ առաջնորդական պաշտոն, հավաքում էին տուրքերը: Նման շրջանները կոչվում էին Տերունի, իբրև անմիջական էջմիածնին պատկանող: Տերունի թեմերն էին՝ Զմյուռնիա, Բաղդատ և Բասրա քաղաքները: Իրանի Գիլան նահանգը Ռելտ և Էնջելի քաղաքներով, Հնդկաստանի, Ռուսաստանի և Վրաստանի հայ գաղութը:[411] Նվիրակության թեմերի մեջ Սիմեոն Երևանցին հիշատակում է մասնավորապես Գանձակը, Շամախին, Շիրվանը, Բաքուն, Դերբենտը, Նուխին, Պարտավը, Խաչենի երկիրը և ողջ աղվանական աշխարհը, որոնք թեև գտնվում էին Գանձասարի կաթողիկոսության տարածքում, բայց ենթարկվում էին էջմիածնի կաթողիկոսությանը:[412] Սիմեոն Երևանցու քարտուղար Երեմիա Օշականցի վարդապետը 1765 թ. ներկայացնում է նվիրակության վայրերի մի ցուցակ, համաձայն որի նվիրակությունները բաժանվում էին հետևյալ երեք խմբերի. Ա «նուիրական վիճակք Սրբոյ Աթոռոյս, յորոց առնու ի ձեռն նուիրակաց ի յերիս ամս մի անգամ զնուիրական, զգանձանական, զհոգեբաժնական, զկատակական զարդիւնս և զվեճեզէնս յիշատակիս», Բ «նուիրական և Առաջնորդական վիճակք Սրբոյ Աթոռոյս, որք և տէրունիք անուանին, յորոց ի յառնուլն զվերագրեցեալ նուիրակաւսն արդիւնսն Սուրբ Աթոռոյս, ըստ երից ամացն առնու նաև զառաջնորդական արդիւնան ի ձեռն նուիրակաց, որոց նուիրակունքն Առաջնորդ ևս կոչին», Գ «Այնքն վիճակք, յորոց ի յառնուլն զնուիրական արդիւնան Սրբոյ Աթոռս ըստ երից ամայն, առնու նաև ի տարին մի անգամ զիւղս, զպանիրս, զմատաղացն չորեքոտանիս և զայլս այսպիսին ուտելիս և վեճեղէն»:[413]

Այսպիսով, պարզվում է, որ նվիրակները գործուղվում էին հանձնարարված վայրերը երեք տարին մեկ անգամ և որ նվիրական տարածքները ևս բաժանված էին մեծ ու փոքր նահանգների («նուիրական թոմք») և գավառների («նուիրական վիճակք»):

Որ նվիրակները երեք տարին մեկ անգամ էին գնում վիճակները, երևում է Զաքարիա Ագուլեցու հետևյալ վկայությունից. «Թվին ՌՃԺԸ (1669) օգոստոսի է (7) ոմն Ագուլիս, որ այսօր էջմիածնայ աթոռակալ Միքայել վարդապետն եկաւ Ագուլիս վասն նվիրակի: Քանզի Հակոբ կաթողիկոսն դէռ եւրս Ըստամբոլ էր վասն աղմուկի: Դարձեալ աթոռակալն եկաւ, մին շունչն Ի (20) դիան հարկ է, որ ամեն հայ Ի (20) դիան կուտան էջմիածնին, այս Գ (3) տարի էր, որ առէլ չէր: Սայ եկաւ, շունչն Կ

---

[411] Զամբռ, էջ 44-51:
[412] Նույն տեղում, էջ 50-51:
[413] Դիան Հայոց պատմություն հ. Գ, էջ 797-806:

(60) դիան առաւ Գ (3) տարէն»:[414] Բերված վկայությունից, ինչպես նաև Երեմիա Օշականցու տեղեկությունից պարզվում է, որ նվիրական հասույթների հավաքումը կատարվում էր ինչպես բնեղենով, այնպես էլ դրամով: Օրինակ, 1753 թ. հաշվեմատյանից տեղեկանում ենք, որ էջմիածնի նվիրակ Ավետիս վարդապետը գործուղվել էր Կարսի շրջան որպես «իւղ ժողովօղ»,[415] իսկ տեր Կիրակոսը ուղևորվում է Լոռի, որտեղից բերում է 4 բեռ յուղ և պանիր:[416] Իսկ Դիարբեքիրի նվիրակ Գևորգ վարդապետի մասին կարդում ենք. «Առի ևս ի Դիարբեքիր նուիրակ Գէորգ վարդապետեն մէկ հազար ինն հարիւր և երեսուն և երեք ղռուշ և ԺԳ (13) փարայ ստակ, որ կանէ աջէմի փող մէկ հարիւր քսան և ութ թուման, ութ հազար, ութ հարիւր և Բ (2) փարայ, որ է նուիրակութենէ դրամ զոր առի»:[417] Իսկ «Հնդստանայ նուիրակ» Մարտիրոս վարդապետից 1755 թ. ստացվում է, «մեկ թուման և ինն հազար դիան Բ (2) շահի»:[418] Երնջակի ս. Կարապետ վանքին հղած Գրիգոր Բյուզանդացի կաթողիկոսի 1541թ. կոդակից երևում էր, որ վանքը պարտավոր է «կանոնեալ հասն և իրաւունս» ամեն տարի ուղարկել կաթողիկոսարան: Կոնդակում մասնավորապես ասվում է «...եւ թէ զինչ է հաս և իրաւունք, այս է հաս և իրաւունքն. զիչն երէց որ թէմդ կայ՝ նոցա տանէն զինչ հասք որ լինի, մուտքն Նախավկային է, տեառնական մատաղքն որ լինի երին, մորթին իւր աթոռոյն է. յանկարծամահ որ լինի քառասունքը ու մատաղն եպիսկոպոսին է. և կողոպուտքն լաւ խալի մի, կամ լաւ շուրջառ տան յաթոռն զերեխայրիս կալոց և հնձանաց. երեխայրիքն այն է յեզնագլուխն կէս մարգան հաց, յամեն հնձանէ մեկ դորակ գինի տան զսրբանու էին որ է սրբադրամ, այդ եկեղեցւոյ և խաչի լուսգին է, այս ամենայն աշխարհ յոր տեղ որ քրիստոնեութիւն կայ, զայդ կուտան իւրեանց աթոռոյն. և առաւել զսրբանուէրն որ եկեղեցւոյ և խաչի լուսգին է որ ի շատէն շատ, և ի փոքրէն փոքր. որպէս ասէ տէրն յաւետարանն թէ որում շատ տուաւ՝ շատ խնդրեսցի ի նմանէ, և որում սակաւ՝ սակաւ, որ յամէն տարի մի անգամ սրբանուէր ժողովեն՝ որ սրբացն է բաժին, և այլ զինչ հարկ որ լինի, առանց աթոռոյ հրամանին չուչիք իշխանութիւն կատարել, թէ մատաղ թէ խաշաւրինէք, թէ այլ ինչ պատեհն՝ աթոռոյն, որպէս յամենայն տեղի. այս է հաս և իրաւունք արաւոյն և բաժին՝ որպէս ասացաք զամենայն»:[419]

Փաստորեն, Կոնդակը կանոնակարգում էր վանական հասույթների ստացումը և նրա բաժանումը կաթողիկոսականի ու թեմական կենտ-

---

[414] Զաքարիա Ագուլեցի, էջ 86:
[415] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 359:
[416] Նույն տեղում, էջ 58:
[417] Նույն տեղում, վավ. 27, էջ 2:
[418] Նույն տեղում, էջ 3:
[419] Տես Գրիգորյան Գ., Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13 դդ., Եր., 1973, էջ 186-187:

ոնների միջև: Բերված վկայությունից միաժամանակ պարզվում է, որ եկեղեցական տուրքերը բաժանվում էին երեք խմբի՝ ա) հայրապետական հաս և տուրք, բ) առաջնորդական հաս և տուրք, դ) քահանայական հաս և տուրք: «Աթուսփաս» և «հոգեբաժին» կոչվող այդ տուրքերի հավաքումը ևս ուներ եռաստիճան բնույթ, երբ քահանաները տալիս էին առաջնորդներին, իսկ վերջիններս էլ մասհանում էին անում հօգուտ կաթողիկոսարանի: Ստորև ներկայացնում ենք տեղեկություններ 1753 թ. հոկտեմբերից 1754 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածի «աթոռահասի» ու «հոգեբաժնի» ստացման վերաբերյալ.

Տուրքի անվանումը	Վճարողը	Չափը	Ստացողը
աթոռահաս և հոգեբաժին	Սահակ	5000 դիան	տեր Սիարոն
աթոռահաս	Հովհաննես	1000 դիան	-
աթոռահաս	Գաբրիել	4000 դիան	-
աթոռահաս		1400 դիան	-
հոգեբաժին	Ծատուր	1000 դիան	աթոռակիր
աթոռահաս	Զաքարիա	1000 դիան	տեր Սիարոն
հոգեբաժին	Ղստատեոջ	1թուման 3000 - դիան	վարդապետ Ոսկան
հոգեբաժին	Դավիթ	1000 դիան	տեր Սիարոն
հոգեբաժին	Սարգիս	3000 դիան	-
հոգեբաժին	Ղուբաթ	4700 դիան	տեր Մարտիրոս
հոգեբաժին	Խաչատուր	2000 դիան	տեր Սահակ
հոգեբաժին	Պողոս	1400 դիան	տեր Սիարոն
հոգեբաժին	Ղուբաթ	2000 դիան	տեր Մարտիրոս
աթոռահաս	Ազարում	1000 դիան	աթոռակալ
աթոռահաս	Հարութիւն	1500 դիան	-
աթոռահաս	Մինաս	1500 դիան	-
աթոռահաս	Հարություն	1000 դիան	-
աթոռահաս	Պետրոս	1000 դիան	-
հոգեբաժին	Պողոս	4000 դիան	տեր Սիարոն
հոգեբաժին	Գասպար	5000 դիան	-
աթոռահաս	Ադիբեգ	2000 դիան	աթոռակալ
աթոռահաս	Ղևոնդ	6000 դիան	-
աթոռահաս	Բոջո	1000 դիան	-
աթոռահաս	մի Ղազախեցի	1500 դիան	-
աթոռահաս	Իլիանոս	1000 դիան	-
Ընդամենը 1 թուման 54000 դիան[420]			

Նշված աղբյուրներում հիշատակություններ կան այլ տուրքերի մասին: Այսպես, որպես «խաչիամբույր» գանձվել է 1 թուման 8400 դիան, «պտղագին»՝ 4 թուման 700 դինար, «ժամուց» 1500 դինար:[421] Համեմատաբար մեծ չափերով է գանձվել «աջիամբույրը»: Օրինակ,

[420] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ367-370:
[421] Նույն տեղում, էջ 369-370:

1752 թ. նոյեմբերին Գանձակից եկած մի քարավանատիրոջից գանձվել է 1 թուման 1000 դինար «աջիամբույր»:[422]

Հոգեբաժինը և աթոռահասը համատեղ դրամականի հետ միասին գանձվել են նաև բնամթերքով: Այդ մասին վկայում է 1745 թ. մատյանը, որում պատկերված է հունվարից մայիս ամիսներին միայն Վաղարշապատից ստացված «գիւրդիս գեալուրն, այսինքն աթոռահարկն և հոգեբաժին».

«Ծ (50) շահի Փիլիպոսն

ԳՌ (3000) դիան Գալուստի տղէն

ԺԵՌ (15000) դիան Ջհանի Մալխասն և ԱՌ (1000) ի բամպակ պիտի տայ

ԲՌ (2000) դիան ջուլիակ Հայրումբ, Ա (1) բնուն աղ ևս

Ա (1) ջուխտ գոմէշ Յովհանէսն

է (7) ծառ Գրիգորի հարսն

ՁՌ (6000) դիան չարէքտար Հակոբի անէր

Ա (1) եզ, Ա (1) կով, Ա (1) խալի, Ա (1) կարպետ և Ա (1) քեչայ»:[423]

Քիչ չէին դեպքերը, երբ հոգեբաժնի դիմաց վանքին էր նվիրաբերվում անշարժ գույք: Էջմիածինը այդ նվիրակների անվան տակ տարբեր վայրերում ուներ հատուկ գանձապահներ «վեքիլներ», որոնք հավաքում էին տվյալ տարածքի հայրապետական հասքերը: Այսպես, 1762 թ. հունվարի 15-ին Գիլանի գանձապետ Պետրոսից ստացվում է «նաւասարդի աջիամբույրն» 1 թուման ընդհանուր արժեքով:[424] 1763 թ. հունիս ամսվա մուտքում նշվում է 3000 դինարի գանձում որպես «գերեզման օրինեք»:[425] 1755 թ. որպես «խոստմունք» գանձվել է 6000 դինար,[426] իսկ հաջորդ տարվա օգոստոս ամսին որպես «մատաղագին» գանձվել է 2000 դիան:[427] Սակայն վանական հասույթների մեջ ամենաեկամտաբերը մեռոնի վաճառքն էր, որը հանդիսացել է էջմիածնի մենաշնորհը: Ինչպես նշում է Շարդենը, միայն կաթողիկոսը իրավունք ուներ այն պատրաստելու ու կազմակերպելու դրա վաճառքը:[428] Նվիրակների միջոցով մեռոնը ուղարկվում էր հոգևոր թեմեր, ուր և կազմակերպվում էր դրա վաճառքը: Մեռոնի համար սահմանված էր նույնիսկ որոշ սակագին: Ինչպես երևում է 18 դ. ծեռագիր մի հիշատակարանից Գանձասարի կաթողիկոսը պարտադրում է իր ենթակա վայրերի բնակչությանը, որ «...զմիոյ տարոյ նուիրակն, որ է գլուխն երկու շահի և

---

[422] Նույն տեղում, էջ 301:
[423] Նույն տեղում, էջ 70:
[424] Նույն տեղում,թղթ. 1 վավ. 4, էջ 55:
[425] Նույն տեղում, էջ 173:
[426] Նույն տեղում, վավ.27, էջ 3:
[427] Նույն տեղում, վավ.23, էջ 20:
[428] Шарден, Путишествие..., с. 278.

այրին մէկ լիովին ժողովել» և հանձնել նվիրակին:[429] Իսկ Խաչատուր Կաֆայեցու տարեգրությունում կարդում ենք. «Տէր Խաչատուր նորընծա պարսնտէրն եկաւ էջմիածնայ յուլիս ամսու: Նուիրակ կացուց պարոնտէրն և տէր Մըկրտիչն ուղարկեց Կէզլով, Պաղշա-Սարայն Իստասուն, գեղրանքն ընթանուր Խըրմին երկիրն, գընացին նիւիրակեցին ու բերին: Ինքն շըրջամոլիք մարդ էր՝ կահ ասաց Կաֆան կու երթամ,կահ ասաց կերթամ մոր Թօփրակխալան, կան ասաց կուգամ , կահ ասաց չեմ ի գա,ինձի ըստակ բերեք: Կապեցաք մնատաք, ըստաք, ժողովելոյ ճար չիքայ: Եւ դարձեալ ինքն ելաւ գընաց, մէմ ալ ինքն նիւիրակեց, ետու յեկաւ նըստաւ Խարա-Սուն, խապար խըրկեց կաֆացուց, գիս եկէք առ էք, կամ մեռոնըս ուղարկեցէք: Մենք մեռոնն ուղարկեցաք, յետոյ բարկացաւ մեզ կաֆացոցս: Ելան դաւլվաթորայք և քահանայք հաւասար գնացաք, ապա ուրախացաւ: Գ (3) ժամէս ճ(100) խուռուշ ուզաց, Բ (2) ժամէն Լ (30) խուռուշ էառ, մեր ժամէն՝ սուրբ Թորոսում Լ (30) էառ, ետոյ մեռոնն թափեց Խարա-Սուն: Թվական ՌՁ (1631)»:[430] Ուղևորվելով նշանակված վայր, նվիրակը իր հետ տանում էր մեռոնն ու կաթողիկոսի կոնդակը, որտեղ նրան հավատացյալ ժողովուրդը ընդունում է մեծ ցնծությամբ: Նույն Կաֆայեցու տարեգրության մեջ պատմվում է, թե ինչպես 1630 թ. Կաֆա է այցելում նվիրակ Խաչատուր վարդապետը և թե «ուրախացան քահանայք և ժողովուրդք, նուիրակն քաղաքն իջաւ»:[431]

Նվիրակների գործունեությունը ուներ համազգային նշանակություն: Այդ նրանք էին, որ հնարավոր անկյուններում պահպանում էին ազգային ոգին՝ կապում նրանց մայր հայրենիքին: Միաժամանակ, չի բացառվում, որ նրանք կարող էին կատարել քաղաքական պատվերներ, տվյալ դեպքում ծառայելով Պարսից իշխանությանը: Նկարագրելով նվիրակի կողմից «Մեռոն թափեքի» արարողությունը Մ. Թաղիադյանը գրում է. «Զկնի սրբազան պատարագին առ եպիսկոպոսն զարուակ իւղոյն և թափեալ անտի ի սրուակ եկեղեցւոյն այսորիկ՝ որչափ ինչ և բաւական համարեցաւ, սկսաւ յականէ և յանուանէ օրինել զթագաւորն պարսից և յանուն նորա կաթեցուցանել ի սրուակ անդր զկաթ մի յիւղոյն այնորիկ: Ապա զՔալբարի խան, ապա և զիշխանս մերազնեայս, և հուսկ ապա ժողովուրդն ամենայն՝ ըստ առաջնոյ օրինակին»:[432] Պատահական չէ, որ թուրքական իշխանությունները փորձում էին սահմանափակել նվիրակների գործունեությունը: Օրինակ, 17-րդ դ. կեսերին Մեհմեդ 4-րդ սուլթանը արգելեց նվիրակներին մեռոնի բաշխումը թուրքահպատակ հայկական գավառներում, եթե նախօրոք չեն ստացել հատուկ արտոնության սուլթանական հրամանով:

---

[429] Տե՛ս Հովհաննիսյան Ա. , Դրվագներ գ 2-րդ, էջ 145:
[430] Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 218:
[431] Նույն տեղում:
[432] Թաղիադյան Մ., Ճանապարհորդություն ի Հայս, էջ 240:

Իր հերթին սուլթանական կառավարությունը ևս հայ հոգևորականության նկատմամբ վարում էր իր շահերին համընկնող քաղաքականություն՝ հիմնական նպատակ ունենալով որքան կարելի է թուլացնել արևմտահայ հատվածի վրա Իրանի գերիշխանության տակ գտնվող էջմիածնի հոգևոր կենտրոնի ազդեցությունը: Եթե նկատի ունենանք, որ ամեն անգամ Կ.Պոլսի պատրիարքական աթոռին նստելու համար արքունական գանձարան պետք է մուծվեր համաձայն 1764 թ. սուլթանական հրովարտակի 100000 ակչե որպես նվեր և նույնքան գումար որպես մուկատա (տարեկան եկամուտ)[433], ապա հասկանալի կդառնա սուլթանական իշխանության հետապնդող նպատակները: Առանձին դեպքերում, իշխանության թույլտվությամբ վճարվող գումարի քանակը կրկնապատկվում, անգամ եռապատկվում էր: Օրինակ, Մ. Օրմանյանի հավաստմամբ 1657թ. Թոմաս Բերիացին պատրիարքության հրովարտակը ստանալու համար վճարում է 400000 ակչե:[434] Հարկ է նշել, որ այդ գործընթացը մասամբ ակտիվացավ էջմիածնի նվիրակներից ոմանց ոչ օրինական գործողությունների պատճառով: Օգտվելով էջմիածնի տնտեսական անկայուն վիճակից և պատճառաբանելով իրենց արարքները իբր նպատակաուղղված են էջմիածնի վրա ծանրացած պարտքերն մարելու՝ նվիրակները արհեստականորեն բարձրացնում էին մեռոնի գինը, հաճախ նաև ամբողջությամբ յուրացնում էջմիածնին տրամադրվելիք գումարները: Ինչպես երևում է 1765 թ. էջմիածնի նվիրակ գանձապահներին ուղղված Սիմեոն Երևանցու մի գրությունից, նվիրակները չեն ցանկացել Մայր Աթոռ ուղարկել հավաքված գումարը պատճառաբանելով, որ մինչ այդ Զաքարիա վարդապետը նվիրակել և ուղարկել է:[435] Երեմիա Քեռմյուրճյանի բնութագրմամբ «Նուիրաքն ոմանք էմրով պէրաթի սուրէթով պռունիկք և բոզարածք աշխարհականք յաշխարհականաց ապականեցին խանգարեցին զկարգ սուրբ եկեղեցական ի Թրակիա և ի Մակեդոնիա և յեզր Տանաւիս գետոյ և ի փոքր Ասիա»:[436] Նվիրակների անօրինական գործունեության մասին է վկայում նաև Մելիքսեթ կաթողիկոսին ուղղված Վասպուրականի բնակչության բողոքագիրը, որում մասնավորապես ասվում է. «...յինչ երկիր որ նուիրակ յուղարկես՝ նա կու ընտրես՝ յոր տեղ որ չար և լիրբ, անզգամ, անամօթ և ամբարտաւան միակայ, որ ոչ յաստուածոյ երկնչի, եւ ի ոչ ի մարդկանէ ամաչէ, զայնպիսիք կու առաքես, որ զարդարեալ երիվարօք, եւ պճնեալ հանդերձիւք, եւ կրկին պաշտոնիւք գան, եւ գոռոզաբար խրոխտան եւ բազում ցոփութեամբ եւ անկարգութեամբ եւ արբեցողութեամբ զաշխարհս վրդովեն»:[437] Նվիրակների նման գործողու-

---

[433] Սիրունի Հ., Պոլիս և իր դերը, հ. Ա, Բեյրութ, 1965, էջ 282-283:
[434] Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 2815:
[435] Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, էջ 797-798:
[436] Տես Հովհաննիսյան, Ա., Դրվագներ, գ. 2-րդ, էջ 146:
[437] Տես Արվանձտյան Գ., Թորոս աղբար, հ. 2, Կ.Պոլիս, 1888, էջ279-280:

թյուններն էլ այն առիթներից մեկն էր, որ ստիպեց Աղթամարի կաթողիկոսությանը հակադրվել էջմիածնին:

Աղբյուրները, սկսած 18-րդ դ. երկրորդ կեսից, նվիրակների կողմից Մայր Աթոռ ուղարկված հասույթների առումով, հաճախակի օգտագործում են «փոլիցայ» արտահայտությունը: Այսպես օրինակ, 1754 թ. մատյանում կարդում ենք. «Առի ևս ի մահտեսի յՕհանէն քսան և հինգ թուման փող, որ էր Ղազար վարդապետի ի Թիֆլիզոյ արած փոլիցայն, զոր մահտեսի յՕհանն ի Թիֆլիզոյ եբեր, գիտութեամբ լուսարար և ժամօրհնօղ վարդապետացն ի նոյեմբեր ամսոյ»:[438] Սիմեոն Երևանցու «Հիշատակարանից» պարզվում է, որ կաթողիկոսները սովորաբար նկատի ունենալով ճանապարհային դժվարությունները, ինչպես նաև ուղարկվող գումարի հնարավոր հափշտակումները, նվիրակներին հղած իրենց հրամանագիր նամակներում «Փոլիցայագիր», սովորաբար հատուկ շիֆրերով ծածկագրում էին գումարի քանակը: Որ «Փոլիսայ»-ը դրամի փոխանակագիրն էր, երևում է 1762 թ. մատյանի հետևյալ հիշատակությունից. «Առի ի Անանիայ վարդապետի մեզ տալացուկ դրամի կողմանէն որ փոլիցայ արարինք թավրեզ ի վրա պարօն խօճայ Սաֆարին երեսուն ութ թուման ԵՌ (5000) դիան վասն խարճելով ի հարկաւոր պէտս Սրբո Աթոռս ի յունվար ամսոյ Ը (8):[439]

Ստացված ողջ դրամական հասույթը կենտրոնանում էր վանական տնտեսության ելքն ու մուտքն կարգավորող «լուսարար» և «տեղապահ» կոչվող անձնավորությունների ձեռքում: Ստորև ներկայացնում ենք 1759 թ. վանական տնտեսության մուտքը, որը ստացել է տեղապահ Հակոբ վարդապետը, լուսարար Եղիազար վարդապետից. «Թվականն եղև ՌՄԼԸ (1759) և ամիսն յունվար, այժմ սկսայ նորապես զդրամս առնալ ի լուսարար Եղիազար վարդապետէն, սակս խարճելոյ ի հարկաւոր պէտս Սրբոյ Աթոռոյս, ես տեղապահ Յակոբ վարդապետս».

Ամիսը	Գումարը	Հատկացնողը	Ստացողը	Վերահսկողը
հունվար	27 թուման	Եղիազար վարդապետ	Հակոբ վարդապետ	Ղունկիանոս վարդապետ
փետրվար	27 թուման	-	-	-
մարտ	27 թուման	-	-	-
ապրիլ	27 թուման	-	-	-
մայիս	3 թուման 4-095 դին.	-	-	ժամօրհնող
մայիս	13 թուման	-	-	-
մայիս	10թուման, 6100 դին.	-	-	-
հունիս	23թուման, 3500դին.	-	-	-

[438] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 301:
[439] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 4, էջ 55:

հունիս	13թուման, 4000դին.	-	-	-
հունիս	10 թուման	-	-	-
հուլիս	11թուման, 9350դին.	-	-	-
հուլիս	11թուման, 3350դին.	-	-	-
յգոստոս	10թուման	-	-	-
սեպտեմբեր	9թուման, 3000դին.	-	-	-
հոկտեմբեր	25 թուման	-	-	-
նոյեմբեր	25թուման	-	-	-
դեկտեմբեր	36թուման ,7300դին.	-	-	-
Ընդամենը 307 թուման 40695 դինար[440]				

Ինչպես երևում է աղյուսակից դրամական մուտքերը միաժամանակ վերահսկվել են: Իսկ դա նշանակում էր, որ քիչ հավանական էր գումարների կեղծումը և դրա ոչ նպատակային օգտագործումը: Նույնիսկ կաթողիկոսներին տրամադրված գումարները վերահսկվել են և արձանագրվել: Սովորաբար, կաթողիկոսը ներկայացնում էր մուտքագրողներին գրվելիք գումարների չափի մասին տեղեկություններ նշելով հատկացնողների անունները: Այդ մասին 1746 թ. մատյանում կարդում ենք. «Թուին ՌԵԵՂ (1746) փետրվարի ամսոյ Զ (6) ումն: Այս է առքն իմ զոր առի Սրբազան հայրապետեն ես Յակոբ վարդապետս վասն Սրբոյ Աթոռոյս մուսրաֆ խարճին»: Ըստ ներկայացված ցուցակի մուտքագրվել է.

Ամիս, ամսաթիվ	գումարի չափը	հատկացնողը	ստացողը
մարտի 5	10 թուման	տիրացու Օվանես	Հակոբ վարդ.
մարտի 20	2 թուման	-	-
ապրիլի 20	8 թուման	-	-
ապրիլի 25	3 թուման	տիրացու Մելքոն	-
մայիսի 5	2 թուման	-	-
մայիսի 16	5 թուման	տիրացու Օվանես	-
մայիսի 25	5 թուման	-	-
մայիսի 29	5 թուման	-	-
հունիսի 15	8 թուման	տիրացու Մելքոն	-
հունիսի 24	6 թուման	-	-
հունիսի 29	6 թուման	-	-
հուլիսի 13	5 թուման	տիրացու Օվանես	-
հուլիսի 16	5 թուման	-	-
հուլիսի 24	1 թուման	-	-
հուլիսի 27	12 թուման	տիրացու Կիրակոս	-
Ընդամենը 83 թուման[441]			

[440] Նույն տեղում, թղթ. 1, վավ. 13, էջ 310-311:
[441] Նույն տեղում, էջ 335:

Բազմաթիվ են տեղեկությունները այն մասին, որ հենց իրենք՝ կաթողիկոսները, պարտավոր էին իրենց կողմից ստացված գումարները տրամադրելու մուտքագրողներին: Այդ մասին 1753 թ. մատյանում կարդում ենք. «Ես Հռէդէոս վարդապետս, որ եղև գործապես սրբազան հայրապետին, և գործակալ Սրբոյ Աթոռոյս, ի ՌՄԲ (1753) թուականին ի յունվարի ամսոյ ութին, օրն ուրբաթ: Այս է սրբազան Հայրապետէն ինձ թուսլին եղեալ ստուկն»:[442] Ըստ աղբյուրի մարտ ընկած ժամանակահատվածում Հռեդեոս գործապետը հայրապետից ստացել է 35 թուման գումար: Հատկանշական է, որ վեհափառից վերցրած գումարների վերաբերյալ նշվում է նաև ծախսի նպատակը: Այսպես, 1762 թ. մատյանում մուտքագրող տեր Պետրոսի կողմից վեհափառից գանձված գումարների վերաբերյալ նշվում է. «Առաք ես ի սրբազան վեհէն տասն և յօթն թուման, որ խանի տալիքեն դուրս ծգած վանքերի ջազի են:

Առոք ես ի սրբազանէն տասն և հինգ թուման, որ է փայտերի ջին:

Առաք ես ի սրբազանէն հինգ թուման, զոր էր քարագին»:[443]

Իսկ Կարսից ստացված հացահատիկի վերաբերյալ. «Առի ես ի սրբազան վեհէն երեք թուման երեք հազար երեք հարիւր դիան Ղարսայ եկեալ ցորենի և գարու քիրայն ետու այս փողս»:[444]

Կաթողիկոսի անձնական ծախսումների համար հատկացված գումարները ևս մանրամասնորեն արտոնագրվել են: Այսպես, օրինակ, 1746 թ. Մայր Աթոռի եկամուտները մուտքագրող Հակոբ վարդապետից կաթողիկոսին տրամադրվել է.

Ամիսը, օրը	Գումարի չափը
մարտի 13	2 թուման
ապրիլի 10	3 թուման
հոկտեմբերի 8	60 թուման
հոկտեմբերի 13	47 թուման
հոկտեմբերի 25	12 թուման
նոյեմբերի 18	12 թուման
Ընդամենը 136 թուման[445]	

Էջմիածնի վանական տնտեսության հասույթների մեջ նշանակալից էր նաև հյուրանոց-քարվանսարաններից ստացված դրամական գումարները: Որպես հոգևոր կենտրոնի՝ Էջմիածին էին ժամանում աշխարհի տարբեր մասերից հայ ուխտավորներ, որոնք մնում էին ամ-

[442] Նույն տեղում, էջ 187:
[443] Նույն տեղում, էջ 173:
[444] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 4, էջ 127:
[445] Նույն տեղում, թղթ. 1, վավ. 13, էջ 78:

բողջ շաբաթներով և նույնիսկ ամիսներով: Վանքը նրանցից ստանում էր և դրամական հասույթներ և զանազան նվերներ, միաժամանակ հոգում նրանց մասին ապահովելով բնակարանով, սննդով և այլն: Մատյաններում այդ ծախսումները անվանված են «Երթևեկող ղոնաղած» անունով: Այսպես, 1761 թ. մատյանում այդ ծախսումների հետ նշվում է, որ փետրվար-դեկտեմբեր ամիսներին որպես «Երթևեկող ղոնաղած» ծախս օգտագործվել է 19 կարաս գինի:[446] Դա նշանակում է, որ այդ կառույցներում վանքը վաճառել է իր տնտեսությունում արտադրած ապրանքները:

Քարավանսարա-հյուրանոցները արենդային սկզբունքով տրվել է անհատ անձնավորությունների, որոնք անվանվել են «քարավանսարեդար». «առի ևս մեր քարավանսարեդար տիրացու գալստէն տասն և մին թուման փող վասն քարավանսարայի քիրահի կոչմանէն»,- ասվում է 1760 թ. հոկտեմբեր ամսվա հաշվեմատյանում:[447] Վանքը քարավանսարա ուներ նաև Երևանում, որտեղից 1763 թ. հոկտեմբերին վերցվել է 2250 դինար փող. «Առի ևս Երևանայ քարվանսարայի գանձանակէն երկու հազար երկու հարիւր յիսուն դիան»:[448] 1760-63 թթ. էջմիածնի վանքը Վաղարշապատի և Երևանի քարավանսարաներից գանձել է ըստ առանձին տարիների.

1760 թ. 21 թուման 5000 դինար
1761 թ. 10 թուման 9800 դինար
1762 թ. 4 թուման 9650 դինար
1763 թ. 3 թուման 1600 դինար:[449]

Պարտադիր չէր, որ հյուրանոցի վարձակալողը լիներ հոգևորական: Ինչպես վկայում է 1755 թ. մատյանը էջմիածնի քարվանսարայի վարձակալողն էր ոմն Այվազ Քանաքեռցի, որին մեծարում են «պարոն» տիտղոսով «Առի ևս ի պարօն Այվազեն ի կոչմանէ մեր քեարվանսարայի 40 թուման իջարայեն վեց թուման փո»:[450] Ուրեմն հյուրանոցը պարոն Այվազը վարձակալել է տարին 40 թուման վարձավճարով: Նույն թվականը պատկերող մեկ այլ մատյանից տեղեկանում ենք, որ Այվազից գանձվել է ևս 4 թուման. «Դ (4) թուման ևս առի պարոն Այվազէն ի կողմանէ մեր քեարվանսարի Խ(40) թուման իջարային ի մայիսի Ի (20) ոմն»:[451] Իսկ ընդհանուր առմամբ 1755-1756թթ. պարոն Այվազից գանձվել է 25 թուման 11 հազար դինար գումար:[452] Հնարավոր էր նաև քարավանսարայի վարձավճարի փոփոխություն ավելացում կամ պա-

---

[446] Տես. Арутюнян Б., Крупное монастырское хозяйство, с.85.
[447] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 2, վավ. 4, էջ 21:
[448] Նույն տեղում, էջ 172:
[449] Նույն տեղում, էջ 1-173:
[450] Նույն տեղում, թղթ. 1, վավ. 27, էջ 1:
[451] Նույն տեղում, վավ. 13, էջ 370:
[452] Նույն տեղում, վավ. 27, էջ 1-4 և վավ. 13, էջ 370:

կասեցում: Այդ մասին ուղղակիորեն վկայում է 1753 թ. մատյանը, ուր կարդում ենք. «Ա (1) թուման ևս առի ի քեանվանսարեդար Մատթեոսն, որ էր ի դուքաններաձ վարձուց ավելացուցածն, հոկտեմբեր ամսոյ գիտութեամբ աթոռակալի»:[453] Հարկ է նշել, որ վարձակալողը միաժամանակ պարտավոր էր վճարել նաև կառույցի սեփականության իրավունքի հարկը՝ մալջիաթը: Այդ մասին 1755 թ. մատյանում կարդում ենք. «Առի ևս մեկ թուման 5000 դիան ի մեր քարվանսարայի դուքանների մալուջիաթի կողմանէն»:[454]

Ինչպես երևում է վերը բերված վկայությունից, հյուրանոց-քարավանսարաներում էին կենտրոնացված դուքանները, որոնք խանութ արհեստանոցներ էին: Բ. Հարությունյանի հաշվարկներով քարավանսարաներում խանութ-արհեստանոցների թիվը հասնում է 89-ի:[455]

Սիմեոն Երևանցու հավաստմամբ դրանցից յոթը գտնվել են երկրից դուրս՝ Թիֆլիսում և որ դրանցից երեքը ձեռք է բերել Հակոբ Ջուղայեցին 1664 թ. «Զայս երեք խանութս խօճա Բէհբութի որդի Ասլանն տայ սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակովբ կաթողիկոսն ի ՌՃԺԳ (1664) թուոջն մերում»:[456] Հարկ է նշել, որ այդ խանութները որպես սեփականության առանձին օբյեկտներ ենթակա էին օտարման: Ինչպես վկայում է 1709 թ. մի կալվածագիր, էջմիածնի վանքը Թիֆլիսում ունեցած իր խանութներից երեքը նախ վաճառում է, ապա նորից ետ գնում: Դրանք այն երեք խանութներն էին, որոնք ձեռք էր բերել Հակոբ Ջուղայեցին: Կալվածագրում մասնավորապես ասվում է, որ Խոջա Բարխուդարի որդի ոմն Մարտիրոսը 60 թումանով գնում է խոջա Բեհբուտի տված Գ (3) դուքանը: Հետագայում Ա. Ջուղայեցի կաթողիկոսը չհամակերպվելով այդ փաստի հետ, իր մոտ է հրավիրում Մարտիրոսին և նրան 60 թուման տալով՝ կրկին հետ է բերում խանութները. «վեստին դուքաներու գինն մեզ ետոյ, էլ կրկին մեզ մեն յետ գնեց և Սուրբ էջմիածնայ վանքն արաւ»:[457]

Էջմիածնի վանքի եկամտաբեր կառույցների թվում էին նաև բաղնիքները, որոնք ևս տրվում էին վարձատրությամբ: Այդ մասին 1753 թ. մատյանի էջերից մեկում կարդում ենք. «ԷԴ (7000) դիան ևս առի ի մեր համամի իջարադար Մկրտչէն»:[458] Նույն աղբյուրի հավաստմամբ 1753-1754 թթ. «համամզի» Մկրտչից գանձվել է 1 թուման 12 հազար դի-

---

[453] Նույն տեղում, էջ 367:
[454] Նույն տեղում, թղթ.1, վավ. 27, էջ 2:
[455] Տե՛ս. Арутюнян Б., Крупное монастырское хозяйство, с.77.
[456] Ջամբռ, էջ 207:
[457] Կալվածագրեր, էջ 130-131:
[458] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 367:

նար[459], իսկ 1762 թ. հունվար-հունիս գանձվել է 2 թուման 1000 դինար:[460]

Որոշ քանակի եկամուտներ ստացվում էին նաև տոկոսով փող պարտք տալուց: Այդ մասին 1744 թ. մատյանում կարդում ենք. «Գ (3) թուման ետու հրամանով սրբազան Հայրապետին թամասըկով պարտք, Բ (2) դամարլուից սուլթան Հուսէին և Ա (1) թուման ղորբխջի Ալիին»:[461]

Ընդհանրացնելով վանական հաստատության եկամուտների ստացման մասին եղած վկայությունները ստորև ներկայացնում ենք ըստ առանձին տարիների ու ամիսների վանական տնտեսության մուտքերը.

Տարե թիվը	ամսաթիվը	գումարը	տարե թիվը	ամսաթիվը	գումարը
1749	փետրվարի 20	52 թուման		նոյեմբերի 11	15 թուման
	հուլիսի 1	33 թուման	1750	ապրիլի 12	48 թուման
	օգոստոսի 17	2թուման, 4400դինար		մայիսի 1	7 թուման
	հոկտեմբերի 2	20 շահի		մայիսի 13	5 թուման
	մայիսի 20	6 թուման		մայիսի 20	9 թուման
	մայիսի 27	9 թուման		նոյեմբեր	3 թուման
	հունիսի 20	4թուման, 5000դինար		նոյեմբեր	21 թուման
	հունիսի	3 թուման	1752	հոկտեմբերի	25 թուման
	հունիսի	5 թուման		նոյեմբերի	30 թուման
	հունիսի 14	12 թուման		նոյեմբերի 15	8000դինար 500 շահի
	սեպտեմբերի 18	3 թուման		դեկտեմբերի	1թուման
	սեպտեմբերի 26	15 թուման	1753	հունվարի 15	5 թուման
	հոկտեմբերի 8	5 թուման		փետրվարի 15	10թուման
	հոկտեմբերի 20	15000 դինար		փետրվարի 28	10 թուման
	հոկտեմբերի	7000 դինար		մարտի 25	20 թուման
	հոկտեմբերի 27	8 թուման			21 թուման, 4000դինար 10շահի
	նոյեմբերի 14	2 թուման			6թուման 2000դինար
	նոյեմբերի 18	25 թուման		օգոստոսի 1	
	նոյեմբերի 24	1 թուման, 1.5 շահի		հոկտեմբերի 6	260 թուման 94075 դինար
	դեկտեմբերի 12	3 թուման		հոկտեմբերի	

[459] Նույն տեղում, էջ 367-370:
[460] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 4, էջ 55-56:
[461] Նույն տեղում, թղթ.1, վավ. 13, էջ 69:

	դեկտեմբերի	6 թուման, 5000 դինար		դեկտեմբերի	201թուման, 5000դինար
	դեկտեմբերի	12 թուման	1755	հունիսի 20	8 թուման
1751	հունվարի 6	3 թուման		հունիսի 26	1 թուման
	հունվարի 13	15 թուման		հունիսի	5000դինար
	փետրվարի 18	12 թուման		հունիսի	2000դինար
	փետրվարի	29 ոսկի		հունիսի 30	4 թուման
	մարտի 17	30 թուման		հուլիսի 5	6 թուման
	մարտի	2 թուման, 3000դ, 9 շահի		հուլիսի	5000դինար
	հոկտեմբերի 28	10 թուման		հուլիսի 9	3թուման, 2000դինար
	հոկտեմբերի 28	15 թուման		հուլիսի11	2 թուման
	հոկտեմբերի	1 թուման, 7000 դինար 4 ապասի		հուլիսի	23 թուման, 5000դինար
	հոկտեմբերի	6 թուման, 5000 դինար, 1շահի		օգոստոսի 1	15 թուման
	հոկտեմբերի	3 թուման		օգոստոսի 5	2 թուման
	նոյեմբերի 18	10 թուման		սեպտեմբերի7	1000 դինար
	սեպտեմբերի 14	4 թուման		փետրվարի 3	22 թուման
	սեպտեմբերի 21	8 թուման, 5000 դինար		փետրվարի 12	13 թուման
	սեպտեմբերի 26	9 թուման, 3000 դինար		փետրվարի 16	5 թուման
	հոկտեմբերի 8	2500 դինար		փետրվարի 23	16թուման
	հոկտեմբերի11	1 թուման, 5000 դինար		մարտի 1	12թուման
	հոկտեմբերի	1 թուման		մարտի 3	4 թուման
	նոյեմբերի 11	24 թուման, 58000 դինար		մարտի 12	5թուման, 5000դինար
	նոյեմբերի	1 թուման, 1000 դինար		մարտի 18	7թուման, 3000դինար
	նոյեմբերի	128 թուման, 8800 դինար		մարտի 22	6 թուման
	նոյեմբերի	1թուման, 8000դինար		ապրիլի 1	20 թուման
	նոյեմբերի	6000 դինար		ապրիլի 7	5թուման, 8000դինար
	դեկտեմբերի 4	9 թուման, 1000 դինար		ապրիլի 12	4 թուման
	դեկտեմբերի	25 թուման		ապրիլի 15	3 թուման
	դեկտեմբերի	1500 դինար		մայիսի 5	6թուման, 6000դինար
	դեկտեմբերի	1000 դինար		մայիսի 8	6 թուման
	դեկտեմբերի	3000 դինար		մայիսի 13	34թուման, 8150դինար
	դեկտեմբերի	200 դինար		մայիսի 21	6000 դինար
	դեկտեմբերի15	17 թուման		մայիսի 26	7թուման

		1250 դինար			
	դեկտեմբերի16	4 թուման 9450 դինար		մայիսի 28	10 թուման
	դեկտեմբերի 22	6 թուման 2000 դինար		մայիսի 30	38 թուման 3000 դինար
	դեկտեմբերի 23	1 թուման, 9100 դինար		հունիսի 7	9 թուման
	դեկտեմբերի	10 թուման		հունիսի 14	6 թուման
	դեկտեմբերի	100 դինար		հունիսի 21	10 թուման, 1000դինար
	դեկտեմբերի	2 թուման, 5500 դինար		հուլիսի 1	7 թուման, 3000դինար
1756	հունվարի 3	5 թուման		հուլիսի 10	35 թուման, 4800 դինար
	հունվարի	2000 դինար		հուլիսի 15	5 թուման
	հունվարի 25	19 թուման, 5200 դինար		օգոստոսի1	18 թուման, 8500 դինար
	հունվարի	10 թուման		օգոստոսի 20	9 թուման
	հունվարի	7 թուման		սեպտեմբերի 1	6թուման, 6000 դինար
	փետրվարի 1	12 թուման, 9600 դինար		սեպտեմբերի20	11թուման, 9500դինար
	սեպտեմբերի26	10 թուման, 6200 դինար	1758	հունվարի15	10 թուման, 3000 դինար
	հոկտեմբերի15	29 թուման		հունվարի 17	10 թուման, 3000 դինար
	նոյեմբերի15	34 թուման, 1100 դինար		մարտի 8	13 թուման
	նոյեմբերի 27	9 թուման, 8500 դինար		ապրիլի 19	14 թուման, 3650 դինար
1757	հունվարի 17	25 թուման, 1150 դինար		մայիսի 9	10 թուման, 6100 դինար
	փետրվարի 20	25 թուման, 3250 դինար		մայիսի 15	13 թուման
	մարտի 1	20 թուման		հունիսի 14	23 թուման, 3500 դինար
	մարտի 16	9 թուման, 9900 դինար		հունիսի 23	13 թուման, 4000 դինար
	մարտի	10 թուման, 1600 դինար		հունիսի 30	10 թուման
	մարտի 30	32 թուման, 8500 դինար		հուլիսի 9	11 թուման, 9350 դինար
	ապրիլի 15	15 թուման		հուլիսի 20	11 թուման, 3350դինար
	ապրիլի 22	32 թուման, 2500 դինար		օգոստոսի 25	10 թուման
	ապրիլի 25	5 թուման 4500 դինար		սեպտեմբերի12	9 թուման, 3000 դինար
	մայիսի 11	11 թուման		սեպտեմբերի 27	10 թուման
	մայիսի 30	5 թուման, 5000 դինար		հոկտեմբերի12	5թուման

	հունիսի 5	18 թուման, 4000 դինար		նոյեմբերի 17	5 թուման
	հունիսի 25	33 թուման 5200 դինար		դեկտեմբերի25	36 թուման, 7300 դի-նար[462]
	հուլիսի 27	26 թուման, 4000 դինար			
	օգոստոսի 8	25 թուման,			
	օգոստոսի 15	6 թուման			
	օգոստոսի 26	6 թուման, 7350 դինար			
	սեպտեմբերի10	20 թուման, 6700 դինար			
	սեպտեմբերի19	5 թուման, 3000 դինար			
	հոկտեմբերի10	15 թուման			
	հոկտեմբերի20	16 թուման, 1350 դինար			
	հոկտեմբերի25	19 թումա, 7250 դինար			
	նոյեմբերի27	13 թուման, 1500 դինար			
	դեկտեմբերի 9	6 թուման			
	դեկտեմբերի20	16 թուման, 8000 դինար			
	դեկտեմբերի25	10 թուման			
	դեկտեմբերի30	11թուման, 2350 դինար			

Վանական հաստատության մուտքի տվյալների հետ միասին մանրամասնորեն արձանագրված են նաև ելքի տվյալները: Համեմատության կարգով ներկայացնենք 1757թ. ելքը ըստ առանձին ամիսների և օրերի.

Ամիս, ամսաթիվ	գումարի չափը	ամիս, ամսաթիվ	գումարի չափը
հունվարի 1	7 թուման	մարտի	2700 դինար
հունվարի 1	8200 դինար	մարտի	2000 դ ինար
հունվարի 4	600 դինար	մարտի	1000 դինար
հունվարի 9	1 թուման	մարտի	2000 դինար
հունվարի 13	1թուման, 200 դինար	մարտի 18	15 թուման
հունվարի 18	6000 դինար	մարտի	12 թուման
հունվարի	8000 դինար	մարտի 27	10 թուման
հունվարի	4000 դինար	մարտի	2000 դինար
հունվարի	1500 դինար	մարտի	2թուման, 3000 դինար

[462] Նույն տեղում, էջ 97-115,125,141,149,183,187,259-311:

հունվարի	4500 դինար	մարտի	1 թուման
հունվարի	2000 դինար	մարտի	9200 դինար
հունվարի	600 դինար	մարտի	5000 դինար
հունվարի	500 դինար	մարտի	3000 դինար
հունվարի	5000 դինար	մարտի	1թուման 6000 դինար
հունվարի	2000 դինար	մարտի	3000 դինար
հունվարի	5 թուման, 8100 դինար	մարտի	1100 դինար
հունվարի	360 0դինար	մարտի	700 դինար
հունվարի	6 թուման, 6350 դինար	ապրիլի 2	3 թուման
հունվարի	7700 դինար	ապրիլի	3000 դինար
հունվարի 26	10 թուման	ապրիլի	5 թուման
փետրվարի 14	8 թուման	ապրիլի 10	500 դինար
փետրվարի 21	3 թուման	ապրիլի 12	500 դինար
փետրվարի	700 դինար	ապրիլի 13	1000 դինար
փետրվարի 25	3000 դինար	ապրիլի 15	3 թուման
մարտի 1	3 թուման	ապրիլի 20	400 դինար
մարտի	6000 դինար	ապրիլի 22	3000 դինար
մարտի	2000 դինար	ապրիլի 22	2000 դինար
մարտի	4000 դինար	ապրիլի 23	5000 դինար
մարտի	1 թուման, 7335 դինար	ապրիլի 24	1թուման, 2000դինար
ապրիլի 26	1 թուման, 2000 դինար	հունիսի1	3թուման, 3800դինար
ապրիլի 27	2500 դինար	հունիսի	500դինար
ապրիլի 28	2 թուման	հունիսի 6	5000դինար
ապրիլի 30	1500 դինար	հունիսի 8	10թուման, 2200դինար
մայիսի 1	800 դինար	հունիսի 9	500 դինար
մայիսի 2	5000 դինար	հունիսի 19	6000 դինար
մայիսի 3	1 թուման, 3200 դինար	հունիսի	3000 դինար
մայիսի 4	850 դինար	հունիսի	4000 դինար
մայիսի 5	3000 դինար	հունիսի	3 թուման
մայիսի 6	4000 ինար	հունիսի	200 դինար
մայիսի 7	1000 դինար	հունիսի	100 դինար
մայիսի 8	5000 դինար	հունիսի	500 ինար
մայիսի 9	8000 դինար	հունիսի 23	10 թուման
մայիսի 10	4թուման, 8000 դինար	հուլիսի 7	12 թուման
մայիսի 11	20 թուման	հուլիսի	5 թուման
մայիսի 12	6000 դինար	հուլիսի	550 դինար
մայիսի 12	8500 դինար	հուլիսի	200 դինար
մայիսի	10 թուման	հուլիսի	600 դինար
մայիսի 14	2 թուման	հուլիսի	150 դինար
մայիսի 16	1թուման, 5000 դինար	հուլիսի	200 դինաև
մայիսի 22	8 թուման	հուլիսի	10 թուման
մայիսի	600 դինար	հուլիսի	3 թուման

մայիսի	500 դինար	հուլիսի	1400 դինար
մայիսի	190 դինար	հուլիսի	10 թուման
մայիսի 26	1250 դինար	հուլիսի	14 թուման
մայիսի	1500 դինար	հուլիսի	630 դինար
մայիսի	1500 դինար	հուլիսի	400 դինար
մայիսի	500 դինար	հուլիսի	200 դինար
մայիսի	12 թուման	օգոստոսի 20	10 թուման
մայիսի 30	30 թուման, 3000 դինար	օգոստոսի	1թուման, 5400 դինար
օգոստոս	200 դինար	նոյեմբերի	4000 դինար
օգոստոս	1200 դինար	նոյեմբերի	3140 դինար
օգոստոս	300 դինար	նոյեմբերի 7	2 թուման
օգոստոս	250 դինար	նոյեմբերի 9	4 թուման
օգոստոս	500 դինար	նոյեմբերի	600 դինար
օգոստոս	200 դինար	նոյեմբերի 13	9000 դինար
օգոստոս	500 դինար	նոյեմբերի 15	27թուման, 2325 դինար
օգոստոս	2 թուման	նոյեմբերի	1թուման, 7550 դինար
սեպտեմբերի 3	6000 դինար	նոյեմբերի	10 թուման
սեպտեմբերի	3 թուման	դեկտեմբերի 5	1 թուման
սեպտեմբերի	200 դինար	դեկտեմբերի 9	1850 դինար
սեպտեմբերի	3000 դինար	դեկտեմբերի	1650 դինար
սեպտեմբերի	10 թուման	դեկտեմբերի	4 թուման 2450 դինար
սեպտեմբերի	3000 դինար	դեկտեմբերի	1 թուման 3550 դինար
սեպտեմբերի	3000 դինար	դեկտեմբերի 16	3000 դինար
սեպտեմբերի	2600 դինար	դեկտեմբերի 17	4900 դինար
սեպտեմբերի	200 դինար	դեկտեմբերի	200 դինար
սեպտեմբերի	400 դինար	դեկտեմբերի	300 դինար
սեպտեմբերի 27	20 թուման	դեկտեմբերի	2800 դինար
սեպտեմբերի	1800 դինար	դեկտեմբերի	3500 դինար
հոկտեմբերի 9	1450 դինար	դեկտեմբերի	800 դինար
հոկտեմբերի 15	6000 դինար	դեկտեմբերի 19	3 թուման
հոկտեմբերի 15	15 թուման	դեկտեմբերի 22	20 թուման
հոկտեմբերի 19	6 թուման, 8000 դինար	դեկտեմբերի 23	5 թուման[463]
հոկտեմբերի	500 դինար		
հոկտեմբերի	350 դինար		
հոկտեմբերի 26	900 0դինար		
նոյեմբերի 2	1թուման, 5000 դինար		
նոյեմբերի	5000 դինար		

Համեմատելով 1757 թ. մուտքի և ելքի աղյուսակների արդյունքները, ստանում ենք հետևյալ պատկերը. մուտքը՝ 687 թուման 133350 դինար, ելք՝ 416 թուման 363470 դինար: Դինարներն էլ վերածելով

[463] Նույն տեղում, էջ 322-334:

թումանի, մուտքի համար ստանում ենք 133 թուման, ելքի համար 363 թուման: Այսինքն, մուտքի և ելքի տարբերությունը կազմում էր 41 թուման:

Բնականաբար բոլոր դեպքերում չէր, որ մուտքն ու ելքը համարյա հավասարաչափ էին: Օրինակ, 1756 թ. մուտքը կազմել է 441.5 թուման, ելքը՝ 582 թուման: Տարբերությունը կազմել է 141.5 թուման: 1758 թ. այն ներկայացնում է հետևյալ պատկերը.

Մուտք		Ելք	
ամիսը	գումարի չափը	ամիսը	գումարի չափը
հունվար	10 թուման, 3000 դինար	Հունվար	1 թուման, 18650 դինար
փետրվար	10 թուման, 3000 դինար	փետրվար	14թուման, 9800դիյնար
մարտ	13 թուման	մարտ	10թուման, 33450դինար
ապրիլ	14 թուման, 3650 դինար	ապրիլ	13թուման, 4000դինար
մայիս	23 թուման, 6100 դինար	մայիս	17թուման, 32325դինար
հունիս	46 թուման, 7500 դինար	հունիս	43թուման, 17150դիյնար
հուլիս	22 թուման, 3350 դինար	հուլիս	11թուման, 20650դի նար
օգոստոս	10 թուման	օգոստոս	13թուման, 17150դինար
սեպտեմբեր	19 թուման, 3000 դինար	սեպտեմբեր	11թուման, 5950դինար
հոկտեմբեր	25 թուման	հոկտեմբեր	24թուման,, 23650դինար
նոյեմբեր	25 թուման	նոյեմբեր	29թուման, 4150դինար
դեկտեմբեր	36 թուման, 7300 դինար	դեկտեմբեր	27թուման, 13185դինար[464]

Հետևապես, մուտքը կազմել է 290 թուման, իսկ ելքը՝ 232 թուման: Տարբերությունը կազմել է 58 թուման: Անկախ տարբերության արդյունքից տարվա համար մուտքագրված ողջ գումարը ծախսվում էր տվյալ տարում: Այդ մասին ուղղակիորեն վկայում է Հակոբ վարդապետը. «Գիտասջիք զի այս դեֆտերիս Սրբոյ Աթոռոյս,- գրում է նա 1755 թ. մատյանում,- առից դրամից հիսապն և հաշիվն առաջի իմ տեսին լուսարար Եղիազար և ժամօրհնող Յակոբ վարդապետքն և այլք ևս, յորոյ վերահասու եղև ես, Շամախեցի տեղապահ վարդապետին, ոչ ի վրայ մեր և ոչ Սրբոյ Աթոռոյ առնելիք մնաց, վորոյ և ես հաճեալ քնքեցի ու

[464] Նույն տեղում, թղթ. 1, վավ. 27, էջ 9-10, 42-49:

ձեռամբս գրեցի վասն ապագաց տեսողաց ընդունելի եղիցի, պրծանք ոչ առնելիք մնաց և ոչ տալիք, այս եղև թվին ՌՄԴ (1755)»:[465]

Ստացված հասույթի մի մասը ծախսվում է սնունդ ձեռք բերելու համար, մյուս մասով կատարում էին շինարարական աշխատանքներ, ինչպես նաև վարձատրում մշակներին: Այդ մասին 1767 թ. մատյանում կարդում ենք. «Վերոյ գրեալ դէվթերս որ սկսեցի ի ՌՄԺԶ (1667) թուին ի յունվարի մտին մինչև ի դեկտեմբերի վերջն արդ ԼԲ (82) երես և ԸՃԺ (810) դալամ, յորս խարճեցեալ դրամից զամից զամն է ԸՃԿԵ (865) թուման ԳՌ (3000) Բ (200) հարիւր դիան, որ է Սրբոյ արդիւնս միոյ տերոյ արտաքին խարճն ձեռամբ տեղապահին իմոյ Մկրտիչ վարդապետին, որ մէկ հարիւր վացուն և հինգ (165) թուման ԲՌԷԵ (2700) դիանն մեր մշակաց տօնլուղն է, իննսուն և յօթն (97) թուման ԸՌ (8000) և մէկ հարիւր (100) դիանն գեղջս քակելոյն և շինելոյն է բաց ի եկեղեցաւ, իսկ վեց հարիւր երկու (602) թուման ԲՌՉԵ (2600) դիանն պարապին և այլոց հարկաւորաց մասրաֆն է: Գրեցի և կնքեցի ի վերջ թղթոյս ի հազար երկու հարիւր տասն և թուոջն (1216) ի վերջին դեկտեմբերի ամսոջ»:[466]

Չնայած հրովարտակներով շնորհված արտոնություններին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության գործունեությունը ենթարկվում էր ինչպես արքունիքի, այնպես էլ տեղական եկվոր տիրակալների խիստ հսկողությունը: Հատկապես վերջիններիս վերաբերմունքը ընդդեմ հայ եկեղեցու հոգևոր կենտրոնի միշտ չէ, որ համահնչյուն էր կենտրոնական իշխանության վարած քաղաքական գծին: Այս տեսակետից ուշագրավ է Զաքարիա Ագուլեցու տեղեկությունները Հակոբ Ջուղայեցու և Երևանի Սեֆի-ղուլի խանի փոխհարաբերությունների մասին: 1673 թ. գարնանը փախուստի դիմելով խանից՝ Ջուղայեցին աճապարում է Սպահան փորձելով ստանալ Նոր-Ջուղայի խոջայության աջակցությունը շահի առաջ խանի դեմ գանգատվելու համար. «Դարձեալ խանն էլ տեսաւ,- գրում է Ագուլեցին,- որ կաթողիկոսն փախաւ, խանն հակառակ ընկաւ կաթողիկոսին: Խանն շահին արզ արեց՝ թէ այս փողս սիթամով (զոռով) առի, շահն հրաման տայ որ այլվի փողն փողատէրն դարձուցանեմ: Շահն հրաման կուտայ: Դարձեալ թվին 1674 ապրիլի 10-ում խանիցն մարդ գա (Ագուլիս) թէ գիրն բերեք, ձեր փողն առէք: Վարդապետն, մելիք, մարդ գնաց, այնպես տվին որ միայն Ագուլաց 148 թուման առէլ ին, 98 թուման կէս դուս եկա, թէ գրավ, թէ այնգիր, այս դուս եկաւ: Ամեն մարդ իւր տվածին գորայ ըռասաթ (հաշվեհարդար) վեր առին, խարջն դուրս ընկաւ մին թումանին 6300դիան ձեռն եկաւ»:[467]

Օգտագործելով պայքարը թե՛ կաթողիկոսական աթոռի և թե հոգևոր բարձրաստիճան պաշտոնների համար, տեղական իշխողները

---

[465] Նույն տեղում, թղթ. 1, վավ. 13, էջ 370:
[466] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 4, էջ 347:
[467] Զաքարիա Ագուլեցի, էջ 111:

հանդես էին գալիս պաշտոնների վաճառքով: Իշխանությունները հովանավորում էին առավել շատ կաշառք տվողներին: «Արծաթով և կաշառքով, ղաբուլայիւ, և հարկիւ ի պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթողիկոսութեան և Սուրբ Աթոռն էջմիածիմ»,- գրում է Առ. Դավրիժեցին:[468] Դրությունը անփոփոխ էր և 18-րդ դ., որի մասին բազմաթիվ վկայություններ կան «Ելից-մտից» մատյանների էջերում: Օգտվելով իրենց պաշտոնական դիրքից տեղական իշխողները ամեն կերպ փորձում էին սահմանափակել էջմիածնի կաթողիկոսության իրավունքները, թուլացնել նրա տնտեսական կարողությունները: Հաճախակի էին կաթողիկոսության հողատարածքների չափումները, որի նպատակն էր մեծացնել վճարվող հարկերի չափը: Դա առաջին հերթին «մալջահաթն» էր, որ վճարում էր վանքը, որպես սեփականության հարկ: «Ետու ևս ալիղուլի խանին Զ (6) թուման ԹՌԱՃԻԵ (9125) դիան՝ որ էր սա ի կողմանէ մեր դիւանի տալիք մալոջհաթ Ժ (10) թուման ԹՌԱՃԻԵ (9125) դիան փողին»,- ասվում է 1755 թ. սեպտեմբեր ամսվա մատյանում:[469] Հատկանշական է, որ հաջորդ, 1756 թ. ապրիլ ամսվա ծախսը պատկերող մատյանում, պետությանը վճարվող մալջհաթի չափը կրկին նշված է 10 թուման: 9125 դինար, սակայն խանի կողմից գանձվել է ավելի մեծ չափի գումար: «Ետու ևս խալիլ խանին 20 թուման ի ամէ Ժ (10) թուման ԹՌԱՃԻԵ (9125) դիանն էր ի կողմանէ մեր դիւանի տալիք մալոիջհաթին, իսկ Թ (9) թուման ԸՃՀԵ (9875) դիանն ասած թէ ձեր գեղացիք տան ետոյ»:[470] Էջմիածինը պարտավոր էր սեփականության հարկ վճարել նաև ժամանակավոր հողօգտագործման դիմաց, որը դիտվում էր իբրև բռնազավթված տարածք. «Ետու ևս ԵՌ (5000) դիան մուհասիլին, վասն Անանիա Առաքելոյ վանքին արտերուն մալուջհաթին, որոյ մասիլն մեք էինք զաֆթել, ըստ գրեցելոյ Երևանայ քեդ խուդէքոցն, գիտութեամբ լուսարար և ժամօրհնող վարդապետացն»,- հայտնում է 1757 թ. մարտ ամսվա ծախսը պատկերող մատյանը:[471] Սեփականության հարկ վճարում էին նաև տնտեսական զանազան տիպի կառույցների համար. «Ետուք ևս ԴՌԷՃՕ (4750) դիան մեր Քալատուդնկի մալոջհաթին և զդիւանի բարացն առաք»,- հաղորդում է նույն մատյանը:[472] Եթե նկատի ունենանք, որ էջմիածնի վանական հաստատության թե՛ հողատարածքների և թե՛ տնտեսական կառույցների թիվը քիչ չէր, ապա հասկանալի է, որ վճարվող հարկի չափն էլ փոքր չէր: Այնպես որ վանական միաբանությունում ամեն կերպ աշխատում էին թույլ չտալ պետական իշխանության կողմից վանքի ունեցվածքի վերահաշվառում, որը կարող էր ավարտվել եղած չափերի

---

[468] Առաքել Դավրիժեցի, էջ 290:
[469] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 27, էջ 12:
[470] Նույն տեղում, էջ 23:
[471] Նույն տեղում, էջ 33:
[472] Նույն տեղում, էջ 18:

ավելացմամբ: Եվ օգտվելով իրենց դիրքից՝ խանական իշխանավորները չչափագրելու համար, որպես կանոն կաշառք էին պահանջում. «Տուք ևս մումէյիջին կաշառք, որ զմեր այգիքն չհամրէ և զարտերն չչափէմ ինն թուման և երկու հազար դիան փող»,- կարդում ենք մատյանում:[473] Կաշառք էր պահանջվում նաև ավել գրածը ջնջելու դիմաց «Ետուք ևս Միրսօֆիին հինգ թուման փող կաշառք, որ մեր հողերաց աւելի չափածն ջնջեաց»:[474] Հաճախ էր պահանջում, որ հողային սեփականության իրավունքի հարցի շուրջ վիճաբանություն էր սկսվում վանական հաստատության ու առանձին անձնավորությունների միջև: Այստեղ ևս պետական իշխանավորները առիթից օգտվելով միջամտում էին և որպես կաշառք վանքից գումարներ կորզում. «Ետու ևս հինգ թուման երեք հարիւր դիան Խալիլ խանի նազր Ասկար Բէկին կաշառս, որ մօլլայ Իսախանի կնոջ վանքիս հետ արած դաւին կգրեց, գիտութեամբ լուսարար և ժամօրհնող վարդապետացն»,- ասվում է 1756 թ. հոկտեմբեր ամսվա ծախսի մատյանում:[475]

Շիաների մոտ վաղուց գոյություն ուներ Իմամ-Զահիֆարի օրենքը, ըստ որի մահմեդականության ընդունածներն իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքն ամբողջապես գրավելու և նրանց իսպառ զրկելու ժառանգության իրավունքից: Այդ օրենքի գործադրման մասին Առ. Դավրիժեցին վկայում է. «Եւ այսպես զրկեալ զողորմելի քրիստոնեայս, յափշտակեալ ինչս և տուն ուրացողն այնոցիկ»:[476] Դավրիժեցին ունի մի վկայություն այդ օրենքի իր ներկայությամբ կիրառելու մասին. «...յափշտակեցին զժառանգութիւնս քրիստոնէից և ետուն ուրացողն. զոր մերով աչսք տեսաք»:[477] Պատմիչի հավաստմամբ օգտվելով իրենց արտոնություններից և թիկունքում ունենալով մահմեդականների օժանդակությունը, դավանափոխները հետզհետե դառնում էին ավելի անտանելի կեղեքիչներ: Հավատափոխության նման երևույթների դեմ համեստ պայքար էր մղում հայ առաքելական եկեղեցին և հատկապես նրա աթոռանիստ կենտրոնը: Շահին ուղղված իրենց խնդրագրերում հայոց կաթողիկոսները բողոքում էին Իմամ-Զահիֆարի օրենքի գործունեության դեմ, առանձին դեպքերում տեր կանգնում այն հոգևոր գործիչներին, որոնք հայտնվել էին այդ օրենքի գործածության դեմ հանդիման: 1755 թ. դեկտեմբեր ամսվա «ելից-մտից» մատյանից տեղեկանում ենք, որ էջմիածինը երեք թուման 6000 դինար է տրամադրում տիրացու Հովհաննեսին, լուծելու

---

[473] Նույն տեղում, վավ. 13, էջ 377:
[474] Նույն տեղում, էջ 320:
[475] Նույն տեղում, վավ. 27, էջ 29:
[476] Առաքել Դավրիժեցի, էջ 67:
[477] Նույն տեղում, էջ 68:

դատական այն վեճը, որ առաջացել էր «տաճկի մտեալ» նրա եղբոր պահանջի համար:[478]

Մատյանները հիշատակություն ունեն նաև գլխահարկի (ջիզյա) մասին, որը գանձվում էր ոչ մահմեդական բնակչությունից: Այսպես, օրինակ, 1762 թ. մատյանում կարդում ենք. «Առի ևս սրբազանէն տասն և յօթն թուման ծեռամբ տէր Պետրոսին, որ խանի տալիքներ դուրս ծգած վանքերի ջազիէն»:[479] Հարկ է նշել, որ գլխահարկի չափը կայուն չէր և առանձին տարիների, երկրի տարբեր շրջաններում այն ունեցել է տարբեր չափեր: Այսպես, ըստ Զաքարիա Ագուլեցու տեղեկության, Ագուլիսի գլխահարկը կազմել է «մարդագլուխ» 2500 դինար,[480] իսկ 18-րդ դարի առաջին կեսին Երևանի խանությունում այն Աբրահամ Կրետացու վկայությամբ կազմել է 3.5 ղուռուշ (15 ղուռուշը= 1թումանի):[481] Եթե նկատի ունենանք, որ հայ ռայաթներից գանձվող գլխահարկը և տարիների ընթացքում նրա վրա բարդվող վերադիր գումարներն ու տոկոսները (թուֆավութ և ֆար) բավականին խոշոր գումարներ էին կազմում և նշանակալից տեղ էին գրավում պետության ֆինանսների մեջ, հասկանալի կդառնա, թե ինչու գլխահարկի չափը հաճախ կազմում էր նույն համայնքից գանձվող հարկերի ընդհանուր գումարի կեսից ավելին: Իր հիմքում չունենալով ըստ գույքային ցենզի բաշխման նախապայման, գլխահարկի գանձումը պետական կառավարիչների և նրանց ստորադրյալների համար բացում էր չարաշահումների լայն հնարավորություններ: Նրանք նախօրոք հաշվի առնելով պահանջվող ծախսերը՝ սահմանում էին գլխահարկի ընդհանուր գումարը, որից հետո այն բաժանում էին բնակչության վրա: Եվ այն պատրվակով, թե գլխահարկի նախկինում հավաքված գումարները չեն բավարարում կատարված ծախսերը ծածկելուն, նրանք անվերջ մեծացնում էին գլխահարկի չափը: Երևանի Մահմատ խանի նման ծեռնարկումների մասին Զաքարիա Քանաքեռցին. «...առաքէր քննիչս արտորէից գրել, և զհնտորդն ամյամէ յաւէլուին: Նույնպես զթուօղս խաղանց, զչափողս այգեաց և զգլխագիրս և այսպէս ի ներքոյ հարկի ետ զամենայն»:[482] Ըստ «գլխոյ արանց» գանձվող հարկի չափերը այնքան բարձր էին, որ Աբրահամ Կրետացու վկայությամբ նույնիսկ տեղական ավագանու անդամներից շատերը դիմեցին Նադիր շահին խնդրանքով՝ թողնել ջիզյան իր նախկին չափերում, որն է 3.5 ղուռուշ յուրաքանչյուր հարկատուից:[483] Ու չնայած շահական հրովարտակները բազմիցս վկայում են, թե «Հայրապետն ու միաբանք» ոչ տայցեն զգլխահարկս,

---

[478] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 2, վավ. 27, էջ 15:
[479] Նույն տեղում, թղթ. 2, վավ. 4, էջ 127:
[480] Զաքարիա Ագուլեցի, էջ 68:
[481] Աբրահամ Կրետացի, էջ 135:
[482] Զաքարիա Քանաքեռցի, հ. Բ, էջ 45:
[483] Աբրահամ Կրետացի, էջ 135:

փաստերը վկայում են լրիվ դրա հակառակը, դրանք միաժամանակ վկայում են, որ 18-րդ դ. նվաճողները, հրաժարվելով մնացած հարկերից ու տուրքերից, հաճախ սահմանափակվել են միայն ջիզիայի գանձումով: Դա արվել է հիմնականում ոչ լրիվ հնազանդեցված շրջաններում, ուր զավթիչները արել են առերևույթ զիջողական վերաբերմունքով կանխել բնակչության դիմադրությունը: Այսպես, 1725 թ. երբ թուրքական բանակը Երևանի բերդը գրավելուց հետո պատրաստվում էր ճնշելու Արցախի և Սյունիքի հայության դիմադրությունը, արքունիք ուղարկված պաշտոնական զեկուցագրում ասվում է. «Երևանի ենթակա վայրերից Զարուզբիլի (ՀՀ Վարդենիսի շրջան – Հ.Թ.) նահիան նախապես սանջուկի իրավունքով տրված է Օմար փաշային: Սակայն, երբ աստծո կամքով պատուհասի ենթարկվեց, ռայաթները սարսափի ներքո միացան Աղնահի անհավատներին ու թեև հետո նորից հնազանդվելու ցանկություն ունեցան, սակայն, քանի որ նրանց խրտնչումն ու կատաղությունը դեռ չի անցել, առայժմ նպատակահարմար է դիտվել նրանցից պահանջվող ուշուրն ու ռեմսը (տասանորդ ու տուրք) ունտես առնել և բավարարվել միայն ջիզիայի գանձումով»:[484]

«Ռեմս – ռամս, ռսում» տուրքի մասին գրավոր հիշատակության հանդիպում ենք դեռևս 1503 թ. Սեֆյան Իսմայիլ 1-ի Սիմեոն եպիսկոպոսի անվամբ Տաթևի վանքի նախկին իրավունքները Գյուրչայի վիլայերի նկատմամբ վերահաստատելու վանքապատկան հողերի վերստին հաստատման և այդ հողերն ու տեղի հայ հոգևորականությունը բազմաթիվ պետական հարկերից և այլ պարտավորություններից ազատելու մասին հրովարտակում:[485] Այսպես էին կոչվում այն բոլոր տուրքերը, որոնք գանձվում էին ոչ թե անմիջապես պետության, այլ պետական բարձրաստիճան և կրտսեր պաշտոնյաների օգտին: Հետաքրքիր է նշել, որ այդ տուրքի էությունը հետագա ժամանակներում էլ ոչնչով չէր փոխվել: Այդ մասին էջմիածնի վանական տնտեսության ելքն ու մուտքը պատկերող 1755 թ. մատյանում կարդում ենք. «Ետուք ևս ԱՌԸԵ (1800) դիան մեր տիրացու Յովսէփին վասն ֆառաշներաց ուսում տալոյ»:[486]

Վանական հաստատությունից գանձվող տուրքերից էր «Սուրսաթը»: Եթե նախկինում այն գանձվում էր հիմնականում բնամթերքով զորքի պահպանման համար,[487] ապա 18-րդ դ. գանձվող մալջիաթի մի մասը տրամադրում էր պետական պաշտոնյային: «Ետու ևս Խալիլ խանի սուրսաթշուն, մէկ թուման և երկու հազար դիան, գիտութեամբ Ղունկանոս վարդապետին»,- կարդում ենք 1756 թ. ապրիլ ամսվա

---

[484] Փափազյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մեֆոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը, էջ 138:
[485] ՄՊՀ առաջին, էջ 53:
[486] Կթղկ. դիվ. թղթ. 1, վավ. 27, էջ 16:
[487] Петрушевский И., Очерки..., с.276.

մատյանում:[488] Խանական հարկահավաք վերակացուներ անվանում էին նաև մուբաշիր կամ մուհասիլ. «Ետուք ևս Մէլիք Մուհամմացին որ մուհասիլ էր ի կողմանէ մեր դիւանի տալեաց մալջհաթին. զդիւանի բարաթն առաք ի նմանէ հինգ թուման»,- հաղորդում է նույն մատյանը:[489] Տուրքեր էին վճարում նաև խանական այլ պաշտոնյաների (ոստիկանապետեր, քարտուղար, գրագիր, դռնապահ, անասնապետ, մատուվակ, տնտեսապետ և այլն), «Ետու նաև մեր գեղի դարուղա (ոստիկանապետ) Բաբայ բեկին մէկ թման փող ի կողմանէ մէկ ամսեն զիրային»,- հաղորդում է 1758 թ. մատյանը:[490]

Առավել մեծ չափերի է հասել երկրամասի կառավարիչներին տրվող գումարները: Դրանցից մեկի մասին է վկայում 1755 թ. հաշվեմատյանի հետևյալ վկայությունը. «Խալիլ խանն Սուրբ Աթոռոյս փող ուղեց նմա ժէ (17) թուման փող ետուք»:[491] Խանին հատկացվող «կամավոր» կոչվող այդ տուրքերը, իրականում իրենց հիմքում ունեին պարտադիր վճարելիքի նախապայման: Ավելին, չվճարելու դեպքում հաճախ կիրառվում էր բռնություն: Այդ մասին ուղղակիորեն վկայում է վերը հիշատակված մատյանի հետևյալ տողերը. «Ետուք ևս՝ ես Յակոբ լուսարար եղիազար և Թադէոսի վարդապետքս մէլիք Յակոջանին, ի սույն ամսոյ ԻԶ (26) Խալիլ խանին երեսուն թուման զոր բռնությամբ պահանջել էառ ի Սրբոյ Աթոռոյն»:[492] Նույն բռնարարքի մասին է վկայում հետևյալ տեղեկությունը. «Հիւսէնալի խանին, որ ի Սուրբ Աթոռոյս Ճ (100) թուման պահանջեց ի գնալ առ Փէնէի խանն, զոր իբրև աղաղեցաք թէ ոչ ունիմք Ō (50) թուման բաշխեց և Ō (50) թուման ետու»:[493] Եթե միայն մեկ տարվա կտրվածքով վերցնենք խանական իշխանությանը էջմիածնի վանքի կատարած հատկացումները, ապա կտեսնենք, որ այն մեծ չափի գումարի է հասնում: Վերցնենք 1756 թ. ըստ առանձին ամիսների.

Ամիսը	գումարը
Հունվար	53թուման, 2200 դինար
Փետրվար	47թուման, 3350 դինար
Մարտ	11թուման, 14700 դինար
Ապրիլ	7թուման, 8000դ ինար
Մայիս	63 թուման, 49850 դինար
Հունիս	3 թուման, 20000 դինար
Հուլիս	5 թուման, 500 դինար
Օգոստոս	5250 դինար
Սեպտեմբեր	4400 դինար

488 Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 27, էջ 22:
489 Նույն տեղում, էջ 43:
490 Նույն տեղում, էջ 44:
491 Նույն տեղում, թղթ. 1, վավ. 13, էջ 235:
492 Նույն տեղում, վավ. 27, էջ 35:
493 Նույն տեղում, վավ. 13, էջ 399:

Հոկտեմբեր	6 թուման, 5800 դինար
Նոյեմբեր	2 թուման, 21000 դինար
Դեկտեմբեր	3 թուման, 5100 դինար
Ընդամենը՝ 200 թ ուման, 140, 150 դինար [494]	

Վանական տնտեսության վրա ուղղակի քայքայիչ ներգործություն է ունեցել «քոդավ» կամ «չոբանբեկի» անուններով հայտնի մանր եղջերավոր անասունների դիմաց անասնահարկի գանձումը: Նկարագրելով գյուղացիներից մեկի հետ ունեցած հարցազրույցը անասնահարկի մասին, Առ. Դավրիժեցին գրում է. «Որքան գնաց, ծանրացաւ քոդաւն, և այնու կարացաք զերծանիլ, զպարտս ևս առաք, և զորս պարտատերցն վճարեցաք. ոչինչ չմնաց քանզի կարի յոյժ ծանր է հարկն քոդաւօն»: [495] Նվաճող ազնվականության համար հարկման այս տեսակը ևս չարաշահումների ու կամայականությունների անսպառ աղբյուր էր: «Եւ զայս ոչ գիտէ արքայն,- շարունակում է վերը բերված հարցազրույցի շարունակումը Առ. Դավրիժեցին,- նորին նախատուրքն, այլ գրեն զորքանաթիւն քոդաւին և տան ի ձեռս զօրականաց, և նորա եկեալ թէ կամայ թէ յակամաց բռնութեամբ առնուն, ասելով՝ ի դիւանէն թուղթն այնպէս գրեալ՝ և տուեալ՝ ի հրամայեալ եղ և մեզ»: [496] Անասնահարկի գանձման վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ է հայտնում 16-րդ դ. իտալացի ուղեկցող Ալեսանդրին: Նա գրում է, թե իրանական պետությունը մի շարք հարկերի հետ միասին ստանում էր «կենդանիների համար քառասուն ոչխարի մի հոտի համար նա (թագավոր) հարկ է ստանում տարեկան տասն հինգ ֆիստի (fisti), որ մեր դրամով անում է երեք դուկատ, բայց արու կենդանիների (խոյ, ցուլ) համար չեն վճարում, ամեն մի կովի համար նրանք վճարում են մեր դրամով յերկու դուկատի հավասար մի գումար, և այսպես, սրանք կազմում են թագավորի յեկամուտը»:[497] Այս վկայությունից երևում է, որ թեև անասնահարկը պետք է գանձվեր բացառապես մանր եղջերավոր անասունների դիմաց, հաճախ խախտվել է այդ կարգը և գանձվել նաև խոշոր եղջերավոր անասունների դիմաց ևս: Թերևս այդ մասին է վկայում նաև Զաքարիա Քանաքեռցու այն վկայությունը, ըստ որի Քանաքեռցուն մարդահամարի հետ միասին մանրամասնորեն հաշվառման ենթարկվեն ու հարկվեն համայնքի խոշոր եղջերավոր անասունները:[498] Հարկման հենց այդ տեսակի ծանրությունը նկատի ուներ Փիլիպոս Աղբակեցին, երբ խնդրանքով բազմիցս դիմում է շահին՝ էջմիածինը ազատելու անասնահարկի վճարումից: Շահի կարգադրությամբ 1647 թ. և 1649 թ. հետևում է Երևանի Բեյխուրով խանի հրամանագրերը էջմիածնի վանքի

[494] Նույն տեղում, վավ.27, էջ 17-31:
[495] Առաքել Դավրիժեցի, էջ 147:
[496] Նույն տեղում, էջ 174-175:
[497] Ուղեգրություններ, հ. Ա, էջ 350:
[498] Զաքարիա Քանաքեռցի, հ. Ա, էջ 16:

«չոբան Բեկիի» գումարները Փիլիպոս կաթողիկոսին նվիրակելու մասին:[499] Իրականում, սակայն անասնահարկը շարունակվել է գանձվել այս անգամ արդեն «կամավոր» համարվող նվիրատվությունների տեսքով. «Խանին Ա (1) ձի Ա (1) ջորի փէշքաշ արինք»,[500] «թոխլի տարի խանիպատչումն շնորհավորելոյ Թ (9) հատ»,[501] նման կարգի բազմաթիվ վկայություններ կան մատյանների էջերում: Ըստ Սիմեոն Երևանցու վկայության, սահմանված քանակից (իմա 500 գլխից-Հ.Թ.) ավելի ունենալու դեպքում հաստատությունը պարտավոր էր «մալ-փուլի» անվան տակ մանր եղջերավոր անասուններից գանձվող անասնահարկը վճարել «նաղդ», այսինքն կանխիկ դրամով:[502]

Եկվոր տիրակալների համար էջմիածինը նկատվում էր իբրև եկամուտների առատ աղբյուր, և այս հանգամանքը վանական տնտեսության կողոպուտի հիմնական առիթն էր դառնում: Վանքի համար անխուսափելի պարագա էր որևէ հարկի լուծման նպատակով «բազում ոսկի և արծաթ» տալը: Դրա պաշտոնական արտահայտությունն էր փէշքաղը, որը ընդունված էր վարչական բոլոր մարմինների կողմից, ընդհուպ մինչև շահը: Առ. Դավրիժեցու հաղորդմամբ Փիլիպոս Աղբակեցին Լուսավորչի Աչը Նոր-Ջուղայից էջմիածին տեղափոխելու թույլտվություն ստացավ այն բանից հետո միայն, երբ «սկսաւ շրջել ի դրունս իշխանաց թագաւորին, և առատածեռն տրօք զսիրտս ամենեցուն հաճեցոյց: Եւ ապա յետ ամենեցուն լցեալ զուտ ոսկի դահեկան յսկուտեղ և ըստ նմին գրեալ թուղթ արդայի՝ մատոյց առաջի Շահսէֆի արքայի»:[503] Սիմեոն Երևանցու հավաստմամբ, կանոնակարգված էր նույնիսկ մշտական կաշառակերության կարգը: Ըստ այդ կարգի, նշում է Երևանցին, ամեն տարի, հոկտեմբեր ամսին Երևանի խանը իր ծառայողների հետ միասին կատարում էր այցելություն դեպի էջմիածին, որը կոչվում էր «Ուչքիլիսե էշնաղի»: Այցելությունը ավարտվում էր վանքի միաբանության կողմից խանին ու նրա սպասավորներին մեծագին նվերների հանձնումով ու նրանց բարձրակարգ սպասարկումով: Այդ բոլոր ծախսերը կազմում էր մոտ 50 թուման: Նույնքան գումար էր ծախսվում Բայրամի տարին, երբ խանը գնում էր կաթողիկոսին տեսության:[504] Նույնիսկ կաթողիկոսի մահվան դեպքում տեղապահը պարտավոր էր այցելելու խանին և ընդունելու նրա ցավակցությունը. «Ձեր վաղճանելոյ սրբազանին (Մինաս Ա. Ակնեցի - Հ. Թ.), գնացինք

---

499 ՄՊՀ, վավ. 34, էջ 36
500 Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 4, վավ. 13, էջ 197:
501 Նույն տեղում, էջ 218:
502 Ջամբռ, էջ 146:
503 Առաքել Դավրիժեցի, էջ 320:
504 Ջամբռ, էջ 151:

յերևան խանն տեսանելոյ, խարչ եղև Բ (2) թուման Ե (5) շահի»,- ասվում է 1753 թ. մայիս ամսվա մատյանում:[505]

Այսպիսով, վերը շարադրվածը վկայում է, որ թեև 17-րդ դ. երկրորդ կեսից և հատկապես 18-րդ դ. ընթացքում հայ եկեղեցու աթոռանիստ կենտրոնը ապրել է տնտեսական նկատելի վերելք, այնուհանդերձ գտնվելով օտար տիրապետության տակ, նա ի վիճակի չէր ապահովելու իր հասույթների ամբողջական տնօրինումը, դրանց ծառայեցումը ազգի նյութական ու հոգևոր վերելքին:

[505] Մատենադարան, Կթղկ. դիվ., թղթ. 1, վավ. 13, էջ 189:

Հայ առաքելական եկեղեցին իր գոյության առաջին իսկ շրջանից սկսած՝ Հայաստանի պատմական զարգացման բոլոր փուլերում ունեցել է վճռորոշ դեր: Ինչպես գիտենք, 484 թ. ի վեր քաղաքական իրապայմանների բերումով Վաղարշապատից կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց տեղից տեղ: Ի վերջո 1105 թ. կաթողիկոսական աթոռը վերահաստատվեց Կիլիկիայում: Այստեղ իր գոյատևման ընթացքում Ամենայն Հայոց կաթողիկոսությունը հայ ժողովրդի ինչպես ներքին (հոգևոր, դպրության, մշակույթի), այնպես էլ արտաքին (քաղաքական-միջպետական, դավանական-միջպետական եկեղեցական հարաբերությունների) կյանքի ոլորտում զգալի դերակատարում է ունեցել:

Կիլիկիայում հայոց պետականության անկումը, մայր հայրենիքում թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի շուրջ հարյուրամյա դաժան տիրապետությունը անհետաձգելի անհրաժեշտություն դարձրեցին Կիլիկիայում մեկուսացած կաթողիկոսական աթոռը Հայաստան տեղափոխելը: Երկար չարչրկումներից հետո 1441թ. էջմիածնում գումարված ազգային ընդհանուր ժողովը հոգևոր աթոռը վերահաստատեց էջմիածնում: Կաթողիկոս ընտրվեց Ակոռի գյուղի սբ. Հակոբ վանքի վանահայր Կիրակոս վարդապետ Վիրապեցին: Քաջ գիտակցելով, որ էջմիածնի հեղինակության բարձրացման համար անչափ կարևոր է նրա տնտեսական կարողությունների ընդլայնումը, կաթողիկոսությունը ձեռնամուխ եղավ կալվածական հարստության ձեռք բերմանը: Նման նախաձեռնություն դրսևորում է Գրիգոր Ժ Ջալալբեկյանը (Մակվեցի) (1443-1465 թթ.)՝ ձեռք բերելով 7 գյուղերի սեփականության իրավունք:

Հայաստանը դեռ չեր ամոքել իր վերքերը թուրք-թաթարական տիրապետության հասցրած հարվածներից, երբ նրա արևելյան և արևմտյան հատվածները կրկին դարձան ավերիչ պատերազմների թատերաբեմ՝ այս անգամ Օսմանյան կայսրության և անգուսպ հետևողականությամբ հզորության ձգտող Սեֆյան Իրանի միջև: Ավելի քան 2 դար տևած ավերիչ պատերազմները ավարտվեցին 1639 թ. Կասրե Շիրինի հաշտության պայմանագրով, որով Հայաստանի արևմտյան մասն ընկավ Օսմանյան կայսրության, իսկ արևելյանը՝ Սեֆյան Իրանի տիրապետության տակ: Երկրում հաստատվել էր հետամնաց վաչկատուն ցեղերի իշխանությունը: Անկում էին ապրում առևտուրն ու արհեստը: Գյուղատնտեսության քայքայման ու քաղաքներում արհեստագործության և առևտրի վրա դրված ծանր հարկերի հետևանքով քաղաքային կյանքի լրիվ անկման էր հասել:

Միասնական հայկական պետականության բացակայության պայմաններում, երբ երկիրը ներքաշվեց նոր պատերազմի մեջ, եկեղեցին էր, որ կատարեց ազգի առաջնորդի դերը: Այս շրջանում եկեղեցին դեգերում էր եվրոպական երկրներում, ազատագրության ճանապարհ-

ներ ու միջոցներ որոնում: Այս առումով հիշատակության է արժանի կաթողիկոսներ Ստեփանոս Սալմաստեցու (1542-1564 թթ.), նրա հաջորդ Միքայել Սեբաստացու, (1564-1570 թթ.), Հակոբ Ջուղայեցու (1655-1680 թթ.) և այլոց գործունեությունը:

Եկեղեցին միաժամանակ զբաղվում էր էջմիածնի վանական տնտեսության վերականգնման գործով: Դրանում մեծ էր Մովսես Տաթևացու (1629-1633 թթ.) ներդրումը: Անգնահատելի է նաև հաջորդ կաթողիկոսի՝ Աբրահամ Կրետացու(1734-1736 թթ.), դերը հայ ժողովրդի ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական և տնտեսական կյանքում: Ամենաջերմ հարաբերություններ հաստատելով Իրանի Նադիր շահի հետ՝ նրան հաջողվում է կասեցնել վերջինիս այն կարգադրությունը, ըստ որի շատ հայ ընտանիքներ Թիֆլիսից և Երևանից պետք է գաղթեցվեին Իրան: Եվ չնայած Հայաստանի համար այս ծանր պայմաններին, եղան հոգևոր առաջնորդներ, որոնք առաջնորդվեցին սեփական շահով: Բայց և այնպես դա երբեք չի նսեմացնում եկեղեցու խաղացած վճռորոշ դեր հայ ժողովրդի կյանքում:

15-18-րդ դդ. էջմիածնի վանական հաստատության սոցիալ-տնտեսական դրության համար բնութագրական է եղել երկրում հաստատված ագրարային հարաբերությունների հիմք կազմող հողային սեփականության ձևը: Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ագրարային հարաբերությունների էությունը բացահայտող փաստաթղթերի գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ հողը պետության կամ թագավորի գերագույն սեփականությունն չի հանդիսացել: Դեռևս արաբական տիրապետության ժամանակաշրջանի ագրարային հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ժամանակ էլ խալիֆի՝ հողի գերագույն սեփականատեր լինելը ձևական էր: Իրականում ավատական վերնախավի ներկայացուցիչները հողեր էին ձեռք բերում ժառանգական կամ էլ պայմանական հողատիրության սկզբունքներով: Ժամանակի ընթացքում պայմանական հողատիրությունն էլ վեր էր ածվում ժառանգականի և հողը դառնում էր ավատատիրոջ լիակատար սեփականություն: Հողատիրության նույն բնույթի փոփոխություն էր տեղի ունենում Հայաստանում նաև 15-րդ դարից սկսած: Եվ չնայած 16-րդ դ. Սեֆյան տիրակալների գործադրած բոլոր ջանքերին՝ որքան հնարավոր է ընդարձակել պետական հողատիրության չափերը, դա նրանց չի հաջողվում: Բավական է նշել, որ Արևելյան Հայաստանում 1576 թ. հաշվվում էր 114 ժառանգական խոշոր ավատատեր:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում մասնավոր հողային սեփականության հիմնական ձևը մուլքն էր, որն ընկած էր թե՛ պետական, թե՛ արքունական, թե՛ կրոնական հաստատություններին պատկանող և թե՛ համայնական հողատիրության տեսակների հիմքում: Տիրապետող դարձան հողատիրության այլ ձևեր (խաս, դիվանի, վակուֆ): 15-րդ դ. կալվածարագրերում ավելի հաճախ է հանդիպում մուլք

արտահայտությունը հողային սեփականության իմաստով: Մուլք կալվածքն անկախ իր մեծությունից ու պատկանելությունից, ավատական հողատիրության համամիացված ձևն էր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողի մասնավոր սեփականություն լինելու չափանիշը նախ հողի վրա որոշ անձերի մենաշնորհն է, այդ անձերի կողմից հողն ըստ նրանց կամքի տնօրինելն է, ապա գալիս ենք այն եզրակացության, որ մուլքը մասնավոր սեփականություն էր՝ հաշվի առնելով նրա նաև ժառանգական սեփականություն լինելու հանգամանքը: Այն ճանաչվել է որպես «հայրենական սեփականություն» կամ «հայրենական ժառանգություն» և ազատորեն օտարվել առանց որևէ սահմանափակումների:

Չնայած սեփականության իրավունքի անձեռնմխելիությանը, չէր բացառվում նաև բռնագրավումների ճանապարհով հողային սեփականության իրավունքի ձեռք բերման հնարավորությունը: Գյուղական համայնքի հաշվին կատարած հողային բռնագրավումների, կամայականություններից բնակության վայրը փոխած գյուղացիների ունեցվածքը սեփականելու ճանապարհով իրենց կալվածքները ընդարձակեցին հատկապես հոգևոր հաստատությունները: Պետք է փաստել, որ 16-17-րդ դարերում առօրյական էին դարձել եկեղեցական հաստատություններին առանձին անհատների կողմից հողատարածքների նվիրատվության փաստերը: Վերջիններս քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, իրենց տիրույթները հափշտակումից փրկելու նպատակով նվիրում էին վանքերին ու եկեղեցիներին:

Արևելյան Հայաստանում հողային մասնավոր սեփականության կողքին կային նաև արքունական (խաս) հողեր: Սրանցից գանձվող հարկերի մի մասը ժամանակավոր վարձակալության իրանունքով (զաբթ) տրվում էին ազնվականությանը՝ զինվորական ծառայության դիմաց:

Գոյություն ուներ հողատիրության թիուլային (պարգևական) տեսակը, որի նախնական ձևը հանդիսացել է մոնղոլական ծագում ունեցող սոյուրղալ տերմինը: Թիուլները տրվում էին ոչ միայն աշխարհիկ, այլ նաև հոգևոր դասի առանձին բարձրաստիճան անձնավորություններին: Հողային սեփականության իրանունքի ձեռք բերման հիմնական միջոցը, թերևս, առք ու վաճառքի ուղին էր:

Իր ունեցած առանձնահատկություններով հողատիրության տեսակների մեջ տարբերակվում էր վանական-եկեղեցական հողատիրությունը: Հարկ է նշել, որ եկվոր նվաճողներին չհաջողվեց երկրում արմատավորել իրենց հոգևոր ինստիտուտները:

Վանական-եկեղեցական տնտեսության առաջընթացի համար կարևոր նշանակություն ունեցան հայ աշխարհիկ ավատատերերի նվիրատվությունները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է կարևորել այն իրողությունը, որ բարձրաշխարհիկ դասի ներկայացուցիչների նախաձեռնությամբ հայ հոգևոր ինստիտուտներին տրվող և բավական մասսայական բնույթ ստացած նվիրատվությունների փաստերը նվա-

ծողների սոցիալ-տնտեսական քաղաքականության դեմ պայքարի յուրահատուկ ձևեր էին: Էջմիածնի վանական հաստատությանը սեփականության իրավունքով հողերի նվիրման փաստերը առավել լայն չափերի հասան 17-18 րդ. դարերում: Վակֆային իրավունքի հիմնական նախապայմանն այն էր, որ նվիրված հողը պետք է լիներ նվիրողի «հալալ ինչքը», այսինքն՝ ժառանգական կամ գանձագին տիրույթը: Աղբյուրների միաբերան վկայությամբ վակֆային իրավունքի առնձնահատկությունը կայանում էր նրանում, որ նման կալվածքները ազատվում էին պետական հարկերի վճարումից, այսինքն ստանում էին մուաֆության իրավունք: Միաժամանակ պետք է նշել, որ վակֆային իրավունքի անձեռնմխելիությունն ապահովում էր պետությունը:

Քննարկվող ժամանակաշրջանում էջմիածնի վանական տնտեսության մեջ մուլք էր կոչվում ոչ միայն հողային սեփականությունն, այլև այդ սեփականությունից օգտվելու իրավունքն, այսինքն ոչ միայն անմիջական օգտագործման տակ գտնվող հողային մասնավոր սեփականությանը այլ նաև յուրացման տնտեսական ձևը կամ ռենտան:

Գյուղացու նկատմամբ կիրառվող արտատնտեսական հարկադրանքը Հայաստանի երկու մասերում էլ հանդես էր գալիս ոչ թէ նրան հողին ամրացնելու ճանապարհով, այլ համայնքին կապելու միջոցով: Հողատերը չէր խառնվում նրանց արտադրական պրոցեսին և գյուղացիների հետ փոխհարաբերության մեջ չէր մտնում: Նա բոլոր պահանջները ներկայացնում էր համայնքին: Նույն գնով էլ գյուղացին ոչ մի հարաբերություն չէր ունենում հողատիրոջ հետ: Նա ճանաչում էր իր համայքը և իր պարտականությունները կատարում էր նրա ղեկավարությամբ: Ավատատերը միջամտում էր գյուղացիների գործերին միայն այն դեպքերում, երբ վերջիններս խախտում էին ընդունված կարգ ու կանոնը: Այս հանգամանքը, ինչպես նաև այն, որ հողային ռենտան, մասնատվելով կարող էր կենտրոնանալ տարբեր անձնավորությունների ձեռքում, ճորտությունը բացառող կարևոր պայմաններից են:

РЕЗЮМЕ

Армянская апостольская церковь с первого же периода своего существования играла решающую роль на всех этапах исторического развития Армении. Как известно, начиная с 484 года, в силу политических обстоятельств, католикосский престол из Вагаршапата многократно перемещался. Наконец, в 1105 г. католикосский престол вновь утвердился в Киликии. Здесь, в течение всего своего существования Католикосат Всех Армян играл значительную роль как во внутренней сфере жизни/духовной, образовательной, культурной/, так и во внешней сфере/политической-межгосударственной, религиозно- межгосударственных отношениях/.

Падение Киликийской армянской государственности, длившиеся почти столетие нашествия туркменских племен ак-коюнлу и кара-коюнлу, сеющие кровь и разорение в Армении, сделали безотлагательной необходимостью перенос обособленного Католикосского престола в Армению. После долгих разногласий в 1441 году на созванном в Эчмиадзине общем национальном соборе было принято решение о восстановлении католикосского престола в Эчмиадзине. Католикосом был избран настоятель монастыря св. Акопа села Акоп вардапет Киракос Вирапеци.

Прекрасно осознавая, что для повышения авторитета Эчмиадзина, огромное значение имеет, расширение его экономических возможностей, Католикосат предпринимает шаги к приобретению земельных поместий. Похожие шаги предпринимает Католикос Григор И Джалалбекян/Маквеци/ /1443-1465/, приобретая право владением земельных угодий 7 деревень.

Армения, еще не оправившись от ран, нанесенных монголо-татарскими захватчиками (ее восточная и западная части) вновь стала ареной кровопролитных войн - на этот раз Османской империей и неудержимо стремившимся к господству Сефевидским Ираном. Длившиеся более двух столетий разрушительные войны завершились в 1639г. Согласно Касре Ширинскому мирному договору, западная часть Армении отходила к Османской империи , а восточная-во владение Сефевидского Ирана. В стране установилась власть отсталых кочевых племен. Торговля и ремесла переживали упадок . Вследсвие разорения сельского хозяйства и непомерных налогов на городское ремесленничество и торговлю городская жизнь пришла в полный упадок.

В условиях отсутствия единой армянской государственности, когда страна была вовлечена в новую войну, именно церковь взяла на себя миссию предводителя нации. В этот период церковь, надеясь на европейские страны, пыталась найти пути и средства освобождения. В этом деле особенно достоина упоминания деятельность католикосов Степаноса Салмастеци (1542-1564 гг.), его преемника Микаела Себастаци (1564-1570 гг.), Акопа Джухаеци (1655-1680 гг.), и других.

Одновременно церковь занималась и восстановлением церковного хозяйства Эчмиадзина. В этом плане велик вклад Мовсеса Татеваци (1629-1633 гг.) Неоценима и роль следующего католикоса Абраама Кретаци как в ду-ховной, так и в политической и экономической жизни армянского народа. Установив самые теплые отношения с Надир-шахом Ирана, ему удалось предотвратить, по указанию шаха, переселения многих армянских жителей в Иран.

И, несмотря на тяжелое положение Армении, нашлись и такие духовные предводители, которые руководствовались личными интересами. Но тем не менее, это не умалило решающеи роли армянской церкви в жизни армянского народа.

В 15-18 вв. социально-экономическое положение Эчмидзинского монастыря характеризовалось присущими аграрным отношениям в стране формами земельной собственности. Научный анализ документов, отражаюших аграрные отношения в Армении в рассматриваемый период показывает, что земля не являлась главной собственностью государства или государя.

Исследование истории аграрных отношениий еще в период арабского владычества показывает, что и в то время высшая собственность халифа на землю была лишь формальной. В действительности представители высшей феодальной знати приобретали земли по принципам наследственного или условного права. С течением времени условное землевладение превращалось в наследственное, земля переходила в полную собственность феодала. Такое изменение в форме землевладения имело место в Армении в начале 15 века. И несмотря на все усилия Сефевидских правителей в 16 веке расширить государственные земельные владения, им это не удается. Достаточно отметить что в 1576 г. в Восточной Армении насчитывалось 114 крупных наследственных землевладений.

В исследуемый период основной формой частной земельной собственности был мульк, который лежал в основе как частного, так и государственного землевладения, как собственности духовенства на церковные земли, так и сельских обшин.

Господствующими стали другие формы земельной собственности (хас, дивани, вакуф). В 15 веке в земельных грамотах чаще встречается выражение мульк в смысле земельной собственности. Мульк, как земельное владение, независимо от его величины и принадлежности был всеобщей формой феодального землевладения. Принимая во внимание то обстоятельство, что частная собственность на землю являлась монополией определенных лиц, правом распоряжаться этой землей по своей воле, приходим к выводу, что мульк был частной собственностью, с учетом того обстоятельства, что он был формой наследственной собственности на землю. Мульк признавался, как полученная в наследство "родовая собственность" или "родовое наследство" и отчуждался свободно,без каких-либо ограничений.

Несмотря на неприкосновенность права собственности, не исключалась также возможность приобретения земельной собственности насильственным путем.

Свои земельные владения особенно расширили духовные учреждения за счет земель сельских общин, а также насильственного переселения крестьян. Необходимо отметить, что в 16-17 вв. стали обычными факты дарения церковным учреждениям земельных участков со стороны отдельных частных лиц. В силу неблагоприятных политических обстоятельств последние, с целью спасения своих земельных владений от захвата, жертвовали их монастырям и церквям.

В Восточной Армении наряду с частным землевладением существовали и дворцовые земли (хас).

Часть взимаемых с них налогов на правах временной аренды предоставлялась аристократии в оплату за военную службу.

Существовала и такая форма земельной собственности как тиульная, которая происходила от монгольского термина союргал. Тиулы жаловались не только светской аристократии, но и отдельным представителям духовенства.

Основным путем приобретения права земельной собственности была тем не менее купля-продажа земель.

Монастырско-церковное землевладение отличалось своими особенностями. Необходимо отметить, что пришлым захватчикам не удалось утвердить в стране свои духовные институты.

Для дальнейшего развития монастырско-церковного хозяйства важное значение имели пожертвования армянской феодальной знати. Важно подчеркнуть , что получившее довольно массовое распространение пожертвование земель со стороны феодалов в пользу армянских духовных институтов, было своеобразной формой борьбы против соцально-экономической политики завоевателей . Земельные пожертвования в пользу Эчмиадзинского монастыря особенно частыми были в 17-18 вв.. Основным условием права вакуфного землевладения было то, что пожалованная земля должна была быть "собственной" дарителя, то есть наследсвенным владением.

По бесспорным свидетельствам источников, собственность вакуфного права заключалась в том, что подобные владения освобождались от выплаты государственных налогов, то есть получали право муафии. Одновременно надо отметить, что неприкосновенность вакуфного права гарантировались государством.

В исследуемый период в Эчмиадзинском монастырском хозяйстве мульком назывались не только земельная собственность, но и право на пользование другой собственностью, использующюся землю, и на присвоение ренты.

Внеэкономическое принуждение крестьянства в обеих частях Армении осуществлялось не только путем прикрепления его к земле, а посредством принадлежности его к сельской общине. Землевладелец не внешивался в их производственный процесс и вступал в отношения с ними. Все требования он предьявлял общине, вследствие чего крестьянин не имел никаких непосредственных отношений с землевладельцем. Он знал свою общину и выполнял свои обязанности под ее рукаводством. Феодал вмешивался в дела крестьян только в тех случаях, когда они нарушали установленный порядок и закон. Это обстоятельство, как и то, что земельная рента, разделяясь могла сосредоточиться у разных владельцев, было важным условием для отсутствия крепостного права.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

Ա/ Ձեռագրեր
1.1. NN 375, 981, 736, 1363, 1488, 1760, 2121, 2527, 3031, 3881, 4501, 4669, 7092, 7417, 7757, 7823, 8185,:

Արխիվային նյութեր
1.2. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1, վավերագիր 4, թղթ. 1, վ. 13, թղթ. 1, վ. 23, թղթ. 1, վ. 27, թղթ. 1, վ. 339, թղթ.1, վ. 1016, թղթ. 2, վ. 4, թղթ. 2, վ. 27, թղթ. 4, վ.13, թղթ. 240, վ. 90, թղթ. 242, վ. 2, թղթ. 242, վ. 9, 62, 91, 172, թղթ. 242, վ. 2, 204, թղթ. 242, վ.127, թղթ. 242, վ. 93, թղթ. 242, վ. 2ա-բ, թղթ. 244, վ. 243, թղթ. 244, վ. 252:

1.3. Հայաստանի ազգային արխիվ /ՀԱԱ/
Ֆ. 57, ց.1, գ.4, գ. 7, գ. 59, ֆ. 810, ց.1:

2. Տպագիր սկզբնաղբյուրներ

Ա/ Հայերեն

2.1. Աբրահամյան Հ., Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների մասին վավերագրեր, Եր., 1941:
2.2. Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմութիւն անցիցն իւրոց և Նաւոր Շահին պարսից, Վաղարշապատ, 1870:
2.3. Աճառյան Հ., Վավերագրեր հայ–պարսկական հարաբերությունների մասին, Եր., 1927:
2.4. Դիւան հայոց պատմութեան, մասն Գ, ժ, հրատարակեց Գիւտ Աղանեանց, Թիֆլիս, 1912:
2.5. Եսայի Հասան-Ջալալյան, Պատմութիւն յաշխարհին Աղուանից, Երուսաղէմ, 1868:
2.6. Ջաքարեայ սարկաւագի Պատմագրութիւն, հ. Ա-Գ, Վաղարշապատ, 1870:
2.7. Ջաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Եր., 1938 :
2.8. Թաղիադյանց Մ., ճանապարհորդութիւն ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847:
2.9. Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ Հա-յրապետին մերոյ տեառն Ներսեսի Շնորհալոյ էջմիածին, 1865:
2.10. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. 2, կազմեց Ա.Խ. Սաֆրաստյան, Եր., 1964, էվլիա Չելեբի, հ.3, Եր., 1967:
2.11. Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղէմ, 1915 :

2.12. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Եր. 1955, մասն Բ, կազմեց Լ. Խաչիկյան, Եր., 1958, մասն Գ, Եր. 1967:
2.13. Խաչատուր Ջուղայեցի, Պատմություն պարսից, Վաղարշապատ, 1905:
2.14. ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1974թ. հ. Բ, կազմեց Վ. Հակոբյան, Եր., 1978:
2.15. Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, Եր., 1932:
2.16. Մանր ժամանակագրություններ, հ.1, կազմեց Վ. Հակոբյան, Եր., 1951, հ. 2, կազմեց Վ. Հակոբյան, Եր., 1956:
2.17. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտակներ, պր. 1 /ԺԵ-ԺՁ դդ./, կազմեց Հ. Դ. Փափազյանը, Եր., 1956, պր.2 /1601-1650թթ./, Եր., 1959:
2.18. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 2, Կալվածագիր, պր.1 /ԺԴ-ԺՁդդ./, կազմեց Հ. Դ. Փափազյանը, Եր., 1968:
2.19. Մելիքսեթ-բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Եր., 1936, հ. Գ, Եր., 1956:
2.20. Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880:
2.21. Յիշատակարան Լանկ-Թեմուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ Թովմա Մեծոփեցւոյ, Փարիզ, 1860: Յիշատակարանս, Թիֆլիս, 1892:
2.22. Յիշատակարան աղետից Գրիգորի Խլաթեցւոյ պատմական վիպասանութեան, Վաղարշապատ, 1897:
2.23. Յովսէփի կաթուղիկոսի յիշատակարանը, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1863:
2.24. Յուսիկ եպիսկոպոս, Թուղթ Սիմէոնի: Սսոյ կաթողիկոսի առ Փիլիպոս Էջմիածնի կաթողիկոս, Վաղարշապատ, 1904:
2.25. Պատմութիւն Մատթէոսի Ուհակեցոյ, Երուսաղեմ, 1869:
2.26. Հովաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, Եր., 1974:
2.27. Պատմութիւն Արիստակես վարդապետի Լաստիվերցոյ, Թիֆլիս, 1912:
2.28. Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ: Սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի ՌՁԱ թուականին Հայոց մինչ ի ՌԵԺԱթ., Վաղարշապատ, 1896:
2.29. Սիմէոն Երևանցի, Ջամբռ, գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեալ և շարադրեցեալ ի Սիմէոն ցաւահար և վշտակոծ կաթուղիկոսէ Երևանցւոյ, Վաղարշապատ, 1873:
2.30. Ստեփանոս Օրբելյան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս 1911:
2.31. Վաղարշապատցի Յարութիւն Արարատեանի կեանքը, Թիֆլիս, 1892:
2.32. Օսմանյան օրենքները Արևելյան Հայաստանում /16-17-րդ դդ./ Կանոնանամեներ, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Խ. Սաֆրաստյանի և Մ.Կ. Ջուլալյանի, Եր., 1964:
2.33. Ֆրիկ, Բանաստեղծություններ, Եր., 1941:

Բ/ Ռուսերեն

2.34. Акты собранные Кавказской археологической комиссией, т.10. Тифлис, 1885.
2.35. Материалы для описания экономического быта государственных крестьян Закавказкого края, т. 1, Тифлис, 1885:
2.36. Свод материалов по изучению экономического быта государственных крестьян
Закавказкого края т. 4, Тифлис, 1888:
2.37. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 1 Тифлис, 1881.

3. Աշխատություններ

Ա/ Հայերեն

3.1. Աթանասյանց Յ, Երևանի նահանգի բուսականությունը, Եր., 1881:
Ալեքսանյան Ս., Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմությունը, Եր., 1991:
3.2. Ավդալգեկյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 427:
3.3. Ամատունի Ս., Հայոց բառ ու բան, Վաղարշապատ 1912:
3.4. Առաքելյան Հ., Հանրագիտական բառարան, Թիֆլիս, 1915:
3.5. Բարխուդարեանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ.Բ, Թիֆլիս, 1907:
3.6. Բդոյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972:
3.7. Գրիգորյան Գ., Սյունիքի վանական կալվածատիրությունը 9-13 դդ., Եր., 1973:
3.8. Գրիգորյան Վ., Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում, Եր., 1958:
3.9. Գրիգորյան Վ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Եր., 1960:
3.10. Դիլոյան Վ., Էջմիածնի վանական տնտեսությունը 19-րդ դ. սկզբին, «Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության», Եր., 1971:
3.11. Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դ. առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1989:
3.12. Երվանդ Շահազիզ, Աշտարակի պատմություն, Եր., 1987:
3.13. Զուլալյան Մ., Զալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը օսմանյան կայսրության մեջ, Եր., 1966:
3.14. Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը 16-18-րդ դդ., Եր., 1980:
3.15. Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ, Եր. 1957:
3.16. Թումանյան Հ., Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Եր., 1960:
3.17. Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 1, Եր., 1969, հ. 3, գիրք 2, Եր., 1973:
3.18. Կիրակոսյան Գ., Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմենական ցեղերի արշավանքների շրջանում, Եր., 1997:
3.19. Կոստանյանց Կ., Վիմական տարեգիր, Պետերբուրգ, 1913:
3.20. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը /1500-1800թթ./, Եր., 1972:
3.21. Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Եր., 1984:

3.24. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Եր., 1959:
3.25. Մաղաքիա Օրմանեան, Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911:
3.26. Մանանդյան Հ., Երկեր, հ. Գ, Եր., 1977:
3.27. Մարկոսյան Ս., Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում 17-18-րդ դդ. և 19-րդ դ. առաջին քառորդում, Եր., 1959:
3.28. Մարքս Կ., Կապիտալ, հ. 3-րդ, մաս 2-րդ, Եր., 1949:
3.29. Շահազիզ Ե., Հին Երևանը, Եր., 1931:
3.30. Շահխաթունեանց Հ., Ստորոգութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատա, հ. 2, էջմիածին, 1842:
3.31. Չամչեան Մ., Պատմութիւն հայոց , հ.Գ, Վենետիկ, 1786:
3.32. Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա-Բ. Տփղիս, 1858:
3.33. Սիրունի Հ., Պոլիս և իր դերը, հ. Ա, Բեյրութ, 1965:
3.34. Սմբատեանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառս, Վաղարշապատ, 1895:
3.35. Սրվանձտյան Գ., Թորոս աղբար, հ. 2, Կ.Պոլիս, 1888:
3.36. Տեր-Հովհանեան Հ., Պատմութիւն Նոր-Զուղայու, որ յԱսպահան, հ. Ա-Բ, Նոր Զուղա, 1880-1881:
3.37. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը 10-16-րդ դդ., Եր., 1975:
3.38. Փափազյան Վ. Հ., Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում 16-17-րդ դդ., Եր., 1990:

Բ/ Ռուսերեն

3.39. Арутюнян Б. М., Крупное монастырское хозяйство в Армении в 17-18 вв., Ер. 1940:
3.40. Арутюнян Л.Т., Освободительное движение армянского народа в первой четверти 18 в., М, 1954.
3.41. Армении 16-начале 19 вв. Проблеми источниковедения кн. 3, Л. 1940·
3.42. Арунова М., Ашрифян П., Государство Надир-шаха Ашира М., 1958.
3.43. Гакстаузен А., Закавказкого край, т.1, СПб, 1856.
3.44. Байбуртян В.А., Армянская колония Новой Джульфы в 17 в. (Роль Новой Джульфы в ирано-западноевропейских политических и экономических связах), Ер., 1969.
3.45. Богданов А. Жизнь Артемии Араратского, угоженца селения Вагаршанат близ Горы Арарат, СПб, 1813.
3.46. Бутков Л., Материалы для Новой Истории Закавказа с 1722-1803 год, т. 2, СПб, 1869.
3.47. Дубровин Н., История война и владычества на Кавказе, т. 2, СПб, 1886.
3.48. Егиазаров С.А. , Сельская община, Казань, 1883.
3.49. Очерки по истории феодальных отношений в Азербаджане и Армении в 16-начале 19 вв. Л, 1949.
3.50. Мамедов С. А. Исторические связи азербайджанского и арманского народов во второй половины 17 первоы 18 вв., Баку 1977.
Иоанисян А. Р., Иосиф Эмин, Ер., 1945.
3.51. Миклухо-Миклой Н., К вопросу о налоговой политике в Иране при шахе Аббасе I (1587-1629) советское востоковедение т. М, 1949.

3.52. Новосельцев А.П., Пути развития феодализма, М., 1972.
3.53. Папазян А.Д., Аграрные отношения в Восточной Армении в 16-17-вв. Ер. 1972.
3.54. Петрушевский И., Вакфные имения Ардебильского Мазара 17в., /Труды института им. Бакиханова А./, ССР, т. 1 Баку, 1947. Персидские официальные документы как источник по истории феодальных отношений в Азербаджане и Армении в 16- начале 19 вв. Л., 1949. Очерки по истории феодальных отношений в Азербаджане и Армении в 16- начале 19 вв. Л., 1949. Проблеми источниковедения, кн. 3, Л., 1940.
3.55. Подробное описание путешествия Голштонского посольства в Московию и Персию в 1633, 1636, и 1639 годах, составленное секретарем посольства Агамом Олиграем, СПб, 1906.
3.56. Рахмани А., Тарих-и алам фай-и Аббаси как источник по истории Азербайджана, Баку, 1960.
3.57. Таратинов Н., Очерк хлопководства в Закавказье; Труды общества сельского хозяйства, Тифлис, 1888.
3.58. Тер-Австикян С., Город Джуга, Тифлис, 1937.
3.59. Тигранов Л., Из Общественно-экономических отношений в Перси, СПб, 1909.
3.60. Фильрозе Н. к вопросу о формах земельной собственности в государстве Сефевидов "Очерки по новой истории стран Среднего Востока" М. 1951.
3.61. Хатисов К., Кустарные промысли Закавказского края, Тифлис, 1891.
3.62. Хубов Е. Описание достопамятных происшествий в Армении с 1779-1809 г., СПб, 1881.
3.63. Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, 1898, СПб.
Шопен И. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852.

Գ/ Այլ լեզուներով

3.64. Chardin J., Voyages du chevalir Chardin en Perse et autres lieux de l'Orient, voe 1-5, Paris 1811.
3.65. Tadhnirat al-muluk, a manuab of Safavid administration, by V. Minorsky, London, 1943.
3.66. Tavernier J.B, Les six voyages de Jean Babtist Tavernier en Perse et aux Indes, Paris, 1681.

4. Հոդվածներ

Ա/ Հայերեն

4.1. Ավդալբեկյան Թ., Բահրան և մյուլքը 17-18-րդ դդ. «Նորք», գ. 2-րդ, Եր., 1923:
4.2.Ավդալբեկյան Թ., Երկրագործական հավելյալ արդյունքի նորման 17-18-րդ դդ. և 19-րդ դ. սկզբներին, «Նորք», գ. 3-րդ:
4.3. Ավդալբեկյան Թ., Աբ-ի քուրան ջրանցքը Պարսկաստանում և համանուն աբ-ի քուրան հարկը, ՊԲՀ, թիվ 1, Եր., 1958:
4.4.Հարությունյան Բ., Վարձու աշխատանքը Երևանի խանության մեջ 18-րդ դ. և 19-րդ դ. առաջին քառորդում, ՊԲՀ, թիվ 1, Եր., 1959:
4.5.Գալեմքարյան Գ., Ով է Զուղայեցի Հակոբ Դ. կաթողիկոսի հաջորդը, «Հանդէս ամսօրեայ», 1912, թիվ 7:

4.6. Խաչիկյան Լ., Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու մատենագրությունը, «Բանբեր մատենադարանի», Եր. 1956, N 3:
4.7.Համբարյան Ա., Առևտրական հողագործության աճի պատմությունից Երևանյան նահանգում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», թիվ 12, Եր., 1954:
4.8.Հովհաննիսյան Ա., Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին, «Արարատ», թիվ 9, 1915:
4.9.Հովհաննիսյան Ա., Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, «Էջմիածին», 1921, հավելված թիվ 5:
Հայկունի Ա., Տրապիզոնցի հայ գյուղացու կյանքը, «Արարատ», թիվ 10, 1905:
4.10. Ղաֆադարյան Կ., Երևանի Կաթուղիկեի և նորահայտ հուշարձանի արձանագրությունները, ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գ.1, 1938:
4.11. Մարկոսյան Ս., Հողային հարաբերությունները Անդրկովկասի խանություններում ռուսական տիրապետության նախօրյակին, ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գ.1, Եր., 1936:
4.12. Մարկոսյան Ս., Ռուսաստանին միանալու նախօրյակին Արևելյան Հայաստանի հողատիրության և ճորտատիրության հարցի շուրջ, ՊԲՀ, թիվ 3-4, Եր., 1961:
4.13. Միրզոյան Ա., Հայ ազատագրական շարժումները Սյունիքում /1722-1730թ./, Հայաստանի պետ. պատմական թանգարանի «Աշխատություններ», Եր. 1949:
4.14. Շահնազարյան Շ., Նոր նյութեր Հայաստանի առաջին տպարանի պատմության վերաբերյալ, ՊԲՀ, Եր., 1963, թիվ 1:
4.15. Պողոսյան Ս., Եկեղեցական հողատիրությունը Երևանի խանությունում 17-18-րդ դդ. և էջմիածինը որպես խոշոր կալվածատեր, Երևանի պետական, համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 13, Եր., 1940:
4.16. Փափազյան Հ., Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, Հայաստանի ԳԱ «Տեղեկագիր», թիվ 8, Եր., 1955:
4.17. Փափազյան Հ., Վաղարշապատ գյուղի 1725 և 1728թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», թիվ 5, Եր., 1960:
4.18. Փափազյան Հ., Շարիաթական իրավական նորմերը և հողի ֆեոդալական սեփականության հարցը Արևելքում, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ. թիվ 12, Եր., 1960:
4.19. Փափազյան Հ., Ջրատիրության մասին դիվանական վավերագրերը և շահ Սաֆիի 1638թ. հրովարտակը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 12, Եր., 1973:
4.20. Փափազյան Հ., Այգիներն ու այգետեղերը ըստ հայերեն և պարսկերեն կալվածագրերի, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ. թիվ 1, Եր., 1982:
4.21. Փափազյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը, ՊԲՀ, թիվ 3, Եր., 1984:
4.22. Կռունկ Հայոց աշխարհի, 1862, թիւ 4:

Բ/ Ռուսերեն

4.23.Папазян А., К вопросу о техническом значении налогового термина "Малиджахат", "Известия" АН Армения, серия общ. наук, N 2, Ер., 1961.
4.24. Новосельцев А.П., Города Азербайджана и Восточной Армении в 17-18 вв "История СССР" N 1, М., 1959.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ 15-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ 27

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈՂԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 86

1/ Վանական-եկեղեցական հողատիրություն.....99

2/ Ջրատիրություն 111

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....116

1/ Մուլքը որպես հողային ռենտայի յուրացման ձև 116

2/ Գյուղացիության սոցիալական դրությունը: Էջմիածնի վանքապատկան ճորտերը 120

3/ Հողային ռենտայի արտահայտման տեսակները 128

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՎԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ.....143

1/ Տնտեսության ընդհանուր բնութագիրը: Այգեգործություն 143

2/ Հացահատիկային և տնտեսական կուլտուրաների մշակություն ...165

3/ Բանջարաբոստանային կուլտուրաների մշակություն 182

4/ Ոռոգման աշխատանքներ 190

5/ Անասնապահություն 198

6/ Արդյունաբերական արտադրություն 204

7/ Մանր ապրանքային և արհեստավորական արտադրություն 214

8/ Վանական հասույթների ստացումը և դրանց տնօրինման կարգը. 224

Резюме.....257

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ.....260

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 266

ՀԱՄԼԵՏ ԹՈՐՈՍՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

ГАМЛЕТ ТОРОСЯН
ЦЕРКОВНОЕ ХОЗЯЙСТВО ЭЧМИАДЗИНА XV - XVIII ВВ.

Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
Համակարգչային շարվածքը՝ ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ
Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24^{9}

[1900 гр]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220092068

A II
92068